



# לטינית כשומנת

נ.ה. קהיר נסלהע





Հ. Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

# ՅԱՅԿԱԿԱՆ ԼԵՌԱԾԽԱՐ

Ուսումնական ձեռնարկ

ՀՀ ԳԱ. Երևան տեսչության կողմէց  
գրադարձության վեհական հայտարարություն

Հ. Գլուխով

26/01/2005



ԴՏՀ 911.2 (07)

ԳԱՄ 26.82 ց7

գ 124

Գրքի հրատարակությունը  
հովանավորել է դր. Զավեն Եկավյանը՝  
ի հիշատակ իր որդու՝ ՆԱՐԵԿ ԵԿԱՎՅԱՆԻ

### Գարրիելյան Հ. Կ.

- գ 124 Հայկական լեռնաշխարհ. ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալս. հրատ., 2000, 376 էջ և 9 թերթ նկ.:

Ձերկարկը առաջինն է որպես Հայկական լեռնաշխարհի ընդգրկում, ամբողջական ուսումնասիրություն: Տրված եմ Հայկական լեռնաշխարհի բնակչաթ պայմանները՝ նրա կազմակերպությունները, բնական հարաբությունները, ռեկինֆորմացիան, ջրերը, հողարտոսական ծածկույթը, վերըմբաց լանդշաֆտային գոտիները: Ներկայացված է հայ էքոնոմի բնակավայրը՝ Պատմական Հայաստանի քաղաքամասերը և Կիլիկիան:

Նախատեսվում է աշխարհագրություն ուսումնասիրողների և ընթերցող լայն շրջանների համար:

գ  $\frac{1805040100}{704(02)2000}$  2000

ԳԱՄ 26.82 ց7

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Յրայա Գարբիեյանին ճանաչելով՝ հպարտությամբ ես լցում մարդ լինելու համար:  
ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Աշխարհագիտության դոկտոր, պրոֆեսոր Յրայա Կարապետի Գարբիեյանի գըն է պատկանում 140 գիտական աշխատանք՝ մենագրություններ, բուհական ուսումնական ծեռնարկներ, հանրամատչելի գրքեր, գիտական հոդվածներ, բազմաթիվ քարտեզներ՝ հետաքրքրությունների լայն ոլորտով՝ ֆիզիկական աշխարհագրություն, ջրագրություն, գեոնորֆոլոգիա, լանջափառագիտություն, հայրենի լեռնաշխարհի բնություն: Առավել հայտնի են «Դայլկական ՍՍԴ հրաբխային բարձրավանդակի հողմահարման պրոցեսները» (1962 թ.), «Գետային էրոզիան Դայլկական ՍՍԴ-ում» (1973 թ.), «Հողի էրոզիան և պայքարը նրա դեմ» (1974 թ., համահեղինակ՝ Խ. Միրիմանյան), «Անդրկովկասի բնությունը և ջրային էրոզիան» (1978 թ.) մենագրությունները, «Դիդրոլոգիա» (1-ին և 2-րդ մասեր, 1963 թ., 1967 թ.), «Լանջափառների գեորգիա» (1968 թ.), «Կովկասի ֆիզիկական աշխարհագրություն» (1979 թ.), «Երկիր մոլորակը և նրա աշխարհագրական բաղադրյալը» (1983 թ.), «Երկրագնդի ջրային ոլորտը» (1987 թ.), «Աշխարհագրական և երկրաբանական օճանկաբառություն» (1991 թ.) ծեռնարկները, «Լճերը և նրանց բնությունը» (1956 թ.), «Դայլկական ՍՍԴ ջրային ուսուրսների համառոտ բնութագիրը» (1962 թ.), «Մարդը և ջրային տարեքը» (1980 թ.), «Մարգարույա Սևանը» (1978 թ. ռուս.), որն արժանացավ միջամտանական մոցանակի, ապա 1980 թ. հայերեն), «Քիմիական տարրերը տիեզերքում և մեր շուրջը» (1990 թ.) հանրամատչելի աշխատությունները: Անդրկովկասյան հանրապետությունների պետական համալսարանների ֆիզիկական աշխարհագրության ամբիոնների մի խումբ աշխատակիցների կողմից, պյութեսոր Դ. Կ. Գարբիեյանի նախաձեռնությամբ ու դեկավարությամբ ստեղծվել է «Անդրկովկասի ֆիզիկական աշխարհագրություն» (1986 թ.) բուհական ու սումնական ռուսերեն ծեռնարկը, որում հպատակում են Դայլկական լեռնաշխարհի իրական սահմանները:

Պրոֆ. Դ. Գարբիեյանի 100-ից ավելի գիտական հոդվածները վերաբերում են ուղեթ առաջացնող արտածին ուժերի, հնագույն սառցապատճան և հնեաշխարհագրության հիմնահարցերին: Նրա գիտական գործունեությանը բնորոշ է աշխարհագրության դասական հարցերի սերտ գործակցումը լուրջ գործնական նշանակություն ունեցող խնդիրների հետ: Նա դեկավարել է «Կապանի սելավաբեր շրջանի սելավագոյացման պայմանները», «Մերձերևանյան շրջանի սելավաբերությունը», «Դայլկական ԽՍՀ տարածքի էրոզիոն և սելավային երևույթները» կարևորագույն թեմաները:

Դ. Կ. Գարբիեյանը եղել է ԵՊՀ աշխարհագրական ֆակուլտետի դեկան և ապա՝ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ: Առանձնապես մեծ է գիտական մանկավարժի վաստակը բարձրորակ աշխարհագետ կարուերի կրթության ու դաստիարակության գործում: Նրա գիտական դեկավարությամբ պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական ասթենախոսություններ: Նա ԵՊՀ աշխարհագրության և կեն-

սարանության ֆակուլտետներում ավանդում է «Ընդհանուր երկրագիտություն», «Ընդհանուր ջրաբանություն», «ԽՍՀՄ ֆիզիկական աշխարհագրություն», «Լանդշաֆտագիտություն», «Լանդշաֆտների գեղըմիա», «Շողերի էրոզիա», «Ֆիզիկական աշխարհագրության ժամանակակից պրոբլեմներ» հիմնական և հատուկ դասընթացները: Ընդսմին, 80-ամյա տարիքում պյոռֆ. Դ. Գարբիեսանը շարունակում է ինչպատճել ուսումնադաշտային պրակտիկաները: 1981 թ. ԽՍՀ Գերագույն Սովետի նախագահությունը նրան շնորհեց ՀՍՍՇ Բարձրագույն պարողի վաստակավոր գործի պատվավոր կոչում:

Դ. Կ. Գարբիեսանը գիտական գեկուցումներով հանդես է եկել միջազգային, միութենական գիտաժողովներում, կոնֆերենցներում, սիմպոզիումներում ու խորհրդակցություններում, Վիեննայի Միժբարյան միաբանությունում: 1980 թ. նրան հրավիրել են Մոսկվա՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպված ջրաբանական միջազգային բարձրագույն կուրսերում դասախոսություններ կարդալու: Նա տարիներ շարունակ երևանում վարել է «Կես ժամ աշխարհի շուրջը» հեռուստահայտողդաշարը: Զանասիրաբար մասնակցել է «Գիտելիք» ընկերության աշխարհագրա-երկրաբանական բաժանմունքի աշխատանքներին որպես սեկցիայի վարիչ: Նա հանահեղինակ է միջնակարգ դպրոցի աշխարհագրության դասագրերի, եղել է ՈՒԳԲ աշխարհագրական բաժանմունքի գիտական դեկանվարդ, Պայկական աշխարհագրական ընկերության փոխնախագահը, «Աշխարհագրության հարցեր» միջրուհական գիտական ժողովածուի խմբագիրը:

Կերծում նկատենք, որ պյոռֆ. Դ. Գարբիեսանը գիտնական-մանկավարդի այսօրվա բարձունքին է հասել ֆիզիկական և հոգեկան մեծ գրկանքներ հաղթահարելու գնով:

Միջնակարգն ավարտելուց հետո՝ տակավին 17-ը ըջոլորած երիտասարդը, որը մեծ շնորհը ուներ գծելու և նկարելու ներքին մեջ, ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Մոսկվա: Սակայն կյանքի գարնանամուտը նրա համար լինում է շատ յաժման. այստեղ նա ենթարկվում է վրարի: Բուժման ընթացքում անդամահատում են ծնկներից ներքի հատվածները: Անասելի հուսահատություն է ապրում երիտասարդ Յրաշիկը: Ամիսներ շարունակ տառապում է կյանքի ու նահկան ընտրադաշտում: Սակայն նա հիշում է Սերվանտեսի միտքը. «Դժբախտության մեջ ճակատագիրը միշտ է դրանկ է բողնում դուրս գալու համար»: Եվ այդ դրանկը պատանու ամուր կամքը է լինում: Յրաշիկը հաստատակամորեն, ֆիզիկական մեծ տանջանքներով հաղթահարում է պյոռեզմներով՝ արհեստական ոտքերով քայլելու դժվարությունները: Եթագայում, ով զարմանք, նա ոչ միայն քայլում է առողջների պես, այլև սահում դահուկներով, պարում անկաշկան, վարում հեծանիվ ու ավտոմեքենա, մագլցում լեներն ի վեր, կատարում դաշտային գիտահետազոտական արգասավոր աշխատանք: Այդպես, ամուր կամքի, բնատուր ընդունակության և անսահման աշխատասիրության շնորհիվ, հերոսաբար հաղթահարելով ֆիզիկական ու հոգեկան ամեն մի դժվարություն, նա դարձել է վաստակաշտ գիտնական-մանկավարժ, երջանիկ ընտանիքի տեր բազմազավակ հայր:

Մենք ավելի քան կեսարյա համատեղ աշխատանքում մեր սիրելի գործընկերություն ընդունել ենք ֆիզիկական լիարժեք, որովհետո չարաբաստիկ վրարի հետև անքննությունը լիովին տեղի են տվել Յրայա Գարբիեսանի երկարայա կամքին: Նրա սիրագրությանը անդրադարձել են գրողներ, ամսագրեր՝ հայրենիքում և արտասահմանում: Յրայա Գարբիեսանի օրինակը հույս է ներշնչել շատ հուսահատների և նրանց փրկել կործանումից:

Աշխարհագիտության դրվագ, պյոռֆ.  
Խ. Ե. ՆԱԶԱՐՅԱՆ

Այն տարածքը, որի վրա ձևավորվել է հայ երնոր, կոչվում է Հայր, Հայաստան, Արմենիա: «Հայաստանը» ամենից ավելի էրնիկական պատկանելություն է ցույց տալիս՝ հայերի երկիր: Հայաստան անվան «ստան» վերջավորությունը նշանակում է տվյալ ժողովրդի ձևավորվելու և ապրելու վայրը՝ հայրենիք, ինչպես օրինակ՝ Ռուսաստան, Հունաստան, Հնդկաստան, Չինաստան և այլն:

Աշխարհագրության, մասնավորապես՝ ֆիզիկական աշխարհագրության, զարգացման ընթացքում 19-րդ դարում անհրաժեշտություն առաջացավ ավելի հստակորեն առանձնացնել Առաջավոր Ասիայի կազմում գտնվող ֆիզիկա-աշխարհագրական միավորները, հետևաբար, բացի էրնիկական հատկանիշներից, պետք էր մի նոր չափանիշ կիրառել երկրների բնության առանձնացման խնդրում. այդ չափանիշը ֆիզիկա-աշխարհագրական համալիրի գաղափարն էր, ուստի ծագեց մի նոր անվանում՝ «Հայկական լեռնաշխարհ», որը դիպուկ կերպով բնորոշում է այդ երկիրի բնությունը:

Հայոց աշխարհի՝ Հայաստան-Արմենիայի մասին գոյություն ունի լայնածավալ գրականություն թե՝ հայերեն և թե՝ օտար լեզուներով: Գրական աղբյուրներից կարելի է մանրամասն տեղեկություններ բաղել հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ճարտարապետական ու շինարարական արվեստի, բնակչների սովորույթների, օտար զարգիշների դեմ մղված պայքարի և շատ այլ հարցերի մասին: Բայց եթե ընթերցողը ցանկանա ծանոթանալ իր նախնիների հայրենիքի սահմաններին, բնությանը, լանդշաֆտների բաղադրյաներին, երկրի հարստություններին, ապա, որքան էլ զարմանալի է, հազիվ թե գտնի ծամանակակից մակարդակով կազմած մի զիրք-տեղեկատու, որպիսի կգտնի, ասենք, պատմության վերաբերյալ:

Պատահական չէ, որ վիթխարի գրական ժառանգություն ունեցող հայ ժողովուրդը այսօր չունի Հայկական լեռնաշխարհի բնությանը վերաբերող մի ամփոփ աշխատություն:

Սուածին համաշխարհային պատերազմի ավարտին և Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Հայաստան աշխարհը բզկտվեց: Հային մնաց իր բնաշխարհի միայն 1/12 մասը: Այն այսօր բաժանված է Թուրքիայի (մեծ մասը), Վրաստանի, Ադրբեյջանի ու Իրանի միջև և աշխարհի բաղաքական քարտեզի վրա մի միասնական միավոր չի ներկայացնում:

Բարձր ատյաններին ձեռնոտու չի եղել տեսնել մի զիրք, որը ցույց տա Հայոց

աշխարհի բաժան-բաժան լինելու հանգամանքը: Եթե հայր ճանաչի իր հայրենիքը, ապա բնականորեն նրա մեջ կզարդնի պայքարի ողին՝ պատմական ամենանողկայի անարդարության դեմ: Ծամաշելով իր հայրենիքը՝ յուրաքանչյուր հայ նեցուկ կկանգնի Հայ Դատին՝ Հայկական Հարցին: Հայ մեծ վիպասան Շաֆֆին գրում էր. «Ով չի ճանաչում իր Հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել այն»:

Դեռևս 19-րդ դարի վերջին սուլթան Համբիլի կարգադրությամբ գործածությունից հանվեց «Արմենիա» (Էրևենիստան) անվանումը և փոխարինվեց Արևելյան Անատոլու (Անատոլիա) անվանումով: Ներկայումս բոլքական դպրոցներում արգելված է օգտագործել այնպիսի քարտեզներ, որտեղ դեռևս կա «Արմենիա» տեղանունը: Արմենիան պետք է ընդհանրապես վերացնել. այս է նրանց միտումը:

Ազգային զարթոնքի նոր պայմաններում կենսական անհրաժեշտություն է հայ ընթերցողին, մասնավորապես՝ երիտասարդությանը, ներկայացնել հայի իսկական հայրենիքը, նրա բնույթունը, հարստությունները և սեր զարգացնել դեպի իր ու ապուսապերի բնօրրանը:

Ներկայացվող ձեռնարկում բնուրագրված ու մեկնարանված են Հայկական լեռնաշխարհի բնական՝ ֆիզիկա-աշխարհագրական պայմանները՝ վիրխարի լեռնային համակարգի լանջափտային բոլոր բաղադրիչները: Ստորև հիմնավորելու ենք այդ տարածաշրջանի առանձնացումը Ալպ-Հիմալայան համակարգում որպես լեռնային կղզի:

Հայոց բնօրրանը չի սահմանափակվում միայն Հայկական լեռնաշխարհով: Հարակից որոշ շրջաններ ևս հանդիսացել են արմենոնի մարդարանական տիպի և հայ էքնոսի ձևափորման տարածքներ և անցյալում Պատմական Հայոց քաղաքության բաղադրամասեր են ներկայացրել:

Ելեկով այդ հանգամանքից՝ գրքի առաջին գլխում լեռնաշխարհը որպես առանձնահատուկ ֆիզիկա-աշխարհագրական միավոր բնորոշելուց, սահմանները և բարձրաշափությունը ներկայացնելուց հետո՝ զլիսի երկրորդ բաժնում հարկ ենք համարում համառոտակի ներկայացնել հայի բնօրրանի հիմնահարցը՝ արմենոնի մարդարանական տիպի և հայ էքնոսի ձևափորման տարածքները, որից հետո միայն անցնել լանջափտային և ֆիզիկա-աշխարհագրական բաղադրիչներին: Այդ բաղադրիչներն են՝ երկրաբանական կառուցվածքները, ընդերքի հարստությունները, լեռնագրությունը, կիման, ջրագրությունը, հողարուսական ծածկույթը, կենդանական աշխարհը: Ընդհանրացնելով այդ բոլորը՝ ներկայացրել ենք վերընթաց լանջափտային գոտիները:

Գրքի վերջին զլիսում համառոտ կերպով ներկայացվում են Պատմական Հայաստանի բաղադրիչները և Կիլիկիան:

Սույն ձեռնարկը կազմելիս օգտվել ենք հրապարակում եղած գրական աղբյուրներից, որոնցով այնքան հարուստ է Ազգային գրադարանը, տարբեր հեղի-

նակների կողմից կազմված քարտեզներից, ինչպես նաև անձնական՝ արշավախմբերում կատարած դիտարկումների նյութերից, որոնք ստացվել են անցած չորս-հինգ տասնամյակներում լեռնաշխարհի արևելյան՝ խորհրդայնացված հատվածում:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև տեղանունների մասին: Հայտնի է, որ Պատմական Հայաստանը մի քանի դար կորցրել է պետականությունը, և այդ ընթացքում տեղանունները վերածվել են օտարալեզվայի: Մենք աշխատել ենք հնարավորինս վերականգնել հայկականը, պատմական անարդարության հետևանքով, փաստագրային եղենից մազապործ, մոռացման խավարից դեռ առկայություն, գրեթե կորսված տեղանունները ի մի բերելով՝ փրկել դրանք և նաև անուններով ներկայացնել Հայկական բուն, բնիկ, բնական լեռնաշխարհը:

Օգտագործել ենք «Հայկական Սովետական Հանրապետարան» և «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» աշխատությունները: Նշենք, որ կան այնպիսի աշխարհագրական օբյեկտներ, որոնք բառարանում ունեն 40-60 և անգամ, մինչև 80 տարրեր անվանումներ: Մենք ընտրել ենք ամենագործածականը կամ ամենահաճանարարելին՝ փակագծերում նշելով շրջանառվող մյուս տարրերակները:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՇՆԱՇԽԱՐԴ՝ ՀԱՅԻ ԲՆՈՐՈՎՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՇՆԱՇԽԱՐԴԸ

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին հրատարակած Եվրասիայի ֆիզիկական և այլ բովանդակության քարտեզներում այդ մայրցամաքի հարավարևմուտքում Փոքրասիական և Իրանական լեռնաշխարհ-սարահարթերի միջև ընդարձակ տարածքի վրա անպայման գրփում էր՝ «Հայաստան», «Արմենիա»: Վերջերս որոշ քարտեզներում Արմենիան գրփում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում: Նման վերափոխումը կատարվում է հատկապես Թուրքիայի ճնշման ազդեցությամբ: Պատմական Հայաստանը Հայոց աշխարհն է, որտեղ ծնունդ է առել արմենոիդ մարդարանական տիհը և ձևավորվել է հայ էթնոսը:

«Հայաստան» անվանումը գալիս է դարերի խորքից և ամենից ավելի էր-նիկական պատկանելիություն է ցույց տալիս: Այն միևնույն ժամանակ արտահայտում է նաև պետականություն և վերջապես՝ ֆիզիկա-աշխարհագրական մի ռեգիոն-տարածաշրջան: Երբ այժմ օգտագործվում է այդ անվանումը, պարզ չէ, թե ինչ է իմաստը: Միանգամայն իրավացի է Արշակ Ալպօյացյանը (1950), երբ գրում է. «Դժբախտաբար Հայաստան որոշ սահմաններ ունեցող երկիր մը չէ, և այդ սահմանները գծելու փորձը զերծ չէ դժվարություններե, քանի որ ասիկա կապ ունի շատ մը աշխարհագրական, ցեղագրական, հնախոսական, պատմական առավել կամ նվազ վիճելու հարցերու հետ»:

Պատմական տարբեր ժամանակներում Հայաստանը որպես պետություն ունեցել է տարբեր սահմաններ: Օրինակ՝ Տիգրան Բ Մեծի օրոր Հայաստան աշխարհի սահմանները ընդարձակ էին՝ Սիցերկրական ծովից մինչև Կասպից ծով, հյուսիսում՝ Կուր գետից հարավ մինչև Հայոց Միջագետը: Դրան հակառակ, ներկայում ՀՀ տարածքը գրանցում է Հայկական լեռնաշխարհի միայն 1/12 մասը: Միջին դարերում էլ բազմաթիվ ասպատակությունների պատճառով հայ ժողովրդի զանգվածային տեղաշարժեր են եղել, և շատ շրջաններ հայաբավկել են:

Ըստ Մ. Արզումանյանի (1969)՝ 18-րդ դարում Հայկական լեռնաշխարհում քրիստոնյաները՝ հիմնականում հայերը, կազմում էին ողջ բնակչության

98 %-ը, մուսուլմանները՝ 2 %-ը, 1914 թ. համապատասխանարար 42 և 58 %-ը: 19-րդ դարի վերջից սկսած և 1915-21 թթ. գագարնակետին հասած՝ բուրքերի կողմից հայերի ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանում հայեր գրեթե չեն մնացել: Նրանք սպանված են, տեղահանված կամ տեղահանության ժամանակ ոչնչացված, մի մասն էլ՝ բռնի մահմեղականացված: Ուրեմն, եթիկական չափանիշը ներկայում Հայոց աշխարհի սահմանազատման հարցում ընդունելի չէ:

Սույն ձեռնարկում՝ գրքի վերնագրին համապատասխան, մենք քննարկելու ենք Հայոց աշխարհի ամենամեծ հատվածի՝ Հայկական լեռնաշխարհի բնությունը իր բոլոր բաղադրամասերով: Պարզվում է, որ ֆիզիկա-աշխարհագրական իմաստով Հայկական լեռնաշխարհը Հայաստան ընդարձակ աշխարհի մի խոշոր մասը՝ այն է՝ մենտիս օվկիանոսի գետսինկինալում ծալքավորված և կղզու ձևով վեր բարձրացված հատվածն է ներկայացնում: Մինչդեռ նրա հարևանությամբ կան տարածքներ, որոնք տեկտոնական իջեցում են ապրում և ծագումնաբանորեն նման չեն լեռնաշխարհին, բայց այդուն վաղ անցալում հայեր են ապրել և դրանք պատմական Հայաստանի բաղադրամասերն են եղել:

Տարածքային առումով Պատմական Հայաստանն ավելի ընդարձակ է, քան կղզիանման Հայկական լեռնաշխարհը: Հայկական լեռնաշխարհ հասկացությունը ավելի ուշ ժամանակների անվանում է, հատկապես գործածվում է 19-րդ դարից՝ գիտական բնույթի աշխատություններում: Այլ լեզուներով այն գրվում է Արմանյան հացածք, Armenian Highland, Armenian Highland(s) և այլն:

Նշենք, որ դեռևս կան հեղինակներ, ովքեր նույնացնում են Հայաստան և Հայկական լեռնաշխարհ հասկացությունները: Աշխատենք հստակություն մտցնել այդ հարցում:

Հայաստան-Արմենիան միանգամայն որոշակի տարածք գրադարանող երկիր է և աշխարհի բազմաթիվ լեզուներով հրատարակված աշխատություններում միանշանակ է ներկայացված: Այսպես, Բրոկհաուզ Եֆրոնի հանրագիտարանում կարդում ենք. «Հայաստանը տեղադրված է արև. երկ.  $55^{\circ}$  և  $67^{\circ}$ -ի միջև (ֆերոյից հաշված) և հյուս. լայնության  $37,5^{\circ}$ - $41,75^{\circ}$  միջև: Նրա երկարությունը արևմուտքից արևելք հավասար է 975-1065 կմ, իսկ լայնությունը հյուսիսից հարավ՝ 525 կմ. այն գրադարանում է 375 հազ. քառ. կմ»:

«Խորհրդային Մեծ Հանրապետության»-ի (Երրորդ հրատ.) երկրորդ հատորում գրված է. «Հայկական լեռնաշխարհը երեք առաջավիրասիական լեռնաշխարհներից մեկն է. գտնվում է գլխավորապես Ծուրբիայում, մասնակիորեն ԽՍՀՄ-ում և Իրանում: Հայկական լեռնաշխարհի այն մասը, որ գտնվում է ԽՍՀՄ-ում (Անդրկովկասյան բարձրավանդակ) գրադարավանդակ) գրադարանում են ՀԽՍՀ տա-

բածքը, Վրացական ԽՍՀ-ի հարավային և Աղրբեջանական ԽՍՀ-ի արևմտյան մասը»:

Թրիտանական հանրագիտարանի («The New Encyclopaedia Britannica») առաջին հատորի էջ 566-ում գրված է, որ Հայաստանը լեռնային տարածություն է Թուրքիայի, Խորհրդային Միության և Իրանի տարածքում, որն ընդգրկում է 400000 քառ. կմ: Նմանօրինակ բնորոշումները բազմաթիվ են:

Այժմ ներկայացնենք Հայկական լեռնաշխարհը:

Հայկական լեռնաշխարհը տեղադրված է Փոքր Ասիա թերակղուց արևելք մինչև Կուր-Արաքսյան դաշտավայրը: Հարավում Միջագետքի հարթավայրն է՝ Հայոց (Վերին) Միջագետքը, հյուսիսում՝ Սև ծովի տեկտոնական իջվածքն ու Կոլխիդայի (Կողըիս) դաշտավայրը: Լեռնաշխարհը հյուսիսային կիսազնդի միջին լայնություններում է: Նրա ծայրակետերն են՝ հարավում՝ հյուս. լայն.  $37^{\circ}20'$ , հյուսիսում՝  $42^{\circ}10'$ , արևմուտքում՝ արլ. երկ.  $36^{\circ}45'$ , արևելքում՝ արլ. երկ.  $48^{\circ}$ : Ամբողջությամբ տեղադրված է մերձարևադարձային գոտում: Քաղաքական տեսակետից տարածքը ներկայումս բաժանված է Թուրքիայի, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Վրաստանի, Աղրբեջանի, Իրանի միջև: Հայաստանի Հանրապետությանը բաժին է հասել 29,8 հազ. քառ. կմ՝ Հայկական լեռնաշխարհի 8 %-ը:

Հայկական լեռնաշխարհը Միջերկրական ծովից հեռու է 195 կմ, Կասպից ծովից՝ 80 կմ, Պարսից ծոցից՝ 825 կմ: Լեռնաշխարհի տարածքը պատկանում է Սև ու Կասպից ծովերի և Պարսից ծոցի՝ Հնդկական օվկիանոսի ավազաններին:

Հայոց աշխարհի տեղադիրքի, գրադեցրած տարածքի ու սահմանների հարցը քննության առարկա է եղել ավելի քան երկու հազարամյակ առաջ, և գրավոր տեղեկություններ կան հունա-հռոմեական աշխարհագետների մոտ: Էրաստոսընեսը, Ստրաբոնը, Պտղոմեոսը, Պլինիոսը և ուրիշներ քննարկել են Հայաստանի սահմանների հարցը:

Ստրաբոնը այսպես է բնորոշում Հայաստանի սահմանները. «Հայաստանի հարավը պաշտպանված է Տավրոսից, որը բաժանում է այն Եփրատի և Տիգրիսի միջև գտնվող ամբողջ երկրից, որ կոչվում է Միջագետք. արևելքից կցվում է Մեծ Մարաստանին և Աստրատենին. հյուսիսից գտնվում են Կասպից ծովի վերևի՝ Պարարութրասի լեռները և Աղվանը ու Վրացիր և Կովկասը, որ շրջապատում է այդ ծողովուրբները և հասնելով Հայաստան, միանում է Մուրիկյան և Կողըիսի լեռներին: Մինչև Տիգրաբանների կոչված երկիրը, արևմուտքից գտնվում է Տիգրաբանի ծողովուրբը և Պարիադրես լեռը և Սկյուղիսես լեռը՝ մինչև Փոքր Հայք և Եփրատի հովիտը, որ բաժանում է Հայաստանը Կապաղովկիայից և Կոմմագենից»<sup>1</sup>:

<sup>1</sup> Ստրաբոն, Քաղեց և բարգմանեց Հ. Աճառյանը, Ե., 1940:

Սիջին դարերում, ընդհույպ մինչև 19-րդ դարը բոլոր հեղինակները կրկնում էին Ստրաբոնին: Չնայած ասպատակություններին ու բռնազավրմանը, Մեծ Հայքը և Փոքր Հայքը նույն սահմաններում էին ճանաչվում: Այդ սահմանները արտահայտված են վաղ միջնադարյան «Աշխարհացոյց» աշխատության մեջ<sup>1</sup>:

19-րդ և 20-րդ դարերի շատ աշխարհագետներ ու պատմաբաններ յուրով վի էին մեկնարանում Հայաստանի սահմանների հարցը, ընդ որում հարավային և հյուսիսային սահմանների վերաբերյալ հակասություններ ու վեճեր գրեթե չկային, վիճելի էին և մինչև օրս էլ վիճելի են արևմտյան ու հարավարևելյան սահմանները:

19-րդ դարում սահմանների հարցով գրադարձել են՝ Ղ. Խնճիճյանը, Ղ. Ալիշանը, Կ. Ռիտտերը, Է. Ռեկյուս, Միվերսը, Մանուել Քաջումին և ուրիշներ: 20-րդ դարում՝ Լեռն, Գ. Մեսրոպը, Դոլենսը, Ա. Խաչը, Ա. Աբեղյանը, Ժամանակակից հեղինակներից՝ Ա. Ալպօյաճյանը, Ս. Երեմյանը, Թ. Հակոբյանը, Ս. Մելիք-Բախչյանը, Ս. Բալյանը, Լ. Զոհրաբյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Ռուկանյանը, Բ. Հարուրյունյանը, Հ. Գարբիելյանը, Խ. Նազարյանը և այլք:

Հեղինակների մի մասը Հայկական լեռնաշխարհի տարածքը համարում է 340-375 հազ. քառ. կմ, ոմանք էլ՝ 400 հազ. քառ. կմ:

Բնության մեջ երկու տարբեր հատկանիշներ ունեցող տիրույթների անցման գիծը կամ գոտին բնորոշվում է որպես սահման: Հատկանիշների կամ բնութագրիչների քանակական կուտակումը այդ գծից այն կողմ տալիս է նոր որակ: Օրինակ, ափագիծը ցամաքի ու ծովի սահմանն է, լեռնաշղթայի ստորոտը լեռնաշխարհի սահմանն է և այլն: Եթե այս սկզբունքը կիրառենք Հայկական լեռնաշխարհի սահմանների առանձնացման խնդրում, ապա շատ պարզ արտահայտված են լեռնաշխարհի հյուսիսային, հարավային ու արևելյան սահմանները. Վիճելի կարող են լինել միայն հարավարևելյան ու արևմտյան սահմանները:

Ինչո՞վ ենք հիմնավորում Հայկական լեռնաշխարհի առանձնացումը Հայաստան աշխարհի սահմաններում՝ որպես լեռնային կղզի:

Երկրաբանական անցյալում մեր մոլորակի վրա գոյություն են ունեցել երկու խոշոր ճայրցամաքներ՝ Լավրասիան և Գոնդվանան. Երանց միջև ձգվել է Թեսիս օվկիանոսը: Երկրակեղելի տակ մագմայի շիբային շարժումների


<sup>1</sup> «Աշխարհացոյց» ձեռագիրը, որ գտնվում է Մատենադարանում, տարբեր հեղինակների կողմից ժամանակի տեսակեդից տարբեր է մեկնարանվան: Ս. Երեմյանը այն համարում է 7-րդ դարի ծնունդ և հեղինակ համարում է Ա. Շիրակացուն: Այլ հեղինակներ ավելի վաղ ժամանակների աշխատություն են համարում: Բ. Հարուրյունյանը գտնում է, որ այն 5-րդ դարի ծնունդ է, հեղինակը Մովսես Խորենացին է: Եղանգով դրանից՝ մենք այն կամարենք վաղ միջնադարյան՝ շնչելով դարը:

ազդեցությամբ Գոնզվանայից պոկված երկու խոչըր թեկորները (ալատֆորմ-ները՝ Արաբա-Սիրիականը և Հնդկական թերակղու թեկորը, շարժվելով հյուսիս ճգմել են Թետիսի գեոսինկլինալը: Արաբա-Սիրիականը ճգմել է Հայկական լեռնաշխարհի հատվածը, իսկ Հնդկականը՝ Պամիրի հատվածը և ստեղծել են լեռնային կողմեն:

Հայկական լեռնաշխարհը առանձնանում է հարևան շրջաններից և ինքնուրույն լեռնակուտակ է դառնում: Այսպես՝ հյուսիսում Սև ծովի գոզավորությունն է, որտեղ երկրակեղեղն նման չէ Հայկական հատվածին, գրանիտային շերտը բացակայում է: Ծովային նստվածքները ծածկում են բազալտային շերտը, մինչդեռ լեռնաշխարհի սահմաններում հենց ուղղակի ծովափին, Քաջրարի զանգվածը գրանիտային պլիուլոն է ներևալածնում:

Լեռնաշխարհի արևելքում Կուր-Արաքսյան դաշտավայրն է, որտեղ տեկտոնական իջեցում է նկատվում, մինչդեռ լեռնաշխարհը բարձրանում է: Լեռնաշխարհից հարավ Արաքա-Սիրիական պլատֆորմն է՝ ծագումով հնագույն մի կառույց, որը զգմել է Հայկական Տավրոսի գեոսինկլինալը և մտել նրա տակ: Հայկական լեռնաշխարհի արևմուտքում Փոքրասիական սարահարթն է, որը ծագումով տարբեր է լեռնաշխարհից և նունից առծո է շրջու 600 մ-ով:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհը միանգամայն տարրերվում է շրջապատի տարածքներից և դասում է լեռնային կղզի 1850-1900 մ միջին բարձրությամբ։ Այժմ նշենք լեռնաշխարհի սահմանները։



Նկ. 1. Հայկական լեռնաշխարհի սխեման, սահմանները

**Հյուսիսային սահման** անցնում է Սև ծովի հարավային ափագծով, ապա Մոսքիկյան (Մեսխեթի) ու Թոեղրի (Թրիալեթի) լեռնաշղթաների արտաքին՝ հյուսիսային ստորոտներով: Լեռնաշխարհի սահմանը Սև ծովի գոգավորության հետ միանգամայն պարզորոշ է: Ինչպես նշել ենք, ծովի հատակին երկրակեղեղ օվկիանոսային տիպի է, գրանիտային շերտը բացակայում է, իսկ Պոնտական համակարգում ամենուր հիմքը գրանիտային է՝ ներժայուղուներով է արտահայտված:

Հյուսիսային սահմանի արևելյան կեսն անցնում է Կոլյսիդայի (Կողրիս) դաշտավայրի և Կուրի իջույրի եզրով: Թե՛ Կոլյսիդան և թե՛ Կուրի իջույրը մի ժամանակ ցանաքներ են եղել, սակայն Փոքր Կովկասի (Գուգարաց-Արցախյան համակարգի) ծալքավորման պրոցեսում վերին լոցենում տեղի է ունեցել ռելիեֆի շրջադասուրյուն. Վրացական կոշտը (Կոլյսիդան և Կուրի իջույրի արևմտյան հատվածը) իջել է ծովի հատակ, փոխարենը՝ Փոքր Կովկասն է ծովից դորս եկել: Նշանակում է՝ թե՛ ծագումով և թե՛ ժամանակակից լեռնագրությանը հյուսիսային սահմանը միանգամայն պարզորոշ է և կասկածի տեղիք չի տալիս:

**Արևելյան սահմանը** թե՛ ծագումով և թե՛ ռելիեֆով ու լանդշաֆտներով հյուսիսայինի նման որոշակի է՝ Փոքր Կովկասի համակարգի արտաքին՝ արևելյան ստորոտները: Այստեղ Փոքր Կովկասի (Գուգարաց-Արցախյան) լեռները միանգամից բարձրանում են Կուր-Արաքսյան դաշտավայրից: Ծագումով ևս սրանք տարբեր են. այստեղ ևս տեղի է ունեցել ռելիեֆի շրջադասուրյուն՝ Վանդամյան կամ Քյուրդամիրյան ցամաքը իջել է, ծածկվել ծովային նստվածքներով, լեռները բարձրացել են:

Որոշ աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի արևելյան սահմանը որոշ հեղինակներ (Պտղոմեոս, Խորենացի, Ռիտոսեր, Միվերս, Լեռ և այլք) համարում են Կասպից ծովը: Մի ժամանակ Կուր-Արաքսյան դաշտավայրը զբաղեցնում էր Փայտակարան աշխարհը, որը Մեծ Հայքի նահանգներից մեկն էր և Պատմական Հայաստանի կազմում էր, բայց ֆիզիկա-աշխարհագրական առումով տեկտոնական իջեցում ապրող դաշտավայրը չի կարելի մտցնել լեռնաշխարհի մեջ:

**Հարավ-արևելյան սահմանը** վիճելի է. տարբեր հեղինակներ տարբեր կերպ են այն անցկացնում՝ հասցենով մինչև Թալիշ և Կասպից ծով: Մեր կարծիքն այս է. Սավալան (Սարալան) և Սոհունդ (Սեխենդ) հրաբուխները իրանական սարահարքին խորը են: Մրանք հիմքով կապված են Հայկական հրաբխային օջախի հետ, թե՛ ծագումով և թե՛ բարձրությամբ ու ռելիեֆով նման են Հայկական հրաբխային բարձրավանդակին, ուստի պես է մտցնել Հայկական լեռնաշխարհի մեջ: Ուրմիա լճի ափազան-գոգավորությունը ևս ծագումով ու լանդշաֆտներով նմանություն ունի Արաքսի ավազանի կիսաա-

նապատճերին, ուստի հարավ-արևելյան սահմանը մենք անց ենք կացնում Արցախի լեռների ստորոտով՝ դեպի Արարսի աջակողմյան Սևջոր (Ղարասու) վտակի հովհանք՝ մինչև Սավալան հրաբրի հարավային ստորոտը, այնտեղից՝ Բոզգուշ լեռնաշղթայի հարավային ստորոտով մինչև Ուրմիա (հնում՝ Կապուտան) լճի հարավային ափերը՝ ընդգրկելով Սոհոնդ (Սեխենդ) հրաբուխը: Այսուհետև՝ Ուրմիայի հարավային մասից դեպի Զագրոսյան լեռնաշղթայի Շինական լեռնանցը:

**Հարավային սահմանն** անցնում է Հայկական Տավրոս լեռնահամակարգի հարավային ստորոտներով: Այստեղ Արարա-Սիրիական կոչտ պլատֆորմային զանգված-սալը ճգնում է Տավրոսի ծալքավոր համակարգը և մտնում նրա տակ: Տավրոսը պատի նման բարձրանում է: Այս սահմանն արևմուտքում սկսվում է Եփրատի աջակողմյան Սանգա (Գյոկու) վտակից, անցնում է Մալաթիայի լեռնաշղթայի հարավային ստորոտով, այսուհետև Հայկական Տավրոսի և Կորդվաց լեռների ստորոտներով ճգնում է մինչև Մեծ Զար գետի ավազանը՝ Շինական լեռնանցը: Այս հատվածում Զագրոսի կոշտաքերրավոր զանգվածները տարածվում են դեպի Իրաքի հյուսիսային մասը և դեպի Իրան:

Նշենք, որ Հայկական լեռնաշխարհի ֆիզիկա-աշխարհագրական մարզի հարավային սահմանը չի համապատասխանում Պատմական Հայաստանի սահմանին:

Քանի այն է, որ Տավրոսից հարավ մինչև Մասիսի լեռները ճգնում է մի ընդարձակ դաշտ, որին Հայոց (Վերին) Միջագետք են անվանում: Այն ոռոգվում է Տիգրիս գետի և նրա վտակների ջրերով: Պատմականորեն այն մտել է Հայաստանի մեջ, սակայն Հայոց Միջագետքը ծագումով, լեռնագրությամբ, կլիմայով ու լանդշաֆտներով տիպիկ «միջագետքյան» է, ուստի ֆիզիկա-աշխարհագրական առումով «Հայկական լեռնաշխարհ» լեռնային կղզու մեջ չի մտնում:

**Արևմտյան սահմանը** ամենից վիճելին է: Հետինակների մի խումբ սահմանն անց է կացնում Եփրատ գետով՝ գետի աջափնյա ավազանը անցատելով լեռնաշխարհից: Փոքր Հայքը, որ Եփրատից արևմուտք է գտնվել, դիտում են որպես առանձին մարզ: Մեկ այլ խումբ սահմանը անց է կացնում Ալիս (Հայիս, Կողլ-Իրմակ) ու Եփրատ գետերի ջրբաժանով, ավելի ծիշտ՝ Թեղերի լեռնաշղթայի արևմտյան ստորոտներով: Ֆիզիկա-աշխարհագրական իմաստով վերջինս ընդունելի է: Քանի այն է, որ Եփրատի աջակողմյան ավազանը ծագումով այն հատվածն է, որտեղ Տավրոսի և Պոնտական համակարգերը կապվում են միմյանց. Անտիտավրոսը և Թեղեր լեռները տիպիկ հայկական են: Այստեղ է Ուզուն-յալլա բարձրավանդակը, որտեղ հրաբխային երեր կան, կապվում է Հայկական հրաբխային բարձրավանդակին: Եփրատի աջակող-

մյան ավագանը կլիմայով ու լանդշաֆտներով, լեռների բարձրությամբ միանգանայն տարբերվում է դեպի արևմտուք տեղադրված բարձրավանդակից: Եփրատ գետի աջակողմյան Մելսա (Թոխմա, Կավլավա) վտակը բերուկները կուտակում է Մալարիայի դաշտում որպես կոռույատիվ նատվածքներ:

Եվ այսպես՝ արևմտյան սահմանն անցնում է (հարավից հյուսիս) Եփրատի աջակողմյան Սանգա (Գյոլսու) վտակի վերնազավարից հյուսիս դեպի Նուկրական լեռնաշղթան, այստեղից Զահան (Պիռամոս) և Եփրատի Մելսա վտակի միջևանցնող գծով, այսուհետև՝ Ալիսի և Եփրատի ջրբաժանից արևմտուք (Թեզերի լեռնաշղթայի ստորոտով) մինչև Կարմիր քար (Ղզըղդաղ) ու Լերկասար (Ղյոսաղաղ): Այստեղից կտրելով Գայլենտը (Կելկիր)՝ հասնում է Կլլնչ գագարին և ուղղահայաց իջնում է Սև ծով: Նշված գագարները իրենց բարձրությամբ տիպիկ հայկական են, դեպի արևմտուք այլև այդպիսի բարձրություններ չկան:

Հայկական լեռնաշխարհը երեք կողմից՝ հյուսիսից, արևելքից և հարավից եզերված է պատճեշակերպ լեռնաշղթաներով, որոնք միանգամայն ցայտուն կերպով երկիրն անջատում են հարևան ցածրադիր դաշտավայրերից կամ Սև ծովի գոգավորությունից: Գևորգ Մեսրոպյան 1919 թ. Կ. Պոլսում հրատարակած «Հայաստան» գրքում գրում էր. «Հայկական լեռնաշխարհ կնմանի բերդաբաղարի նը, որը պարիսպներով շրջապատված է»:

Այդ պատկերը լիովին արտահայտվում է 12 և 13 նկարներով: Լեռնազրական սխեմայի վրա անց են կացված 1-1<sub>1</sub>, 2-2<sub>1</sub>, 3-3<sub>1</sub> տրամատները, որոնք ցույց են տալիս ուղիղեթի կտրվածքների կողապատկերները: 1-1<sub>1</sub> տրամատը անցնում է լեռնաշխարհի ամենալայն մասով՝ Սև ծովից՝ Քաջքար գագարով մինչև Զիլո գագարը: Պարզ երևում է, որ լեռնաշխարհի եզրերին բարձրությունները հասնում են 4 կմ բարձրության, ապա իջնում Սև ծովի հատակ (հյուսիսում) կամ վերածվում հարթավայրի Տիգրիսի հովտում:

Նույն պատկերը երևում է նաև 2-2<sub>1</sub> և 3-3<sub>1</sub> տրամատներում: Ուշագրավը նաև այն է, որ երեք տրամատներում էլ Հայկական լեռնաշխարհի եզրերը շրնչին բարձրություն ունեն, իսկ ներքնաշխարհը բարձր է ու կտրատված, առանձին գագարներ հասնում են 4-5 կմ բարձրության: Երեք տրամատն էլ ցույց են տալիս, որ այս լեռնաշխարհը լեռնային կղզի է:


Մինչև այժմ հրապարակի վրա եղած գիտական աղբյուրներում լեռնաշխարհի միջին բարձրությունը ընդունված է շորջ 1800 մ: Մենք փորձեցինք ճշտել այդ թիվը. կազմեցինք բարձրաշափական աղյուսակ և կոր (աղ. 1, նկ. 2): Բարձրաշափական կորի վերլուծությունը հնարավորություն տվեց գտնել լեռնաշխարհի միջին բարձրությունը. ստացվեց մոտ 1870 մ: Այսպիսով, մինչև այժմ Հայկական լեռնաշխարհի միջին բարձրությունը զգալի չափով պակաս է գնահատվել: Ընդհանրացնելով՝ այսուհետև պետք է ընդունել 1850-1900 մ:

Նորից շեշտենք, որ հարևան Փոքրասիական և Իրանական սարահարթերի նկատմամբ մեր լեռնաշխարհը բարձր է 600-800 մ և շրջապատի դաշտավայրերի ու սարահարթերի համեմատությամբ մի լեռնային կղզի է: Այդ բանը առաջին անգամ նկատել է Է. Զյուսը, ապա Կ. Ռիտտերը, և Հայոց աշխարհն անվանել են Berginsel՝ լեռնակղզի: Կ. Ռիտտերը Հայկական լեռնաշխարհն անվանում էր օդով ու ջրով հարուստ լեռնային գով կղզի:

Այժմ փորձենք մեկնարանել բարձրաշափական աղյուսակը և կորը:

Աղյուսակը ցույց է տալիս, որ մինչև 500 մ բարձրությունները լեռնաշխարհում չնշին տարածություն են գրաղեցնում 5 %-ից էլ պակաս (17,6 հազ. քառ. կմ) և եզրային մասերում են՝ Սև ծովի հարավային ափին, Կուր-Արաքսյան դաշտավայրի ծայր եզրային հատվածներում: 500-1000 մ բարձրությունները գրաղեցնում են մոտ 44,8 հազ. քառ. կմ կամ լեռնաշխարհի տարածքի 12 %-ը: 1000-1500 մ գոտին գրաղեցնում է 85 հազ. քառ. կմ կամ տարածքի 22,8 %-ը: Ամենից ընդարձակ տարածություն գրավում է 1500-2000 մ բարձրության գոտին՝ 110 հազ. քառ. կմ կամ տարածքի մոտ 30 %-ը, իսկ 2000-2500 մ բարձրությունները, որտեղ դեռևս կան մշտական բնակավայրեր, կազմում են 65 հազ. քառ. կմ կամ տարածքի 17,4 %-ը: Ավելի բարձր լեռները գրաղեցնում են 50 հազ. քառ. կմ կամ տարածքի 14 %-ը:

Բարձրագրական կորը (նկ. 2) պարզ կերպով ցույց է տալիս, որ ձախից աջ՝ սկսած 2500 մ-ից մինչև 1500 մ, կորը ձգտում է հորիզոնականին. դա նշանակում է՝ ամենից ընդարձակ տարածություն գրաղեցնում են այդ բարձրությունները:



Քյունները՝ մոտ 180 հազ. քառ. կմ կամ լեռնաշխարհի տարածքի մոտ 50 %-ը: Այստեղ էլ կորը միանգամայն արդարացնում է Զյուսի և Ո-հտտերի վերը նոշ-ված բնորոշումը:

Լեռնաշխարհի ծայրագույն ցածր կետը Սև ծովն է՝ 0 մ բարձրությամբ, բարձրագույնը՝ Արարատ (Մասիս) լեռը՝ 5165 մ: Ներքին շրջաններում հարա-բերական բարձրությունները հասնում են 3000-4000 մ-ի. օրինակ՝ Արարա-տյան դաշտում՝ 4300 մ (800-5165 մ), Սև ծովի ափից մինչև Սիփանի գագարը՝ 3700 մ (1720-4434 մ), Տիգրիս գետի ձախակողմյան Սևծ Զար վտակի հովտից մինչև Զիլո լեռնագագարը՝ 3000 մ և այլն: Մինչև 2000 մ հարաբերական բարձրու-թյունները սովորական են, և ամենուրեք հովտներում դա կարելի է նկատել:

Լեռնաշխարհի հարավ-արևելյան մասում՝ Կորդվաց լեռներում շատ խո-րը մասնատման հետևանքով ամենուրեք հարաբերական բարձրությունները մեծ են: Հորիզոնական ուղղությամբ ընդամենը 500-600 մ-ի վրա լեռան բարձ-րությունը կարող է հասնել 2000 մ-ի. բվում է, թե լեռնաշղթան պատի նման է վեր խոյանում:

#### Աղյուսակ 1

#### Հայկական լեռնաշխարհի բարձրաշափական աղյուսակը

Բարձրության ինտերվալը	Ինտեր- վալի միջին բարձր.՝ մ	Ինտերվալի տարածքը՝ քառ. կմ	Գույուց վեր գումարային տարածքը՝ քառ. կմ	Գույուց ցածր գումարային տարածքը՝ քառ. կմ	Ինտերվալի տարածքի տոկոսը
0-100	50	3200	372494	3200	0,86
100-200	150	5200	369294	8400	1,4
200-500	350	9200	364094	17600	2,47
500-1000	750	44800	354894	62400	12,0
1000-1500	1250	85000	310094	147400	22,8
1500-2000	1750	110000	225094	257400	29,5
2000-2500	2250	65000	115094	322400	17,4
2500-3000	2750	34000	50094	356400	9,1
3000-3500	3250	15000	16094	371400	4,0
3500-4000	3750	1000	1094	372400	0,27
4000-4500	4250	85	94	372485	0,02
4500-5000	4750	7	9	372492	0,002
5000-ից բարձր		2	2	372494	0,0006
	գումարը՝	372494			100

Տիեզերքից կատարված նկարահանումները ցույց են տալիս, թե ինչպես է լեռնաշխարհը բրդրված հոսող ջրերի միջոցով: Այդ նկարների վրա պարզ կերպով երևում է երկրի ներքին՝ տեկտոնական ուժերի ու արտաքին՝ Արեգակի (սոլյար) էներգիայով պայմանավորված ուժերի պայքարը: Ներքին ուժերը՝ տեկտոնական բարձրացումները կամ հրաբխային արտավիճումները ձրգում են ստեղծել ռելիեֆի նոր ձևեր, իսկ արտածին գործոնները՝ հողմահարումը, հոսող ջրերը, քամին, առցադաշտերը և այլն, հարձակվելով բարձրացող լեռնաշղթաների վրա՝ քայլայում ու մաշեցնում են դրանք:

Գիտնականները հաշվել են, որ Մեծ Կովկասի կամ Ալպերի նման լեռնային համակարգը 20-25 միլիոն տարում կմաշվի այն աստիճան, որ կիավասարվի ծովի մակարդակին, եթե, իհարկե, չլինեն նոր տեկտոնական բարձրացումներ: Հայկական լեռնաշխարհում այսօր մենք ունենք 3-5 հազ. մ բարձրության լեռներ. այստեղից ակներև է, որ տեկտոնական բարձրացումները շատ զորեղ են եղել և արտածին ուժերը չեն հասցնում դրանք մաշեցնել-համահարթել: Տեկտոնական բարձրացումները որոշ լեռներում կարող են հասնել տարեկան 5-10 մմ-ի. դա նշանակում է՝ 100 հազար տարվա շատ կարճ ժամանակամիջոցի բարձրացումը կկազմի 500-1000 մ: Իսկ 100 հազար տարին երկրաբանական պատմության ընթացքում չնշին ժամանակահատված է:

## ՀԱՅԻ ԲՆՈՐԲԱՆԸ

Մարդաբաններ Լուչանը, Շանտրը, Վիրխովը, Պանտյոխովը, Անուշինը, Քունակը և ուրիշներ հաստատում են, որ Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկ են արմենոիդ-հայակերպար ցեղերը:


Վ. Վ. Քունակը դեռևս 1927 թվականին գրում էր. «Արմենոիդ տիպը հայտնի է ամենահին ժամանակներից և ունի լայն տարածում Միջագետքի բոլոր մարզերում՝ սկսած նրա հարավային մասից մինչև Տիգրիսի ու Եփրատի վերնագավառները, և ավելի արևմուտքում մինչև Անատոլիական թերակղզու արևմտյան ծայրը՝ մի կողմից, ինչպես նաև Իրանի ներքին շրջաններում՝ մյուս կողմից:

Առաջավոր Ասիայի բնակչության մեջ ոչ մի այլ ռասայական տարր չի կարելի արձանագրել: Այս տիպի ձևավորումը ավարտվեց մինչև Նվոպացիների, ասիացիների ցեղախմբերի՝ բրակիացիների, հելլենների, բուրքերի ի հայտ գալը, որոնք հավանաբար էական ազդեցություն չեն բողել բնակչության մարդաբանական տիպի վրա, լուծվել են հաստատականորեն ձևավորված արմենոիդ ռասայի մեջ» (էջ 263):

Այս նոյն տեսությունը հաստատում է Ն. Հ. Քոչարը (1989) դերմատոգի-

Ֆիկայի անժխտելի նյութերի տվյալների հիման վրա:

Դեռևս նեղիքում (նոր քարե դար), մեզանից 7-8 հազար տարի առաջ, Հայոց աշխարհում ու Փոքր Ասիայում ապրող արմենոնդ տիպին պատկանող ցեղերը հաղորդակցվում էին նոր ձևափորվող հնդեվրոպական նախալեզվով։ Այդ ժամանակվանից սկսվում են ցեղերի կենտրոնախույս շարժումները։ Նրանք շարժվում են դեպի Միջերկրականի ավազանը, Եվրոպա, Իրան, Միջն Ասիա, մինչև Հնդկաստան։ Տեղում մնացել են հայերը, խեթերը, հույները, իրանյան ցեղերը։ Եվ այսպես, հայկական էրնոսի ձևափորությը, նրա տնտեսական նախադրյալները ստեղծվել էին դեռևս նեղիքի ժամանակներից։



Նկ. 3. Հայոց պատմական աշխարհի բաղադրամասերը

1. Մոծ Հայք, 2. Փոքր Հայք, 3. Հայոց (Վերին) Միջագետք, 4. Կիլիկիա, 5. Մարաց Ամոր աշխարհ, 6. Ալրապատճաց գավառ, 7. Պատմական Հայաստանի սահմանները, 8. Փոքր Հայքի սահմանները 6-րդ դ.

Հայոց աշխարհը Եվրասիայի քարտեզի վրա պատմական տարրեր ժամանակաշրջաններում տարբեր տարածքներում է պատկերվել՝ ինչպես Հայկական լեռնաշխարհում, այդպես էլ նրա հարևան ընդարձակ տարածություններում։ Ասպատակությունների հետևանքով բնակչության տեղաշարժեր են եղել։ Եթե ընդհանրացնենք, ապա կարող ենք ներկայացնել նկ. 3-ը, որտեղ պատկերված են Հայոց աշխարհի բաղադրամասերը։

Ինչ վերաբերում է բոլորական տարրին, որն այժմ դարձել է տիրապետող,

ապա այն առաջին անգամ հայտնվել է 11-րդ դարում:

Քաղաքակրթության օրբան լինելով հանդերձ՝ Հայոց աշխարհը դժբախտություն է ունեցել կովախնձոր դառնալով՝ նախ տարբեր ցեղախմբերի, այնուհետև՝ հզոր ու աշխարհակալ պետությունների միջև։ Ասորեստանը, Հռոմը, նրա ժառանգորդ Բյուզանդիան, Պարսկաստանը բազմից ներխուժել են Հայաստան։ 7-րդ դարում արաբները ասպատակեցին ու ավերեցին երկիրը։ 11-րդ դարում ծաղկուն երկիրը քարութանդ եղավ Սիցին Ասիայից ներխուժած սելջուկ-բուրքերի ասպատակություններից։ Դրան հաջորդեցին բազմաթիվ վաչկատուն ցեղեր, թաքար-մոնղոլներ, Լենկ-թեմուրի հրոսակախմբերը և այլ վայրագ ցեղեր։

Անցած 7-8 հազարամյակներում արդյոք եղել է գոնե մեկ դար, որի ընթացքում պատերազմական գործողություններ չեն եղել հայի հողի վրա։ Ինչքան ցեղեր, ցեղախմբեր, ժողովուրդներ անհետացել են պատմության բատերաբեմից։ Ո՞ւր են խեթերը, լուսիացիները, փոյուգիացիները և այլք։ Հայը կարողացավ գոյատևել՝ անցնելով դժոխային արհավիրքների միջով։ Արտագաղթերը, ցեղասպանությունները քամեցին հայ ժողովրդին։ Եթե չլինեն միջնադարյան ասպատակությունները, այժմ հայ ժողովուրդը 50 միլիոնից շատ ավելի կլիներ։

Ինչպես է, որ հայը գոյատևեց։

Հայի գոյատևման գործոններն են՝ կրոնական պաշտամունքը, լեզուն, գրչությունը, կենսարար և ունիկալ մշակույթը, հայի՝ պետականության զգացողությունն ու ծգությունը, ընտանիքի պաշտամունքը, աղետայի վիճակում անգամ ելք գտնելու և զենքով իր ազատությունը պահպանելու կամքը։

Մինչև 4-րդ դարը տեղաբնիկները դավանել են բազմաստվածություն, և կրոնական պաշտամունքը տարբեր ցեղախմբերի միավորման ու պետականության ստեղծման հզոր խրան է եղել։ Ավստրիացի արևելագետ Կ. Ֆ. Լեհման-Հառլապտը նշում է, որ խալդապաշտ ցեղերը հանրային ինքնաճանաշման են հասել Խալդի աստծու անունով, որը հետագայում նույնացվեց Հայկի աստվածության հետ։

Քրիստոնեությունը որպես պետական կրոն աշխարհում առաջին անգամ ընդունվել է Հայաստանում 301 թվին։ Հայ Առաքելական Եկեղեցին, նրա կաթողիկոսները, Եկեղեցական սպասավորները ամեն կերպ աշխատում էին միավորել հայ ժողովրդին, նախարարական տներին։ Զաքրիչների բոլոր մեքենայությունները՝ հային կրոնափոխ անելու գործում, ծախտողվել են։ Հայ երիտասարդը գերադասում էր զրկվել ծնողների ժառանգությունից, բայց կրոնափոխ չլինել։

Հայի գոյատևման, հայապահպանության գործում անգնահատելի են լեզուն, գրչությունը, մշակույթը։ Այսուղի ևս Հայ Առաքելական Եկեղեցին վճռա-

կան դեր կատարեց: Կաբողիկոս Սահակ Պարքեսի անմիջական աջակցությամբ Մելքոն Մաշտոցը 404-406 թթ. կատարեց հայոց գրերի գյուտը, որը հայ իրականության մեջ թերևս ամենանշանակալի երևոյթն է:

Հայի գոյատևման կովաններից մյուսն այն է, որ դեռևս նեղիքում նրա մեջ հասունացել էր պետականություն ստեղծելու անհրաժեշտությունը: Այդ հոգեբանությունը սերմնից սերունդ անցնելով հասել է մեզ:

Հայի հոգեբանության կարևոր գծերից մեկը ընտանիքի սրբության գիտակցումն է, որն էլ խրան է դարձել երեսով ձևավորման և գոյատևման գործում: Գոյատևման կարևոր գծերից մեկը հայի հարմարվողական հոգեբանության ձևավորման մեջ է: Դարեր շարունակ, օտարի կրնկի տակ, հայը պետք է մշակեր այնպիսի վարվելակերպ, որով ապահովեր իր ընտանիքի և համայնքի գոյությունը: Հայունի են քազմարիվ դեպքեր, երբ հայոց զորագրները մեկ այս տիրակալի, մեկ հակառակորդ տիրակալի կամքն են կատարել: Հայը ստիպված էր դիմել նման քայլի՝ պահպանելու իր գոյությունը, վճռական պահերին ապավինելով գենքի ուժին:

Հայը ներկայում ապրում է իր բնօրրանի տարածքի 7-8 %-ի վրա՝ Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, որը Արցախի մի մասն է, Վրաստանի Հանրապետության հարավում: 1988 թ. սումգայիթյան ցեղասպանությունից հետո հայերը Աղրբեջանի Հայոց պատմական տարածքներից՝ Նախիջևանից, Գարդմանից և այլ տարածքներից զանգվածաբար տեղահանվեցին:

Ներկայում Անդրկովկասում հայերի թիվը չորս 4 միլիոն է, նույնքան էլ ապրում են Սփյուռքում՝ ամբողջ աշխարհում գոյություն ունեցող քազմարիվ գաղրօշախներում: Այստեղ հարկ ենք համարում նորից նշել այն մասին, որ հայ երնորդ տեղական ծագում ունի: Այն քարի դարից անընդմեջ հարատևել է: Շեշտենք ու մի փոքր անդրադառնանը այս հանգամանքին:

Ինչպես նշեցինք, արմենոնիդ մարդաբանական տիպը ծնունդ է առել Հայոց աշխարհում: 1943-45 թթ. հնագետ Ա. Սարդարյանը (1954) Արագածի հարավային լանջերին հայտնաբերեց շելյան փուլի (իին քարե դար) քարե գրդիբներ: Այսուհետև իին քարի դարի հետաքրքրական բնակավայրեր հայտնաբերվեցին Հրազդանի միջին հոսանքների ավազանում, Արևմտյան Հայաստանում և այլուր: Պեղումներով ապացուցված է, որ մարդն այստեղ ականատես է եղել իրաբխային ժայթքումների: Լավաների տակ հայտնաբերվել են մարդկային ոսկորներ և գործիքներ: Վերին քարե դարում 40-12 հազար տարի առաջ նեանդերքալցոց բանական-մարդուն անցում է կատարվել, և Homo Sapiens-ի տիպը մինչև մեր օրերը մնացել է անփոփոխ:

Հնագիտական երկարատև ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Անդրկովկասի, Հյուսիսային Երանի, Սիցագետքի, Սիրիայի, Պաղեստինի

քարի դարի հնագույն մշակույթը մի ընդհանուր ծագում ունի, այդ ամբողջ տարածքը քարի դարի վերջում զբաղեցրել են միևնույն մշակույթն ունեցող և միևնույն երնիկական ծագման խմբավորումները կազմող ցեղերը՝ այլմննիդները: Արմենոդիմեները հայտնվել են Եփրատի գետաբերանում, Հարավային Եվրոպայում, Իրանում, Սիրեկրականի ափերին:

Հ. Ա. Մարտիրոսյանը (1978) մեծ նամանուրյուն է գտնում Հայկական լեռնաշխարհի և հեռավոր Անդալուզիայի (Պիրենեյան թերակղզի) ժայռապատկերների միջև, որով հաստատվում է S. Գամկրելիձեի և Վ. Խվանովի տեսությունն այն մասին, որ Հայկական լեռնաշխարհն ու Փոքր Ասիան են եղել հներոպատկան լեզվի նախահայրենիքը, որտեղից այդ լեզուն կրողները ցըրվել են Եվրոպայով մեկ:

Պեղումներով անառարկելիորեն ապացուցված է, որ Արարատյան դաշտում նատակյաց կյանք ու մշտական բնակավայրեր գոյուրյուն են ունեցել մեզանից 8 հազար տարի առաջ: Այդ բնակավայրերից մեկը Ծենգավիրն է (այժմյան Երևանյան լճի ափամերձ տարածքը), չորս կուլտուրամշակութային շերտերով:

Պղնձեքարեղարյան (Էնեոլիթ) դարաշրջանում (5-3-րդ հազարամյակներ մ. թ. ա.) բնիկների մշակույթը զարգացել է այն աստիճան, որ մարդիկ հանքարից պղինձ են ծովել: Պղնձաքարին հաջորդում է բրոնզի դարը: Հայոց աշխարհի բազմաթիվ վայրերում հայտնաբերվել են ձուլարաններ: Վերջին հայտնաբերումներից է Մեծամորի համալիրը, որը 1950-ական թվականներին հայտնաբերվեց Երևարան Կ. Սկրտչյանի կողմից:

Հ. Մարտիրոսյանը, Ս. Պետրոսյանը կատարել են ժայռապատկերների վերլուծություններ: 3-2-րդ հազարամյակների մեր նախնիները ստեղծել են Կենդանակերպը (Զողիակ): Եթե Բարելոնը՝ ջրի, իսկ Եգիպտոսը՝ պվազի ժամացույցների հայրենիքն է, ապա Հայաստանը՝ արեգակնային և լուսնային ժամացույցների հայրենիքը: Սեր նախնիները Երկիրը պատկերել են կլոր, գիշերային ժամերին կողմնորոշվել են Բևեռային աստղի միջոցով:

Հետաքրքիր է այն, որ մեր նախնիները սրանից 4-5 հազար տարի առաջ գաղափար ունեին ինձ մոլորակների նախն: Դրանց գումարելով Արև և Լուսին պաշտամունքը՝ ստացել են 7 թիվը, որը շատ հին ժամանակներից սուրբ թիվ է համարվել: ՀՀ Վարդենիսի լեռնաշրջայի Սևար լեռան վրա և Քարահունջում (Գորիսի մոտ) պահպանվել են հնագույն ժամանակների մարդու տիեզերական իմացությունը պատկերող «աստղափիտարանները»:

Բրոնզի դարում, մինչև 2-րդ հազարամյակի կեսերը, Հայոց աշխարհի ցեղային միությունները բավական առաջադիմել էին, զարգանում էին բազավորանիստ քաղաքները՝ թագավորական միջնաբերդերով:

Սինչև բրոնզի դարը մեր իմացությունը հիմնականում հենվում էր հնագի-

տական նյութերի վրա, մասամբ նաև՝ ժայռապատկերների վերծանման: Բրոնզի դարում արդեն կան գրավոր լուրջ սեպագրեր, որոնք պարզ պատկերացում են տալիս մեր նախնիների մշակույթի, կենցաղի, պաշտամունքների, հասարակական հարաբերությունների մասին:

20-րդ դարի սկզբին մթուրքիայի Կայսերի վիլայերում Բողազ-Քյոյի մոտ շինարարական աշխատանքներ կատարելիս հայտնաբերվեց խեթական պետության արխիվը 3000 կավե սալիկների վրա: Արխիվում կան բազմաթիվ հիշատակություններ Հայասա-Ազգի պետության մասին: «Caucazica» հանդեսում է. Ֆուստերը 1931 թ. իրապարակեց «Hajasa-Azzi» հոդվածը: Այդ բոլոր նյութերի հիման վրա Գ. Ղափանցյանը 1947 թ. իրատարակեց՝ «Հայասա» հայերի բնօրբան» («Խայաս - կոլածել արման») գիրքը որուաց լեզվով: Պարզվեց, որ «Հայասա» բարի «ասա» վերջավորությունը խեթերեն նշանակում է ասրելու վայր: Այդ նյութերի միջոցով պարզվեց, որ երկրորդ հազարամյակի կեսերին գոյություն է ունեցել հայի պետականությունը: Խեթական հզոր պետության դիմաց Հայասան նույնական գործել է եղել, խեթերը դրատերին կնության են տվել հայազգի մեծամեծներին, և այդ մասին կան գրավոր հիշատակություններ:

Այսպիսով՝ անառարկելիորեն ապացուցվեց, որ սրանից առնվազն 3500 տարի առաջ գոյություն է ունեցել հայկական պետություն, մարդիկ հաղորդակցվել են հայերենով, ձևավորվել եր հայ եքնոսը:

Վերջին երկու տասնամյակներում մամուլում ներկայացվել են աշխատություններ այն թեզի վերաբերյալ, որ Հայոց աշխարհում պետականություն գոյություն է ունեցել Հայասայից շատ ավելի առաջ, սակայն դա դեռ հանգամանալից ապացուցման կարիք ունի:

Բրոնզի դարին հաջորդում է երկարի դարը: Երկարի ձուլման գյուտը մի նոր հեղափոխություն էր: Ժ. Մորգանը, Գորդոն Չայլդը, Ս. Կ. Դիկշիտը և ուրիշներ հնագիտական հարուստ նյութերի հիման վրա եկել են այն եզրակացության, որ հանքային երկարի հայտնագործումը ևս պատկանում է Հայոց աշխարհի բնակչներին: Հայաստանը մետաղաձուլության այն օջախն է, որտեղից այդ մշակույթի ալիքները տարածվել են աշխարհով մեկ:

Մինչև 19-րդ դարը հայերի ծագումը պատկերացվում էր ըստ Աստվածաշնչի, որ հայը տեղական ծագում ունի:

19-րդ դարի սկզբին լեզվաբանները աշխատում էին լեզուները դասակարգել: 1833-ին Ֆրանց Բոպայը լույս ընծայեց «Համեմատական քերականություն» աշխատությունը: Հայերենը դասվեց հնդեվրոպական լեզուների շարքին: 1837-ին Հ. Պետերմանը դրեց հայերենի համեմատական ուսումնասիրության հիմքը:

Ծագեց մի շատ կարևոր հարց՝ հնդեվրոպական լեզուն որտե՞ղ է ծագել, ո՞րն է նրա նախահայրենիքը:

Եվ «գտան»: Առանց որևէ հիմքի գտան, որ այն Կենտրոնական Եվրոպայում պետք է լինի: Ելենլով դրանից՝ սկսեցին որոշել տարրեր լեզուներ կրողների գաղթի ուղիները. դրանց թվում նաև հայերինը:

Եվ այսպես՝ 19-րդ դարում ծագեց այսպես կոչված «միզրացիոն» տեսությունը, որի ներկայացուցիչներն էին՝ Մեյեն, Սոոլեն, Ֆրադենը, Էսպերանտոն, Դեպրեն, Ծմիլտը, Մարկվարտը, Կրեչմերը և այլք: Ռասայական տեսությունը այնքան հեռու գնաց, որ նույնիսկ շինական և ճապոնական մշակույթները համարվեցին Եվրոպականի արգասիք:

Այժմ դառնանց հայերին:

Սեղանին դնելով քարտեզը՝ գտան, որ միզրացիայի ամենահարմար ուղին Քալկանների վրայով է: Պետք էր ապացույցներ գտնել. դա էլ հորինեցին: Օրինակ՝ մեջտեղ եկավ առասպել՝ արգոնավորդների սխրագործությունները: Թեսալացի Յալտան քաղաքի արքայազնը՝ Յասնը իր շորջն է համախմբում քաջերի մի խումբ և «Արգո» նավով ուղևորվում Կոոդրիս (Կոլխիդա) հափշտակելու կախարդական ոչխարի ոսկե գեղմը: Նկարագրվում են քազմաքի անբնական սխրագործությունների դեմ: Ահա արգոնավորդների մեջ էր Արգենոսը, որին էլ իր խմբով վերագրվում էր Արմենիան ստեղծելու պատիվը:

Հետաքրքիրն այստեղ այն է, որ հենց հայ մի շարք պատմաբաններ ու լեզվաբաններ հրապուրվեցին այդ կեղծ վարկածով, որ իրենք Եվրոպացի են և առանց խոր քննարկման, մեխանիկորեն ընդունեցին ականավոր Եվրոպացիների «տեսությունը»: Ասիացի լինելը 19-րդ դարում վիրավորական էր, ուստի Եվրոպացիությամբ շատերը գայթակղվեցին: Այդ վարկածը միանգամայն ձեռնոտու էր բուրքերին ու աղբբեջանիներին, որոնք վկայակոչելով Ի. Դյակոնովին<sup>1</sup> և որոշ գիտնականների՝ «գտան», որ հայը եկվոր է՝ անշուշտ լոելով, թե իրենք որտեղից են:

Միզրացիոն վարկածը լուրջ կերպով քննարկեց Բ. Առաքելյանը (1948): Նրանից հետո՝ Գ. Զահուկյանը, Գ. Սարգսյանը և շատ ուրիշներ: Բազմաթիվ հեղինակներ ցույց տվեցին, որ այդ տեսությունը կեղծ է: Ցույց տվեցին, որ հայերը ոչ միայն առաջին, այլև միակ ժողովուրդն են, որ կազմավորվել են Հայկական լեռնաշխարհում:

Եթոնգենեզը՝ ժողովրդի ծագումն ու կազմավորումը, երկարաժամկետ ժամանակական պատմությունը:

<sup>1</sup> Ի. Դյակոնովը 1968 թ. լույս ընծայեց «Հայ ժողովրդի նախապատմությունը» (“Предыстория армянского народа”), որի հիմնական նախատակն էր ցույց տալ, որ հայերը եկվոր են: Եթե 19-րդ դարի հեղինակները պատկերացում չունեին Հայաստանը և ապաշտանում էին եկվորությունը, ապա Դյակոնովին Հայաստան արդեն հայտնի էր, քայլ նա ամեններ անտեսելով Հայաստանի իրողությունը. գտնում է, որ հայերը եկել են 12-9-րդ դարերում (մ. թ. ա.): Բացի այդ, նա Հայկական լեռնաշխարհի տակ հասկանում է միայն Արածանիի պավագանք: (Ենթադրում ենք, որ Դյակոնովի աշխատությունը պատվերով է գրված՝ բուրքերի քաղաքական նախատակներին ի ծառայություն:)

կաշրջանի զարգացման արգասիք է, որտեղ արտացոլվում են ինչպես զանազան ազգակից ցեղերի ներքին հատկանիշները, այնպես էլ այլ էթնիկական խընթերի ազդեցությունները: Եթողոքենեզը ներառում է ոչ միայն ժողովրդի կազմավորման սկզբնական էտապը, այլև բոլոր էտապների եթողողական, լեզվաբանական, մարդարանական, մշակութային առանձնահատկությունները: Այստեղից եզրակացություն՝ այդ բարդ պլոցեսի ճանաչման համար միայն լեզվաբանական, այն էլ բավական սուր ու վիճելի տվյալները ամեննին բավարար չեն: Անհրաժեշտ են եթողրաֆիական, հնագիտական, մարդարանական, պատմական, մշակութային և այլ տվյալներ: Հայ եթոսի ծևափորումը պետք է դիտել հայագիտություն կոչվող մեկ ընդհանուր՝ գիտությունների համակարգով:

Ուստի է նշել, որ 20-րդ դարի երկրորդ կեսին արդեն այդ պրոբլեմը այլ կերպ քննարկվեց և տվեց իր պտուղները:

Վերջին տասնամյակներում S. Գամկրելիձեն և Վ. Իվանովը բազմաթիվ հոդվածներով և երկիատոր ծավալուն մենագրությամբ<sup>1</sup> վերջնականապես ապացուցեցին, որ հնդեվրոպական նախալեզվի նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհը և Փոքր Ասիան են, ոչ թե Կենտրոնական Եվրոպան, ինչպես կարծում էին առաջ: Այս հայտնագործումը դարձյալ և վերջնականապես հաստատեց հայերի տեղաբնիկության փաստը: Նման տեսակետ հայտնել էին առաջներում Յ. Շմիդտը, Զ. Ֆայստը, Գ. Զահուկյանը և այլք:

Գ. Զահուկյանը (1987) գրում է, որ հայոց լեզվի առանձնակի (անկախ) զարգացումն սկսվում է Ք. ա.<sup>1</sup> մ. թ. ա. 3-րդ հազարամյակի սկզբներից և ինքնուրույն գոյուրյան նախագրային ժամանակաշրջանի համար առանձնացնում է երկու շրջան, յուրաքանչյուրը երկու ենթաշրջանով:

1. Վաղնջական շրջան (վաղնջական հայերեն) 3-րդ հազարամյակի սկզբներից մինչև 13-րդ դարը (մ. թ. ա.):

2. Հնագույն շրջան (հնագույն հայերեն) 12-րդ դարից մինչև 4-րդ դար (մ. թ. ա.):

Հայը տեղական ծագում ունի: Արմենոիդները մեր նախնիների հնդեվրոպական լեզվի արարողն են եղել: Հետազայում այդ լեզուն կրողները ցըլեցին աշխարհով մեկ: Տեղում մնացին՝ հայերը, հոյուները, խեթերը, իրանյան ցեղերը: Հայ ժողովրդի ծևափորումը, նրա տնտեսական նախադրյալները ստեղծվել էին դեռևս նեղիքում:

Հայ եթոսի ծևափորումը կատարվել է Հայոց աշխարհում: Այդ տարածքը արտահայտված է վաղ միջնադարի «Աշխարհացոյց» աշխատության մեջ, որը մանրամասնորեն մեկնաբանված է Ս. Երեմյանի (1963), Բ. Հարությունյա-

<sup>1</sup> Гамкрелидзе Т. В., Иванов В. В., Индоевропейский язык и индоевропейцы, т. 1; т. 2, Тбилиси, 1984.

Աի (1997) և այլոց աշխատություններում: Մենք, իմք ընդունելով ՀՍ Հանրագիտարանի 7-րդ հատորի 321, 435 էջերին կից բարտեզները և համապատասխան տեքստերը, որ կազմել է Ս. Երեմյանը, Հայոց աշխարհի բաղադրամասեր ենք համարում Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Մարաց Ամուր աշխարհը, Հայոց (Վերին) Սիհագետքը և Ատրպատաց երկիրը (նկ. 3): Սրանց մասին կլսուակի վերջին գլուում:

## ԳԼՈՒ 2

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՄԵՐԻ ԽՈՐՁԻՑ

Հայոց բնօրրանի աշխարհագրական ուսումնասիրությունները հազարամյակների պատմություն ունեն: Ակգրում դրանք ճանաչողական ընույթի էին, ապա աստիճանական անցում է կատարվում դեպի գիտական մեկնաբանություններ, իսկ ներկայումս ունեն կոնստրուկտիվ-կիրառական նշանակություն:

Անցած հինգ հազարամյակների ընթացքում կատարված դիտարկումները, ուսումնասիրությունները և հիշատակությունները կարելի են բաժանել հինգ փուլերի՝

1. Հնագույն շրջան՝ մինչև հայոց գրերի գյուտը՝ 5-րդ դար,
2. Միջին դարեր՝ մինչև 18-րդ դարը,
3. 18-րդ դարից մինչև 20-րդ դարը,
4. Անդրկովկասի ուսումնասիրությունները Ռուսական Կայսրության կազմում,
5. Անդրկովկասյան հատվածում խորհրդային շրջանի ուսումնասիրությունները:

1. **Հնագույն շրջան:** Այս փուլում պետք է առանձնացնել նախագրային՝ մինչև զաղափարագրերի (հիերոգլիֆների), սեպագիր արձանագրությունների հանդես գալը, երբ տեղի բնակիչները՝ մեր նախնիները, իրենց հույցերն ու պատկերացումները արտահայտում էին ժայռապատկերներով՝ քարձր լեռների ժայռերի վրա: Կան որսի տեսարաններ, տարբեր կենդանիների պատկերներ, հավատալիքների արտահայտություններ: Սրանք ցույց են տալիս, որ նախագրային շրջանում բնիկները ունեցել են այն ժամանակվա մակարդակով զարգացած մշակույթ: Արդեն ապացուցված է, որ կենդանակերպը (Զողիակը) Հայկական լեռնաշխարհի բնակիչների ստեղծագործությունն է:

Դեռևս նախագրային շրջանում բնիկներն օգտագործել են օրացույց, որն անցել է հարևան երկրներ, ինչպես նաև արևային ժամացույց: Ժայռապատկերներում պատկերված կենդանիներից շատերը արդեն չկամ. դրանք հմտաշխարհագրական նշանակություն ունեն՝ պարզելու բուսական ծածկությի, մասնավորապես անտառային արեալների տեղաբաշխությը:

Հայկական լեռնաշխարհի տեղադիրքի և տարրեր ցեղախմբերի տարածական տեղաբաշխման մասին գրավոր հիշատակությունները հիմնականում ժայռերի կամ կավե տախտակների վրա ունեն երեքուկեսից չորս հազարամյակի պատմություն:

Մեր թվարկությունից առաջ երկրորդ հազարամյակում գոյություն ունեին չումերական, արքադական, խեթական, միտաննիների սեպագրեր, և լեռնաշխարհի տարրեր մասերում ու հարևան երկրներում հայտնաբերվել են զանազան արձանագրություններ, որտեղ հիշատակվում են Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղախմբերը, նրանց միջև պատերազմական գործողությունները, տարածները գրավելը, ավարառությունը և այլն: Այդ արձանագրությունների վերլուծությունը նաև աշխարհագրական բնույթի տեղակություններ է տալիս:

Հայոց երկրի մասին գրավոր առաջին լուրջ հիշատակությունը խեթական պետության արխիվում է, որի մասին արդեն նշել ենք: Այդտեղ նշվում է Հայաս-Ազգի պետության, հայասացիների դեմ արշավանքների կամ դաշնագրերի մասին: Այդ արձանագրությունները ցույց են տալիս, որ խեթական հզոր պետության կողքին մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսերին գոյություն է ունեցել նույնային հզոր պետություն՝ Հայասան: Հայասայի «ասա» վերջանցը խեթերեն նշանակում է ապրելու վայր:

Նշված արձանագրությունները մեծ հետաքրքրություն առաջացրին ամբողջ աշխարհում: Ուստինապիրելով դրանք, ինչպես արդեն նշել ենք, Գր. Ղափանցյանը լույս ընծայեց «Հայասան՝ հայերի բնօրրան» («Խայасա - կոլուել արմյան») գիրքը և գտավ, որ հայի անունը ծագում է հենց այդ Հայասայից:

Հայասա պետության դիրքին ու տարածին վերաբերող կարծիքները տարբեր են: Մեր կարծիքով այն ընդգրկում է Բարձր Հայքը և Արարատյան գոգավորությունը: Ազնա հենց Արարատյան դաշտն է, որը ուրարտական արձանագրություններում հիշատակված Ազնն է: Մենք գտնում ենք, որ խեթական հզոր պետության կողքին կարող էր գոյություն ունենալ հզոր Հայասան այն հիմնավորմամբ, որ նա ուներ այն ժամանակների չափանիշներով զարգացած մետաղածուլություն, ինչը հայտնաբերվեց միայն վերջերս՝ 1950-ական թվականներին Մեծամորի պեղումներով՝ երկրաբան Կ. Սկրտչյանի ջանքերով:

Հայկական լեռնաշխարհում և հարևան երկրներում գոյություն ունեն ասո-

բեստանյան, միտաննական, խորրիխական արձանագրություններ, որտեղ բազմաթիվ հիշատակություններ կան Նախիք Երկրի ու այդտեղ ապրող ցեղախմբերի մասին: Այդ Երկիրը պատկերվել է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասում: Բազմաթիվ են նաև ուրարտական արձանագրությունները:

Առաջին հազարամյակի կեսերին (մ.թ.ա.) «Արմենիա» անվանումը առաջին անգամ հիշատակվում է Աքեմենյան Պարսկաստանի թագավոր Դարեհի կարգադրությամբ ստեղծված Բիիշարունյան (Բազիասրանայի) ժայռակերտ եռալեզու արձանագրությունում (մ.թ.ա. 521 թ): Նույն բովանդակությամբ Երեք արձանագրություններից մնկում հիմ պարսկական տարրերակում հիշատակվում է «Արմենիա», Էլամերենում՝ «Հարմինա», իսկ արքադականում՝ «Ուրաշտու», այսինքն՝ Ուրարտու: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Ուրարտուն և Արմենիան նույն Երկրի անվանումներն են: Միևնույն ժամանակ սա ցույց է տալիս, որ «Ուրարտու» անունը ոչ թե էրենիկական, այլ աշխարհագրական իմաստ ունի:

Այն, որ «Արմենիա» անվանումը մ.թ.ա. 6-րդ դարում համընդիանուր ճանաչում է ունեցել, ցույց է տալիս նույն ժամանակի հույն քարտեզագիր Հելկատեսու Միլետացին: Նրա քարտեզի վրա Հայկական լեռնաշխարհի տեղում գրված է «Արմենիա»: Մ.թ.ա. 5-րդ դարի քարելունական քարտեզում նշված են ընդամենը ութ Երկրներ, որոնց բվում՝ Արմենիան:

Հայաստան աշխարհի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կան 6-5-րդ դարերի հունական աղբյուրներում: 5-րդ դ. նշանավոր փիլիսոփա-աշխարհագետ-պատմիչ Հերոդոտոսը պարզորոշ գրում է Արմենիայի մասին, ցույց տալիս նրա տեղը, նկարագրում է աշխարհագրական տարրեր օբյեկտներ:

Մոտավորապես նույն ժամանակներին է վերաբերում քաղենական մատյանը Հայաստանի մասին, որը պահպանվել էր պարսից արքունիքի դիվանում: Ա. Մակենդոնացու կարգադրությամբ մատյանը թարգմանվել է հունարեն: Այդ մատյանը ասորի Մար Աբաս Կատինայի միջոցով պարսկական դիվանից բերվել է Հայաստան՝ Վաղարշակ թագավորին: Այն հետագայում 5-րդ դարում հասել է Մովսես Խորենացուն և հիմք է ծառայել պատմահորը՝ շարադրելու հայոց պատմության ամենավաղ շրջանը:

Մ.թ.ա. 5-րդ դարի վերջին՝ 401-400 թթ. հույն պատմագիր ու աշխարհագետ Քսենոֆոնը հունական 10 հազարանոց վարձու քանակի հետ անհաջող պատերազմից հետո Պարսկաստանից Հայաստանի վրայով վերադառնում էր Հունաստան: Նա անցած ճանապարհը նկարագրում է «Անաբախ» գրքում, որտեղ կան բազմաթիվ հետաքրքիր նկարագրություններ Հայաստանի, նրա տարածքի, բնակչության, կենցաղի և այլ հարցերի մասին: Նա նշում է, որ բնակչությունը ամենուրեք խոսում էին հայերեն:

Մ.թ.ա. 3-րդ դարում հույն նշանավոր աշխարհագետ Էրատոսթենը

հանձարեղ հայտնագործություն կատարեց. գտավ, որ երկրագունդը գնդաձև է և շափեց նրա շրջագծի երկարությունը, որը թիչ է տարբերվում այժմյան շափերից: Նա իր աշխատություններում բազմից է հիշատակում Արմենիան, տալիս է նրա տարրեր մասերի միջև հեռավորությունները, նկարագրում աշխարհագրական օբյեկտներ:

Հայաստան աշխարհի՝ Հայք-Արմենիայի նկատմամբ առավել մեծ հետաքրքրություն առաջացավ Ա. Մակեղոնացու (4-րդ դ. մ. թ. ա.), ապա հելլենիստական կուլտուրայի տարածման երեղարյա ժամանակաշրջանում: Ուսումնասիլելով Մատենադարանի Այութերը՝ Ժ. Գանինը (1989) գրում է, որ հելլենիստական շրջանում Հայաստանի ուսումնական հաստատություններում աշխարհագրություն է դասավանդվել (հունարեն) և այն կոչվել է երկրաշափություն: Առարկայի նման անվանումը թերևս այն ժամանակվա իմաստով ճիշտ է եղել. այն գրադարձ է երկրի շափագրման աշխատանքներով:

Հելլենիստական շրջանի հոյս անվանի աշխարհագետները մեծ ավանդ են ներդրել Հայաստան աշխարհի ուսումնասիրման գործում: Ահա նրանցից ամենաականավորները՝ Պոլիբիոս, Ստրաբոն, Պլիմիոս Ավագ, Պլուտարքոս, Պտղոմեոս և շատ ուրիշներ: Մեծ է Պտղոմեոսի դերը հատկապես քարտեզահանման գործում, իսկ Ստրաբոնը մանրամասն նկարագրում է Արմենիան: Մեր օրերում Ստրաբոնի աշխատությունը քարգմանել է Հ. Աճայանը («Ստրաբոն»). քաղեց և քարգմանեց Հ. Աճայանը, Ե., 1940): Ստրաբոնը առաջին անգամ նկարագրում է Արմենիայի սահմանները, գրում է նաև Կիլիկիայի մասին, մանրամասն նկարագրում է Հայոց աշխարհի լեռները, գետերը, գավառները, նրանց իրավիճակը, դրությունը, զանազան ավանդություններ հայերի մասին: Պտղոմեոսի գործունեության մասին մանրամասն տեղեկություններ է հրատարակել Հ. Մ. Հովհաննեայանը (1969 թ.): Պտղոմեոսը 2-րդ դարում գրադարձ է Հայկական լեռնաշխարհի տեղադիրքի և տարրերքնակավայրերի կոռորդինատների հաշվարկով: Նա լեռնաշխարհի սահմաններում նշում է 13 սահմանային կետերի կոռորդինատները, իսկ Մեծ Հայքում առանձնացնում՝ 23 նահանգ՝ նկարագրելով դրանք առանձին-առանձին:

Առաջին դարի (մ. թ. ա.) նշանավոր ճանապարհորդներից է Խսիդոր Քարակացին, որը ներկայացրել է Հայաստանի ճանապարհների մանրամասն նկարագրությունը: Հելլենիստական-հոռոմեական շրջանի Հայաստանի և նրա ճանապարհների մասին լրիվ պատկերացում է տալիս առաջին դարի (մ. թ.) «Tabula Peutingeriana» (Պևտինգերյան) քարտեզը, որը հատուկ քննության առարկա է դարձել Հ. Մանանյանի մոտ (1936):

2. **Աշխարհագրական ուսումնասիրությունները միջին դարերում:** Այս փուլում սկսվում են ուսումնասիրություններ հայոց գրերի գյուտից հետո: 5-րդ դարի սկզբից հայոց լեզվով գրչությունը ծաղկում է շնորհիվ Մեսրոպ Մաշտո-

ցի կողմից գրեթի գյուտի: Մինչ այդ Հայաստանում ուսուցումը տարբեր էր հունական, պարսկական կամ ասորական գրերով: Հայ երիտասարդների մի զգալի մասը ուսում էր առնում Ալեքսանդրիայում և վերադառնալով Հայաստան բերում էր նաև աշխարհագրական գիտելիքներ: Սակայն նրանց գրառումները օտար լեզուներով մատչելի չեին հայերին: Մաշտոցի հայտնագործությունը բացադիկ նշանակություն ունեցավ. զարգացան հայ մշակույթը, գիտությունները, այդ բվում նաև աշխարհագրությունը:

Հինգերորդ դարի խոշոր մտածողներն ու պատմիչներն էին Կորյունը, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Մովսես Խորենացին, Ազարանցեղոսը, Ղազար Փարպեցին, որոնք հիշատակություններ ունեն Մեծ Հայքի, Փոքր Հայքի մասին, տալիս են որոշ նկարագրություններ: Մովսես Խորենացին հանգեց վերընթաց գտտիականության զաղափարին և Հայկական լեռնաշխարհում առանձնացնում էր կլիմայական չորս գոտիներ՝ ցածրադիր, անտառային, միջին բարձրության լեռնային և բարձր լեռնային գոտիներ:

Գրեթի գյուտից հետո, հատկապես 5-7-րդ դարերում, հայոց լեզվով գրչությունը մեծ բափ է առնում: Գրագետ դառնալու ճգոտումը համակել էր երիտասարդների մեծ մասին: Դավիթ Անհաղթի (5-6-րդ դ) փիլիտփայական նեռալիքատոնական հայացքները մեծ դեր խաղացին աշխարհի ճանաչման և աշխարհագրության զարգացման գործում:

Անանիա Շիրակացին (7-րդ դ) առաջինն էր, որ հայոց լեզվով դասագրքերի ժողովածու ստեղծեց, որինել գետելիք նաև «Աշխարհացոյցը»: «Աշխարհացոյցը» միջնադարյան հայ աշխարհագրության գրուխգործոցն է: Նրա հեղինակը մինչև օրս վերջնականապես ծշտված չէ: Պատմական մասը Խորենացունն է, իսկ աշխարհագրականը արված է ըստ Շիրակացու: Այն 15 քարտեզներից կազմված ատլաս է եղել՝ լայնածավալ նկարագրություններով ու մեկնաբանություններով, որի վերուծությունը մեր օրերում կատարել է Ս. Երեմյանը (1963): Ըստ նրա՝ աշխատության մեջ իշխում է Շիրակացու մարեմատիկական, աշխարհագրական ու տիեզերական նյութը: Ըստ բան փոխ է առնված Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ից, ապացուցված է Երկրի գրնդածկությունը, որն այն ժամանակներում մեծ խիզախություն էր. միևնույն ժամանակ քննադատում է Պտղոմեոսի որոշ մտքերը:

Շիրակացու ժամանակակիցներից է Աղեքսանդր Երկրաչափը, որից օգտվել է Շիրակացին և նրա «Մղնաշափը» կցել է «Աշխարհացոյց»-ին որպես հավելված: Միջնադարում կազմվել են նաև այլ «Աշխարհացոյցներ», որոնցից մեկը Ստեփանոս Սյունեցունն է: Մեզ հասել են տեղեկություններ նաև 13-րդ դ. «Աշխարհացոյցի» մասին, որի հեղինակը Վարդան Արևելցին է, սակայն այդ աշխատության քարտեզագրական մասը հայտնաբերված չէ. կան միայն հիշատակություններ:

Միջին դարերում Հայոց աշխարհի մասին մեծ հետաքրքրություն է առաջանում արաբական աշխարհում: Երկիրը նվաճելուց առաջ այն ուսումնասիրվել է: Հայտնի են Յակուտի, Արու-լ-Ֆիղայի աշխատությունները: Յակուտը կազմել է Հայաստանի աշխարհագրական բառարան: Արաբական աղբյուրներում կան նկարագրություններ նաև Կիլիկիայի վերաբերյալ:

11-րդ դարում Հայկական լեռնաշխարհը նվաճվեց սելջուկ թուրքերի կողմից: Թուրքական որոշ հեղինակներ փորձեցին նկարագրել գրավված տարածքները, սակայն նրանց նկարագրությունները շատ մակերեսային ու պարզունակ էին (Պեչուի, Ջաքիր Զելեբի և ուրիշներ):

Պետք է նշել, որ Հայաստանի միջնադարյան համալսարաններում ու դրանցներում աշխարհագրություն է դասավանդվել, օգտագործվել են զանազան սխեմաներ ու ցուցադրական նյութեր: Ավանդել են մայրցամաքների (Եվրասիա, Աֆրիկա), ինչպես նաև Հայաստանի աշխարհագրություն:

11-րդ դարի կարևոր իրադարձություններից մեկը ականավոր մանկավարժ, պայծառ մտավորական Գրիգոր Մագիստրոսի կողմից դասավանդման ասպարեզում կատարած բարեփոխումներն էին: Նա ստեղծեց պլան ու ծրագիր և աշխարհագրությանը հաստատուն տեղ տվեց ավանդվոր առարկաների շարքում:

Միջնադարի աշխարհագրության զարգացման ասպարեզում եղել են ականավոր գործիչներ ու ճանապարհորդներ՝ Ներսես Լամբրոնացին (12-րդ դար), Մարտիրոս Երզնկացին (15-րդ դ.), նաև Եվրոպայով անցավ 13 հազ. կմ, նկարագրեց այդ ուղին, Կարապետ Բաղիշեցին (15-16-րդ դարեր), Գրիգոր Կեսարացին (16-րդ դար), աշխարհագրական բառարանի հեղինակ Հովհաննես Անլյուրացին (17-րդ դար), Հակոբ Կարմեցին (17-րդ դար), Ավետիք Տիգրանակերտցին (17-18-րդ դարեր): Ինչպես այս հեղինակների, այնպես էլ Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող մի շարք աշխարհագրական բնույթի աշխատությունները դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել. անհրաժեշտ են մանրակրկիտ ուսումնասիրություններ:

Միջին դարերում Հայոց աշխարհով հետաքրքրվել են օտարազգի բազմարիվ ճանապարհորդներ, կան հետաքրքիր նկարագրություններ: Հայտնի են՝ Ուիլյամ Ռոբրուքը, հանրահայտ Մարկո-Պոլոն, Ռոյ Գոնձալես դի Կլավիխոն, Կատերինա Չեննան, Ջուլիա Բարբարոն, Ջիովան Մարիոն Անջիլելլոն, Վինչենցո դը Ալեսանդրին, Անրոնի Ջիքինար, Աֆանասի Նիկիտինը և ուրիշներ: Այս հեղինակների գրական ժառանգության մասին հետազոտություններ ունի Հովհաննես Հակոբյանը (1934):

Տպագրության գործը հայ իրականության մեջ սկիզբ դրվեց 1512 թվականից: Մենքը մյուսի հետևից տպարաններ են հիմնադրվում Հայաստանից դրւու՝ Վենետիկում, Հռոմում, Փարիզում, Ցյուրիխում, Բեռլինում, Քյունում,

Ֆրանկֆուրտում, Լվովում, Նոր Զուղայում, Ամստերդամում, Մարսելում, Լոնդոնում, Պոլսում, Մոսկվայում, Թիֆլիսում, Պետերբուրգում, Նյույորքերգում, Հնդկաստանում, բայց ոչ Հայաստանում: Թուրքական դաժան տիրապետության պայմաններում դա անհնար էր: Բուն Հայաստանում առաջին խղճուկ տպարանը հիմնադրվեց 1771 թ. Եջմիածնում:

Տպագրության հայտնագործումից հետո որոշ ժամանակ անց լույս են տեսնում Ա. Շիրակացու, Ալ. Երկրաչափի (1668 թ., Ամստերդամ), Վարդան Արևելցու (1728 թ., Պոլիս) աշխատությունները:

**3. Աշխարհագրությունը 18-20-րդ դարերում:** 18-րդ դարից սկսած Հայաստանի աշխարհագրական ուսումնասիրությունները նոր բափ են առնում: Դարի սկզբին Սուլթ Ղազար կղզում Մխիթար Սեբաստոցու կողմից հիմնադրվում է Մխիթարյան Միաբանությունը որը հայ մշակույթի, այդ բվում աշխարհագրության զարգացման ասպարեզում բացառիկ դեր կատարեց, ինչը շարունակում է մինչև օրս: Ծուտով Մխիթարյանների Միաբանությունից սերվեց Վիեննայի Միաբանությունը:

Մխիթարյան Միաբանությունում իրենց բազմաբեղուն գործունեությունը ծավալեցին Դ. Ինձիճյանը, Ա. Ազնոնը, Ղ. Ալիշանը, Ս. Չամչյանը, Հ. Դուկայանը, Հ. Մողոնկին, Ա. Բաղդասարյանը, Հ. Նալյանը և ուրիշներ:

Ա. Ազնոնը և Ղ. Ինձիճյանը կազմեցին «Աշխարհագրութիւն Չորից Մասանց Աշխարհի» տասը հատորանոց աշխատությունը (1802-1806): Փաստութեան հիմք դրվեց Հայկական լեռնաշխարհի գիտական ուսումնասիրությանը: Հայտնի են նաև Ն. Սարգսյանի, Ա. Քալանքարի, Արել Արքեալիսկոպոսի, Խ. Խրիմյանի, Ա. Չալայանի, Լ. Սարգսյանի, Հ. Առաքելյանի, Մ. Միրախոյանի և այլ հեղինակների գործերը:

19-րդ դարում Մխիթարյան Միաբանությունում շարունակվում է ականավոր աշխարհագետների աշխատությունների հրատարակումը. Մասնել Քաջունի՝ «Աշխարհագրութիւն Հին և Նոր Հայաստանեայց» (Վենետիկ, 1857), Սարգիսեան Ներսես «Տեղագրութիւնը ի Փոքր և ի Մեծ Հայս» (Վենետիկ, 1864), Վենետ Ալիշանի մի քանի գրքերը և այլն:

Ղ. Ալիշանը Հայաստանի աշխարհագրության դասականն է: Հրապարակ իշնելով որպես բանաստեղծ, ուսուցիչ, թարգմանիչ ու «Բազմավեպի» խմբագիր՝ նա զուգահեռաբար իրեն նվիրեց աշխարհագրությանը: Մտադիր էր 22 հատորով լույս ընծայել Հայաստանի բոլոր նահանգների վերաբերյալ աշխարհագրական հարուստ նյութ, սակայն կարողացավ հրատարակել միայն հինգը: Նրա «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատությունը մեծ ժողովրդականություն ձեռք բերեց, թարգմանվեց եվրոպական այլ լեզուներով: Այնուհետև լույս տեսան՝ «Շիրակ», «Սիսուան», «Այրարատ», «Սիսական»: Նա կարողացավ ներկայացնել նաև Հայաստանի բուսական աշխարհի կազմը 3400 տեսակներով:

Հայերեն առաջին տպագիր քարտեզը լույս ընծայվեց 1695 թվականին Ամստերդամում, որը գիտական լուրջ ներդրում էր (տես Հ. Ստեփանյան, 1958): Քարտեզի վերնագիրն է «Համատարած աշխարհացոյց» (կիսագնդերի քարտեզ): Հեղինակներն են Գողթան գավառի Վանանդ ավանի բնակչութեր Մարևոյ Հովհաննիսյանը, Թովմաս Եպիսկոպոսը, Ղուկաս և Միքայել Նորդիշանյանները: Նրանց կարճ կոչում են Վանանդցիներ: Դրանից հետո արդեն տարբեր տիպի ու մասշտարի քարտեզներ հրատարակվել են՝ Վիեննայում, Վենետիկում, Փարիզում, Բագելում, Պոլսում, Պետերբուրգում, Երևանում, Թիֆլիսում, Մոսկվայում և այլուր: Քարտեզներին զուգընթաց պատրաստվում են նաև գլոբուսներ:

Աշխարհագրության պատմության լավագույն գիտակներից մեկը՝ Գ. Ս. Աբրահամյանը (1954) գրում է, որ սկսած 18-րդ դարից Հայաստան աշխարհի նկատմամբ հետաքրքրությունը խիստ մեծանում է ինչպես արևմտաեվրոպական, այնպես էլ ոռուսական հետազոտողների կողմից: Կային քարեխիճը և գիտությանը նվիրված հետազոտողներ՝ Տավերնիեն, Տուրնեֆորը, Տ'Անվիլը, Սեն Մարդենը, Դյուրուա-դը-Մոնաքերյոն, Մորիո Բինները, Պրանդը, Ֆրեզերը, Շիլը, Համիլրոնը, Մ. Վազները և ուրիշներ: 19-րդ դարի, հատկապես՝ Երկրորդ կեսի, հետազոտողներից դրվատանքի արժանի են՝ Հ. Արիխը, Հ. Ֆ. Լինչը, Ֆ. Օսվալդը, Ա. Ղուկասովը և ուրիշներ: Հերենան Արիխը տասնյակ տարիներ անցկացրեց Կովկասում և Հայկական լեռնաշխարհում, ունի ավելի քան 50 գիտական աշխատություններ: Նա առաջին անգամ կազմեց Հայաստանի 10 վերստանոց երկրաբանական քարտեզը: Նաև առաջին անգամ օգտագործեց Das Armenische Hochland անվանումը: Իսկ հետագայում Է. Զյուսը և Կ. Ռիտտերը օգտագործեցին Berginsel (լեռնակղզի) անվանումը:

19-րդ դարի վերջին Հայոց աշխարհում լայնածավալ հետազոտություններ կատարեց Հ. Ֆ. Լինչը: Նրա տատը հայուիի էր, և այդ խիզախ հետազոտողն ու գիտնականը ձգտում էր հավերժացնել տատի հիշատակը՝ ուսումնասիրել նրա հայրենիքը: Լինչի «Արմենիա» մեծածավալ մենագրությունը անգերենից քարզմանվել է հայերեն, ոռուերեն և այլ լեզուներով:

Վերը նշված գիտնականների կողըին 18-րդ դարում և 19-րդ դարում կային նաև արևմտաեվրոպական շատ բախտախնդիր ճանապարհորդներ, որոնք ունեին գաղութատիրական մոլունակ գիտական անքարեխնդություն, սեփական անձը փառաբանելու ձգտում և արկածախնդրություն՝ գողաճական հնագիտական շատ հուշարձաններ՝ վաճառելու դրանք Եվրոպական թանգարաններին:

Նշենք նաև, որ Արևմտյան Հայաստանում հետազոտություններ կատարելը կապված էր մեծ դժվարությունների հետ: Զինված հրոսակախմբերը հարձակվում էին ճանապարհորդների վրա թալանի ակնկալիքով և հաճախ

սպանում նրանց: Այդպես են զրիվել Շուկը, Պուավնը և ուրիշներ:

4. **Անդրկովկասի ուսումնափրոբյունները Ռուսաստանի կազմում:** Ակըսած 18-րդ դարից Անդրկովկասի նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է Ռուսաստանում: Պետրոս Առաջինը հեռավոր պլաններ էր մշակում տիրանալու Անդրկովկասին, ուստի անհրաժեշտ էր երկիրը նվաճելուց առաջ այն ուսումնասիրել: Բազմարիվ արշավախմբեր են կազմակերպվում Պետերբուրգի Գիտությունների Ակադեմիայի կողմից (1768-1775 թ.): Այդ արշավախմբը բերում ակտիվ աշխատանքներ կատարեցին՝ Պալլասը, Գմելինը, Բուկարովը, Բուռնաչկը, Մուսին-Պուշկինը, Վոլինսկին, Յազիկովը, Էյխվալդը և ուրիշներ: Նրանց հատկապես հետաքրքրում էին պղնձահանքերը և հարավում մշակվող բույսերը, ճանապարհները: Այդ շրջանին են վերաբերում նաև Ստ. Շահրիմանյանի հետազոտությունները: Նա կազմում է «Տնկարանուրին կամ Փղորայ Հայաստանի» («Հայաստանի բուսականությունը կամ ֆլորան») մենագրությունը, սակայն, ինչպես նշում է Դ. Ռ. Նազարեթյանը (1975), այդ աշխատությունը այդպես էլ չիրատարակվեց, մնաց ծեռագիր վիճակում: Գրքի հրատարակումը մեծապես կնպաստեր բուսաբանության զարգացմանը:

1820-ական թվականների վերջին Արևելյան Հայաստանը մտավ Ռուսական Կայսրության կազմի մեջ: Այդ պատմական իրադարձությունը շատ մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովոյի մշակութային կյանքի զարգացման գործում: Բոնատիրական Թուրքիայի կամ հետամնաց Իրանի կազմում հայ ժողովուրդը հնարավորություն չուներ ազատ կերպով գրադիվելու կրթության կամ գիտության զարգացման գործով: Ռուսական մշակույթի հետ անմիջական շփումը միանգամայն դրական նշանակություն ուներ:

1829 թ. Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտը Խ. Արովյանի հետ առաջին անգամ բարձրացավ Արարատի գագաթը և կատարեց երկրաֆիզիկական դիտարկումներ: Այդ շրջանին է վերաբերում նաև արտրված դեկարտիստների (Ե. Լաշինով, Վ. Վոլխովսկի, Ա. Գանգիբելով, Ա. Բեսոտուծեարլինսկի, Դ. Խոկրիցկի) գործունեությունը:

19-րդ դարի առաջին կեսին ռուսական տիրապետության սահմաններում աշխատանքները հիմնականում կազմակերպչական բնույթ ունեին: Տարածքի նոր միացած մասերում վարչական միավորներ էին ստեղծվում: Այդ դարի երկրորդ կեսից արդեն ծավալվում են գիտահետազոտական աշխատանքներ, որոնք նոյնպես ունեին ռազմա-ստրատեգիական, ապա և տարածքի տնտեսական յուրացման նշանակություն: Այդ նախառակով Կովկասի փոխարքայությունում ստեղծվում էին մի շաքր կոմիտեներ, հանձնաժողովներ, վարչություններ, որոնք գրադիվում էին նահանգների հետազոտման հարցերով: Օրինակ՝ Լեռնատեղագրական բաժնում 1386 տրանզուլացիոն կետերի

բազմի վրա կազմվեց -10 վերստանոց մասշտարի տեղագրական քարտեզը, որտեղ խոչոր լուսա ունեցան Ն. Դ. Սալացկին, Ի. Ի. Խոճկոն: Միևնույն ժամանակ նշենք, որ տեղագիրները տեղանունները քարտեզի վրա նշում էին թուրքական՝ աղավաղված տառադարձությամբ կամ բարգմանությամբ՝ առանց հաշվի առնելու հայկական պատմական անվանումները: Այդ պատճառով անվանումների շփորչ այդպես շարունակվում է մինչև մեր օրերը:

Վիճակագրական կոմիտեում ճշակվում են բնակչության տարարժնակեցման հարցեր, արդյունաբերության, զյուղատնտեսության, մշակույթի վերաբերյալ հրապարակվում են նյութեր:

1844 թ. Թիֆլիսում հիմնադրվում է օդերևորաբանական և մագնիսաչափական օրբերվաստորիհա՝ դիտարան, որն Անդրկովկասի տարածքում ստեղծեց օդ.կայանների ցանց (6-ը Հայաստանում): Ծավալվում են կլիմայական ուսումնասիրություններ, որոնց մասնակցում են ականավոր գիտնականներ՝ Ա. Ի. Վոյելյովը, Գ. Ի. Վիլդան, Ա. Վ. Վոզնիկովին, Ի. Ֆ. Ֆիգուրովսկին: Նրանց գործերը հրապարակվում են հիմնականում 20-րդ դարի սկզբին:

1845 թ. հիմնադրվեց Ռուսաստանի Արքայական Աշխարհագրական Ընկերությունը, որի Կովկասյան բաժանմունքը 1851-ից մեծ գործ կատարեց աշխարհագրական գիտելիքների զարգացման ու տարածման գործում, Կովկասի բնության, նրա առանձին բաղադրիչների գիտական մեկնարանաման ասպարեզում: Ընկերության պարբերականներում ավելի քան 200 գիտական հոդվածներ վերաբերում են Հայաստանին: Նշենք նաև, որ աշխարհագրական մտքի զարգացմանը մեծապես նպաստեցին Լազարյան ճեմարանը Մոսկվայում, Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում, Գևորգյան ճեմարանը Եջմիածնում:

Եթե Արևելյան Հայաստանում հետազոտությունների համար պայմանները նպաստավոր էին, ապա դրությունը ճիշտ հակառակն էր Արևմտյան Հայաստանում:

Նշենք, որ մինչև 19-րդ դարը Հայաստանի վերաբերյալ աշխատությունները մեծ մասամբ նկարագրական բնույթ ունեին. 19-րդ դարի կեսից, 20-րդ դարի սկզբին արդեն հետազոտությունները ներ մասնագիտական բնույթ են ստանում, տախու են երևույթների պատճառական կապերը (Ենուրուտ, Օմեր ող Հել, Լովտուս, Մեղվեղ, Ժուկովսկի, Ուկնզարդ, Գրոսգեմ, Լեհնստ-Լեսսինգ և ուրիշներ):

Կովկասի և Հայաստանի հոդային ծածկի ուսումնասիրման ասպարեզում մասնակցություն ունեցան ականավոր գիտնականներ Վ. Վ. Ռոկոսովսկի, Ա. Ա. Զախարովը, Լ. Գ. Ռոմանովը: Դեկուչակը երեք անգամ եղել է Հայաստանում և ուսումնասիրել վերընթաց գոտիականությունը, ու նրա կողմից զոնայականության տեսության ճշակումը արվել է Անդրկովկասում կա-

տարած հետազոտությունների հիման վրա:

Բուսական ծածկույթի ուսումնասիրման գործում խոշոր դեր կատարեցին Թիֆլիսում ստեղծված բուսաբանական այգու աշխատակից բուսաբանները: Ն. Ի. Կուզնեցովը առաջինն էր, որ մշակեց Կովկասի բուսական աշխարհի շրջանացման հարցը: Մեծ ավանդ ունեն նաև Կ. Կոխը, Գ. Ռադյեն, Մ. Վագները, Գ. Սապարյուն, Գ. Մինիվեցյանը, Ա. Գրոսգեյմը: Կենդանական աշխարհի ուսումնասիրմամբ գրադպեցին՝ Կ. Ա. Սատունինը, Կ. Կեսպերը, Լալյանցը և այլք:

19-րդ դարի վերջին ծավալում են ջրաբանական հետազոտությունները (Գորիև, Վագներ, Բեր և այլք): 1911 թ. լույս է տեսնում Ե. Ս. Մարկովի աշխատությունը Սևանի մասին:

Երկրաբանական ուսումնասիրությունների ուղղությամբ մեծ աշխատանք կատարեց Կովկասի Երկրաբանական Վարչությունը: Հրատարակվեց «Կովկասի երկրաբանության նյութեր» (“Материалы по геологии Кавказа”) գիրքը, որտեղ գետեղվեցին Հ. Արիսի, Ն. Լեբեդիկի, Լ. Կոնյուշևսկու, Լ. Կրուգի, Վ. Բոգաչևի, Ֆ. Օսվալդի աշխատությունները: Ա. Ի. Դուկասովը տվեց Հայկական լեռնաշխարհի գեոմորֆոլոգիական սիստեման, իսկ 1917 թ. Ա. Լ. Ռեյնգարդը՝ Կովկասի գեոմորֆոլոգիական շրջանացումը:

5. Խորիրդային շրջանի ուսումնասիրությունները: 1920.թվականին Անդրկովկասի երեք հանրապետություններում՝ Հայաստանում, Վրաստանում, Աղրբեջանում հաստատվում են խորիրդային կարգեր: Առաջին երկու տասնամյակներում աշխատանքները գնում են քայլայված տնտեսության վերականգնման ուղղությամբ, որից հետո ծավալվեցին գիտահետազոտական աշխատանքները:

Երեք հանրապետություններում էլ աշխարհագրական բնույթի ուսումնասիրությունները կատարվում էին ներ մասնագիտական գերատեսչություններում պետական ֆինանսավորմամբ, և այդ աշխատությունները հրատարակվում էին տարբեր պարբերականներում ու հանդեսներում, նաև՝ առանձին մենագրությունների ձևով: Երեք հանրապետություններում էլ ստեղծվեցին ջրաօդերևութաբանական վարչություններ՝ կայանների ընդարձակ ցանցով: Դիտարկումների արդյունքները մշակվում և հրատարակվում էին առանձին տարեգրությունների ու տեղեկատունների ձևով:

Հայկական, Վրացական, Աղրբեջանական ԽՍՀ-ներում կազմակերպվեցին գիտությունների ակադեմիաներ, որոնց կազմում՝ աշխարհագրական ինստիտուտներ (Հայկական ԽՍՀ-ում՝ աշխարհագրության սեկտոր՝ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կազմում), որոնք գրադպուտ են գիտական խոր հետազոտություններով ու քարտեզահանմամբ: Կազմակերպվում են բազմաթիվ արշավախմբեր, որոնք ուսումնասիրում էին ոչ միայն

լանդշաֆտների առանձին բաղադրիչները (ունիեֆը, երկրաբանական կառուցվածքը, կլիման, ջրերը, հողը, բուսականությունը, կենդանական աշխարհը), այլև դրանց համայնքը: Կատարվում է ֆիզիկա-աշխարհագրական-լանդշաֆտային հանույթ ու շրջանացում: Այս գործին մասնակցում էին նաև ուսումնական հաստատությունների աշխարհագրական ֆակուլտետների համապատասխան ամբիոնները:

Կարճ ժամանակամիջոցում Անդրկովկասի տարածքը դարձավ աշխարհի լավ ուսումնասիրված ուղղություններից մեկը:

Նշենք, որ ուսումնասիրության աստիճանով խորհրդային հատվածը տարրերվում է բուրքական և իրանական հատվածներից: Թուրքիայի տարածքում ուսումնասիրությունները կատարվել են երկրի ընդհանուր ֆոնի վրա, Հայկական լեռնաշխարհը առանձին չի ուսումնասիրվել: Թուրքիայում ուսումնասիրություններ են ծավալել նաև արտասահմանյան գիտնականները, մասնավորապես գերմանական հետազոտողները (Պ. Արճի, Ս. Բյուտմեն-Բալ, Ռ. Ֆյուրոն, Գ. Բորեկ, Ն. Էգերան, Լ. Կորեր, Կ. Ներերտ, Ե. Լան, Ստրատել-Զառուեր, Ռիկմերս, Շիլդրերգեր և ուրիշներ): Թուրքական հեղինակներից են՝ Ֆահիկ Սարրի, Ահմեդ Արգել, Խորուն Էֆենդի և այլք: Թուրքապատկան տարածքի վերաբերյալ կան նաև ուսւ և խորհրդային այլ գիտնականների (Վ. Սապոնիկով, Պ. Ժուկովսկի, Վ. Դանիլով, Դ. Երեմեև, Ռ. Գոչեշչիլան, Ս. Մատվեև, Ե. Լուտչուվեյտ և ուրիշներ) աշխատությունները: Մեզ հայտնի է, որ Ստամբուլի, Անկարայի, Թերանի համալսարաններում որոշակի աշխատանքներ կատարվում են, օրինակ, կազմվել է Թուրքիայի առլաս, սակայն այդ աշխատությունները մեզ չեն հասել:

Սովորական շրջանի ուսումնասիրությունների մասին տեղեկություններ կտրվեն սույն ձեռնարկի համապատասխան բաժիններում: Մեկ անգամ ևս նշենք, որ բնության-լանդշաֆտների առանձին բաղադրիչների վերաբերյալ գոյություն ունի լայնածավալ գրականություն, հատկապես՝ Հայկական լեռնաշխարհի անդրկովկասյան հատվածի մասին, սակայն այդ բաղադրիչների համայնքի մեկնաբանությունը առ այսօր դեռևս չկա, և մենք սույն ձեռնարկով ձգուում ենք լրացնել այդ բացը:

Անցած տասնամյակներում հազարավոր գիտական հոդվածներ ու մենագրություններ են լույս տեսել Անդրկովկասի աշխարհագրության վերաբերյալ: Երեք հանրապետություններում կազմվել են ազգային ատլասներ և նեղ մասնագիտական թեմատիկ ատլասներ: Օրինակ՝ ՀԽՍՀ գյուղատնտեսական ատլասը, Հողային կաղաքատրի ատլասը, կլիմայական, ջրաբանական, հողային ծածկույթի ատլասներ: Ստեղծվել են գեղեցիայի և քարտեզագրության հարցերով գրադրու ինստիտուտներ:

Խոսելով Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ գրական աղբյուրների

մասին՝ հարկ է նշել չորս ծավալուն աշխատությունների մասին: Դրանցից մեկը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռելիեֆին (“Геология Армянской ССР”, т. 1, “Геоморфология”): Այդ կողեկտիվ ծավալուն աշխատությունն ամենայն մանրամասնությամբ մեկնարանված է ռելիեֆի ծագումն ու զարգացումը: Մյուս աշխատությունը «Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրությունն» է (1971 թ.), որտեղ մեկնարանված են լանջաֆտների բոլոր բաղադրիչները: Երրորդը «Հայկական Սովետական Հանրագիտարանն» է: 13 հատորանոց այս բառարանում տրված է Հայկական լեռնաշխարհի բոլոր քիչ թե շատ հայտնի տեղանունների մեկնարանությունը: Վերջապես չորրորդ աշխատությունը «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանն» է: Հեղինակներն են՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան:

Հայկական լեռնաշխարհի բնությունը ինչ-որ չափով գրականության մեջ արծարծվել է ոչ անմիջաբար այդ նպատակով, այլ որպես որևէ գրքի նախաբան՝ ելենլով տվյալ աշխատության խնդիրներից: Օրինակ, «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր աշխատության առաջին հատորում ակադ. Ս. Երեմյանը զգալի տեղ է հատկացրել Հայկական լեռնաշխարհի բնական պայմաններին: Նույնը գտնում ենք պատմաբան Լեոյի «Հայ հայրենիքը» գրքում, Թ. Խ. Հակոբյանի «Հայաստանի պատմական աշխարհագրություն» գրքում և այլն: Սակայն նման աշխատություններում Հայոց աշխարհը ներկայացված է պատմության կամ պատմական աշխարհագրության տեսանկյունից, որտեղ բնական պայմանների մի քանի բաղադրիչները ուղղակի բացակայում են:

19-րդ դարի վերջին Սլսիթարյան Սիաբանությունում հրատարակվում էին Հայոց աշխարհի տարրեր մասերի վերաբերյալ աշխարհագրական տեղեկատուներ: Բացի այդ Հ. Ս. Եփրիկյանը ձեռնամուխ եղավ տեղանունների բառարան կազմելու գործին: Լույս տեսավ նրա բազմահատոր աշխատությունը՝ «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան» վերնագրով 1903 թ., որն առ այսօր կարևոր տեղեկատու է համարվում: Ուրիշները ևս անցած տասնամյակներում այդ կարգի աշխատություններ հրատարակել են: Օրինակ, 1947 թ. Նյու-Յորքում լույս տեսավ Ս. Մ. Ծոցիկյանի «Արևմտահայ աշխարհ» բառարանը:

Հարկ է նշել, որ Հայկական լեռնաշխարհի և նրա առանձին հատվածների վերաբերյալ գրական բազմաթիվ աղբյուրներ հրատարակվել են սիյուռնում ԱՍՆ-ում, Լիբանանում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Սիրիայում, Իրանում և այլուր: Այդ աշխատությունների զգալի մասից մենք օգտվել ենք: Դրանք մեծ մասամբ գրված են հայրենասիրական մեծ պարուսով, ունեն նկարագրական, պատմա-հայրենասիրական բնույթ: Լանջաֆտային տարրերի

ժամանակակից մակարդակով վերլուծությունները կամ բացակայում են, կամ թույլ են, և դա բնական է. հեղինակներից ոչ մեկը հնարավորություն չի ունեցել օգտվելու տեղական պարբերականներից, դաշտային հետազոտություններ կատարել տեղում:

Ավելորդ շենք համարում նշել այդ աշխատություններից մեկի՝ Հ. Գ. Բարեսյանի «Հայ ատլաս»-ի մասին, որը հրատարակվել է ԱՍՆ-ում (Լու-Անթելիս-Ֆրեզն, 1954): Այն կազմված է մեծ սիրով ու հայրենասիրական զգացումով, սակայն գիտական կողմը զգալիորեն զիջում է: Կան բավական պարզունակ ու ոչ ճիշտ մոռքեր: Հեղինակը, հենվելով արդեն հնացած աղբյուրների վրա, Սևանա լիճն ու համանուն կղզին համարում է հրաբխային ծագման, որը խիստ հնացած ու միամիտ պատկերացում է: Նկատելի է, որ հեղինակը, գտնվելով հայրենիքից հեռու, նորագոյն գիտական աղբյուրներին ծանոթ չէ:

Նշենք նաև, որ Հայաստանի Հանրապետությունում գիտական նեղ մասնագիտական հոդվածները բնական և տեխնիկական գիտությունների գծով մեծ մասամբ (բացի պատմա-բանասիրականից) պարբերական հրատարակություններում տպագրվել են ոռուաց լեզվով: Այդ ձևով հայ գիտությունը առնվազել է նախկին ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող հանրապետությունների գիտությունների հետ, և դա պետք է դիտել որպես դրական երևույթ: Միևնույն ժամանակ նկատելի է, որ սփյուռքահայ հեղինակները հնարավորություն չեն ունեցել լայնորեն օգտվելու գիտական այդ աղբյուրներից, ուստի Հայաստանի Հանրապետության հեղինակների գիտական նվաճումները հաճախ սփյուռքին անհայտ են մնացել:

Հայկական լեռնաշխարհի բուրքական և իրանական հատվածների վերաբերյալ առանձին ուսումնասիրություններ չեն կատարվել, ուստի գիտական հետազոտությունների մակարդակով, Անդրկովկասյան հատվածի համեմատությամբ, զգալիորեն զիջում են: Սույն ձեռնարկում մենք աշխատել ենք համահարթել տարբերությունները, կիրառել համանմանության մերողը:

## ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Երկրաբանական հիմքը յուրաքանչյուր երկրի այն հենարանն է, որի վրա ձևավորվում են երկրի ռելիեֆը, արտածին պրոցեսները, երևույթները:

Կովկասում ու Հայկական լեռնաշխարհում բնությունն ուսումնասիրելիս

մինչև օրս ամենից ավելի տեղ տրվել է Երկրաբանությանը: Առ այսօր հրատարակված են տասնյակ հազարավոր գիտական աշխատություններ՝ Երկրաբանական կառուցվածքի ամենատարրեր ուղղությունների վերաբերյալ: Դաշտային հետազոտություններ կատարած Երկրաբանների թիվը հազարներով է հաշվում:

Երկրաբանական ուսումնասիրությունների այսպիսի ակտիվությունը ունի իր բացատրությունը՝ ընդերքի հարստությունների հայտնաբերումը, որ խիստ անհրաժեշտ է յուրաքանչյուր երկրի համար: Այս միտումը իր հերքին պահանջում է պարզաբանել երկրակեղևի կառուցվածքի օրինաչափությունները, որոնցով գրադարձ են երկրաբանության ավելի նեղ մասնագիտական ճյուղերը:

Հայկական լեռնաշխարհի երկրաբանական ուսումնասիրությունները 20-րդ դարում կատարվել են՝ խորհրդային հատվածում առանձին, բոլքական ու իրանական հատվածներում միմյանցից անջատ: Քիչ են այնպիսի աշխատությունները, որոնք փորձել են միացնել և միասնական ձևով դիտել Հայկական լեռնաշխարհը և Կովկասը: Թվով ամենից շատը խորհրդային հատվածի հետազոտություններն են:

Երկրաբանական ուսումնասիրությունները Կովկասում և մասնավորապես նրա հարավային կեսում՝ Անդրկովկասում, ծավալվեցին հատկապես 20-րդ դարի 30-ական թվականներից: Մինչև 50-ական թվականները կարելի է բնութագրել որպես երկրաբանական նյութերի կուտակման վիճ: 1941 թ. լույս տեսավ «ԽՍՀՄ երկրաբանություն, հ. X, Անդրկովկաս» (“Геология СССР, т. X, Закавказье”) աշխատությունը Վ. Պ. Ռենգարտենի խմբագրությամբ:

20-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվեց նրանով, որ մինչ այդ կուտակած հսկայական նյութը ընդիմանացվեց և ամփոփվեց մի շարք կոլեկտիվ ֆունդամենտալ հրապարակումներում: 1959-ին լույս տեսավ Վ. Ն. Պաֆենիլցի «Կովկասի երկրաբանական ակնարկ» (“Геологический очерк Кавказа”) գիրքը, որտեղ ներկայացված է նաև Հայաստանի Հանրապետության տարածքը՝ որպես Կովկասի բաղադրիչ: 1970 թ. լույս տեսավ «ԽՍՀՄ երկրաբանություն, հ. XLIII-ը՝ «Հայկական ԽՍՀ» (“Геология СССР”, т. XLIII, “Армянская ССР”), 1974 թվին ավարտվեց ՀԽՍՀ ԳԱ կողմից հրատարակող բազմահատոր «Հայկական ԽՍՀ երկրաբանություն» (“Геология Армянской ССР”) ուսերեն ֆունդամենտալ աշխատությունը: Չուգահեռաբար լույս տեսան մի շարք հեղինակների մենագրությունները: Նույն բնույթի գիտական հրապարակումներում, որտեղ ընդգրկվել են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և արևելյան հատվածները:

Այսպիսով, 20-րդ դարի վերջին քառորդում Հայկական լեռնաշխարհի

խորհրդային (անդրկովկասյան) հատվածը երկրաբանական կառուցվածքի տեսակետից աշխարհում լավ ուսումնասիրված ռեգիոններից մեկը պետք է համարել:

Հայաստանի Հանրապետության տարածքի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման գործում մեծ ներդրում ունեն՝ Կ. Ն. Պաֆենիոնը, Հ. Կարապետյանը, Ա. Դեմյոնինը, Ֆ. Լևինստան-Լեսսինը, Ա. Գարբիելյանը, Ա. Ասլանյանը, Ս. Մկրտչյանը, Ի. Մաղարյանը, Ա. Ռեյնգարդը, Ա. Զավարիցին, Լ. Վարդանյանը, Լ. Լեռնտելը, Ռ. Առաքելյանը, Գ. Բաղդասարյանը, Է. Մալխասյանը, Մ. Սարիանը, Կ. Շիրինյանը, Կ. Մկրտչյանը, Ե. Միլանովսկին, Ս. Բալասանյանը, Հ. Սարգսյանը, Գ. Սիմոնյանը, Կ. Մուրադյանը և ուրիշներ: Աղբբեջանական հատվածում՝ Շ. Ազիզբեկով, Ռ. Արդուլլահ, Է. Շիխայիրելիի, վրացական հատվածում՝ Ի. Գամկրելիձե, Մ. Լորդկիպանիձե, Գ. Տվաշրելիձե, Բ. Բալավաճե: Թուրքիայի և Իրանի երկրաբանության ասպարեզում ուսումնասիրություններ կատարել են ինչպես տեղական, այնպես էլ արևմտաեվրոպական հեղինակներ՝ Պ. Արմի, Ֆ. Բայկալ, Մ. Բլումենտալ, Ն. Բորեկ, Ե. Չայյու, Ն. Էգերան, Լ. Էրենտող, Հ. Պամիր, Ն. Վեստերվալդ, Շիլդերբերգեր, Մ. Դիզուլու, Ի. Կետին, Ջ. Շտեկլին, Խ. Ֆյուրգել, Մ. Բերբերյան և ուրիշներ:

Ստորև Հայկական լեռնաշխարհի երկրաբանական կառուցվածքը ներկայացնում ենք հետևյալ բաժիններով՝ շերտագրությունը և ապարների կազմը, տեկտոնիկան, երկրաշարժայնությունը և հրաբխականությունը:

## 1. ԸԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱՐՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Հայկական լեռնաշխարհը գրաղեցնում է այն տարածքը, որը վաղ երկրաբանական անցյալում եղել է Թետիս օվկիանոսի հատակում, մասսամբ կազմել է Արարական պլատֆորմի հյուսիսային եզրը: Հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում Գոնդվանա ցանաքը հարավում, Լավրասիան հյուսիսում տեղատարքել, մաշվել են, հողմահարված նյութերը նատել են Թետիսի գեռսինկլինալներում՝ առաջացնելով գումարային արտահայտությամբ 20 կմ հզրությամբ նատվածքների մի հզոր համալիր: Սակայն այդ երկրի նատվածքների շերտագրությունն ու ապարակազմը խիստ բարդ պատկեր են ներկայացնում, որովհետև երկրի ներքին ուժերի ներգործությամբ անընդհատ տեղի են ունեցել երկրակեղևի առանձին բնեկորների դիֆերենցված շարժումներ, ծալքավորման ու լեռնագոյացման այրոցեսներ՝ մակաշարժեր (շարիաժներ), սուրդուկացիայի, սփրեդինգի, օքոնիկացիայի պրոցեսներ, ոիֆտագոյացում, հրաբխային ուժգին արտավիժումներ ու ներժարքումներ, ապարների փոխա-

կերպման պրոցեսներ և այլն: Այս բոլորի ընթացքում շերտախմբերը հաճախ հայտնվել են ծովի մակարդակից բարձր, առաջացրել են ցամաքներ, լեռնազանգվածներ, միջևեռնային ու նախալեռնային իջվածքներ, լեռներ՝ ենթարկվելով հողմահարման ու տեղատարման: Ունիեֆի դրական ձևերը նյութ են մատակարարել այդ իջվածքներին, որտեղ կուտակվել են ավելի երիտասարդ նստվածքներ: Այսպիսով, Հայկական լեռնաշխարհը ապարային կազմով ու կառուցվածքով խիստ բարդ լեռնային երկիր է ներկայացնում:

Հայկական լեռնաշխարհում, ինչպես մայրցամաքային տիպի երկրակեղում, առանձնացվում է երեք շերտ. ստորինը բազալտային է, պարփականիտային ու փոխակերպային շերտն է, ապա՝ նստվածքայինը: Երկրակեղու ընդհանուր հզորությունը կազմում է 40-45-50-55 կմ: Ուսումնական ձեռնարկի այս մասում մեզ հետաքրքրում է վերին շերտը, որը կազմված է նստվածքային, նստվածքա-հրաբխային և հրաբխային ապարներից:

Ամենահին ապարները ունեն ավելի քան 600 միլիոն տարվա հասակ, վերաբերում են վերին պրոտերոզոյին: Մինչև միջին պակեռոյն երկիրը եղել է պլատֆորմային վիճակում: Յամարային միջավայրը է եղել՝ Արարական պլատֆորմի հյուսիսային եզրամասում, որտեղ ծովային նստվածքներ չեն առաջացել: Սակայն սկսած դեռնից մինչև չորրորդդարական ժամանակաշրջանը կան բոլոր ժամանակաշրջանների նստվածքները: Հատկապես մեծ հզորություն և ընդարձակ տարածում ունեն յուրայի, վերին կավճի, էոցենի և միոցենի ծովային նստվածքային (կրաքար, ավազքար և այլն), հրաբխա-նստվածքային ապարները, վերին պլիոցենի և չորրորդդարականի արտաժայթուկ ապարները, լճագետային նստվածքները:

Ա. Տ. Ապանյանը (1968) առանձնացնում է ապարների հետևյալ հասակի ֆորմացիոն խմբեր-կառուցվածքային հարկերը՝ 1. էոպակեռողյի, 2. վերին սիլուր-ստորին դենոնի, 3. միջին դենոնի-կարբոնի, 4. պերմուրիասի, 5. ստորին-միջին յուրայի, 6. վերին յուրայի-ստորին կավճի, 7. վերին կավճի-պակեռոցենի, 8. էոցեն-մայկոպի, 9. միոցեն-միջին պլիոցենի, 10. վերին պլիոցենյան-չորրորդդարական: Նա նշում է խմբերի ձևավորման հետևյալ օրինաշափությունները:

Յուրաքանչյուր խումբ կազմում է կառուցվածքային (տեկտոնական) հարկ, որն առանձնանում է ավելի հին ու նոր հարկերից անկյունային աններդաշնակությամբ, և ինտենսիվ դիպուկացիաները տեղի են ունենում հարկի վերջում:

Նստվածքագոյացման ցիկլը սկսվում է ծանծաղ ծովային միջավայրում, ապա՝ խորը ծովային և վերջանում է ծովալճակային, կիսացամաքային նստվածքներով:

Ծովային ֆաունայով բնորոշ նստվածքներում զարգացած են ոլֆտային (կորալային) ֆացիաները, որոնք ծանծաղ ծովայրում են առաջանում:

Արտաժայրով (էֆփուզիվ) հրաբխային գործունեությունն սկսվում է խոշոր ծովարշավների հետ միասին: Ինչ վերաբերում է ներժայրուկներին, ապա, ըստ Ասլանյանի, սրանք յուրահատուկ են ֆորմացիոն խմբերի միջին հոդղոններին:

Հայկական լեռնաշխարհում ամենից հին ապարները փոխակերպված (մետամորֆային) բյուրեղային թերթաքարերն են, գրանիտա-գնեսաները, քվարցիտային թերթաքարերը, փայլարակիր մարմարները և այլն: Սրանց հասակը մինչընթացը յանակ է, որոշ հեղինակների կարծիքով՝ նաև ստորին պալեոգոյան: Հ. Սարգսյանը (1989) փոխակերպված ամբողջ համալիրը ներկայացնում է երկու ենթահամալիրով՝ ստորինը՝ գրենիլյան, վերինը՝ բայկալյան: Սրանք Հայկական լեռնաշխարհում հանդես են գալիս բյուրեղային հիմքի եղուստներով՝ Սուրամի լեռներում (Զիրույան զանգված), ՀՀ հյուսիսում (Լորի զանգված), Ծաղկունյաց լեռներում (Արգականի և Ապարանի զանգված), Հախում գետի ակունքներում, Հայկական Տավրոսում, Արդահանում: Հորատմամբ Արարատյան դաշտում հայտնաբերվել է 500 մ խորության տակ: Ենթառքվում է, որ այս ապարները կազմում են Հայկական լեռնաշխարհի բյուրեղային հիմքը և տեղ-տեղ դրւու են գալիս երկրի մակերևույթը: Ապարները իրենց կազմով նման են Մեծ Կովկասի կենտրոնական-բյուրեղային հատվածի ապարներին և նույն հասակն ունեն:

Ունենալով բյուրեղային կառուցվածք՝ վերը նշված ապարները երկրի մակերևույթին արագ քայլայփում են ջերմային հողմահարման միջոցով:

Հայկական լեռնաշխարհում ստորին պալեոգոյի՝ քեմքրի, օրդովիկի, սիլուրի նատվածքներ հայտնաբերված չեն: Նշանակում է՝ այդ ժամանակաշրջաններում գյուրքուն են ունեցել ցանաքային պայմաններ: Նշված ժամանակաշրջանների ծովային նատվածքներ շատ սահմանափակ հզորությամբ հայտնաբերվել են միայն Իրանում և Անատոլիական բարձրավանդակում:

Հայկական լեռնաշխարհում վերին պալեոգոյի նատվածքները ունեն շատ սահմանափակ տարածում: Սրանք Հ. Սարգսյանը (1989) խմբավորում է ուշ-պալեոգոյան (հերցինյան) պլատֆորմակերպ (պարագենոսինկլինալային) համալիրի մեջ: Համալիրում ընդգրկված են դևոնի, կարբոնի, պերմի և տրիասի նատվածքները: Տրիասը շնայած մեզոլոյան դարաշրջանին է վերաբերում, բայց ապարների կազմով ու տեղադրմամբ ուշ-պալեոգոյան համալիրին է պատկանում: Տրիասը պերմի վրա է տեղադրված ներդաշնակ և ներկայացված է միանման կարբոնատային ֆորմացիայով, իսկ յուրայից անջատվում է տեկտոնական և շերտագրական աններդաշնակուրյամբ:

Նշված ժամանակաշրջանները միասին կազմում են 215 միլիոն տարվա տևողությամբ մի տևական ժամանակահատված, որի ընթացքում շատ պրցեսներ ու տեղաշարժեր են եղել: Կ. Ն. Պաֆենիոլցը (1969) գտնում է, որ մի-

զին և վերին պալեոզոյում, ինչպես նաև տրիասում, տեղի է ունեցել նստվածքագոյացման միասնական ցիկլ, որը առավելապես ներկայացված է կարբոնատային ապարներով (հատկապես՝ տրիասում): Կորայան կուտակվումները ցույց են տալիս, որ ծովային միջավայրը եղել է ծանծաղ ու տաք, ունեցել է բնականն աղիություն:

Նստվածքները բազմատիպ են, տիրապետող են կարբոնատային ապարները, ավագաքարները, քվարցիտները, կավաքերթաքարները: Սրանք ներփակում են հարուստ բրածո մնացորդներ՝ ֆորամինիֆերներ, ֆուլուխներ, կորալներ, ուստանիներ և այլն: Այս համալիրը մերկանում է տեղադրություն՝ Արաքսի հովտում, Հարավային Չամքեզուրում, Հայկական Տավրոսում, Ներքին Տավրոսում: Մերկացումները սահմանափակ են, միմյանցից անջատ, առանձին կղզյակներով:

Հայկական լեռնաշխարհում ավելի ընդարձակ տարածություններ գրանցված են ալպյան գեոսինկլինալային համալիրի ապարները, որոնք ընդգրկում են մեզոզոյի (առանց տրիասի) և պալեոզենի (առանց օլիգոցենի) ապարները: Հ. Սարգսյանը համալիրը բաժանում է երկու ենթահամալիրի՝ վաղ-ալպյան (կիմերյան) և միջին-ալպյան:

Վաղ-ալպյան ենթահամալիրն ընդգրկում է յուրայի և ստորին կավճի նստվածքները: Նստվածքագոյացումը ընթացել է շորջ 90 միլիոն տարվա ընթացքում և այն ուղեկցվել է հրաբխային արտավիժումներով, ուստի նստվածքային ապարները հերթափոխվում են հրաբխային ծագումի ապարներով: Նշենք, որ յուրայի ժամանակաշրջանում մոտ 60 միլիոն տարվա ընթացքում տեղի են ունեցել տնկունական բարձրացումներ ու իջեցումներ, ընդ որում, այս ժամանակաշրջանում է, որ երկրակենութեամնահնտենակի իջեցումն է ունեցել, յուրայի նստվածքների հզորությունը հասնում է 7 կմ-ի: Ինտենսիվ իջեցման պատճառն այն է, որ հրաբխականության հետևանքով երկրակեղենի տակ նյութի պակասորդ է առաջացել: Հրաբխականությունը արտահայտվել է նաև ներժայթքումների ձևով, և դրանք հարուստ են մետաղային, մասնավորապես գունավոր մետաղների պարունակությամբ (Ալավերդի, Կապան, Գյումուշսանե, Արդանամադեն և այլն):

Յուրայի ծովային նստվածքները արտահայտված են կրաքարներով, դոլոմիտներով, ավագաքարներով, կոնգլոմերատներով, տուֆաավագաքարներով: Կան նաև գրաուվակյան, տուֆածին, կերատոֆիրո-պորֆիրիտային ֆորմացիաներ:

Յուրայի վրա նստած են ստորին կավճի նստվածքները: Սրանք մեծ մասմաս արտահայտված են կրաքարներով, նստվածքա-հրաբխածին տարատեսակներով: Տարածված են Պոնտոսի համակարգում, Մոսքիլյան (Մելիքերի) և Թուերի (Թրիալերի) լեռներում, Փոքր Կովկասում, Հայկական Տավրոսում,

**Ներքին Տավրոսում:** Կավիճը ներկայացված է բոլոր բաժիններով ու հարկերով, որոնք ֆառնայով լավ են բնութագրված (ի տարրերություն յուրայի): Կավճի կրաքարերը լայնորեն օգտագործվում են որպես շինանյութ և կրի հոմք:

Միջնալպիական գեոսինկլինալպային համալիրը ընդգրկում է Վերին կավճի ու Եղենի ապարաշերտերը: Սրանք աչքի են ընկնում ֆացիալ կազմի բազմազանությամբ, մեծ հզորություններով, օֆիոլիտային ֆորմացիայի առկայությամբ:

Պալեոցենի նատվածքները սահմանափակ են տարածված (ալկրոլիտ, մերգել, ավազաքարեր): Լայն տարածում ունեն Եղենի նատվածքները: Եղենում երկրակեղելի խոր ճկվածքներ են առաջացել, որտեղ նատվածքների հզորությունը հասել է 3-3,5 կմ-ի: Բրածո մնացորդներից են նումուլիտները, կորալները: Մեծ տարածում ունեն հրաբխային-նատվածքային ապարները, ներժայրուկները՝ զարրո-դիորիտ, գրանո-դիորիտ, սիենիտ: Դրանցից են Մեղրու պլուտոնի արևելյան մասը, Պոնտովի համակարգի գրանո-դիորիտները, նույն բնույթի ապարները Տավրոսի համակարգում և այլն:

Ալպյան լեռնագոյացման (մոլասային) համալիրը ընդգրկում է օլիգոցենի, միոցենի, պլիոցենի ու չորրորդական գոյացումները և ըստ Սարգսյանի՝ բաժանվում է երկու ենթահամալիրի՝ վաղ-լեռնագոյացման (օլիգոցեն-միոցեն) և ոչ-լեռնագոյացման (պլիոցեն-չորրորդական):

Օլիգոցենում Հայկական լեռնաշխարհում տեղի են ունենում ծալքավրություններ, տեկտոնական բարձրացումներ (պիրենյան փուլ), և երկիրը քեակիտում է ցամաքային զարգացման փուլ: Ծովային նատվածքները առաջանում են սինկլինորիտմներում՝ կավա-ավազային, տեղ-տեղ էլ կրաքարային-տուֆածին տարբերակներով: Սրանք զգալի տարածում ունեն Փոքր Կովկասում, Հայկական Տավրոսում, Ներքին Տավրոսում: Բազմազան են բրածո մնացորդները՝ ֆորամինիֆերները, նումուլիտները, կորալները:

Վերին օլիգոցենի և ստորին միոցենի ապարները մերկանում են ամենուրեք՝ Սևան-Շիրակի սինկլինորիտմում, որտեղ կան ածխաբիտումաբեր մոլասային նատվածքներ: Տարածված են Միջին-Արաքսյան գոնայում, Նախիջևանի գոգավորությունում, Արածանիի ավազանում: Տեղ-տեղ էլ-հանդիպում են հրաբխածին ապարներ:

Միոցենի ծովային և լազունային նատվածքները լայն տարածում ունեն Արաքսի, Արածանիի, Եփրատի երկարությամբ դասավորված գոգավորություններում հասնելով մինչև 1000-1500 մ հզորության: Ներկայացված են աղաքեր, գիպսաքեր շերտերով: Քարաղի շերտերի հզորությունը հասնում է երեսն 40-50 մ (Ավանի, Կողբի, Նախիջևանի, Խոնուսի աղահանքները): Ըստ Սարգսյանի՝ միջին և վերին միոցենում հրաբխային պրոցեսները դադարել են, և ընթացել է ուկիեֆի համահարքման պրոցես:

Ուշ-լեռնագոյացման ենթահամալիրը ներկայացված է ստորին-միջին պլիոցենի և վերին պլիոցենի-չորրորդականի նատվածքներով: Ըստ Սարգսյանի՝ ստորին պլիոցենում առաջացել է Ողջաբերդի հաստվածքը (Վրաստանում այն կրում է Գողերզի անվանումը): Այլ հեղինակներ հաստվածքը ժամանակագրում են վերին միոցեն-ստորին պլիոցեն (մեոտիս-պոն): Սրանք ներկայացված են հրաբխածին-պրոլյուվիալ գոյացություններով: մեծ տարածում ունեն լեռների ջրաժանային հատվածներում, Կարսի, Զավախսի սարահարթերում, մերձերևանյան շրջանում, Վանա լճից հյուսիս գտնվող հրաբխային կառույցներում: Ստորին և միջին պլիոցենի հրաբխապրոլյուվիալ շերտախմբի հզորությունը տեղ-տեղ հասնում է 1000 մ-ի:

Վերին պլիոցենի և չորրորդական ժամանակաշրջանի ապարները մեծ քազմազանություն ունեն: Սրանք արտահայտված են հրային, հրաբեկորային, լճային, պրոլյուվիալ, սառցադաշտային տարրերակներով: Գոյացությունների ընդհանուր հզորությունը հրաբխային ֆացիաներում հասնում է 1000-1200 մ-ի, լճային նատվածքներում՝ մինչև 400 մ: Հրաբխային ծածկույթների մասին կիսումի հրաբխականությունը մեկնաբանելիս:

Նստվածքային ծագման ապարները որպես լճային նատվածքներ արտահայտված են Հայկական լեռնաշխարհի մի շարք գոգավորություններում, որոնք գտնվում են գետերի ավազաններում (Արարատյան, Շիրակի, Սիսիանի, Զդրբի, Խոնուսի, Աղաշկերտի, Մանազկերտի և այլն): Լճային նատվածքները ներկայացված են գլաքարերով, մանրակոպիճով, ավազներով, կավերով, դիատոմային կավերով: Նստվածքներում կան ֆառնայի առատ մնացորդներ, հատկապես՝ դրեյսենախա (Dreissensia Diluvii Abich):

Չորրորդական ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի լեռնային քարձ համակարգերը ենթարկվել են կրկնակի սառցապատման: Խվլիտներում կուտակվել են մորենային նատվածքներ, գոյացել են զանդրային դաշտեր:

Չորրորդական նատվածքների մեջ նշանակալից են տրավերտինները, որ կուտակվել են հանքային ջրերի ելքերի շրջաններում: Արարատ քաղաքի մոտերքում, ՀՀ հյուսիսում Տավուշի մարզի Կողը գյուղի մոտ, Խջևանի շրջանում, Արածանի գետի վերին հոսանքների ավազանում, Կարինի մոտ, Որոտանի կիրճում, Ուրմիա լճի մոտ և այլն: Սրանք կարևոր հումք են ցեմենտի արտադրության համար:

Չորրորդական նատվածքներից են նաև գետային (ալյուվիա), սելավային (պրոլյուվիա), լանջային (դելյուվիա) նատվածքները: Սրանք ներկայացված են գլաքարերով, կոպիճով, ավազով, կավերով:

**Ներժայրուկները:** Ներժայրային հրաբխականությունը Հայկական լեռնաշխարհում ընդգրկում է մինչև նեղուն ներառյալ: Ներժայրուկները խիստ քազմազան են ինչպես կազմի, այնպես էլ հասակի առումով: Հանդիպում են

բրու, միջին հիմնային տարատեսակներով և հանդես են գալիս լեռնակազմական որոշակի փուլերում: Կա մի ընդհանուր օրինաչափություն. Փուլի սկզբում ներդրվում են հիմնային, վերջում բրու և ալկալային ներժայրուկներ: Արտաժայրուկ հրաբխականությունը հիմնականում արտահայտվում է գեղսինկլինալային զոնաների ձկնան փուլում, իսկ ներժայրուկները՝ ծալքավորման և տեկտոնական բարձրացման փուլերում:

Պալեոգոյան ներժայրուկները արտահայտված են գաբրոներով, գրանիտներով, դիորիթներով: Սևգողոյան ներժայրուկներից հատկապես յուրայի հասակի ներժայրուկներն ունեն զգայի տարածում, ստորին կավճի ներժայրուկները՝ նույնապես:

Կայնոգոյում աշխուժացել է ներժայրքային հրաբխականությունը: Առանձին ելքերով ներժայրուկները դրվագ են գալիս Վիրահայոց, Բազումի, Փամբակի, Զանգեզուրի, Տարգուշատի լեռնաշղթաներում, Հայկական Տավրոսի ու Պոնտական լեռնահամակարգերում: Մրանք հիմնականում վերին էուցեն-օլիգոցենի հասակ ունեն: Գրանոդիորիտային բաղադրություն են ունեցել, և նշպում է ներժայրքման երեք փուլ՝ պղինձ-մոլիբդենային պարունակությամբ:


Ներժայրուկներ կան օֆիոլիտային գոտիներում՝ Պոնտա-Փոքր Կովկասյան (Սևան-Ամասիա օֆիոլիտային գոտին)՝ Վանա լճից արևելք, ինչպես նաև Հայկական Տավրոսի լեռնահամակարգում: Մերկանում են ուլտրահիմքային և հիմքային ներժայրուկներ, որոնք սերպենտինացված են: Օլիգոցենի վերջում, միոցենի սկզբում վերջին լեռնակազմական փուլն է՝ ինտենսիվ մագմատիզմով (գրանոդիորիտ՝ Քաջքարի, Մելորու պլուտոններ):

Միո-պլիոցենյան ներժայրուկները ունեն անդեզիտա-դաշիտային, տրախիտային, տրախիլիպարիտային կազմ. սրանք ենթարիխաբխային մարմիններ են:

## 2. ՏԵԿՏՈՆԻԿԱՆ

Հայկական լեռնաշխարհի և Կովկասի տեկտոնական կառուցվածքի վերաբերյալ կա հարուստ գրականություն: Տավրոս-Կովկասյան մարզի տեկտոնիկան ամփոփված է Ա. Տ. Ալանյանի (1984) մենագրությունում: Նշենք, որ ուսումնասիրության ենթակա այս տարածքը աշխարհի ամենաբարդ կառուցվածք ունեցողներից մեկն է:

Հայկական լեռնաշխարհի տեկտոնական պրոցեսները և նրանց պատմական զարգացումը մեկուսացած դիտել չենք կարող: Երկրագնդի արտաքին կենևեր, որի վրա ապրում ենք, մեկ ընդհանուր միասնություն է ներկայացնում,



Նկ. 4. Հայկական լեռնաշխարհի տեկտոնական կառուցվածքի սխեման  
(Ա. Տ. Աղամյանի գրքից, 1984, էջ 9)

1. ԱՆԴՎԱՅԻ-ԿԱՍՎԻԱԿԱՆ միջենային իջույր, 2. ՊՈՆՏԱ-ՓՈՐՐ-ԿՈՎԿԱՅԱԲ-ԷՐՄՈՐԱՅԱ մԵԳԱԱՆԻՒԼԻՋԻՆՈՐԱՅԻՆ գոտի, 3. ԱՆԴՎԱՅԻ-ԻՐԱՋԱԿԱՆ միջենային իջույր, 4. ՏԱՎՐԻ-ԶԱԳՐՈՍՅԱՆ լԵՇՆՈՋԱՄԱՐՎԱԿՈՐ գոտի, 5. ԱՐԱՐԱԿԱՆ պլատֆորմ, 6. ՎԱՅ-ԸՐՄԻՋԱԿԱՆ ԷՎԻՐԱՅԼԱՅԱՆ զանգված, 7. ԱՐԴԻԽԱՆԻ ԷՎԻՐԱՅԼԱՅԱՆ զանգված, 8. ՋԲՐՈՒՅԱ ԷՎԻՐԱՅԼԱՅԱՆ զանգված, 9. ԳԼԱՑՈՒՅԱՆ ԼԱՅԵՐՈՄՅԱՅԻ-ԽԵՐԵՋԻՅԱՆ զանգված, մաճը խաչերով՝ օֆիոյիտները, ընդհատվող գծիկներով՝ ՀԱՅԿԱԿԱՆ լԵՇՆՈՋԱՄԱՐԻ սահմանները

ուստի մեր երկրանասի ձևավորումը պիտի դիտենք համամոլորակային պրոցեսների ֆոնի վրա:

Սրանից շուրջ 200-250 միլիոն տարի առաջ, պայենողյան դարաշրջանի վերջում, Երկիր մոլորակի վրա գոյություն ունեին երկու խոչոր ցամաքներ՝ Լավրասիան և Հյուսիսային Ամերիկան, Եվրասիան միասին) և Գոնդվանան հարավում (Աֆրիկան, Հարավային Ամերիկան, Անտարկտիդան, Ավստրալիան, Հնդկական և Արաբական թերակղզիները միասին): Նրանց միջև ձգվում էր Թետիս օվկիանոսը: Մոտ 200 միլիոն տարի առաջ՝ մեզոզոյան դարաշրջանում սկսվեցին այդ ցամաքների տրոհումը և Թետիսի տակ ձկուն երկրակեղելի (գեոսինկլինալի) ինտենսիվ ծալքավորումն ու երկրակեղելի մասնատումը: Մինչ այդ էլ Թետիսիում, ավելի վաղ ժամանակներում, տեղի էին ունեցել երկրակեղելի ծալքավորման-լեռնակազմական պրոցեսներ՝ շուրջ 1-1,5 միլիարդ տարի առաջ, որոց հատվածներ էլ վերածվել էին ամրա-

կուռ, կոշտ պլատֆորմների:

Հարավային և Հյուսիսային Ամերիկաները, պոկվելով Եվրասիայից ու Աֆրիկայից, երկրի միջնապատյանի (ասթենոսֆերայի) վրայով սահեցին դեպի արևմուտք. առաջացագ Ատլանտյան օվկիանոսը: Գոնդվանայից պոկվեցին ու հեռացան Հարավային Ամերիկան, Անտարկտիդան, Ավստրալիան, Արաբական ու Հնդկական թերակղզիները, իսկ Աֆրիկան, չնայած շարժումներ ունեցել է, սակայն համարում ենք, որ հարաբերականորեն մնաց տեղում: Հնդկական թերակղզու բեկորը շարժվեց դեպի հյուսիս-արև ելք տարեկան 10-12 սմ արագությամբ և ճգմեց Թետիսի գեոսինկլինալը, առաջացրեց Պամիրի լեռնակուտակը, Կարակորումն ու Հիմալայները, իսկ Արաբական թերակղզին, որպես պլատֆորմային սալ, պոկվելով Աֆրիկայից, տարեկան 2-4 սմ արագությամբ շարժվեց հյուսիս, ճգմեց Հայկական լեռնաշխարհի տեղում գտնվող գեոսինկլինալը, առաջացրեց Հայկական լեռնաշխարհի լեռնակուտակը: Այս վիրխարի տեղաշարժերը կապված էին երկրակեղեղի տակ ասթենոսֆերայում (բույլորոտում) տեղի ունեցող մագմայի հզոր շիթային շարժումների հետ, որոնք այժմ էլ գործում են:

Եթե մինչև 20-րդ դարը իշխում էր այն կարծիքը, որ երկրագունդը սեղմը-վում է, և նրա վրա առաջանում են կնճիռներ-լեռնաշղթաներ (կոնտրակցիոն տեսություն), ապա 20-րդ դարում ծնունդ առավ մի նոր տեսություն՝ մորիլիզմի տեսությունը, ըստ որի՝ երկրակեղեղի սալերը անընդհատ շարժվում են մագմայի շիթերի միջոցով, տեղի է ունենում երկրակեղեղի փրման պրոցես, առաջանում են կենդի խորը ճեղքեր-ռիֆտեր: Ռիֆտերի առաջացմամբ պետք է բացատրել հրաբխային մասսայական արտավիժումները և լավային ծովերի ստեղծումը:

Եվ այսպես, գտնվելով Թետիս Օվկիանոսի հատակում, Հայկական լեռնաշխարհի երկրակեղեղը հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում ենթարկվել է ամենաբազմազան պրոցեսների ազդեցությամբ: Գոնդվանայից ու Լավրասիայից լվացված-տեղատարգած նյութերը նստել են Թետիս օվկիանոսի հատակին՝ ստեղծելով գումարային հզորությամբ 20 կմ հաստությամբ ծովային նստվածքներ: Այդ ծանրության տակ երկրակեղեղը ճկվում էր, սուզվում միջնապատյանի մեջ: Նստվածքները հաճախ հասնում էին այնպիսի խորության, որտեղ բարձր ջերմաստիճանի ու ճնշման պայմաններում տեղի էր ունենում ապարների փոխակերպում (մետամորֆիզմ), կրաքարը դառնում էր մարմար, կավաշերտերը՝ կավային բյուրեղային թերթաքար և այլն: Կողային ճնշումների հետևանքով գեոսինկլինալային հատվածներում տեղի էր ունենում պլիկատիվ դիալոկացիա, հաճախ խորքային փոխակերպված ապարները ծալքավորվելով հայտնվում էին երկրի մակերևույթին, նորից հողմահարվում ու տեղատարգում: Երկրակեղեղը ենթարկվում էր դիֆերենցված տեկ-

տոնական շարժումների՝ բարձրացումների, իջեցումների, առաջանում էին թեկվածքներ, խզվածքներ, տեղի էին ունենում սուրդուկցիայի, սփրելինգի, օբյուկցիայի պրոցեսներ: Սուրդուկցիայի պրոցեսում երկրակեղևի այն հատվածները, որոնք սուրզում էին մագմայի մեջ, հալվում էին և որպես լավա հաճախ դուրս էին ժայթրում երկրի մակերևույթ, կամ ներժայթուկների ձևով մնում էին երկրի խորքում, ենթարկվում դանդաղ սառեցման ու մագմայի դիֆերենցման: Ներկայումս մերկացած ներժայթուկները պարունակում են մետաղային հարատուրյուններ, որոնք մարդը լայնորեն օգտագործում է: Հայկական լեռնաշխարհը բուն գեոսինլինալային (սինօրոգեն) խորքային մագմայականության դասական երկրներից մեկն է (Հ. Սարգսյան, 1989):

Հայկական լեռնաշխարհի տեկտոնական կառուցվածքը Ա. Տ. Ավանյանը (1984) դիտում է Տավրո-Կովկասյան սեզմնատի ֆոնի վրա (նկ. 4), որտեղ առանձնացված են մերձգուգահեռականի ուղղությամբ տարածվող տեկտոնական գոտիներ, որոնց անվանում է ձևակառուցվածքային միավորներ: Այդ միավորներից միայն երեքն են, որ անցնում են Հայկական լեռնաշխարհի տարածքով:

1. **Պոնտա-Փոքրասիական-Էլբուրյան գոտի:** Ընդգրկում է կուխանանան դասավորված Արևելյան Պոնտոսի, Աջարա-Մոռեղի, Փոքր Կովկասի<sup>1</sup>, Ղարադարի, Թափշի և Էլբուրսի լեռնային համակարգերը: Գոտու ամբողջ երկարությամբ տարածված են մեզոպոյի ծովային նատվածքները, հատկապես կարբոնատները: Յուրաքանչյուր կավիճը մեծ հզորություն ունեն, խիստ ծալքավորված են կիմերյան և լարամյան ծալքավորություններով: Հանդիպում են մինչքեմբրյան փոխակերպային ապարների ելքեր (Արդահանի, Զիրուլյան, Արզականի, Ղարադարի (Հայկական լեռներ) և այլն): Կան նաև հիմքային և բրու ներժայթուկներ՝ սկսած վերին պալեոզոյից մինչև օլիգոցին ներառյալ:

Գոտում ինտենսիվ լեռնակազմական պրոցեսներ ընթացել են նաև եղենում և օլիգոցինում, իսկ պլիոցենում տեղի են ունեցել ինտենսիվ տեկտոնական շարժումներ՝ ոփիտագոյացում (որի ընթացքում՝ մասսայական արտավիժումներ), ստեղծվել են լավային հսկայական ծածկույթներ:

2. **Անատոլական-Հայկական-Իրանական գոտի:** Ընդգրկում է Փոքր Ասիայի կենտրոնական հատվածը, Հայկական լեռնաշխարհի Սիջնաշխարհը, անցնում է դեպի Իրանական լեռնաշխարհ: Գրականության մեջ այն նշվում է Անատոլիա-Իրանական անունով. Հայկական անունը աստիճանաբար դուրս է ըրդվում: Մենք այն մտցնում ենք պատմական ավանդույթները շարունակելով, որպեսուն գոտու կենտրոնական հատվածը բուն Հայկական լեռնաշխարհն է:

Գոտու ամբողջ երկարությամբ ձգվում են ամրակուր զանգվածներ, նրանց արանքներում՝ ծալքավոր լեռներ, հորսուր ու գրաբեններ: Ս. Բալյա-

<sup>1</sup> Հիշեցնենք, որ Փոքր Կովկասը երկրաբանների պատկերացմամբ Կուր-Արաքսյան ամբողջ միջագետը է:

Այս գոտին անվանում է հերցինյան զանգված (1969):

Այստեղ մերկանում են փոխակերպված, նատվածքային և մագմատիկ ապարներ (գնեյս, աճֆիրոլիտ, քվարցային-փայլարային թերթաքարեր, ֆիլիտներ՝ պատռված գրանիտովիներով): Մեծ տարածում ունեն վերին պալեո-գոյնի նստվածքները՝ ծածկված միոցենի, ստորին պլիոցենի լազունային-ցամաքային նստվածքներով:

Այս գոտին որոշ հեղինակներ համարում են մերձցամաք-Ենթացամաք (սուրկոնտինենտ), որը մոզակի կերպով ջարդութված է, ներկայացված է կոշտա-թեկորավոր կառուցվածքով: Մեծ տարածում ունեն կավճի օֆիոլիտները: Ներժայրուկները ունեն նոյն կազմը, ինչ՝ պոնտական և փոքրկովկասյան էոցենային գրանիտովիները:

Գոտում մեծ տարածում ունի միոպլիոցենյան-պլեյստոցենյան հրաբխականությունը (Կապաղովկիա, Դիարբեքիր, Նեմրուր, Թոնդրակ, Արարատ, Կարսի սարահարք, Սավալան, Սոհունի և այլն):

3. **Տավրոս-Զագրոսյան գոտի:** Եզերում է Արաբական Էպիրայկայան պլատֆորմը հյուսիսից: Այդ պլատֆորմը շարժվում է դեպի հյուսիս կայնողյմեզողոյի և պալեոզոյի վրաշարժային համալիրի տակ: Պլատֆորմային ծածկույթի հզրությունը 10-12 կմ է:

Զագրոսյան համակարգը Հայկական Տավրոսին միանում է կուլիսաձև: Տավրոսի և Զագրոսյան կառուցները շատ ընդհանուր գծեր ունեն. միջուկներում դուրս են գալիս հնագույն փոխակերպված ապարների համալիրներ, որոնք եզրավորված են վերին պալեոզոյի ֆիլշային-մինչև 1000 մ հզրության հաստվածքով, ապա՝ յուրայի, կավճի, պալեոգեն հզրություններով և միոցենի մոլասսներով: Համակարգում լավ արտահայտված է օֆիոլիտային գոտին, զարգացած են վրաշարժերը:

Վերը նշված առաջին և երրորդ գոտիները եզերում են միջնաշխարհը, որը շատ ցայտուն արտահայտված է լեռնագրությամբ: Միջնաշխարհի ամրակուր զանգվածները ստիպել են Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածին լայնանալու. եթե արևելուտքում լեռնաշխարհի լայնությունը շուրջ 300 կմ է, արևելքում՝ կրկնակի ավելի:

Հայկական լեռնաշխարհում շատ ցայտուն արտահայտված են երկրակեղևում առաջացած տեկտոնական թեկվածքներ-խզվածքները: Դրանք լեռնաշխարհը տրոհում են շախմատի տախտակի նման մանր թեկորների: Պարզվել է, որ վաղ ացյալում տեղի են ունեցել երկրակեղևի այնպիսի պատըռվածքներ-դիֆուսներ, որոնք հասել են մինչև միջնապատյան, և ասթենոսֆերայից մագման մասսայաբար ժայթքել է՝ առաջացնելով լավային ծովեր կամ խոշոր ներժայրուկներ-պլուտոններ (Քաջրարի, Մեղրու և այլն):

Ամենախոշոր տեկտոնական խզվածքը այսպէս կոչված Հյուսիս-Անա-

տոլականն է: Այն սկսվում է Էգեյան ծովում, անցնում է արևելք՝ Երզնկա, այնտեղից բաժանվում է երեք ճյուղի: Հիմնականը անցնում է դեպի Վանա լիճ և ապա՝ հարավ-արևելք: Ըստ Վ. Ե. Խախինի՝ այն սահման է հանդիսանում Տավրո-Զագրոսյան և Պոնտա-Փոքրկովկասյան-Էլբուրյան լեռնածալքավոր համակարգերի միջև:

Մյուս գլխավոր ճյուղը Երզնկայից անցնում է Սևան-Ամասիայի օֆիոլիտային գոտի Աղստևի հովիտ: Երրորդ ճյուղը Ախուրյանի գետաբերանի մոտից անցնում է Երևանյան խորբային թեկվածքով դեպի Օրբուրյա և Իրան: Գոյորդյուն ունեն նաև բազմարիվ լայնակի ուղղությամբ թեկվածքներ ու լինիամենտներ:

Թեկվածքներ, խզվածքներ կան ոչ միայն լայնակի ուղղությամբ, այլև դրանց ուղղահայաց՝ մերձմիջօրեականի ուղղությամբ: Այդ թեկվածքների հատման կետերում հաճախսակի են երկրաշարժերը:

Հայկական լեռնաշխարհում թետիս օվկիանոսը անցած 1-1,5 միլիարդ տարվա ընթացքում տարբեր բնույթի երկրակեղենի վրա է տեղադրված եղել: Որոշ հատվածներ վերածվել են պլատֆորմների, ապա՝ գեոսինկլինալների և նորից ծալքավորվելով գործվել են պլատֆորմներին և այլն: Լեռնաշխարհում գոյություն են ունեցել երկրակեղենի կոչտ զանգվածներ, որոնց շուրջը ձևավորվել են լեռնաշղթաները: Այդ կոչտ զանգվածներն են՝ արևմուտքում Անատոլականը, արևելքում և հյուսիս-արևելքում Վրացական կոչտ զանգվածը և Վանդամյանը (Քյուրդամիրյանը), հարավում՝ Արաբականը, իսկ կենտրոնական մասում՝ Հերցինյան զանգվածը կամ ինչպես ասում են՝ Անատոլա-Հայկական-Իրանական սուրպալատֆորմը:

Հայկական լեռնաշխարհի տեկտոնական զարգացումը ունեցել է մի շարք փուլեր՝ մինչքեմբրյան, բայկալյան, կալեդոնյան, հերցինյան, կիմերյան, ալպյան, որտեղ տեկտոնական շարժումները շարունակվում են մինչև օրս:

1. **Մինչքեմբրյան փուլ:** Որոշ հերցինակներ գտնում են, որ ամենավաղ տեկտոնական շարժումները՝ ծալքավորությունները և դիզյունկտիվ դիսլոկացիաները տեղի են ունեցել 1,5-1,7 միլիարդ տարի առաջ: Ամենավաղ ծալքավորությունը գրեն կիլոմետր է, ապա՝ քայլ կալյանը: Երկրակեղենի հիմքը բյուրեղային կառուցվածք է ունեցել և ծալքավորվել է: Հետաքրքիրն այն է, որ օվկիանոսային տիպի երկրակեղենը նստվածքակուտակման, գրանիտացման և ծալքավորվելու հետևանքով վերածվել է ցամաքային տիպի, տեղ-տեղ առաջացել են կրատոններ:

2. **Կալեդոնյան** ծալքավորությունը տեղի է ունեցել սիլուր-դևոնում և այն մեծ զարգացում չի ունեցել: Վ. Ե. Խախինի արտահայտությամբ բնութագրվում է որպես ծովյա ծալքավորում: Մագմատիզմ չի եղել:

Հայկական լեռնաշխարհի երկրաբանության լավագույն գիտակ Ա. Հ. Գաբրիելյանը (1981) գրում է. «Եվրասիայի հարավի ամբողջ ծալքավոր մար-

զը, ծայրահեղ դեպքում Սև ծովից մինչև Հիմալայները արևելքում, քեմբրից սկսած, իսկ որոշ տեղերում (Երան), վենդից սկսած մինչև տրիասի վերջը, բնութագրվում է պլատֆորմային տեկտոնական ռեժիմով» (Էջ 78):

3. **Հերցինյան** ծալքավորությունը շատ ուժեղ է արտահայտվել՝ վերին կարբոն-պերմ, անցել է նաև տրիաս: Նկատվում է հզոր կարբոնատացում, նստվածքային, նստվածքա-հրաբխային շերտախմբերը խիստ ծալքավորված են: Այս փուլում տեղի են ունեցել սուրդուկցիայի, սփրենդինգի, օրդուկցիայի պրոցեսներ, և երկրակեղեկի որոշ հատվածներ քաղվել են միջնապատյանի մեջ, հալվել, տեղիք տվել նոր հրաբխականության: Հզոր ներժայրոկ հրաբխականություն տեսնում ենք Պոնտա-Փոքրկովկասյան համակարգում (Գյումուշխանե, Կերասունի գրանիտները): Գրանիտային ներդրումներ եղել են նաև Տավրոսի համակարգում՝ Բաղեշ (Բիթիս):

Անդրկովկասում Ռիոն-Կուրի դաշտավայրի տեղում առաջացել է ոչ բարձր լեռնաշղթա, և նրանից լվացված նյութերը նստել են Սևանի ավազանում:

4. **Կիմերյան** ծալքավորությունը տեղի է ունեցել յուրայի և վաղ կավճի ժամանակաշրջանում, երբ առաջացել են ծայրահեղ ուժգնության երևոյթներ՝ երկրակեղեկի աննախընթաց կրում, նստվածքագոյացում, հրաբխականություն, ներժայրուկների առաջացում, խոշոր ծովարշավ: Յուրայում Արաբական թերակղզու սալլ պոկեց Գոնդվանայից, շարժվեց հյուսիս: Դեպի հյուսիս հեռացավ նաև Իրանական սալլ, որի հյուսիս-արևելյան եզրը հասնում է մինչև Սևանի օֆիոլիտային գոտին: Առաջանում է Փոքր Կովկասի գեոսինկլինալը, արտավիժումներում անդեգիտային և ոլոյլիտային լավաներ են:

Անատոլա-Հայկական-Իրանական սուրկոնտինենտի գոտում (այլ կերպ՝ հերցինյան զանգված) հյուսիսային-մասում հզոր կարբոնատային նստվածքներ են առաջանում՝ կարմիր կրաքարեր, ավազակավեր, ավազաքարեր: Ներժայրոկ գրանիտոհներ առաջացել են հատկապես Զանգեզուրում, Հայկական Տավրոսում, Վիրահայոց-Արցախյան գոնայում: Նշենք, որ կիմերյան ծալքավորությունը ունի երկու լեռնակազմություն՝ իին կիմերյան և նոր կիմերյան՝ մեկը յուրայի սկզբում, մյուսը՝ վերջում:

Կավճի վերջում տեղի է ունեցել լարանյան ծալքավորությունը, որի շնորհիվ Տավրոսի պալեոզոյան համալիրները վրաշարժ են ունեցել վերին կավճի համալիրների վրա՝ դեպի Արաբական պլատֆորմ:

5. **Ալպյան էտապ:** Սկսվում է վերին կավճից: Լեռնաշխարհում տեղի են ունեցել խոշոր ծովաշարժեր, Հայկական լեռնաշխարհի մեծ մասը ծածկվել է ծովով, ձևավորվել են օֆիոլիտային գոնաներ՝ Փոքր Կովկասում, Վանա լճի ավազանում, Տավրոսի համակարգում, Զագրոսյան լեռներում, Պոնտոսի համակարգում: Ապա տեղի է ունենում բարձրացում. սկսած կավճի ժա-

մանակաշրջանից Հայկական լեռնաշխարհը բարձրացել է 3-3,5 կմ, Տավրոս-Զագրոսյանը՝ 2-3 կմ:

Ինտենսիվ հստվածքագոյացում և ծալքավորման պրոցեսներ տեղի են ունեցել/միջին և վերին էոցենում: Էցցենի անդեզիտային հրաբխականությունը Պոնտոսի համակարգում տարածվել է Սինոպի թերակղզուց մինչև Աջարա-Մոռելը, ապա՝ Փոքր Կովկասի վրայով դեպի Թալիշ: Ամենաինտենսիվ տեկողնական պրոցեսները վերին էոցենում են կատարվել և շարունակվել են նաև օլիգոցենում:

Միջին և վերին միոցենում տեղի է ունեցել երկրակեղևի առանձին փողորակների կրման պրոցես: Աև Կասպից ծովերի ավազանները կապ են ունեցել Ալաշկերտի, Թավրիզի, Սևան-Հրազդանի, Նախիջևանի, Վանա լճի և այլ ավազանների հետ: Կուր-Արարսյան դաշտավայրի արևելյան մասում նեղեն-անքորդողեն հաստվածքի հզորությունը 7 կմ է:

6. **Նորագոյն էտապն ընդգրկում** է վերին միոցենից մինչև մեր օրերը: Վերին միոցենում ուժեղ ծովարշավ է տեղի ունեցել, մի քանի երկրաբանների կարծիքով սկսվել է ուժգին հրաբխականություն, որն ամենից ինտենսիվ արտահայտվել է ստորին պլիոցենում, վերին պլիոցենում և անքորդողենում: Այն տեղի է ունեցել ոչ միայն Հայկական լեռնաշխարհում, այլև ամբողջ Միջերկրական ավազանում: Միևնույն ժամանակ տեղի է ունենում Ողջաբերդի հաստվածքի ձևավորում, Փոքր Կովկասի մեզանանտիկլինորիդում զարգացում: Էցցենից հետո վերջին 30 միլիոն տարում ամենաուժգին ծալքավորման պրոցեսներ տեղի են ունեցել օլիգոցեն-միոցեն և վերին միոցեն-վերին պլիոցեն ժամանակահատվածներում:

Երկու տասնյակ հայտնի գիտնականներ Լ. Պ. Չոնենշայնի գլխավորությամբ «Թեստիսի էվլուվիան» աշխատության մեջ (1987), համրագումարի թերելով թետիսի զարգացման պատմությունը՝ սկսած յուրայից, զալիս են այն եղակացության, որ անցած ժամանակաշրջանում այդ գեոսինկլինալում երեք փուլ կարելի է առանձնացնել՝ 1. 190-110 մլն. տարի, 110-35 մլն. տարի և վերջին՝ 35-3 մլն. տարի առաջվաճից մինչև մեր օրերը: Ըստ հեղինակների՝ Թետիսի գեոսինկլինալի վերջնական փակման պրոցեսը ավարտվել է երրորդ փուլում:

Հայկական լեռնաշխարհի երկրաբանական զարգացման ընթացքում տեղի են ունեցել կառույցների շրջադասության (ինվերսիայի) երևույթներ: Այսպէս օրինակ, Սեծ Կովկասի և Փոքր Կովկասի միջև այժմյան Անդրկովկասյան իջույրում գոյություն է ունեցել լեռնային համակարգ. նրա մի թեկորը այժմ Ջիրուլյան զանգվածն է: Շահ Էցցեն-օլիգոցեն-ժամանակահատվածում այդ լեռնային համակարգը սկսել է իջնել, դրա փոխարեն Փոքր Կովկասի համակարգը բարձրացել է: Նման շրջադասություն տեղի է ունեցել նաև Արարսի ավազանում՝ միջնաշխարհում:

Նշենք, որ նեղդենում լեռնակազմությունը շարունակվում էր, և ինտենսիվ են արտահայտվել դիզյունկտիվ դիսլոկացիաները և այժմ Հայկական լեռնաշխարհը բնորոշվում է որպես ծալքա-թեկորային երկիր:

Նեղդենի սկզբում Հայկական լեռնաշխարհում կիման տար ու խոնավ էր, աճում էր մշտադալար բուսականություն (պոլտավյան ֆլորա), ոմանց կարծիքով հասարակածը անցնում էր Հայաստանի մոտով: Միոցենի վերջում կիման զգալիորեն խստանում է: Միոցենում լեռնաշխարհի կրվածքներում-լագուններում կերակրի աղ է կուտակվում (Կողը, Կաղզվան, Ավան, Նախիջևան, Խոնոս):

Պլիոցենը նշանավոր է նրանով, որ տեղի են ունեցել տեկտոնական բարձրացումներ, գետային ցանցի վերակառուցում, գետերի ինտենսիվ խորքային երողիա, հրաբխային շատ ուժգին արտավիժումներ. Ժամանակաշրջանի վերջում կիմայի նոր խստացում (պոլտավյան ֆլորան վերանում է՝ զիջելով տեղը տուրքայան տերևաթափ բուսականությանը):

Չորրորդական ժամանակաշրջանը (շորջ մեկ, մեկուկես միլիոն տարի) հայտնի է տեկտոնական շարժումներով, լավային արտավիժումներով (քայց ոչ մասսայական, ինչպիսին վերին պլիոցենում էր): Ժամանակաշրջանը հայտնի է լավային արգելափակման լճերի առաջացմամբ, կիմայի զգալի տատանումներով, որի պատճառով զարգացել են սառցապատման երևոյթներ, տեղի է ունեցել գետային ցանցի վերակառուցում:

Ներկայում շարունակվում են երկրակեղեկի առանձին բեկորների տարբերակած բարձրացում-իջեցումներ: Օրինակ՝ Արագածը, Գեղամա լեռները բարձրանում են տարեկան մի քանի մմ, իսկ Արարատյան դաշտը, Շիրակի դաշտը, Սևանա լճի հատակը իջնում են: Ծշգրիտ գեղողեզիական չափումներով (Ս. Բայլան և ուրիշներ, 1989) պարզվել է, որ Շիրակի լեռներում և Աշոցքում տարեկան բարձրացումը կազմում է 12 մմ, մինչդեռ Շիրակի դաշտն իջնում է: Հենց այս բեկորների ուղղաձիգ շարժումների կարի վրա էլ տեղի ունեցավ 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը: Նման օրինակները շատ են:

Այսպիսով, ամփոփելով տեկտոնական բնուրագիրը՝ նշենք, որ Հայկական լեռնաշխարհը խիստ բարդ տեկտոնական կառուցվածքով լեռնային երկիր է:

### 3. ԵՐԿՐԱԾԱՐԺԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրաշարժերը տեկտոնական շարժումների արգասիք են: Ալպ-Հիմալայան գոտին ամբողջությամբ, մասնավորապես՝ Հայկական լեռնաշխարհը, երկրաշարժակտիվ մարզ է, որտեղ երկրաշարժերի ուժգնությունը կարող է հասնել 11 բալի (ըստ 12 բալանց սանդղակի): Ամենավերջին երկրաշարժը իջեց այսպիսի 1988 թ. դեկտեմբերին և Երզմկայինը 1992 թ. մարտին:

Մինչև 20-րդ դարը երկրաշարժագիտական (սեյսմիկ) ծառայություն Հայկական լեռնաշխարհում գոյություն չի ունեցել: Երկրաշարժագիտական կայանների ցանց ստեղծվեց հիմնականում 20-րդ դարի երկրորդ կեսին: Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվել է երկրաշարժագիտական լուրջ ծառայություն՝ կայանների ցանցով՝ Ս. Բալասանյանի ղեկավարությամբ: Կազմվել են երկրաշարժագիտական քարտեզներ, որտեղ տրվում է բալայնությունը (օրինակ՝ Ա. Գարբիելյանի, Հ. Սարգսյանի, Գ. Սիմոնյանի (1981) աշխատությունը): Անդրկովկասում երկրաշարժների ուսումնասիրման ասպարեզում իրենց ավանդն են Անդրդել Ե. Բյուլը, Տ. Բաբայանը, Օ. Բարսուկովը, Լ. Հախվերդյանը, Լ. Վարդանյանցը, Գ. Գորշկովը, Ն. Կարապետյանը, Ս. Փիրովյանը, Ժ. Մանուկյանը, Ֆ. Կովիկը, Ա. Նազարովը, Կ. Պաֆենիլցը, Գ. Սիմոնյանը, Վ. Ստեփանյանը, Ա. Ցիսկայան, Ա. Նովրուզին, Ա. Կարախանյանը և ուրիշներ:

Վիճակագրական տվյալներով երկրաշարժնի վրա ամեն տարի տասնյակ հազարավոր երկրաշարժներ են գրանցվում, որանց մեծ մասը աննկատ է անցնում: Թվով շատ պակաս են այնպիսիք, որոնք ավելածություն են պատճառում, սակայն դրանցից մեկը լինում է շատ ուժեղ, որ մեծ աղետ է բերում երկրին: Հաճախ է պատահում, որ հենց այդ մեկը Հայկական լեռնաշխարհին է բաժին հասնում:

Հայոց աշխարհի բնակիչները հազարավոր երկրաշարժնի մասին ունեն հիշողություններ, որոնք անցել են սերնդից սերունդ: Գրերի գյուտից հետո հիշատակություններ կամ մազաղարյա մատյաններում: Այդպիսի հիշատակություններ ունեն Ստրաբոնը, Մովսես Խորենացին, Մովսես Կաղանկատվացին, Հովհաննես Կարողիկոսը, Թովմա Արծրունին, Ստեփանոս Տարոնացին, Մատթեոս Ուոհայեցին, Կիրակոս Գանձակեցին: Միջնադարյան գրիչները (մատենագիրները), Ավետարան կամ Սաղմոսագիրը արտագրելուց հետո՝ վերջում, բողել են հիշատակություններ երկրաշարժների մասին:

Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած երկրաշարժնի մասին գրականության մեջ և միջնադարյան ձեռագրերում եղած նյութը դեռևս վերջնականապես մշակված չէ: Այդ գործում մեծ ավանդ է Անդրդել Վ. Ստեփանյանը (1964): Նա մինչև 20-րդ դարը տեղի ունեցած երկրաշարժներից 800-ի մասին տեղեկություն է ներկայացնում (միայն 20-րդ դարի առաջին կեսում՝ 20 երկրաշարժ): Ստորև բերում ենք այդ աղբյուրի տեղեկություններից մի քանիսը:

735 թվականի հուլիսի 21-ին աղետակի երկրաշարժ է եղել Վայոց Ձոր գավառում: Չոհվել է 10 հազար մարդ, և ամբողջովին կործանվել է Մողավանը: 894 թ. Երևանում տեղի ունեցած երկրաշարժից զոհվել է 20 հազար մարդ: 1045 թվականին ուժեղ երկրաշարժից՝ Եկեղյաց գավառում, Երզնկա

քաղաքը կործանվել է: 1139 թ. Երկրաշարժ է եղել Գանձակ քաղաքի շրջանում, Ալիարակ լեռը վլվելով արգելափակել է գետակը, առաջացել է Կապույտ (Գյող-գյոլ) լճակը: 1319 թ. աղետայի Երկրաշարժ է եղել Բագրատունյաց մայրաքաղաք Անիում: Երկրաշարժից հետո բնակիչները լքեցին քաղաքը: 1463 թ. Երկրաշարժ է եղել Երզնկայում, զոհվել է 30 հազար մարդ: (Սա միակը չէ, հիշատակություններ կան 30 այլ Երկրաշարժերի մասին. ամեն անգամ զոհ են գնացել տասնյակ հազարավոր բնակիչներ:)

1679 թ. հուլիսի 4-ին ուժեղ Երկրաշարժ է տեղի ունեցել Արարատյան դաշտում. ավերվել են Երևանը, Քանաքեռը, Նորագավիրը, Նորագեղը, Զորագյուղը, Նորքը, Կամարիսը (Գամրեզը): Այդ Երկրաշարժից կործանվել է Գառնիի Տրդատաշեն շրնար տաճարը: 1779 թ. դեկտեմբերի 27-ին աղետաբեր Երկրաշարժ է եղել Թավրիզում և նրա շրջակայրում: Կառավարական վիճակագրական տվյալներով զոհվել է հարյուր հազար մարդ: 1840 թ. հունիսի 2-ի ահեղ Երկրաշարժի հետևանքով հիմնովին կործանվել է Արարատի լանջին գտնվող Ակոռի գյուղը Ս. Հակոբ վանքի հետ միասին:

20-րդ դարում Հայաստանի Հանրապետության տարածքում ամենաուժեղ Երկրաշարժները երկուսն են՝ 1926 թ. հոկտեմբերի 22-ին Գյումրիում, իսկ 1988 թ. դեկտեմբերի 7-ին Սահմանական գյումրի, Վանաձոր, Ստեփանավան քաղաքներում ու քաղմարիկ գյուղերում:

Ելնելով նկարագրություններից՝ նախկինում ուժգին Երկրաշարժերը ունեցել են 11 քայլ ուժգնություն, Երկրակեղենում առաջացել են ճեղքեր, առանձին բեկորների բարձրացում-իջեցումներ և զարմանալին այն է, որ մինչև վերջերս կազմած քարտեզներում բալայնությունը առնվազն երկու քայլով իջեցվել է, որը կատարվել է բարձր ատյանների միջամտությամբ՝ շինարարությունը էժանացնելու միտումով, ինչը շատ բանկ նատեց հայ ժողովրդի վրա:

Երկրաշարժերի օջախների ներքնակենտրոնի (հիպոկենտրոն) խորոշությունը տարբեր է: Սկսած մի քանի կիլոմետրից մինչև 30 կմ՝ որքան խորն է օջախը, այնքան հեռուն են տարածվում ցնցումները:

Երկրաշարժի հիմնական ցնցումից առաջ որոշակի Երևանությունը են առաջանում՝ Երկրակեղեկի աննկատելի ձևախախոսումներ, որ կարենի է որսալ միայն գետողեղական ծշգրիտ հանույթով, տեղի են ունենում գետնաջրերի հորիզոնի ակնառու տատանումներ, հորատանցքերում ուղղունի, հելիոնի անոնալ ավելացում, մանր ցնցումներ՝ ֆորչուներ: Երկրաշարժից առաջ ինչ-որ ալիքներ հասնում են Երկրի մակերևույթ, որոնք մարդկանց կողմից չեն ընկալվում, մինչդեռ կենդանիները ընկալում են և ցույց տալիս ինտա ամենազստություն: Երկրաշարժից հետո էլ Երկար ժամանակ տեղի են ունենում մանր ցնցումներ՝ ավելքորեր (ես-շոքեր): Այժմ ուսումնասիրվում են կենդանիների ռեակցիաները Երկրաշարժից առաջ, որպեսզի կարողանան ցնցումը կանխատեսել Երկրաշարժից մի քա-


Աի տասնյակ րոպե առաջ՝ բնակչությանը զգուշացնելու համար:

Մարդը Հայկական լեռնաշխարհում հազարամյակներ շարունակ տուկացել է Երկրաշարժի դեմ և պասիվ պայքար է մնել: Պասիվ ենք ասում, որովհետև Երկրաշարժը կանխել հնարավոր չէ, ուստի պետք էր հարմարվել նրան: Հայր դարերով մտածել և գտնել է միջոցը՝ ստեղծել է «Գլխատուն» կոչված կառույցը: Գլխատունը հայի տունն է քառանկյունի հիմքով, պատերը բարձր չեն, առաստաղը հենվում է ոչ միայն պատերի, այլև նրանից շուրջ 1-2 մ հեռավորության վրա հաստատված սյուների վրա: Երկրաշարժի դեպքում եքել պատերը քանդվում են, ապա սյուները պահում են առաստաղը:

#### 4. ՀՐԱԲԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհում երկրակեղելք ունի շուրջ 50 կմ հզրություն, որոց հատվածներում (հատկապես Միջնաշխարհում)՝ ավելի պակաս և նըստած է հրահեղուկ բույլողրտի (ասքենոսփերայի) մագմայի վրա, որտեղ շատ քարդ պրոցեսներ են տեղի ունենում: Հրաբխականությունն այստեղ շատ ցայտուն է արտահայտված թե՛ արտաժայրուկ և թե՛ ներժայրուկ ձևերով: Հրաբխային ռելիեֆի ձևերը շատ քարմ են և կարող են մրցել Կամչատկայի գործող հրաբուխների հետ (նկ. 5):

Հայկական լեռնաշխարհի հրաբխականությունը մնած հետաքրքրություն է, առաջացրել երկրաբանների ու աշխարհագետների մեջ, քանի որ Եվրասիա



Նկ. 5. Հրաբխային ծածկույթները Հայկական լեռնաշխարհում

մայրցամաքի հյուսիսում հրաբուխներ չկան և Հայկական լեռնաշխարհի հրաբխականությունը դասական արտահայտություն ունի: Հրաբխականությամբ զքաղղթել են՝ Հ. Արիխը, Ֆ. Օսվալդը, Հ. Լինզը, Շիլդբերգերը, Կ. Պաֆենհոլցը, Էզերանը, Ի. Վեստերվալդը, Ռ. Ֆյորդնը, Լիհնուն-Լեսախնզը, Լեթեկնը, Ա. Գաբրիելյանը, Ա. Ասլանյանը, Ս. Բայյանը, Կ. Շիրինյանը, Հ. Սարգսյանը և ուրիշներ:

Հայկական լեռնաշխարհում հրաբխային արտավիճումներ ու երկրի խորպում մագմայի ներդրումներ տեղի են ունեցել սկսած մինչքեմբրից մինչև չորրորդական ժամանակաշրջանը ներառյալ: Այս ընդհանուր ֆոնի վրա առանձնացվում են վերին դևոնի, միջին յուրայի, վերին կավճի, եղոնի, ստորին ու միջին օլիգոցենի, միոցենի, ստորին և վերին պլիոցենի, ստորին պոստպլիոցենի և հոլոցենի հրաբխականությունը:

Խնչպես նշում է Ա. Գաբրիելյանը (1959), հրաբխականությունը համապատասխանում է երկրակեղլի կրմանն ու ծովերի արշավին և, եթե արշավը հասնում է առավելագույնին ու տեղի է ունենում ռելիեֆի համահարում, հրաբխային գործունեությունը բուլանում է: Մա շատ բնական է, եթե երկրակեղլը թաղվում է միջնապատյանի մեջ, հալված զանգվածները պետք է դուրս գան քարոլիտի մակերևույթ: Ա. Գաբրիելյանը գալիս է այն եղրակացության, որ արտածին հրաբխականության ուժգնությունը և արտավիճվող զանգվածի ծավալը ուղիղ համեմատական են ուղղաձիգ շարժումների ամպիությին:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայկական լեռնաշխարհում հրաբխականությունը աչքի է ընկնում բազմատիպությամբ՝ կարելի է գտնել հավայան, վեզուվյան, ստրոմբոլիի, պելեյան տիպեր: Բազմամյա ուսումնափրությունները ցույց են տալիս, որ արտավիժման տարրեր փոլերում սկզբում արտավիժում են հիմքային լավաները՝ ավգիտային պորֆիրիտներ կամ բազալտներ, ապա՝ չեղոք լավաները, վերջում՝ ժայթքում են թու լավաներ՝ քվարցային պորֆիրներ, դաշիտներ, լիպարիտ-դացիտներ, տուֆալավա, օրինիաններ: Նման օրինաշափությունը ակադ. Զավարիցկին անվանում է սինդրոմային հետևողականություն: Հիմքային լավաների արտավիժումը հանգիստ է, առանց պայրյունների (հավայան տիպ): Լավային ծածկույթները բույլ թերություն ունեն, առաջացնում են սարավանդներ: Այդամիտ են վերին պլիոցենյան ծածկույթները:


Թթու լավաները դժվարահոս են, մածուցիկ, ուստի առաջացնում են զանիթափ լանջերով հրաբխային կոներ, և հեռվից դիտելիս՝ լանջերի թերությամբ կարելի է որոշել՝ լավաները ինչ կազմ ունեն:

Ակադ. Կ. Ն. Պաֆենհոլցը այն եղրակացությանն է հաճգել, որ հարյուր միլիոնափոք տարիների հրաբխականության ֆոնի վրա այդ երևոյթների թափը բուլանում է: Ներկայում Հայկական հրաբխային բարձրավանդակի

հրաբուխները հանգած են համարվում: Չորրորդական ժամանակաշրջանում այնքան բուն հրաբխականություն ունեցող երկիրն այժմ գործող հրաբուխներ չեն (Նեմրութը և Թոնդրակը սովորական վոլում են):

Հարց է ծագում՝ հրաբխականությունը Հայկական լեռնաշխարհում վերջնականապե՞ս է դադարել, թե՞ կարող է նորից աշխուժացում լինել: Երկրաբանական պատմությունը ցույց է տալիս, որ հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում հրաբխականությունը ընդհատվող պրոցես է եղել. բուն արտավիժումներին հաջորդել են հարաբերական հանգստի ժամանակաշրջաններ, որոնք տևել են հարյուր հազարավոր և միլիոնավոր տարիներ: Այդ միջոցում երկրի ընդերքում ռադիոակտիվ տարրերի արդիումից անջատված էներգիան աստիճանաբար կուտակվել է և ջերմաստիճանը բարձրացրել, որից կրկին հրաբխային գործունեությունը աշխուժացել է: Մեր ժամանակներում հրաբխային երևույթների դադարը ժամանակավոր բնույթ է կրում: Կազ ժամանակ, եթե ընդերքի ուժերը նորից կաշխուժանան:

Ամենաուժգին հրաբխականություն կայնողոյում եղել է վերին պլիոցենում և ստորին անդրոպոգենում, և լեռնաշխարհի մոտ մեկ երրորդը ծածկվել է վերին պլիոցենի լավաներով: Մինչ այդ գոյություն է ունեցել երողիայով մասնատված միջին բարձրության և ցածր լեռների համակարգ, որը համահարթվել է լավային ծածկույթներով: Տեղ-տեղ այդ հասակի լավաների հզորությու-



Նկ. 6. Բազալտային սյունածի առանձնացումներ Արփա գետի հովտում

Եր հասնում է 1000 մետրի:

Արտաժայրով ապարների մեծ բազմազանություն կա՝ սկսած հիմքայինցից մինչև թրու լավաները. ամենատարածվածներն են՝ բազալտները և անդեգիտարազալտները:

Բազալտը ամուր հրային ապար է՝ մանրահատիկ կառուցվածքով բաղդադրակազմով (սարուկատուրայով), որի շնորհիվ շատ դանդաղ է ենթարկվում ջերմային հողմահարման: Դիմադրողականությունը ժամանակավոր սեղմանը կազմում է 1500-2000 կգ/մ<sup>2</sup>: Բազալտային ծածկույթները սառչելի առաջացնում են այլուածակ առանձնություններ, որոնք մերկանում են խնձահովիտների լանջերին:

Ինչպես բազալտները, այնպես էլ այլ լավաներ, առաջացնում են նաև սալիկածակ առանձնություններ: Սալիկածակ առանձնությունները տալիս են անդեգիտները, տրախիտները և այլն. սրանք սառնամանիքային հողմահարման շուտ են ենթարկվում: Ավելի կատարյալ են գնդային առանձնությունները, որոնք հիմնականում ջրային միջավայրում են ձևակորպում:

Բազալտներն ու անդեգիտա-բազալտները գետային խնձահովիտներում առաջացնում են քարանձավներ: Դրանք առաջանում են այնտեղ, որտեղ լավային հոսքի տակ կամ ուղղակի լավային շերտում եղել են փիսրուն կավային և այլ ներփակումներ: Ժամանակի ընթացքում փիսրուն նյութերը ջրերի միջոցով հեռացել են, տեղը մնացել է որպես դաստարկություն:

Բազալտներն ու անդեգիտարազալտները հոծ են, պինդ և պիտօնահի են պատասխանատու կառուցների համար, այժմ էլ շենքերի հիմքերը, սանդուղքները, կամուրջները այդ ապարներից են կառուցվում: Բազալտները ջրում վատ են լուծվում, դրա համար էլ լավաներից դուրս եկող աղբյուրների ջրի միներալացումը 100-150 մգ/լ-ից չի անցնում. աշխարհի լավագույն ջրերի շարքում են:

Թրու լավաներից շատ կարևոր են դացիտային լավայի ածանցյալ տուֆերը: Սրանք լինում են երկու տեսակ՝ տուֆալավա և պիրոկլաստիկ տուֆեր: Առաջին տիպը որպես լավա արտավիժում է և շերտ առ շերտ կուտակվում, ինչպիսին Արքիկի տուֆն է: Պիրոկլաստիկ տուֆերը առաջանում են բեկորային նյութերի, մոխրի ջերմազողությամբ: Տուֆերը լինում են բազմաթիվ երանգներով ու գույներով: Սիջին դարերում մեծ ժողովրդականություն են վայելել կարմիր և սև տուֆերը, որոնք ներդաշնակ համարվել են (Անիում, Գյումրիում):

Տուֆերը դիմացկուն են, հեշտ են մշակվում: Էջմիածնի Մայր տաճարը կառուցված է սև տուֆից 303 թվականին և առ այսօր հողմահարման նկատելի հետքեր չկան: Սկսած 1930-ական թվականներից լայն մասշտարներով օգտագործվում են Արքիկի վարդագույն-մանուշակագույն տուֆերը ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս:

Հրաբխային նյութերից են պեմզան, պեղլիտը, խարամը և այլն: Դրանց

մասին կխոսվի շինանյութերի բաժնում:

Վերին պլիոցենյան ծածկույթները շատ քարմ են, քիչ տեղատարված, աչքի են ընկնում մեղմաթեր լանջերով։ Կազմված են բազալտային և անեփխտարազալտային լավաներից, որոնց վրա ուկինֆի այլ կուտակումային ձևեր են առաջացել։

Հրաբխային ուկինֆի կարևոր ձևերից են էքստրոգիվ կոները՝ առանց խառնարանի հրաբուխները։ Սրանք կազմված են բացառապես թրու լավաներից, և մածուցիկ լավան ոչ թե հոսել է, այլ հրաբխային ապարատից դուրս է մղվել ու կուտակվել հրաբխային կոնի կատարին՝ առաջացնելով զարդարի լանջեր։ Դրանցից են Սպիտակասարը, Գեղասարը, Վարդենիսը, Մեծ Իշխանասարը, Արուլ-Սամասարը, Կարմիր Փորակը, Մասիսը՝ Մեծ Արարատը և այլն։

Հրաբխային բարձրավանդակի ուկինֆի կարևոր տարրերից են հրաբը-խային կոները՝ խառնարաններով։ Սրանք մեծ մասամբ կազմված են պիրոկ-



Նկ. 7. Հրաբխային խառամային կոն Գեղամա լեռներում

լաստիկ նյութերից և բուռն արտավիճումներ են ունեցել. դուրս են ժայրքել հրաբորքոր շատրվաններ, օազեր, շիկացած քարեր, ոռմբեր, լապիլներ, մոխիր և այլն։ Հրաբխի դադարից հետո խառնարանը քարմ ձևով պահպանվել

Ե: Խառնարանային կոների մեջ կան այնպիսիները, որոնք կատարին խառնարանային լճեր ունեն: Այդպիսիներից են Աժդահակը՝ Գեղամա լեռներում, Նեմրութը, Թոնդրակը՝ Վանա լճի ափին, Արմաղանը՝ Սևանի հարավարևելյան ափամերձ հատվածում:

Ուկիեֆի ձևերից են լավային լեզվակները: Սրանք առանձին օջախներից դուրս ժայթքած լավային հոսքեր են, ունեն տարբեր չափեր՝ հասնում են մինչև 50 կմ երկարության: Սրանք մեծ մասամբ կազմված են դաշիտային լավաներից, և մակերևույթը ներկայացնում է բուսականությունից գործ կոշտային լավաների քարացրոն:

Ավելի մանր ձևերից կարելի է հիշատակել մանր գրբնատուները: Սրանք լավային ծածկույթի վրա մանր հրաբխային կոներ են, որոնք առաջացել են սառչող լավայի տակից՝ բույլ հատվածներում ոչ մեծ արտավիժումներից: Նման գոյացությունները հրաբխային սարավանդին տալիս են բլրավոր տեսք:

Հրաբխային բարձրավանդակների ուկիեֆի մասին խոսելիս հարկ է նշել քարակարկառների մասին (չինգիլներ): Սրանք սառնամանիքային հողմա-

հարման արգասիք են, և լեռնային քարձր մասերը կրում են չինգիլների համատարած ծածկույթ: Չինգիլների գոյությամբ է պայմանավորված հրաբխային շրջաններում աղբյուրների առատությունը: Մըրնողրտային տեղումները գրեթե ամբողջությամբ ներծծվում են կոշտավոր լավաների ճեղքերով և սնում աղբյուրներին:


Հրաբխային արտավիժումները Հայկական լեռնաշխարհում առաջացրել են լավա-

յին արգելափակման լճեր. դրանցից են՝ Սևանա, Վանա, Ծովակ Հյուսիս (Չլդըր) ժամանակակից լճերը, իսկ անցյալում առաջացել են՝ Արարատյան, Շիրակի, Ալաշկերտի, Մանազկերտի լճերը, Եփրատ գետի երկայնքով՝ մի քանի լճեր, Որոտանի ավազանում Միսիանի լիճը և այլն:

Հրաբխային բարձրավանդակներում ուկիեֆի էրոզիոն ձևերը զարգացած չեն բացի խնձահովվածներից: Վերին պլիոցենյան հրաբխային ծածկույթներում գետերի խնձահովվածների խորությունը հասնում է 800-1000 մ-ի (Արարատի կիրճը Կաղզանի մոտ, Եղեգիսի կիրճը, Որոտանի կիրճը և այլն): Խնձա-



Նկ. 8. Հրաբխային ռումք




Նկ. 9. Հողային բուրգեր Գորիսի շրջանում

հովիտների լանջերը վերին մասերում զառիթափ են ու կախված, շատ լավ արտահայտված են սյունաձև բազալտները:

Փխրուն, լիրովաստիկ ապարներում տուֆարրեկշիաներում առաջանում են հողային բուրգեր: Սրանց առաջացման եղանակը հետևյալն է: Եթե գետնի մակերևույթին կա քարարեկոր, ապա այն հողաշերտերը պահպանում է անձրևաշիրերի լվացումից: Քարարեկորի տակ աստիճանաբար ձևավորվում է հողարքորդի վայրը: Շրջապատում հեշտ լվացվող գետնահողը հեռանում է, առաջանում է հողի բուրգ՝ մի քանի, նույնիսկ 6-10 մ բարձրությամբ: Այդպիսի բուրգեր կան Գորիսի շրջանում, Կապանովկիայում:

Տուֆարրեկշիաները փխրուն հրաբխային նատվածքներ են, և դրանց տարածման շրջաններում իին ժամանակներում մարդիկ բնակարաններ, պահեստներ ու գոմեր են փորել: Զմեռային ամիսներին էլ տարացնելու կարիք չեն ունեցել: Նման ժայռափոր բնակավայր է եղել Վարձիան՝ Կուր գետի վերին հոսանքի շրջանում գետի ձախ ափին (նկ. 10), Խնձորեսկը՝ Զանգեզուրում և ն.



Նկ. 10. Վարձիա (Վարձունիք) ժայռափոր բնակատեղին Կուր գետի ձախ ափին

Հայկական լեռնաշխարհում, ինչպես նշվել է, շատ են ներժայուկները՝ արտահայտված են ալլուսոնների, լակոյիտների, դայկերի, նեկկերի, երակների և այլ ձևերով: Դրանք ընդհանրապես շատ սահմանափակ ծավալ ունեն, պարունակում են մետաղային հարստություններ: Շատ հնարավոր է, որ հրաբխային ծածկույթների տակ ևս կան ներժայուկներ, որոնք կարող են հայտնաբերվել երկրաֆիզիկական առաջափոր մեթոդներով:

## ՀՆԴԵՐՁԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գտնվելով մերձարևադարձային գոտում և լեռնային համակարգում Հայոց աշխարհի լանդշաֆտները շատ բազմազան են: Բազմազան են նաև բնական հարստությունները. դա պատահական չէ (Ակ. 11):

Լեռնային երկրներում լեռնակազմական պրոցեսների ընթացքում, երկրակեղեկի ամենախոր հատվածներից շերտախմբերը ծալքավորվելով հաճախ դուրս են զալիս երկրի մակերևոյթը: Եռացող մազման երկրակեղեկի տակից ելքեր է որոնում դուրս ժայռքելու, ներդրվում է կեղեկի մեջ՝ ներժայուկների ձևով: Տեկտոնական շարժումների հետևանքով առաջանում են խոշոր ձեղքեր ու ողիքտեր, որտեղից հրահեղուկ լավան ժայռքում է երկրի մակերևոյթը ու ծածկում հսկայական տարածություններ, իսկ արտաքին ուժերը քայլայելով լեռները տեղատարման հետևանքով մերկացնում են ընդերքի հարստությունները, մատչելի են դարձնում մարդուն՝ դրանք հայտնաբերելու և շահագործելու: Հայկական լեռնաշխարհը տիպիկ այդպիսին է:

Մետաղների՝ պղնձի, բրոնզի, երկարի ծովման և նրանցից գործիքներ ու զենքեր պատրաստելու արվեստի առաջին պիոններները Հայկական լեռնաշխարհի բնակիչներ են: Դա կարող էր տեղի ունենալ երկրում այդ մետաղների առկայության դեպքում միայն: Եվ իրոք, լեռնաշխարհում ունենք մետաղների հարուստ հանքավայրեր: Ընդ որում, մի քանի մետաղների հանքավայրերը միմյանց շատ մոտ են, կամ բազմամետաղները (պղնձ, ցինկ, անագ, կապար) նույնիսկ միասին են հանդես գալիս, ունեն ուկու և արծաթի խառնուրդներ:


Ուշագրավ է այն հանգամանքը, որ մետաղների հարուստ հանքավայրերը լեռնաշխարհի եզրային մասերում են՝ Պոնտոսի, Տավրոսի, Փոքր Կովկասի համակարգերում, որտեղ ներժայուկները մերկացել են կամ գտնվում են ոչ մեծ խորության տակ՝ խոր գնահանվածներում, որտեղ գետերը կտրել են լեռների կուրծքը և հասել ներժայուկներին:

Հայկական լեռնաշխարհի մոտ մեկ երրորդը ծածկված է հրաբխային ծածկույթներով: Ուրեմն, հնագույն ոելինքը և շատ մետաղային հարստություններ, որ ունեն մազմատիկ ծագում, հավանական է՝ քողարկված են լավային վերմակի տակ և հետազայտմ կհայտնաբերվեն նորագույն մերողներով: Իրենք՝ լավաները անգին հարստություն են ներկայացնում որպես շինանյութ ու արդյունաբերական հումք՝ հարստացնելով մեր բնուրյունը:

Լեռնաշխարհի տարածքում կան վատելիքային ռեսուրսներ՝ քարածուխ, նավք, ինչպես նաև նստվածքային ծագման շատ այլ հանքային հարստություններ:

Քյուններ՝ կերակրի աղ, զիաս, տրավերտիններ, դիատոմիտներ, կավերի զանազան տեսակներ, բարիտ, ֆոսֆորիտներ, նույնիսկ՝ տորֆ:

Երիտասարդ լեռնային երկրում, որտեղ ակտիվ գործունեություն ունեն հրաբխային երևույթները, լայնորեն տարածված են հանքային ջրերը: Եթե սրանց գումարենք քովիչ քննությունը, ունկարեացիոն ռեսուրսները, ապա Հայկական լեռնաշխարհի դասում է աշխարհի հմայիչ անկյուններից մեկը: Պատահական չէ, որ այս երկիրը շուրջ չորս հազարամյակների ընթացքում եղել է հզոր պետությունների միջև կռվախնճոր, և այն ինքնակալը, որ իրեն հզոր է կարծել, ձեռքը մեկնել է դեպի Հայոց աշխարհը:



Նկ. 11. Հայկական լեռնաշխարհի հանքային հարստությունները

1. բարածոխ, 2. երկարահամք, 3. նալք, 4. պղնձահամք, 5. բազմամետաղներ՝ սկզբ և արարի խառնուրդով, 6. քրոմիտ, 7. ուլիի, 8. մոլիբդեն, 9. այտմանի հումք, 10. բազալտ, անդեգիտարազալտ, 11. գրամիտ, 12. տոտֆ, 13. պեմզա, 14. մարմար, 15. կրաքար և տրավերտին, 16. կերակրի աղ, 17. հանքային ջրեր

Ակսենը մետաղային հարստություններից:

**Երկար:** Հայկական լեռնաշխարհում երկարի հանքաքարը հիմնականում մագմատիկ ծագում ունի և հանդիպում է ներժայությներում. այդպիսիք մի քանիսն են՝ Փոքր Կովկասի հյուսիս-արևելյան լանջերին Դաշքեսանն է

(հենում՝ Քարհատ), որի հանքաբարը օգտագործվում է Ռուսավիի (Վրաստան) մետաղաձուլվական կոնքինատում: Ոչ մեծ հանքավայրեր կան Հայաստանի Հանրապետության տարածքում՝ հյուսիսում՝ Կողըրսմ, ապա՝ Հրազդան գետի ավազանում՝ Հրազդան քաղաքի մոտակայքում, Բարգուշատի լեռներում (Սվարանցի հանքավայր): Երկարի պաշարներ կան Արևմտյան Հայաստանում Տավրոսի համակարգում՝ Արածանիի ստորին հոսանքների ավազանում՝ Աղձնիքում, Տուրուբերանում: Մրանք պատճականորեն հայտնի հանքավայրեր են: Աղձնիքի և Վասպուրականի սահմանագլխին Երկարապատ կամ Երկարահանք հանքավայրերն են՝ Ընձարձիարս լեռան մոտ, որտեղ ժամանակին երկարի հետ միասին արդյունահանվել է նաև կապար: Երկար կա Վանա լճի ավազանում. սրանք բոլորը Տավրոսի համակարգում են:

Մազնետիտի կարևոր հանքավայր գոյություն ունի Սերաստիայից Երզնկա տանող երկարգի մոտ, որտեղ երկարի պարունակությունը բարձր է՝ մինչև 65-68 %: Երկարահանք գոյություն ունի Արդվինի շրջանում (Գյումուշխանելում, Փիրդամիրում, Սաքարեթում): Երկարի պաշարներ կան նաև Մալարիայի գավառում:

**Պլինճ:** Ամենախոշոր հանքավայրը Տավրոսի արևմտյան մասում է՝ Հին Արկանիայի լեռներում, Արկնի քերդաբաղաքի շրջանում, բայց այժմ կոչվում է Արդանամադեն և գտնվում սրանից մոտ 200 տարի՝ առաջ կառուցված նույնանուն քաղաքի մոտ: Այս հանքավայրը շատ հին ժամանակներից շահագործվել է, որտեղից արդյունահանում են ոչ միայն պղինձ, այլև բազմամետաղներ, ազնիվ մետաղներ՝ ոսկի ու արծաթ:

Պլինճի մյուս խոշոր հանքավայրը Պոնտոսի համակարգում է, որը, ինչպես և նախորդը, բազմամետաղների համալիր է: Դա վերոհիշյալ Արգիրոլաստրոնն է, որը հայտնի է եղել մեր թվարկությունից շատ առաջ և գտնվել է Ծանախ կամ Խորշատ գետի ավազանում՝ Բաբերդից Սև ծով տանող հայտնի ճանապարհի վրա: Այստեղ մշակում են ոչ միայն պղինձ, այլև ոսկի, արծաթ, արծիճ, երկար:

Պլինճով, բազմամետաղներով, ոսկով ու արծաթով շատ հարուստ է Ծորիսի գետի ավազանը, մասնավորապես Սպերի շրջանը: Նույն Ծորիսի ավազանում պղինձահանքներ կան Բաբերդի շրջանում՝ արծաթի խառնուրդով: Պլինճ հայտնաբերված է նաև Կարինի (Էրզրում) շրջանում. այստեղ կան նաև արծաթ, կապար, քրոմիտներ, երկար, մանգան: Կարինը հայտնի է նաև ածխով ու հանքային աղբյուրներով: Պլինճի հանքեր հայտնաբերվել են նաև Վանա լճից հարավ:

Հայաստանի Հանրապետությունում պղինճի կարևոր հանքավայրեր են՝ Ալավերդի-Ծամբլողի, Կապանի, Ազգարակի հանքավայրերը: Աղբբեջանում պղինճ կա Գետաբեկի մոտ. սա հնում շահագործվել է:

**Քրոմիտներ:** Ամենահայտնին Տիգրիսի ակունքների մոտ Գոլեյմանն է, որը աշխարհի խոչոր հանքավայրերից մեկն է. պաշարներն արագ սպառվում են: Հանքարարը տանում են Արդանամաղեն, այնտեղ մշակում: Քրոմիտներ կան նաև Սևանի ավազանում՝ Արեգունի լեռներում:

**Մոլիբդեն:** Սա համեմատարար նոր մետաղ է. որպես խառնուրդ պողպատին տալիս է մեծ աճրություն: Առաջներում նրա մասին գաղափար չեն ունեցել, ուստի թիզ է հայտնի: Միակ հանքավայրը, որ հայտնաբերվել է 20-րդ դարում և արդյունահանվում է, Քաջարանն է՝ Ողջի վերին հոսանքի շրջանում:

**Մանգան:** Հայտնաբերված է Շորիս գետի վերին հոսանքների ավազանում:

**Ազնիվ մետաղներ:** Շուրջ շորս հազար տարի առաջ ուսկի արդյունահանվել է Սևանի ավազանում Սոքրում (Չող): Լճաշեն գյուղի շրջանում կատարած պեղումները ցույց են տալիս, որ Կիեխունի ամրոցում ուկերչական գործը զարգացած է եղել և ուկերիչները օգտագործել են Սոքրի (Չողի) ուսկին: Պատմական տեղեկությունների համաձայն՝ ուսկի մշակել են նաև Մարմարիկ ու Աղստև գետերի հովիտներում: Այս ազնիվ մետաղի ամենախոշոր հանքերը Արգիրոկատրոնում (Գյումուշխաննե) են, Բարերդի և Սպերի շրջանում: Ուկուերևակումներ կան նաև Կարինի (Երզրումի) շրջանում: Մյուս խոչոր հանքավայրը Արլանամաղենում է, ուսկին խառնված է բազմամետաղների հետ: Ուսկի ու արծար կա Վանա լճի հարավում, Հայկական Տավրոսի լեռներում:

**Ոչ մետաղային** հանածոներից Հայկական լեռնաշխարհում կա քարածովս և նավք: Քարածովսը առաջներում չի օգտագործվել: Ոչ հարուստ հանքեր կան Բաբերդում, Բոլորպահակի կամ Դրունքի (Հասանկալե) մոտ, Կարինից (Երզրումից) արևելք և հյուսիս (Քյուրյութըլուտում): Քարածխի հանքեր կան Օլրիից մոտ 40 կմ-ի վրա Բաղկայա և Սուսուզ հանքավայրերում: Անդրքովկատում գորշ ածխի պաշարներ կան Խցևանում, Ախալցխայի մոտ, Շիրակի լեռներում: Հայկական լեռնաշխարհը քարածխով հարուստ երկիր չէ, եղածն էլ գորշ ածովս է:

**Նավք:** Պետք է ասել, որ Էնքրդեսիկ ռեսուրսների առկայության հարցը նոր է ուսումնասիրվում: Նավքաբերության նշաններ կան Տորութերանում (Արածանիի ավազան), Վանս լճի ավազանում, Կարինի (Երզրումի) շրջանում: Ըստ Թուրք Երկրաբան Ա. Տոշմանի տվյալների՝ Հասանկալը բերդի մոտ միոցենյան նստվածքներում կա խզվածք, որտեղ էլ դասավորված են նավքային ու ծծմբաջրածնային աղբյուրները: Ավելի ռեալ է Տիգրիսի վերին հոսանքների ավազանի նավքաբերությունը, սակայն հանույթը դեռևս չի կազմակերպված: Նավք կա նաև Արցախում:

Նստվածքային ծագման հանքային հարստությունները Հայկական լեռնաշխարհում շատ են: Շատ կարևոր է կերակրի աղը, որը միոցենյան ժողով

ծովածոցերում է կուտակվել: Աղահանքերը հիմնականում Արաքսի ավազանում են: Հայտնի է Կողրի հանքավայրը, որտեղ աղը արդյունահանել են նոյնինիսկ քարեղարի վերջում. այստեղ հանքախորշերում հայտնաբերվել են քարեղարյան գործիքներ: Հանքավայրը շատ որակով աղ է պարունակում  $\text{NaCl}$ -ը կազմում է 94 %: Քիչ հեռու Կաղզվանինն է, բայց որակով զիջում է Կողրինին: Այս հատվածում տեղ-տեղ աղը ուղղակի մերկանում է երկրի մակերևույթին, Արաքսի հովտում դուրս են գալիս աղաջրի աղբյուրներ:

Մյուս խոշոր հանքավայրերից է Ավանի հանքավայրը Երևանում, որը հայտնաբերվել է վերջին ժամանակներս և որակով չի զիջում Կողրինին: Արաքսի ավազանում Նախիջևանի հանքավայրը հայտնի է հեռոց, որտեղ անհիշելի ժամանակներից աղ է արդյունահանվել: Աղի հանքեր կան Արևմտյան Եփրատի ափերին՝ Կամախում, Կարինի մոտերքում, նաև Խնուսի ավազանում: Կերակրի աղի հանքերով հարուստ է նաև Տիգրիսի վերնագավառը, Կապուտան (Ուրմիա) լճի ավազանը:

**Գիպսի** կարևոր հանքավայրերը նորուսի ավազանում են՝ Օլքիի, Արդվինի շրջաններում, Կարսից հյուսիս-արևելք Ղզլչախչախում, մերձերևանյան շրջանում (Շոռովլաղ), սակայն վերջինս առանձին հանքավայր չի ստեղծվում. գիպսը կավի հետ խառնված է, որից գաջ են ստանում:

**Ծծումքը** հանդիպում է Տատիննի (Դիաղին) մոտ (Բայազետ), Թոնդրակից հյուսիս, որտեղ առաջներում հրաբխային երևույթների ուժգին են արտահայտվել: Ծծումք կա Արդվինի շրջանում ու Ներքին Բասենում:

**Դիատոմիտը** դիատոմային ջրիմուների կմախըների կուտակման արգասիք է և գրեթե ամբողջությամբ ներկայացված է սիլիցիումի օքսիլով. օգտագործվում է քիմիական արդյունաբերության մեջ, ապակու արտադրությունում և այլն: Հանքեր կան Կարինի մոտ (Հասանկալե), Քասաղի, Հրազդանի, Որոտանի միջին հոսանքների ավազաններում:

**Բորատներ** կան Օլքիի շրջանում (Բուրախսանե): Նոյն տեղում կա նաև սոդա (բորակ):

Հայկական լեռնաշխարհը շատ հարուստ է շինանյութերով: Դրանք հիմնականում ունեն հրաբխային ծագում: Կան նաև նստվածքային ու փոխակերպվածներ (մետամորֆացված):

Հրաբխային ծածկոցներում ամենուրեք ամենամեծ տարածում ունեն **բազալտներն** ու **անդեզիտարազալտները**: Սրանք հոն են, ամուր, շատ բույր ծակոտվենությամբ, դժվար են զարդութվում, օժտված են մեծ դիմադրողականությամբ. 1 քառ ամ-ի վրա մինչև 2000 կգ ճնշմանը դիմանում են, ջրում վատ են լուծվում: Սրանց շերտերում ու ճեղքերում շրջանառություն կատարող ջրերը ունեն աննշան միներալացում՝ 100-150 մգ/լ, հողմահարման նկատմամբ բավական կայուն են, մանավանդ մանրբյուրեղային կառուցվածք ունեցողները:

Ահա ելնելով այս հատկանիշներից՝ դեռևս շատ հնուց բազալտն ու անդեզիտաբազալտը օգտագործել են պատասխանառու կառուցվածքներ կերտելիս: Այժմ էլ կամուրջները, ջրանցքները, շենքերի հիմքերը, աստիճանները բազալտից են կառուցվում:

Բազալտներն ու անդեզիտաբազալտները ամենուրեք են, որտեղ հրաբխային ելքեր կան, և պաշարները անսպառ են:

Խոսելով հրաբխային ապարների մասին՝ նշենք նաև, որ վերջին ժամանակներս Երևանում համառ հետազոտություններ են կատարվում լավաներից նոր բարիքներ կորզելու համար, և այդ ուղղությամբ հաջողություններն առկա են: Բազալտները ձուլելով կաղապարավորելով ստանում են այն իրերը, որ անհրաժեշտ են. նշանակում է՝ կարող են ձուլածո բազալտ ստանալ: Բազալտներից արդեն ստանում են զանազան թելեր՝ հատուկ նպատակներով գործվածքների համար: Քարը թիմիական վերամշակումից հետո նոր բարիքներ կարող է ծնել:

**Տուֆ:** Մեր լեռնաշխարհի կարևոր հարստություններից մենք տուինք: Տուֆը դաշիտային լավայի մի այլատեսակն է, և պեսոք է ասել, որ ոչ ամենուրեք է հանդիպում: Տուֆերը տարածված են Արագածի և Սիփանի զանգվածներում, Շիրակում: Միանք երկակի ծագում ունեն՝ որպես տուֆալավա, որ ժայռերէ և ընդերքից, և որպես պիրոկլաստիկ (փխրուն նյութի) ցեմենտացման արգասիք: Տուֆերը լինում են տարբեր ամրության և ամենատարբեր երանգների՝ սկսած սպիտակավունից (ֆելզիտային տուֆեր) մինչև սև և կարմրի, մանուշակագույն: Ֆելզիտային տուֆերը համեմատաբար հիմ են, իսկ չորրորդական տուֆերը շատ երիտասարդ են ու թարմ: Տուֆերի ամրությունը կախված է ցեմենտացման աստիճանից: Կան այնպիսիները, որ բազալտի նման ամուր են, հարվածելիս մետաղի նման զրնգում են (Շիրակում Ախուրյանի երրորդ դարավանդի վրա տեղադրված տուֆերը), կան բույլ ցեմենտացմաներ (Բյուրականի շրջանում հանդիպող), որոնք հպումից փշրվում են:

Տուֆերը հեշտ են մշակվում, մանավանդ Արքիկի շրջանի տուֆերը, տախու են որդոք մակերևույթ: Լավ ցեմենտացած տուֆերը հողմահարման թիշ են ենթարկվում:

Հյայատան աշխարհում անհիշելի ժամանակներից զարգացել է տուֆի մշակման արվեստը: Մենք և կարմիր տուֆերը համադրվել են, և տաղանդավոր վարպետները ստեղծել են զարմանալի նրբության զարդարանադակներ: Անշնադարյան մայրաքաղաք Անին կառուցվել է սև ու կարմիր տուֆերից, և նրա փլատակները առ այսօր այցելուների հիացմունքն ու զարմանքն են հարուցում:

Հրաբխային լավայի փրփուրը սառելով վերածվում է **պերմզայի:** Սա ծակոտեն ապար (ջրից թերեւ) է, որն օգտագործվում է տեխնիկայի տարբեր բնագավառներում, որպես հղկիչ, ձայնամենեկուսիչ, թերև բետոնների լցանյութ

և այլն: Հանդիպում է ավագի, խճի ձեռվ և մինչև բռունցքի մեծության բեկոր-ներով: Հայտնի են Արագածի երկու խոշոր հանքավայրերը՝ Անիպեմզան և Պեմզաշենը: Պեմզա կա նաև Կաղզվանի և Կարինի շրջաններում:

Հրաբիսային խարամը և ավազը թրու լավաների արտավիժումից են և լայն տարածում ունեն հրաբիսային բարձրավանդակներում: Խարամն օգտագործվում է հիմնականում որպես բետոնի լցանյութ: Հրաբիսային բարձրավանդակում տարածված խարամային պարագին կոները ամբողջությամբ կազմված են այս տեսակ լիբոկլաստիկ փիլորունակությամբ:

**Պեղլիտները** թրու լավաներից սերված լիբոկլաստիկ, խճաավազային կառուցվածքի նյութեր են՝ սպիտակավուն կամ գորշ երանցներով: Մեծ տարածում ունեն Գեղամա հրաբիսային վահանի արևմտյան մասերում. պեղլիտներից է կազմված Հատիս Էքստրուզիվ հրաբուխը: Պեղլիտը շատ հարմար հումք է որակյալ բյուրեղապակի ստանալու համար, և Բյուրեղապակնի գործարանի արտադրած բյուրեղապակին արդեն լայն ճանաչում է ձեռք բերել: Երևանից Սևան տանող մայրուղին անցնում է պեղլիտի հանքերի մոտով. այս արժեքավոր հումքը դժբախտաբար օգտագործվում է նաև որպես բետոնի լցանյութ, երբ կարող եր ավելի ռացիոնալ ձեռվ օգտագործվել:

Ծինանյութերի մեջ իր հատուկ պատվավոր տեղն ունի գրանիտը: Սա խորրային ապար է, առաջացել է, ավելի ճիշտ՝ բյուրեղացել է բարձր ճնշման ու բարձր ջերմաստիճանի տակ, ուստի բյուրեղացումը կատարյալ է, ծակոտիներ չի պարունակում, դժվար է հղկվում, բայց տալիս է հայելանման մակերևույթը: Գրանիտն օգտագործվում է պատասխանատու կառուցվածքների, կամուրջների կառուցման, հուշարձանների, արձանների կերտման համար: Օրինակ, գրանիտով է կառուցված Երևանի Օպերայի ու բալետի թատրոնի և Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճի շենքը:

Գրանիտը հանդիպում է ներժայուկներում, հատկապես՝ Պոնտական և Տավրոսի պլոտոններում, Մելրու պլոտոննում, Փամբակի հովտում և այլն:

**Մարմարը** փոխակերպված ապար է, առաջացել է կրաքարերից՝ երկրի խորքում բարձր ջերմաստիճանի ու բարձր ճնշման պայմաններում: Կրաքարը աստիճանաբար սեղմակ, վերաբյուրեղացել է, բոլոր ծակոտիները փակվել են, դարձել է ջրամերժ: Մարմարը հղկվելիս ստանում է ողորկ, փայլուն մակերևույթը: Նրա տարրեր տեսակները տարրեր երանգներ ունեն և բարձր են գնահատվում: Հայաստանի մարմարով են երեսապատված Սոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Կիևի, Երևանի մետրոպոլիտենների շատ դահլիճները: Մարմարն օգտագործվում է շքամուտքերի, սանդուղների, տարրեր գարդարանների, հուշանվերների, արձանների կերտման համար: Մարմարի հանքերը բավական շատ են (Հայաստանի Հանքավայտուրյունում՝ Մարմաշեն, Աղվիրան, Արգական, Խոր Վիրապ): Արևմտյան Հայաստանում՝ ճորոխի ավազա-

նում, Արդվինում, Երզնկայում, Կաղզվանում, Վանա լճի ավազանում: Հայտնի հանքավայրեր են Կապուտան (Ուրմիա) լճի ավազանի հանքերը՝ Սալմաստի մոտ, Թավրիզի շրջանում և այլն: Ըստ աշխարհագետ Էլիզե Ուկլուի՝ Ուրմիա լճի ավազանի մարմարները ամենառակյալն են Առաջավոր Ասիայում:

**Կրաքարը** կալցիոնի կարբոնատն է: Օգտագործվում է երկու կերպ՝ որպես շինաքար և որպես կրի հումք (վառարաններում կրաքարը այրելու եղանակով ստանում են կիր, որը ջրում լուծվում է): Որպես շինաքար այն օգտագործվում է Պոնտոսի լեռների համակարգում, Արցախում և այլ շրջաններում: Կրաքարը որպես շինաքար հեշտ է մշակվում, ստանում է սպիտակ ողորկ մակերևույթ, ամոր է, կարող է կրել շենքի ծանրությունը: Այդ տիպի կրաքարեր կան նաև Վանա լճի ավազանում (Վանից արևելք և հարավ), Հայկական Տավրոսի լեռնահամակարգում, Փոքր Կովկասի արևելյան լանջերին, որտեղ յուրայան հասակի կրաքարեր են մերկանում:

Կրաքարի համեմատաքարը մաքուր տեսակները օգտագործվում են կիր ստանալու համար: Մինչև 20-րդ դարը Հայկական լեռնաշխարհի բոլոր պատասխանատու կառուցցները՝ բերդերը, վանքերը, կամուրջները, ջրանցքները կառուցվել են կրի շաղախով: Ցեմենտն սկսել են օգտագործել 20-րդ դարում, և այժմ կիրը երկրորդ պլան է մղված: Կրի շաղախը տասնյակ տարիների ընթացքում ցեմենտանում ու մոնոլիտ է դառնում: Հին շենքերում հաճախ քարերը փշրվում են, բայց կրի շաղախը անդրդեմի է մնում: Կրաքարը, որպես կրի հումք, օգտագործվում է այն բոլոր շրջաններում, որտեղ կրաքարերը մերկանում են:

**Հայկական լեռնաշխարհում ամենուրեք կան ավազքարեր.** սրանք ջրային միջավայրում են ցեմենտացել: Եթե ավազքարերը սիլիցիտմային ցեմենտ ունեն, ապա շատ ամուր են: Եթե ցեմենտը կարրոնատային է (երիտասարդ ավազքարեր), ապա ամրությունը այնքան չէ, որքան սիլիցիտմային ցեմենտի դեսպրում: Բոլոր պարագաներում հոծ ավազքարերը լայնորեն օգտագործվում են շինարարության մեջ շենքերի կառուցման համար: Ծալքաբեկորավոր լեռներում ավազքարեր ամենուրեք կան:

**Տրավերտինը** ևս կալցիոնի կարբոնատ է, առաջանում է հանքային աղբյուրների ելքերի մոտ: Խորքից դրւություն եկող ջուրը բարձր ճնշման տակ լուծել է իր մեջ կալցիոնի կարբոնատը: Դուրս գալով երկրի մակերևույթ՝ ճնշումն ընկնում է, և ածխաքրու զազր ցնում է, ապա ցածր ջերմաստիճանի տակ ջրում լուծված կարբոնատը նատվածք է տախիս ու կուտակվում աղբյուրի ելքի՝ ակունքի մոտ: Հազարավոր ու միլիոնավոր տարիների ընթացքում տրավերտինը կուտակվելով ուղղակի լեռներ է առաջանում: Այդպիսի վիրխարի կուտակում տեսնում ենք Արարատ քաղաքի մոտ, որի բազայի հիման վրա կառուցվել են ցեմենտի գործարաններ: Նման կուտակումներ տեսնում ենք Կապուտան (Ուրմիա) լճի ափին: Տրավերտիններ կան Կարինի մոտ, Երզնկայում,

Բորժուում, Բաղեշից (Բիթլիս) հարավ, Որոտանի կիրճում (Տաթև) և այլուր:

Կազ առաջանում է մայրական ապարների հողմահարման հետևանքով, և այդ պրոցեսում մասնակցություն ունեն մանրօրգանիզմները: Հողմահարման արգավիքներից սինթեզվում են նոր միներալներ, որոնք դառնում են կայուն՝ հետագա հողմահարման նկատմամբ: Կավային միներալները բազմազան են, ինչը կախված է նրանց բաղադրությունից: Կավերի կազմում հիմնականը այլումինի ու սիլիցիտումի օրսիդներն են՝ այլ տարրերի խառնուրդով:

Հայկական լեռնաշխարհում կավերի տարրեր տեսակներ կան և այդ տեսակները հազարամյակների ընթացքում օգտագործվել են տեղաբնիկների կողմից. պատրաստել են ամանեղեն, կարասներ, աղյուս ու կղմինդր, բռնիր ու բուխարիկ: Հանդիպում են նաև հրակայուն տարատեսակներ, որոնք խիստ անհրաժեշտ են մետաղաձուլության, թիմիական արդյունաբերության մեջ և այլի:

Բրուտագործությունը և խեցեգործությունը ավանդաբար անցել է սերնդն սերունդ և հասել մեզ: Կավեր կան ամենուրեք, գրեթե բոլոր շրջաններում այդ հումքի նեղություն հայր երրեք չի զգացել:

Հայկական լեռնաշխարհում կան այլ հանքային հարստություններ ևս՝ բարիտ, մագնեզիտ, ասրեստ, ֆուֆորիտներ, ազար, բանկարժեք այլ քարեր և այլն:

Ընդերքի հարստությունների շարքում հատուկ դեր ունեն **հանքային ջրերը**, որ այնքան առատությամբ ցրված են լեռնաշխարհի տարրեր մասերում, և, ինչպես նշում է ֆրանսիացի հայտնի աշխարհագետ Է. Ռեկլուն, ջերմուկները Հայաստանում ավելի շատ են, քան Պիրենեյներում կամ Օվերնում (Ֆրանսիա):

Հանքային ջրերը նույն մքնոլորտային ջրերն են (վաղոզային ջրեր), որոնք մքնոլորտային տեղումների ձևով թափվում են գետնին, ներծծվում երկրակեղելի խորքը, այնտեղ շրջանառություն կատարում որպես ստորերկրյա ջուր: Պետք է ասել, որ երկրի խորքում ամենուրեք նեղերեն ու ծակոտիները հագեցած են ջրով և այն անպայման շարժման մեջ է: Հրաբխային շրջաններում, որտեղ երկրակեղելում դեռևս կան բարձր ջերմաստիճանով մագմայի ներդրումներ, դրանց մոտեցող ջրերը տաքանում են, բարձր ջերմաստիճանի ու բարձր ճնշման պայմաններում բազմաթիվ նյութեր լուծվում են ջրերի մեջ: Վերջիններս հարստանում են ածխաբրու և այլ գազերով, որոնք եւ ավելի են մեծացնում ջրի լուծունակությունը: Ջրերը դեպի երկրի մակերևույթ ելք են գտնում տեկտոնական ճեղքերի միջոցով և ի վերջո հայտնվում են երկրի մակերևույթին՝ հանքային առյունների ձևով: Բացառված չեն, որ այդ ջրերի մի մասը ունի նաև մագմատիկ ծագում, այսինքն՝ մագմայի մեջ գտնվող գոլորշինները, բափանցելով երկրակեղելի մեջ, խտանում-դառնում են ջուր և հաս-

նում երկրի մակերևույթը: Այդ կարգի ջրերն անվանում են կուսական (յուվենիլ) ջրեր: Նշանակում է՝ հանքային աղբյուրները ընդերքից դուրս են թերում զանազան լուծված տարրեր ու ռադիոակտիվ բաղադրամասեր, որնք մարդու վրա ֆիզիոլոգիական ազդեցություն են բռնում: Հանքային շատ աղբյուրներ դեռևս շատ հնուց բնակիչների կողմից օգտագործվել են զանազան հիվանդություններ բուժելու համար: Շատ ջերմուկներ ուղղակի սրբավայրեր են դարձել:

Հայկական լեռնաշխարհում հանքային ջրերի հարյուրավոր խմբեր կան, որոնցից յուրաքանչյուրում է՝ մի քանի, նույնիսկ տասնյակների հասնող առանձին աղբյուրներ: Սրանք ունեն տարբեր քաղաքություն. լինում են հիդրոկարբոնատային-կալցիումային, հիդրոկարբոնատային-նատրիումային, սոլֆատային, ծծմբաջրածնային և այլն, դրանց ջրի միներալացումը տատանվում է 1-ից մինչև 15-18 գ/լ սահմաններում: Ջրերը նաև պարունակում են ածխարբու գազ, որի շնորհիկ բրու համ ունեն և հաճույքով խմբում են: Կան այնպիսիները, որոնք ծծմբաջրածին են պարունակում և հեռվից նեխած ձվի հոտ է զգացվում: Նման աղբյուրների քազմաքիչ ելքեր կան Թոնդրակի հյուսիսային ու արևելյան մասերում Դիավոնի շրջանում: Աղբյուրներն այնքան տաք են, որ մի շարք ճանապարհորդների վկայությամբ՝ նրանց ջրի մեջ առանց կրակի տեղացիները ոչխարի միս են եփում: Այդ աղբյուրները եռուպում են Վառշակի աղբյուրներ-ջերմուկներ:

Հանքային աղբյուրների մի մեծ խումբ հանդիպում է Եփրատի վերին հոսանքների ավազանում, որտեղով անցնում է տեկոտնական մի մեծ խօսքածք, որի երկարությամբ հաճախակի են երկրաշարժերը: Աղբյուրների նման խմբեր կան Կարինի (Էրզրումի) գոգավորության մեջ (Խիճե), Հասանկալեում, Դերջանում, Բասենում, Երզնկայում: Մասն մեջ կան տաք աղբյուրներ՝  $35^{\circ}$ - $39^{\circ}$ -ի:

Երգնկայի տաք աղբյուրների հիման վրա այստեղ բաղնիքներ են կառուցել, սակայն այժմ դրանք վերացել են: Ուժեղ երկրաշարժերի հետևանքով աղբյուրների ելքերը փակվել են, դրանք այլ տեղերից են դուրս գալիս: Աղբյուրների շուրջ արավերտին մեծ կուտակումներ կան:

Հանքային աղբյուրների մեծ խումբ գոյություն ունի Տիգրիսի վերին հոսանքներում, Ծովը լին մոտ: Տավրոսի համակարգում աղբյուրների մյուս առաջ եթերը Բաղեշից (Բիրլիսից) հարավ են՝ ձորի մեջ  $190^{\circ}$  չերմուրյամբ: Առաջանական հովտում ևս կան հանքային աղբյուրներ:

Հանրային աղյուսները շատ են նաև անդրկովկասյան հանրապետությունների տարածքում՝ Բորժոմ, Արգանի, Հանճավան, Սևանի ավազան, Ջերմուկ, Տարև, Վայկունիքի ջերմուկները (Ջերմաջոր՝ Խստիսու) և այլն: Բորժոմի, Արգանի և Ջերմուկի համբավը վաղուց դուրս է եկել Վրաստանի և Հայաստանի սահմաններից:

Հանքային աղբյուրների ելքեր կան նաև Կապուտան (Ուրմիա) լճի ավազանում: Այդ աղբյուրները շատ երկար են գործել, որի շնորհիվ տրավերտինի հսկայական կուտակումներ կան: Նշանավոր են Մակոփ ջերմուկները, իսկ Սալմաստի մոտ՝ «Մարմարի աղբյուրները»:

Հանքային աղբյուրները հիմնականում ունեն բուժական նշանակություն, սակայն տար աղբյուրների շրջանում հնարավոր է օգտվել երկրի ներքին ջերմությունից ևս, և այդ ուղղությամբ որոշակի հետազոտություններ են կատարվում:

Որոշ հեղինակների վկայությամբ (Ե. Ռելյոյ, Թեյլոր) Թոննդրակի վրա հնում գոյություն են ունեցել գեյզերներ՝ պարբերաբար շատրվանող տար աղբյուրներ: Այժմ կան միայն տար աղբյուրներ:

Հայկական լեռնաշխարհում բովիչ բնուրյունը ինքնին բնական հարստություն է: Սարուր օղը, ուլորամանուշակագոյն ճառագայթների շափակոր առատությունը, գեղատեսիլ լճերը, ոյուրիշ անտառներն ու մարգագետինները, կարկաչահոս աղբյուրները, հանքային ջրերը բնուրյունը դարձնում են դրախտային և, եթե սրանց գումարները պատճական հուշարձանների առատությունը, ապա այն կետանա աշխարհի ամենազրակի անկյուններից մեկը, որտեղ տուրիզմը զարգանալու ամենամեծ հնարավորությունն ունի: Բնուրյան վերը նշված քաղաքացին մենք դեռ անդրադառնալու ենք, նշենք միայն քաղցրահամ ջրի մասին:

Քաղցրահամ ջուրը կյանքի աղբյուր է՝ մեր մոլորակի արյունը: Առանց ջրի կյանքը լինել չի կարող, և ահա Հայկական լեռնաշխարհում այդ ջուրը հազարամյակներ շարունակ կյանք է տվել հային, ուստի ամենամեծ հարստություններից մեկը մենք համարում ենք քաղցրահամ ջուրը: Լեռնաշխարհի ջրերին ավելի հանգամանորեն մենք ծանոթանալու ենք, այստեղ հարկ ենք համարում ջրի մասին նշել որպես բնական հարստություն: Լեռնաշխարհում քափող մթնոլորտային ջրերը ունեն 20-50 մգ/լ աղիություն: Ըստ Էռյան, դրանք պետք է լինեն բորած, սակայն մթնոլորտի մեջ մշտապես քափառում են փոշու հատիկներ, որոնք անձրևի կարիքների կամ ձյան փարիքների միջոցով գերփում են ու մասամբ լուծվում ջրի մեջ: Այս ջրերը, քափվելով գետին, ներծծվում են և առաջանում ստորերկրյա ջրեր, որոնք երկար ժամանակ շրջանառություն են կատարում ապարների ճնշորերում ու ծակոտիներում: Ջրերը, շփվելով ապարներին, ինչ-որ շափով լուծում են զանազան քաղաքամասեր, և աստիճանաբար ջրի աղիությունը մեծանում է: Երբ ստորերկրյա ջրերը դուրս են զալիս երկրի մակերևույթ աղբյուրների ձևով, ապա պարունակում են 100-400 մգ/լ զանազան աղեր: Պեսք է ասել, որ հրաբխային ծածկույթների տարածման շրջաններում աղբյուրների ջուրը կրկնակի պակաս լուծված նյութեր է պարունակում, քան ծալքաբեկորավոր շրջաններում, հեշտ լուծվող կրաքարների տարածման վայրերում, որտեղ ջրերի աղիությունն ու կոշտությունը մեծ է: Ուրեմն, հրաբխային շրջաններում բնական ջրերը աչքի են ընկնում

բարձր որակով, աշխարհի լավագույն ջրերի շարքն են դասվում: Հրաբխային ծածկույթների տակից բխող աղբյուրների ծախսը մեծ է, նրանք տարվա ընթացքում ունեն կայուն ուժիմ: Բարձր որակ ունեն նաև գրանիտներից դուրս եկող ջրերը: Ծալքաբեկորավոր լեռների տարածման շրջաններում աղբյուրների ջուրը մի փոքր աղի է (200-400 մգ/լ), կոչտուրյունը համեմատաբար բարձր է, աղբյուրների ծախսն էլ փոքր է, նրանք ամռանը մեծ մասամբ չլրանում են:

Այսպիսով, քաղցրահամ ջրերի կուտակման տեսակետից՝ հրաբխային ծածկույթները լեռնաշխարհի համար ունեն բացառիկ դեր: Շատ աղբյուրների ջուրը առատ է, վայրկենական ծախսը կազմում է 1 խոր. մ և ավելի, տարվա տարբեր եղանակներին տատանումները շատ քիչ են: Հրաբխային շրջանների ստորերկրյա ջրերը լեռնաշխարհի մեծ հարատուրյուններից են, գետերը ամռանը սնվում են այս ջրերով: Բնակիչները գերադասում են խմելու համար օգտագործել աղբյուրների ջուրը, որը գերծ է հիվանդությունների հարուցիչներից: Շատ քիչ բնակավայրեր կան, որտեղ օգտագործում են գետերի ջուրը:

Ահա սրանը են մեր լեռնաշխարհի հարատուրյունները:

Գ. Լ. ՈՒ Խ. 5

## ԼԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԵԼԻԵՖԸ

Նախորդ բաժիններում նշել ենք, որ Հայկական լեռնաշխարհի ժամանակակից լեռնագրությունը միլիոնավոր տարիների ընթացքում տեղի ունեցած ծալքափորությունների, դիմերենցված տեկտոնական շարժումների, հրաբխականության, նատվածքագոյացման և տեղատարման պրոցեսների արգասիք է: Լեռնաշխարհն ամբողջությամբ կառուցվածքով ծալքաբեկորավոր երկիր է (Ակ. 12):

Գ-բական տարբեր աղբյուրներում, երբ խոսվում է Հայկական լեռնաշխարհի մասին, առաջին հերթին նշվում է նրա լեռնագրությունը: Նշենք, որ լեռնագրական խոր վերլուծություն կատարել է Լ. Ն. Զոհրաբյանը (1979) ուսերեն հրատարակած մենագրությունում:

Դիտելով Հայկական լեռնաշխարհի ֆիզիկական քարտեզը՝ նկատում ենք, որ արևմտյան մասում լեռնաշխարհը սեղմված է, Պոնտոսի և Տավրոսի համակարգերը մոտեցել են միմյանց և լեռնաշղթաները ունեն զուգահեռականի ուղղություն, նշանակում է՝ երկրակեղեկի ծալքափորման պրոցեսում խանգարիչ հանգամանք չի եղել: Այլ է պատերը արևելյան մասում: Այստեղ լեռ-

նաշղթաները հեռանում են միմյանցից, և ակնհայտ է դառնում, որ Պոնտական, Փոքր Կովկաս լեռնահամակարգերը, Հայկական լեռները (Ղարադաղը), Զագրոշի լեռնաշղթան և Տավրոս լեռնահամակարգի արևելյան հատվածը (Հերյարի և Կորդվաց կամ Քրդստանի լեռները) շրջապատում են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական ամրակուր կոչտը՝ բլոկ-զանգվածը:

Քարտեզից ակնհայտ է դառնում նաև այն, որ Հայկական լեռնաշխարհը բոլոր կողմերից եղերված է բարձրաբերձ լեռնազագարներով, որի մասին նշել ենք նաև բարձրագրական ակնարկում:

Ենելով նշված հանգամանքներից՝ Հայկական լեռնաշխարհի լեռնագրական սիսեման մենք ենք կայացնում ենք երկու խոշոր համակարգով:

## I. Եզրային լեռնաշղթաների համակարգ.

1. Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաներ,
2. Արևելյան ծալքաբեկորավոր լեռնաշղթաներ,
3. Հարավ-արևելքի ծալքաբեկորավոր լեռնաշղթաներ ու հրաբխային զանգվածներ,
4. Հարավի ծալքաբեկորավոր լեռնաշղթաներ;


## II. Միջնաշխարհ.

5. Ներքին Տավրոսի համակարգ,
6. Հայկական հրաբխային բարձրավանդակ,
7. Միջնային գոգավորություններ:


## I. ԵԶՐԱՅԻՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳ

### 1. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾԱԼՔԱԲԵԿՈՐԱՎՈՐ ԼԵՌՆԱՇՂԹԱՆԵՐ

Ընդգրկում է Խաղոյաց (Արևելյան-Պոնտոսի), Մոսքիկյան (Մեսխեթի) և Թուեղի (Թրիալեթի) լեռնաշղթաները՝ մոտ 820 կմ երկարությամբ: Պոնտոսի համակարգը կազմված է մեզոպոյի ու պալեոզենի նատվածքային ապարներից, որոնք խիստ ծալքավորված են և ներարկված են սիենիտային, գրանիտային ներժայրուկներով: Արևմուտքում լեռնաշղթան ունի 1200-1300 մ բարձրություն: Հայկական լեռնաշխարհ մտնելիս՝ Կլընչ զագարն արդեն հասնում է 3095 մ-ի: Այստեղ ծովեզրին գուգահեռ ձգվում են Գյումուշխանե, ապա Զանիկ և Էքսի միմյանց գուգահեռ լեռնաշղթաները: Բարձր Գյումուշխանեն է՝ 3305 մ: Վերջինս ձգվում է մինչև Ծանախոչուր (Խորշատ) գետի ակունքը, որտեղ Բարերդի լեռնանցքն է (2210 մ): Այստեղով անցնում է ճորո-



Նկ. 12.Հայկական լեռնաշխարհի լեռնագրական սխեման




Նկ. 13. Ուղիելի կտրվածքների կողապատկերները՝ 1-1<sub>1</sub>, 2-2<sub>1</sub>, 3-3<sub>1</sub> ուղղություններով

խի հովտից Բարեր-  
դից (Բայբուրդ) դեպի  
Գյումուշսանե ու Սև  
ծով տանող ճանա-  
պարհը:

Ծանախոջրից  
արևելք, նրա աջ ա-  
փին բարձրանում է  
Խաղոյաց լեռների  
համակարգը, որի մեջ  
են Զիգանա և Տրա-  
պիզոնի լեռնաշղթա-  
ները: Նրանց միջև է  
Զիգանայի լեռնանց-  
քը, որով Արծարա-  
հանը (Գյումուշխա-  
նեն) կապվում է Տրա-  
պիզոնի հետ:

Պոնտական լեռ-  
նահամակարգի ամե-



Նկ. 14. Զիզանայի լեռնանցք

Քաջար գագարով (3931 մ), կազմված է բյութեղային ապարներից և խոշոր պլոտոն է:

Խաղտյաց կամ Պարխարի լեռների հյուսիսային լանջերը երկար են և տեղումների առատության պատճառով մասնաւոված: Գետերը հարուստ են սահմանքներով ու ջրվեժներով, կատարային մասերում կան ֆիոնային դաշտեր ու հնագույն սառցապատման ռելիեֆի ձևեր, փոքր սառցադաշտեր:

Սև ծովի ափին դաշտավայրը նեղ է, ծածկված գետերի արտաքերման կողերով ու լանջային (դելյուվիա) նասվածքներով: Լավ են արտահայտված ծովափնյա դարավանդները: Տեղ-տեղ փետրած դասավորության լեռնաբազուկները միխրճիկում են ծովի մեջ՝ առաջացնելով գեղատեսիլ հրվանդաններ ու ծովախորշեր:

Սև ծովի ծովափնյա ծանծաղուտը (մինչև 200 մ) գրեթե բացակայում է, դաշտավայրը կտրուկ իջնում է դեպի հատակ. ափից ընդամենը մի քանի կիլոմետրի վրա ծովի խորությունը հասնում է 1000 մ-ի: Պոնտական լեռնահամակարգի հնտենսիվ տեղատարման հետևանքով լեռնաշղթան թերևանում է, և իզոստագիայի օրենքի համաձայն՝ երկրակեղեկի այս հատվածը բարձրանում է, որի հետևանքով էլ գետային երողին ուժեղանում է:

Ծորդիսի գետաքերանից արևելք, մերձգործահեռականի ուղղությամբ մինչև Կուր գետը ձգվում է Մեսիսերի (հնում Մոսքիլյան, ապա Աջարա-Իմերեթյան) լեռնաշղթան Մեփիսծղարո (2850 մ) գագարով, որը նաև Փոքր Կովկասի արևմտյան հատվածն է: Լեռնաշղթայից հյուսիս Կովխիդայի դաշտավայրն է: Լեռնաշղթայի արևելյան ծայրում պահպանվել է Վրացական կողտի մի բներք՝ Սուրամի լեռնաշղթան, որը հորսու է ներկայացնում:

Կուր գետի աջ ափից՝ Բորժոմի կիրճից արևելք դեպի Թբիլիսի ձգվում է Թուելքի (Թրիալեթի) լեռնաշղթան Արջևան (2757 մ) գագարով: Երկու լեռնաշղթաներն ել ծալքաթեկորավոր են, մասնաւոված են գետահովաներով: Տեղ-տեղ պահպանվել են հնագույն հարթեցման մակերևույթներ: Մոսքիլյան ու Թուելքի լեռնաշղթաները կապող օղակ են Պոնտական ու Փոքր Կովկասի լեռնահամակարգերի միջև:

## 2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԾԱԼՔԱԲԵԿՈՐԱՎՈՐ ԼԵՌՆԱՇՂԹԱՆԵՐ

Այս համակարգը Փոքր Կովկասն է (Գուգարաց-Արցախյան համակարգը): Տեկտոնիստները այն պատկերացնում են որպես Կուր-Արաքսյան միջագետք, որտեղ երկրակեղեկ կամարած բարձրացում է ապրում և կազմված է մի քանի գրնաներից:

Աշխարհագետները համակարգի առանձնացման հիմքում դնում են լեռնագրությունը՝ անջատելով հրաբխային ծածկույթները Փոքր Կովկասի հա-

**մակարդից:** Փոքր Կովկասի մեջ ենք համարում Վիրահայոց, Գուգարաց, Քազումի, Շիրակի, Փամբակի, Ծաղկունյաց, Արեգունի, Միափորի, Սևանի, Արևելյան Սևանի, Մոռավի, Արցախի (Ղարաբաղի) լեռնաշղթաները:

Գոյություն ունի նաև Մերձ-Արաքսյան Փոքր Կովկաս. աս ծալքաբեկուրավոր լեռնային համակարգ է Արաքսի ձախ ափին: Այդ համակարգի մեջ են Երանոսի, Ուրծի, Վայրի, Զանգեզուրի լեռնաշղթաները իրենց բազուկներով՝ Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաներով: Փոքր Կովկասի համակարգը Մերձ-Արաքսյան Փոքր Կովկասից բաժանվում է Վարդենիսի, Սյունիքի (Ղարաբաղի) հրաբխային բարձրավանդակներով:

Փոքր Կովկասի ամբողջ համակարգը ներգենի ընթացքում մասնատվել է գետահովվածներով: Սևանի արևելյան ափին ծգվում է օֆիոլիտային զոնան, որտեղ բազմարիվ ներժայրուկներ կան:

Փոքր Կովկասը տիպիկ ծալքաբեկորավոր է: Նրա ամբողջ երկարությամբ ծգվում են գրաբեններ ու հորսունք. ներկայում ընթանում են բլոկային շարժումներ: Օրինակ, Շիրակի դաշտը, Փամբակի հովիտը, Սևանի գոգավորությունները իջնում են, իսկ նրանց շրջապատող լեռնաշղթաները բարձրանում են:

Փոքր Կովկասի կենտրոնական հատվածի ողնաշարը կազմում է Փամբակ-Մոռավ համակարգը, որը ծգվում է Շիրակի լեռներից մինչև Մոռավի արևելյան ծայրը 310 կմ երկարությամբ: Համակարգի մեջ են Շիրակի, Փամբակի, Արեգունու, Սևանի, Մոռավի լեռնաշղթաները: Ամենաբարձր գագարը Գոմշասարն է (Գյամիշ, 3724 մ):

Փոքր Կովկասի հարավ-արևելյան մասը Արցախի (Ղարաբաղի) լեռնաշղթան է՝ Բաղարա (2832 մ) և Մեծ Քիրս (2724 մ) զագարներով: Լեռնաշղթան դեպի արևելք առաջացնում է մանր բազուկներ՝ ծածկված անտառներով: Արևմտյան լանջերը չոր են, կան ուղիեցի բեղլենդ ձևեր:

Մերձ-Արաքսյան Փոքր Կովկասում ամենաբարձրը Զանգեզուրի լեռնաշղթան է Կապուտջուղ (3904 մ) զագարը: Կենտրոնական մասում շատ են 3500 մ-ից բարձր լեռնազագարները՝ ատամնավոր կատարներով: Այս հատվածը կազմված է գրանիտներից, մոնցոնիտներից, ներկայացնում է պյուտոն և հարուստ է գունավոր մետաղներով: Դեպի արևելք անջատվում են Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները:

Զանգեզուրի լեռնաշղթայից դեպի արևելք տարածվում են Վայրի լեռնաշղթան Գոյի զագարով, ապա Արփա գետից արևելքուր և հյուսիսարևմուտք՝ Ուրծի, Երանոսի լեռնաշղթաները: Սրանք բոլորը քրքրված են գետահովվածներով, շատ հատվածներում ներկայացնում են բեղլենդներ:

Սույն համակարգի մեջ են Արաքսի աջ ափին գտնվող լեռներն ու հրաբրխային զանգվածները՝ Հայկական լեռները (Ղարադաղ), Քոշարաղ, Նոր-Շիրականի (Միջուղաղ), Զագրոսյան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի լեռները և Սավալան (Սարբալան), Սոհունի (Սեխտեն) հրաբխային զանգվածները:

Ստրաբոնը Ղարադաղը նշել է որպես Հայկական լեռներ. հնում այդպես են անվանել: Ամենաբարձր զագարը Արշակ լեռը կամ Հաշտասարն է (2929 մ): Ամբողջապես կազմված է նատվածքային ապարներից, բավկական մաշված է, տիրապետում են ունիեցի բեղլենի ձևերը: Կենտրոնական մասում լեռնանցք գոյություն ունի և Էրաստոքենեսի մոտ այն կոչվում է Դրոնք Հայոց (կամ Արմենյան Անցք): Անարի հովիտն այս լեռնանցքով կապվում է Արաքսի հովտի հետ:


Հայկական լեռներից արևմտուք Քասարն (3975 մ) և Կամքի (3358 մ) զանգվածներն են: Սրանք չոր կլիմայական պայմաններում ենթարկվում են մեխանիկական հողմահարման, ժամանակավոր գետերով խիստ մասնատված են, շատ են սելավային հոսքերն ու արտաքրման կոները:

Հայկական լեռներից հարավ Անար գետի աջ ափին Կոշասար լեռնաշղթան է համանուն զագարով. նրանից արևելք՝ Սավալանի հրաբխային զանգվածն է նույնանուն զագարով (4821 մ), իր բարձրությամբ երկրորդ՝ Հայկական լեռնաշխարհում:


Կապուտան (Ուրմիա) լճից հյուսի գուգահեռականի ուղղությամբ, ձեղփում է Նոր-Շիրականի կամ Միջուղաղ լեռնաշղթան, որը արևելյան մասում հասնում է 3131 մ բարձրության: Լճից արևելք բարձրանում է Սոհունի (Սեխտեն) հրաբխային զանգվածը, որի կենտրոնական մասում վեր են խոյանում Հարամ (3722 մ) և Չամ զագարները: Մեկ այլ հրաբխային կոն էլ կա անմիջապես Ուրմիայի ափին՝ Ջրուկլու (2173 մ): Նշված լեռնաշղթաների ու զանգվածների միջև Ուրմիա լճի գոգավորությունն է և Կարմիրջուր (Աջի) գետի ընդարձակ ավազանը:

Ուրմիա լճից արևմտուք գոգավորությունը եզերվում է Զագրոսյան (Զագրշի) համակարգին պատկանող լեռներով: Լեռնային այս բարդ կառույցը իր բազմաթիվ ճյուղերով եզերում է Իրանական սարահարք հյուսիս-արևմտութից և Հայկական լեռնաշխարհ է մտնում հարավից: Կառուցվածքային առումով նրա մեջ են մտնում Վասպորականի կամ Կոտոր լեռները, նրանց շարունակությունը կազմող Կորդվաց (Քրդստանի) լեռները: Բարձր զագարները հասնում են 3500-3800 մ-ի (Սորապ, Գորշասար (Քողդաղ) և այլն):

Կորդվաց և Վասպորականի լեռների միջև Կոտորի անտեղեթենտ հովտն է, որով անցնում է երկարութիւն: Զագրոսի լեռնանցքներից հայտնի են՝ Սորբխաչը (Խանասոր), ավելի հարավում՝ Զարասար (Կելիշին):



Նկ. 15. Ղարադաղը (հնում՝ Հայկական լեռներ) հյուսիսից




Նկ. 16. Կապուտցող լեռնազագարք:

#### 4. ՀԱՐՍՎԻ ԾԱԼՔԱԲԵԿՈՐԱՎՈՐ ԼԵՌՆԱՇՎԹԱՆԵՐ

Հայկական լեռնաշխարհի հարավում՝ Միջազգետքի ցածրադիր հարթավայրից, միանգամից բարձրանում է Հայկական Տավրոսի համակարգը 900 կմ երկարությամբ։ Սա մեզաանտիկինորդում է, կազմված է պալեոզոյի նատվածքներից, ներարկված է ներժայությանուրով, խիստ ծալքավորված ու ջարդուտված է։ Մինչև լոցեն շուրջ 40 միլիոն տարի առաջ Ներքին Տավրոսի և Միջազգետքի իջվածքները գոյություն ունեին, և ծովային կապ կար նրանց միջև։ Միայն էղենում Տավրոսի արևմտյան հատվածը ազատվեց ծովից։ Հետագայում, հատկապես միոցենում, Տավրոսի հյուսիսային քևն իջած էր, և սկսած Խարբերդի շրջանից մինչև Կապուտան (Ուրմիա) լիճը՝ ներ շերտով երկրակեղևը կրված էր և ծածկված ծովով։ Միոցենում Տավրոսը արշխավելազի տեսք ուներ։

Ալսած միոցենից՝ նորագույն տեկսոնական շարժումների փուլում, Տավրոսն սկսում է արագ բարձրանալ։ Այդ ընթացքում Եփրատը կարողացավ հաղթահարել բարձրացումը, սողոց բարձրացող լեռնաշղթան և ստեղծեց մինչև 1,5 կմ խորության անտեղեղենս կիրճը։

Տեկտոնական բարձրացումն ավելի ուժգին եղավ լեռնային համակարգի արևելյան մասում՝ Հերյարի (Այգառի), Կորդվաց լեռներում, որտեղ Մեծ Զարի ավազանում կան մի քանի անտեղեղենս անդնդախոր կիրճեր։



Նկ. 17. Սասնա լեռներ

Հայկական Տավրոսն արևմուտքում սկսվում է Մալաթիայի լեռներով, որոնք Կիլիկյան Տավրոսի շարունակությունն են կազմում, ամենաբարձր մասը հասնում է 2639 մ-ի: Դեպի արևելք՝ լեռնաշղբան ընդհատվում է Եփրատի անտեղեդնատ հովտով: Եփրատից արևելք Տավրոսը նախ ցածր է ու նեղ, կոչվում է Արդնի (Էրգանի), բայց աստիճանաբար բարձրանալով հասնում է 2561 մ-ի՝ Խշանասար (Շարիեկշան) և Աչքաբար (Անշակարա) 2840 մ գագարներում: Այստեղ՝ 1223 մ-ի վրա Ծովը (Գյոլջիկ կամ Խազար) լինել:

Աչքաբարից արևելք Տավրոսը լայնանում է, կոչվում է Սասնա լեռներ և առաջացնում է դեպի հարավ ուղղված լեռնաբազուկներ, որոնց միջև Տիգրիսի վտակները խոր կիրճեր են առաջացրել: Գլխավոր ջրբաժանը մի քանի հատվածներ ունի՝ Քաղեցի (Քիրլիսի), Սիմ, Խորի, Սև լեռ կամ Խաչասար: Նրանցից հարավ լեռնաբազուկները կոչվում են Սասնա, Սալնա լեռներ: Գագարներից հայտնի են՝ Սիմ, Անդրկ, Մարտորա՝ Մարտորոկ, Ծովասար: Սրանք մասնատված են մասն գետակների հովտներով:

Գլխավոր ջրբաժանից հյուսիսի Տարոնի կամ Մշո դաշտն է: Լեռնանցքնից ամենահայտնին ու կարևորը Զորապահակն է Բաղեցի (Բիրլիսի) մոտ: Սասունը միշտ է հայտնի է եղել որպես ազատության խորհրդանիշ: Այստեղից է ծնունդ առել «Սասունցի Դավիթ» եպոսը:

Բաղեցի (Բիրլիսի) հովտից արևելք Տավրոսի համակարգը կոչվում է Կորդվաց ապա Հերյարի (Այզառի), որոնք բազմաթիվ ճյուղավորություններ

են առաջացնում՝ Մոլկաց (Շատախի), Արտոս, Ընձաքիսար, Ազարակի, Աղբակի (Մննգենե), Սուրենա և այլն: Տավրոսի այս հատվածի ուժգին մասնաւումը բացատրվում է նրանով, որ առատ տեղումների հետևանքով երկիրը ինտենսիվ տեղատարվում, թերևանում է (ինչպես Քաջքարի զանգվածը), ուստի դրու է մնվում միջնավատյանի կողմից: Գետերն, ունենալով մեծ կենդանի ուժ, սրոցում են բարձրացող լեռնաշղթան՝ առաջացնելով անտեղենենտ հովիտներ: Լեռնագագարները հասնում են մեծ բարձրության (ամենաբարձրը՝ Չողա կամ Ջիլը (4168 մ), Վանա լճի ափին՝ Արտոս, քիչ հեռու՝ Առնո, Սամդի (3811 մ), Ակունիք կամ Ականիս (Մերքեզ) և այլն):

## II. ՄԻՋՆԱՇԽԱՐՀ

Հայկական լեռնաշխարհի ներքին շրջանները բարձր լեռների, երաբխային ծածկույթների, միջեռնային գոգավորությունների համալիր են: Արևմուտքում լեռնաշղթաներն ունեն մերձգորգահեռականի ուղղություն. պարզ նկատելի է հարավից՝ Արարա-Սիրիական կողտի կողմից երկրակեղելք ճգմելու հանգամանքը: Դեպի արևելք լեռնաշղթաները բացվում են հովիարածեւ:

### 5. ՆԵՐՔԻՆ ՏԱՎՐՈՍԻ ՀԱՍՏԱԿՐԳ

Այս ընդհանուր անվան տակ հասկանում ենք Պոնտական ու Տավրոսի լեռնային աղեղների միջև ընկած լեռնաշղթաների համակարգը:

Ամենից հյուսիսում Անտիպոնտական համակարգն է. երբեմն այն անվանում են նաև Հյուսիսային Հայկական Տավրոս: Նման անվանումը բյուրիմացությունների տեղիք է տալիս, ուստի հարմար է անվանել Անտիպոնտական: Մրա երկարությունը ավելի քան 400 կմ է, գտնվում է հյուսիսում Գայգետ-Ծորոխի և հարավից՝ Եփրատ-Տի, իրիկ (Յելս) գետահովիտների միջև:

Համակարգը կազմված է մի քանի լեռնաշղթաներից՝ արևմուտքում Եշիլ-Իրմակի լեռնաշղթան է Լերկասար (Քյոսադաղ) և Կարմրաքար (Կզըրդաղ) գագարներով: Նրա շարունակությունը՝ Դարանայաց Սեպուհ լեռներն են՝ Տեխասինա (Զիմեն) միջին բարձրության լեռնաշղթան, որից հարավ Կամախի հրաբխային սարահարքն է: Զիմենից արևելք Սուրբ Գրիգոր, Անահիտական (Քեշիշ) լեռնաշղթան է նույնանուն գագարով (3537 մ): Նշված երկու լեռնաշղթաների միջև Սուրբ Գրիգոր լեռնանցքն է, որով Եփրատի ավազանը կապվում է Գայգետի (Կելկիք) ավազանին: Ավելի արևելք Կապույտ (Կոփա), Մարիամ (Վարդիկ) և Շորոխի լեռնաշղթաներն են: Գագարները հասնում են

3000-3200 մ-ի: Կապույտ լեռներում թոնակապան լեռնանցքով խճուղին անցնում է Աշկալեից Բարերդ: Թորթում և Օլրի գետերի միջև բարձրանում է ծալքաբեկորավոր խիստ մասնատված Տայոց կամ Տայրի (Աղրատ) լեռնաշղթան:

Թուրք լեռնաշղթաները հին ու մաշված են, մասնատված են խոր գետահովաներով, գետերը սահանքավոր են: Գագարներից միայն Չորմայրին (Խորտիկ) ու Դավան արևելքում հրաբխային ծագում ունեն և Հայկական հրաբխային բարձրավանդակին են պատկանում:

**Բուն Ներքին Տավրոսը** կամ Բյուրակն-Մնձուրյան լեռնաշղթան Հայկական լեռնաշխարհի ողջաշարն է:

Այն սկսվում է Արևմտյան Եփրատի աջ ափից՝ Ուզուն-Յայլա հրաբխային բարձրավանդակից, անցնում է Եփրատի ձախ ափը, որտեղ գուգահեռականի ուղղությամբ տարածվում են Մնձուրի, Մերջանի, Գայլախսագուտ, Այծպուկունը (Փալանթորյան), Հայկական Պար (Աղրիդաղ) լեռնաշղթաները: Ներքին Տավրոսը հիմնականում ծալքաբեկորավոր է, միայն ծայր արևմուտքում, կենտրոնում և ծայր արևելքում ունի հրաբխային ելքեր:

Մնձուրի լեռնաշղթան (3200 մ) ու նրանից հարավ Դերսիմը խիստ մասնատված են գետահովաներով, ունեն խճճված լեռնագրություն, լեռնալանջերը զգալի չափով ծածկված են անտառներով ու թփուտներով: Ավելի հարավ Սուրբ Լուս կամ Զավակատուր և Արսենիկ (Բագար-Բաբա) լեռնաշղթաներն են և Մեծկերտի (Մազկերտի) սարահարթը, ապա՝ Զմշկածագի ու Պաղիկանի հրաբխային զանգվածները:

Մնձուրից արևելք Մերջանի լեռներն են, նրանց միջև Սր. Հովհաննես լեռնանցքը: Ավելի արևելք Գայլախսագուտ լեռնաշղթան է համանուն զագարով (3287 մ): Ներքին Տավրոսի կենտրոնական ու արևելյան մասը զբաղեցնում է Հայկական Պարը, որը բաժանվում է երեք հատվածների: արևմտյան՝ Սուկավետ լեռներ, կենտրոնական հատվածը ծալքաբեկորային կառույց է և արևելյանը՝ հրաբխային: Բարձր զագարներից են՝ արևմուտքից արևելք՝ Մարիամ, Այծպուկունը, Սուկավետ, Բարդող, Սինակ, Մեծ ու Փոքր Մասիսները՝ Արարատները: Վերջինս Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր զագարն է՝ 5165 մ բարձրությամբ, և նրա մասին կխոսվի առանձին: Լեռնանցքերից են՝ Կոխուրի, Աղտաձորի, Չինգիլ (Օրկովի): Եփրատ, Շորիս և Արաքս գետերի ակունքներում գտնվող լեռնային երկիրը կոչվում է Բարձր Հայք. այն ջրաժամն է երեք ծովերի միջև:

#### 6. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԲԽԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՎԱԼԴԱԿ

Հայկական լեռնաշխարհը, ինչպես նշվեց նախորդ բաժիններում, հրաբխային երևույթների բատերաբեմ է եղել միլիոնավոր տարիների ընթացքում:

Անցյալ դարաշրջաններում հրաբխային ծածկույթները հաճախ սուզվել են ծովի հատակ և ծածկվել ծովային նատվածքներով: Վերջին՝ հումկու արտավիժումները եղել են վերին պլիոցենում ծածկելով Կարսի, Զավախի (Ախալքալաքի), Արսիանի, Աշոցքի, Ծալկայի, Լոռվա, Մեծրաց (Սողանլույի), Արագածի, Եղվարդի, Կոտայքի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի (Ղարաբաղի), Սավալանի, Սփռունդի, Բյուրակնի, Ծաղկանց, Սիփանի, Թոնդրակի, Քզնունյաց, Հարքի, Մերգեմերի բարձրավանդակները, դաշտերը, զանգվածները:

Պլիոցենյան լավաները հիմնականում եղել են հիմնային-բազալտային՝ ունենալով բարձր ջերմաստիճան ու մեծ հոսունություն: Ամենափոքր թերությամբ անգամ հոսելով՝ առաջացրել են լավային ծովեր: Հետագայի չորրորդական արտավիժումների ժամանակ լավաներն ունեցել են ավելի հաճախ քրու կազմ, քանձր են եղել, դժվարահոս, առաջացրել են կոճածև հրաբխային զանգվածներ՝ լավ արտահայտված խառնարաններով: Սրանցից մի քանիսը լավ պահպանել են սկզբնական տեսքը, որոշ խառնարաններ ել լցված են ջրով, խառնարանային լճեր են (Աժդահակ, Արմաղան (Մաղմաղան), Նեմրութ): Հայկական լեռնաշխարհի հրաբուխները ներկայումս հանգած են, բացի Նեմրութից ու Թոնդրակից, որոնք սոլֆատար փուլում են, արտավիժում են գագեր ու ջրային գլորջներ:

Հայկական լեռնաշխարհի հրաբխականության մասին մեկնաբանություններ տրվել են նախորդ գլխում: Այս բաժնում հրաբխային կառույցները դիտելու ենք որպես ռելիեֆի ձևեր:

Հայկական հրաբխային բարձրավանդակը գրաղեցնում է ողջ լեռնաշխարհի մոտ մեկ երրորդը, և մենք այն բաժանում ենք չորս մասի՝ Հյուսիսային, Կենտրոնական, Հարավային և Հարավ-արևելյան:

**Հյուսիսային բարձրավանդակ:** Հայկական հրաբխային բարձրավանդակում առանձին ավելի փոքր բարձրավանդակների առանձնացումը միանգամայն պայմանական է: Սրանք ըստ էության միմյանց շարունակություն են կազմում. արտավիժումը կատարվել է մեկ ընդհանուր մագմատիկ օջախից, և այս բաժանումը ավելի շատ գործնական-աշխատանքային բնույթ ունի:

Հյուսիսային բարձրավանդակի մեջ են՝ Կեչվանի, Մեծրաց, Ծիրանյաց (Կարգաբազարի), Արդահանի սարահարթերը, Զավախի (Ախալքալաքի), Ծալկայի, Լոռվա և Աշոցքի սարահարթերը իրենց շրջապատող լեռնաշղթաներով:

Արդահանի սարահարթը գտնվում է Արսիանի, Ուզգարի, Զարիշատի (Չըլդրի) և Կարմիր Փորակ (Ալլահյուէքքեր) լեռների միջև՝ 1900-2400 մ բարձրության վրա: Սարահարթն ամբողջությամբ կազմված է վերին միոցենի լավաներից (Գողերզի հաստվածք), որոնք ծածկված են ավելի երիտասարդ անդեգիտային և այլ լավաներով:

Սարահարթի արևմուտքում Արսիանի լեռնաշղթան է, որ ունի միջօրեա-

կանի ուղղություն ու սկսվում է Մոսքիկյան (Մեսխեթի) լեռնաշղթայից և դեպի արևելք աղեղ ստեղծելով հասնում է մինչև Կարմիր Փորակ (Ալլահյուէքբեր): Լեռնաշղթան ափմետրիկ է՝ դեպի արևմուտք իջնում է զառիքափ լանջերով, իսկ դեպի արևելք՝ փոքրաբեր: Դեպի արևմուտք անկումը մեծ է, և Օլրի գետի վտակները ստեղծել են խոր հովիտներ, որտեղ բացվում է ենթալավային հիմքը՝ կազմված կավա-մերգելային նատվածքներից: այստեղ կան նաև աղատար և գիպսատար հորիզոններ: Գետերը վերին հոսանքներում ստեղծել են կրկեսակերպ գոգեր: Դեպի արևելք լանջերը փոքրաբեր են, թույլ մասնատված, ծածկված են մարգագետիններով: Զբաժանը քարքարոտ է, ծածկված քարակարկաններով, քարձոր գագաթները՝ Արսիանը (3165 մ), Ջիարերը, ունեն սաոցադաշտային ռելիեֆի ձևեր:

Նոյն հրաբխային ծագում ունեն Ուլգարի լեռները, որոնք եզերում են Արդահանի սարահարքը հյուսիսից: Ընդ որում, դեպի հյուսիս անկումը մեծ է, դեպի Ախալցխայի գոգավորությունը իջնող գետակները մասնատել են լեռնաշղթան՝ առաջացնելով փետրած դասավորության լեռնաբազուկներ: Զարդարածի (Չլդրի) լեռնաշղթան արևելում աղեղնած է, Արդահանի սարահարքը անշատում է Ծովակ Հյուսիս (Չլդրի) գոգավորությունից: Նրա բարձր գագաթը Խորձիանն է (Ղըր, 3192 մ), որ էքստրուզիվ կոն է, ամբողջապես քրքրված է սաոցադաշտային կրկեսներով ու տրոգներով: Հյուսիսային Ծովակի (Չլդրի) գոգավորությունը տեկտոնական ծագում ունի, ինը լավային արգելափակման արդյունք է, ինչպես Զավախիրի բարձրավանդակի բազմաթիվ լճերը:

Արդահանի սարահարքից արևելք Զավախիրի բարձրավանդակը կամ սարահարքն է: Սա ևս կազմված է վերին միոցենի լավային ծածկույթներից և ավելի երիտասարդ անդեմիտային լավաներից: Կենտրոնում Ախալքալաքի սարավանդն է մինչև 2000-2200 մ բարձրությամբ: Սարավանդը բրապատ է, նրանց արանքներում արգելափակման մի շարք լճեր կան: Բարձրավանդակի արևելյան մասում բարձրանում են Արուլ և Սամսար լեռնագագաթները, Խոնավ (Զավախիրի) լեռնաշղթան:

Աբովյ և Սամսարի շղթան ռելիեֆում ցայտուն արտահայտված են: Մեծ Աբովյ (3304 մ), Սամսարը (3285 մ) էքստրուզիվ կոներ են, որոնց կատարները մասնատված են սաոցադաշտային կրկեսներով ու տրոգներով, ստորոտներում մորենների հզոր կուտակումներ կան:

Խոնավ (Զավախիրի) շղթան ծգվում է Խորամի հովտից (հյուսիսում) մինչև Բազումի ծալքաբեկորավոր շղթան (հարավում) և վահանած տեսք ունի, որի կենտրոնական մասերում վեր են խոյանում մի շարք էքստրուզիվ կոներ: Լեռնաշղթան դեպի արևելք (Ծալկայի և Լոռվա սարահարքերը) և դեպի արևմուտք՝ (Ախալքալաքի և Աշոցքի սարահարքերը) մասնատված է գետա-

Խովհտներով, որոնք կատարային գոտում՝ ակունքներում վերջանում են սառցադաշտային խոր կրկեսներով, իսկ ստորոտին ծածկված են հզոր ջրա-սառցադաշտային նատվածքներով։ Բարձր գազաբներից են Էմելեկին, Աչքասարը և այլն։ Նշված լեռնաշղթաները ծածկված են հյուրախի մարգագետիններով։

Խոնավ (Զավախրի) լեռնաշղթայից արևելք տարածվում են երկու լավային սարավանդ-դաշտեր՝ Ծալկայի և Լոռվա: Ծալկայի սարավանդը տեղադրված է Թոռոփի (Թրիխալերի), Վիրահայոց ծալքաբեկորավոր լեռնաշղթաների միջև։ Արևմուտքում Խոնավ (Զավախրի) լեռնաշղթան է, որտեղից հորդած լավաները փուլել են Խրամ գետի ավազանում։ սրանք դրվերիտային բազալտներ են։ Սարավանդի հարավային մասում առանձնացվում են երկու ավելի փոքր սարավանդներ՝ Գոմարերի և Բաշշիչերի։ Ծալկայի սարավանդը մասնատված է Խրամի և նրա վտակների խորը հովիտ-խնձահովիտներով։

Լոռվա սարահարքը Վիրահայոց և Բաղրամի լեռների միջև է։ Ծագումով նոյնն է, ինչ Ծալկայինը։ Խոնավ (Զավախրի) լեռներից արտավիժած լավաները ծածկել են Տաշիր-Ջորագետի ավազանը, հասել Դեբեղ և նրա հովտով իջել մինչև նրա գետաբերանը՝ Խրամի հովիտը։ Թե՛ Ջորագետը և թե՛ Դեբեղը միարձել են լավային ծածկույթի մեջ և առաջացրել խոր խնձահովիտներ (կանիոն)։ Դեբեղը ոչ միայն կտրել է լավային հաստվածքը, այլև նրա տակ՝ ներալավային ավելի հին յուրայան հասակի հրաբխածին ու նատվածքային շերտախումբը։ Լավային լեզվակը էրողիայի է ենրարկվել, և գետափին պահպանվել են մնացորդային լավային դարավանդներ։ Առավելագույն խորոյքունը հասնում է 350 մ։ Լոռվա դաշտը, որ կազմված է հիմնականում դրվերիտային բազալտներից, ամենայն հավանականությամբ ունի վերին պլիոցենյան հասակ։ Նրա հասակի վերաբերյալ կան տարրեր կարծիքներ։ Ելնելով Տաշիրի և Դեբեղի խորքային էրոզիայի պատկերից՝ վերին պլիոցենյան հասակը ավելի հավանական է քում։ Լոռվա դաշտը հարթ է, տեղ-տեղ մանր լճակներ կան, իսկ Խոնավ (Զավախրի) լեռների ստորոտում հզոր ջրա-սառցադաշտային հղկված նատվածքներ են, որ իջել են սառցադաշտային կրկեսներից։

Ախալքալաքի (Զավախրի) բարձրավանդակի շարունակությունը դեպի հարավ Աշոցքի սարահարքն է, որի կենտրոնում՝ Վերին-Ախուրյանի գոգավորությունն է 2000-2200 մ բարձրության վրա։ Արևմուտքում Եղմախսաղի շղթան է մինչև 3100 մ գազաբներով, արևելքում՝ Խոնավ (Զավախրի) լեռները։ Վերին- Ախուրյանի գոգավորությունը ծածկված է լճային նատվածքներով, այստեղ Ախուրյան գետը ծովորեն գալարվում է մինչև Սեպասար գյուղը, որտեղից մտնում է Ամասիայի խոր խնձահովիտը։

Պետք է ասել, որ ընդհանուր առմամբ Հյուսիսային բարձրավանդակը աշքի է ընկնում ուկիւթի ավելի մեղմ ձևերով, թոյլ մասնատվածությամբ (բացի կանիոններից՝ խնձահովիտներից)։ Լեռնազանգվածների բարձր մասերում

ամենուրեք տիրապետում են սառնամանիքային հողմահարումը և նրա միջոցով առաջացած քարակարկաները: Բոլոր քիչ թե շատ խոչոր գետերը ստեղծել են խնձահովիտներ, շատ դեպքերում՝ ուղղակի արկղածև, որտեղ գետահովությ լանջի ստորոտին նատվածքներ գրեթե չկան. օրինակ՝ Զորագետը Ստեփանավանից ցած (Լոռվա բերդի մոտ):

Կենտրոնական հրաբխային քարձրավանդակի մեջ են հաշվում լեռնաշխարհի այն հրաբխային կառուցվածքները, որոնք արևմուտքում սկսվում են Այծպուկունքի լեռնաշղթայի արևելյան մասից և տարածվում հյուսիսարևելք ու արևելք՝ Ծիրանյաց, Կարգաբազարի, Մեծրաց (Սողանլուի), Կարմիր Փորակ, Կարսի, Արագածի, Գեղամա-Վարդենիսի, Սյունիքի (Արևմտյան Ղարաբաղի) սարահարք-քարձրավանդակներն ու զանգվածները:

Սարահարքերի մեջ ամենից ընդարձակը Կ ա ր ս ի ն ն է: Այն շրջապատված է Կարմիր Փորակ, Սուրբխաչ, Բողոքություն կամ Յագուշա, Եղինակաղի լեռներով: Արևելյան մասում սարահարքը աստիճանաբար անցնում է Ծիրակի դաշտին: Սարահարքը ճկվածքախզպածքային ծագում ունի, ընդհանուր քերպությունը դեպքի արևելք է, ցանաքուրդվում է (դրենաժի և ենթարկվում) Կարսագետով և վտակներով: Սարահարքի միջին քարձրությունը 1800-2100 մ է. կենտրոնական մասով զուգահեռականի ուղղությամբ անցնում է Բողազկալա քարձրությունը, որի միջով Կարսագետը խոր անտեցեղենս հովիտ է ստեղծել: Գետի վերին հոսանքներում է Սելիմի իջվածքը՝ ծածկված լճային նատվածքներով: Դուրս գալով Բողազկալեից՝ գետը հոսում է հարթությամբ, ապա մտնում է խնձահովությ մեջ: Կարսի սարավանդը իր հերթին կազմված է փոքր սարահարքերից՝ Տեկորի, Տաշնիկի, Անիի, Երազգավորսի, Զարիշատի, Ցորնասարի և այլն: Ընդհանրապես, Կարսի սարավանդն ունի ոելիեֆի մեղմ ձևեր և խիստ մասնատված չէ: Այն ամբողջապես ծածկված է սև ահողերով և դեռևս իին ժամանակներից հացի շտեմարան է համարվել: Շրջապատի լեռները ծածկված են մարգագետիններով, քարձրաղիք մասերում կան հնագույն սաղցապատման ցայտուն ձևեր:

Կարսի սարահարքի հարավային մասում քարձրանում են անդեգիտային, տրախիտային Սուրբ Խաչ (Ալաղաղ) և Տեկորի կամ Արջոառիծ (Ալաջա) քազմածին հրաբուխները, և ամբողջ սարահարքը զարիքափ իջնում է դեպք Արարսի հովիտը, որտեղ գետի խորությունը սարավանդից կազմում է 1000 մ:


Սարահարքի ծայրը հարավ-արևմուտքում ջրբաժանը մինչև 2300 մ ծածկված է սոճու լավագույն անտառներով, որոնք դեռ հնուց հայտնի են եղել լավորակ շինափայտով (Սարիղամիշի անտառներ):

Արագածը Ախուրյան և Քասաղ գետերի միջագետքում է, ներկայացնում է ամփոփ զանգված շուրջ 6000 քառ. կմ հիմքով: Կառուցվածքով բրախիստիկինալ է, այսինքն՝ երկրակեղեղի այս հատվածը զբերածև քարձրացում է

ապրել, և ժամանակակից բարձրությունը այդ բարձրացման արդյունք է: Զանգվածի մակերևույթը ծածկված է տարբեր հասակի՝ սկսած վերին միոցենից մինչև վերին շորրորդական (հոլոցենի), լավաներով: Լեռնազանգվածը շրջապատված է ավելի ցածրադիր սարավանդներով՝ Արագածոտն ընդհանուր անունով՝ Շամիրամի, Կարմրաշենի, Թալինի, իսկ արևելքում՝ Ապարանի, Եղվարդի և այլն: Այս սարավանդներից լանջերը մեծ թեքությամբ բարձրանում են դեպի մերձկատարային սարավանդը, որ գտնվում է 2800-3000 մ բարձրության վրա: Սարավանդի կենտրոնական մասում բարձրանում են չորս զագաթներ՝ Հյուսիսային, Արևմտյան, Արևելյան և Հարավային: Մասն միջև գտնվում է մի խոր գոգավորություն մինչև 400 մ խորությամբ, որն անվանում են «խառնարան»: Իրականում այստեղ խառնարան չկա, գոգավորությունը, ինչպես ցույց է տվել Կ. Ն. Պաֆենիոնցը, սաոցադաշտային կրկես է: Ս. Պ. Բալյանը այն անվանում է պայրման կալդերա:

Արագածի զանգվածի ուղինեֆի կարևոր տարրերից են մերձկատարային սարավանդում ձևավորված հինգ գետերի լայն սաոցադաշտային ծագման տրոգային հովիտները, որտեղ կան եզրային մորեններ ու վերջնամո-

Նկ. 18. Արագածը  
հյուսիսից



րենները: Տրոգները ստորին հոսանքներում վերածվում են խոր խնձափական վիտների: Վերին հոսանքներում շատ բարձ ձևով պահպանված են սաղացահաշտային կրկեսներ, կարողիներ: Մերձկատարային սարավանդում, մասնավանդ դեպի հյուսիս, լայն տարածում ունեն բավկան հղկված սաղացահաշտային մորեններ:

Արագածի լանջերին ու մերձկատարային սարավանդում հանդիսավոր են բազմաթիվ էքստրուզիվ ու խարամային կոներ՝ Տիրինկատար, Արգենի, Փոքր Իրինդ և այլն: Զանգվածի ստորոտին շատ են պարագիտ խարամային կոները:

Լեռնազանգվածի բարձրադիր մասերը ծածկված են քարացրուներով՝ քարակարկաներով: Մրանց մակերևույթին ամենուր կարելի է գտնել «աճապատային այրվածքներ», ֆուլգուրիտներ (կայծակի այրվածքներ):

Լեռնազանգվածի հարավային և արևմտյան լանջերը չոր են, մարգագետնային ծածկույթը խողովակ է, շատ են քարակարկաները և լավային քարածածկ բլուրները: Մարդու գործունեությամբ, հատկապես՝ ոչխարների արածեցմամբ էրոզիան շատ է աշխուժացել, շատ հատվածներում մարգագետինն ավերվել է, ճանապարհային էրոզիան ձորավերի առաջացնան պատճառ է դարձել:

Արագածի զանգվածի ծայրամասերում մեծ տարածում ունեն տուֆը, պեմզան ու խարամը:



Նկ. 19. Արագածի Հարավային զագարին: Հեռվում՝ Հյուսիսային զագարը՝ Զախից-աց՝ հեղինակը, ակադեմիկոսներ Կ. Կ. Մարկովը, Կ. Ն. Պաֆնմիլցը

Արագածի զանգվածից արևելք, Հրազդան և Քասաղ գետերի միջազգետքում Եղվարդի սարավանդն է, որի կենտրոնում վեր է բարձրանում Արայի լեռը, որը բազմածին հրաբուխ է, նրա խառնարանը դեպի հարավ պատռված է երողիսայով:

**Գեղամա** հրաբխային վահանը միջօրենականի ուղղությամբ ձգվում է Սևանա լճի արևմտյան ափին: Սա ևս Արագածի նման տեկտոնական բարձրացում է, որը ծածկված է լավաներով: Նրա հիմքը բարդ կառուցվածք ունի, և հրաբխային ծածկոցները քողարկում են հնագույն հովիտները: Օրինակ, հին Հրազդանի հունը տեղադրված է եղել ժամանակակից Հրազդանից շատ ավելի արևելք: Գեղամա վահանի հյուսիսում Եռարմբերից արտավիճած լավաները փակել են գետի ճանապարհը, որի հետևանքով առաջացել է Սևանա լիճը:

Գեղամա հրաբխային վահանի հյուսիսային մասը ծածկված է չորրորդական դաշտներով ու անդեգիտադաշտներով, որոնք դեռ չեն հասցըել բուսածածկել և ներկայացված են քարակարկաներով. ջրի մակերևության հոսք չկա: Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում հրաբխային վահանի հարավային մասը, որտեղ Ազատ և Վեդի գետերն ու նրանց վտակները փոլրել են խոր խնձահովիտներ՝ մինչև մի քանի հարյուր մետր խորությամբ:

Գեղամա լեռնավահանի կենտրոնական մասում միջօրենականի ուղղությամբ շարված են բազմաթիվ խառամային կոներ ու էքստրուզիվ կոներ, ո-



Նկ. 20. Աժդահակի խառամային կոնը՝ խառնարանային լճով

րոնք կազմված են լիպարիտներից, դացիտներից, պիրոկլաստիկ՝ խճառավազային նյութերից-պեղյաններից: Ամենաբարձր գագարը Աժդահակն է (3597 մ), էքստրովիկ կոներից են Սպիտակասարը, Հատիսը:

Գեղամա լեռների կատարային գոտում պահպանվել են հնագոյն սաղացատման հետքեր. շատ հրաբխային կոներ պահպանել են նախկին տեսքը և քարմ հրաբուխների տպավորություն են քողնում: Մերձկատարային սարավանդը մեղմ ուղինեք ունի, շատ են քարակարկաները, կան մանր լճեր, որոնք մորենային կոտակումների արանքներում են:


Աժդահակը կանոնավոր կոնի ծև ունեցող հանգած հրաբուխ է, որի գագարին շատ լավ է պահպանվել խառնարանային լիճը, ինչի մասին արդեն նշվել է:

**Վարդենիսի** լեռնաշղթան ունի մերձգուգահեռականի ուղղություն և Սևանա լիճը եզերում է հարավից: Տեկտոնական բարձրացում է այդեւ և ծածկը ված է երիտասարդ լավաներով: Սրանք նստած են մեղողոյի և նեղունի հրաբխածին-նստվածքային խիստ ծալքավոր հիմքի վրա: Լեռնաշղթան անհամաշափ (ասիմետրիկ) կառուցվածք ունի՝ հյուսիսային լանջերը երկար են ու կորքարեք, մեղմ աստիճաններով իջնում են դեպի Սևանա լիճ: Այլ է հարավային լանջը. նախ՝ այն կարծ է, ապա՝ խիստ մասնատված՝ գետահովվածներով, որոնք խորքային էրոզիայի արգասիք են ու այժմ էլ ուժին էրոզիա է կատարվում: Եղեգիսի խնձահովված խորությունը հասնում է 1000 մ-ի:

Վարդենիսի լեռնաշղթայի մի երկար բազուկ իջնում է դեպի Արփայի հովիտը (Արփա և Եղեգիս գետերի միջագետքում), որի վրա Վայոցսար կամ Ծակգագար չորրորդական ժամանակաշրջանի հրաբուխն է: Նրա խառնարանը շատ լավ է պահպանվել:

Ինչպես Արագածը, այնպես էլ Վարդենիսի լեռները մասնատվել են գետահովվածներով, որոնց վերին հոսանքներում սաղցաշտային կրկեսներն ու տրոգները շատ քարմ տեսք ունեն, շատ լավ արտօհայտված են վերջին սաղցապատման նահանջի փուլերը՝ վերջնանորենային թմբերի ձևով: Արևելյան մասում պահպանվել են մորենային ծածկոցներ, որոնք նախավերջին սաղցապատմանն են պատկանում: Լեռնաշղթայի կատարային գոտում կան էքստրովիկ կոներ, որոնցից է Վարդենիսը: Լեռնաշղթայի արևելյան մասում առաջացել է մի փակ գոգավորություն՝ Այլախի (Ալ լճերի շրջանում), որը ծածկված է մերձալայան ու ալպյան մարգագետիններով: Չորրորդական լավայի մի քանի լեզվակներ, սկսվելով կատարային գոտուց, հասնում են մինչև Սևան: Սրանց տակից բխում են լավորակ աղբյուրներ:

**Սյունիքի** կամ Ղարաբաղի բարձրավանդակը գրադեցնում է Որտան, Թարթառ և Աղավն (Հագարի) գետերի միջագետքը: Այն ծածկված է վերին պլիոցենի լավաներով: Ընդհանուր բազալտային հիմքի վրա բարձրանում են հրաբխային գագարները՝ Մեծ Խշանասարը, Ծղուկը, Դալիկ և այլն: Շատ




ՄԵԾ ՀԱՑՔԸ ԸՍՏ „ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ“-Ի

ԱԱՀԱՄԱՆԵՐ  
Պատությունների  
Սեծ Հայրի 363-387 թ  
(ըստ „Աշխարհացոյն  
Կախալ պետությունների”  
Սեծ Հայրի Տաճարական  
պատությունների առաջնա

Մինչև 363 թ. Մեծ Հայքի կազմում գտնվուի երկրամասեր

**V** „Տու ծծական Խշանալոթեան Թագաւորին  
Հայոց Երկրամասեց 187-387 թ. ՀՀումա-  
կան Կայսրության և Սասանյան Աքտության  
առհմաններում”





Նկ. 21. Մեծ Իշխանասարը, հեռվում՝ Սև լիճը

են խարամային կոները:

Քարձրավանդակում մակերևույթին ամենուր երիտասարդ լավաներ են: Սրանք շատ տեղերում շրջապատում են ավելի հին հրաբխային կոները, որոնք ունինեն քավական մշակված են. շրջապատի լավաները միանգամայն տարբերվում են:

Դեպի հարավ և արևմուտքը Սիսիանի ու Եռարլուրների սարավանդներն են: Որոտան գետի կոնտակտում ստեղծվել են մի քանի գոզավորություններ՝ Անգեղակորի, Սիսիանի և այլն, որտեղ լավաների տակից մերկանում են հիմքի լճային նստվածքները: Սիսիանի գոզավորությունից ցած՝ Որոտան գետի խնձահովուտում, մերկանում են դիատոմային հզոր նստվածքներ: Որոտան և Թարթրա գետերը ստեղծել են խոր խնձահովվածներ: Տարեկ մոտ Որոտանի կիրճի խորությունը անցնում է 700 մ-ից:

Գորիսի շրջապատում տարածված են տուֆաբրենկչիաներ, որոնք փրփրուն են և մակերևութային շրերի միջոցով առաջացել են սնկածև «հողերություն» (նկ. 9): Նման բուրգեր հանդիպում են նաև Կապադովկիայում: Տուֆաբրենկչիաները, ինչպես ասվեց, շատ հարմար են եղել փորելով բնակարաններ շինելու համար, և Գորիսի շրջանում անհիշելի ժամանակներից այդպիսի կացարանները մասսայական են եղել: Դրանցում ջերմաստիճանային տատանումները փոքր են եղել, և ձմռանն արիեւստական տարացման կարիք չի գգացվել: Այժմ դրանք մեծ մասամբ լրված են կամ ել վեր են ածվել գոմերի:

Սյունիքի-Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի բարձր գագաթներից Խշանասարը էքստրոզիվ հանգած հրաբուխ է, որի կատարը մշակված է սառցադաշտի կողմից և այժմ լցված է ջրով (Սև լիճ): Լանջերին շատ են քարակարկառները: Դալին՝ նույնպես էքստրոզիվ կոն, մի փոքր կողքի վրա է, և մշակված է սառցադաշտերի կողմից: Հավ արտահայտված են կրկեսները, տրոգները: Կատարային մասում ամենուր քարակարկառներ են:


Հարավային հրաբխային բարձրավանդակը տարածվում է հիմնականում Արածանի գետի ավազանում՝ երկու ծալքաբեկորավոր լեռնային համակարգերի միջև՝ Ներքին Տավրոսը՝ հյուսիսում, Հայկական Տավրոսը՝ հարավում: Առանձին պատառիկով, Եփրատի աջ ափին Ուզունյալա բարձրավանդակն է: Այստեղ հրաբխային ելքեր կան՝ Զարգանի կամ Խարանա զանգվածը մինչև 2700 մ, որից հարավ Արաբկիրի լեռներն ու սարավանդներն են: Եփրատից արևելք Հարավային հրաբխային բարձրավանդակը սարահարթերի, հրաբխային զանգվածների ու նրանց միջև տեղադրված միջլեռնային գոգավորությունների համալիր է: Դարանցից են՝ Բյուրակն, Ծաղկանց, Հարքի, Սիփանի, Թոնդրակի, Նեմուրի, Դուրաղի, Արաղայի, Քայազետի, Արարատի սարահարթերն ու զանգվածները, Ալաշկերտի, Մանազկերտի, Խնոսի, Մշո կամ Տարոնի դաշտերը, որոնք եզրերում ծածկված են հրաբխային ծածկություններով, իսկ միջնամասերում՝ լճագետային նատվածքներով:

Բյուրակնի (Բինգոյլ, ինը հայերը անվանել են Սերմանց կամ Սրմանց) սարահարթը ունի մինչև 3250 մ բարձրություն: Նրա ուսումնասիրությամբ գրադարձել են շատերը՝ Արիսը, Լինչը, Օսվալդը, Սեֆերտը և շատ ուրիշներ: Բյուրակնի մասին հիացմունքով է գրում Լինչը: Նա Բյուրակնը համարում է Ասիայի տաճիքը: Զանգվածի կատարային մասից դեպի հարավ բացվում է մի աննման տեսարան՝ Սիփանը, Նեմուրը, Թոնդրակը կարծես երկնքից կախված են, իսկ ներքեւում միզապատ գոգավորություններն են:

Բյուրակնը կամ Բյուրակնյան բարձրավանդակը կազմված է անդեզիտներից, որոնք ծածկում են ավելի վաղ հասակի պիրոկլաստիկ հրաբխածին նյութերը: Զանգվածը բաժանվում է հյուսիսային և հարավային սարահարթերի: Կատարային գտունում կան մի քանի հրաբխային կոններ, նրանց միջև սառցադաշտային կրկեսներ: Սարահարթը հարուստ է մանր լճերով, որոնք մորենային թմբերի արանքներում են, ինչպես Արագածի վրա: Հենց այս լճերի առատությունից էլ ստացել է իր անունը՝ Բյուրակն, որ նշանակում է հազարավոր լճերի սարահարթ:

Բյուրակնը դեռ շատ հնուց հոչակված է եղել իր մարգագետիններով, որոնք ամառային ամիսներին իրենց են ձգում ոչխաղների հազարավոր հոտեր:

Բյուրակնը ջրաբաշխ է. այստեղից են սկսվում Արաքսը, Արածանիի և Եփրատի վտակները:



Նկ. 22. Նեմրուրի հրաբխային խառնարանը. խառնարանային լիճը

**Նեմրուրը** երիտասարդ բազմածին հրաբուփ է, խառնարանը՝ պայթման կալդերա: Այժմ էլ գործում է, ասկայն լավաներ չի արտավիժում: Խառնարանից ու լանջերից դուրս են զալիս տաք զագեր, ջրեր ու գողորշիներ: Խառնարանը 2500 մ-ի վրա է, ամենամեծը ողջ Հայկական լեռնաշխարհում՝ տրամագիծը 8 կմ, որի արևմտյան մասում խառնարանային լիճն է՝ 9 քառ. կմ մակերեսով: Խառնարանի պատերը կախված, զառիքափ ժայռերով են՝ մինչև 300 մ բարձրությամբ, կազմված թթու կազմի լավաներից (նկ. 21):

Առաջնաբար Նեմրուրը արտավիժել է բազալտային լավաներ, նոյնիսկ հոլոցենում ու պատմական շրջանում: Այս լավաներով է փակվել Վանա լճի գոգավորությունը, և ստեղծվել է լիճը: Վերջին ժայռքումը, ըստ Ֆ. Օսվալդի, տեղի է ունեցել 1441 թ.: Այժմ խառնարանում գոյություն ունեն մանր սովոր պարագին կոներ:

Նեմրուրից ոչ հեռու, պարզապես նրա լանջին, գտնվում է **Գրգուռ** ավելի հին էքստրոզիվ կոնը, որը շրջապատում են բազալտային լավաները:

**Միփան** հրաբուխը հնում կոչվել է Նեխս Մասիք կամ Ծիփան (Փալսուս Բուզանդը անվանում է Մեծ լեռն Մասիք): Հին հայերը անվանել են նաև Սարակն կամ Մասյաց լեռ: Այս հրաբուխը Հայկական լեռնաշխարհի երրորդ

բարձր գագարն է Արարատից ու Սավալանից հետո: Գտնվում է Վանա լճի հյուսիսային ափին: Նման է Արարատին, բազմածին է, շառավղած մասնատված է կատարից իշնող գետահովիտներով ու ձորակներով, սակայն նրանց միջև լեռնալանջերը ողորկ են, ի տարբերություն Արարատի, ուստի լեռնան վերելքը դժվար չէ: Կազմված է անդեզիտա-դացիտային և այլ քրու լավաներից: Արևելքում 3800 մ-ի վրա մի սարահարք կա, որի վրա բարձրանում է այսպես կոչված «երկրորդ Գրգուռը»՝ երսրուզիվ կոն, որն ուղղակի կրկնում է Նեմրութի լանջին գտնվող Գրգուռը: Սիփանի կատարային մասում կան եքստրոզիվ կոներ:

Սիփանը ծածկված է ձյան ու սաղցի շերտով: Ձյան գիծը հարավային լանջին մոտենում է կատարին, իսկ հյուսիսային լանջին գտնվում է 4200 մ բարձրության վրա: Կլիմայական ձյան գծից ցած՝ գոգավորություններում կան մանր սառցադաշտեր ու ձյան բժեր, վերջիններս 3200 մ-ից բարձր պահպանվում են շորջ տարի: Սիփանի լանջերը ծածկված են մարգագետիններով:

**Ծաղկանց (Ծաղկե)** լեռնաշղթան Սիփանի շարունակությունն է կազմում, եզերում է Վանա լիճը հյուսիսից: Սա էլ Բյուրակնի նման տեկտոնական-հրաբխային զանգված է, կազմված է անդեզիտներից, որոնք նստած են նեղագետնի նստվածքների վրա. դեպի հյուսիս Դիատինի և Արաղայի գոգավորություններն են, Դուրաղի սարահարքը: Հարավային լանջերն ավելի զարիքափ են, մասնաւում են Արծեշի վլուակներով: Լեռնաշղթայի արևելյան եզրին տարածվում է Մանազկերտի (Բանսան) գետի հովիտը՝ Պատնոցի հարքությունը: Գետն այստեղ առաջացնում է դարավանդների մի ամբողջ համակարգ:

Ըստ ավանդության և իին հունական աղբյուրների՝ Ծաղկեն գագարը ինքը Նպատ լեռն է, որտեղից սկիզբ է առել Տիգրիս գետը: Հետագայում Վանա լիճը փակվել է Նեմրութի ժայթքմանը, և կապը Տիգրիսի հետ կտրվել է:

**Թոննրակը** տեղադրված է Ծաղկանց լեռնաշղթայից արևելք՝ Եղբարը և Կոտուրի Վասպուրականի լեռնաշղթաների հատման հանգույցում: Բազմածին հրաբուխ է: Հմբրում նստվածքային ապարներ են, կան ուլտրահիմքային ներժայրուկներ, մակերևույթից ծածկված է անդեզիտային-տրախիտային երիտասարդ լավաներով: Ունի լավ պահպանված խառնարան, որտեղ կա խառնարանային լիճ: Էլիզե Ռեկլյուն (1893) գրում է, որ Թոննրակի խառնարանը 350 մ խորություն ունի: Նրա ասելով՝ Երկրաբան Թեյլորն այնտեղ դիտել է գեյզերներ: Այժմ գեյզերներ չկան, բայց շատ են տաք աղբյուրները: Թոննրակ բառը ցույց է տալիս, որ լեռը հիշեցնում է հայկական բռնիքը: Սինչև այժմ դեռ չեն դադարել ընդերքի ուժերը, և լանջերից ու խառնարանից դուրս են գալիս գագեր ու եռման ջրեր:

Թոնդրակի շրջապատում կան բազմաթիվ լավային հոսքեր ու պարագիտային կոներ, խարամ ու հրաբխային ավագ: Պարագիտ կոների շրջապատում շատ են հրաբխային ռումբերն ու լավիլները: Պատմական տեղեկություններ կան այն մասին, որ 1550-ական թվականներին հրաբուխը խիստ աշխատացել է:


Թոնդրակը դեպի հարավ մասնատված է Բերկրի (Բանդիմահի) գետով ու նրա վտակներով: Բարձր մասերում ունի սաղցապատման հետքեր: Սերձկատարային գոգավորություններում ծյունը ներկայում պահպանվում է շորջ տարի: Լեռնազանգվածի լանջերը ծածկված են հյուրալի մարգագետիններով:

Հարավային հրաբխային բարձրավանդակի ու ամրող Հայկական լեռնաշխարհի գարդը բիբլիական Արարատն է՝ Մասիսը: Մեծ Արարատը (Մասիսը 5165 մ) ծածկված է անդեգիտներով-անդեգիտա-դացիտներով, քվարց-տրախիտային լավաներով, որոնք նստած են պալեոզոյան ծալքավոր հիմքի վրա: Մինչև 2400 մ Արարատների հիմք-պատվանդանը միասնական է, ավելի բարձրում արդեն առանձին կոներ են դառնում և իրարից հեռու են 10 կմ: Մեծ Արարատի հյուսիսային լանջին՝ կատարից մինչև ստորոտ, ձգվում է մի խորը բացվածք, որը կոչվում է Վիլ Մասյաց: Փոքր Արարատը (Միս, 3925 մ) կանոնավոր կոնի տեսք ունի, էքստրուզիվ կոն է:

Արարատների հմայքը գույզ լինելու մեջ է. Արարսի ձախ ափից, մասնավորապես Երևանից դիտելիս՝ լոռ փառահեղ տեսք ունի: Աշխարհում կան շատ հրաբուխներ, որոնք Արարատից բարձր են, սակայն չունեն այդ հմայքը: Գալունիքը հարաբերական բարձրության մեջ է: Հիմքը 800 մ-ի վրա է, և լոռ մեծ թեքությամբ հասնում է 5165 մ-ի, հարաբերական բարձրությունը ավելի քան 4300 մ է: Արարատը շատ ավելի հրապուրիչ ու կախարդական է երևում Արագածի լանջերից կամ կատարից դիտելիս: Արարատյան դաշտը շատ ընդարձակ է երևում, իսկ Արարատը՝ շատ ավելի բարձր, կարծես երկնքից կախված, մանավանդ երբ դաշտը միգապատ է լինում:

Որքան որ Արարատները հրապուրիչ են հեռվից, այնքան անհրապույր են նրա լանջերը: Սրանք ամրողապես ծածկված են քարակարկաներով, բուսական ծածկություն գրեթե գորկ են, աղբյուրներ չկան, պարզապես ջրի սով է: Վերին պլիոցենում շորջ 1-2-3 միլիոն տարի առաջ Արարատներից արտավիժած լավաները Արարսի հունում պատվար են առաջացրել, և գոյացել է Արարատյան լիճը: Փոքր Մասիսի՝ Միսի արևելյան ստորոտում կան բազմաթիվ քարանձավներ:

Արարատյան լիճը գոյուրյուն է ունեցել երկար ժամանակ: Այդտեղ կուտակվել են Արարսի և նրա վտակների գետաբերուկներն ու սելավային նստվածքները: Լճային հաստվածքի հզորությունը անցնում է 400 մ-ից: Այդ նստվածքներում կան ջրատար հորիզոններ, որտեղ ճնշումային ջուր կա: Ա-



Նկ. 23. Արարատ՝ Մասիս լեռը

բարատյան դաշտի արտեզյան ավագանը հոչակված է:

Արարատը հասնում է կիմայական ծյան գծին. հյուսիսային լանջին հասնում է 4250 մ-ի, հարավային լանջին՝ 4400 մ-ի: Մեծ Արարատի կատարը, որ գմբերած է, ամբողջությամբ ձյունածածկ է տարփա բոլոր ամիսներին: Ըստ Հ. Արիխի՝ այստեղ 4 մեծ և շորո 25 մանր սաղցաղաշտեր կան, որոնցից ամենախոշորը հարավային լանջին է, որն իջնում է մինչև 2700 մ: Կան մորենային կուտակումներ:

Արարատը հայ ժողովրդի սուրբ լեռն է, նրա գոյության, ինքնության սիմվոլ և դրա համար ել կոչվել է Ազատն Մասիս: Արարատին են նվիրված բազմաթիվ լեզենյան ասույթներ, ասույթներ ու հիմներ: Արարատը Բարեհուս հրվանդանից մինչև Բերինգյան նեղուցը անցնող գծի կենտրոնում է և աշխարհում ամենից մեծ ժողովրդականությունն է վայելում: Արարատը Աստվածաշնչյան լեռ է, խորհրդանշում է մարդկության նորոգ գոյուրյունը Համաշխարհային Զրիենի եղինջի հետո: Այն համարվում է սրբազն լեռ՝ որպես Նոյի տապանի հանգրվան, մարդկության բնօրրան:

Թիրիական լեռը մեծ հետաքրքրություն է առաջացրել գիտական աշխարհում, և հատկապես վերջին դարերում բազմից փորձեր են արվել նվաճելու նրա գագարը: Դա առաջին անգամ 1829 թվականի ամռանը հաջողվեց Դորպատի համալսարանի արոֆթեսոր Ֆրիդրիխ Պարրոտին և երիտասարդ Խաչատոր Աբովյանին: Նրանից հետո բազմաթիվ արշավախմբեր են եղել էքստրուզիվ հրաբխի գագարին, ընդ որում, Խ. Աբովյանը բարձրացել է երկու անգամ: Երկրորդ անգամ նա ուղեկցել է անգլիացի ճանապարհորդ Դեմքի Սայմոնին: Արարատ բարձրացել են Հ. Վ. Արիխը, Յ. ի. Խոնդկոն, Ե. Ս. Մարկովը, Ա. Վ. Պաստորսովը, Հ. Բ. Լինչը, Ֆ. Օսվալդը, տասնյակ ուրիշներ: Վերջիններիս բվում է Սոլոկուսիչը որդու և դստեր Հովհաննեի հետ, որը մինչ այդ առաջին կին լեռնագնացն է (մեզ հայտնի), որ բարձրացել է Արարատի գագար:

Արարատը ակտիվ երկրաշարժային գոտում է: Մովսես Խորենացին նշում է 139 և 341 թվականների ահեղ երկրաշարժերի մասին, նրանից հետո բազմից երկրաշարժեր են տեղի ունեցել 1319, 1679, 1840 թվականներին և այլն: Վերջինիս ժամանակ հիմնահատակ կործանվեց հին Ակորի գյուղը՝ բնակիչների հետ միասին մնալով փլվածքի տակ:

**Հարավ-արևելյան բարձրավանդակ:** Սա չորրորդն է: Այստեղ ընդարձակ հրաբխային ծածկույթներ չկան, իրաբխային գործունեությունը սահմանափակվել է մի քանի հրաբխային կոների ստեղծմամբ: Ամենամեծ զանգվածը Սավալան է (4821 մ), լեռնաշխարհի երկրորդ բարձր գագարը Արարատից հետո: Ամբողջությամբ կազմված է բազալտներից, անդեզիտաբազալտներից, թթու լավաներից: Կան պարագիտային կոներ, որոնք երիտասարդ են: Սավալանը բազմածին է, էքստրուզիվ հրաբուխ է եղել:

Ջան գիծն այստեղ հրաբխային զանգվածի հարավային լանջին 4500

մ-ի վրա է, կատարը ծածկված է հավերժական ձյան ծածկոցով ու սացով, կան մանր սաղաղաշտեր: Շատ լավ արտահայտված են հնագույն սաղապատման ռելիեֆի ձևերը՝ կրկեսների, տրոգմերի, մորթնային կուտակումների ձևով: Մեծ տարածություն են զբաղեցնում քարակարկառները:

Հաջորդ հրաբխային զանգվածը Սոհունն է (Սեխենյ) իր երկու գագարներով՝ Հերամ և Զամ: Այս զանգվածը Արագածի ավելի խոշոր տարրերակն է: Ներկայացնում է բրախիանտիկինալ, ծածկված է անդեզիտներով, անդեզիտա-դաշտներով, որոնք սառնամանիքային հողմահարման են ենթարկվել, վերածվել են քարակարկառների: Կատարային մասում կան սաղաղաշտային ռելիեֆի բարձ ձևեր՝ տրոգմեր, կառեր, մորթնային կուտակումներ: Զանգվածի ստորոտին դուրս են գալիս առատաջուր աղբյուրներ:


Սոհուննից ոչ հեռու Կապուտան (Ուրմիա) լճի ափին գտնվում է ավելի փոքր հրաբխային կոմ՝ Չիբուկուն:

## 7. ՄԻՋԵԽՆԱՅԻՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք առիթ ունեցանք նշելու, որ Հայկական լեռնաշխարհը խիստ ջարդությած է և բրլկային կառուցվածք ունի: Տեկտոնական բարձրացումների ու իջեցումների հետևանքով առաջացել են մի շարք հորսոտեր ու գրաբեններ: Վերջիններս միջնունային գոգավորություններ են, օրինակ՝ Շիրակի, Բասենի, Կարմինի, Ալաշկերտի, Մանազկերտի, Տարոնի, Վանա լճի, Խարբերդի, Մալաթիայի, Սևանի, Արարատյան, Նախիջևանի, Կապուտանի (Ուրմիայի): Սրանց համառոտ նկարագրությունը ներկայացնում ենք ըստ ավազանների (նկ. 24):

**Ճորոխի** հովիտն ունի տեկտոնական-էրոզիոն ծագում: Մի կողմից խաղողյաց, մյուս կողմում ճորոխի և Արսիանի լեռները տեկտոնական բարձրացում են ապրել, իսկ գետն ունենալով մեծ կենդանի ուժ, խրվել է երկրակեղեկի մեջ՝ առաջացնելով 2-3 կմ խորության հովիտ: Գլխավոր հովիտ մեջ բացվում են ոչ լայն, բայց խոր, V-աձև լայնակի կտրվածքով կողդային հովիտներ: Սրանք արտաքրնան կոներում առաջացնում են հարթակներ, որտեղ այժմ գտնվում են բնակավայրեր: Սինչև 1915 թվականը հայտնի էր Խոտրջըրի հայկական գյուղախումբը, որը ոչնչացվեց բոլքերի կողմից:

Ճորոխը, գետաքերանի մոտ կտրելով Պոնտոսի կառույցը, առաջացնում է անտեղեղենատ հովիտ: Նրա վտակների հովիտներում ել կան անտեղեղենատ հատվածներ: Գետի ավազանը մեծ մասամբ ծածկված է անտառներով: Հովտում կան սողանքներ ու կարստային երևոյթներ. մերկանում են նաև ներժայրուկներ՝ հարուստ գունավոր մետաղներով: Հովիտը հանքային հարստությունների բանգարան է:



Նկ. 24. Հայկական լեռնաշխարհի միջեւնային գոգավորությունները

1. Արարատյան, 2. Նախիչևնական, 3. Սևանի, 4. Ապարանի, 5. Փամբակի, 6. Լոռվա, 7. Ծալկայի, 8. Ջավախիքի, 9. Աղողքի, 10. Ծիրակի, 11. Վասալցիսայի, 12. Արդահանի, 13. Կողի, 14. Ճորիսի, 15. Ծանխուղի, 16. Գալգեսի, 17. Կարմի, 18. Աշկալեի, 19. Դերջանի, 20. Երզկայի, 21. Տեղիկի, 22. Մապարիայի, 23. Խարբերդի, 24. Բալահովտի, 25. Շապաղջորի, 26. Տարոնի (Մշղ կամ Սուլջի), 27. Խնոսի, 28. Մանազկերտի, 29. Վաշկերտի, 30. Դուրադի, 31. Բասենի, 32. Երասխաձորի (Վաղզվանի), 33. Բայազետի, 34. Վանա լճի, 35. Կոտորի, 36. Քարվաճարի, 37. Սիսիանի, 38. Կոտ-Արարայան, 39. Անդրի, 40. Կարմիջորի, 41. Կապուտանի (Ուրմիա), 42. Վերին (Հայոց) Միջագետորի, 43. Խարորի

#### 8. ԿՈՒՐԻ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերին Կուրի (Կողի, Գյոլեհի) գոգավորությունը գտնվում է Էրուշերի բարձրավանդակի, Արսիանի, Կարմիր Փորակ լեռնաշղթաների ու Ղար զանգվածի միջև։ Ունի 1500-2500 մ բարձրություն և 250 քառ. կմ մակերես։ Խարք հատակով միջեւնային սարավանդ է՝ ծածկված լճային նստվածքներով ու ճահիճներով։ Ամռան երկրորդ կեսին վերածվում է մարգագետնի։ Այս տեղից Կուր գետը, կտրելով լավային ջրբաժանը, դրու է զալիս Արդահանի գոգավորություն, որը նույնական ծածկված է լճագետային նստվածքներով։

Այսրանը՝ Կուրի վերին հոսանքների ավազանում տեղադրված գոգավորությունների մասին։ Որպեսզի Կուրի ավազանն ամբողջացվի, հարկ է նշել Փոքր Կովկասի տարածքում նրա վտակների ավազաններում գտնվող գոգավորությունների մասին ևս։ Դրանցից են՝ Վասալցիսայի, Ծալկայի, Լոռվա, Փամբակի, Աղստեկի, Թարթառի հովիտները։

Արդահանի գոգավորությունից Կուրը մտնում է Զավախսի (Ախալքալարի) լավային սարահարքի մեջ՝ առաջացնելով խոր խնձահովիտ և դուրս է գալիս Ախալցխայի գոգավորություն։ Վերջինս մեծ չէ, շրջապատված է Մոսկվայան (Մեսխինքի), Արսիանի, Օվգարի, Թուեղի (Թրիալերի) լեռներով, հարավից Զավախսի (Ախալքալարի) հրաբխային սարահարքն է։ Գտնվում է ծովի մակարդակից 1000-1200 մ բարձրության վրա՝ Կորիխանի և Փոցխով գետերի երկու կողմերում։ Ծածկված է շագանակագույն և դարչնագույն հողերով, մշակում են հացահատիկներ, պտուղներ։ Կուրը Ախալցխայի գոգավորությունից մտնում է Բորժոմի կիրճը։

Կուրի ավագանում մյուս խոշոր դաշտը կամ ավագանը Ծալկայինն է։ Տեղադրված է Զավախսի (Խոնավ), Թուեղի (Թրիալերի) ու Վիրահայոց լեռների միջև, և տարածքը բավական մասնատված է Խրամ գետի վտակներով։ Դաշտը ծածկված է դարչնագույն ու գորշ-շագանակագույն հողերով, տեղտեղ կան անտառներ, զբաղվում են հացահատիկների, բանջարեղենի ու պտուղների մշակությամբ։

Խոշոր գոգավորություններից մեկը՝ Լոռվա գոգավորությունն է, որի հատակը պատված է լավաներով։ Բարձրությունը ծովի մակարդակից 1400-1800 մ է։ Ծածկված է լավագույն սևահողերով, մշակում են հացահատիկ, կարտոֆիլ, արևածաղկի։ Կարևոր անասնապահական շրջան է։

Բազումի և Փամբակի լեռնաշղթաների միջև Փամբակի հովիտն է 1400-1800 մ բարձրության վրա։ Բազումի լեռների հարավային լանջերը չոր են, այստեղ զարգացած են սելավային երևույթները։ Հովիտն ունի սևահողային ծածկույթ, մշակում են հացահատիկներ, պտուղներ։ Հովիտի անմիջական շարունակությունն է կազմում Աղստևի տեկստոնական հովիտը, որի կենտրոնով անցնում է Աղստև գետը։ Հովիտը մեծ մասամբ անտառապատ է, մշակում են շարաներկ կուլտուրաներ, ծխախոտ, պտղատուններ։

Փոքր Կովկասում Կուրի ավագանին պատկանող ամենամեծ գետը Թարքան է, որն ստեղծել է խոր հովիտ։ Վերին հոսանքներում՝ Սյունիքի կամ Արևմտյան Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակում գետն առաջացնում է խնձահովիտ, միջին հոսանքի շրջանում անցնում է ծալքաբեկորավոր կառուցվածքներով՝ ստեղծելով խոր և բավական լայն հովիտ։ Նրա վրա կառուցված է Սարսանգի ջրամբարը։

**Արևմտյան Եփրատի գոգավորությունները՝** Կարինի (Էրզրումի), Աշկալիի, Մամախարունի (Դերջանի), Երզնկայի, Կամախի, Մալարիայի, մեկ ամբողջ շարանով ձգվում են գետի երկարությամբ։

Կարինի գոգավորությունը Եփրատի ակունքներում է՝ 1800-2000 մ բարձրության վրա, հարավում Այծառունը է՝ մինչև 3000 մ, հյուսիսում՝ Ծաղկավետը, արևելքում՝ Ծիրանյաց լեռները։ Դեպի արևմտուք անցնում է

Աշկալեի դաշտին: Գոգավորության հատակը հարք է, տեղ-տեղ կան ճահիճներ՝ Շամբ Կարն: Այստեղ շատ են հանքային աղբյուրները:

Աշկալեի գոգավորությունը նեղ է, սեղմած է Այծպտկունքի և Կապոյտ (Կոփա) լեռների միջև. դաշտը 1600-1800 մ-ի վրա է: Ինչպես նախորդը, այս դաշտը ևս ծածկված է սևահողերով. հացահատիկային շրջան է:

Դերջանի գոգավորությունը Եփրատի ծախակողմյան Դերջանի գետ վտակի երկու ափերին է՝ 1200-1400 մ բարձրության վրա: Ծածկված է գետային ու սեղավային նստվածքներով: Հողերը շագանակագույն են, մշակում են հացահատիկ, պտուղներ:

Երզնկայի դաշտ Եփրատ գետը մտնում է խնձահովտից: Դաշտն ունի 40-45x13-15 կմ մեծություն և տիպիկ տեկտոնական գոգավորություն է՝ 1000-1100 մ-ի վրա: Ծածկված է միոցենի ծովային, ապա՝ լճագետային նստվածքներով, որոնց վրա շագանակագույն և գորշ հողեր են: Շրջապատից ենող գետակները սեղավաբեր են, դաշտի եզրին կան արտաքերման կոներ: Մշակում են խաղող, պտուղներ, հացահատիկ, բանջարեղեն:

Երզնկայի դաշտից դուրս գալով՝ Եփրատը նորից միարժվում է Ժայռային կապանքների մեջ: Սա Կամախի կիրճն է: 1915 թվականին բուրքերն այստեղ կոտորել են 25 հազար անմեղ հայեր: Հոյի յուրաքանչյուր թիզն այստեղ հայի արյունով է ներծծված:

Եփրատի ափին ամենամեծ գոգավորությունը Մալաթիային է: Հարավում Մալաթիայի լեռներն են, հյուսիսում՝ Ուզուն-յայլա բարձրավանդակը, որի մի գգալի մասը լավային սարավանդ է: Դաշտը ծածկված է միոցենի ծովային, ապա՝ լճագետային ու սեղավային նստվածքներով: Ունի 800-900 մ բարձրություն, ծածկված է բաց շագանակագույն ու կիսանապատային գորշ հողերով: Շրջապատի լեռները բավական լերկ են, զարգացած են սեղավային երևույթները: Մշակում են բամբակ, ծխախոտ, բրինձ, հացահատիկներ, մերձարև աղարձային մրգեր ու բանջարեղեններ:

Եփրատ գետի ավազանում են նրա Արևելյան Եփրատ կամ Արածանի (Մուրադ) ճյուղի երկարությամբ դասավորված գոգավորություններն ու դաշտերը: Ամենավերինը Ալաշկերտինն է. այն ծածկված է լճագետային նստվածքներով ու լավագույն սևահողերով: Դաշտի չափերն են՝ 70x30-40 կմ, գտնվում է 1800-2000 մ բարձրության վրա: Լանջախոր տափաստանային է և դեռ հնուց հայտնի է եղել հացահատիկով:

Արածանիով մի փոքր ցած՝ 1500-1800 մ բարձրությունների վրա, տեղադրված են Մանազկերտի, ապա Հարքի գոգավորությունները՝ շրջապատված իրարրխային բարձրավանդակներով: Հիմքում միոցենի նստվածքներ են, վրամ՝ լճագետային: Մանազկերտից հյուսիս-արևմուտք Խնուսի դաշտն է՝ համանուն գետի ափերին: 1600-1800 մ-ի վրա երեք դաշտերն ել ծածկված են սևահողերով, մշակում

են հացահատիկ ու բանջարեղեն, կարևոր անասնապահական շրջաններ են:

Արածանիկ դեպի ցած մեկ այլ, շատ կարևոր ու հանրահայտ Մշշ կամ Տարոնի դաշտն է՝  $90 \times 10-20$  կմ չափերով: Հարավից Սասնա լեռներն են, հյուսիսից Հարքի ու Բլեզանի ոչ բարձր լեռները, արևելքից Նեմրութն է: Գոգավորության հատակը գտնվում է 1200-1600 մ-ի վրա և, ըստ էության, Վանս լճի գոգավորության շարունակությունն է: Կենարոնով անցնում է Մեղրագետը՝ Տարոնի գետը: Կ. Ն. Պաֆենիոնցը մեծ նմանություն է գտնում Վան-Տարոնի և Սևան-Մարմարիկի գոգավորությունների միջև: Տարոնի դաշտը ամենաբարեբեր դաշտներից մեկն է՝ ծածկված շագանակագույն հողերով. մշակում են հացահատիկ, խաղող, ծխախոտ, խնձոր, տանձ, բալ, բուր, ձմերուկ, սեխ: Կիրառվում է արհեստական ոռոգում:

Տարոնի դաշտից ցած Արածանին մտնում է խոր կիրճի մեջ, առաջացնում է Գրգու ջրվեժը և անցնելով Բալահովտով դուրս է գալիս Խարբերդի դաշտ: Մինչև Եփրատին հասնելը Արածանին ընդունում է Պաղին (Փերի), Մնձուր և այլ վտակները: Խարբերդի դաշտը բնությամբ նման է Մալաթիայի դաշտին, և նշակում են նույն կուլտուրաները:

Գոգավորությունների մեկ շրբա գոյություն ունի Արաքսի ավագանում: Ամենավերինը Տվարածատափի և Բասենի գոգավորություններն են՝ համանուն դաշտերով: Բասենի դաշտը Կարինի դաշտի նմանակն է՝  $1800-2000$  մ բարձրության վրա. ծածկված է սևահողերով, կարևոր հացահատիկային շրջան է: Բասենի դաշտի դուրս գալով՝ Արաքս մտնում է Երասխածոր կոչվող խոր կիրճը մինչև 1000 մ խորությամբ: Մինչև Ախուրյանին հասնելը հովիտը մի փոքր լայնանում է Կաղզվանի մոտ, որը հայտնի է իր այգիներով:

**Միջին-Արաքսյան գոգավորություն:** Հայկական լեռնաշխարհի լեռնազդրական և տեկտոնական ամենախոշոր հորինվածքն է, որ սկսվում է Ախուրյանի գետաբերանի մոտից և հասնում է Մեղրու կիրճը: Արաքսի ծախակողման ավագանում Արագածն է, Գեղամա, Ուրծի, Վայրի, Զանգեզուրի լեռնաշղթաները, իսկ աջակողման ավագանում՝ Հայկական Պարը, Արարատները, Կոտորի (Վասպուրականի), Նոր-Շիրականի լեռները:

Գոգավորությունը պատմական անցյալում միշտ եղել է Հայոց աշխարհի սիրտը և թերևս ամենից լավ ուսումնասիրվածն է: Այն բաժանվում է երկու մեծ գոգավորությունների՝ Արարատյան և Նախիջևանի:

Արարատյան գոգավորությունը զբաղեցնում է Միջին-Արաքսյան գոգավորության հյուսիս-արևմտյան կեար՝ սկսած Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլե Դրունք կամ Գայլի Դուռ լեռնանցքը: Ունի  $100 \times 20-40$  կմ մեծություն: Դեռ շատ հիմն ժամանակերից համարվել է հայ ժողովրդի բնօրբանը: Համարվել է դրախտ երկրի վրա: Պատահական չէ, որ Հայաստան աշխարհի մայրաքաղաքներից յոթը այս գոգավորության սահմաններում են հիմնադրվել:

Այստեղ հարկ ենք համարու պարզաբանել երեք հասկացություն՝ Արարատյան գոգավորություն, Արարատյան հովիտ և Արարատյան դաշտ: Սրանք իմաստով ամենակին էլ հոնանիշներ չեն և ունեն կոնկրետ բովանդակություն:

Արարատյան գողավորությունը՝ Երկրաբանական-Երկրածևաբանական իմաստ ունի. այն ընդգրկում է շրջապատի լեռների ջրբաժանների միջև ընկած ամբողջ տարածքը: Տարածվում է Արարսի ափից մինչև շրջապատի լեռների կատարները: Գողավորության մեջ առանձնացնում ենք ունիելիքի Երեք հարկ՝ զածը լեռներ, միջին բարձրության լեռներ և բարձր լեռներ:

Արարատյան հովիտը հայոց լեզվով կրատարակած գիտական գրականություն մեջ թիշ է հանդիպում, մինչդեռ ոռութեան գրականության մեջ ամենատարածվածն է (Արարատսկա ձոլինա): Արարատյան հովիտ ասելով հասկանում ենք Արարատյան դաշտը և նրան հարող նախալեռներն ու գետային դարավանդները: Այս դարավանդները բավական լավ են ուսումնասիրված:

Արարատյան դաշտը գոզավորության ամենացածրադիրը և հարք մասն է, Արաքսի երկրորդ դարավանդը, որ ծածկված է գետային, լճային ու սելավային նատվածքներով: Այստեղ նկատվում են Արաքսի հնահուները:

Արաբատյան դաշտի լանջաֆուները տփափկ կխասանապատային են, հարքությունը ծածկված է գորշահողերով, կուլտուր-ռոռզելի հողերով և հանրապետության ամենակարևոր գյուղատնտեսական շրջանն է. մշակում են խառող, ալի մրգեր, բանջարեղեն, խորդեմի և այլն:

Արարատյան դաշտում լճագետային նստվածքների տակից դորս են զալիս մնացուկային լեռներ, որոնք հին են: Կան նաև հրաբխային մնացուկներ: Դաշտի տակ հզոր նստվածքներում կան արտեզյան ջրեր, որոնք լայնորեն օգտագործվուն են:

**Նախիջևանի գողակորություն:** Այստեղ ամենից հարք մասը Նախիջևանի դաշտն է, որու իր հերթին բաժանվում է երեք ավելի մանր դաշտերի՝ Նորաշենի, բուն Նախիջևանի և Օրդուրաղի: Սրանք ծածկված են գետաբերուկներով: Դաշտի եզրային մասերում արտաքրման կոներ են. շատ զարգացած են սելավները: Դաշտի իրանական հատվածը Արաքսի աջ ափին ավելի ընդարձակ է: Նախիջևանի հովիտը լայն առումով ընդգրկում է գողակորության ցածրադիր նախալեռնային լեռնազանգվածները, որտեղ տարածվում են Արաքսի դարավանդները: Գետային դարավանդները դեպի Արաքս աստիճանաբար ցածրանում են և ի վերջ հավասարվում ցածրադիր հարթությանը: Այստեղ պարզ արտահայտված է «մկրատի օրենքը»: Դա ցույց է տալիս շըրջապատի լեռների տեկտոնական բարձրացումը:

Բուն Նախիջևանի դաշտից հարավ մերկանում է Ներամի բարձրացումը և Դարվա լեռը՝ մինչև 1923 մ բարձրությամբ: Այս հորատող կտրված է Արարսի ու ճրա աջակողոյնան Կոտուր Վահակի՝ մինչև 1000 մ խորության անտեղեղենս հովտով:

Նախիջևանի գոգավորության լեռնալանջերը խիստ մասնատված են գետահովիտներով: Արփան, Նախիջևանի, Մակովի գետերը, Երնջակի գետը (Ալինջան), Գլիանը (Բլավի կամ Բստաձորի գետը), Տղմուտը՝ իրենց վտակներով, մասնատել են ուղիեցքը:

Մի փոքր ավելի երիտասարդ է Զովֆա-Օրդուրադի գոգավորությունը. այստեղ ընդարձակ տարածություն են զբաղեցնում սելավային-պրոլյուվիալ նաստվածքները:

Նախիջևանի ամբողջ գոգավորությունը ունի չոր ցամաքային կլիմա, որտեղ առանց արիեստական ոռոգման բերք ու բարիք ակնկալի հնարավոր չէ: Օգտագործվում են թե՛ Արաքսի և թե՛ նրա վտակների ջրերը:

Արաքսի ավազանում են նաև նրա մի քանի վտակների ափերին տարածվող դաշտերը և գոգավորությունները: Դրանցից են՝ Վերին-Ախուրյանի կամ Աշոցքի, Շիրակի, Ապարանի, Արփայի, Սիսիանի:

Վերին-Ախուրյանի կամ Աշոցքի գոգավորությունը ըստ էության սարահարք է՝ շրջապատված Եղնախանի, Խոնավ (Զավախքի), Զարիշատի (Չղլըրի) լեռներով, ունի մինչև 2000 մ բարձրություն: Հատուկը ծածկված է լճագետային նաստվածքներով ու սևահողերով. մշակում են հացահատիկներ ու ցանովի խոտարույսեր: Այնուհետև Ախուրյանը միարժում է լավային ծածկոցի մեջ ու լավային կապանքներից դուրս է զայխ Շիրակի դաշտում Մարմաշենի մոտ:


Շիրակի դաշտը գտնվում է համանուն գոգավորության հատակին, ծածկված է լճագետային հզոր նաստվածքներով ու տուֆի շերտով (իգնիմբրիտ) և հզոր սևահողերով: Անձնախոտը ձևաբանուակը Ախուրյանի հովիտն է: Լճագետային նաստվածքների մեջ այն լավ մշակված է. հյուսիսում ունի մինչև 150 մ խորություն, դեպի հարավ խորությունը փոքրանում է: Հովտում գոյություն ունեն չորս դարավանդներ: Երրորդ դարավանդը հենց Շիրակի դաշտն է, որի վրա է Գյումրին: Շիրակի դաշտը չոր տափաստան է, մշակում են հացահատիկ, բանջարեղեն, ոռոգվում է Շիրակի ջրանցքի միջոցով: Ախուրյանը աջից ընդունում է Կարսագետը և այլ մասն վտակներ: Ախուրյանի վրա կառուցված է համանուն ջրամբարը, որի ջրերը օգտագործվում են Թուրքիայի հետ համատեղ:

Արաքսի ավազանի խոր հովիտներից են Արփայի, Որոտանի, Ողջիի հովիտները: Արփայի հովիտը Վայրն է: Հյուսիսում Վարդենիսի լեռներն են, հարավում՝ Վայրի ու Զանգեզուրի լեռները, արևելքից՝ Սյունիքի (Արևմտյան Ղարաբաղի) հրաբխային բարձրավանդակը: Վերին հոսանքներում Արփան անցնում է հրաբխային ծածկույթի միջով, միջին և ստորին հոսանքներում՝ ծալքաբեկորավոր կառուցվածքներով, ավազանում ամենուր տարածված է թեղենդ ուղիեցքը:

Որոտան գետի միջին հոսանքներում Սիսիանի գոգավորությունն է՝ նախկին լճային ավազանը, որտեղ հզոր լճային նաստվածքներ կան, հայլեսապես դիատոմիտներ: Գետը, կտրելով լավային ծածկոցն ու լճային նաստվածքները,

ստեղծել է 700 մ խորության խնձահովիտ: Սիսիանի գոգավորությունը ծածկը ված է սևահողերով, հացահատիկային շրջան է: Շրջակա լեռներում հյութա-թ մարզագետիններ են:

Ողջի հովիտը տեկտոնական-էրոզիոն ծագումի է, այստեղ սելավային երևույթները հաճախակի են, գետի ավազանի մեծ մասը անտառածածկ է:




Նկ. 25 Սևանա լիծի ավազանի բլոկ-լինիագրամը

Հայկական լեռնաշխարհի գոգավորություններից մի քանիսում գոյություն ունեն լճեր. լճերի ջրաբանությանը մենք դեռ անդրադառնալու ենք. այստեղ միայն ակնարկենք լճային գոգավորությունների նասին, որպես լեռնազրական օբյեկտներ: Խոչոր լճային գոգավորություններն են՝ Սևանի, Վանի, Կապուտանի (Ուրմիո), Ծովակ Հյուսիսոյի (Չղըրքի) գոգավորությունները:

**Սևանի** գոգավորությունը Արաքսի ավազանում է (նկ. 25): Գոգավորու-

թյան, այսինքն, լճի ավազանի տարածքը 4891 քառ. կմ է, առանց լճի՝ 3475 քառ. կմ (մինչև մակարդակի իջեցումը), 19 մ մակարդակի իջեցումից հետո՝ շամարի տարածքն ավելացավ շուրջ 170 քառ. կմ: Գոգավորությունն ունի տեկտոնական ծագում, մինչդեռ լճացումը տեղի է ունեցել լավային արգելափակման հետևանքով: Ավազանի հյուսիս-արևելյան մասը ծալքաբեկորավոր ծագում ունի՝ Արեգունի, Սևանի և Արևելյան Սևանի լեռներն են՝ մասնաւոված գետահոլիստներով ու սելավային հոսքերով: Ավազանի հարավ-արևմտյան մասը ծածկված է հրաբխային ծածկոցներով: Դրանք Գեղամա և Վարդենիսի լեռներն են ունիելի համեմատաբար մեղմ ձևերով: Արևելյան ափի երկարությամբ անցնում է տեկտոնական խօսքածք, և Արեգունի-Սևանի անտիկլինալի արևմտյան թևը սուզված է Սևանի տակ: Լիճը մի ժամանակ եղել է ծովի մի հատված, այնուհետև ծովային նստվածքները ծածկվել են լճային նստվածքներով: Ծովա-լճային նստվածքների հզորությունը անցնում է 1000 մ-ից:

**Վանա լիճ** գոգավորությունը (նկ. 26) Հայկական լեռնաշխարհի խոշոր գոգավորություններից է՝ 17,8 հազ. քառ. կմ մակերեսով, առանց լճի՝ 14040 քառ. կմ: Հարավից Հայկական Տավրոսն է, անմիջապես լճի ափին բարձրանում են Ռշտունյաց, Շատախի և Կանգվարի լեռները: Հարավային ափին



Նկ. 26. Վանա լիճ ավազանի բլոկ-դիագրամը

Աղթամար կղզու դիմաց Արտոսն է (3475 մ), որի գագարին մինչև աշուն պահպանվում են ձնաբծեր:


Լճի հյուսիսային ափին Բզմունյաց լընդհանոր անոնը կրող լեռները են՝ Սիփան հրաբխային զանգվածը, Ծաղկանց լեռնաշղթան՝ Ծաղկեո կամ Ծաղկո, Թուղրակ հրաբխային զագաթներով: Մի փոքր հյուսիս՝ Արածանիի ակունքներին մոտ, բարձրանում է Նպատ կամ Աղի պատմական լեռը, որի ստորոտում հեթանոսության շրջանում ծիսակատարություններ էին լինում:

Կանի գոգավորության արևելյան մասում Վասպուրականի (Կոտորի) լեռնաշղթան է, որի բազուկները տարածվում են արևմուտք, իջնում դեպի լիճ: Դրանցից են՝ Ծերկրի, Կուլի, Սևջրի լեռնաճյուղերը: Կուլիի լեռնաշղթայի վրա է Վարագա սրածայր լեռնազագարը 3250 մ բարձրությամբ, որտեղ կան բազմաթիվ հուշարձան-սրբավայրեր: Գոգավորությունը արևելքից փակվում է Մենգենն լեռնաշղթայով:

Կանա գոգավորությունը Տարոնից բաժանվում է Նեմրուր և Գրգուր հրաբխային զանգվածներով: Լճին գրադեցնում է գոգավորության արևելյան մասը: Լճի բարձրությունը ծովի մակարդակից 1720 մ է, մինչդեռ շրջապատի լեռները լճից բարձր են 1500-2300 մ: Լճավազանի հյուսիսային մասը ծագում-նարանորեն խիստ տարբեր է հարավային և արևելյան մասերից: Առաջինները հրաբխային են, իսկ երկրորդը՝ ծալքաբեկորավորը: Լճի մասին ավելի մանրամասն կիսումի ձեռնարկի ջրաբանության բաժնում: Այստեղ նշենք, որ Վանա լճի ավազանը հայի համար ունեցել է վճռորոշ նշանակություն, և պատահական չէ, որ այստեղ են կառուցվել բազմաթիվ ուստատեղիներ ու սրբավայրեր՝ Ռատանը Արտոսի լանջին, Սուրբ Նշան և Սպիտակ վանքերը, Արտամետը, Վարագա Սուրբ Նշան և Սուրբ Գրիգոր վանքերը, Մեծոփա վանքը Արծեղում և այլն: Սրանց մեջ ուրույն է Արքամար կղզու վրա 10-րդ դարում (915-921 թթ.) կառուցված Սուրբ Խաչ մինչև օրս կանգուն եկեղեցին (ճարտարապետ՝ Մանվել), որը ճարտարապետության տեսակետից համաշխարհային նշանակության կորող է և հիմացմունք է պատճառում այցելուներին:

**Ուրմիայի գոգավորությունը** (նկ. 25) Հայկական լեռնաշխարհում ամենախոշորն է: Ամբողջ գոգավորությունը 50 հազ. քառ. կմ է, որից ոչ ավելի քան 35-40 հազ. քառ. կմ-ը մտնում է Հայկական լեռնաշխարհի մեջ: Ուրմիու լճի մեջ քափող Ջողասու գետի ավազանը լճից հարավ տիպակի իրանական է, ուստի այն Հայկական լեռնաշխարհի մեջ չի մտնում:

Գոգավորության արևմուտքում Զագրոշի կամ Զագրոսյան համակարգն է՝ բարձրաբերձ զագաթներով: Լեռնաշղթայի առանձին ճյուղերը իջնում են դեպի արևելք, մոտենում են լճին, նրանց միջև խոր հովիտներ են, չորային պայմաններում հաճախակի են սելավային արհավիրքները: Լճից հյուսիս Նոր-Շիրականի լեռնաշղթան է, ավելի արևելք՝ Քասարե (Քեսարե) կամ Քո-



Նկ. 27. Ուրմիա լճի ավազանի բլոկ-դիագրամը

շաբաղ ծալքաբեկորավոր շղթան և Սավալան (Սաբալան) հրաբխային զանգվածը: Չուզահեռականի ուղղությամբ ձգվող այս լեռնաշղթաները ջրբաժան են Արարսի և Ուրմիայի միջև: Գոգավորության հարավում Սոհուն (Սեխնան) հրաբուխն է և Բողզուշ լեռնաշղթան:

Կապուտանի (Ուրմիա) գոգավորությունը տեկտոնական ծագում ունի, այն փաստորեն մի սարահարթ է 1300 մ բարձրությամբ: Ծրջապատի լեռները հասնում են 3500-4100 մ-ի: Ըստ Կ. Պաֆենհոլցի (1950)՝ միոցենում շուրջ 10-15 միլիոն տարի առաջ Ուրմիայի ու Կարմիրջոր (Աջի) գետի գոգավորությունը ելք է ունեցել դեպի հարավ-արևելք և Ամարդոս (Կըրլուզեն) գետով կապվել է Կասպից ծովի հետ: Հետազոտում այդ կապը կտրվել է Սոհունի արտավիճման արգասիքներով:

Ուշագրավ է այն, որ լճափից հեռու Կարմիրջոր և այլ գետերի հովիտներում գոյություն ունի մինչև 250 մ բարձրության դարավանդ և կարծիքներ կան, որ Կարարափա լեռնանցքով (1782 մ) լինը մի ժամանակ կապ է ունեցել Արարսի հետ:

Բնական պայմաններով Կարմիրջոր գետի և Ուրմիայի ավազանները մեծապես նման են Նախիջևանի գոգավորությանը: Այստեղ չոր կլիմայական պայման-

Աերում ինտենսիվ մեխանիկական հողմահարում է կատարվում, տեղումներն ունեն տեղատարափ բնույթ, որի հետևանքով շատ են սելսվեները, ուղիեցում տիրապետում են բեղենմերը: Եմ շորջը աղոտաներ են, մի փոքր ավելի բարձր՝ գորշակներ, ապա շագանակագույն հողեր և մերձալպյան ճնամարզագետնային հողեր:

Գոգավորությունը ցամաքային կլիմայի պատճառով չոր է, առանց արհեստական ոռոգման դաշտավարությունը հնարավոր չէ:

Կապուտանի (Ուրմիա) ավագանը հարուստ է հանածոներով ու հանքային ջրերով: Հոչակված է մարմարը, աղը, գիպսը, կրաքարը, բազալտը:

Ավագանը ակտիվ երկրաշարժային գոտում է (1779 թ. երկրաշարժից Թավրիզում գոհիվել է 100 հազար մարդ):

Կապուտան (Ուրմիա) լճի ավագանից արևելք Հայկական լեռների (Ղարադաղի) և Քասարե-Սավալան լեռնաշղթաների միջև գտնվում է Ահարի տեկտոնական հովիտը, որի միջով հոսում է Ահարը: Նրան արևելքից ընդառաջ է գախս ու միախառնվում Սևջուրը և ապա միացած՝ ուղղվում դեպի Արար: Ահարի հովիտը ծածկված է ցամաքային ծագումի նստվածքներով: Ահարի հովիտից դեպի Արարի հովիտ խճուղին անցնում է Դրունը Հայոց լեռնանցքով:

Ահա այսպիսին է Հայկական լեռնաշխարհի լեռնագրության համառոտ ակնարկը: Այժմ անցնենք ուղիեցի ձևավորման մի քանի հարցերին:

### III. ՈԵԼԻԵՖԻ ԶԵՎԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Ինչպես նկատեց ընթերցուղը, լեռնագրական բոլոր խոշոր տարրերը՝ լեռնաշղթաներն ու գոգավորությունները տեկտոնական ուժերի արգասիք են. դրանք ստեղծվում են երկրի խորից զանգվածների դրւու մղման միջոցով: Մրանց հակառակ արտածին ուժերը, որ Արեգակի Եներգիայի ածանցյալներն են, քանդակում են ստեղծված տեկտոնական խոշոր կառույցները, լեռնալանջերին առաջացնելով ձևաբանակներ՝ խոր կիրճեր, ձորակներ, սառցադաշտային կրկեսներ, սողանքներ, վլվածքներ, կուտակումային ձևեր՝ արտաքրման կոներ, ցամաքային նստվածքային ծածկոցներ և այլն: Արտածին ուժերի միջոցով մշակվում են մեզոռելիեֆը և միկրոռելիեֆը: Այս ուժերի միջոցով ստեղծված ձևաբանակները իրենց մասշտաբներով չեն կարող մրցել տեկտոնիկայով ստեղծված ուղիեցի խոշոր ձևերի հետ, ուստի Հայկական լեռնաշխարհի ժամանակակից լեռնագրությունն ու ուղիեցի խոշոր ձևերը, այնուամենայնիվ, տեկտոնիկայի արգասիքն են:

Տեկտոնական դարավոր բարձրացումները մարդու համար նկատելի չեն, որքան էլ որ զորեղ լինեն (բացի երկրաշարժերից): Մինչդեռ արտածին ուժե-

թի միջոցով առաջացող երևույթները շնայած մասշտաբներով փոքր են, բայց հաճախ հանկարծակի են ու անսպասելի և կարող են աղետաբեր լինել:

Եթե ուսումնասիրում ենք որևէ տարածաշրջամի ռելիեֆը, ապա առաջին հերթին ուշադրություն ենք դարձնում նրա ձևաչափական (մորֆոմետրիական) առանձնահատկություններին: Դրանք չորսն են՝ լեռնալանջերի թերությունը, ռելիեֆի մասնատման խտությունը (գետային ցանցի խտությունը), մասնատման խորությունը և լանջերի կողմնադրությունը: Հայկական լեռնաշխարհի անդրկովկասայան սեկտորում այդ կարգի մանրամասն ուսումնասիրություններ կատարվել են: Թուրքական և իրանական հատվածների վերաբերյալ մենք տվյալներ չունենք և նրանց մասին կարող ենք գրել քարտեզների վերլուծման, տիեզերական նկարների և նմանակության մերով օգնությամբ:

Ամենամեծ,  $40^{\circ}$ -ից ավելի թերությունները հատուկ են հնագույն ծալքաբեկորավոր լեռներին, հատկապես նրանց բարձր մասներին: Բարձրության մեծացման հետ զուգընթաց՝ մեծանում է նաև լանջերի թերությունը, որպիսին չի նկատվում հրաբխային ծածկույթների շրջանում: Հրաբխային քարձրավանդակների միջնամասերում, հակառակը՝ թերությունները փորրանում են (Արագած, Գեղամա լեռներ և այլն): Մեծ թերություններով աշքի են ընկնում Պոնտական, Կորդվաց, Զանգեզուրի, Մոավի, Սիափորի, Սննդուրի և այլ լեռնաշղթաներ:

Սրանց հակառակ, ամենափոքր թերությունները նկատվում են նախկին լճային գողավորությունների հատակին, մեկ էլ՝ վերին պլիոցենյան հրաբխային սարավանդներում: Ինչպիսի հակադրություն, այդ նույն սարավանդներում սղոցված խնճահովտիտներում՝ լանջերի վերին մասերում, թերությունները մոտենում են ուղղահայացին, նույնիսկ շատ տեղերում ժայռերը կախված են:

Հայկական լեռնաշխարհի Սիջնաշխարհում տիրապետող թերությունները  $15-30^{\circ}$  են: Մինչև  $15-16^{\circ}$  թերությունների վրա դեռևս վարուցանք կատարվում է, իսկ ավելի մեծ թերությունները շատ հատվածներում մշակվում են դարավանդավորման միջոցով:

Ուշիերեքի ձևաչափական մյուս պարամետրը՝ մասնատման խտությունը արտահայտվում է կմ/կմ<sup>2</sup> չափողականությամբ, այսինքն, թե մեկ քառ. կմ մակերեսի վրա քանի կմ երկարության գետ կա (կամ հովիտ): Մեծ մասշտաբի տեղագրական քարտեզները ցույց են տալիս, որ ծալքաբեկորավոր հին լեռները շատ են մասնատված, մինչեւ երիտասարդ հրաբխային ծածկույթները՝ բույլ: Միայն Հայաստանի Հանրապետության տարածքում մենք հաշվել ենք 13000 կմ երկարությամբ մշտական հոսք ունեցող գետային ցանց, իսկ Հայկական լեռնաշխարհում՝ շուրջ 150 հազ. կմ: Գետային ցանցի կամ մասնատման) խտության գործակիցը կլինի 0,4-0,5 կմ/կմ<sup>2</sup>:

Մասնատման ամենամեծ խտությունը նկատվում է Պոնտոսի լեռների հյու-

սիսային լաճջերին: Այստեղ խտորքյան գործակիցը հասնում է 1,5-2 կմ/կմ<sup>2</sup>: Ամենից բույլ խտորքյունը միջլեռնային գոզավորությունների հատակին է՝ 0,0-0,2 կմ/կմ<sup>2</sup>: Թույլ խտորքյամբ աշքի են ընկնում նաև երիտասարդ հրաբխային ծածկույթները: Մեծ խտորքյուն նկատվում է ծալքաբեկորավոր լեռների բարձրադիր մասերում, մինչդեռ միջին բարձրության լեռներում գետահովտներից շատերը միանում են, ուժեղանում է գետերի կենդանի ուժը, բայց խտորքյունը փոքրանում է: Համեմատաբար մեծ խտորքյամբ աշքի են ընկնում Կորդիզ, Զանգեզորի, Դերսիմի, Սիսիվորի, Արցախի և այլ լեռնաշղթաները:

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում չոր կիմայական պայմաններում զարգանում է ոելիեֆի բեղենդ (վատահող) տարատեսակը: Այսինքն՝ թեև լեռնալանջերը մասնատված են անհամար մանր ձորակներով (Ակ. 15), սակայն նրանք միայն անձրևների ժամանակ են ջուր տանում և ամբողջ տարին չոր են: Մենք վերևում գետային ցանցի խտորքյունը ներկայացրինք մըշտական հոսք ունեցող գետային ցանցի հաշվով: Եթե բեղենդներում հաշվենք ձորակային ցանցի խտորքյունը, ապա այն կստացվի 4-6 կմ/կմ<sup>2</sup>:

Ոելիեֆի մասնատման խորությունը ցույց է տալիս գետի հունի խորությունը մոտակա ջրբաժանից: Մասնատման խորության ամենամեծ տվյալները նկատվում են Կորդիզ լեռներում, որոնք տեկողնական բարձրացում են ապրում, իսկ գետերը անդադար սղոցում են բարձրացող լեռնաշղթաները՝ ստեղծելով ամտեցելենատ հովիտներ: Որոշ հատվածներում հովիտների խորությունը հասնում է 2,5-3 կմ-ի: Մեծ խորության հովիտներ տեսնում ենք նաև Զանգեզորում, Բարձր Հայքում, Շորոխ և Գայլգետ գետերի հովիտներում:

Յուրահատուկ են հրաբխային ծածկոցներում սղոցված խնձահովտները (կանիդոնները): Հրաբխային սարավանդները բույլ են մասնատված երիտասարդ լինելու շնորհիվ: Բայց եթե մի քանի գետակներ միանալով կազմում են հոմեկու հոսք, ապա պլիոցենյան լավաների կուրծքը սղոցված է մինչև 700-1000 մ խորության խնձահովտներով: Դրանց օրինակներն են՝ Արաքսի հովիտը Կաղզվանի հատվածում, Դերեղի, Կորի, Որտանի, Արփա, Արածանի գետերի խնձահովտները, Արևնտյան Եփրատինք՝ Կամախի կիրճում և այլն:

Լաճջերի կողմնադրությունը շատ կարևոր դեր ունի լաճջախտների ձևափորման գործում: Լեռնաշխարհի արևմտյան մասում լեռնաշղթաները ձգվում են արևմտութիւն արևելք. նշանակում է՝ զլխավոր կողմնադրությունները հյուսիսային ու հարավային են: Արևելքում, հատկապես՝ Փոքր Կովկասում, լեռնաշղթաները ձգվում են հյուսիս-արևմտութիւն հարավ-արևելք, ուստի զլխավոր կողմնադրություններն են հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան: Սակայն, եթե դիտում ենք երկրորդական կողմնադրությունները, այսինքն՝ զլխավոր լեռների ճյուղավորությունները, դրությունը բարդանում է: Օրինակ, Պոնտական լեռնահամակարգի հյուսիսային լաճջերում ձորերն այնքան խիստ են, որ ավելի շատ մակերես զբա-

դեցմում են արևելյան ու արևմտյան կողմնադրության լեռնալսնչերը:

Հայկական լեռնաշխարհում հյուսիսային կողմնադրություններում խոնավորյումը երկար է պահպանվում, և անտառները մեծ մասամբ հյուսիսային լանջերում են (բացառությամբ Տավրոսի հանակարգի, որտեղ հարավային լանջերին են տեղումները առատ): Միջնաշխարհում հարավահայաց լանջերը չոր են, սելավները հիմնականում հարավային լանջերում են: Հողարտսական ծածկույթը հարավային լանջերին բույլ է զարգացած:

Հայկական լեռնաշխարհի ժամանակակից ռելիեֆի մշակման ու զանազան ձևերի ստեղծման պրոցեսում մասնակցություն ունեն բազմաթիվ ազդակներ: Դրանք մենք բաժանում ենք հինգ խմբի՝ 1. հողմահարման պրոցեսներ (մեխանիկական, կենսաթիմիական հողմահարում, հողմահարման կեղևի ձևափորում), 2. տեղատարման պրոցեսներ (ջրային երողիա, հողի երողիա, սելավներ, սովորովն և կարստային երևոյններ, էռալյին պրոցեսներ, ափաքերում, սառցաքերում), 3. ծանրահակային (գրավիտացիոն) պրոցեսներ (դեֆլյուկցիա, փլվածքներ, սողանքներ, սովորվուկցիա, ձնահյուսեր), 4. կուտակումային պրոցեսներ (ծովային նատվածքագոյացում, լճային նատվածքագոյացում, ցամաքային նատվածքագոյացում), 5. մարդածին (անքրոպոգեն) պրոցեսներ:

Նշենք, որ մինչև այժմ ռելիեֆագոյացման մեջ հիմնականում մեծ ուշադրություն է դարձվել տեկտոնական գործոնին և երկրաբանները խոչըն ավանդ ունեն այս գործում: Արտածին պրոցեսներին թիվ ուշադրություն է դարձվել, և դա արդարացվում է նրանով, որ ուսումնասիրությունները կատարվել են փոքր և միջին մասշտարով, որտեղ ձևանակները մեծ դեր չեն ունեցել: Հայաստանի Հանրապետությունում վերջին 2-3 տասնամյակներում արդեն ուսումնասիրություններ են ընթանում նաև ռելիեֆի ձևաբանական ծագումնաբանական հարցերի ուղղությամբ (Ս. Պ. Բալյան, Հ. Վ. Գարբրիելյան, Խ. Ե. Նազարյան, Վ. Ռ. Քոյնագրյան, Ֆ. Ս. Գևորգյան և ուրիշներ): Ստորև համառոտակի անդրադառնանը ձևաբանական տեղեկագիր ստեղծման ազդակներին:

**Հողմահարումն** այն պրոցեսն է, երբ արտածին ազդակների ներդրությամբ մայր ապահները կերպարանափոխվում են, բեկորվում, լուծվում ջրի մեջ, օրգանիզմների ու օրգանական թրուների ազդեցությամբ կորցնում նախկին տեսքը: Շատերի մոտ տարածված է այն միտքը, թե հողմահարումը միայն քայլքայում է, այդպիսի պատկերացումը թերի է: Հողմահարման պրոցեսում առաջանում են նաև երկրորդական միներալներ: Գիտական աշխարհում հողմահարման պրոցեսը ներկայացվում է որպես հիպերգենեզ, և մեծ տեղ է տրվում երկրորդական միներալների սինթեզին:

Հողմահարումը ստվորաբար բաժանում են երեք տիպի՝ մեխանիկական կամ ֆիզիկական, քիմիական և օրգանական: Սակայն մաքուր քիմիական

կամ օրգանական հողմահարում հազիվ թե տեղի ունենա, այս երկուսը միասին են հանդիս գալիս, ուստի հարմար է անվանել կենսաքիմիական հողմահարում:



Նկ. 28. Լավաների մեխանիկական հողմահարում

Ֆիզիկական կամ մեխանիկական հողմահարումը ապարների մեխանիկական մակրատումն է, թեկորատումը, որի էներգետիկ առքյուրը Արեգակն է: Այս տիպի մեջ առանձնացնում ենք ջերմային՝ և սառնամանիքային հողմահարումները: Ջերմայինի դեպքում Արևի ճառագայթման շնորհիվ ցերեկը ապարի մակերևույթը տարանում է, գիշերը՝ պաղում, տեղի է ունենում ծավալային փոփոխություն, ապարի վրա մասն ճեղքեր են առաջանում: Արարատյան, Նախիջևանի, Կապուտանի (Ուրմիայի), Մալաթիայի գոգավորություններում մուգ գույնի ապարները անոնը ցերեկային ժամերին տարանում են մինչև  $70\text{--}75^{\circ}$ , գիշերը ջերմաստիճանը իջնում է մինչև  $10\text{--}15^{\circ}$ : Ջերմային հողմահարումը ուժգին է բուսագործք, շրային լեռնալանջերին:

Սառնամանիքային հողմահարումը այն պրոցեսն է, երբ հալոցքային ջուրը մտնում է ապարի ճեղքերի մեջ, գիշերային ժամերին սառչում. սառնիսխ ծագալը մեծանում է, և ճեղքերը լայնանում են: Սառնամանիքային հողմահարումը շատ ուժգին է արտահայտված բարձր լեռնային զանգվածներում, որտեղ ապարները մերկ են ու ճեղքութված: Հրաբխային ծածկոցների բարձր մասերը ծածկված են այդ տիպի հողմահարման արգասիք հանդիսացող չինգիներով՝ քարացրուներով:

Քիմիական հողմահարումը ինտենսիվ արտահայտված է խոնավ, ջրառատ երկրներում: Հայկական լեռնաշխարհում այն արտահայտված է Պոնտական լեռների համակարգում և Տավրոսի հարավային լանջերի միջին ու բարձր լեռներում: Միջնաշխարհում այն բույլ է: Այստեղ հիմնական գործոնը

մբնոլորտային ջրերն են, որ, իրենց մեջ լուծած ունենալով ածխաքրու զագ, թթվուրյուն են ձեռք թերում, որով և ազդում են հեշտ լուծվող կրաքարերի, դուլոմիտների ու այլ ապարների վրա և դրանք որոշ չափով լուծում:

Քիմիական հողմահարման մի տարատեսակն է աղային հողմահարումը, որը զարգացած է Կապուտանի ավազանում, մասսամբ նաև Արարատյան ու Նախիջևանի դաշտերում: Աղերը, մասնավորապես՝ կերակրի աղը, գիշերը օդից կլանում են խոնավուրյուն և հաճախ դառնում են աղաջուր, կամ թերև անձրևից հետո մտնում են ապարի ճեղքերի մեջ: Չուրը գոլորշանում է, աղերը՝ բյուրեղանում են, ընդարձակելով ծավալը, լայնացնում են ճեղքերը:

Կենսարիմիական հողմահարումը տեղի է ունենում օրգանական թրուների, մանրօրգանիզմների (միկրոօրգանիզմների) անմիջական ներգործությամբ: Մանրօրգանիզմներ ամենուրեք կան: Նույնիսկ Արագածի զագարին ապարի մակերևույթից վերցրած նմուշում 1 գ հողմահարման կեղևում հայտնաբերվեցին հարյուր հազարավոր բակտերիաներ և այլ մանրօրգանիզմներ: Մանրօրգանիզմները ամենից ինտենսիվ ներգործում են ապարների վրա խոնավ և տար շրջաններում Պոնտական լեռների հյուսիսային լանջերին, Տավրոսի հարավային լանջերին, մասսամբ Փոքր Կովկասի արևելյան մասերում: Միջնաշխարհում նրանց ազդեցությունը համեմատաբար բույլ է, բայց զգալի: Օրինակ, հրաբխային շրջաններում կարբոնատային հողմահարման կեղևի ստեղծման գործում մեծ է մանրօրգանիզմների դերը:

Երբ լեռնալանջերին առաջանում է հողաբուսական ծածկույթ, ապա մայր ապարները մենակուսանում են. արտածին ազդակները այնչափ ուժգին չեն կարող հողմահարել, ինչպես բուսագույր լանջերի վրա:

Հողմահարման հետևանքը ժամանակի ընթացքում երկրի մակերևույթը՝ լեռնալանջերը ծածկվում են հողմահարման արգասիքներով, որոնց անվանում են հողմահարման կեղև: Մրանք լինում են մնացորդային և կոտումային: Մնացորդայինը լեռնալանջերի մերկ հատվածներում է, որտեղ քայլայված ու լուծված նյութերը հեռանում են, տեղում մնում են մժվարաշարժ մնացուկները: Հայկական լեռնաշխարհի բարձր լեռնազանգվածներում ամենուրեք կա այդպիսի կեղև:

Կոտուակումային կեղևը համեմատաբար ցածրադիր և բույլ թեքության կամ գոզավոր մասերում է կոտուակում: Լեռնաշխարհի բոլոր գոզավորություններում կոտուակված են լանջերից իջած հողմահարված նյութեր:

Քիմիական կազմի տեսակետից Հայկական լեռնաշխարհում առանձնացնում են սիալիտա-կավային, սիալիտա-կարբոնատային, կարբոնատային, սոլֆատային, քլորիդային կեղևների տարատեսակները: Որոշ գոզավորություններում կոտուակվում են կերակրի աղ, սոդա, գիպս և այլն: Սև ծովի ափերին տեղ-տեղ առաջանում է ալյոտ տիպի հողմահարման կեղև:

**Տեղատարման ռելիեֆի ձևեր:** Տեղատարումն այն պրոցեսն է, երբ հողմահարման արգասիքները երկրի ճգողական ուժի ազդեցությամբ, այս կամ այն շարժիչի միջոցով, տեղատարվում են: Այդպիսիք են՝ հոսող ջուրը, քամին, սաղցաղաշտերը, ստորերկրյա ջրերը: Հայկական լեռնաշխարհում ամենից զորեղը հոսող ջուրն է: Միջազգային տերմինով այն կոչվում է ֆլուվիալ էրոզիա: Այս էրոզիան երկու տարատեսակ ունի՝ մակերևութային-լանջային և հունային (գետային): Մակերևութային էրոզիան Հայկական լեռնաշխարհում ամենուր զարգացած է. յուրաքանչյուր անձրևից կամ ձնհալքից լեռնալանջերի մանրահողը տեղատարվում է: Հողի էրոզիան չարիք է, մարդը դարեր շարունակ աշխատում է մեղմացնել այն դարավանդավորնամբ, բոլիք երային շերտերի ստեղծմամբ և այլն:

Մակերևութային լվացման (հողի էրոզիայի) ուժգնությունը մեծ է չորային երկրներում, որտեղ բուսական ծածկույթը բույլ է զարգացած: Դա ցայտու է արտահայտված Արարատյան, Նախիջևանի, Կապուտանի (Ուրմիայի), Մալաթիայի գոգավորություններում: Հարավային լանջերում անտառապատ կամ մարգագետնապատ լեռնալանջերը տեղատարվում են աննշան կերպով:

Հունային էրոզիան կատարում են գետերը: Եթե անկումը մեծ է, գետը արագահոս է, ապա կատարում է խորքային էրոզիա՝ խորացնում է հունը, ստեղծում է խոր հովիտ: Այդպիսին են լեռներից սկիզբ առնող գետերը: Հարթավայրային հատվածներում գետերը կատարում են կողային էրոզիա, ստեղծում են զալարներ: Գետերը տարբեր հատվածներում առաջացնում են տարբեր տիպի հովիտներ. վերին հոսանքներում նրանց լայնակի կտրվածքը V-աձև է, միջին և ստորին հոսանքներում՝ U-աձև, կամ արկղաձև հովիտներ, խոճահովիտներ: Լեռնաշխարհի գրեթե բոլոր գետերը ափերին ունեն դարավանդներ, որոնք տեկտոնական բարձրացումների արդասիք են: Տեկտոնական բարձրացման դեպքում գետը խրվում է իր իսկ նատվածքների մեջ, ինչն հովիտի հատակը մնում է վերևում դարավանդի ձևով: Շատ գետեր ունեն մինչև 6-8 դարավանդ:

Շատ են անտեղեղենատ հովիտները, այսինքն՝ գետն ավելի հին է, քան լեռնաշղթան, որը հատել է: Դրանցից են Եփրատի, Մեծ Զարի, Ծորոխի, Փամբակի և այլ գետերի հովիտների որոշ հատվածները:

Գետերից շատերը ունեն սանդրուրածև տրամատ (կողապատկեր), այսինքն գետի երկարությամբ կամ հարք հատվածներ, որտեղ գետը ծովորեն զալարվում է, և քարվագներ, որտեղ ջուրը մեծ ուժով նետվում է առաջ: Սանդրուրածև տրամատով գետերից են՝ Եփրատը, Արածանին, Ախուրյանը, Որոտանը և այլն:

Խոսելով գետային էրոզիայի մասին՝ հարկ է նշել ոելիեֆի բեղլենդ ձևերի մասին: Չորային շրջաններում, որտեղ տեղումները համեստակի ու տեղատարափ բնույթը ունեն, լեռնալանջերը քրքրված են մանր ձորակային ցանցով: Այդպիսի ոելիեֆի հանդիպում ենք լեռնաշխարհի հարավ-արևելյան մասե-

բում՝ Արարատյան, Նախիջևանի և Կապուտանի (Ուրմիայի) գոգավորությունների լեռնալանջերին: Առ այսօր նման ուկինքի աճայի է և չի կարող օգտագործվել մարդու կողմից: Սակայն ժամանակն է մտածել այդպիսի ուկինքի վերակառուցման, դարավանդավորման ու ոռոգման մասին և բեղենդը դարձնել մշակովի հողատարածք:

Չուրը ուկինքի ձևեր է առաջացնում ոչ միայն գետնի մակերևույթին, այլև խորքում՝ զարգացնելով սուֆողին և կարստային ձևեր: Կարստային երևույթները զարգացած են այնտեղ, որտեղ լեռները կազմված են կրաքարերից կամ դրույտներից՝ Պոնտական, Տավրոսի և Փոքր Կովկաս համակարգերում առաջացնելով քարանձավներ ու ստորերկրյա խոռոչներ: Սուֆողիայի հետ են կապված սողանքային երևույթները, որ մեծ զարգացում ունեն:

**Էղային պրոցեսներ:** Էղը իին հունական քամու աստվածն է, և նրա անունով՝ քամու հետ կապված երևույթները կոչվում են էղային:

Քամիները Հայկական լեռնաշխարհում մեծ զարգացում չունեն, ինչպես այդ նկատվում է հարթավայրային երկրներում, բայց իրենց ազդեցուրյունը այնուամենայնիվ քողմում են: Համեմատաբար ոժգին քամիները լինում են միայն բարձր լեռներում ու լեռնանցքերում: Հովհաններում քամին հազվադեպ է: Հովհաններում էղային գործոնը ավելի շատ կուտակիչ աշխատանք է կատարում: Մեր ճարտարապետական հուշարձաններից շատերը թաղված են հողի տակ և հայտնաբերվում են պեղումների շնորհիվ: Այդպես հայտնաբերվեցին Կարմիր բլուրը, Էրեբունին, Արմավիրը, Գառնիի տաճարը, Զվարթնոցը և այլն:

Որոշ տեղերում նկատելի է քամու քայքայիշ աշխատանքը. ժայռերի կամ նույնիսկ հնագույն շինությունների պատերին նկատելի են մանր խոռոչներ:

Արտածին ուկինքածին երևույթներից է ափաքերումը (աբրազիա): Այն տեղի է ունենում Սև ծովի, Սևանա, Վանա, Կապուտան (Ուրմիա) լճերի ափերին: Ժամանակի ընթացքում ձևավորվում են ափաքերման ավազածածկ քոյլ թերության լողափեր (աբրազիոն պլատֆորմ): Եթե ափը երիտասարդ է, ապա շատ են հրվանդաններն ու խորշերը, ինչպես օրինակ՝ Փոքր Սևանի արևմտյան և Վանա լճի հարավային ափերը: Եթե ափը երկար ժամանակահատվածում նույն տեղում է մնացել, ապա լողափը լինում է հարթված ու փորբարեք, ինչպես Կապուտան (Ուրմիա) լճի ափին է: Սև ծովի, Սևանի, Վանա, Կապուտան (Ուրմիա) լճերի ափերին կան դարավանդներ, որոնք մակարդակի տատանումների վկաներն են:

Լեռնային ուկինքի ձևաբանդակներից են սառցաքերման (էկզարացիա) արգասիքները: Սրանք մեծ տարածում ունեն բարձր լեռներում, որոնց մասին կխոսվի 7-րդ գլուխում:

**Ծանրահակային (գրավիտացիոն) պրոցեսներ:** Սրանց են վերաբերում

քարային գետերը, դեֆլյուկցիան, ձնահյուսերը, սողանքները, փլվածքները: Քարային գետեր կան լեռների մեծ թեքուրյունների վրա. քարային հոսքերը երկրի ձգողական ուժի հետևանք են, որին նպաստում են ջերմաստիճանային տատանումներն ու սառնամանիքային երևոյթները:

Լեռնաշխարհում ինտենսիվ են արտահայտված դեֆլյուկցիոն պրոցեսները. լանջերին կուտակված փխրուն նստվածքներն ու հողմահարման նյութերը շարժման մեջ են: Երբ սրանք ջրով հագենում են և սառչում, ապա ծավալը մեծանում է և երկրի ձգողական ուժի ազդեցությամբ սողում են լանջի թեքուրյամբ: Դեֆլյուկցիան անընդհատ նյութ է մատակարարում գետերին: Այս երևոյթը ուժին է արտահայտված հատկապես Միջնաշխարհում, որտեղ ձնոանը լանջերին սառցակալման պրոցեսներ են նկատվում:

Փլվածքները (օբվալ) Հայկական լեռնաշխարհում մեծ տարածում ունեն հատկապես խնձահովտներում և բարձր լեռների նախկին սառցադաշտային ռելիեֆի մեծ թեքուրյուններում: Պարզ լիճը, Կանաչ կամ Աստծո Ծով (Գյոգ-գյոլ) լիճը փլվածքի արգասիք են:

Ծանրահակ ուժի երգործությամբ, սուֆոզիոն տեղատարման հետևանքով լայն տարածում ունեն սողանքային երևոյթները, որոնց մասին արդեն նշվեց: Սոլանքներ կան զրեք բոլոր խոշոր գետների ավազաններում: Հաճախ սողանքային զանգվածները լանջերից պոկվելով հասնում են գետին և կուտակվելով լճացնում են գետը: Այդպիսի սողանքներ կան Ախուրյանի, Հրազդանի, Արփայի, Արածանիի, Եփրատի ավազաններում:

**Կուտակումային պրոցեսներ:** Հայկական լեռնաշխարհում հողմահարման հետևանքով մայր ապարները հաճախ մաշվում, մանրանում են, գետերի միջոցով տեղափոխվում են դեպի մոտակա ծովերը. կամ էլ կուտակվում են խոշոր գոգավորությունների մեջ: Ծովային նստվածքագոյացում տեղի է ունենում Սև, Կասպից ծովերում, Պարսից ծոցում: Դեպի Սև ծով ուղղվում են ճորոխի, Գայլգետի, Ծանախոցի և այլ մասն գետակների թերվածքները: Ամեն տարի Սև ծով է հասնում շուրջ 20 մլն տ հողմահարված նյութ: Դեպի Կասպից ծով է տարվում 25 մլն տ: Նշենք, որ Հայկական լեռնաշխարհից Արաքսի միջոցով դուրս երած նստվածքների գգալի մասը նստում է Կուր-Արաքսյան դաշտավայրում: Եփրատը Հայկական լեռնաշխարհից դուրս է թերում տարեկան 30 մլն տ: Արա մի մասը նստում է Միջագետքի դաշտավայրում, և միայն փոքր մասն է հասնում Պարսից ծոց: Միջագետքի դաշտավայրը առաջացել է Եփրատի ու Տիգրիսի գետաբերուկներից, և այժմ էլ Պարսից ծոցը նահանջում է թերվածքների կուտակումից:

Լճային նստվածքները կուտակվում են երեք խոշոր լճերում: Միայն Սևա-

նաև նստվածքների հզորությունը հասնում է 1000 մ-ի, մյուս լճերի նստվածքների հզորության մասին տվյալներ չունեն:

Հայկական լեռնաշխարհում մեծ տարածում ունեն ցամաքային նստվածքները: Սրանք լեռներից լվացված հողմահարման նյութերն են, որոնք կուտակվում են թույլ թերության լանջերին կամ գոգավորությունների հատակին: Բավկական շատ են սելավային (պրոյուվիա) նստվածքները: Նշանավոր են Օրդուրաղի, Նախիջևանի, Մեղրի գետերի արտաքերման կոները: Նման արտաքերման կոներով հարուստ է նաև Կապուտանի (Ուրմիա) ավազանը:

Քոլոր խոշոր գետերի հովիտներում կան գետաբերուկներ (ալյուվիալ) նստվածքներ: Վերին հոսանքներում սրանք խոշորահատիկ են, քայլ հղկված, ստորին հոսանքներում՝ մանրահատիկ-ավազային կամ ուղղակի տիղմի ձևով: Շատ գետահովիտներում դարավանդները կազմված են գետաբերուկներից: Գետաբերուկներն ու արտաքերման կոները համեմատաբար թույլ թերություն ունեն, ուստի բնակավայրերի կառուցման համար հարմար վայրեր են եղել, և դեռ հնուց կառուցվել են գյուղեր ու նույնիսկ քաղաքներ:

**Մարդածին-աճքքապողին ռելիեֆ:** Դեռևս 1920-ական թվականներին ականավոր ուսու գիտնական Վ. Ի. Վերնադսկին գրում էր, որ մարդը բնության մեջ երկրաբանական գործոնի նշանակություն է ստացել: Քանի գնում է, մարդու ազդեցությունը բնության վրա գորեղանում է շնորհիկ տեխնիկայի զարգացման: Մարդածին գործոնը արտահայտվում է շինարարության ասպարեզում՝ վարուցանքի միջոցով, անաստոնների արածեցմամբ, արդյունաբերական քափոնների կուտակմամբ և այլն: Օրինակ, Ողջի գետի վտակ Կավարտի ավազանում հանքախորշերից դուրս բերված «դատարկ» ապարները կուտակվում են թափածքների ձևով, որոնք սելավների համար պատրաստի ենուր են ներկայացնում: Երևան քաղաքը գրադեցնում է 160 քառ. կմ տարածք, որի վրա միջինավոր տոննաներով շինանյութ է կրտակվել. սրա ծանրության տակ երկրակեղելը անպայման պես է որոշ շափով կրվի միջնապատյանի մեջ: Եփրատի վրա կառուցվել է Կապանի (Քերանի) ջրամբարը 12,5 մլրդ  $m^3$  ծավալով, այսինքն նույնքան տոննա: Բնական է, այստեղ էլ երկրակեղելը պետք է կրվի:

Վերևից ներքև՝ լանջի թերությամբ կատարվող վարը աշխուժացնում է լանջերի էրոզիան: Սեղ հայտնի են շատ տեղամասեր, որոնք այժմ մերկ են, մինչեւ անցյալում դրանք ծածկված են եղել հողային ծածկույթով և մարդու անխնան վարմունքի պատճառով հողային ծածկը լվացվել-տեղատարվել է:

Անաստոնների արածեցումը լեռնալանջերի վրա թողնում է իր հետքերը: Նախ սրանք ժամանակի ընթացքում ծածկվում են մանրադարավանդների

(կածանների) ցանցով, ապա վերածվում են էրոզիոն օջախների: Շանապարհային էրոզիան, խիզացիոն էրոզիան խիստ աշխուժացել են:



Նկ. 29. Էրոզիոն օջախներ

Մարդու ազդեցությամբ անտառները մեծ չափերով կրծատվել են: Պոնտոսի ու Տավրոսի լեռների լանջերին, Փոքր Կովկասում, Սարիդամիշի շրջանում, Մնձորի ավազանում և այլոր անտառները պակասում են: Մարդու ներգործությունը աշխուժացնում է էրոզիան:

Սույն գլուխ վերջին հարցը, որ ուզում ենք ներկայացնել, տեկտոնական բարձրացման թափի և տեղատարման թափի փոխհարաբերությունն է: Հենց այն փաստը, որ լեռնաշխարհն այժմ ունի մոտ 1900 մ միջին բարձրություն, իսկ առանձին լեռներ ու զանգվածներ՝ մինչև 4-5 հազ. մ, ինքնին ասում է այն մասին, որ վերջին 10 միլիոն տարվա ընթացքում (վերին միոցենից հետո) տեկտոնական բարձրացումներն ավելի զորեղ են եղել, քան տեղատարման թափին: Տեկտոնական բարձրացումը շուրջ 10-50 անգամ ուժեղ է, քան տեղատարումը, ուստի պետք է սպասել, որ ապագայում տարածի մասնատման խորությունը մեծանալու է:

Ներկայում Հայկական լեռնաշխարհից տարեկան լվացվում-տեղատարփում է շուրջ 100 միկրոնի (0,1 մմ) մի շերտ, որը մոտավորապես 10 հազ. տարում կկազմի մեկ մետր (դենուլացիոն մետր), մինչդեռ տեկտոնական բարձրացումները 10-50 անգամ ավելին են, կազմում են 2000-3500 մ (հաշված միոցենից): Նշանակում է՝ տիրապետող տեկտոնական բարձրացումներն են, բռնոր ձևակառուցվածքները տեկտոնիկայի արգասիք են: Այս հարցի մասին կխոսվի նորից՝ գետերի կոչու հոսքը քննարկելիս:

## ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### 1. ԿԼԻՄԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ինչպես արդեն հայտնի է, կլիման տվյալ տարածում եղանակների բազմամյա միջին վարքը, ուժիմն է: Այլ կերպ ասած՝ օդերևորաբանական երևոյթների երկար տարիների ընդհանուրցված, բնորոշ ու տիպական վիճակն է:

Գտնվելով մերձարևադարձային կլիմայական գոտում՝ Հայկական լեռնաշխարհը կրում է այդ գոտուն բնորոշ բոլոր հատկանիշները, միևնույն ժամանակ դրանց գումարվում են բարձրադիր-վերընթաց գոտիականությամբ և ուղիելիքով պայմանավորված շեղումները: Այսինքն՝ գոնայական հատկանիշներին գումարվում են ազնալ հատկանիշներ, ուստի լեռնաշխարհի կլիման բազմազանություն ու բարդություն է ներկայացնում:

Հայկական լեռնաշխարհի կլիմայով հետաքրքրվել են անհիշելի ժամանակներից, և կան գրավոր հիշատակություններ: Ստացիոնար օդերևորաբանական կայաններ Հայկական լեռնաշխարհի անդրկովկասյան հատվածում հիմնադրվեցին անցյալ դարի 40-ական թվականներից և մասսայական բնույթ ստացան 20-րդ դարի երկրորդ կեսին: Միայն Հայաստանի Հանրապետության տարածում գործում էր ավելի քան 60 օդ. կայան, նույնը՝ նաև Վրաստանում ու Աղբքաջանում: Լայնորեն օգտագործվում են տիեզերական նկարներ, որոնք ցույց են տալիս օդային զանգվածների, ցիկլոնների, անպամածության պատկերը, որով կարելի է ավելի հստակ կերպով կատարել եղանակի կանխագորչակումը:

Հայկական լեռնաշխարհի, մասնավորապես՝ Անդրկովկասի հատվածի, կլիմայի ուսումնասիրման ասպարեզում խոչըր ավանդ են ներդրել Ա. Ի. Վոյելյովը, Ի. Վ. Ֆիգուրովսկին, Ռ. Տ. Ջրիստոստուրյանը, Թ. Ֆիստերը, Լ. Վայրմանը, Բեսիմ Դարկոտը, Խ. Պ. Պողոսյանը, Գ. Դ. Չուրյանը, Ի. Ֆ. Կվարալացիսելիան, Ա. Բ. Բաղդասարյանը, Ա. Գ. Ներսիսյանը, Գ. Ա. Ալեքսանդրյանը, Ռ. Ս. Սկրտչյանը, Ֆ. Ֆ. Դավիտյանը և շատ ուրիշներ:

Հայկական լեռնաշխարհը կլիմայական բազմազանությունների ու հակադրությունների երկիր է, ավելի ճիշտ՝ կլիմաների թանգարան: Ընդհանուր առմամբ այն ունի ցամաքային կլիմա. ամառը չոր ու շոգ է, ձմեռը՝ ցուրտ: Միջնաշխարհում երեքման այնքան ցուրտ է լինում, որ որոշ հեղինակներ համեմատում են Սիրիի հետ: Ղ. Ինճիճյանը 1835 թ. «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի»-ի 1-ին հատորում գրում է. «Ովրա-

տիսո բանաստեղծ սաստկասառոյց կոչ զեառն Նպատ: Տակիտոս պատմագիր դժնիղակ կոչ զամեռն Հայաստանեայց» (Էջ 41):

Ցուրաքանչյուր երկրի կլիման ձևավորվում է մի շարք գործոնների ներգործությամբ: Հայկական լեռնաշխարհի պարագայում դրանք են՝ արեգակնային ճառագայթումը, օդային զանգվածների շրջանառական պրոցեսները, ունիեփի ազդեցությունը, ծովերից ունեցած հեռավորությունը, երկրի մակերևույթի բնույթը (բուսածածկությունը), անբրոպոգեն ազդեցությունը և այլն: Քննարկեանք սրանք առանձին-առանձին:

**Արեգակնային ճառագայթումը** այն էներգետիկ բազան է, որի վրա կառուցվում է բնությունը: Այն կախում ունի աշխարհագրական լայնությունից, այսինքն՝ հորիզոնի նկատմամբ Արեգակի բարձրությունից, ապա ցերեկվա տևողությունից, ամպամածությունից, ողի մաքրությունից և այլն:

Հայկական լեռնաշխարհը գտնվում է մերձարևադային լայնությունների տակ: Հյուսիսային մասը՝ Մոսքիկյան (Մեսխեթի) շրան հյուս. լայն.  $42^{\circ}$ -ի տակ է, ծայր հարավային մասը՝ Շինակ լեռնանցքը՝  $37^{\circ}$ -ի տակ: Լայնությունների տարրերությունը կազմում է  $5^{\circ}$ , այսինքն՝ 555 կմ, հետևաբար ճառագայթների թերությունը հյուսիսում  $5^{\circ}$ -ով պակաս է հարավի համեմատ:

Դեկտեմբեր ամսին, ցերեկվա ժամը 12-ին (տեղական ժամանակով) մերձական ծովյան շրջանում Արեգակը հորիզոննից բարձրանում է  $25-26^{\circ}$ , հարավում՝  $30-31^{\circ}$ : Հունիսին ճառագայթների թերությունը հյուսիսում կազմում է  $72^{\circ}$ , հարավում՝  $77^{\circ}$ : Բացի այն, որ ամռանը ճառագայթների թերությունը մեծ է, օրվա տևողությունն էլ երկար է՝ 15-16 ժամ, ձմռանը՝ ընդամենը 9 ժամ:

Խոսելով ճառագայթների թերության մասին՝ հարկ է նշել նաև մեկ այլ հանգամանքի մասին ևս. դա ֆիզիոլոգիական պրոցեսների նորմալ ընթացքի հարցն է: Հայկական լեռնաշխարհի հարավային դիրքը ապահովում է օրգանիզմների ֆիզիոլոգիական պրոցեսների նորմալ ընթացքը:

Հայտնի է, որ եթե Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ կեսօրին  $30^{\circ}$ -ից ցածր է, ապա նկատվում է ուլտրամանուշակագույն ճառագայթների սով, որն արտահայտվում է օրգանիզմում նյութափոխանակման խանգարմամբ: Այդպիսի վիճակ մեր երկրում ստեղծվում է շատ կարճ ժամանակ՝ ձմռանը: Մնացած ամիսներին ուլտրամանուշակագույն ճառագայթների առատություն կա:

Ծատ կարևոր նշանակություն ունի արևափայլի տևողությունը: Նշենք, որ լեռնաշխարհն ամբողջությամբ աչքի է ընկնում արևոտությամբ: Արևափայլը առավել մեծությունը տարվա ընթացքում 2600-2800 ժամ է: Այն կախված է ունիեփից ու ամպամածությունից: Սև ծովի ափին, Պոնտական ու Մոսքիկյան լեռների լանջերին խոնավության առատության պայմաններում արևափայլի տևողությունը տարեկան 1600-1800 ժամ է, մինչդեռ Միջնաշ-

խարհում՝ 2400-2800 ժամ: Կորդվաց լեռներում տեղումների առատության պայմաններում արևափայլքի տևողությունը պակասում է՝ 1900-2200 ժամ: Արևափայլքը ցայտուն արտահայտված սեզոնայնություն ունի. նվազագույնը ձմռանն է, առավելագույնը՝ ամռանը: Օրինակ, Երևանում հունվարին 69 ժամ է, օգոստոսին՝ 352 ժամ:

Արևափայլքի տևողությունը հատկապես մեծ է խոշոր լճերի ափերին՝ 2700-2800 ժամ: Դա բացատրվում է նրանով, որ ամառային ամիսներին լճի ջուրն ավելի պաղ է, քան շրջապատի ցամաքը, լճի վրա ստեղծվում է մընուրությ բարձր ճնշում՝ օդի վարընթաց շարժում, գոլորշիները չեն կարող խոտանալ, եղանակը պարզկա է լինում:

Բարձր լեռնազանգվածներում հորիզոնն ընդարձակվում է, և օրվա տևողությունը՝ երկարում, մեծանում է արևափայլքի տևողությունը: Բայց կա նաև մեկ այլ օրինաչափություն. եթե այստեղ ամպամածությունն ու տեղումների քանակն ավելանում են, արևափայլքի տևողությունը նվազում է:

Կարևոր բնութագրի է նաև անարև օրերի թիվը տարվա ընթացքում: Բնական է, չորային շրջաններում նման օրերի թիվը փոքր է, տեղումներով հարուստ շրջաններում մեծ: Անարև օրերի թիվը առաջին տեղը գրավում է Սև ծովի ափամերձ գտնին. այստեղ տարեկան 60-70 օր արևը բոլորովին չի երևում: Նման օրերի թիվը համեմատարար մեծ է նաև Փոքր Կովկասի, Բարձր Հայքի լեռնալանջերին, Շորոխի, Գալյգետի ավազաններում՝ 40-60 օր, մինչդեռ Միջնաշխարհում, մանավանդ խոշոր լճերի ափերին՝ ոչ ավելի քան 20-30 օր, Սևանա, Վանա, Ուրմիա լճերի ափին՝ 15-18 օր:

Միջնաշխարհում անարև օրերի թիվը մեծ է ձմռանը, որը զերմաստիճանային շրջադասության (ինվերսիայի) արգասիք է: Զմռանը անարև օրերի թիվը հատկապես մեծ է գոգավորությունների հատակին և բարձր լեռներում, մինչդեռ միջին բարձրության լեռների գոտին գերծ է ամպերից: Ամռանը հակառակն է. միջին բարձրության լեռների գոտում են տեղումները ավելի շատ, ամպամածությունը մեծ է:

Արեգակի ճառագայթները Երկրին հասնում են երկու ձևով՝ ուղիղ և ցրիվ: Երկուսը միասին կազմում են միագրւար կամ գումարային ճառագայթում: Հայտնի է, որ ճառագայթման լարվածությունը մընուրտի վերին մասում 1 սմ<sup>2</sup> սևացած մակերեսի վրա մեկ րոպեով կազմում է մոտ 2 կալրիխա: Անցնելով օդի միջով՝ ճառագայթների մի մասը կլանվում է փոշու և ջրային գոլորշիների կողմից. գետին է հասնում դրանց կեսը կամ կեսից մի փոքր ավելին: Օրինակ, Սև ծովի ափին ճառագայթման լարվածությունը կազմում է 1,2-1,3 կալրիխա մեկ րոպեում, 1000 մ բարձրության՝ վրա՝ Երևանում՝ 1,4-1,5 կալ/սմ<sup>2</sup>, մինչդեռ Արագածի, Միկանի, Արարատի, Սավալանի վրա՝ 3000 մ բարձրություններում՝ 1,6-1,7 կալ/սմ<sup>2</sup>. րոպե: Նշենք նաև, որ լեռներ բարձրանալին՝ ա-

Վելանում է նաև ուղարամանուշակագույն ճառագայթների լարվածությունը. դրա համար էլ լեռներում մաշկն ավելի շուտ է այրվում: Ուղարամանուշակագույն ճառագայթների օպտիմալ քանակը օգտակար է, սակայն եթե օգոնի շերտը պատռվում է և չափից ավելի ճառագայթներ են հասնում երկրի մակերևույթ, ապա դա խիստ վնասակար է, առաջացնում է մաշկի քաղցկեղ և այլ հիվանդություններ:

Օրվա ընթացքում գումարային ճառագայթման առավել լարվածությունը նկատվում է կեսօրին, տարվա ընթացքում է՝ հունիսին: Օրինակ, Արածանիի հովտում 1000 մ բարձրության վրա դեկտեմբերին լարվածությունը 1 կալ/սմ<sup>2</sup> է, հունիսին՝ 1,4 կալ/սմ<sup>2</sup> բռնել:

Նշեցինք, որ ըստ բարձրության՝ ճառագայթման լարվածությունը մեծանում է, սակայն ջերմաստիճանն իջնում է. ո՞րն է պատճառը: Բանն այն է, որ լեռներում օդի շերտը ավելի բարակ է, քան գոգավորությունների հատակին, հետևաբար Արեգակից եկած ճառագայթները ավելի արագ են ճառագայթարձակվում լեռներում: Գոգավորություններում փոշին ու գոլորշիները խանգարում են ճառագայթարձակմանը, դրա համար էլ Արեգակի մայր մտնելուց հետո՝ լեռներում շատ արագ ցրտում է: Ստորև բերում ենք աղյուսակ՝ գումարային ճառագայթման վերաբերյալ:

## Աղյուսակ 2

**Հայկական լեռնաշխարհի գումարային ճառագայթումը օրվա ընթացքում,**  
ըստ S. Գ. Բերյանդի (1961), կալորիաներով

Ամիսներ Տարածք	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարեկան
Հյուս. մաս	150	200	300	400	500	650	650	550	400	300	200	150	350
Հարավ. մաս	200	300	400	500	650	700	700	650	550	400	250	200	450

Աղյուսակը տալիս է օրվա ընթացքում ստացված ճառագայթների քանակը: Գումարային ճառագայթումը ողջ տարվա համար հյուսիսային մասում կազմում է 120-130 կկալ/սմ<sup>2</sup>. տարի, հարավային մասում՝ 150-165 կկալ/սմ<sup>2</sup>. տարի: Համեմատելու համար նշենք, որ Արևելյան Եվրոպայում բարեխառն լայնությունների տակ այդ պարամետրը կազմում է 80-100 կկալ/սմ<sup>2</sup>. տարի, իսկ Պարսից ծոցում կամ Արարական ծովի շրջանում 200-220 կկալ/սմ<sup>2</sup>. տարի:

Ինչպես հայտնի է, Արեգակից ստացած ճառագայթումն ամբողջությամբ տեղում չի մնում: Նրա մեծ մասը ճառագայթարձակվում է դեպի Տիեզերք, կամ ջերմության մի մասը ծախսվում է ջրի գոլորշացման վրա (գոլորշացման քարենված ջերմություն): Օդային զանգվածների միջոցով ջերմությունը տեղափոխվում է ավելի բարձր աշխարհագրական լայնություններ, որտեղ ջերմային հաշվեկշիռը բացասական է:

Հայկական լեռնաշխարհի ճառագայթային հաշվեկշիռը, այսինքն՝ ստացածի և կորցրածի տարրերությունը (մնացորդային ճառագայթում), տարրեր մասերում տարբեր են՝ կախված տեղի բարձրությունից, ոելինքի բնույթից, երկրի մակերևույթի կառուցվածքից և այլն: Ռ. Ա. Քարտաշյանի և Ա. Մ. Մխիթարյանի (1970) ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ճառագայթային հաշվեկշիռը Հայաստանի Հանրապետությունում կարող է տատանվել տարեկան 40-65 կվալ/ամ<sup>2</sup>, որը յուրահատուկ է մերձարևադարձային լայնություններին: Նման հաշվեկշռով են պայմանավորված լեռնաշխարհի ջերմային պայմանները: Հաշվեկշիռը մի շարք կայաններում հետևյալ պատկերն ունի կվալ/ամ<sup>2</sup>. տարի-ով. Երևան - 64, Գյումրի - 62, Սևան - 64, Մարտունի - 64, Յանդր - 50, Արագած ք/լ - 42,4 և այլն: Հայկական լեռնաշխարհի մնացած մասերում համապատասխան բարձրությունների վրա նմանակության օրինաչափությամբ նույն պատկերը կարտահայտվի:

**Օդային զանգվածները:** Նշեցինք, որ կիմայի ձևավորման գործում կարևոր գործոն են ներկայացնում օդային զանգվածները և նրանց շրջանառական պրոցեսները:

Հայկական լեռնաշխարհում մթնոլորտի ստորին ոլորտը՝ տրոպոֆերան ունի շուրջ 12-15 կմ հաստություն, նրանից բարձր անցողիկ ոլորտն է՝ տրոպոպատուզան, ավելի վեր՝ վերնոլորտը (ստրատոֆերան), միջնոլորտը, իոնոլորտը (նույն է՝ ջերմոլորտը) և արտաքին ոլորտը (էկզոսֆերան):

Այս երկրում եղանակագոյացման երևույթները տեղի են ունենում ստորին ոլորտում՝ տրոպոֆերայում: Այստեղ է, որ օդային զանգվածները ուժգին տեղաշարժեր են կատարում: Առաջանում են ցիկլոններ, անտիցիկլոններ և այլն:

Ինչպես հայտնի է, Երկրագնդի վրա գոյություն ունեն չորս տիպի օդային զանգվածներ՝ հասարակածային, արևադարձային, բարեխառն և արկտիկական: Հայկական լեռնաշխարհում առաջինը երբեք չի լինում, մնացած երեք տիպերից ամենից մեծ հաճախականություն ունեն բարեխառն օդային զանգվածները:

Բարեխառն օդային զանգվածները ձևավորվում են բարեխառն գոտում, ջերմաստիճանները բարձր չեն, խոնավությունն էլ բավարար է՝ չափավոր: Մթնոլորտի համամոլորակային շրջապատույտն այնպիսին է, որ բարեխառն լայնություններում այս օդային զանգվածներն ունեն արևմուտքից դեպի

արևելք ուղղություն, ուստի Հայկական լեռնաշխարհ են քափանցում արևմուտքից՝ բերելով խոնավություն և համեմատաբար մեզմ եղանակներ:

Արևադարձային օդային զանգվածները ձևավորվում են արևադարձային լայնությունների տակ: Ցամաքային շրջաններում սրանք խիստ չոր են, ունեն բարձր ջերմաստիճաններ, բերում են երաշտային եղանակներ. քափանցում են հարավից և ամռային ամիսներին ցածրադիր մասերում տիրապետող են: Հաճախ է պատահում՝ ամռան շողին բարեխառն օդային զանգվածները, տեղում տարանալով, վերափոխվում են (տրանսֆորմացիա), դառնում արևադարձային զանգվածներ. երեսմն ամիսներով տեղումներ չեն լինում:

Արկտիկական օդային զանգվածները ձևավորվում են Սառուցյալ օվկիանոսի կամ էլ Հյուսիսային Սիբիրի տարածներում: Ունեն ցածր ջերմաստիճան, խոնավությունն էլ քիչ է: Սրանք Հայկական լեռնաշխարհ քափանցում են ձմռան՝ շրջանցելով Մեծ Կովկասի լեռնաշղթան երկու կողմերից: Այս զանգվածները, լինելով պաղ ու ծանր, մտնում են ավելի տաք բարեխառն զանգվածների տակ, նրանց հրում են դեպի վեր, և այդ վերընթաց հոսանքի դեպքում առաջանում են մքնոլորտային տեղումներ:

Հայկական լեռնաշխարհում, մասնավորապես նրա հարավային մասերում, բարեխառն և արևադարձային օդային զանգվածների շիման ֆրոնտում հաճախակի ձևափորվում են ցիկլոններ:

Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեն օդային զանգվածների ներխուժումների չորս տիպեր՝ արևմտյան, արևելյան, միաժամանակ արևմտյան և արևելյան, ապա՝ բարեխառն և արևադարձային օդային զանգվածների ճակատում ցիկլոնային լընդզումներ, որ նշեցինք վերը: Հարավից ներխուժող օդային զանգվածները որպես կանոն չորություն են բերում, բերում են նաև անապատային փոշի: Արևադարձային զանգվածները հաճախ գրադեցնում են ոչ միայն գոգավորություններն ու հովիտները, այլև ընդգրկում են միջին բարձրության լեռնային գոտին: Ամիսներով անձրև չի գալիս, ամեն ինչ խանձրվում է:

Հայկական լեռնաշխարհում նկատվում է բույլ մուստնային տիպի շրջանառություն: Զմռանը ինտենսիվ ցրտեցման հետևանքով Բարձր Հայքում ու հարակից շրջաններում հաստատվում է մքնոլորտային բարձր՝ ճնշում: Այդ նույն ժամանակ շրջապատի ծովերում ցածր ճնշում է, ուստի քամիները ցամաքից ուղղվում են դեպի ծովերը: Ամռանը հակառակն է՝ ծովերից օդային զանգվածները ուղղվում են դեպի ցամաք:

Հայկական լեռնաշխարհի բարդ լեռնային պայմաններում օդի մերձգետնա շերտում նկատվում են լեռնահովտային բամիներ: Սրանք աշխուժանում են ամռանը: Օրվա առաջին կեսում, մինչև կեսօր, փշում են հովտի ցածրադիր մասերից դեպի ակունքները, կեսօրից հետո փշում բավական ուժգին՝ հակա-

ուակ ուղղությամբ: Օրինակ, Երևանում այս կարգի օդային շրջանառություն զարգացած է ամառային ամիսներին: Ծոգ կեսօրից հետո Սևանի ավազանից լեռնային զով քամին Հրազդանի հովտով իջնում է դեպի քաղաք և զովություն բերում: Ժողովորդը այդ քամին կոչում է Լուսավորչի քամի: Նման քամիներ ձևավորվում են գրեթե բոլոր մեծ գետահովտներում:

Հայկական լեռնաշխարհին հատուկ են նաև ֆյոն տիպի քամիները: Երբ լեռնաշղթայի երկու կողմերում մքնարուտային ճնշումների տարրերություններ կան, ապա բարձր ճնշման մարզից օդային զանգվածները, հաղթահարելով լեռնաշղթան, անցնում են հակառակ կողմը և այնտեղից զահավիժում ցած: Զնուանը հաճախ ֆյոն քամիների բերած օդի ջերմաստիճանը 0-ից բարձր է լինում, ծնիկալը է առաջանում: Նման քամիներ կան Սևանի ավազանում, Վանա լճի շրջանում, Շորիսի ավազանում և այլն:

Լեռնային երկրի պայմաններում քամիների ուժը մեծ լինել չի կարող: Հովտների ցածրադիր մասերում քամիներ ընդհանրապես գրեթե չկան. դրանք լեռնային բարձր մասերում են զարգանում: Քամիներով հարուստ են լեռնանցերը (Սխիանի, Ջաջուռի, Ջորապահակի (Բաղեջի մոտ) և այլն): Քամու էներգետիկ ռեսուրսները գնահատվում են 50-200 կՎտ ժ/կմ<sup>2</sup>:

Օդի շրջանառական պրոցեսներից են բրիզները (ծովագելիյութ): Սրանք զարգանում են Սև ծովի ափերին և մեծ լճերի ափամերձ մասերում: Ծովից կամ լճից եկող գեփյուրը ամառային ամիսներին բերում է համեյի զովություն:

Մքնարուտի շրջանառական պրոցեսներից են ցիկլոններն ու անտիցիկլոնները: Ցիկլոնը ցածր ճնշման տիրույթ է, կենտրոնում ճնշումը ցածր է, եզրերում՝ բարձր, և քամիները եզրերից ձգտում են կենտրոն, սակայն կորիոլիսյան ուժի շնորհիվ թերվում են դեպի աջ և առաջանում ժամացույցի սլաքի ուղղությանը հակառակ օդապտույթ: Ցիկլոնն կենտրոնում օդի վերընթաց հոսանք է, տեղումներ են ձևավորվում: Ալլանտյան օվկիանոսի հյուսիսում, Խւլանդական միջնամյամի շրջանում, ցիկլոնների խոհանոցն է: Այստեղ ձևավորված ցիկլոնները հաճախ անցնում են դեպի արևելք, երբեմն էլ այցելում Հայկական լեռնաշխարհ, տախս են տեղումներ ու անկայուն եղանակ:

Անտիցիկլոնները ցիկլոնին հակառակ բարձր ճնշման տիրույթ են ներկայացնում: Բարձր ճնշման կենտրոնից քամիները ուղղվում են դեպի եզրերը, նոյն կորիոլիսի ուժի ազդեցությամբ թերվում դեպի աջ: Ջևավորվում է ժամացույցի սլաքի ուղղությամբ քամիների համակարգ: Անտիցիկլոնի դեպքում եղանակը կայուն է լինում. պարզկա եղանակ, ձմռանը՝ ուժեղ ցուրտ: Զմեռային ամիսներին բարձր Հայրում, Կարսի սարահարքում ամեն տարի հաստատվում է անտիցիկլոն՝ ուժեղ սառնամանիքներով:

**Ուելիեֆի դերը:** Կլիմաների ձևավորման գործում կարևոր դեր ունի ուելիեֆը, մասնավանդ լեռնային երկրներում, ինչպիսին Հայկական լեռնաշխարհն է:

Լեռնաշղթաների ուղղությունը, տեղի բարձրությունը ծովի մակարդակից, գոգավորությունների առկայությունը, լեռնալանջերի կողմնադրությունը իրենց կմիջն են դժում կլիմայի, մասնավորապես մեզոկլիմայի վրա: Լեռնաշղթաները և խոշոր հովիտները ուղղություն են տալիս օդային զանգվածներին: Օրինակ, Կասպից ծովից եկող խոնավությունը Աղստևի հովտով հասնում է մինչև Վանաձոր, Սև ծովից՝ Դորոխի հովտով մինչև գետի միջին հոսանքները, Խորշատի հովտով մինչև ակունքները և այլն: Հակառակն է, եթե օդային զանգվածները շարժվում են լեռնաշղթային ուղղահայաց կամ որոշ անկյան տակ: Այս դեպքում լեռնալանջով բարձրացող օդի խոնավությունը արագ խտանում է, տալիս է տեղումներ, մինչդեռ լեռնաշղթայի հակառակ լանջին տեղումները շատ սակավ են լինում: Դրա տիպիկ օրինակը Պոնտոսի համակարգն է, որի հյուսիսային լանջին՝ Սև ծովի դիմաց, տեղումների քանակը հասնում է 2000-4000 մմ-ի, մինչդեռ հակառակ լանջին՝ քառակի պակաս:

Հայկական լեռնաշխարհը կարծես պատճեշված է լեռնաշղթաներով, ուստի օդային զանգվածները դժվարությամբ են քափանցում Միջնաշխարհ: Օրինակ, Կորդվաց լեռներում Միջերկրական ծովի ավազանից եկող օդային զանգվածները տալիս են առատ տեղումներ, մինչդեռ ոչ հեռու Վանա լճի ավազանում տեղումների սակավություն է, արհեստական ոռոգման կարիք կա:

Լեռնային գոգավորություններում ձևավորվում է ուրույն կիմա: Ծրջապատի լեռները ուղղակի պատճեշում են խոնավությունը: Լեռնաշխարհի բոլոր գոգավորությունները ունեն չոր ցամաքային կիմա, ձմռանն էլ հաստատվում է ջերմաստիճանային շրջադարձություն:

Լեռնային ոելիքնեֆի մյուս կարևոր առանձնահատկությունը կողմնադրություններն են: Հյուսիսահայաց լանջերը թիշ ջերմություն են ստանում, խոնավությունը երկար է պահպանվում, ուստի անտառները հիմնականում այդ լանջերում են: Հարավահայաց լանջերը տաք են, երբեմն չոր, բուսագործք: Անապատացման երևոյթը ինտենսիվ է արտահայտված հարավահայաց լանջերին:

Չատ կարևոր է տեղի բարձրությունը: Հայկական լեռնաշխարհում, ըստ բարձրության, յուրաքանչյուր 1000 մ-ից ջերմաստիճանն ընկնում է  $5-6^{\circ}$ -ով: Սկսած 4200 մ-ից՝ ձյունը մնում է չորք տարի: Այսպիսով, ըստ բարձրության ձևավորվում են կլիմայական վերընթաց գոտիներ, որոնք էլ հիմք են դառնում լանջաֆտային գոտիների ձևավորման համար:

**Ծովերի ազդեցությունը:** Հայկական լեռնաշխարհը ցամաքային երկիր է, սակայն ծովերի ազդեցությունը զգալի է: Ամենից մեծ նշանակություն ունի Միջերկրական ծովը: Քամիները, հիմնական ուղղությամբ արևմտյան լինելով, այդ ծովից թերում են խոնավություն, երբեմն ֆրոնտների անցման ժամանակ մի քանի օր ամպամած է լինում, զալիս են տեղումներ: Սև ծովի ազդեցությունը ակնառու է լեռնաշխարհի հյուսիսային մասի վրա, իսկ Կասպից

ծովի ազդեցությունն ամենից բույն է: Միշտ չէ, որ արևելքից եկող օդային զանգվածները կարող են ներխուժել լեռնաշխարհ: Երբեմն պատահում է՝ օդային զանգվածները անցնում են Կոր-Արաքսյան դաշտավայրի վրայով, բայց այստեղ տեղումներ չեն տալիս, որովհետև գոլորշիների խտացման մակարդակը շատ բարձր է: Հասնելով Փոքր Կովկասի լեռներին՝ լանջերով բարձրանում են, տեղի է ունենում գոլորշիների խտացում, և զալիս են տեղումներ: Օրինակ, Գորիսում տեղումների քանակը կրկնակի ավելի է Սփյուռքի տեղումներից, որովհետև Գորիսը օդային հոսանքների դիմաց է, իսկ Սփյուռք՝ լեռների այն կողմում:

Բացի այս գործոններից կան նաև այլ, ավելի երկրորդական, տեղական գործոններ, օրինակ, երկրի մակերևույթի բնույթը: Այսպես, վարած սևահողը շատ ավելի արագ է տաքանում, քան անտառի տակ գտնվող գետինը: Վարած հողի վրա գետնի տաքանալով՝ առաջանում է օդի վերընթաց հոսանք. արագությամբ կարող են ծևափորել կարկտարեր ամպեր ու կարկուտ տեղալ: Կարելի է շատ այլ օրինակներ բերել:

**Անքառպոզեն գործոննի ազդեցությունը:** 20-րդ դարում մարդու ներգործությունը բնույթան վրա սպառնալի չափեր է ընդունել: Նախ ասենք, որ վառելանջութիւ այրմամբ օդում ավելանում է ածխաթթու զազի քանակը, որը ջերմուցային էֆեկտի ներգործություն ունի, ընդ որում՝ համամոլղակային մասշտարքը: Տարեկան այրում են 14-16 մլրդ տ վառելիք (պայմանական վառելիքի հաշվարկով), որի հետևանքով զորեղանում է ջերմոցային էֆեկտը:

Հայկական լեռնաշխարհում մարդու ազդեցությունը կլիմայի (մեզո և միկրո) վրա ամենից մեծ է Հայաստանի Հանրապետության տարածքում, մասնավորապես Արարատյան գոգավորությունում, որտեղ բնակչությունը շատ խիստ է և որտեղ կենտրոնացված են արդյունաբերական մի շարք ճեռնարկություններ, որոնք իրենց արտամղած քափոններով աղտոտում են միջավայրը: Միկրոկլիմայի ձևափորման վրա ազդում են նաև վարուցանքը, անտառապատումը, ջրամբարների կառուցումը և այլն: (Ավելի հանգամանորեն մքնոլորտի աղտոտման մասին կիսումներ թեմայի վերջին բաժնում:)

## 2. ԶԵՐՄԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ

Արեգակից ստացած ճառագայթները երկրի մակերևույթին զգալի չափով փոխարկվում են ջերմային ճառագայթների, որոնցով պայմանավորված է լեռնաշխարհի ջերմային ռեժիմը, որը շատ հարուստ է հակադրություններով ու ծայրահեղություններով: Օրինակ, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը<sup>1</sup> եղել է Արփի լճի ափին՝  $-46^{\circ}$ , բացարձակ առավելագույնը  $46^{\circ}$  (Հայ-

կական Միջագետքում, Կապուտան լճի ավազանում): Լայնույթը (ամպի-տուղան) 92<sup>0</sup> է: Սա ցամաքայնության տիպիկ արտահայտություն է:

Տարեկան միջին ջերմաստիճանը մինչև 3000-3400 մ բարձրություններում ամենուր դրական է, ավելի բարձրում՝ բացասական: Քանի որ մարդու գործունեությունը տարածվում է մինչև այդ բարձրությունները, ապա կարող ենք ասել, որ Հայկական լեռնաշխարհում ամենուր տարեկան միջին ջերմաստիճանը դրական է: Լեռնաշխարհի հարավում՝ Տիգրիսի ավազանում տարեկան միջին ջերմաստիճանը 12-14 է, Մալաթիայի, Խարբերդի, Արարատյան, Նախիջևանի դաշտերում, Կոր-Արաքսան դաշտավայրի եզրերում՝ 8-12, միջին բարձրության լեռների գոտում (Կարինի, Բասենի, Աշկալայի, Երզնկայի, Կարսի, Շիրակի, Զավախիրի, Լոռվա, Մանազկերտի, Վանի, Սևանի գոգավորություններու սարավանդներ): 2-8<sup>0</sup>:

3000-3400 մ-ից բարձր լեռներում օդի տարեկան միջին ջերմաստիճանը բացասական է -2-ից -6<sup>0</sup> (Քաջքար, Արագած, Սիփան, Արարատ, Ջիլ, Սոհունի, Սավալան): Այստեղ, որտեղ այդ ցուցանիշը -3-ից ցածր է, գետնահողերում կարող է լինել բազմամյա սաոցույթ:

Լեռնաշխարհում ամենացործ ամիսը հունվարն է: Այդ ամսվա միջին ջերմաստիճանը լեռնաշխարհի տարբեր մասերում կարող է տատանվել 6-7-ի և -20-ի միջև: Առաջինը Սև ծովի ափին է, երկրորդը՝ Արարատի կամ այլ բարձր գագարի վրա: Ամենացածր ջերմաստիճանները յուրահասուուկ են Բարձր Հայքին, Կարսի սարահարքին, Շիրակին՝ -8-ից -12<sup>0</sup>. բարձր լեռներում՝ -15-ից -20<sup>0</sup>: Ամենացածր ջերմաստիճանները գրանցվել են Աշոցքում՝ -46, Ալաշկերտում՝ -43<sup>0</sup>: Սրա հիման վրա է, որ Գրոտե Հյուգոն Հայկական լեռնաշխարհի համարում է Առաջավոր Ասիայի Սիրիաը: Ուժեղ սառնամանիքների պատճառը ինտենսիվ ճառագայթարձակումն է. պարզ եղանակների դեպքում գիշերվա ժամերին երկարալիք ճառագայթները անարգել հեռանում են երկրից:

Գոգավորությունների հատակին հունվարյան միջինը -3, -5, -7<sup>0</sup> է: Օրինակ, Երևանում՝ -5, Վանում՝ -3,5, Նախիջևանում՝ -6, Ալսալքալաքում՝ -7,2, Սիսիանում՝ -5,2, Գյումրիում՝ -10: Քանի իջնում ենք հարավ, այնքան ջերմաստիճանը բարձրանում է՝ Մալաթիա՝ -1,5, Ուղիա՝ -4,5, Թավրիզ՝ -1,5 և այլն: Առանձին օրերին ջերմաստիճանը կարող է իջնել մինչև -20, 30, 40<sup>0</sup> և ավել: Օրինակ՝ Երևանում՝ -30, Կարսում՝ -42, Սարիդամիշում՝ -41 և այլն:

Չեղուային ամիսներին գոգավորություններում ամենուր հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա): Գիշերային ժամերին

<sup>1</sup> Զեռնարկում ամենուր ջերմաստիճանները տրվում են ըստ Ցեսիոսի:

Եզրային լեռնալանջերից սառն օդը դանդաղ աղվեկցիա է կատարում դեպի գոգավորության հատակը, այստեղ էլ տեղի է ունենում ճառագյայքարձակում. ջերմաստիճանն իջնում է, օդում եղած խոնավությունը առաջացնում է մառախուզ: Ցերեկային ժամերին շրջապատի լեռնալանջերը տաքանում են, նույնիսկ կարող է ձնիալ առաջանալ, մինչեւ գոգավորության հատակին թանձր մառախուզ է, Արեգակի ճառագյայքները չեն կարող թափանցել մինչև գետին, ջերմաստիճանը չի թարձրանում: Ստացվում է այն պատկերը, որ օդում, ըստ բարձրության, ջերմաստիճանը բարձրանում է: Հաճախ է պատահում, որ Երևանում կամ Արմավիրում ջերմաշավը ցույց է տալիս  $-15^{\circ}\text{ից } -20^{\circ}$ , մինչեւ ավելի բարձր՝ Խալինում կամ Հրազդանում  $-5^{\circ}\text{ից } -10^{\circ}$  է: Ջերմաստիճանային շրջադասության երևոյթը տարածված է Արարատյան, Նախիջևանի, Մալաթիայի, Կապուտանի (Ուրմիայի), Շիրակի դաշտերում և այլուր:

Ամենատաք ամիսը հուլիսն է, որոշ դեպքերում՝ օգոստոսը: Հուլիսայն միջին ջերմաստիճանը Մալաթիայի, Կապուտանի (Ուրմիայի), Արարատյան, Նախիջևանի գոգավորությունների հատակին  $25\text{-}29^{\circ}$  է, առավելագույնը՝  $42\text{-}43^{\circ}$ : Քաղաքներում, ասֆալտապատ փողոցների ու մետաղյա տանիքների առկայության դեպքում, շրջապատի համեմատ ջերմաստիճանը  $2\text{-}4^{\circ}$ -ով ավելին է լինում: Օրինակ, Երևանում բանուկ փողոցներում կեսօրից հետո երենմն կարող է նկատվել  $42\text{-}44^{\circ}$ , իսկ  $40^{\circ}$ -ը սովորական է:

Միջին բարձրության լեռնային գոտում հուլիսայն միջինը  $15\text{-}20^{\circ}$  է, բարձր լեռների գոտում՝  $5\text{-}10^{\circ}$  (Վերևից ներքև ուղղությամբ): Նշենք, որ լճային գոգավորությունները զգալիորեն մեղմացնում են ջերմաստիճանային տատանումները: Օրինակ, Սևանում նվազագույն ջերմաստիճանը երբեք  $-30^{\circ}\text{ից}$  չի իջնում, մինչեւ նույն բարձրության շրագուրկ սարավանդներում (Աշոցքի, Կարսի և այլն) կարող է իջնել  $-40^{\circ}\text{ից}$ : Վաճառ լճի ափին ձմեռն այնքան ցուրտ չի լինում, ինչպես նույն բարձրության սարավանդներում, այնպես որ այստեղ ձիթենի է աճում:

Ջերմային ռեժիմի արտահայտման մեջ կարևոր է նշել ցրտահարությունների մասին: Ցամաքային երկրում ցրտահարությունները մեծ վճառ են պատճառում այգեգործությանը: Այս երևոյթը լեռնաշխարհում նկատվում է ամենուրեք, նույնիսկ Սև ծովի ափին, որտեղ ձմռան միջին ջերմաստիճանը դրական է: Երբեմն Հյուսիսային Կովկասից սառն օդային զանգվածները, արևմուտքից շրջանցելով Սև Կովկասի լեռնաշրջան, Սև ծովի վրայով հասնում են Պոնտոսի լեռներին: Ծովի վրա դրանք մի փոքր տաքանում են, բայց ջերմաստիճանը  $0^{\circ}\text{-ից}$  ցածր է լինում, և մի քանի օր կամ նույնիսկ 1-2 շաբաթով ծովափնյա շրջանի ջերմաստիճա-

Առ իշնում է  $-5\text{--}10^{\circ}$ , ցիտրուսային և այլ ջերմասեր կուլտուրաները ցրտահարվում են:

Սիջնաշխարհում էլ ցրտահարությունները հաճախակի երևոյք են: Մրանք ուշ գարնանային և վաղ աշնանային բնույթ ունեն, մեծ վնաս են տալիս ծաղկուն այգիներին: Օրինակ, ապրիլի վերջին, եթե Արարատյան դաշտում ծառերը ծաղկած են, հանկարծ գիշերը ջերմաստիճանը իշնում է  $0\text{--}1^{\circ}$  ցած: 1993 թ. ապրիլին մրգատու ծառերը մասսայաբար ցրտահարվեցին: Այդպիսի ցրտահարություններ լինում են Նախիջևանի, Մալարիայի և այլ դաշտերում:

Ջերմային ռեժիմի արտահայտություններից մյուսը տարվա ընթացքում անսառնամանիք ժամանակամիջոցի տևողությունն է: Ցածրադիր մասերում այն երկարատև է: Աև ծովի ափերին ու Տավրոսի հարավային ստորոտներին ավելի քան 300 օր է, Մալարիայի, Խարբերդի, Մշո, Նախիջևանի դաշտերում՝ 240-280 օր, միջին քարձության սարավանդներում՝ 150-200 օր, ավելի քարձու զանգվածներում՝ 50-60 օր, իսկ ամենաքարձու լեռներում նույնիսկ հուլիս ամսին գիշերային ժերմաստիճանը կարող է  $0^{\circ}\text{--}1^{\circ}$  իշնել: Անսառնամանիք ժամանակահատվածով է պայմանավորված բույսերի վեգետացիան (բուսաճեցողությունը):

Ջերմային ռեժիմի արտահայտություններից է  $0^{\circ}\text{--}1^{\circ}$ ,  $5^{\circ}\text{--}1^{\circ}$ ,  $10^{\circ}\text{--}1^{\circ}$  քարձու միջին օրական ջերմաստիճան ունեցող օրերի ջերմաստիճանների գումարը: Այս բնութագրիչը շատ կարևոր է ազրովիմայագիտության մեջ, և նրանով են պայմանավորված տարրեր կուլտուրաների մշակման հնարավորությունները: Նշված ցուցանիշները կախում ունեն տեղի քարձությունից: Ցածրադիր մասերում ու դաշտերում (Մալարիայի դաշտում, Տավրոսի կիրճում, Դաշտային Արցախում և այլն)  $10^{\circ}\text{--}1^{\circ}$  քարձու միջին ջերմաստիճան ունեցող օրերի ջերմաստիճանների գումարը կազմում է  $4000^{\circ}$  և ավելի՝ հասնելով որոշ տեղերում մինչև  $5000^{\circ}$ : Արարատյան, Նախիջևանի դաշտերում, Տարոնում, Փոքր Կովկասի ստորոտներին մինչև  $4000\text{--}4500^{\circ}$ , միջին քարձության սարավանդներում՝  $2000\text{--}3000^{\circ}$ , քարձու լեռնային գոտում՝  $1000\text{--}1500^{\circ}$ , Վանա լճի ափին՝  $3000^{\circ}$ , Մեծանի ափին՝  $2000\text{--}2300^{\circ}$  և այլն:

Ամփոփելով Հայկական լեռնաշխարհի ջերմային ռեժիմի հարցերը՝ բերում ենք մի ոչ մեծ աղյուսակ, որտեղ տրվում են մի քանի բնակավայրերի հուլիսյան, հունվարյան միջին ջերմաստիճանները և տեղումների քանակը:


Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում ամենատաք և ամենացործ ամիսների  
միջին ջերմաստիճանը և մքննողրտային տեղումների տարեկան քանակը

Դիտակետ	Բազմամյա միջին ջերմաստիճանը		Տեղումների տարեկան քանակը՝ մմ-ով
	ամենատաք ամսին	ամենացործ ամսին	
Սվաս	19,5	-5	420
Մալարիա	26,5	-1,5	440
Վան	22,5	-3,5	380
Կարին (Երզում)	19,5	-9	510
Կարս	17,5	-12,5	530
Գյումրի	19,7	-9,8	459
Այսպալապ	16,4	-7,2	550
Իջևան	21,3	0,0	563
Սևան	15,6	-9,0	434
Արագած թ/լ	9,2	-12,8	1065
Երևան (ազրո)	25,4	-4,9	316
Ջերմուկ	15,6	-8,1	802
Միահինգ	17,6	-5,2	365
Գորիս	18,2	-1,3	709
Մեղրի	25,8	0,9	259
Ստեփանակերտ	22,2	-0,5	560
Նախիջևան	29,0	-6,0	250
Թավրիզ	25,0	-1,5	380
Եղեսչա (Ուշիա)	32	4,5	440
Դիարբերիր	31	2,5	470
Ռիզե	22,5	7	2500
Սամսոն	23,5	6	730
Տրավիզն	23	6,5	850
Բարպում	22	5	2500

### 3. ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ, ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհը մերձարևադարձային գոտու կենտրոնական սեկտորում է գտնվում, ուստի ընդհանուր առմամբ աշքի է ընկնում չորորյամբ, հատկապես Միջնաշխարհում գոյություն ունի խոնավության պակասորդ:

Մքննողրտում միշտ որոշակի քանակությամբ գոլորշիներ կան. մի տեղ



Նկ. 30. Հայկական լեռնաշխարհի մքնոլորտային տեղումների տարեկան քանակը մմ-ով  
1. 3000 և ավելի, 2. 2000-3000, 3. 1000-2000, 4. 750-1000, 5. 500-750, 6. 300-500, 7. 300-ից պակաս

այն առատ է այնքան, որ հագեցնում է օդը, մեկ այլ տեղ՝ այնքան քիչ, որ բույս աճել չի կարող, անապատ է: Գոլորշիների քանակի և ջերմաստիճանների միջև որոշակի կապ կա. որքան օդի ջերմաստիճանը բարձր լինի, այնքան շատ գոլորշի է պետք այն հագեցնելու համար:

Ցածր ջերմաստիճան ունեցող օդում գոլորշիները ստվորաբար քիչ են, որքան ջերմաստիճանը բարձրանում է, գոլորշիների քանակը ևս շատանում է: Սա ընդհանուր օրինաչափություն է, բայց կարող է բացառություն էլ լինել: Օրինակ, հովսիսն բացարձակ խոնավությունը Արագածի բարձր լեռնային կայանում 7,4 մք է, իսկ Մեղրիում՝ 17 մք, հովսվարիսն համապատասխանաբար՝ 1,9 և 4,8 մք: Մի տեսակ հակադրություն է ստացվում. ամռանը Մեղրիում բացարձակ խոնավությունն ավելի շատ է քան Արագածում, բայց մարդը նեղվում է չորությունից, մինչդեռ Արագածում, ուր գոլորշիների քանակը երկու անգամ պակաս է՝ այդպիսի չորություն չի զգում, եղանակը նույնիսկ հարմարվելու (կոմֆորտային) է<sup>1</sup>:

Բանն այն է, որ բարձր ջերմաստիճանի դեպքում, ինչպես Մեղրիում է ամռանը, շատ մեծ քանակի խոնավություն է պետք օդը հագեցնելու համար: Ցածր

<sup>1</sup>Կոմֆորտ է, եթե մարդը իրեն հարմարավելու է զգում:

զերմաստիճանների դեպքում ամենաշնչին քանակի խոնավությունն էլ կարող է օդը հագեցնել: Այսպիսով, ամռանը ամենուրեք բացարձակ խոնավությունն ավելի շատ է քանի ծմբանը, բացարձակ խոնավության սեղոնային ընթացքը համապատասխանում է ջերմաստիճանների ընթացքին: Ամենից մեծ բացարձակ խոնավությունը նկատվում է Սև ծովի ափին՝ միջին տարեկանը 12-14 մք, ամենից փոքրը՝ բարձր լեռներում 2-4 մք: Ամռանը առավելագույնը 20-24 մք է: Օրվա ընթացքում էլ առավելագույնը ցերեկն է, նվազագույնը՝ գիշերը:

Բացարձակ խոնավության մեծությունը կարևոր նշանակություն է ստանում գոլորշիների խտացման պրոցեսում: Օրինակ, եթե բացարձակ խոնավությունը բարձր է, ապա գիշերային ժամերին ցողը առատ է լինում:

Պատկերն այլ է հարաբերական խոնավության դեպքում: Հարաբերական խոնավությունը բացարձակ խոնավության և տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար անհրաժեշտ գոլորշիների քանակի հարաբերությունն է՝ արտահայտված տոկոսներով: Այսինքն՝ օդում եղած գոլորշիները հագեցման համար անհրաժեշտ գոլորշիների ո՞ր տոկոսն են կազմում: Եթե օդը լրիվ հագեցած է գոլորշիներով, ապա բացարձակ խոնավությունն այնքան է, որքան հագեցման առաջականությունն է. հարաբերական խոնավությունը կլինի 100 %:

Հարաբերական խոնավության տարեկան և օրական ընթացքը ջերմաստիճանի ընթացքին հակառակ է, տարվա մեջ ամենից փոքր հարաբերական խոնավությունը լինում է ամռանը, օրվա մեջ էլ՝ կեսօրին, ամենից մեծը՝ ձմռանը և գիշերը:

Հայկական լեռնաշխարհում ամռանը, արևադարձային օդային զանգվածների ներխուժման դեպքում, հարաբերական խոնավությունը իջնում է մինչև 15-20 %, երբեմն՝ 10 %: Այսպիսի պայմաններում բույսերն արագ չորանում են: Նման հարաբերական խոնավությունը դիտվում է ցածրադիր վայրերում. ըստ բարձրության այն մեծանում է և բարձր լեռներում երբեք 30 %-ից շի իջնում: Հարաբերական խոնավությունը տարվա ընթացքում ամենից մեծ է Սև ծովի ավազանում: Որքան հարավ ենք իջնում, այնքան չորությունն ուժեղանում է: Միջնաշխարհում հարաբերական խոնավությունը ամռանը լինում է 40-60, ձմռանը՝ 70-90 %:

Գոյություն ունի ևս մեկ այլ բնութագրիչ, որը ցույց է տալիս օդի խոնավության պատկերը՝ խոնավության դեֆիցիտը (պակասորդ): Խոնավության պակասորդը հագեցման համար անհրաժեշտ խոնավության և բացարձակ խոնավության տարրերությունն է. այն ցույց է տալիս, թե ինչքան խոնավությունն է պետք ավելացնել եղածի վրա, որպեսզի օդը խոնավությամբ հագենա: Բնական է՝ որքան մեծ լինի հարաբերական խոնավությունը, այնքան փոքր կլինի պակասորդը: Հայկական լեռնաշխարհում խոնավության պակասորդը մեծ է ամռանը, փոքր՝ ձմռանը:

Հայկական լեռնաշխարհը տեղումներով հարուստ երկիր չէ: Միայն Պոն-

տական ու Կորդվաց լեռներն են, որ շատ տեղումներ են ստանում, մնացած տարածքներում տեղումների պակասորդը մեծ է, գոլորշացման ունակությունը ավելի մեծ է, քան տեղումների քանակը:

Սև ծովի ափերին միջին բարձրության լեռնային գոտում ամենից առաջ տեղումներն են զալիս. Քարտում մոտ Մըրիալա լեռան վրա 1210 մ բարձրության տարածքում՝ 4000 մմ, որը Հայկական լեռնաշխարհում առավելագույնն է: Դեպի արևմուտք քանակը պակասում է՝ Իրիսի (Եշիլ-Իրմակի) գետաբերանի մոտ մինչև 1000 մմ: Պոնտոսի լեռների հակառակ լանջերին՝ Գայլգետի և Շորդիսի ավազաններում տեղումների քանակը 800-1200 մմ է:

Առաջ տեղումներ քափվում են Տավրոսի հարավային լանջերին, հատկանի Հեքյարի լեռներում: Դա բացատրվում է նրանով, որ Միջերկրական ծովից եկող օդային զանգվածները, հանդիպելով լեռներին, լանջերով բարձրանում են, և նպաստավոր պայմաններ են ստեղծվում գոլորշիների խտացման համար: Տեղումների քանակը միջին բարձրության լեռների գոտում հասնում է 1000 մմ-ի, արևելյան մասում՝ որոշ աղբյուրների համաձայն մինչև 2000 մմ: Տավրոսում զարնաճը ամեն օր աճարուած է լինում:

Այլ է պատկերը Միջնաշխարհում: Այստեղ ցածրադիր գոգավորություններում (Արարատյան և Նախիջևանի դաշտեր, Ուրմիայի գոգավորություն) դրանց քանակը չի անցնում 250-300 մմ-ից: Մոտավորապես նույն պատկերն է Մալարիայի և Խարբերդի դաշտերում՝ 350-400 մմ: Ամենաչոր վայրերն են Նախիջևանի և Ուրմիա լճի գոգավորությունները, որտեղ տեղումների քանակը մինչև 200 մմ է:

Հատ բարձրության՝ տեղումների քանակը ավելանում է և 3000-3500 մ մակարդակում (Արագած, Սիփան, Թոնդրակ, Արարատ, Զանգեզուրի լեռներ և այլն) հասնում է առավելագույնը՝ 800-1000 մմ: Բարձր լեռներում հաճախ կարելի է նկատել, թե ինչպես կատարային մասում աճպամածություն չկա, արևը տաքացնում է, մինչդեռ մի փոքր ցած՝ կայծակ ու որոտ է, տեղումներ են քափվում:

Նկատվում է մի ընդհանուր օրինաչափություն. հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք տեղումների քանակը պակասում է, սակայն եզրային լեռների պատմեշում օրինաչափությունը խախտվում է: Դա, ինչպես նշվել է, բացատրվում է նրանով, որ Վերջիններս պատմել են հանդիսանում դրսից եկող խոնավության համար, որն առատորեն քափվում է լեռների արտաքին լանջերին:

Լեռնաշխարհի միջին բարձրության լեռների գոտում, որտեղ տափատառներն են (Շիրակի, Կարսի սարավանդներ, Ալաշկերտի, Մանազկերտի դաշտեր, Վանա, Սևանա լճերի ավազաններ և այլն), տեղումների քանակը 400-600 մմ է: Տեղումների նման քանակը երաշխավորված թերք չի ապահովում, որոշ տարիներ 30-40 %-ով պակաս է քափվում, և երաշտ է լինում:

Քանի որ օդային զանգվածները հիմնականում արևմուտքից են ներքա-

փանցում, ապա լեռնաշղթաների արևմտյան լանջերին տեղումների քանակը մի փոքր ավելի է, քան արևելյան լանջերին: Բացառություն են կազմում Փոքր Կովկասի լանջերը, որտեղ արևելյան լանջերին են տեղումները առատ: Դա բացատրվում է Կասպից ծովի ազդեցությամբ: Բանն այն է, որ Կոր-Արար-սյան դաշտավայրում գոլորշիների խտացման մակարդակը շատ բարձր է՝ 4-5 կմ և եկող խոնավությունը չի խտանում: Հասնելով Փոքր Կովկասին՝ տեղի է ունենում օդի վերնարաց հոսանք, և բարենպաստ պայմաններ են ստեղծվում գոլորշիների խտացման համար: Օրինակ, Գորիսում, ինչպես նշել ենք, տարեկան տեղումների քանակը 700 մմ է, իսկ նրանից ոչ հեռու Սյահանում՝ լեռներից այս կողմ՝ 350 մմ: Այդ նոյն օրինաչափության պատճառով Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջին անտառներ են աճում, մինչդեռ արևմտյան լանջին խիստ չորային է՝ կիսաանապատներ են: Մընողրտային տեղումների բաշխումը ցույց է տրված նկ. 30-ում:

Լանջափուների ձևավորման պրոցեսում շատ կարևոր բնութագրի է խոնավացման գործակիցը՝  $K = \frac{x}{y}$ , որտեղ  $x$ -ը տեղումների տարեկան քանակն է, իսկ  $y$ -ը՝ գոլորշունակությունը:


Տեղումների տարածքային բաշխումը վերևում պարզ դարձավ: Սի քանի խոսք՝ գոլորշունակության-գոլորշացման ունակության մասին: Գոլորշունակությունը այն պրոցեսն է, երբ որոշակի ջերմային պայմաններում ջրի ազատ մակերևույթից տեղի է ունենում որոշակի քանակի գոլորշացում: Շեշտենք՝ ջրի ազատ մակերևույթից: Գոլորշունակությունը չպետք է շփոթել գոլորշացման հետ: Օրինակ, Սահարա անապատում գոլորշունակությունը տարեկան 2500-3000 մմ է, մինչդեռ գոլորշացումը՝ մի քանի կամ մի քանի տասնյակ մմ, քանի որ ջուր չկա, որ գոլորշան:

Գոլորշունակությունը Հայկական լեռնաշխարհում ամենից մեծ է՝ Նախիչևանի, Ուրմիայի, Արարատյան գոգավորությունների հատվածին՝ 1200-1500 մմ: Տափաստանյան հատվածներում՝ շուրջ 1000 մմ, լեռնային բարձր մասերում՝ 300-500-700 մմ: Սև ծովի առավելագույն մասերում, որտեղ օդուն խոնավությունը շատ է, գոլորշունակությունը մեծ չէ՝ 800-1000 մմ:

Ահա, տեղումների քանակի հարաբերությունը գոլորշունակությանը՝ ցույց է տալիս վայրի խոնավացման աստիճանը: Հայկական լեռնաշխարհում ամենից փոքր խոնավացման գործակից ունեն Արարատյան, Նախիչևանի և Ուրմիայի գոգավորությունների ցածրադիր մասերը՝ 0,25 և պակաս: Գոլորշունակությունը չորս անգամ գերազանցում է տեղումների քանակը: Լեռնաշխարհի տափաստանյան հատվածներում այդ գործակիցը 0,4-0,7 է, հատկապես խոնավության խիստ պակաս նկատվում է ամռան երկրորդ կեսին:

Սկսած 2000-2500 մետրից ավելի բարձր լեռնահամակարգերում գործակիցը 1,0-ից մեծ է, տեղումներն ավելի են, քան գոլորշունակությունը: Ամենից

մեծ գործակիցը Պոնտոսի լեռնային համակարգի հյուսիսահայաց լանջերին է, հասնում է 5-6-ի և ավելի: Գործակիցը մեծ է նաև Հայկական Տավրոսի և Հերյարի լեռների համակարգում, որտեղ տեղումներն առատ են ձմռանը (տես նկ. 31):



Նշենք, որ Հայկական լեռնաշխարհի Միջնաշխարհում, որտեղ մշտական բնակավայրերը հասնում են 2100-2400 մ բարձրության, գործակիցը ամենուրեք 1,0-ից փոքր է, և կայտն բերքի ապահովման համար արհեստական ոռոգում է անհրաժեշտ: Նկատվում է նաև այն, որ 1,0-ից մեծ գործակից ունեցող հատվածներում ամռան երկրորդ կեսը չոր է՝ տեղումների սեղոնայնության պատճառով:

Խոնավացման գործակիցը ցայտուն արտահայտված վերընթաց գոտիականություն ունի, ըստ բարձրության այն աճում է. աճցնում 1,0-ից (տես նկ. 32) գրաֆիկը:

Մընդուրտային տեղումները Հայկական լեռնաշխարհում սեղոնային բնույթ ունեն: Առավելագույնը թափվում է զարնանը, մայիս-հունիսին, երկրորդ առավելագույնը աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբերին: Նվազագույնը ամռանն է՝ հուլիս-օգոստոսին: Սև ծովի ափերին տեղումների առավելագույնը աշնանն ու ձմռանն է, ինչպես ամբողջ Միջերկրականի ավազանում է: Մանրամաղ անձրևը կարող է շաբաթներով տեղալ: Զմեռային տեղումների առատությունը հատուկ է նաև

Գայլգետի և Շորդիսի ավազաններին, որտեղ շատ ձյուն է գալիս:

Միջնաշխարհում գարնանային և ամառային տեղումները հանկարծակի ու տեղատարափ բնույթի են: Ցանաքային կիմայի բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ սա է. որևէ վայրում օդի ինտենսիվ վերնրաց հոսանք է առաջանում, ձևավորվում են ամպրոպային ամպեր, 10-20 րոպեի ընթացքում հորդառատ անձրև է գալիս: Հանկարծակի տեղումները հաճախ ահարկու սելավների պատճառ են դառնում ու երեմն պատճառում մարդկային զոհեր: Պատահել են տեղատարափ անձրևներ, որոնց միջուկում (ամենահորդառատ մասում) մեկ րոպեում քավվել է 5-6 մմ: Նման տեղատարափները, բարեբախտաբար, մեծ արեալ չեն ընդգրկում մի քանի տասնյակ քառ. կմ: Տեղատարափ անձրևը մեկ ժամում կարող է բերել 30-40 մմ, նույնիսկ մինչև 80-100 մմ անձրև:


Հայկական լեռնաշխարհում ծմբանը ամենուրեք ձյուն է գալիս, չկա մի այնպիսի վայր, որտեղ տեղումները ձյան ձևով չինեն: Բայց կայուն ձնածածկությը ոչ ամեն տեղ է: Հաստատուն ձյան շերտ առաջանում է 1300-1600 մ-ից բարձր սարավանդներում ու լեռներում կամ փակ գոգավորությունների մեջ:

Սև ծովի հարավային ափին ձյուն գալիս է, բայց այն կամ անմիջապես հալվում է, կամ մնում է մի քանի օրից ոչ ավելի, իսկ Պոնտական լեռներում՝ 1300 մ-ից բարձր, արդեն կայուն ձնածածկույթ է ստեղծվում: Նոյնը լեռնաշխարհի հարավում է. Հայկական Սիջագետքում կայուն ձնաշերտ ստեղծվում է 1300-1500 մ-ից վեր: Կայուն ձնածածկույթը բնորոշ է Անդրբին, ավելի ցամաքային հատվածներին, որտեղ հունվարյան միջին ջերմաստիճանները 0-ից ցածր են և երկար ժամանակ ձյունը չի հալվու:

Ջյան ծածկույթի հզրությունը (հաստությունը) և տևողությունը կախված են ձմեռային կոշտ տեղումների քանակից ու տեղի բարձրությունից: Որքան վայրը բարձր է ծովի մակերևույթից, այնքան և՛ ձնածածկույթն է հզոր, և՛ տևողությունն է երկար: Լեռնաշխարհում ամենից շատ ձյան տեղումներ գալիս են Պոնտական լեռներում և Սև ծովի ավազանի տարածքում: Շորդիսի և Գայլգետի ավազաններում ձյան շերտի հաստությունը մի քանի մետրի է հասնում, բնակավայրերը ծածկվում են ձյան շերտով, և ալքանատեսների վկայությամբ՝ տնից տուն գնալու համար ձյան մեջ հաճախ բունելներ են փորում: Զնաշերտի մեծ հզրության պատճառով գարունը ուշ է բացվում: Մեծ քանակի ջերմային էներգիա է պետք ձյունը հալեցնելու համար. 1 գ ձյունը կամ սառույցը հալեցնելու համար անհրաժեշտ է 80 կալորիա: Զնառատ շրջաններում աշունն ավելի տաք է, քան գարունը:


Միջնաշխարհում միջին բարձրության սարավանդներում ձյան շերտի հաստությունը 30-50 սմ է, որոշ տարիներին՝ 70 սմ: 3000 մ բարձրության մակարդակում ձյան շերտի հաստությունը հասնում է 70-150 սմ-ի, օրինակ, Ա-

## ՄԻԶՆԱԱՇԱՐ



Նկ. 32. Խոնավացման գործակիցը՝  $\frac{x}{z}$ -ըստ բարձրության

## ՄԵՐՁՄԵՎԾՈՎՑԱՆ ԱՎԱԶԱՆ



բազածի վրա՝ 2 մ: Համեմատաբար ձնառատ են Աբովի լեռնազանգվածը, Սամսարի, Արփիանի, Այծպտկունքի, Բարձր Հայքի լեռների բարձր մասերը: Զմեռային ամիսներին ջատ լեռնանցքներ փակվում են, հաճախ են ձնաբբերը, որոնք վերադասավորում են ձյան շերտը և որպես կանոն ձյունը կուտակվում է ձորերում, գոգավորությունների մեջ, ջրաժանները հաճախ զրկվում են ձնաշերտից: Վ. Վ. Սապոժնիկովը (1917) գրում է, որ Մուշի հովտում մարդու հասակի չափ ձյուն է գալիս:

Միջին բարձրության լեռներում ձնածածկույթի տևողությունը ցածրադիր մասերում մինչև 3 ամիս է, բարձր լեռների գոտուն մոտ՝ 5-6 ամիս, իսկ 3000-3200 մ-ից բարձր մասերում՝ գոգավորություններում ձնաբերը կարող են պահպանվել շուրջ տարի:

Լեռնաշխարհում ձնոանը հաճախ են ձնաբբերը, մանավանդ միջին և բարձր լեռների գոտում: Այս մասին դառնությամբ է խոսում հույն պատմիչ ու գիտնական Քսենոֆոնը, որը մ. թ. ա. 4-րդ դարում հունաց զորքի գլուխ անցած՝ Հայաստանի վրայով Հունաստան էր վերադառնում: Զմեռը զորքն անցել էր Միջնաշխարհով և բազում զրկանքների էր հանդիպել՝ ընկնելով ձնաբբերի մեջ: Նկարագրություններ կան Տավրոսի լեռնանցքերում ձնաբբերի ու ձնահյուսերի մասին, մասնավորապես շատ են նկարագրում Զորապահակ

լեռնանցքի (Բաղեշի՝ Բիրլիսի մոտ) ձնաբքերի մասին, որտեղ շատերն են գտել իրենց գերեզմանը:

Սուրաբոնը նկարագրում է, որ Հայաստանի լեռներում ձյունն այնքան առատ է, որ ճանապարհորդները իրենց հետ ծողեր են տանում և բութի դեպքում ծողը կանգնեցնում են ուղղահայաց, որ թաղվածներին գան օգնության՝ նկատելով այդ ծողերը: Վկայակոչելով ամերիկյան մի քարոզչի՝ Ե. Ուկլյուն գրում է, որ Բաղեշում ձյան շերտի հաստությունը 5,5 մ է:

Լեռնաշխարհում հաճախակի են ճնահյուսերը, հատկապես՝ գարնանային ամիսներին: Ջան վիրխարի զանգվածները, լեռների ծերպերից պոկվելով, զահավիժում են հովհանները՝ ճանապարհին ներառնելով նորանոր զանգվածներ: Սրբաց նետվելով ցած՝ ձյան փոշին և զանգվածները կարող են խորտակել գյուղեր, իրենց մեջ առնելով նաև մարդկանց, զլորվելով իջնել հովհանները: Ջան հյուսերը հատկապես վտանգավոր են մնած թերության լեռնալանջերում:

Հայկական լեռնաշխարհում ճնհալը շատ տևական է: Ցածրադիր մասերում սկսվում է փետրվարի վերջին, իսկ բարձրադիր լեռներում մասսայական ճնհալը տևում է մինչև հունիս ներառյալ (հիմնականում ապրիլ-մայիսին), որից գետերը հորդանում են: Ցածրադիր մասերում ճնհալը մեկ-երկու օրում ավարտվում է, որովհետև այն շատ բարակ է: Իսկ լեռներում տևում է մի քանի շաբաթ: Այդ ընթացքում կարող է նոր ձյուն գալ, ջերմաստիճանը իջնել, ձընհալը դադարել և նորից շարունակվել:

Հայկական լեռնաշխարհին շատ բնորոշ են ամպրոպները: Շիշտ է, ամպրոպների քանակով այն չի կարող մրցել հասարակածային երկրների հետ, ինչպիսին են Շավա կողին (տարեկան 320 օր), Սինգապուրը (150 օր), Կալկաթան (90 օր), սակայն նույն աշխարհագրական լայնության տակ գտնվող կամ հարևան երկրների համեմատությամբ՝ այստեղ ամպրոպները շատ են: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամպրոպներով հարուստ են հատկապես հրաբխային բարձր լեռները: Մենք այն կարծիքին ենք, որ այստեղ նշանակություն ունեն երկու հանգամանք՝ ապարների քիմիական կազմը և մնացորդային մազնիսականությունը: Հրաբխային ապարներում երկարի օրինին ու թերոքսիդը միասին կազմում են 4-10 %, և ապարները օժտված են մնացորդային մազնիսականությամբ, որի շնորհիվ էլեկտրական լիցքերի պարզումները հաճախ կատարվում են ուղղակի լավաների մակերևույթին: Հրաբխային զանգվածների վրա կայծակը ճայրում է գետնի վրա, և առաջանում են այսպես կոչված ֆուլգուրիտներ (կայծակի այրվածքներ): Արագածի, Սիփանի, Արարատի վրա այդպիսի ֆուլգուրիտները գրեթե ամեն քայլափոխի են հանդիպում:

Ամպրոպներն ուղեկցվում են հորդառատ տեղատարափ անձրևներով, որոնք հաճախ սելավների առաջացման պատճառ են դառնում: Եղել են դեպ-

թեր, երբ մեկ տեղատարափի ժամանակ մեկ ժամվա ընթացքում եկել է 80-120 մմ անձրև։

Հայկական լեռնաշխարհում մքնողրդտային երևոյթներից են մառախոսդները։ Մառախոսդը օդի երկրամերձ շերտում մանր կարիլների կամ սառցի բյուրեղիկների կուտակումից է առաջանում, որը նվազեցնում է տեսանելիությունը։ Այն առաջանում է գերիագեցած գոլորշիների խտացումից՝ կոնդենսացիայից։ Տարբերում են մառախոսդների ծագումնաբանական մի քանի տիպեր։ Հայկական լեռնաշխարհում պրանք հիմնականում դիտվում են սառեցման հետևանքով։ Ինտենսիվ ճառագայթարձակման կամ ադվեկցիայի հետևանքով գետնի մակերևույթը արագ պաղում է, և նրան շփող օդում մառախոսդ է գոյանում։ Սևանի ավազանում Վարդենիսի լեռնաշդրայի հյուսիսային լանջին՝ Հայոց ձորի լեռնանցքից 5 կմ հյուսիս արևածագից առաջ քանձր մառախոսդ է գոյանում։ Արևածագից հետո մառախոսդը արագույթամբ ցրվում է։ Մեր լեռնային երկրում մառախոսդներ ամռանը շատ են լինում լեռնանցքերում։ Օրինակ, Սևանի լեռնանցքը հաճախ է պատած մառախոսդի քանձր շերտով։

Գոգավորությունների հատակին մառախոսդներ լինում են ձմեռային ամիսներին ջերմաստիճանային շրջադասության պայմաններում, որի մասին արդեն ասվել է։

Մառախոսդի մի հազվագյուտ տեսակ ենք դիտել Հնդկաստանում։ Կալկարա քաղաքում։ Դեկտեմբեր ամիսն էր։ Վաղ առավոտյան մեկնելու էինք օդանավակայան։ Կարծես գետնի վրա կաք էր փուած։ մառախոսդի շերտը ուներ շորոշ 1 մ հաստություն, հազիվ հասնում էր ավտոմեքենայի լուսամուտին։ Այդ շերտից բարձր՝ օդը միահենցամայն մարուր ու քափանցիկ էր, մառախոսդից դեպի պարզ օդը՝ անցումն այնքան ցայտուն էր, որ երբ ավտոմեքենան անցնում էր, մառախոսդի ծվենները ող էին բարձրանում և անմիջապես նորից նոսում, կարծես մենք գնում էինք ջրի միջով։ Խճուղին բոլորովին չէր երևում, և վարորդը կողմնորոշվում էր հեռագրայուններով։ Եթե հետաքրքրվեցինք, թե սա ինչ հրաշք է, վարորդը շատ անտարբեր պատասխանեց, որ նման մառախոսդ ձմռանը հաճախ է լինում և իրենք սովոր են այդպիսի պայմաններում երբևէ են։ Այդպիսի մառախոսդ Հայկական լեռնաշխարհում չի առաջանում։ Թերևս Սև ծովի հարավային ափին ծովից ավելի պաղը՝ ցամաք անցնող օդը կարող է նմանատիպ մառախոսդ առաջացնել, քայլ այդքան որոշակի ու ցայտուն շերտով մառախոսդ դեռևս նկարագրված չէ։

Հայկական լեռնաշխարհում շատ զարգացած է կարկտահարությունը։

Ամառային ամիսներին ռելիեֆի տարբեր մասերը տարբեր չափով են տարանում և ահա տեղ-տեղ առաջանում է օդի վերընթաց հոսանք։ Օդում եղած գոլորշիները վեր բարձրանալով հագեցնում են օդը, և պետք է որ վերածվեն կարիլների, ու անձրև տեղա։ Քայլ անձրևի կարիլների առաջա-

ման համար անհրաժեշտ են այսպես կոչված խտացման կորիզներ, իսկ դրանք միշտ չեն որ օդում բավարար քանակով առկա են: Ահա այս դեպքում կարիւներ չեն առաջանում, և խոնավությամբ գերհագեցած օդը շարունակում է վեր բարձրանալ, հարաբերական խոնավությունը 100 %-ից անցնում է, բայց անձրև չկա: Մեծ բարձրության վրա (խտացման մակարդակից շատ վեր) գոլորշիները վերածվում են սառցե ասեղիկների և երկրի ձգողական ուժի շնորհիվ անկում կատարում. մինչև գետին հասնելը, նրանց շուրջը առաջանում է սառցի նոր շերտ և, երբ գետին են հասնում կարկտի հատիկները, ունենում են բավական մեծ զանգված (պատահել է՝ 15-20 սմ տրամագծով, իսկ հավի ձվի մեծության կարկուտը հաճախակի է):

Կարկտահարությունը մեծ արեալ չի ընդգրկում, այն կարող է սահմանափակվել մի քանի հենքտարի չափով, երբեմն՝ տասնյակ քառ. կմ: Կարկտահարությունը աղետալի երևոյք է, որի դեմ գիտական միտքը միջոցներ է մշակել: Երբ հավաքվում են կարկտարեր ամպեր և արդեն անկասկած է դառնում կարկտահարության վտանգը, հատուկ թնդանորներից կամ ականանետներից դեպի վեր կրակում են այնպիսի արկեր, որոնք պարունակում են խտացման կորիզներ: Ամենահաջողը արծաթի յոդիտն է: Սրա յուրաքանչյուր մոլեկուլը դառնում է խտացման կորիզ, որի շուրջը խոնավությունը խտանում, ջուր է դառնում և կարիլ մեծանալով ընկնում է ցած: Այդ դեպքում հորդառատ անձրև է զայխ: Նման կարգի փորձերը Հայաստանի Հանրապետությունում տվել են միանգամայն դրական արդյունքներ:

Մընողորտային տեղումների տիպերից են հորիզոնական տեղումներ՝ եռյամը, ցողը, ջենջարը, մերկասառույցը: Սրանք գումարվում են վերևից քափվող տեղումներին:

Եղյամ առաջանում է երկրի մակերևույթի վրա տարբեր առարկաների մակերևույթին, որոնք գիշերվա ժամերին արագ կորցնում են ջերմությունը և նըրանց ջերմաստիճանը արագ իջնում է 0-ից ցած: Մի փոքր ավելի բարձր ջերմաստիճան ունեցող օղը երբ շփվում է այդ մակերևույթին, ապա եղած գոլորշիները անմիջապես սառչում են այդտեղ և բյուրեղանում: Դա հիմնականում տեղի է ունենում խոր աշնանային ամիսներին, և հաճախ տանիքները, մետաղյա մակերևույթները ծածկվում են եղյամի շերտով. կարծես ձյուն է եկել:

Ցողը նույն եղանակով է առաջանում միայն 0-ից բարձր ջերմաստիճանի դեպքում, և արևածագից առաջ մարզագետներում բույսերը ծածկվում են ցողի կարիւներով: Հաճախ մինչև արևածագ մարզագետնում ման զայխ ուրբերը բրջիկում են: Արևածագից հետո ցողը գոլորշանում է ջերմաստիճանի բարձրացման շնորհիվ:

Ջենջարն առաջանում է սրածայր առարկաների վրա հիմնականում ձըռունը. ծառերի ճյուղերը, հեռագրալարերը և այլն ծածկվում են ջենջարի շեր-

տով: Դա օդի խոնավությունն է, որ սառնամանիքի դեպքում խտանում, բյուրեղանում է սառն առարկաների վրա, կարծես ձյան շերտ լինի:

Մերկասառույցը առաջանում է  $0^{\circ}$ -ից ցածր ջերմաստիճան ունեցող առարկաների վրա գիշերային ժամերին, երբ գերսառեցած կարիլը նստում է այդ մակերևույթների վրա, բայց չի բյուրեղանում, ինչպես եղյամի դեպքում է բյուրեղանում: Օրինակ, խճուղիների ասֆալտը այնպես է սառցակալում, որ նրա վրայով երթևեկելը վտանգավոր է դառնում:

Հորիզոնական տեղումների քանակը թափվող տեղումների համեմատ շատ քիչ է, բայց որոշ դեպքերում զգալի նշանակություն ունի: Օրինակ, մերձալայան մարգագետիններում երթեմն ցողն այնքան շատ է լինում, որ կարիլները սողալով հասնում են գետնին, ներծծվում ու սնում բույսերին:

#### 4. ՍԹՆՈԼՈՐՏԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ավարտելով տեղումների բաժինը՝ ընթերցողի ուշադրությունը ցանկանում ենք իրավիրել նաև մեկ կարևոր հարցի վրա, որը միայն վերջերս է ծագել: Դա մընոլորտային տեղումների հետ միասին լուծված նյութերի մուտքն է: Ժողովրդի մեջ այս համոզմունքը կա, որ անձրևի կամ ձյան ջուրը շատ մարուր է: Բնուրյան մեջ այդպես պետք է լիներ, չ<sup>o</sup> որ գոլորշիները լուծված նյութեր չեն պարունակում, հետևաբար անձրևի ջուրը թորած պետք է լինի: Սակայն իրականում այդպես չէ, և այստեղ մեծ է մարդու ազդեցությունը: Գործարաններից կամ տրանսպորտային միջոցներից արտանետված թափոնները, լուծվելով անձրևաջրերի մեջ, իջնում են հողաչերտի մեջ:

Երևանում ջերմակայանի շրջանից վերցրած բարև ձյան հալեցումից հետո մեկ լիստ ջրում հայտնաբերվել են մինչև 300 նզ զանազան բաղադրամասեր, այսինքն՝ կրկնակի շատ, քան ակունքի խմելու ջրում: Արդյունաբերական շրջաններում, ջերմակայանների մոտ, ավտոտրանսպորտի կողմից ծանրաբեռնված վայրեղում մընոլորտային ջրերի միներալացումը 100 մգ/լ-ից ավելի է: Հայկական լեռնաշխարհում այս տեսակետից ամենից աղտոտված տեղումներ թափվում են Արարատյան դաշտում, որը կապվում է Երևանի, Արարատի արդյունաբերական և տրանսպորտի թափոնների հետ: Զննույին ամիսներին ջերմաստիճանային շրջադասության պայմաններում առաջանում է բունաճշուշ (ամոգ):

Հայկական լեռնաշխարհի միջին բարձրության և բարձր լեռներում մընոլորտային տեղումները համեմատաբար մաքուր են. լուծված նյութերի քանակը մեկ լիստ ջրում 30-50 մգ-ից չի անցնում: Հարկ է նշել, որ վերջին ժամանակներս նկատվում է մընոլորտային ջրերի աղտոտման ավելացման աճ, որը կապվում է համամոլորակային աղտոտման հետ:

Հաճախ է պատահում, որ Հայկական լեռնաշխարհ են թափանցում արևադարձային օդային զանգվածներ, որոնք բերում են նաև մեծ քանակի անապատային փոշի: Մթնոլորտային տեղումների հետ այդ փոշին իջնում է գետին, ողը լվացվում է տեղումների միջոցով: Եղել են դեպքեր, երբ կարմիր ձյուն է տեղացել. դա անապատային փոշու խառնուրդ է ձյան հետ:

Ավարտելով կիմայի բաժինը՝ ցանկանում ենք մեկնարաբնել նաև մի կարևոր հարց՝ ջերմության ու խոնավության փոխարարելությունը. չէ՞ որ այս երկու բնութագրիներից է կախված երկրագործությունը, բերք ու բարիք ստանալու ակնկալությունը:

Որքան բարձր է մերձգետնյա շերտի ջերմաստիճանը, այնքան ուժգին կիմայի գոլորշացման ունակությունը՝ գոլորշունակությունը<sup>1</sup>: Գոլորշացման ունակությունը դեռևս գոլորշացում չէ, օրինակ՝ անապատներում գոլորշունակությունը մնձ է, բայց գոլորշացումը՝ փոքր, պարզապես ջուր չկա, որ գոլորշացնա:

Որպես մերձարևադարձային երկիր Հայկական լեռնաշխարհում գոլորշունակությունը մնձ է, տարբեր շրջաններում տատանվում է տարեկան 500-1500 մմ-ի միջև: Սև ծովի հարավային ափերին խոնավության առկայության պայմաններում գոլորշունակությունը մնձ չէ՝ 600-800 մմ, Միջնաշխարհում 1000-1300 մմ, հարավային շորային շրջաններում՝ մինչև 1300-1500 մմ: Ըստ բարձրության գոլորշունակությունը փոքրանում է: Եթե Արարատյան դաշտում այն 1200-1300 մմ է, ապա միջին բարձրության գոտում՝ 600-800, բարձր լեռներում՝ 300-500 մմ և այլն: Գոլորշացման ունակությունը մեծանում է քամիների առկայության պայմաններում:

Տարվա ընթացքում թափվող մթնոլորտային տեղումների ու գոլորշունակության միջև որոշակի կապ կա: Տեղումների քանակի հարաբերությունը գոլորշունակությանը կտա խոնավացման գործակիցը՝  $K = \frac{x}{z}$ , այսինքն՝ եկած տեղումները գոլորշացման ունակության որ մասն են կազմում: Պարզվում է, որ լեռնաշխարհի ցածրադիր շորային հատվածներում այդ գործակիցը 0,2-0,3 է, այսինքն՝ տեղումները կազմում են գոլորշացման ունակության 20-30 %-ը: Ըստ բարձրության՝ այդ ցուցանիշը մեծանում է: Տափատանային հատվածներում տեղումների քանակը 500-600 մմ է, գոլորշունակությունը՝ մինչև 1000 մմ, խոնավացման գործակիցը կիմնի 0,5-0,6: Բարձր լեռներում տեղումները 800-1000 մմ են, գոլորշունակությունը՝ 500-800 մմ: Այս դեպքում արդեն տեղումներն ավելի շատ են, քան գոլորշունակությունը, նշանակում է խոնավացման գործակիցը 1-ից մեծ է: Դա նշանակում է խոնավության պակասորդ (դեֆիցիտ) չկա, տեղումները լիբի կարող են բավարարել բուսականության պահանջները: Խոնավացման գործակիցի հարցը շատ կարևոր նշանակու-

<sup>1</sup> Գոլորշունակությունը տվյալ վայրում ջրի ազատ մակերևույթից հնարավոր գոլորշացման տարեկան քանակն է՝ մմ-ով:

բյուն է ստանում ցածրադիր ու միջին բարձրության գոտիներում: Պարզվում է, որ Միջնաշխարհում գրեթե ամենուր, որտեղ հողը մշակվում է, խոնավացման գործակիցը 1-ից փոքր է, նշանակում է՝ գոյություն ունի խոնավության պակասորդ. ուրեմն կարիք կա արհեստական ռոռոգման:

Ըստ բարձրության՝ խոնավացման պակասորդը փոքրանում է, խոնավացման գործակիցը մոտենում է 1,0-ի, և միայն այս դեպքում է, որ արհեստական ռոռոգման անհրաժեշտությունը վերանում է, իսկ բարձր լեռներում ռոռոգման անհրաժեշտությունը ընդանրապես չի զգացվում:

Լեռնաշխարհում ամենից մեծ խոնավացման գործակից նկատվում է Սև ծովի ավազանում և Կորդվաց լեռներում: Սև ծովի մերձափնյա մասերում, որտեղ տեղումները հասնում են 1500-3000 մմ-ի, խոնավացման գործակիցը 4-ից բարձր է, տեղումների քանակը մի քանի անգամ գերազանցում է գոյուրշունակությանը: Մոտավորապես նույնն է Տավրոսի արևելյան մասում: Այնտեղ, որտեղ խոնավացման գործակիցը 1-ից փոքր է, անտառային բուսականությունը բացակայում է: Անտառի աճման պայմաններից մեզը խոնավացման 1,0 կամ ավելի մեծ գործակիցն է:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի մեծ մասում ջերմության և խոնավության փոխհարաբերությունն այնպիսին է, որ գոյուրյուն ունի խոնավության պակասորդ: Հազարամյակներ առաջ մարդն այդ մասին արդեն գիտեր և միջոցներ է մշակել այդ պակասորդը լրացնելու համար, դիմել է արհեստական ռոռոգման:

Վերջին ժամանակներս գիտության մեջ ծնունդ է առել մի նոր հասկացություն՝ «անապատացում» անվամբ, որը ՄԱԿ-ի բնորոշմամբ նշանակում է տարածքի-լանդշաֆտների վատքարացում (դեգրադացիա՝ անբրոպոգեն ներգործությամբ: Ներկայումս անապատացման պրոբլեմվ գրադիում է ՄԱԿ-ի UNEP կազմակերպությունը: Առանձնացվում է անապատացման 4 տիպ՝ հիպերարիդ, արիդ (չորային), կիսաչոր և չոր սորիումիդ: Առաջին տիպը Հայկական լեռնաշխարհի տարածքում տարածված չէ, դրանք խիստ չոր անապատներն են (Սահարա, Նեֆուդ, Ռուբ-Էլ-խալի և այլն): Մնացած երեք տիպերը արտահայտված են Հայոց աշխարհում:

Արիդ (չորային) են Արարատյան, Նախիջևանի, Կապուտանի (Ուրմիայի) գոգավորությունների ցածրադիր մասերը՝ մինչև 1400-1600 մ: Այստեղ խոնավացման գործակիցը 0,2-0,4 է: Կիսաչոր են՝ Մալաթիայի, Տարոնի, Շիրակի, Սիսիանի դաշտերն ու Արարատյան, Նախիջևանի, Կապուտանի (Ուրմիայի) գոգավորությունների միջին բարձրությունների գոտին՝ մինչև 1500-1800 մ բարձրությունները, տեղ-տեղ՝ մինչև 2000 մ: Խոնավացման գործակիցը 0,4-0,6 է: Չոր սորիումիդ հատվածները տարածված են սրանից բարձր, որտեղ խոնավացման գործակիցը 0,6-0,8 է: Նշված բոլոր գոտիներում ամռան երկրորդ կեսը չորային է:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎ ՀԱԳՈՒՅՆ ՍԱՌՅԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Սկսած 19-րդ դարից գիտական միտքը սկսեց կրնկրետորեն զբաղվել ժամանակակից և հնագույն սառցապատումների հարցով: Մինչ այդ, անշուշտ, որոշակի տեղեկություններ կային սառցադաշտերի մասին, սակայն սիստեմատիկ ուսումնասիրությունները բացակայում էին:

Հայկական լեռնաշխարհի հնագույն սառցապատումների մասին տեղեկությունները հավաքվեցին 19-րդ դարի վերջից, իսկ 20-րդ դարում մանրակըրկիտ ուսումնասիրություններ ծավալվեցին հատկապես արևելյան (անդրկովկասյան) հատվածում: Հայտնի են Վ. Պալքրեի, Հ. Արիխի, Շանտրի, Կ. Ֆոխսի, Ա. Ռենգարդի, Ժելտովի, Ա. Պաստուխովի, Բորեկի, Դումիտրաշկոյի, Լ. Մարտուշշիլու, Ս. Բալյանի, Հ. Գարբրիելյանի ուսումնասիրությունները:

Բարեխատն, արևադարձային երկրներում սառցադաշտերը գոյանում են միայն բարձր լեռներում, որտեղ ճյան մուտքի ու ելքի հաշվեկշիռը դրական է, և ամեն տարի ճյունը կուտակվում է, վերածվում սառցադաշտի:

Երկրագնդի վրա բոլոր սառցադաշտերը միասին վերցրած պարունակում են 24 մլն խոր կմ քաղցրահամ ջոր՝ մի հանգամանք, որը շատ մեծ հետաքրքրություն է առաջացնում, քանի որ շատ արևադարձային, մերձարևադարձային երկրներ տառապում են ջրի պակասից, շատ վայրերում պարզապես ջրի սով է: Իսկ սառցադաշտերում ջրի անապառ պաշարներ կան, և դրանք առայժմ անմատչելի են մարդուն. նա միջոցներ է որոնում այդ պաշարներին տիրանալու:

Լեռնային երկրներում սառցադաշտերն առաջանում են այսպես կոչված կլիմայական ճյան գծից (սահմանից) վեր: Սա այն սահմանն է, որտեղ ճյան մուտքն ու ելքը հավասարակշռված են: Ջան գծից բարձր ավելի շատ ճյուն է գալիս, քան կարող է հավել, և այստեղ են սառցադաշտերը ձևավորվում:

Հայկական լեռնաշխարհում կլիմայական ճյան գիծը կամ սահմանը գտնվում է մեծ բարձրության վրա: Արարատի վրա հյուսիսային լանջին՝ 4250 մ, հարավային լանջին՝ 4400 մ: Պոնտական լեռնահամակարգում, խոնավության ու ամպամածության մեծացմանը զուգընթաց, ճյան սահմանը իջնում է՝ 3000-3200 մ, իսկ լեռնաշխարհի հարավում՝ բարձրանում է 4400-4500 մ: Հայստանի Հանրապետության սահմաններում ոչ մի լեռնազագագթ կլիմայական ճյան սահմանին չի հասնում:

Գոյություն ունի նաև ճյան լեռնագրական սահման՝ այն մակարդակը լեռներում, որից բարձր հյուսիսահայաց կամ ստվերոտ լանջերում ճյան բժերը (ֆիոնային դաշտերը) պահպանվում են շուրջ տարի: ՀՀ տարածքում այդ սահմանը 3000-3200 մ-ի վրա է, Պոնտական լեռնահամակարգում՝ 2600-2800 մ-ի, Տավրոսի համակարգում՝ մինչև 3300 մ-ի, Սավալյանի վրա՝ 3500 մ-ի:

Այսպես, ուրեմն Հայկական լեռնաշխարհում սառցադաշտեր ու ֆիոնային դաշտեր կարող են գոյանալ սկսած 3300 մ և ավելի բարձրորոշուներում, իսկ հսկական սառցադաշտեր՝ 4200 մ-ից բարձր լեռնազանգվածներում։ Եվ այդպիսիք խիստ սահմանափակ են՝ Արարատը, Սավալանը, Սիփանը։ Ոչ մեծ, ճախճական փուլի սառցադաշտեր կարող են գոյանալ նաև լեռնազրական ձյան սահմանից վեր՝ քամիների միջոցով ձյան կուտակումից կամ ճնահյուսերից (քուրքեստանյան տիպ)։

Հայկական լեռնաշխարհի սառցադաշտերը պատկանում են այսպես կոչված կառա-հովտային տիպին, այսինքն՝ ձևավորվում են սառցադաշտային կրկեսներում (կառերում)։ Կ լեզվակներով դուրս են գալիս դեպի հովտին (տրոգ)։ Նշենք, որ լեռնաշխարհում սահմանափակ տարածում ունեցող սառցադաշտերը ներկայում լավ մշակված կրկեսներում են, և այդ կրկեսները ձևավորվել են դեռևս վերջին պառցապատման ժամանակ։

Ներկայում լեռնային ոչ մեծ սառցադաշտեր կան Քաջար, Արագած, Սիփան, Արարատ, Ձիլո, Սավալան լեռնազանգվածներում, ու դրանցից ամենախոշորները Արարատի վրա են։ Դրանք առաջին անգամ հայտնաբերել և դրանց մասին գրել է Հ. Արիխը։



Մկ. 33. Սառցադաշտային տրոգ Կորդվաց լեռներում

Սաոցադաշտի քայրայիշ գործունեությունը սաոցաքերումն (էկզարացիա) է: Սաոցադաշտի հիմքում ընկած քարաբեկորը կարող է սաոցազողվել սաոցի հետ, դառնալ մեկ մարմին և թերությամբ սահել: Այդ զանգվածը թեև դանդաղ, բայց անընդհատ քերում է հատակը, միևնույն ժամանակ շարժվող քարաբեկորները հղկվում են, նրանց մակերևույթին առաջանում են խազեր: Եթե քարաբեկորը պոկվում է սաոցից և փոխում է իր դիրքը ու նորից սաոցազողվում, ապա շարժվելիս խազը նոր ուղղություն է ստանում: Հայկական լեռնաշխարհի այն հատվածներում, որտեղ կան մորենների կուտակումներ, ճալաքարերի (վալուն) վրա հաճախ խազերի տարրեր ուղղություններ են նշմարվում: Դա ցույց է տալիս, որ այդ ճալաքարը, երկար ժամանակ սաոցադաշտի հատակով գլորվելիս, մի քանի անգամ փոխել է իր դիրքը:

Եվ այսպես, հազարավոր տարիների ընթացքում սաոցադաշտերը մշակում են իրենց հունը: Չուրը, մտնելով քարաբեկորների ճեղքերի մեջ, սառչում է, առաջանում է սառնամանիքային հողմահարում, քարաբեկորները պոկվում են մայր ապարներից ու սաոցադաշտի միջոցով հեռանում: Սաոցաքերման միջոցով գետերի ակունքային մասերում ձևավորվում են սաոցադաշտային կրկեսներ-կառեր: Մրանք պնակած գոգավորություններ են, որոնց խորությունը հասնում է մի քանի հարյուր մետրի: Դրանք ունեն կրեք կողմից զառիվեր, նույնիսկ ուղղահայաց պատեր, իսկ մի կողմից բացվում է սաոցադաշտային հովիտը՝ տրոգը, որտեղից սաոցադաշտի լեզվակը դուրս է գալիս և իջնում ցած ու այնտեղ հալվում: Կրկեսը սաոցադաշտի սննան օջախն է:

Սաոցադաշտային կրկեսները (կառերը) Հայկական լեռնաշխարհում մեծ տարածում ունեն: Գրեթե բոլոր լեռները, որոնք գտնվում են 3000 մ-ից բարձր լեռնային գոտում, կրում են այդպիսի կրկեսներ:

Կրկեսից դուրս եկող սաոցադաշտային հովիտը կոչվում է տրոգ: Տրոգը մշակվում է սաոցադաշտային լեզվակի կողմից ու տաշտակած է: Եվ ի տարբերություն գետակի հովտի՝ սրա հատակը հարք է ու լայն: Տրոգը վերջանում է մորենային կուտակումներով, այսինքն՝ այնտեղ, որը հասել է սաոցադաշտի լեզվակի եզրը: Մորենային կուտակումներից արդեն ցած՝ գետը միշրճվում է հունի մեջ. լայն հատակի փոխարեն կարող է նեղ կիրճ լինել: Արագածի վրա շատ ցայտուն կերպով արտահայտված են հինգ տրոգային հովիտներ, որոնք ձևավորվել են հնագույն սաոցապատման ժամանակ:

Հայկական լեռնաշխարհի լեռներում հանդիպում են խոյան ճակատներ, ողիզեր: Խոյան ճակատը վահանած ոչ մեծ քումբ է, որն ընկած է սաոցադաշտի ճանապարհին և վերջինս սահելով նրա վրայով մշակել-հղկել է այն՝ տալով վահանի տեսք: Դրա բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ծածկը ված է խազերով, որովհետև ժամանակին վրայով անցած քարաբեկորները



Նկ. 34. Մորենային կոտակումներ Վարդեմիսի լեռներում

խազեր են առաջացրել: Արագածի, Բյուրակնի, Գեղամա լեռների մերձկատարային սարավանդի վրա կան այդպիսի խոյան ճակատներ: Հետսացադաշտային ժամանակաշրջանում սառնամանիքային հողմահարման հետևանքով դրանք քավական ձևախախտվել են, բայց մակերևույթի խազվածքները ցույց են տալիս նրանց ծագումը:

Ոփելները սացադաշտային «ջրվեժներ» են, որտեղ սացադաշտը կոտրատվում է և քափվում ցած: Այդպիսի ոփելներ կան Արագածի վրա Գեղարոտ գետի հովտում:

Քաջի սացադերման ձևերից՝ սացադաշտերի գործունեության հետևանքով առաջանում են կոտակումային ձևեր: Նախ ասենք, որ սացադաշտի քայքայած ու տարած բոլոր նյութերը միասին կոչվում են **մորեններ**: Սրանց բնորոշ առանձնահատկությունն այն է, որ տեսակավորում չունեն: Հսկայական քարաբեկորը, որն իր վրա կրում է խազեր, խառնված է խճի, ավազի կամ կամ կավի հետ:

Լեռնային սացադաշտի լեզվակը անընդհատ գործում է: Լեզվակի ծայրը միշտ կարող է նոյն տեղում լինել. արտաքուստ թվում է, թե շարժում չկա, իրականում լեզվակը անընդհատ շարժվում է, բայց եզրը հալվում-կրծատվում է այնպես, որ միշտ նոյն տեղում է մնում: Շարժման ընթացքում սննան ավազանից՝ կրկեսից մորենները դուրս են գալիս եզրի մոտ և այնտեղ կոտակում

որպես վերջնամորեններ: Հաճախ է պատահում, որ սաոցադաշտի սնման պայմանները լավանում են, և լեզվակը առաջխաղցում է ունենում արշավում է. այս դեպքում վերջնամորենային բումբը մղվում է առաջ, իսկ եթե լեզվակը կրծատվում է, տեղում առաջանում է լճակ: Նման լճակներ շատ կան Ծվեյցարիայում, Նորվեգիայում, Ալյասկայում և այլ լեռնային երկրներում:

Քաղի վերջնամորենային թմբերից սաոցադաշտային ջրերի բերվածքները կուտակվում են լեռնազանգվածների ստորոտում, առաջացնում են ջրասաոցադաշտային (ֆլուվիոլյացիալ) նատվածքներ:

Խ՞նչ ենք հասկանում հնագոյն սաոցապատում ասելով:

Ուսումնափրությունները ցույց են տալիս, որ երկրաբանական անցյալում, միջինավոր ու հարյուր միջինավոր տարիներ առաջ Երկրի վրա կլիմայական պայմանների խստացում է եղել և մերձև եռային երկրներուն ու բարձր լեռնային զանգվածները ծածկվել են սաոցադաշտերով: Յուրաքանչյուր տարի ավելի շատ ձյուն է եկել, քան հալվել է, ուստի սաոցադաշտերը զորեղանալով արշավել են առաջ: Դեռևս 18-րդ դարի վերջերից ձևավորվեց մի տեսություն, որն անվանում են սաոցապատման տեսություն:

Պարզվեց, որ չորրորդական ժամանակաշրջանում, կլիմայի խստացման հետևանքով, Սկանդինավյան թերակղզուց սաոցադաշտերն իջել են մինչև Կենտրոնական Եվրոպա, հասել մինչև Դնեստր և Դոն գետերի միջին հոսանքները:

Սաոցապատման տեսությամբ պարզվեց, որ սաոցապատման փուլեր եղել են նաև երկրաբանական շատ վաղ անցյալում՝ հարյուր միջինավոր տարիներ առաջ, առնվազն հինգ անգամ:

Թե որոնք են սաոցապատման պատճառները, առայսօր վիճարկում են: Սա բարդ հարց է, կապված է արեգակնային ճառագայթման, օդի թափանցիկության փոփոխման, երկրակեղելի տեկտոնական շարժումների և շատ այլ հարցերի հետ: Մենք այստեղ այդ հարցը չենք քննարկի, դա մեր ճյուրի մեջ չի մտնում: Մեզ հետաքրքրում է փաստը, իսկ փաստն այն է, որ չորրորդական ժամանակաշրջանում արշավ է տեղի ունեցել և Հայկական լեռնաշխարհի լեռների բարձրադիր մասերում սաոցադաշտերն ընդարձակվել են: Կան սաոցադաշտային կրկեսներ, կառուիդներ, տրոգներ, վերջնամորեններ, ջրա-սաոցադաշտային հզոր նստվածքներ, և այժմ ոչ ոք չի կարող ժխտել սաոցապատման փուլերի գոյությունն անցյալում:

Հայկական լեռնաշխարհում, սկսած վերին պլիոցենից մինչև այժմ, եղել է երկու սաոցապատում: Կան տեսակետներ, որ եղել է չորսը, ինչպես Ալպերում, սակայն անժխտելի հետքեր կան միայն երկու սաոցապատման վերաբերյալ, դրանք են՝ միջին չորրորդականը (որը համապատասխանում է ալպյան սաոցապատման ոհսյան փուլին) և վերջին սաոցապատումը (ալպյան սաոցապատման վյուրմյան փուլը):

Ամենից հզորը միջին չորրորդական սառցապատումն է Եղել, որը բարձրացել է լեռնաշղթաների ջրաժամների վրա և ստեղծել սկանդինավյան տիպի սառցապատում: Այդ փոլում ձյան կլիմայական գիծը իջել է ոչ պակաս 1400 մ-ով: Դա նշանակում է՝ 2500-2800 մ-ից բարձր լեռներում կարող էին սառցադաշտեր առաջանալ:

Վերջին սառցապատումը, որը կոչվում է վյուրմյան, տեղի է ունեցել Վերին չորրորդականում (հոլոցեն), ձյան գծի իջեցումը լեռներում կազմում է մինչև 1200 մ և ունեցել է մի քանի փոլեր. սառցադաշտը նահանջել-հալվել, վերացել է շուրջ 8-10 հազար տարի առաջ: Վերջին սառցապատման ուշիցից ձևերը՝ կառերը, կառոխիները մեկ աստիճանով ավելի բարձր են տեղադրված, քան միջին չորրորդական սառցապատման կրկեսները: Հաճախ ոչ մեծ կառոխիները խրված են իին կրկեսների պատերի մեջ: Վերջին սառցապատման մորենները, վերջնամորենային թմբերը գտնվում են հովիտների մեջ, մինչեւ ավելի վաղ սառցապատման հզոր մորենները տեղադրված են հովտային մորեններից բարձր ջրաժամների վրա և իջնում՝ են ավելի ցած, քան վերջին սառցապատման մորեններն են տեղադրված: Դա ցույց է տալիս, որ նախորդ սառցապատումը ավելի ծածկոցային բնույթ է ունեցել և ծածկել է ոչ միայն հովիտները (տրոգները), այլև բարձրացել է երկու հովիտների միջև ջրաժամային տարածքի վրա:

Վերջին սառցապատումը եղել է կառահովտային. այսինքն՝ կառերում (կրկեսներում) ձյան դրական հաշվելչոյի պայմաններում սառցադաշտերի սնում է կատարվել, իսկ տրոգով դուրս եկող լեզվակի շրջանում տեղի է ունեցել սառցադաշտի հալք (արլացիա): .

Նշենք նաև, որ վերջին սառցապատման նահանջը տեղի է ունեցել փոլերով. յուրաքանչյուր նահանջից հետո սառցադաշտի լեզվակը երկար ժամանակ նույն տեղում կանգ է ունեցել, և այդտեղ կուտակվել են վերջնամորեններ: Այժմ գետահովտով վեր բարձրանալիս մորենների մի քանի թմբաշարքերի ենք հանդիպում, հաճախ նրանց արանքներում կան մանր մորենային լճակներ:

Այս ընդհանուր տնտեկություններից հետո համառոտ նկարագրենք ժամանակակից և հնագոյն պատուման առանձին օջախները:

Պոնտական լեռների համակարգում հետազոտություններ կատարել են Կոլսը, Զ. Պալգրել, Ստրատել Զառուերը, Ս. Էրինկը: Լեռնային համակարգի արևելյան մասում շատ լավ պահպանվել են թե՛ հնագոյն սառցապատման հետքերը, և թե՛ գոյություն ունեն ժամանակակից ոչ մեծ սառցադաշտեր՝ քաջքար զանգվածի վրա: Զյան գիծն այստեղ գտնվում է 2800-3000 մ-ի վրա, նույն բարձրության վրա է գտնվում սառցադաշտային կառերի հատակը: Երեք ժամանակակից սառցադաշտեր կառա-հովտային են, կառերից լեզվակներ են

դուրս գալիս, որոնց երկարությունը 1-1,5 կմ է. իրարից հեռու են մի քանի հարյուր մետր: Սաոցադաշտային լեզվակների մոտ՝ նրանցից քիչ ցած, կան մորենային մեծ կոտակումներ: Պարզ է, որ այդպիսիք կարող էին գոյանալ ավելի հզոր սաոցապատման դեպքում: Բացի սրանցից, հճագույն ծագման սաոցադաշտային կրկեսներում այժմ կան ոչ մեծ, կախված մանր սաոցադաշտեր:

Պոնտոսի լեռնահամակարգում շատ մեծ զարգացման են հասել հճագույն միջին չորրորդական և վերին չորրորդական սաոցապատման հետքերը՝ հըսկա կրկեսների ու տրոգմերի ձևով: Մրանք շարքով դասավորված են ցրածանցից դեպի հյուսիս: Հարավային լանջին սաոցադաշտային ուղիեմքի ձևերը զարմանալիորեն բացակայում են:

Պոնտական լեռնաշղթայի հյուսիսային լանջերին բազմաթիվ տրոգմերում պահպանվել են կողային- ու վերջնա-մորեններ, պարզ արտահայտված են սաոցադաշտերի նահանջի փուլերի մորենները: Վերջին սաոցապատման ժամանակ լեզվակներն իջել են մինչև 1600-1800 մ: Միջին չորրորդական սաոցադաշտերը գուցել են հասել են Աև ծով. դրանց հետքերը չկան կամ հայտնաբերված չեն: Պոնտական լեռնահամակարգում լավ են պահպանվել գրանիտային խոյան ճակատները: Հետսաոցադաշտային ժամանակաշրջանում դրանք սառնամանիքային հողմահարման են ենթարկվել, բայց հեռվից դիտելիս պարզ երևում է նրանց վահանաձև ուղիեմքը, որի վրա կան շատ բնորոշ խազվածքներ:

Ծորոխի և նրա շարունակությունը կազմող Արևիանի լեռնաշղթաներում ժամանակակից սաոցադաշտեր չկան: 2800 մ-ից բարձր գոտում շատ լավ պահպանվել են հճագույն սաոցապատման հետքերը՝ կրկեսների, կառողիդների, տրոգմերի ձևով: 3000 մ-ից բարձր կրկեսներում ներկայում ճնաբերը պահպանվում են շուրջ տարի, տեղ-տեղ կան ֆիոնային կոտակումներ, գետահովտներում պահպանվել են վերջին սաոցապատման նահանջի փուլերի մորեններ:

Հնագույն սաոցապատման հետքեր հայտնաբերվել են Զավախիք (Ախալքալաքի), Աշոցքի բարձրավանդակների բարձր լեռներում՝ Աբով լեռնազանգվածի, Սամսարի, Խոնավ, Աշոցքի լեռների կատարային գոտում: Այստեղ գոյություն են ունեցել կառա-հովտային սաոցադաշտեր: Օրինակ՝ Խոնավ լեռնաշղթայի երկու կողմերում այժմ կան կրկեսներ ու նրանցից դուրս եկող տրոգմեր. որոշ կրկեսների խորությունը հասնում է մի քանի հարյուր մետրի: Հովհանների արտաքրման կոների շրջաններում հզոր մորենային ու ջրա-սաոցադաշտային նստվածքներ կան. նրանց հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի: Այդպիսի կոտակումներ կան Ախալքալաքի, Ծալկայի, Լոռվա, Վերին-Ախուրյանի դաշտերում: Տեղ-տեղ այդ նստվածքներում ա-

ուաջացել են մինչև 20 մ խորության ձորակներ: Սրանց հասակը միջին չորրորդական պետք է լինի, այսինքն՝ նատվածքները վերաբերում են միջին չորրորդական սառցապատմանը:

Նմանօրինակ սառցապատման հետքեր հայտնաբերված են Կարմիր Փորակ, Արսիան լեռնազանգվածներում: Կառերը, կրկեսները, տրոգները լավ պահպանված են, որոնց մեջ ամուն վերջին դեռևս հանդիպում են ճյան քծեր:

Հնագույն սառցապատման կենտրոններից են Բարձր Հայքի լեռնաշղթաները: Լավ պահպանված կառեր ու տրոգներ կան Մնձուր, Գայլախսագուտ, Այծպտկունք լեռնաշղթաների և ոչ շատ հեռու Բյուրակն լեռնազանգվածի վրա: Նշված լեռնազանգվածներում ներկայումս սառցադաշտեր չկան, սակայն սառցադաշտային ռելիեֆի ձևերը և մորենները անժխտելի ապացուցում են, որ ոչ վաղ անցյալում այստեղ էլ սառցադաշտային գործունեություն է եղել: Բյուրակնի մերձկատարային սմբավանորում բազմաթիվ միջմորենային լճեր կան:

Արագած լեռնազանգվածի վրա սառցապատման հարցերը մանրամասն ուսումնասիրել են Ա. Լ. Ռեյնգարդը, Ն. Վ. Դումիշտրաշկոն, Ս. Պ. Բայյանը և ուրիշներ: Արագածի կատարային գոտում լեռնագրական ձյան սահմանից վեր կան բազմաթիվ ձնարձեր, որոնք որոշ հեղինակներ սառցադաշտ են անվանում: Իրականում միակը, որ կարող է սառցադաշտ համարվել, կապած է Հարավային գագաթի՝ հյուսիսային լանջին որպես կախված սառցադաշտ՝ առանց լեռվակի: Մնացածները ֆիռնային դաշտեր են, ճյան քծեր, որ պահպանվում են շուրջ տարի. դրանք չի կարելի սառցադաշտ անվանել:

Արագածի հյուսիսային լանջին կատարային գոտում կա մի խոշոր գոգ, որտեղ ձյունն ու ֆիռնը պահպանվում են շուրջ տարի. սա էլ մի ժամանակ դիտվում էր որպես սառցադաշտ:

Արագածի մերձկատարային գոտին ակոսված է հինգ խոշոր տրոգներով, որոնք կենտրոնից շառավղած ենուանում են: Տրոգները վերին մասերում կըրկենաներ են առաջացնում, և պարզ նկատելի է, որ սրանք ավելի խոշոր սառցապատման արդյունք են: Արագածի վրա երկու սառցապատման ռելիեֆի ձևերը շատ ցայտուն են, իսկ մորենային կոտակումներն ու ջրա-սառցադաշտային նատվածքները զանցվածի հյուսիսային ու արևելյան ստորոտներում անժխտելի են դարձնում սառցապատումների փաստը: Զանցվածի մերձկատարային սարավանդը հյուսիսային կողմում ծածկված է հղկված մորենների հաստ, շերտով, որոնց հզրությունը տասնյակ մետրի է հասնում:

Ամենախոր կրկեալ Գեղարոտ գետի ակունքում է, ունի 500 մ խորություն: Որոշ հեղինակներ այն համարում են իրարիսային խառնարան, սակայն Կ. Ն. Պաֆենիոնը դեռ տասնամյակներ առաջ ցույց տվեց, որ այստեղ ոչ մի խառ-

նարան էլ չկա, այն սառցադաշտային կրկես է: (1962 թ. ամռանը ակադեմիկոսներ Կ. Ն. Պաֆենհոլցի և Կ. Կ. Մարկովի հետ բարձրացանք Հարավային գագարը, դիտելով կրկեսը համոզվեցինք, որ Պաֆենհոլցը ճիշտ է:)

Ինչպես Գեղարութի, այնպես էլ Մանթաշի կամ այլ տրոգմերում կան վերջնամորենային թմբեր, նրանց արանքներում էլ՝ մանր լճակներ: Տրոգմերում կան նաև ոդգելներ, իսկ մերձկատարային սարավանդում կարելի է նըշմարել խոյան ճակատներ, որոնք սառցադաշտի նահանջից հետո բավական ձևափոխվել են սառնամանիքային հողմահարման միջոցով, բայց բեկորից բեկոր անցնող խազվածքները ապացուցում են նրանց՝ խոյան ճակատ լինելու իրողությունը:

Արարատը, լեռնաշխարհի ամենաբարձր գագարը լինելով, պետք է որ ունենա հզոր սառցապատում: Երևանից դիտելիս պարզ նկատելի է կիմայական ձյան գիծը: Սեզոնային գիծը գարնանը անընդհատ բարձրանում ու բարձրանում է և սեպտեմբերի վերջին հասնում է 4200 մ-ի, որից բարձր՝ համատարած ձյուն է մինչև կատարը: Անցյալ դարի սկզբին Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարրոտը և Խաչատուր Արովյանը, ձյան ու սառուցների վրայով մագլցելով, հասան գագարին: Նույն դարի կեսին հայտնի ճանապարհորդ ու գիտնական Մորիս Վագները ակնարկեց լեռան սառցադաշտերի մասին, և միայն Հ. Աբիսեն էր, որ հայտնաբերեց սառցադաշտի եզրը 2754 մ բարձրության վրա՝ Սուրբ Հակոբի հովտում:

Արարատն ունի գնոթիքափ լանջեր, և այստեղ սառցապատման հետքերը լավ չեն պահպանվել: Որոշ տվյալներով Արարատի ժամանակակից սառցապատումը ունի 25 քառ. կմ մակերես:

Երևանից դիտելիս Արարատի վրա նկատելի են կառուիդներ՝ ժամանակակից ձյան գծից ներքի: Սած թերության պատճառով այստեղ ձյունն ու սառուցը չեն կարող երկար պահպանվել ու սահում են ցած: Կատարային մասի սառցադաշտը կոտրատվելով բափում է: Հնագույն սառցապատման մորենները հյուսիսային լանջին չեն պահպանվել թերության պատճառով, իսկ հարավային լանջին, Գայլատու գետակի վերին հոսանքներում հնարավոր է, որ պահպանվել են:

Փոքր Արարատը ձյան գծին չի հասնում, և նրա լանջերն այնքան զարիվեր են, որ սառցադաշտի հետքեր պահպանվել չեն կարող: Զնորանը կուտակված ձյունը ամռողջությամբ հալվում է, նույնիսկ ձնարծեր չեն պահպանվում:

Գեղամա, Վարդենիսի, Ղարաբաղի բարձրավանդակներում շատ լավ պահպանված են հնագույն սառցապատման հետքեր՝ կրկեսների, կառուիդների, տրոգմերի ու մորենային նստվածքների ձևով: Գեղամա լեռներում ժամանակակից սառցադաշտեր չկան, բայց կան լավ պահպանված հնագույն սառցապատման հետքեր: Լեռների կատարային գոտում ամենուր կան կառուիդ-

ներ, ընդ որում՝ լեռների հյուսիսային մասում այդ հետքերը բացակայում են այն պատճառով, որ ծածկված են վերջին, ավելի երիտասարդ, հետաացադաշտային արտավիժումների լավաներով։ Ամենից լավ պահպանվել են լեռների արևելյան լանջերի կրկեսներն ու տրոգները. դրանք Գավառագետի վտակների վերին հոսանքներում են։ Թարմ ձևով արտահայտված Գոյի ձորն է՝ լայն մի տրոգ, որի վերին մասերում կառողիների մեկ ամբողջ համակարգ կա. դրանց մեջ ամռանը պահպանվում են ձյան թեր։

Սաղցապատման դասական ձևեր են եր տեսնում ենք Վարդենիսի լեռներում։ Դեռևս 1960 թվականին Մարտունից Եղեգնաձոր գնալու ճանապարհին, անցնելով Մարտունի գետը և դուրս գալով նրա ձախ ափը՝ դաշտում հարք տարածության վրա նկատեցին մինչև 2 մ մեծության ճալաքարեր, որոնք տեղի համար խորք էին՝ ներկայացնում էին բյուրեղային-գրանոդիտային ապարներ։ Մանրակրկիտ զննումը ցույց տվեց, որ այդ հղկված ճալաքարերի վրա կային իրար հատող խազվածքներ։ Սա արդեն ցույց է տալիս, որ դրանք մորեններ են և այդտեղ են հասել սաղցադաշտի միջոցով։ Նման ապարներ կան միայն լեռնաշղթայի կատարային գոտում։ Հետազոտությունները ցույց տվեցին, որ Վարդենիսի լեռնաշղթայի կատարային գոտում գոյություն ունի հնագույն սաղցապատման շնորհիվ առաջացած սաղցադաշտային ուկինեֆի մեկ ամբողջ թանգարան։ Դեպի Սևան իջնող գետների ակունքներում կան թե՝ միջին չորրորդականի և թե՛ վերին չորրորդականի հիանալի պահպանված սաղցադաշտային կրկեսներ, կառողիներ, տրոգներ, մորենային քմբեր, իսկ լեռնաշղթայի ստորոտներում ու սարավանդներում՝ հզոր մորենային կուտակումներ։ Ներկայում այս լեռնաշղթայում սաղցադաշտեր չկան, բայց կան ձյան թեր։ Հնագույն կրկեսների քիվերում պահպանվում են ձնաշերտեր, կրկեսների հատակին տեղ-տեղ նաճր լցեր կան։ Տրոգներում հանդիպում են սաղցադաշտերի ճահանջի փուլերի հետքերը՝ վերջնամորենների ձևով։ Վերջին սաղցապատման մորենները տրոգներում են, սակայն ջրբաժաններում ևս կան մորեններ։ Սրանք արդեն ավելի հզոր՝ ծածկոցային սաղցապատման մնացորդներ են։ Նման մորեններ բավական հզոր շերտով կան նաև Ձերմուկ առողջարանի վերևի սարավանդում։ Ըստ Երևույթին, միջին չորրորդական սաղցապատման ժամանակ սաղցադաշտերի լեզվակները իջել են մինչև Սևանա լիճը, իսկ մորենները կուտակված են լճից ոչ շատ հեռու։ Միջին չորրորդական սաղցապատումը ունեցել է ծածկոցային բնույթ, ծածկել է ոչ միայն կրկեսները, այլև բարձրացել է ջրբաժանների վրա։

Վարդենիսի լեռնաշղթայում սաղցածածկ տարածությունը վերջին սաղցապատման ժամանակ եղել է 90 քառ. կմ-ից ոչ պակաս։ Սաղցադաշտային կրկեսները դասավորված են հյուսիսային լանջին, իսկ հարավային լանջին սաղցապատման հետքեր կրկեսների ձևով հայտնաբերված չեն։ Այդտեղ թե-

քույրունները մեծ են, ապարները ինտենսիվ հոլմահարվում են, և՝ այդ հետքերը տեղատարվել են: Զյան գծի իջեցումը վերջին սառցապատման ժամանակ կազմել է մինչև 1200 մ, իսկ միջին-շորտրդական սառցապատման ժամանակ՝ 1600 մ:

Սյունիքի (*Ղարաբաղի*) հրաբխային բարձրավանդակում հնագույն սառցապատման հետքերը նոյնն են, ինչ որ Գեղամա կամ Վարդենիսի լեռներում: Այսպես, օրինակ, բարձրավանդակի Մեծ Իշխանասար գագաթին կախողը սառցադաշտային կրկես, և նրանից դեպի արևելք բացվում է խոշոր տրոգը, որտեղ կան մորենային կուտակումներ: Կրկեսում Սև լիճն է՝ շրջապատված մորեններով: Մեկ այլ գագաթի՝ Ծղուկի վրա սառցադաշտային կըրկեսում գոյուրյուն ունի երիտասարդ խարամային ծածկոց: Հրաբխային արտավիժումը տեղի է ունեցել կրկեսի ձևավորումից հետո: Պետք է ենթադրել, որ ժայռքումը եղել է ոչ ավելի քան 10 հազար տարի առաջ:

Հնագույն սառցապատման հետքեր կան Սևանի, Արևելյան Սևանի և Մոռավի լեռնաշրաբների կատարային գոտում: Դրանք ներկայացված են կըրկեսների, տրոգների և մորենային կուտակումների ձևով: Մի ժամանակ այն կարծիքը կար, որ Սևանի լեռները սառցապատման հետքեր չեն կրում: Պարզեց, որ այդպես չեն: Գյունեյ գագաթի շրջանից մորենները իջնում են դեպի արևմուտք: Մոռավի լեռնաշրաբի Գոմշասար (*Գյամիշ*) լեռնագագաթի վրա՝ նախկին կրկեսներում, այժմ էլ ճյան թերեւ են պահպանվում:

Հնագույն սառցապատման մի օջախ էլ Զանգեզորի լեռնաշրայում գոյուրյուն ունի: Նրա ամենաբարձր հատվածում, որտեղ Կապուտջողուն է, ջըրբաժանից արևելք սառցադաշտային կրկեսների ու կառուիջների մի ամբողջ համակարգ կա, սակայն մեծ թերության պատճառով տրոգները լավ գարգացած չեն: Այստեղի սառցադաշտերը մեծ մասամբ եղել են կախված սառցադաշտեր՝ առանց լեզվակների: Այժմ վերից դիտելիս՝ կրկեսները շատ ցայտուն արտահայտուրյուն ունեն: Նախկին սառցադաշտային կրկեսներում այժմ պահպանվում են միայն ճնարքեր: Զանգեզորի լեռնաշրաբի արևմտյան լանջերին սառցապատման հետքեր հայտնաբերված չեն: Այս լանջերում տեղումները թիւ են, ճյան զիջը բարձր է եղել, սառցադաշտեր չեն գոյացել:

Սիփան հրաբխային զանգվածը հնագույն և ժամանակակից սառցապատման օջախն է: Լեռնագագաթը հասնում է կլիմայական ճյան գծին, և նրա վրա մանր սառցադաշտեր կան: Առաջին անգամ Սիփանի սառցապատման մասին ակնարկել է Լինչը: Նկատելի է, որ սառցադաշտային ձևերը շատ ավելի մեծ մասշտաբ ունեն քան ժամանակակից սառցադաշտերը, որ զարգացման առաջին՝ սկզբնական փուլի վրա են գտնվում: Սառցադաշտային ունիեցը ժառանգված է: Զանգվածը ենթարկվել է կրկնակի սառցապատման, որոնց հետքերը անառարկելի են: Կրկեսներում երկու հարկ կա. Աերքին հարկը

միջին չորրորդական է, իսկ վերին հարկի կառերը վերին չորրորդական սառցապատճան արգասիք են: Սիփանից իջած մորենները կուտակվել են Սանազկերտի դաշտում հզոր ջրա-սառցադաշտային նստվածքների ձևով:

Վանա լճի ափին հնագույն սառցապատճան մյուս օջախը Թոնդրակն է, որի կատարային մասում պահպանվել են կառողիդներ ու մորենային կուտակումներ: Այժմ նախկին կրկեսներում միայն ճյան թեր կան:

Ժամանակակից սառցապատճան ամենահարավային օջախը Սավալանն է, որն ուսումնասիրվել է Հ. Բորեկի կողմից: Այստեղ, ինչպես նշվել է, կլիմայական ճյան գիծը 4500 մ-ի վրա է, իսկ լեռան զագարը ավելի քան 300 մ բարձր է նրանից: Զանգվածի կատարում թարմորեն պահպանվել են հնագույն սառցապատճան հետքերը՝ կրկեսների, տրոգմների, մորենային կուտակումների ձևով: Այդ ձևերում այժմ կան ոչ մեծ սառցադաշտեր ու ֆիոնային դաշտեր:

Սառցադաշտային հետքեր՝ կառողիդներ, տրոգմներ կան Սոհունյ (Սեխտենյ) հրաբխի կատարային գոտում. սրանք Արագածի նման շառավիրած դասավորություն ունեն: Լեռան եզրային մասերում կան մորենային կուտակումներ:

Հնագույն սառցապատճան հետքեր կան Կորդվաց լեռներում, իսկ ժամանակակից ոչ մեծ սառցադաշտ՝ Ջիլոյի վրա և մի քանի այլ զագարներում: Կորդվաց լեռներում շատ զագարներ այժմ մոտենում են կլիմայական ճյան գծին: Արանց վրա կան ֆիոնային դաշտեր ու ճնարձեր, իսկ կրկեսները, կառողիդները, տրոգմները և մորենները բավական շատ են: Այն լեռները, որոնք 3200 մ-ից բարձր են, անպայման ունեն սառցադաշտային ռելիեֆի ձևեր: Կըրկեսների ու տրոգմների մի զգալի մասը հողմահարման ու տեղատարման հետևանքով ձևախախտվել ու տեղատարվել է, բայց պահպանվածները վկայում են հնագույն երկու սառցապատճումների մասին: Կորդվաց լեռներում սառցադաշտային ռելիեֆի այդքան ցայտուն լինելը բացատրվում է մթնոլորտային կոշտ տեղումների առատությամբ: Զնայած երկիրը գտնվում է արևադարձային գոտու հարևանությամբ, բայց Միջերկրական ծովից եկող առատ խոնավությունը պայման է դառնում, որ Ջիլոյի և այլ բարձր զագարների վրա սառցադաշտեր պահպանվեն: Բորեկի հետազոտություններով՝ Սար Կոչվող լեռան վրա երկու սառցադաշտ է հայտնաբերված: Վերջին սառցապատճան ժամանակ ձնագիծն իջել է 700 մ:

## ԶՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհը բնական ջրերով հարուստ երկիր չէ: Զրագրական ցանցի, ջրաբանական գիտական միստեմատիկ ուսումնասիրությունները կազմակերպվեցին միայն 19-րդ դարի կեսերին, եթե խոշոր գետերի վրա հիմնադրվեցին ջրաբանական պոստեր: Այդ գործը լեռնաշխարհի արևելյան (Ռուսական Կայսրության) հատվածում ավելի վաղ սկսվեց, իսկ բուրքական ու իրանական հատվածներում՝ միայն 1930-ական թվականներից: Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո կազմակերպվեց ջրառադրության ծառայություն, իսկ յուրաքանչյուր հանրապետությունում՝ հատուկ վարչություն՝ կայանների ու պոստերի լայն ցանցով, և մենք այժմ ունենք հուսալի ինֆորմացիա ջրաբանական օբյեկտների մասին: Նշենք, որ բուրքական ու իրանական հատվածների ուսումնասիրման մակարդակը զգալիորեն զիջում է և տեղեկույթը միանշանակ չէ: Թուրքական տարածքում ջրաբանական ուսումնասիրությունները վերջին ժամանակներս աշխուժացել են. Զրային տնտեսության գլխավոր վարչությունը, Հողերի ոռոգման ու պահպանության գլխավոր վարչությունը, Գյուղատնտեսության նախարարությունը, Անկարայի ու Ստամբուլի համալսարանները զգալի աշխատանք են կատարում այս ուղղությամբ:

Անդրկովկասի հատվածում ջրաբանական ուսումնասիրություններում խոշոր ներդրում են կատարել՝ Վ. Կ. Դավիթովը, Բ. Պ. Ջայկովը, Վ. Պ. Վալեյանը, Գ. Ն. Խմալաձեն, Ա. Ն. Վաժնավորը, Լ. Ա. Վաղիմիրովը, Ս. Գ. Ռոստոմովը, Գ. Գ. Վարդումյանը, Ս. Մ. Մուսայելյանը, Ա. Թամրազյանը, Ա. Ե. Ռուկանյանը, Վ. Կ. Վանեսյանը, Թուրքիայի տարածքում՝ Նազիմ Կարատեկինը և ուրիշներ:

Հայկական լեռնաշխարհը, ինչպես նշել ենք, պատկանում է մերձարևադարձային չորային երկրների շարքին, որտեղ խոնավացման գործակիցը 1-ից ցածր է՝ բացի Պոնտական լեռնահամակարգի հյուսիսային և Տավրոսի լեռների հարավային որոշ հատվածներից, որտեղ մքնոլորտային տեղումների առատություն է նկատվում:

Նախ քննենք, թե իննաշխարհը որքան տեղումներ է ստանում, որքան են գոլորշացումը, հոսքը (դինամիկ պաշարները):

## ԶՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԾԻՈՆ

Հայկական լեռնաշխարհի ջրային հաշվեկշիռը ստորև ներկայացնում ենք հինգ գլխավոր շրջաններով, որոնցից չորսը հոսք ունեն լեռնաշխարհից դուրս, իսկ մեկը համարում ենք անհոս՝ Վանա և Ուրմիա լճերի ավազանները:

## Հայկական լեռնաշխարհի ջրային հաշվեկշռող

Ավագանները	Տարածք հազ.քառ.կմ	Տեղումներ		Գոլորշացում		Հոսք		Հոսքի գործակից
		մմ	կմ <sup>3</sup>	մմ	կմ <sup>3</sup>	մմ	կմ <sup>3</sup>	
1. Պոնտական և Մոսքիլյան լեռնա- շրջանների արտա- քին լանջերը	24	1400	34	600	14	800	19	0,6
2. Միջնաշխարհ	220	480	110	280	62	200	43	0,4
3. Փոքր Կովկասի արտաքին լանջերը	33	640	21	320	10	320	11	0,5
4. Տավրոսի արտա- քին լանջերը	40	790	32	350	14	430	17	0,5
Հայկական լեռնաշ- խարհի հոսք ունեցող ավագանները	317	620	197	325	100	285	90 (+7)	0,45
Փակ ավագաններ								
1. Վանա լճի ցամա- քային ավագանը	14,2	550	7,8	350	5,0	200	2,8	0,36
2. Լճի հայելին	3,76	400	1,5	400	1,5	-	-	
Գումարը	18,0		9,3		6,5 (+2,8)			
3. Ուրմիա լճի ցա- մաքային ավագանը	35+10	380	17,1	250	11,2	130	5,8	0,34
4. Լճի հայելին	5	250	1,3	250	1,3			
Գումարը	40+10		18,4		12,5 (+5,8)			
Փակ ավագանները միասին	68		28		28		8,6	

**Ծանոթություն՝** 1. Հաշվարկները մասամբ կլորացված են:

2. Հոսք ունեցող ավագանների հոսքի սյունակում (+7)-ը ստորեկրյա ճանապարհով դուրս եկող և մարդու կողմից օգտագործվող ջրի քանակն է:

3. Վանա և Ուրմիա լճերի ավագաններում գետային հոսքը լիճ հասնելուց հետո գոլորշիանում է, որանք գոլորշացման սյունակում տրված են փակագծերի մեջ:

4. Ուրմիա լճի ավագանում տարածքի + 10-ը այս հաստված է, որ Հայկական լեռնաշխարհից դուրս է, սակայն ջրերը, հասնելով լիճ, այստեղ գոլորշանում են:

Աղյուսակից երևում է, որ Պոնտական և Մոսքիկյան լեռների լանջերը ստանում են շատ տեղումներ, հոսքի գործակիցը տեղ-տեղ 0,6-0,8 է, խոնավության առատության պատճառով գոլորշացումը համեմատաբար թույլ է:

Հայկական լեռնաշխարհում ամենից ընդարձակ տարածություն զբաղեցնում է Միջնաշխարհը: Այն ընդգրկում է Շորոխի, Գայլգետի, Կորի վերին հոսանքների ավազանները, իսկ Եփրատի և Արաքսի ավազանները՝ ամրողությամբ (Հայկական լեռնաշխարհի սահմաններում): Այն կազմում է 220 հազ. քառ. կմ: Այստեղ տեղումների միջին քանակը կազմում է մոտ 500 մմ, որից 60%-ը գոլորշանում է՝ 62 կմ<sup>3</sup>, գետերի միջոցով հոսք է ստանում մոտ 43 կմ<sup>3</sup>, հոսքի գործակիցը 0,4 է:

Փոքր Կովկասի արևելյան լանջերին տեղումների քանակը մի փոքր ավելի է, քան Միջնաշխարհում, ուստի հոսքի գործակիցը ևս համեմատաբար մեծ է՝ 0,5, այստեղ թափված 21 կմ<sup>3</sup> տեղումների կեսը մոտ 11 կմ<sup>3</sup> հոսք է ստանում:

Տավրոսի հարավյային լանջերում գետերը ջրառատ են՝ տեղումների առատության շնորհիվ: Թափված 32 կմ<sup>3</sup> տեղումներից մոտ կեսը 17 կմ<sup>3</sup> հոսք է ստանում:

Հայկական լեռնաշխարհում երկու փակ ավազանները միասին զբաղեց-

#### Ա դ յ ո ւ ս ա կ 5

#### Հայկական լեռնաշխարհի ջրային հաշվեկշիռը ընդհանրացված տեսքով

Հաշվեկշիռի բաղադրիչները	Տարածքը հազ. քառ. կմ	Ջրի քանակը	
		մմ	կմ <sup>3</sup>
<b>Մուտք</b> Մընողութային տեղումներ Գոլորշիների խոտացում	375	580-600	220
			3-5 (?)
<b>Եր</b>			225
1. Գոլորշացում հոսք ունեցող ցամաքից	317	320	100
2. Գոլորշացում լճավազաններից	68 (-10)	400-450	28
3. Հոսք գետերով	317	250-285	90
4. Ստորերկրյա հոսք լեռնաշխարհից դրաս			2-3
5. Մարդու կողմից օգտագործվող			4-5
<b>Գումարային</b>	375	580-600	225

նում են 68 հազ. քառ. կմ, որից 10 հազ. քառ. կմ-ը լեռնաշխարհից դուրս է, բայց սնում է Ուրմիո լճին (Զաղաքովի ավազանը և մանր գետերը): Երկու ավազանները միասին մընոլորտից ստանում են մոտ 28 կմ<sup>3</sup> տեղումներ, որն ամբողջապես գոլորշանում է: Եթե ընդհանրացնենք, ապա Հայկական լեռնաշխարհի ջրային հաշվեկշիռը կունենա հետևյալ պատկերը (աղյուսակ 5):

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում թափված մընոլորտային տեղումների 225 խոր. կմ-ից 128 խոր. կմ-ը գոլորշանում է, որը տեղումների մոտ 57 %-ն է կազմում: Հոսքը գետերով՝ ջրի դիմամիկ պաշարները, կազմում է 90 կմ<sup>3</sup> կամ տեղումների 41 %-ը: Ստորերկրյա հոսքը Հայկական լեռնաշխարհից դուրս ստացվում է 2-3 կմ<sup>3</sup>. Վերջինն մոտավոր է, ստացվում է մոտոքի ու ելքի տարբերությունից, հետազյում ճշտման կարիք ունի: Մարդու այժմ ոռոգման նպատակով, արդյունաբերության բնագավառում և կրոնունալ տնտեսության մեջ օգտագործում է շուրջ 4-5 խոր. կմ ջուր, որի մեծ մասը գոլորշանում է:

Այսպիսին է Հայկական լեռնաշխարհի ջրային հաշվեկշիռը: Այժմ քըննարկենք ջրային օբյեկտները առանձին-առանձին:

## 2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

Որպես լեռնային երկիր՝ Հայկական լեռնաշխարհը հարուստ է ստորերկրյա ջրերով, որոնք հիմնականում առաջանում են մընոլորտային տեղումների ներծծման (ծծանցման-ինֆիլտրացիայի) միջոցով: Լեռնային քարձը մասերում սրանք առաջանում են նաև ամոռանը՝ գոլորշիների խտացման ճանապարհով: Տարացած օդը, որ պարունակում է զգայի քանակությամբ ջրային գոլորշիներ, քափանցելով քարակարկաների մեջ շփում է պաղ քարաքեկորներին, և վերջիններս «քրտնում» են: Ջրի կաթիլները ծորում են ցած՝ դեպի խորը շերտերը և սնում ստորերկրյա ջրերը:

Բացառված չեն նաև կուսական (յուվելի) ջրերի ելքը երկրի խոր շերտերից, մագմայից անընդհատ ջրային գոլորշիներ են անջատվում, որոնք երկրակելուում խտանում, դառնում են ջուր և հաճախ դուրս են զայիս հանքային ջրերի ձևով: Սակայն այստեղից չպետք է եղուակացնել, որ հանքային ջրերը անպայման մագմայից են անջատվում և կուսական են: Հանքային ջրերի մեծ մասը վաղողային ծագում ունի, որի մասին ասվել է հանքային ջրերի բաժնում:


Ստորերկրյա ջրերը երկրակեղնում բազմաթիվ ջրատար շերտեր կարող են առաջանալ. ամենավերին հորիզոնն անվանում են գետնաջրեր (գրուտային): Հետաքրքիրն այստեղ այն է, որ գետնաջրերի վերին մակերևույթը

մոտավորապես երկրի մակերևույթին զուգահեռ է: Օրինակ, Արարատյան դաշտում մի քանի մետր փորելով կարելի է հանդիպել այդ ջրին, և բազմաթիվ ջրհորներ դնեն շուրջ 2-4 մ խորություն: Բարձրանանը ջասաղ գետի հոսանքով վեր, Ապարանի մոտերքում փորենք գետինը: Նորից 2-4 մ կամ դրան մոտ խորության տակ կիասնենք գետնաջրին, չնայած Ապարանը Արարատյան դաշտից ավելի քան 1000 մ բարձր է: Նոյնն է Շիրակում, Աշոցքում, Ալաշկերտի կամ Մանազկերտի դաշտերում և այլն: Սա ել բնության հրաշալիքներից մեկն է, և մարդը, անկախ տեղի բարձրությունից, կարող է ջրիոր փորել: Այստեղից շպետը է հանգել այն եզրակացության, որ ամենուր մի քանի մետր փորելով անպայման գետնաջրի պիտի հանդիպենք: Նշանակություն ունեն երկրաբանական կառուցվածքը, կիմայական պայմանները: Արարատյան, Նախիջևանի, Ուրմիայի գոգավորություններում միջին բարձրության լեռների գոտում կարող են հանդիպել այնպիսի հատվածներ, որտեղ գետնաջրերը շատ խորն են, ընդ որում, ոչ հեռու կարող է աղբյուր հանդիպել: Այստեղ նշանակություն ունի ջրատար շերտերի դասավորությունը:

Պետք է ասել, որ ստորերկրյա ջրերի բաշխումը Հայկական լեռնաշխարհում խիստ անհավասարաշափ է: Հրաբխային ծածկությների տարածման շրջաններում դրանք առատ են: Ինչպես արդեն նշվել է, հրաբխային լավաները պաղելիս ճեղքատվում են, վերին շերտերը սառնամանիքային հողմահարման հետևանքով վերածվում են քառսային դասավորության բարակարկառների, որոնք մքնողորտային ջրերն անմիջապես կլանում են և մակերևութային հոսք չեն առաջացնում: Ներքափանցած ջրերը ամիսներով, նոյնիսկ տարիներով շրջանառություն են կատարում ճեղքերում և դուրս գալիս երկրի մակերես առատ աղբյուրների ձևով:

Հրաբխային շրջանների աղբյուրները հաճախ ունեն ավելի քան 1 խոր. մ ծախս<sup>1</sup>: Նման աղբյուրներ կան Զավախքում, Արդահանի, Կարսի, Աշոցքի, Քյուրակնի, Սիփանի և այլ սարավանդներում, Սևանա, Վանա լճի ավազաններում և այլն: Դրանք լավաների տակ բաղված նախկին գետերի հուների ելքերն են՝ լավային ծածկոցի եզրին: Այժմ լավային հաստվածքի մեջ ներքափանցող ջրերը արագությամբ հասնում են բաղված հունին ու նրանով շարունակում են հոսել որպես գետնաջրեր: Այդպիսի հզոր աղբյուրի օրինակ է Մեծամոր (Այդր) լիճը Արագածից հարավ՝ ստորոտին, որը հավաքում է ոչ միայն Արագածի, այլև Շիրակի ու Կարսի սարահարքի ջրերը: Սա փաստորն Ախուրյանի նախսկին՝ լավաների տակ բաղված հունի ելքն է: Ժամանակակից Ախուրյանը հոսում է լավային ծածկոցի վրայով՝ երկրորդ հարկում, նրա ջրերի կեսից ավելին ստորերկրյա ճանապարհով է դրւու գալիս դեպի Մեծամոր

<sup>1</sup> Աղբյուրի ծախսը մեկ վայրկյանում նրա տված ջրի քանակն է՝ մ<sup>3</sup>-ով կամ լիտրով:



Նկ. 35. Լավաճերի տակից բխող աղբյուր Ակունք գյուղի մոտ՝ Սևամա լճի հարավային ափին

լիճն ու համանուն գետը: Եթե չինեին լավային ծածկոցները, ապա Հայկական լեռնաշխարհը կիներ այնպես չորային ու ջրածարավ, ինչպես Իրանական սարահարքը (Ուրմիայի ավազանը):

Հրաբխային շրջանների աղբյուրների ջրերը աշխարհի լավագույն ջրերի շարքն են դասվում: Երիտասարդ հրաբխային ապարները ջրի մեջ վատ են լուծվում, ուստի տարիներով ապարների ճեղքերով շրջանառություն կատարող ջուրը շատ քիչ է հարստանում լուծված նյութերով (ջրի միներալացումը 100-200 մգ/լ է), խմելու հիանալի հատկանիշներ ունի և լայնորեն օգտագործվում է ջրամատակարարման համար:

Այլ է պատկերը ծալքաբեկորավոր լեռների տարածման շրջաններում: Այստեղ ապարաշերտերի ճեղքայնությունը բույլ է, քարակարկառները շատ քիչ են, լեռնազանգվածներում ճեղքերի ու ծակոտիների ծավալն անհամեմատ ավելի փոքր է, ուստի ստորերկրյա ջրերի քանակը ևս փոքր է: Աղբյուրները առատաջուր չեն, դրանցից շատերը, հատկապես լանջային (դելյուվիա) աղբյուրները, ամռանն իսպան չորանում են: Ամռան երկրորդ կեսին ու ձմռանը ստորերերկրյա ջրերի պաշարներն սպառվում են:

Ծալքաբեկորավոր լեռներում գրանիտային և այլ ներժայթուկներից դուրս եկող աղբյուրները ունեն լավորակ ջուր, որովհետև բյուրեղային ապարները ևս ջրում վատ են լուծվում, ուստի միներալացումը մեծ չէ: Ծալքաբեկորավոր լեռների, մասնավորապես՝ կրաքարային-մերգելային ապարներից, ոչ ուժեղ ցեմենտացած ավազարերից դուրս եկող ջրերի միներալա-

ցումը համեմատաբար մեծ է, հասնում է 400-600 մգ/լ, և այդ ջրերը խմելու համար այնքան նպաստավոր չեն, որքան հրաբխային շրջանների ջրերը:

Հայկական լեռնաշխարհի ցածրադիր գոգավորություններում կան ճնշումային (արտեզյան) ջրեր: Արտեզյան ջրերը գտնվում են երկու ջրամերժ շերտերի արանքում, և եթե ույինքը գոզավոր է, ապա ջրատար շերտերում պիեզոմետրիկ մակարդակը ավելի բարձր կինքի, քան հատակը: Վերին՝ ջրամերժ շերտը ծալելիս՝ ճնշման տակ գտնվող ջուրը դուրս կգա երկրի մակերևույթ, նույնիսկ կարող է շատրվանել: Նման արտեզյան ջրեր կան Արարատյան, Շիրակի, Ալաշկերտի, Մանազկերտի, Բասենի, Սիսիանի, Սևանի, Վանա, Մալաթիայի գոգավորություններում: Սրանցից ամենից հայտնին ու լավ ուսումնասիրվածը Արարատյան ավազանն է: Արագածից, Գեղամա լեռներից, Արարատից ու Հայկական Պարից ներծծված ջրերը հասնում են Արարատյան դաշտ, մտնում լճագետային ջրատար շերտերի մեջ ու առաջացնում ճնշումային ջրերի մի քանի հորիզոնները: Վերին հորիզոնների ջուրը քաղցրահամ է, ստորին հորիզոններին՝ աղի: Արարատյան դաշտում փորփած են ավելի քան 2000 հորատանցքեր, որտեղից ջուրը սեփական ճնշմանը դուրս է գալիս և օգտագործվում ոռոգման ու կոմունալ նպատակներով: Պետք է ասել, որ մի քանի տասնամյակ շարունակ այստեղ առանց նախապես մշակված ծրագրի հորատումներ են կատարվել, որոնք ճահճացում են առաջացրել, բացի այդ, որոշ հորատանցքերում ստորին հորիզոնների աղի ջրերը խառնվել են Վերին հորիզոնների քաղցրահամ ջրերին, որը ցանկալի երևույթ չէ:

Մյուս արտեզյան ավազանների ջրերը վերջին մի քանի տարիներում են օգտագործվում: Թուրքիայի տարածքում արտեզյան ջրերն օգտագործելու ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում:

Նշենք, որ բոլոր ստորերկրյա ջրերը ի վերջո դուրս են գալիս գետահովվախների մեջ՝ աղբյուրների ձևով, և շատ քիչ դեպքերում է, որ սրանք լեռնաշխարհից հեռանում են ստորերկրյա ճանապարհով՝ սնելով Հայոց (Վերին) Սիրագետքի, Կոր-Արարայան դաշտավայրի կամ Սև ծովի արտեզյան ավազանները:

Հարց է ծագում՝ արդյոք հնարավոր չէ՝ ստորերկրյա ջրերը, որոնք լավագների տակ քաղված հնահովվախներով հասնում են ցածրադիր դաշտերը, կամ դուրս են գալիս լեռնաշխարհի սահմաններից, հայտնաբերել բարձրադիր սարավանդներում և այդ ջրերը դուրս բերել երկրի մակերևույթ: Այս հարցը հաջող լուծում է ստանում Երևանի պետական համալսարանում (պրոֆ. Ս. Բայյան), և առաջին դրական արդյունքները առկա են Քասաղի հնահովուում:

Հարթավայրային երկրներում (Ուստական հարթություն, Արևմտյան Եվրոպա) ջրամատակարարման համար օգտագործվում են իմանականում գետաջրերը, որոնք մաքրելու և վնասակար բակտերիաներից վնասազերելու համար՝ հսկայական միջոցներ են ծախսվում: Աղբյուրների ջրերը այդ տեսակետից ունեն մեծ առավելություն, մանավանդ հրաբխային շրջանների ջրերը

գերծ են հիվանդածին բակտերիաներից և վերամշակման կարիք չունեն, ուստի շատ ձեռնտու են ջրամատակարարման համար: Երևանի հյուսիսային մասը սնող Ազումքի աղբյուրների ջուրը իր որակով աշխարհի լավագույն ջրերից է: Այդպիսի աղբյուրներ շատ կան: Սակայն սրանք ունեն մի թերություն՝ յոդի պակասություն: Դրա պատճառով առաջանում է խայլակ հիվանդությունը (հատկապես՝ կանանց մոտ): Այդ թերությունն այժմ զգալիորեն վերացած է. կերակրի աղին խառնում են աննշան քանակի կալիումի յոդիտ՝ մեկ տոննային մի քանի գրամ, և դա բավական է հիվանդությունը կանխելու համար:

Հայկական լեռնաշխարհի տարրեր շրջաններում (Կողը, Վաղզվան, Բասեն, Խնոս և այլն) կան կերակրի աղի ու գիպսի հանքեր. այստեղ դուրս եկող աղբյուրները հաճախ հագեցած են լինում լուծված աղերով:

Ստորերկրյա ջրերը քիմիական կազմով հիմնականում պատկանում են հիդրոկարբոնատային-կալցիումային տիպին: Սովֆատային կամ քլորիդային ջրերը շատ սահմանափակ են: Ինչ վերաբերում է հանքային ջրերին, ապա այդ մասին մեկնաբանություններ կան հանքային ջրերի բաժնում:

### 3. ՇԱՀԻԾՆԵՐ

Չոր մերձարևադարձային գոտում ճահիճները՝ շատ սահմանափակ տարածություն են զբաղեցնում: Ճահիճների առաջացման պայմանը տվյալ տարածքում տարվա ընթացքում միշտ կամ երկար ժամանակահատվածում, ջրի մուտքի-ելքի դրական հաշվեկշիռն է երկրի մակերևույթին, երբ գոգավոր մասերում կամ փոքր թերությունների վրա ջրերն արագ հեռանալ չեն կարող: Գոգավորությունների մեջ հաճախ գետնաջրերը ուղղակի դուրս են գալիս երկրի մակերևույթ և ճահճացնում տեղանքը: Խիստ չորային պայմաններում, երբ մեծ է գոլորշունակությունը, ճահիճների փոխարեն առաջանում են աղուտներ, որոնց մասին կիսում հողերը նկարագրելիս:

Հայկական լեռնաշխարհում ճահիճների երկու տիպ կարող ենք առանձնացնել՝ ցածրադիր գոգավորությունների ճահիճներ և բարձր լեռնային ճահիճներ: Ցածրադիր գոգավորությունների ճահիճներ հանդիպում ենք Արարատյան դաշտում՝ Արարսի աջ ափին, Կապուտան (Ուրմիա) լճի ափին և շատ սահմանափակ՝ Սև ծովի ափին:

Արարատյան դաշտի ու Ուրմիայի ավազանի ճահիճների ջրերը գալիս են շրջապատի բարձր լեռներից և գետնաջրերի ձևով մերկանում են ու ճահճացնում տեղանքը, իսկ ամռան երկրորդ կեսին հաճախ վերածվում են աղուտների:

Արարսի ձախ ափին՝ Մասիսի շրջանում, մի ժամանակ կային ճահիճներ: Սակայն հաշվի առնելով վատառողջ կիման և անոֆելես մոծակի առկայու-

բյունը, որը ջերմախստի վարակի տարածող էր, ճահիճներն արհեստակականորեն չորացվեցին, և ջերմախստի հարուցիչը խսպան վերացավ:

Բարձր լեռնային ճահիճներն ունեն քաղցրահամ ջուր և ներկայացնում են դժվար ջրափոխանակման տարածքներ: Սրանք ծածկված են ճահճային ու մարգագետնային բուսականությամբ: Այս ճահիճների մի մասը ամռան երկրորդ կեսին չորանում է և վերածվում խոտհարքների:

Բարձր լեռնային ճահիճներ կան ջավախիքի (Ախալքալաքի) սարահարթում, Վերին Ախուրյանի գոգավորությունում, Լոռվա դաշտում, Կուրի վերին հոսանքի շրջանում Կողի գոգավորությունում, Արդահանի շրջանում, Երզնկայի գոգավորությունում, Կարինից (Երզրումից) հյուսիս (Շամբ Կարն), Բասենում, Ջկնագետի (հնում Առուն գետ) հովտում (Մեծ Արարատից հարավ-արևմուտք), Վանա գոգավորության արևելքում: Մինչև Սևանի մակարդակի արհեստական իջեցումը Մասրիկի կամ Գիլի դաշտում ևս կային ճահիճներ, այստեղ նույնիսկ, տորք էին արդյունահանում: Լճի մակարդակի իջեցումից հետո ճահիճները չորացան: Այնախի տիպիկ տորֆային ճահիճներ, ինչպիսիք հանդիպում են Ռուսական հարթության հյուսիսում, Հայկական լեռնաշխարհում չկան:

Բարձր լեռնային ճահիճները կարելի է վերածել մարգագետների ու խոտհարքների՝ ոչ մեծ մասշտաբի ցամաքուրդման (դրենաժի) միջոցով:

#### 4. ԳԵՏԵՐ

Գետերը ակտիվ ջրափոխանակման օբյեկտներ են: Երկրագնդի վրա նյութերի շրջանառության տեսակետից, ողիք հետո, արագությամբ երկրորդը գետերն են: Յուրաքանչյուր տարի գետերի միջոցով դեպի համաշխարհային օվկիանոս է տարվում 45-50 հազ. խոր. կմ ջուր: Այդ վիրխարի քանակից միայն մի շնչին մաս՝ 90 խոր. կմ է բաժին ընկնում Հայկական լեռնաշխարհին:

Հայկական լեռնաշխարհը ջրաբաշխ է, նրա տարածքը երեք ծովային ավագաների է բաժանվում. Կասպից ծովին՝ մոտ 128 հազ. քառ. կմ, Հնդկական օվկիանոսին (Պարսից ծոց)՝ 135 հազ. քառ. կմ և Սև ծովին՝ 53 հազ. քառ. կմ (աղ. 6):

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, լեռնաշխարհի տարածքի ամենամեծ քամինը պատկանում է Կասպից ծովի ավագանին, ապա՝ Պարսից ծոցի և ամենաքիչը՝ Սև ծովի ավագանին: Ներքին, անհոս շրջաններն ավելի ընդարձակ են, քան Սև ծովի ավագանը մեր լեռնաշխարհում (նկ. 36):

Հայկական լեռնաշխարհի գետային ցանցը (բոլոր գետերն իրենց վտակներով ու ենթագտակներով) ունի 170-180 հազ. կմ երկարություն. ընդ որում, հաշվի են առնվազագույն մշտական հոսք ունեցող գետերը: Յու-


## Հայկական լեռնաշխարհի գետերը

Ծովային ավազանը	Գ Ե Մ	Գետավազանի տարածքը հազ. քառ. կմ
Սև ծովի	Տնրոյս Գայլգես Այլ մանր գետեր	20 9 24
	Գումարը	53
Կասպից ծովի	Արարս Կոր (Հայկ. լեռնաշխարհի սահմաններում)	95 33
	Գումարը	128
Պարսից ծոցի	Եփրատ Տիգրիս	95 40
	Գումարը	135
Անիոսը ավազաններ	Վանա լճի Ուրմիո լճի	17,8 41
	Գումարը	58,8
Լեռնաշխարհն ամբողջությամբ		375

բարձրությունը 1 քառ. կմ-ին բաժին է հասնում 0,5 կմ երկարության գետ: Այդ պարամետրն անվանում են գետային ցանցի խտության գործակից, սրա չափման միավորն է կմ/կմ<sup>2</sup>:

Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում գետային ցանցը տարբեր խտություն ունի՝ 0,0-ից մինչև 2 կմ/կմ<sup>2</sup>: Ամենից խիստ գետային ցանցն նկատվում է Պոնտական համակարգում, որտեղ խտության գործակիցը անցնում է 2 կմ/կմ<sup>2</sup>-ից: Դա բացատրվում է ոելիեֆի հասակով և տեղումների առանությամբ: Միլիոնավոր տարիների ընթացքում լեռները բարձրացել են, իսկ տեղումներից գյացած առատաջուր գետակները սղոցել են լեռնալանջերը:

Պոնտական լեռնահամակարգի և Սևսիկյան լեռների ծովահայաց լանջե-



Նկ. 36. Հայկական լեռնաշխարհի գետային ցանցի միեմամ: Ավազանները՝

I. Աև ծովի, 2. Կասպից ծովի, 3. Պարսից ծովի, 4. Վանա լճի, 5. Կապոտան (Ուրմիա) լճի

րին գետային ցանցի խտությունը հասնում է  $1,5\text{--}2,0$  կմ/կմ<sup>2</sup>, որոշ հատվածներում՝ ավելին: Մոտավորապես նույն խտության հանդիպում ենք՝ Կորդվագ, Հերյարի լեռնային համակարգում, ապա՝ Զանգեզորի, Մոռավի, Մնձորի լեռնաշղթաներում, Հայկական Տավուշի հարավային կողմնադրության լեռնալանջերում:

Փոքր Կովկասի համակարգում, Ներքին Տավրոսի (Բյուրակն-Մնձորյան) լեռնաշղթայում, Շորոխի, Գայլգեսի հովիտներում գետային ցանցի խտության գործակիցը  $1,0\text{--}1,5$  կմ/կմ<sup>2</sup> է: Ավելի փոքր խտություն նկատվում է ընդարձակ գոգավորությունների շուրջն ընկած նախալեռներում ու ոչ բարձր լեռներում՝  $0,5\text{--}1,0$  կմ/կմ<sup>2</sup>: Գոգավորությունների հատակին խտությունն իջնում է մինչև  $0,2$  կմ/կմ<sup>2</sup>, ինչպես օրինակ՝ Արարատյան, Նախիջևանի, Կարմիրջրի (Աչի գետի), Մալարիայի դաշտերում, որտեղ գետեր չեն ձևավորվում, եղածները տարանցիկ (տրանզիտային) բնույթ ունեն:

Քոյրովին ուրույն պատկեր ենք տեսնում հրաբխային ծածկույթների տարածման շրջաններում: Այստեղ գետային ցանցի խտությունը մեծ չէ: Հրաբխային սարավանդներն ու զանգվածները երիտասարդ են, դեռևս մասնատված չեն: Արդեն ասվել է, որ հրաբխային ծածկույթներում մընողրտային ջրերը ճեղքային լավաների մեջ ներծծվում են և մակերևությային հոսքը բոյլ է, գետային ցանցի խտությունն էլ ծալքաբեկորավոր լեռների ցանցի համեմատ կիսով չափ երատվում է, այն չի անցնում  $0,5\text{--}0,6$  կմ/կմ<sup>2</sup>-ից: Այստեղ մեկ այլ օրինաշափություն կա:


Մինչև 5-10 մ<sup>3</sup>/վրկ ծախսով գետերը սարավանդներում առաջացնում են խոր խընդահովիտներ: Այդ խնձահովիտներում դուրս եկող աղբյուրները նպաստում են ջրի կենդանի ուժի զրկացմանը, և լավային ծածկողի գոյացումից հետո նման գետերը ստեղծել են մի քանի հարյուր մետր խորությամբ խոր խնձահովիտներ (Զորագետ, Ախուրյան, Քասաղ, Հրազդան, Որոտան, Արածանի և այլն):

Հարկ է նշել բեղենդների ձորակային ցանցի մասին: Լեռնաշխարիի հարպ-արևելյան մասում Արարատյան, Նախիջևանի, Կապուտանի (Ուրմիայի) գողափորություններում, Հայկական (Ղարաղաղ), Նոր Շիրականի (Սիշուղաղ) և այլ լեռներում ուկինի տիրապետող ձևերը, ինչպես նշվել է ուկինի բաժնում, բեղենդներն են: Այստեղ ձորակային ցանցը շատ խիտ է, որոշ հատվածներում մենք նկատել ենք մինչև 10 կմ/կմ<sup>2</sup>: Սակայն այս ցանցը մենք գետային ցանց չենք համարում այն պատճառով, որ ձորակներում ջուր լինում է միայն անձրևի ժամանակ և մշտական հոսք ունեցող գետերի ցանցը խփան քոյլ է զարգացած: Զորակային ցանցը միջին հաշվով ունի 3-5 կմ/կմ<sup>2</sup> խտություն: Ուրեմն գետային ցանցի և ձորակային ջր ցանցի խտությունները միմյանց հետ չպետք է շփորել:

Խոսելով լեռնաշխարիի գետերի ձևաչափական հարցերի մասին՝ մեկ հանգամանքի վրա ևս ուշադրություն դարձնենք. դա նրանց երկայնակի կտրվածքի կողապատկերում սանդուղքավոր տրամատի առկայությունն է: Գետը վերին հոսանքում արագակու է, անվանմը մեծ է, սակայն դուրս է գալիս սարավանդ կամ գողափորություն՝ հոսում է դանդաղ, նոյնիսկ զալարներ է առաջացնում, որոշ տարածություն անցնելով՝ նորից մտնում է խոր հովտի կամ խնձահովտի մեջ, անկումը նորից մեծանում է, կատարում է խորքային երողիա, այստեղից նորից է դուրս գալիս հարք դաշտ և, այսպես մի քանի հաստիճան անցնելով, վերջապես բափվում է ծով: Այդպիսի գետեր են Եփրատը, Արածանին, Արաքը, Ախուրյանը, Կարսագետը, Կուրը, Որոտանը և այլն: Գետերի նման աստիճանավոր տրամատը (պյոռֆիլը) տեկտոնական շարժումների հետևանք է (նկ. 37):

Մի քանի գետերի հոսանքներում առաջացել են լավային պատվարներ և արգելակափակոցային լճեր, որտեղ կուտակվել են լճային նստվածքներ: Լեռտագայում լեռը չորացել են, տեղում մնացել են հարք դաշտեր: Տարեր աստիճանների միջև տեղ-տեղ գոյացել են ջրվեժներ ու սահանքներ: Գետերի ընթացքում որոշ անվան տակ տեկտոնական խզվածքների միջոցով ստեղծվել են ջրվեժներ: Դրանցից հայտնի են հատկապես Եփրատի ջրվեժները, երբ գետը կրտրում է Տավրոսի լեռնաշղթան: Նման ջրվեժներ են Գրգուշինը Արածանիի վրա, Թորումինը համանուն գետի վրա, Զիշկանինը (Թոշկան ջուր) և այլն:

Տեկտոնական բարձրացումների հետևանքով հաճախ գետերը կամ նրանց առանձին հատվածները խրվում են իրենց իսկ սեփական նստվածքների մեջ, կատարում խորքային երողիա, ստեղծում ավելի խոր հովտ, իսկ իհն հովտի հատակի մասերը մնում են որպես գետի երկարությամբ աստիճաններ-դարա-



Նկ. 37. Հայկական լեռնաշխարհի մի քանի գետերի երկայնակի տրամատները

1. Եփրատ, 2. Արածանի, 3. Տիգրիս, 4. Արաքս, 5. Կուր, 6. Կարմիրջուր (Աջի գետ), 7. Ծորոխ

վանդներ: Հայկական լեռնաշխարհում գետերն ունեն 6-8 դարավանդ: Ամենահին դարավանդները ունեն վերին պլիոցենյան հասակ, և տեղ-տեղ դրանց բարձրությունը՝ հունից, կազմում է մինչև 1000 մ. օրինակ՝ Արաքսի լավային դարավանդը Կաղզվանի մոտ, Որոտանի դարավանդը Տաքրի մոտ՝ 700 մ և այլն:

Հայկական լեռնաշխարհի գետերը սնվում են հիմնականում երեք աղբյուրներից՝ ձնիալիքի ջրերից, անձրևաջրերից և ստորերկրյա ջրերից: Չոր-

րորդ աղբյուրը՝ սառցադաշտային սնումը, չնշին է: Նշենք, որ Քաջքարի, Արագածի, Սիփանի, Արարատի, Սավալանի, Ջիլոյի սառցադաշտերից ու ֆիռնային դաշտերից սնվող գետերը շատ անհշան են, գետերի ընդիանուր հոսքի մեջ 1 %-ից էլ պակաս, ուստի մենք այդ հոսքը անտեսում ենք:

Ինչպես արդեն նշվել է, լեռնաշխարհի մեծ մասը ձմռանը ծածկվում է ձնածածկույթով, որն ըստ բարձրության հզորանում է, և այդ ամբողջ զանգվածը գարնանը շարժման մեջ է դրվում առաջացնելով գարնանային հորդացում: Լեռնաշխարհի գրեթե բոլոր գետերը գարնանն են հորդանում: Հատկապես հորդացումը մեծ շափերի է հասնում լեռնաշխարհի հյուսիսային մասերում Պոնտոսի համակարգում, Շորոխի, Գայլգետի և նրանց վտակների ավազաններում, որտեղ հզոր ձնածածկույթ կա: Ինտենսիվ հորդացում կա նաև Հայկական Տավրոսից սկսվող գետերում (Տիգրիսի վտակները), քանի որ լեռնային համակարգի միջին և բարձր լեռների գոտիներում առատ ձյուն է գալիս: Ինչ վերաբերում է միջնաշխարհի գետերին, ապա սրանը հորդանում են զարնանը, սակայն այն-պիսի բուռն հորդացում չունեն, ինչպես վերը նշված ավազաններում:

Անձրևաջրերով սնումը բնորոշ է բոլոր գետերին, սակայն միայն որոշ շրջաններում է, որ այն գերակշռող է: Այդպիսին է Պոնտական ու Մոսքիլյան (Մեսիսերի) համակարգերի ցածր լեռների գոտուց սկսվող ոչ մեծ գետերի սնումը, որոնք նույնիկ ձմռանը սնվում են անձրևաջրերից:

Անձրևներից սնվող գետերի մակարդակի տատանումները շատ ցայտուն են արտահայտված: Պատահում է, որ հորդառատ անձրևի դեպքում գետի ծախսը մինչև հարյուր անգամ մնեանում է:

Միջնաշխարհում անձրևային բաղադրիչը տարբեր մասերում տարբեր է: Բարձր-լեռնային զանգվածներում այն ամենուրեք զիջում է հայոցքայինին, ցածրադիր գոգավորություններում հակառակը, քանի որ ցածրադիր դաշտերում ձնածածկույթ չկա և տեղումները հիմնականում անձրևային են: Ուրեմն գետերի սնման գործում էլ շատ կարևոր նշանակություն ունի բարձրադիր-վերներաց գոտիականությունը:

Ստորերկրյա ջրերի բամինը գետերի սնման մեջ շատ մեծ է: Այս բաղադրիչը իր հզորությամբ հրաբխային ծածկոցների տարածման շրջաններում առաջինն է: Կան շատ գետեր, որոնց հոսքի 50 %-ից ավելին տալիս են ստորերկրյա ջրերը: Այլ է պատկերը ծալքաբեկորավոր լեռներում: Այստեղ ստորերկրյա ջրերը շատ նվազ են, գետերի գումարային հոսքում դրանց դերը շատ փոքր է:

Հայտնի է, որ գետերի դասակարգումը՝ ըստ սնման աղբյուրների, կատարվում է հիմք ընդունելով չորս բաղադրիչներից յուրաքանչյուրի բաժնի չափը: Եթե գետի հոսքի 50 %-ից ավելին տալիս է բաղադրիչներից մեկը, ապա սնումը անվանվում է տվյալ բաղադրիչի անվամք՝ որպես հիմնական: Օրինակ, Մեծամորի հիմնական սնումը ստորերկրյա է: Եթե սնող բաղադրիչներից ոչ մեկը չի հասնում 50 %-ի, բայց մյուսնե-

թից գերակշռող է, ապա սնումը համարվում է խառը, բայց գերակշռող՝ որևէ բաղադրիչով: Հայկական լեռնաշխարհի գետերի մեծ մասը խառը սնում ունի ձնիալիք սնման գերակշռությամբ: Եթե հալոցքային և անձրևային բաղադրիչները դիտենք համատեղ, ապա գետերի մեծ մասը կունենա ձնա-անձրևային հիմնական սնում:

Հայկական լեռնաշխարհի գետերի վարքը (ռեժիմը) անկայուն է, մեծապես կախված է սննան աղբյուրներից: Ամենից կայուն վարքը ունեն ստորերկրյա հիմնական սնում ունեցող գետերը՝ Մեծամորը, Սևանի ավազանի մի քանի գետեր և այլն: Ձնա-անձրևային և մանավանդ հիմնականում անձրևային սննան գետերը ունեն անկայուն վարք: Ընդ որում, փոքր գետերը (Վտակները) ծախսի ավելի մեծ տատանումներ են տալիս, բան մեծ գետերը, մասն Վտակներից շատերը ամռանը կամ ձմռանը իսպառ չորանում են: Դա առավել ակնառու է լեռնաշխարհի հարավում և հարավ-արևելքում:

Համեմատաբար խոշոր գետերում առավելագույն և նվազագույն ծախսերի տարրերությունը հասնում է մի քանի անգամի, նոյնիսկ տասնյակ անգամների: Օրինակ, Եփրատի առավելագույն ծախսը գարնանը, Կապանի (Քերամի) ջրամբար մըսնելիս, 6600 մ<sup>3</sup>/վրկ է, նվազագույնը՝ 167 մ<sup>3</sup>/վրկ, տարրերությունը՝ 40 անգամ: Տիգրիսը Ունցուկի մոտ առավելագույն ծախս ունի՝ 5685 մ<sup>3</sup>/վրկ, նվազագույնը՝ 69 մ<sup>3</sup>/վրկ, տարրերությունը՝ ավելի քան 80 անգամ. Արաքի առավելագույն ծախսը՝ 1520 մ<sup>3</sup>/վրկ, նվազագույնը՝ 40 մ<sup>3</sup>/վրկ, տարրերությունը՝ 38 անգամ: Այս տվյալները ցույց են տալիս, որ լեռնաշխարհի նոյնիսկ համամետուրաբար խոշոր գետերը ունեն անկայուն ռեժիմ:

Հայկական լեռնաշխարհի մեծ գետերում, որոնց ակունքը բարձր լեռներում է, գարնանային հորդացումը բավական ճգված է լինում: Ցածրադիր գրտում ձնիալիք տեղի է ունենում մարտին, բարձր լեռներում մինչև հունիս, ուստի ամբողջ գարնան սեղոնին գետերը ջրառատ են լինում: Կարծ գետերում հորդացումը<sup>1</sup> կարծառն է, բայց՝ բուն: Կան շատ գետեր, որոնց տարեկան հորի 60-70 %-ը տեղի է ունենում գարնանը: Հաճախ է պատահում, որ գարնանային ձնիալիք ժամանակ հանկարծ տեղատարափ անձրևներ են տեղում, որոնք արագացնում են ձնիալիք, և հորդացումը վերածվում է վարարման:

Գետերի էրոզիոն գործունեությունը հիմնականում գարնանն է, եթե ջրի ծախսը ավելանում է, որից մեծանում է գետի կենդանի ուժը: Գետերի հարքավայրային հատվածներում հորդացման ժամանակ հաճախ ջրաշիթերը փոխում են ուղղությունը, նոր հուն ստեղծում: Հունի վոփիխությունը կատարվում է գետաբերուկների կուտակման հետևանքով: Արաքը Արաքատյան դաշտում բազմից է փոխել հունը, դրա հետևանքով Արաքսն այժմ խառնը-

<sup>1</sup> Հորդացումը շաբաթ է շփոթել վարարման հետ: Հորդացումը ամեն տարի նոյն սեղմին տեղի ունեցող ջրի ծախսի ավելացումն է: Վարարումը հանկարծակի, պատահական պատճառներից՝ հորդառատ անձրևից, պատվարի պատովելուց և այլ պատճառներից, առաջացած ջրի ծախսի անսպասելի ավելացումն է. Վարարումը կարող է վերածվել սեղափի:

վում է Կուր գետին (առաջ ինքնուրույն էր հասնում Կասպից ծով):

Գետերի երկրորդ հորդացումը աշնան է, սակայն թույլ է արտահայտված, այն ոչ բոլոր գետերում է նկատվում:

Գետերի վարքում տարվա ընթացքում նկատվում է երկու սակավաջրություն՝ ամռան երկրորդ կեսին և ձմռանը: Ամռանը՝ հուլիս, օգոստոս և նոյեմբեր սեպտեմբեր ամսաներին մքնալորտային տեղումներ շատ քիչ են գալիս, մի շարք գետեր խսպանում են: Այս սեզոնում գետերն իրենց գոյուրյունը պահպանում են ստորերկրյա ջրերի հաշվին: Տեղ-տեղ տեղատարափ, կարծատև անձրևները կարող են ավելացնել մասր գետերի ծախսը, բայց խոշոր գետերի մոտ այդ փոփոխությունը գրեթե չի նկատվում:


Ամառային սակավաջրությունը (մեջեն) առանձնապես ցայտուն է արտահայտված ծալքաբեկորավոր լեռներում ձևափորվող գետերում, որտեղ ստորերկրյա ջրերի բաժինը շատ քիչ է: Դրանց են վերաբերում Նախիջևանի, Ուրմիայի գոգավորություններում, Հայոց (Վերին) Միջագետքում ծնվող գետերը, որոնց մեծ մասը ամռանը չորանում է:

Հրաբխային ծածկցաների տարածման շրջաններում սակավաջրությունն այդքան ուժգին չի արտահայտված, առատ առյուրները այնուամենայնիվ կարողանում են գետի կյանքը պահպանել: Այդպիսի գետերից են՝ Շորիսի աջակողմյան վտակները, Կորի վերին հոսանքների վտակները, Զավախը, Կարսի, Արդահանի սարավանդներում ծնվող գետերը, Քասաղը, Ազատը, Որոտանը, Արածանին և այլն:

Զմռանը նույնապես սակավաջրություն է. տեղումները գալիս են ճաշն ձևով, գետերը գոյուրյունը պահպանում են միայն ստորերկրյա ջրերի հաշվին: Գետերի հունվարյան ծախսը ցույց կտա ստորերկրյա ջրերի բաժինը ընդհանուր հոսքում: Քանի որ առյուրների ծախսը առանձնապես փոփոխության չի ենթարկվում, ուստի բավական է մեկ ամսվա ծախս ունենալ, որպեսզի գաղափար կազմվի սրբանա մնջ ստորերկրյա բաղադրիչի քանակական արտահայտության մասին:

Ինչպես արդեն նշեցինք, լեռնաշխարհում կան գետեր, որոնք աշնան-ձմեռային սեզոնին են հորդանում: Դրանք Սև ծովի ավազանի ոչ մեծ գետերն են, որ սկիզբ են առնում մինչև 1000 մ բարձրություններից: Մոտավորապես նույն պատկերն է նաև Տիգրիսի ավազանում՝ մինչև 1000 մ բարձրությունների վրա, ձմռանը տեղումները գալիս են անձրևների ձևով, ձյունը հազվադեպ է:

Հայկական լեռնաշխարհի գետերը տարբեր ջրառատություն ունեն. ջրառատության ցուցանիշը հոսքի մոդուլն է: Այն ցույց է տալիս, թե գետավազանի յուրաքանչյուր 1 քառ. կմ-ը մեկ վայրկյանում որքան ջուր է տալիս գետին: Այն հաշվով է լիտրերով՝ լ/վրկ.կմ<sup>2</sup>: Ամենից ջրառատը Սև ծովի ավազանի գետերն են, որոնց գրանցեցրած տարածքում տեղումների բանակը ամենից մեծն է. այստեղ հոսքի միջին մոդուլը 20-30 լ/վրկ կմ<sup>2</sup> է, որոշ փոքր ավազաններում՝ 40-60 լ/վրկ կմ<sup>2</sup>: Ջրառատ են նաև Տիգրիսի վտակները (որ սկսվում են



Նկ. 36. Հայկական լեռնաշխարհի գետային հոսքի ( $\text{լ/վրկ } \text{կմ}^2$ ) մոդուլի բարտեզ. 1. 5-ից պակաս, 2. 5-10, 3. 10-15, 4. 15-20, 5. 20-30, 6. 30-ից ավելի

Կորդվագ լեռներից՝ 20-25, տեղ-տեղ ավելիմ մինչև 30 լ/վրկ կմ<sup>2</sup>: Այլ է պատկերը Միջնաշխարհում, որտեղ տեղումները սակավ են: Այստեղ հոսքի մոդուլը տատանվում է 6-10 լ/վրկ կմ<sup>2</sup>. Կապուտանի (Ուրմիո) ավազանում 4-5 լ/վրկ կմ<sup>2</sup>, Վանա լճի ավազանում՝ մոտ 7 լ/վրկ կմ<sup>2</sup>, Արաքսի ավազանում ամբողջությամբ՝ մոտ 3 լ/վրկ կմ<sup>2</sup>: Նշենք, որ լստ բարձրությամբ՝ հոսքի մոդուլն աճում է:

Աղյուսակ 7

**Հայկական լեռնաշխարհի գետերի հոսքի քառագրիչները**

Ավազաններ, գետեր	Տարածքը՝ հազ. կմ <sup>2</sup>	Գետերի ծախսը մ <sup>3</sup> /վրկ			Տարեկան հոսքը՝ կմ <sup>3</sup>	Հոսքի մոդուլ՝ լ/վրկ կմ <sup>2</sup>
		միջին	առավել	նվազագ.		
<b>I. Լեռնաշխարհից հոսք ունեցող ավազաններ</b>						
1. Պոնտոսի և Մոսկվա-կան լեռների արտաքին լանջերը	24	600	-	-	19	25
2. Գայլգետ	9	95	1300	40	3	11
3. Շորոխ	20	190	2500	70	6	10-11
4. Կուր (Հայկական լեռնաշխարհում)	33	340	-	-	11	10
5. Արարս	95	280	1600	160	9	2,9
6. Եփրատ	95	800	7000	180	26	8,4
7. Տիգրիս (Հայկական լեռնաշխարհում)	40	530	5685	69	16	13
Գումարային	մոտ 317	2835	-	-	մոտ 90	8,5
<b>II. Անհոս ավազաններ</b>						
1. Վանա	18	90	-	-	2,8	6,4
2. Կապուտան (Ուրմիա)	40	180	-	-	5,8	4,5
Գումարային	58	270	-	-	8,6	5
<b>Հայկական լեռնաշխարհին ամբողջությամբ</b>	մոտ 375	3105	-	-	մոտ 99	8

Ծանոթություն: Կապուտան (Ուրմիա) լճում հաշվի է առնված նաև հարավից մուտք գործող ջրի հոսքը, որի ավազանը լեռնաշխարհից դուրս է, քայլ ջուրը մուտք է գործում լեռնաշխարհ և գոլորշանում:

Հայկական լեռնաշխարհի երկու գետերը՝ Եփրատը և Տիգրիսը լեռնաշխարհից տարեկան դուրս են տանում մոտ 42 խոր. Կմ ջուր, լեռնաշխարհի ողջ հոսքի մոտ կեսը: Ամենափրքը Արաքսի հոսքն է՝ այն պատճառով, որ նրա ավազանում տարածվում են կիսաանապատներ: Մեծ հոսքով աչքի են ընկնում Սև ծովի ավազանի գետերը:

Հայկական լեռնաշխարհի գետերը կատարում են ուժգին խորքային, իսկ հարթավայրային հատվածներում էլ՝ կողային երողիա: Հոյք ունեցող շրջաններից տարեկան դուրս է տարվում 80-100 մլն տ լուծված, կախված և գորշող նյութեր, ընդ որում՝ ամենից եռանդում լվացվում են Պոնտական ու Սոսիկյան, ապա՝ Տավրոսի լեռները: Միջնաշխարհում տեղատարումն ուժգին է ծալքաբեկորավոր լեռներում, հրաբխային ծածկոցները տեղատարվում են ավելի բույլ կերպով:

Լեռնաշխարհի գետերը տանում են քաղցրահամ ջուր: Բոլոր գետերի վերին հոսանքներում ջրի միներալացումը 50-70-100 մգ/լ է, ընդ որում՝ լուծված նյութերի մոտ 20-30 %-ը օդային ծագում ունի, այսինքն՝ գալիս են մթնոլորտային տեղումների հետ (տես՞ Գլուխ 6): Միջին բարձրության լեռներում գետաջրերի միներալացումը ավելանում է՝ 200-300 մգ/լ, ստորին հոսանքներում՝ 300-500 մգ/լ: Նշենք, որ հրաբխային ծածկոցներից սկիզբ առնող գետերի ջրի միներալացումը մոտ կրկնակի պակաս է ծալքաբեկորավոր շրջանների ջրերի միներալացումից: Գետաջրերի միներալացումը կախված է ապարների կազմից, տեղումների քանակից, ապարներում ջրաշրջանառության տևողությունից և այլն:

Գետաջրերի միներալացումը սեզոնային ընթացք ունի. ամենից փոքր միներալացումը գարնան է, ամենից մեծը՝ սակավաջուր ամուսնը, երբ գետերը սնվում են երկար ժամանակ երկրակեղևում շրջանառություն կատարած ստորերկրյա ջրերից: Տարբերությունը կազմում է 1,5-2 անգամ:

Գետաջրերի միներալացումը ինքնին չի կարող բիմիական լվացման ցուցանիշ լինել, կարևոր է նաև ջրի հոսքը: Օրինակ, Պոնտական լեռներում գետաջրերի միներալացումը 150-200 մգ/լ է, սակայն հոսքի մոդուլը մեծ է, ուստի 1 քառ. կմ ավազանից լվացված նյութերի քանակը ամենից մեծն է՝ 85-300 տ/կմ<sup>2</sup>, միջին հաշվով 200 տ/կմ<sup>2</sup>, որպիսի տեղատարում այլևս ոչ մի տեղ չի նկատվում: Մրան մոտ պատկեր նկատվում է Տավրոսի հարավային լանջերին՝ մինչև 120-140 տ/կմ<sup>2</sup>: Միջնաշխարհում լվացման ինտենսիվությունը փոքրանում է տեղումների նվազ քանակի և հրաբխային ապարների առկայության պայմաններում: Այսպէս, Արաքսի ավազանից յուրաքանչյոր 1 քառ. կմ-ից լվացվում է 35 տ, Եփրատի ավազանում՝ 60-80 տ, Կուրի ավազանում (մինչև Թբիլիսի)՝ 60 տ/կմ<sup>2</sup> և այլն: Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ միջին հաշվով գետերը Հայկական լեռնաշխարհից դուրս են բերում 20-25 մի-

լին տ լուծված նյութեր (իռնական ձևով)<sup>1</sup>, չոր նստվածքի ձևով հաշվարկելիս՝ ոչ ավելի քան 20 մլն տ:

Գետերը տանում են կախված նյութեր՝ տիղմ ու կողոփոխ վիճակում գտնվող մասնիկներ: Զրի մեջ կախված նյութերի քանակն արտահայտվում է պղտորության միջոցով՝ 1 լիտրում քանի միլիգրամ կամ գրամ և կամ՝ գ/մ<sup>3</sup>, կգ/մ<sup>3</sup>: Գետերի պղտորությունը կախված է լվացվող հողմահարված նյութերի տեսակից: Չորային շրջաններում գետերի պղտորությունը մեծ է, որտեղ հողմահարված նյութերը առատ են, մինչդեռ ներժայուկների կամ հրաբխային ապարների տարածման շրջաններում գետերի պղտորությունը մեծ չէ՝ ապարների հողմահարման նկատմամբ ունեցած կայունության շնորհիվ: Ամենից մեծ պղտորությունը հատուկ է Արարսին՝ տարեկան միջինը՝ 2000-2400 գ/մ<sup>3</sup>, ընդ որում՝ առավելագույնը ապրիլ-մայիս ամիսներին է, իսկ նվազագույնը՝ դեկտեմբեր-հունվարին՝ 400-600 գ/մ<sup>3</sup>:

Միջնաշխարհում Եփրատը իր վտակներով տանում է՝ վերին հոսանքներում՝ 100-200 գ/մ<sup>3</sup>, լեռնաշխարհից դուրս գալիս՝ 1000-1500 գ/մ<sup>3</sup>:

Պղտորության համեմատարար մեծ արժեքներ տեսնում ենք Տիգրիսի ավագանում՝ լեռներից դուրս գալուց հետո: Եթե վերին հոսանքներում պղտորությունը 60-100 գ/մ<sup>3</sup> է, ապա Հայոց (Վերին) Միջագետքում՝ 1500-2000 գ/մ<sup>3</sup>:

Համեմատարար փոքր պղտորությամբ աշքի են ընկնում հրաբխային և անտառածածկ շրջանների գետերը. ակունքային մասերում՝ 30-50 գ/մ<sup>3</sup>, ստորին հոսանքներում՝ 250-300 գ/մ<sup>3</sup>:

Կախված նյութերի տարեկան հոսքը կախված է ինչպես պղտորությունից, այնպես էլ գետի ջրի ծախսից: Սև ծովի ավագանում շնայած պղտորությունը մեծ չէ, քայլ մեծ է ծախսը, ուստի տարեկան լվացվում է 300-600 տ/կմ<sup>2</sup>: Միջնաշխարհում տեղումների սակավության պայմաններում 70-100 տ/կմ<sup>2</sup> է, Տիգրիսի ավագանում՝ 200-300 տ/կմ<sup>2</sup>: Ըստիանրացնելով կարող ենք նշել, որ Հայկական լեռնաշխարհի հոսք ունեցող 317 հազ. քառ. կմ տարածքից տարեկան կախված նյութերի ձևով հեռանում է շուրջ 50 մլն տ, այսինքն՝ 1 քառ. կմ-ից 150 տ:

Հայկական լեռնաշխարհի գետերը հողմահարված նյութեր տանում են նաև հատակին գլորելով: Դրանց քանակը տարբեր ծագում ունեցող լեռներում տարբեր է: Հրաբխային ծագման լեռներում կախված նյութերը քիչ են, որովհետու մեծ է ստորեկրյա ջրերի քածինը, իսկ այս ջրերը կախված նյութեր գրեթե չեն պարունակում, հետևաբար՝ գլորվելով հեռացող նյութերի քանակն ավելի է, քան կախված նյութերինը: Կավային ապարների տարածման շրջաններում, քնական է, կախված նյութերը շատ կլինեն, գլորվող նյութերը՝ քիչ:

<sup>1</sup> Իռնական ձևից չոր նստվածքի անցնելիս հիդրոկարբոնատային խճճ կրկնակի չափով պակասում է, ուստի չոր նստվածքը զգալի չափով կրծատվում է:

Ամբողջ լեռնաշխարհում գլորվող նյութերի քանակը մենք համարում ենք կախված նյութերի մոտ 15 տոկոսի չափ, որը կկազմի 7-8 մլն տ կամ 25 տ/կմ<sup>2</sup>: Գումարենով գետերի կոչտ հոսքի քաղադրիչները՝ կստանանք հետևյալը (առյուսակ 8):

#### Աղյուսակ 8

##### Հայկական լեռնաշխարհի գետերի գումարային էրողիան (առանց Վաճառ և Կապատան (Ուրմիա) լճերի ավագանների)

Կոչտ հոսքի քաղադրիչները	Տարեկան հոսքը՝ մլն տ	Կոչտ հոսքի ցուցանիշը՝ տ/կմ <sup>2</sup>	Տեղատարվող շերտի հաստություն՝ միլիոն	Տեղատարման մետրը հազ. տարի
1. Քիմիական էրողիա	20-25	70-80	35	30
2. Կախված նյութերի ձևով	50	150	75	14
3. Գլորվող նյութերի ձևով	7-8	25	12	80
Գումարային տեղատարությունը	մոտ 80	255 267	125	10

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, Հայկական լեռնաշխարհից գետերի միջոցով յուրաքանչյուր տարի լվացվում-հեռացվում են մոտ 80 մլ տ լուծված, կախված ու գլորվող նյութեր (շահված՝ սելավային բերվածքները). դա կազմում է 0,12 մմ-ի հաստության մի շերտ: Այդ շերտը 10 հազար տարում կկազմի 1 մ, նշանակում է՝ տեղատարման մետրը (դենուդացիոն մետր) 10 հազար տարի է, որի, ընդհանրապես վերցրած, համապատասխանում է նման լեռնային շրջանների տեղատարման թափին: Եթե Հայկական լեռնաշխարհը տեկտոնական քարձրացում չունենա, ապա մոտ 18 միլիոն տարվա ընթացքում կհավասարվի ծովի մակարդակին: Այդ արդուելու տեղի ունենալ չի կարող, որովհետև լեռնաշխարհը տարեկան թերևանում է 80 մլն տոննայով, հետևաբար մագմայի կողմից դրւու է մղվում տեկտոնական քարձրացում է ապրում:

Մի քանի խոսք գետերում սառցային երևույթների մասին:

Կլիմայի բաժնում մենք տեսանք, որ Հայկական լեռնաշխարհում սաստիկ սառնամանիքներ են լինում, ամենուրեք ձյուն է զալիս, տարածքի մեծ մասում ձմռանը (հունվարին) միջին ջերմաստիճանը 0-ից իջնում է, հետևաբար ջրերը պետք է սառչեն: Որպես կանոն քարձրադիր սարավանդների դանդաղահոս գետերը ձմռանը սառցակալում են՝ Փարվանա, Կուրի վերին հոսանքները, Կարսագետ, Ախուրյան, Արաքսի վերին հոսանքները, Արածանիի վերին հոսանքները և այլն: Սառցակալած շերտի հաստությունը կարող է հասնել մի քանի սմ-ից մինչև 40-50 սմ:

Այլ է պատկերը քարվագներում ու արագահոս հատվածներում: Ջրի ինտենսիվ շարժման հետևանքով, ինչպես նաև աղբյուրներից դրւու եկող 5-15°-ի ջրերի խառնվելով հետևանքով՝ սաղցակալման պրոցեսը կաշկանդվում է, և մակերևութային սաղցի փոխարեն առաջանում է տիեզ: Սղինը սաղցի բյուրեղիների ու գերպաղած ջրի խառնուրդ է, որն ինտենսիվ շարժման դեպքում անմիջապես չի սաղում: Բավական է այդ խառնուրդից մեկ քաժակ վերցնել, և շարժումը կդադարի, ամբողջ զանգվածը միանգամից կսառչի:

Հայկական լեռնաշխարհի գետերը սղինատար են, մասնավորապես Միջնաշխարհի գետերը (վերին ու միջին հոսանքներում): Օրինակ՝ Ախուրյանը Արփի լճից դուրս գալուց հետո, մինչև Սեպասար, սաղցակալում է: Մտնելով Ամասիայի խնձահովիտ՝ նրա մակերևութային սառույցը վերանում է, գետը սղին է տանում: Դուրս գալով Շիրակի դաշտ՝ հոսքի արագությունը փորբանում է, գետը դառնում է դանդաղահոս, նորից ծածկվում է մակերևութային սառույցով՝ մինչև Ախուրյանի ջրամբարը: Եթե մտնում է Ասիի խնձահովիտը, նորից արագությունը մեծանում է, այն դառնում է սղինատար: Նույնը տեղի է ունենում Արաքսի վերին հոսանքներում և այլ գետերի վրա:

Հայկական լեռնաշխարհն ունի ջրակերգետիկ ռեսուրսներ: Հազարավոր տարիներ առաջ հայերը գտել են այդ էներգիան օգտագործելու պարզունակ եղանակը՝ կառուցել են ջրահացներ: Զրադացների գյուտը հայերին է պատկանում: Սակայն ջրադացները կարող են օգտագործել գետերի էներգիայի շնչին մասը: Մինչև 20-րդ դարը այդ էներգիան գրեթե չի օգտագործվել, և միայն 20-րդ դարում սկսեցին կառուցել էլեկտրակայաններ:

Լեռնաշխարհի գետերի անկումը մեծ է: Օրինակ, Հրազդանն սկսվում է Սևանից՝ մոտ 1900 մ բարձրությունից և մինչև Արաքսին խառնվելը 1000 մ անկում ունի: Արածանին և Արևմտյան Եփրատը սկիզբ են առնում ավելի քան 3000 մ բարձրություններից և, դուրս գալով Հայոց Միջագետը, հոսում են 600 մ բարձրության տեղանքով:

Հայկական լեռնաշխարհի գետերի էներգետիկ ռեսուրսները գնահատվում են 25-30 մբն կՎտ, որի մի շնչին մասն է այժմ օգտագործվում: Հայատանի Հանրապետության սահմաններում կառուցվել են Սևան-Հրազդան կասկադի 6 էլեկտրակայանները (Սևանի ստորգետնյա, Արարելյանի, Գյումուշի, Արգմու ստորգետնյա, Քանաքեռի, Երևանի), Որոտանի կասկադը՝ երեք աստիճանով, Թարթառի վրա Սարսանգի հիդրոհանգույցը, Կապանի (Քերանի) հիդրոհանգույցը Եփրատ-Արածանու վրա, Արաքսի հիդրոհանգույցը Նախիջևանի մոտ և այլն:

Մինչև առանձին գետերի նկարագրությանն անցնելը՝ հարկ ենք համարում համառոտ տեղեկություններ տալ նաև սելավների մասին:

Մենք արդեն առիթ ունեցանք նշելու վարարումների մասին, տեսանք, որ

Վարարումը հանկարծակի երևույթ է, առաջանում է տեղատարափ անձրևերից, հանկարծակի ծնհալքից, ամբարտակի պատովելուց և այլն: Ահա, վարդման մի տեսակը սելավն է, երբ ջրի հորձանուտում շատ են կոչտ քարաբերութերը, տիղմը, ավազը: Սրանք ջրի հետ միասին առաջացնում են սելավային զանգված: Սելավային զանգվածը մեծ արագույթյամբ հոսում է հովտով ցած, հանդիպած բոլոր արգելքները խորտակում և դուրս է զայիս արտաքերման կոն՝ որևէ լայն հովտի մեջ ու այնտեղ կուտակում թերվածքները՝ սելավային-պրոյուվիալ նստվածքները:

Գիտությունը պարզել է, որ եթե ջրի արագույթյունը մեծանում է երկու անգամ, ապա նրա միջոցով տեղափոխվող քարաբեկորի մեծությունը ավելանում է ավելի քան 60 անգամ: Ահա թե ինչու են սելավները կամ թեկուց ոչ մեծ վարարումները աղետների պատճառ դառնում: Հաճախ կարելի է ոչ մեծ գետակի հունում տեսնել քարաբեկորներ, որոնք ունեն 50-100 տ զանգված. ո՞ւ մատրով կարող է անցնել, որ այդ փոքրիկ առվակը երբեմ կարողացել է զլորել այլպիսի վիրխարի քարաբեկոր: Իրականում այն գետակի թերվածքն է, եթե տեղի է ունեցել ահարկու սելավ:

Տարեց մարդկանց հիշողության մեջ դեռևս քարմ է Գետառի սելավը Երևանում 1946 թ. մայիսին. այն քանին քազմարիվ տներ, որոնք հունին մոտ էին, լցրեց Աերքնահարկերը, իր հետ տարավ քազմարիվ կյանքեր:

Ծննդունիները Կումայրիում դեռևս հիշում են 1909 թ. Գյումրի գետակի սելավը, երբ քազմարիվ տներ քանդվեցին (պատմում են, թե ինչպես երեխան օրորոցի մեջ սրընթաց խառնվեց հորձանուտին): Ինչ հսկայական վնասներ են պատճառել Ողջիի, Օրդուբաղի, Փամբակի և այլ քազմարիվ սելավները:

Հայկական լեռնաշխարհի տարածքի կեսից ավելին սելավաբեր է: Կան ավազաններ, որտեղ 3-5 տարին մեկ սելավ է լինում, կան ավազաններ էլ, որտեղ սելավները հաճախ չեն, բայց ուժգին հորձանուտներ են եղել և հսկայական վնաս հասցել:

Վարարումների ու սելավների միջոցով միջին հաշվով տարեկան լեռներից դուրս է զայիս 10 մլն տ սելավային կոշտ նյութ, որը կուտակվում է արտաքերման կոններում: Այս կուտակումն էլ աղետ է: Հաճախ այգիները, ցանքերը ծածկվում են անպոտող քարով ու ցեխով, և մեծ ջանքեր են պետք դրանք մաքրելու համար:

Գիտությունը մշակել է սելավների դեմ պայքարի միջոցներ. դրանք առաջին հերթին ուղղված են սելավները կանխելու, սելավային ավազանում գետնահողերի ծծունակության մեցածման խնդրին, որպեսզի տեղումները հնարավորին շափ շատ ներծծվեն և հոսք չառաջացնեն: Այդ նպատակով լեռնալանջերը արհեստականորեն անտառապատում են, ստեղծում են բուժքերային բուսածածկ շերտեր, կառուցում են սելավառսիչ ավազաններ (ինչպես Ա-

ոինչի սելավարսիչը Երևանում), միջանցիկ ամբարտակներ և այլն:

Պետք է ասել, որ Գետաղի սելավի վտանգը քաղաքի հյուսիսում արդեն հիմնականում վերացված է, սակայն Զրվեժ և Ողջաբերդ գետակների ավազաններում այդ վտանգը առկա է, անհրաժեշտ են լրաց միջոցառումներ Երևան քաղաքի հարավային և արևելյան մասերում սելավները զավելու համար:

Սուրու համառոտակի նկարագրենք Հայկական լեռնաշխարհի խոշոր գետերը:

**Տորոխ:** Աև ծովի ավազանի ամենախոշոր գետը Հայկական լեռնաշխարհում Շորոխն է: Հնում կոչվել է Վոհ (Ոհ), Ակամսիս, Փասիս, ըստ Հ. Մանանյանի՝ Ապսարոս: Գետի երկարությունն է 360 կմ, ջրհավաք ավազանի մեծությունը 19,8 հազ. քառ. կմ: Ակիզր է առնում Շորոխի լեռնաշղթայի Չորմայրի գագարից, սկզբում հոսում է դեպի արևմուտք, ապա շեղվում հյուսիս, անցնում Բարերդի (Բայրուրդ) միջով և, եթե ընդունում է Լորի (Բլուր) վտակը, ուղղությունը փոխում է դեպի արևելք ու հյուսիս-արևելք: Աև ծով է բափկում Բարումի մոտ: Մինչև ծովափ հասնելը կտրում է Պոնտական լեռնաշղթան՝ առաջացնելով խոր անտեղնեղնետ կիրճ:

Շորոխի խոչըր վտակներն են՝ Թորբում, Օլքի, Բերտա, Աջարա: Ինչպես Շորոխը, այնպես էլ վտակները խոր կիրճեր են ստեղծել, որոնք մեծ մասամբ անտառապատ են: Վտակները հարուստ են սահանքներով, որոնք երկրակեղեկի տեկտոնական շարժումների արգասիք են: Ամենախոշոր ջրվեժը Թորբում գետի վրա է՝ համանուն անվանք՝ 40 մ բարձրությամբ:

Ջրվեժի մոտ արևի ճառագայթները ծիածան են կապում և կախարդական տպավորություն ստեղծում: Ֆրանսիացի հայտնի աշխարհագետ Էլիզե Ռեկլյուն մեծ հիացմունքով է նկարագրում այս ջրվեժը՝ գտնելով, որ այն ամենասիրունն է աշխարհում: Ջրվեժից ցած կիրճի խորությունը հասնում է 300 մ: Այստեղ՝ ոչ հեռու, երկու աղահանք կա:

Շորոխը Հայկական լեռնաշխարհի ամենաջրառատ գետերից մեկն է: Հորդանում է գարնանը՝ ձնիալիք ժամանակ: Նրա տարեկան հոսքի վերաբերյալ տվյալները բավական հակասական են: Մենք ամենից հսկանական ենք համարում հետևյալը՝ տարեկան միջին ծախսը՝ 190 մ<sup>3</sup>/վրկ, հոսքի մոդուլը՝ 10-11 լ/վրկ կմ<sup>2</sup>, տարեկան հոսքը՝ մոտ 6 խոր կմ:

Գետի ջուրը քաղցրահամ է, միջին միներալացումը՝ վերին հոսանքներում 100-200 մգ/լ, ստորին հոսանքում՝ 200-300 մգ/լ, տարեկան տանում է 1,5 մլն տ լուծված նյութեր: Գետը գարնանը շատ տղմուն է, գետավազանի յուրաքանչյուր 1 քառ. կմ-ից լվացվում են ավելի քան 500 տ կախված նյութեր, տարեկան հոսքը կազմում է 10 մլն տ, իսկ գործվող նյութերինը՝ 1,5 մլն տ: Այսպիսով, Շորոխը տարեկան շորջ 13 մլն տ նյութեր է տանում Աև ծով:

Շորոխի ավազանում մերկանում են բազմաթիվ ներժայրուկներ, որոնք

հարուստ են հատկապես գունավոր մետաղների հանքերով: Դեռևս պնտիկ աշխարհում այս ավազանը հայտնի է եղել: Բազմաթափառ ու սկիզբ, արծաթը, գորշ ածխի պաշարները պոտենցիալ մեծ հնարավորություն են ստեղծում լեռնահանքային արդյունաբերության զարգացման համար: Գետն ունի ջրահներգետիկ խոշոր պաշարներ, և նախագծվում է կառուցել խոշոր ջրհանգույց՝ հզոր էլեկտրակայանով:

Լինչի և Օսվալդի «Հայաստան և հարևան երկրներ» քարտեզի վրա (Ա. Աբեղյանի խմբագրությամբ) կարելի է ճորոխի ավազանում կարդալ տասնյակներով հայկական զյուղերի անվանումներ: Մինչև 20-րդ դարը հայերն այստեղ ունեցել են զարգացած մշակույթ, գրադպել են արհեստներով, առևտություն: Այժմ այստեղ կան հայեր, որոնք բռնի կերպով դավանափոխ են եղել, դարձել են մահմեդական, քայլ իրենց դեռևս հայ են համարում:

Ճորոխը դեռ հնուց օգտագործվել է լաստառաքան նպատակներով: Տեղաբնիկները մեծ հմտությամբ ու վարպետությամբ անտառանութը կարողանում էին գետով տեղափոխել գետաբերան: Արդվիճից ցած գետը նավարկելի է ոչ խորանիստ նավերի համար: Առաջներում տեղաբնիկները նավակները կառուցում էին փշովի տիկերի վրա, հոսանքն ի վար մինչև ծով ապրանքներ էին տեղափոխում հինգ ժամում, իսկ հոսանքով վեր ուժով անցնում էին երեք-չորս օրում: Տեղաբնիկների կառուցած նավերը կոչվում էին կափկ:



Նկ. 39. Թորրումի ջրվեժը

Սև ծովի ավազանի մյուս գետը Գայլգետն (Կելկիք) է՝ Իրիս (Եշիլ-Իրմակ) գետի վտակը: Այն սկսվում է Գյումրուշանն լեռնաշղբայից, հոսում է արև մուտք և Լերկասար գագարի միջօրեալկանի տակ դուրս է գալիս լեռնաշխարհի սահմաններից: Ավազանի մեծությունը մոտ 9000 քառ. կմ է: Հովհանքը խորհ է, տեղ-տեղ լայնանում է, որտեղ տեղադրված են բնակավայրեր:

Գետի սննումը ծնա-անձրևային է, հորդանում է գարնանը: Տարեկան միջին ծախսը կազմում է 95 մ<sup>3</sup>/վրկ, տարեկան հոսքը՝ 3 կմ<sup>3</sup>: Գետի ջուրը քաղցրահամ է, լեռնաշխարհից դուրս գալու տեղում շուրջ 200 մգ/լ, տարեկան դեպքի Սև ծով է տանում մոտ 2,7 մն տ լուծված-կախված, գյորվող նյութեր:

Սև ծովի ավազանում, Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերից սկիզբ են առնում բազմաթիվ ոչ մեծ գետեր, որոնց ակունքները գտնվում են 3000-3500 մ բարձրության վրա և 30-50 կմ հոսելով՝ թափվում են Սև ծով: Մրանցից են Մուշու (Աղսու), Ծանախուղուր (Խորշատ), Յամրոլու, Խալիգեն, Բազար, Սուպսա և այլ գետեր: Մրանց մեջ ամենախուղորը Ծանախուղուրն է, որն սկսվում է Բարերդի լեռնանցքից: Բոլոր գետերը ջրառատ են և կատարում են ուժգին էրոզիա: Մրանը հորդանում են գարնանը, իսկ այս գետերը, որ սկիզբ են առնում մինչև 1000 մ բարձրություններից, հորդանում են ձմռանը:

**Կասսպից ծովի** ավազանը Հայկական լեռնաշխարհում ընդգրկում է մոտ 130 հազ. քառ. կմ տարածություն, որտեղ ծևափորփում են Կուր և Արաքս գետերն իրենց վտակներով: Անտիկ աշխարհում և վաղ միջնադարում այս երկու գետերը իմբռություն են թափել Կասսպից ծով: Արաքսը ստորին հոսանքում անընդհատ տիղմ է կուտակել և աստիճանաբար շեղվել է դեպքի Կուր գետը՝ միախառնվելով նրան:

**Կուր:** Գետի երկարությունը ակունքից գետաբերան 1364 կմ է, ջրհավաք ավազանը (Արաքսի հետ միասին)՝ 188 հազ. քառ. կմ, առանց Արաքսի՝ 86 հազ. քառ. կմ: Գետի աջակողմյան ավազանը Հայկական լեռնաշխարհում կազմում է շուրջ 33 հազ. քառ. կմ, իսկ ձախակողմյան ավազանը Մեծ Կովկասի հարավային լանջերին ու Կուր-Արաքսյան դաշտավայրում՝ 50 հազ. քառ. կմ:

Գետն սկիզբ է առնում Կող (Գյոլե) բարձր լեռնային գոգավորության՝ 2750 մ բարձրությունից: Վերին հոսանքի ավազանն ընդգրկում է գոգավորության ճահիճներն ու ջրաջաղաքի լավային ամֆիթատրոնը: Այստեղից դուրս է գալիս ու մտնում Արդահանի գոգավորությունը (Արդահանի գետ անվանք): Գոգավորության արևելյան մասում միսրճփում է լավային սարավանդի մեջ, առաջացնում է խոր խնձահովվիտ, ընդունում է Զավախսիք սարավանդից եկող Փարվանա վտակը, որը նոյնական խնձահովվով է հոսում: Կորի անկումը մեծ է, գետը արագահու է, կատարում է խորքային էրոզիա: Խնձահովվի ձախ լանջին է գտնվում **Վարձիս** կամ **Վարձումիք** հնավայրը՝ ժայռափոր

քաղաք Սուրբ Աստվածածին եկեղեցիով և երբեմնի ավելի քան 2000 սենյակներով::

Խնձահովտից դուրս գալով Կուրը մտնում է Ախալցխայի գոզավորությունը, որտեղ ընդունում է Փոցխով (Փոսխով) վտակը և շուտով նորից է մտնում կիրճի մեջ: Սա Բորժոմի գեղատեսիլ կիրճն է, որն անտառապատ է, լավագույն պայմաններ ունի հանգստյան հանգրվանների կառուցման համար, մասա-



Նկ. 40. Կուրի հովիտը վերիմ հոսանքներում

վանդ որ այստեղ են Բորժոմի հանքային հոչակավոր աղբյուրները: Բորժոմի կիրճից դուրս գալիս՝ գետի միջին ծախսը կազմում է 80-90 մ<sup>3</sup>/վրկ, անցնում է Քարթալինյան, Բորչալուի, Ջարախա (Կարայազի) դաշտերով, մտնում է Կուր-Արաքսյան դաշտավայր: Միանալով Արաքսին աղբն որպես դաշտավայրային գետ, բազմաթիվ գալարներ ու կղզիներ առաջացնելով, բափկում է Կասպից ծով՝ ստեղծելով արագ աճող դելտա, որը տարեկան աճում է 50-60 մ:

Կուրը Փոքր Կովկասից ընդունում է քազմաքիվ վտակներ՝ Խրամ (Դեբեղի հետ միասին), Աղսու, Զեզամ, Շամլոր, Թարթառ, Խաչեն կամ Խաչենազետ և այլն: Սրանք բոլորն ունեն մեծ անկում, կատարում են խորքային երողիա, առաջացրել են խոր հովիտներ, որոնց մեծ մասը ծածկված է անտառներով:

Կուրի սնումը խառն է, հիմնականում՝ ձնա-անձրևային և հորդանում է գարնան՝ ձնիալիք սեղոնում: Տարեկան միջին ծախսը Թթվիլսիում ավելի քան 200 մ<sup>3</sup>/վրկ, Մինգեչառում՝ 400 մ<sup>3</sup>/վրկ, Արաքսին խառնվելուց հետո՝ 700

մ<sup>3</sup>/վրկ: Հոսքի մոդուլը վերին հոսանքներում՝ 10 լ/վրկ կմ<sup>2</sup>, ստորին հոսանքում՝ 3 լ/վրկ կմ<sup>2</sup>: Պատճառն այն է, որ Կուր-Արաքսյան դաշտավայրում ավազանը խիստ մեծանում է, մինչեղ վտակներ գրեթե չի ընդունում: Տարեկան հոսքը կազմում է 18-20 խոր. կմ:

Կուրի տարեկան հոսքի 60-70 %-ը գարնանն է, ամռանը ստորին հոսանքում խիստ սակավաջրություն է, ջրի մեծ մասն էլ օգտագործվում է ոռոգման նպատակներով:

Գետի հոսքի կարգավորման նպատակով կառուցվել են Մինգեշաորի ջրամբարը և էլեկտրակայանը: Այստեղ ամբարվում է 16 խոր. կմ ջուր, և մի մասը քաց է բողնում ամռանը, եթե դաշտավայրում ջրի տու է: Ջրամբարից ցած գետի հոսքը կարգավորված է և այն դարձել է նավարկելի:


Գետի ջուրը վտակների վերին հոսանքներում քաղցրահամ է, աղիությունը՝ 100-200 մգ/լ, միջին հոսանքներում՝ 200-300 մգ/լ, ստորին հոսանքում՝ ավելի քան 400 մգ/լ:

Գետի տղմտությունը մեծ է. վերին հոսանքներում՝ խեթրվիսի մոտ՝ 100-120 գ/մ<sup>3</sup>, թրիխիսի մոտ՝ 1330 գ/մ<sup>3</sup>, Մինգեշաորում՝ 2000 գ/մ<sup>3</sup>, Սայանի մոտ՝ 1900 գ/մ<sup>3</sup>: Մինգեշաորի ջրամբարի կառուցումից հետո տիղմի զգալի մասը մնում է ջրամբարում, քացի այդ՝ մի զգալի մասն էլ նատում է գետի ստորին հոսանքի ավազանում: Մինգեշաորի մոտ գետը տարեկան տանում է 24 մլն տ բերուկներ և մոտ 10 %-ի չափով էլ գլորվող նյութեր: Կոշտ հոսքը (լուծված, կախված և գլորվող) կազմում է 30-35 մլն տ: Բերած նյութերի մոտ կեսը նատում է Կուր-Արաքսյան դաշտավայրում: Եթե այս նատվածքագոյացումը չլիներ, ապա տեկտոնական իջեցում ապրող դաշտավայրը կծածկվեր Կասպից ծովի ջրերով:

**Արաքս (Երասխ)- Հայոց մայր գետ:** Համարվել է դրախտի չորս գետերից մեկը: Տարբեր ժողովուրդներ տարբեր անուններ են տախս՝ Արազ, Արախես, Ռազ, Ռախսի և այլն: Սովոր Խորենացին Երասխի անունը կապում է Արամայիսի բռնան՝ Երաստի հետ: Արաքս հունարեն նշանակում է աղմկել:


Գետն սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային զանգվածից, միախառնքվում է Կուրիին: Երկարությունը 1072 կմ է, ջրհավաք ավազանի մեծությունը՝ 102 հազ. քառ. կմ: Գետն սկզբում հոսում է դեպի հյուսիս-արևելք, ճեղքում է Այծպտկունք և Սուկավետ լեռնաշրբաների միացման հատվածը, դուրս գալիս Բասենի դաշտ և ընդունում է Մուրց վտակը: Դաշտում գետը զալարներ է առաջացնում, ապա մտնում է Երասխաձոր կիրճը և այստեղից դուրս է գալիս Կաղզվանի ոչ լայն դաշտը: Այստեղ հովտի խորությունը Կարսի հրաբխային սարավանդի նկատմամբ կազմում է 1000 մ: Առաջ անցնելով՝ Արաքսն ընդունում է Ախուրյան վտակը և մտնում Արարատյան դաշտ:

Արարատյան դաշտում Արաքսն առաջացնում է քազմարիվ գալարներ, բազուկներ ու կղզիներ, հաճախ փոխում է հունը, իսկ բերուկները պատճառ



Նկ. 41. Արարս գետը Սևորու կիրճում

Են դառնում, որ գետը դաշտում որոնի նոր ուղի: Ընդհանուր հակումն այն է, որ նա ձգտում է դեպի հարավ, քանդում է աշ ափը: Վաղ անցյալում 2000-2500 տարի առաջ Արարսն անցնում էր Արմավիրի ու Խոր Վիրապի բլուրների տակով, և Արգիշտիխմնիլի, Արմավիր ու Արտաշատ քաղաքների բնակիչները



Նկ. 42. Հրազդանի խնձահովտը Արգմու մոտ



Նկ. 43. Սյունածի բազալտներ Հրազդանի կիրճում (Երևան)

օգտվում էին գետի ջրից: Հետագայում Արաքսը հեռացավ դեպի հարավ, բնակչութերը լքեցին քաղաքները:

Արաքսը, անկայուն հուն-ունենալու հանգամանքով, հույն պատմագիր Վիրդիլիոսի կողմից գնահատվել է որպես «կամուրջներ չհանդորժող գետ»: Նշանավոր են Բասենի, Երվանդավերտի, Արտաշատի, Նախիջևանի, Զուդայի հայաշեն կամուրջները: Վերջինս հիմնահատակ ավերվեց 1605-ին Շահ-Աբասի հրամանով:

Արարատյան դաշտի սահմաններում Արաքսն ընդունում է Ախուրյան, Քասաղ, Հրազդան, Ազատ, Վեդի վտակները: Դաշտի ելքի մոտ Գայի Դրունք կիրճն անցնելուց հետո գետը մտնում է Նախիջևանի դաշտը, առաջացնում է բազմաթիվ գալարներ, աջից ընդունում է Դեղին, Կոտուր, Մարանդ վտակները, ձախից՝ Արփա, Նախիջևան, Երնջակ, Գիլան վտակները:

Պատմական Տղմուտը երբեմն նույնացնում են Դեղին գետի Մակու վտակի հետ, որի ափին 451 թվականին տեղի է ունեցել հայտնի Ավարայրի ճակատամարտը: Հայոց գործերը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ կենաց և մահու ճակատամարտ տվեցին պարսիկ զավթիչների դեմ:

Նախիջևանի դաշտից նեղ կիրճ անցնելով՝ Արաքսը մտնում է Զովֆայի

ոչ մեծ դաշտը և ապա՝ Մելրու ներ կիրճը, որտեղ գետը կտրում է Զանգեզու-  
րի լեռնաշղթամ՝ առաջացնելով անտեցելենտ հովիտ: Կիրճի դուրս է գալիս  
Մինչևանի մոտ, մտնում է Միջի դաշտավայրը և ընդունում Ողջի, Որոտան  
(Բարգուշատ), Հազարի (հնում՝ Աղավնո) վտակները՝ ձախից և Կարասու  
(Սևջուր) վտակը՝ աջից: Սարիրաբաղի մոտ Արաքսը միախառնվում է Կու-  
րին:

Արաքսը սնվում է ձնա-անձրևային և ստորերկրյա ջրերից: Նրա աջակող-  
մյան վտակները խիստ սակավաջուր են, շատերն ամռանը չորանում են: Զա-  
խակողմյան վտակները Հայատանի Հանրապետության սահմաններում ու-  
նեն 6-7 լ/վրկ կմ<sup>2</sup> մոդուլ, մինչդեռ աջակողմյան վտակները՝ դրա կեսից էլ պա-  
կաս: Այդ է պատճառը, որ Կյուրեկրալա բնակավայրի մոտ գետի հոսքի միջին  
մոդուլը 3 լ/վրկ կմ<sup>2</sup> էլ չի հասնում:

Գետի տարեկան միջին ծախսը 280 մ<sup>3</sup>/վրկ է, առավելագույնը՝ 1600 մ<sup>3</sup>/վրկ,  
տարեկան հոսքը՝ մոտ 9 կմ<sup>3</sup>: Ամռանը սակավաջուր է, ստորին հոսանքում ո-  
ռոգման ջրի պակաս է զգացվում:

Գետի ջուրը քաղցրահամ է. վերին հոսանքներում՝ 100 մգ/լ (աղիուրյուն),  
Արարատյան դաշտում՝ 400 մգ/լ, ստորին հոսանքում՝ 500 մգ/լ: Արաքսը լուծ-  
ված վիճակում տարեկան դուրս է բերում 4,5 մլն տ քիմիական տարրեր:

Արաքսը Հայկական լեռնաշխարհի ամենասողութ գետն է: Տարեկան մի-  
ջին տղմոսուրյունը 2100 գ/մ<sup>3</sup> է, զարնանային հորդացման ժամանակ տղմո-  
սուրյունը մի քանի կիլոգրամ է 1 խոր մ-ում: Արաքսը տարեկան դուրս է բերում  
19 մլն տ կախված նյութեր: Գետի հատակով անցնում են նաև գլորվող նյու-  
թեր՝ կախված նյութերի 10 %-ի շափով՝ 1,5-2 մլն տ: Այսպիսով Արաքսն իր ա-  
վազանից տարեկան դուրս է բերում շուրջ 25 մլն տ լուծված, կախված ու գլոր-  
վող նյութեր:

Գումարելով Կուրի և Արաքսի բերուկները՝ կստանանք մոտ 60 մլն տ: Գե-  
տարերուկների ծավալային կշիռը շուրջ 1,5 գ/մ<sup>3</sup> է: Նշանակում է՝ նատվածք-  
ների ծավալը կկազմի 40 մլն մ<sup>3</sup>, որը նաև է Կուր-Արաքսյան դաշտավայ-  
րում և մի մասով էլ հասնում է Կասպից ծով:

Արաքսը և վտակները ունեն ջրաէներգետիկ պաշարներ: Առաջմն Արաք-  
սի վտակների ջրային ռեսուրսները ամենից ինտենսիվ օգտագործվում են Հա-  
յաստանի Հանրապետության տարածքում: Ախուրյանի վրա կառուցվել է հա-  
մանուն ջրամբարը 525 մլն մ<sup>3</sup> ծավալով, որի ջրերն օգտագործվում են Թուր-  
քիայի հետ համատեղ: Լայնորեն օգտագործվում են Քասաղի, Հրազդանի, Ա-  
զատի, Որոտանի ջրերը: Նախիջևանի մոտ Արաքսի վրա կառուցվել է Արաք-  
սի հիդրոհանգույցը: Որոտանի վրա համանուն կասկադն է երեք աստիճանով:  
Կառուցվել են նաև ավելի փոքր ծավալի մի շարք ջրամբարներ:

Հնդկական օվկիանոսի ավազանին Հայկական լեռնաշխարհում պատկա-

նում են Եփրատ և Տիգրիս գետերը 135 հազ. քառ. կմ ընդհանուր ավազանով: Եփրատը Առաջավոր Ասիայի ամենաերկար գետն է՝ 2700 կմ, 673 հազ. քառ. կմ ավազանով: Հայկական լեռնաշխարհի սահմաններում նրա ավազանը կազմում է 95 հազ. քառ. կմ, որից 40 հազարը Արածանի ջրհավաքն է:

Եփրատը Հին Կտակարանում կոչվել է Մեծ գետ և համարվել է դրախտի շորս գետերից մեկը: Հայկական աղբյուրներում այն անվանվել է Եփրատական գետ, Եղեմարպուխ գետ, արաբական աղբյուրներում Ֆրատ կամ Շատ-էլ-ֆուրատ, իին պարսկական աղբյուրներում Իֆրատու և այլն:

Գետը որպես Եփրատ կազմվում է Արևմտյան Եփրատ (Կարասու)՝ 450 կմ երկարությամբ և Արածանի (Մուրատ)՝ 670 կմ երկարությամբ ճյուղերի միացումից:

Արևմտյան Եփրատն սկիզբ է առնում Շաղկավետ լեռներից՝ Ուկյանց (3914 մ) գագարից: Այստեղ բխում է մի աղբյուր (Չերմաստիճանը 3°), որը պաշտամունքի աղբյուր է համարվել: (Ըստ ավանդության՝ VII դարի բյուզանդական Հերակլ կայսրը Քրիստոսի խաչը փուանգի պահին թաղել է, և երբ խաչը նորից հանել են, տեղը աղբյուր է վիրել: Սուրբ համարվող աղբյուրի ջրի մեջ մարդիկ լողանում են և «ազատվում» մնութերից:)

Եփրատն այնուհետև իջնում է Կարճն դաշտ, որտեղ հարք ունիեթի պայմաններում առաջացնում է ճահիճներ (Շամբ Կարճն): Այստեղ գետի ջրին են խառնվում նաև հանքային աղբյուրների ջրերը:

Կարճն դաշտից գետը մտնում է Շողանի կամ Շուղինի ձորը, որում է գալիս Աշկալեի ու Դերջանի (Մամախսարունի) դաշտերը և անցնում է Դերջանի ու Երզնկայի գոգավորություններով: Ապա մտնում է Կամախի սարահարք՝ ստեղծելով խոր կիրճ և դուրս գալիս Խարբերդի դաշտ, որի արևմտյան մասում միանում է Արածանի ճյուղին: Կամախում է գտնվում ճախսկին Անի թերոր: Վերջինս հայտնի է նրանով, որ այստեղ էին թաղվում Արշակունի քաջավորները, և բերդում էին պահպում արքունական գանձերը: Երզնկան (Երևագը) համբավավոր է իրեն Անահիտ դիցուհու սրբավայր: Այստեղ էր տեղավորված գլխավոր մելիյանը:

Բարձր Հայքի այս հատվածը, որը Եփրատի ավազանի վերնագավառն է, Հայկական լեռնաշխարհի ամենաերկրաշարժային շրջանն է. կան բազմաթիվ տեկոտնական խզվածքներ, որոնցից դուրս են զալիս հանքային աղբյուրներ:

Միջին դարերի հայտնի ճանապարհորդ Մարկոս Պոլոն այցելել է Երզնկա: Նա գրում է, որ այստեղ գոյուրյուն ունեն բազմաթիվ տաք աղբյուրներ, ստեղծվել են ջերմուկային բաղնիքներ: Այնուհետև տեկոտնական շարժումների հետևանքով աղբյուրների ելքերը փոփոխվել են, և Երզնկայում բաղնիքները դադարել են գործելուց:

Եփրատը խոր կիրճից դուրս է գալիս Կապան Մաղենի (Քերանի) մոտ,

միանում Արածանի վտակին, ապա Մալաթիայի դաշտում քազմաքիվ վտակներ ընդունելով՝ ուժ է հավաքում պատուի Տավրոսի լեռնաշղթան: Գետն այստեղ սղոցել է Կիմիրխանի (Կյումուրխանի)՝ մինչև 1500 մ խորության անտեղենան կիրճը, որտեղ 300 ջրվեժ ու քարվազ է առաջացնում: Հորձանուտի ահարկու դրդյունը լսվում է շատ հեռվից:


Եփրատն ընդունում է քազմաքիվ վտակներ՝ Մանանաղի (Թուգլու), Աղյունաձոր (Մաղեն), Տէրիկ (Յելտ), Կավկազա (Թոխմա): Գետն ունի ցայտուն արտահայտված աստիճանաձև կողապատկեր: Գոգավորությունների հատակի հարք լճա-գետային նստվածքներում նաև հանդարտ է հոսում, իսկ խոր կիրճերում քազմաքիվ սահանքներ է առաջացնում:

Եփրատը խառը սննան գետն է, հորդանում է գարնանը. այս սեզոնում անցնում է գետի տարեկան հոսքի շուրջ 60 %-ը: Պետք է ասել, որ գետի վերին հոսանքներում Կամախից վեր՝ Բարձր Հայքում, հովտի լանջերի մեջ թեքության պատճառով, հոսքի գործակիցը համեմատաբար մեծ է՝ 0,6: Հոսքի մոդուլը կազմում է 8-10 լ/վրկ կմ<sup>2</sup>: Մինչև Կապան-մաղենի ջրամբար հասնելը՝ տարեկան միջին ծախսը կազմում է 350-400 մ<sup>3</sup>/վրկ, տարեկան հոսքը՝ 10-12 մլրդ մ<sup>3</sup>, Արածանիի հետ միասին Եփրատի միջին ծախսը կազմում է 750-800 մ<sup>3</sup>/վրկ: Գարնան ինտենսիվ ձնիալի ժամանակ ծախսը կարող է հասնել մոտ 7000 մ<sup>3</sup>/վրկ: Տարեկան հոսքը 26 կմ<sup>3</sup> է:

Գետի ջրերը վերին հոսանքներում միանգամայն քաղցրահամ են՝ մինչև 100 մգ/լ աղիությամբ. Արածանիի հետ խառնուրդում՝ 250-300 մգ/լ: Գետի գումարային կոչու հոսքը տարեկան կազմում է մոտ 20 մլն տ: Եփրատը Կամախի կիրճում ունի ջրաէներգետիկ պաշարներ և կարող է օգտագործել էլեկտրակայանների կառուցման համար: Արածանիի հետ միացման հատվածում կառուցվել է Կապան-մաղենի ջրամբարը և էլեկտրակայանը:

Դեռ շատ հին ժամանակներից Եփրատն օգտագործվել է նավարկության համար: Հայերը հասուն տիպի նավեր են հորինել՝ սահանքներով անվնաս անցնելու համար: Հ. Վահան Վ. Ինգլիջյանը (1947) գրում է. «Հայերի նավերը զարմանալի են՝ ուղենու ճյուղերը կվատեն և անեն կշինեն նավի գործածելու հատակն ու ասոր վրա կձգեն մաշկ մը իբրև ծածկույթ տախտակամածի պես, բայց ցորուկ ու խելք չեն շիներ, ամեն բան վահանի պես կլոր է: Ապա ամբողջ նավը կլցնեն հարդով և ասոր մեջ կզետեղեն իրենց ապրանքը և գետն ի վար կընթանա: Ամենամեծ նավերը կրառնան իինգ հազար տաղանդ քեն: Ամեն նավի վրա կա կենդանի էշ մը, մնենաւուն վրա՝ մեկից ավելի: Երբ Բարելոն կհասնին, նավը կվաճառեն, իսկ մաշկը կրառնան իշու վրա և կվերադառնան Հայաստան»:

**Արածանի:** Երկարությունը 650 կմ, ավազանի մեծությունը՝ 40 հազ. քառ. կմ: Գետը այլ անուններ էլ ունի՝ Արևելյան Եփրատ, Արգանաս, Արգանի,



Նկ. 44. Արածանի գետը Տարոմում

Արձնի գետ, Արմանի, Արսանաս, Ափանազ, Շամշատի գետ: Թուրքերն այժմ անվանում են Մուրատ:

Գետն սկիզբ է առնում Ծաղկանց լեռների հյուսիսային լանջերից՝ 3060 մ բարձրությունից: Դիաղինի մոտով անցնելիս՝ նրա մեջ են թափվում Վարչակի ջերմուկների տաք ծծմբային աղբյուրների ջրերը: Աղբյուրներից անջատված տրավերտինի շերտերն առաջացրել են երկու բնական կամուրջ, որոնց տակով անցնում է Արածանին: Սկզբում հոսում է հյուսիս-արևմուտք, նրան ընդառաջ է գալիս Բագրեանդ (Շարիխան) վտակը: Ալաշկերտի մոտ նրանք միախառնվում են և հոսում հարավ-արևմուտք:

Արածանին սուրբ գետ է համարվել. նրա վերին հոսանքներում հեթանոսության շրջանում Նավասարդի տոնակատարություններ էին կատարում: Այստեղ ԻՎ դարի սկզբին Նապատ լեռան ստորոտում Գրիգոր Լուսավորիչը մկրտեց Տրդատ թագավորին, նրա ընտանիքին, զորքին:

Ալաշկերտի դաշտից մինչև Խարբերդի դաշտը՝ Եփրատին խառնվելը, գետն անցնում է մի քանի դաշտերով և նրանց միջև գտնվող խոր կիրճերով: Այդ դաշտերից են Այնքապի (Դուրաղի), Մանազկերտի, Տարոմի, Հարրի: Դաշտերում անկումը փոքր է, գետը գալարներ է առաջացնում, կուտակում է բերուկները, սակայն դաշտերի միջև խոր կիրճերում ջրերը սրբնաց նետվում են առաջ և կատարում խորքային էրոզիա: Արածանիի վտակներից են՝ Կորոճոր, Մանազկերտի, Խնուս, Բյուրակն (Քինգյոլ), Վարդո, Մեղրագետ, Շա-

պաղցուր, Մնձուր: Չհասած Տարոն՝ Արածանին հոսում է նեղ Խամուրի կիրճով: Մշշ դաշտում նրա վրա կառուցված է 12 կամարանի կամուրջ: Տարոնի դաշտից ցած Արածանին մտնում է խոր կիրճի մեջ և առաջացնում Գրգուռ (Գուգուռ) ջրվեժը:

Այստեղ, որտեղ Արածանին միանում է Արևմտյան Եփրատին, այժմ ծփում են Կապան-մաղենի (Ըեբանի) ջրամբարի ջրերը: Ջրամբարի երկարությունը ավելի քան 100 կմ է՝ հասնում է մինչև Բալահովիտ: Այս մասին կխոսվի ջրամբարների քածնում:

Արածանին խառը սնում ունի, իիմնականը ձնանձրևայինն է, սակայն հրաբխային ծածկոցների տակից բխող առատաջոր աղբյուրները ուժինի կարգավորման դեր են կատարում և ձմռանն էլ պահպանում են գետի հոսքը: Ստորերկրյա ջրերի բաժինը հոսքում 100 մ<sup>3</sup>/վրկ-ից պակաս չէ:

Արածանին հորդանում է զարնանը, ամռան երկրորդ կեսին սակավաջոր է, ձմռանը՝ նոյնական: Տարեկան միջին ծախսը չուրց 400-450 մ<sup>3</sup>/վրկ է, հոսքի մոռուլը՝ մոտ 10 լ/վրկ կմ<sup>2</sup>, տարեկան հոսքը՝ մոտ 13-15 խոր. կմ: Գարնանային հորդացումների ժամանակ ծախսը կարող է հասնել 3000 մ<sup>3</sup>/վրկ, հաճախ գետը դուրս է զալիս ափերից, ողողում է հարթությունները և նյութական վնաս պատճառում:

Գետի և վտակների ջրերը վերին հոսանքներում ունեն մինչև 100 մգ աղիություն (մեկ լիտրում), միջին հոսանքներում՝ 200-250 մգ/լ, իսկ Կապան Մաղենի (Ըեբանի) ջրամբար մտնելիս՝ 350-400 մգ/լ:

Գետը շատ տիղմ է տանում, հատկապես գարնանը: Կախված, լուծված ու գլորվող նյութերի քանակը տարեկան կազմում է 10-12 մն տ: Արածանին ջրերը հազարամյակներ շարունակ օգտագործվել են ոռոգման ու ջրամատակարարման նպատակներով, սակայն հզոր ոռոգիչ համակարգեր չեն եղել, ոռոգումը կատարվել է գետափնյա մասերում բավական պարզունակ ձևով: Խարթերդի, Բալահովիտ, Տարոնի դաշտերը շատ հնուց եղել են թերը ու բարիքի օջախներ, ոռոգումն այս դաշտերում ունեցել է վճռական նշանակություն:

**Տիգրիս (Դկղաք):** Հնում այն կոչվել է Դկղաք, որը նշանակում է նետ: Երկարությունը 1900 կմ է, ջրհավաք ավազանը՝ 375 հազ. քառ. կմ: Հիմնական ավազանն իրաքի տարածքում է, Հայկական լեռնաշխարհի սահմաններում՝ ոչ ավելի 40 հազ. քառ. կմ: Գետը Տավրոսի լեռներից է սկիզբ առնում երկու՝ Արևմտյան և Արևելյան Տիգրիս ճյուղերով: Արևմտյան Տիգրիսը՝ Արդանա անվանք սկիզբ է առնում Ծովք լճից, ապա միանալով Զիբենեհի մտնում է քնական քունել և դուրս զալիս Հայոց (Վերին) Միջազգետը: Գ. Մբվանանը մեծ ոգևորությամբ է նկարագրում Տիգրիսի ակունքները՝ որպես ոսկեղեն մի երկիր: Տիգրիսը սրբավայր է, դրախտի շորս գետերից մեկը:

Տիգրիսն սկսվում է Տավրոսի համակարգում 2000-3500 մ բարձրություն-

ներից, վտակները հոսում են խորը կիրճերով, առաջացնում են անտեղեկնատ հովտներ և դրս զայս դաշտավայր՝ ստեղծելով արտաքերման կոներ, որտեղ կուտակվում են մեծ քանակի գետաբերուկներ ու սելավային (պրոյուվիայ) նստվածքներ:

Արևմտյան Տիգրիսի կարևոր վտակներն են՝ Ամբար, Քաղիրդ (Բարձան), Սասունի գետ վտակով, Արզան, Բաղեշ (Բիթլիս): Արևելյան Տիգրիսը սկիզբ է առնում Հայկական Տավրոս և Կորդվաց լեռների կազմած անկյունից և գրեթե միշտ հոսում դեպի արևմտուք՝ մինչև Սղերդ քաղաքից հարավ-արևմտուք, որտեղ միանում է Արևմտյան Տիգրիսին: Արևելյան Տիգրիսը (Բոհտանի գետ) Գևանդիոնն անվանում է Կենտրոնական: Վտակներն են Սոլսի, Խոզանի, Բաղեշի, Խարզան գետերը: Իսկ Արևմտյանին միանալոց հետո՝ Տիգրիսի վտակներն են Խարուր, Մեծ Զաք, Բարազգիր և այլն: Տիգրիսը և վտակները ջրառատ են, սնվում են Տավրոսի միջին և բարձր լեռների գոտու առատ տեղումներից: Տիգրիսն ավելի ջրառատ է, քան Եփրատը: Այսպես, Բաղդադի մոտ նրա տարեկան միջին ծախսը 1240 մ<sup>3</sup>/վրկ է, կարող է հեղեղեղ մշակվող հողատարածությունները, քանի որ վարարման դեպքում ծախսն անցնում է 13 հազ. մ<sup>3</sup>/վրկ-ից, և մեկ անգամ չէ, որ աղեղներ է թերել: Այժմ կառուցվել է հասուկ ջրանցք, որով Տիգրիսի ջրերը տանում են դեպի Եփրատ և փրկում շրջապատի տարածքը ողողումից:

Հայկական լեռնաշխարհի սահմաններում Տիգրիսի հոսքը 40 հազ. քառ. կմ ավազանից կազմում է 15-16 խոր. կմ, միջին ծախսը 530 մ<sup>3</sup>/վրկ է: Հոսքի մոդուլը 12-13 լ/վրկ կմ<sup>2</sup> է: Առավելագույն ծախսը կարող է հասնել 5000 մ<sup>3</sup>/վրկ, նվազագույնը՝ 69 մ<sup>3</sup>/վրկ, տարբերությունը՝ ավելի քան 82 անգամ: Այսպիսի տարբերությունը պայմանավորված է նրանով, որ ամռան երկրորդ կեսին Տավրոսի ամբողջ համակարգն ընկնում է արևելադաշտային չոր օդային զանգվածների ազդեցության տակ, տեղումներ չեն լինում, իսկ Տավրոսի համակարգում առատ աղբյուրներ չկան, եղած ջրերն ել օգտագործվում են բնակիչների կողմից:

Գետի և վտակների ջրերը վճիռ են, վերին հոսանքներում միներալացումը չի անցնում 100 մգ/լ-ից, իսկ հջենելով դաշտավայր՝ 300-350 մգ/լ-ից:

Գարնանը, հորդացումների ժամանակ գետը տղմոտ է: Գետավազանի 1 քառ. կմ-ից տարեկան լվացքում է 250-400 տ տիղմ: Տարեկան կոշտ հոսքը կազմում է 14-15 մէտ տ, որի մի մասը նատում է Միջագետքի դաշտավայրում, մյուս մասը հասնում է Պարսից ծոց:

Տիգրիսը Եփրատին միանում է և կազմում Շատ-Էլ-Արար գետը, քափկում է Պարսից ծոց՝ առաջացնելով արագ աճող դելտա: Եփրատը և Տիգրիսը միասին Հայկական լեռնաշխարհից տարեկան թերում են ոչ պակաս 30 մլն տ քերուկներ, որոնք մասամբ կուտակվում են Միջագետքի դաշտավայրում, մա-

սամբ հասնում են Պարսից ծոց: Սիջագետքի դաշտավայրը ծովային ավազան է եղել և ցամաքել է այս երկու գետերի թերությունների կուտակումից: Այժմ Պարսից ծոցը ծանծաղում է, և դետան մղվում է առաջ:

Եփրատն ու Տիգրիսը նավարկելի են ստորին հոսանքներում: Հորդացման ժամանակ ոչ խորանիստ նավերը կարող են հասնել մինչև Մոսուլ:

Ավարտելով գետերին վերաբերող բաժինը՝ նշենք, որ ինչպես Հին աշխարհում, այնպես էլ միջին դարերում գետերը եղել են լորջ խոշընդուներ՝ որանց երկու ափերի միջև հաղորդակցություն իրագործելու տեսակետից: Թեկուցի տեխնիկայի ցածր մակարդակի պայմաններում, այնուամենայնիվ, հայ կամքջագործները կարողացել են ամրակուր կամուրջներ կառուցել, որոնք դարեր շարունակ հաղորդակցության կարևոր օրյեկտներ են եղել: Շատ կամուրջներ հատուկ անուններ են ունեցել:

Բազմաթիվ կամուրջներ ավերվել են զավթիշների հարձակումների կամ նահանջի ժամանակ. սրանք համարվել են առաջնակարգ ստրատեգիական օբյեկտներ: Ավերված և կանգուն կամուրջները բազմաթիվ գետերի վրա հայի կամքջաշինական արվեստի վառ և լոր վկաներն են:


## 5. ԼՃԵՐ

Հայկական լեռնաշխարհը հարուստ է լճերով, որոնք տարբեր ծագում ունեն: Եթեր խոշոր լճերի (Սևանի, Վանա և Կապուտանի) գոգավորությունները ունեն տեկտոնական ծագում, կան լավային արգելավակման լճեր. ընդ որում, Սևանը և Վանա լինը նաև լավային արգելավակման արգասիք են: Կան սաղցադաշտային ծագման լճեր՝ տեղադրված նախկին սաղցադաշտային կրկեսներում կամ մորենների միջև: Արգելավակման լճեր են ստեղծվել փլուզումներից և սողանքներից: Հարբություններում գետերից անջատված մնացորդային (ողողատային) լճեր կան և այլն:

Հայկական լեռնաշխարհում կա նաև լճերի մի տեսակ, որ Մերձավոր Արևելքում ոչ մի տեղ այլևս չկա՝ խառնարանային տիպը: Մեր լեռնաշխարհում կան հրաբխային գագաթներ, որոնց խառնարանը լցված է ջրով և շորջ տարի այդ լճերը պահպանվում են (Աժդահակ, Արմաղան, Նեմրուր և այլն):

Սկզբունք քննարկենք տեկտոնական լճերը:

**Սևանա լիճ:** Սևանը բնուրյան հրաշալիք է: Աշխարհում կան բազմաթիվ լճեր, որոնք և՛ Սևանից մեծ են, և՛ նրանից քաքար են տեղադրված, բայց այնպիսի ժողովրդականություն չեն վայելում, ինչպես Սևանը: Բանն այն է, որ մերձարևադարձային լայնությունների տակ կան բազմաթիվ լճեր՝ Վան, Կապուտան (Ուրմիա), Մեռյալ ծով, Մեծ Աղի լիճ (ԱՄՆ), Լոբ-Նոր, Կուկու-Նոր



Նկ. 45. Սևանա լիճը և Սևանա քերակղզի

(Կենտրոնական Ասիա) և այն, սակայն սրանք բոլորը աղի են, մինչդեռ Սևան՝ քաղցրահամ: Լեռների գրկում ծվարած այս լիճն ամբարում էր 58 միլիարդ խորանարդ մետր ջուր, այն դեպքում, եթե 1000 մ լճից ցած՝ Արարատյան դաշտում, արևի կիզիչ ճառագայթների տակ ամռանը ամեն ինչ խանձվում է:

Ժողովրդի մեջ տարածված կարծիք կա, թե Սևանն աշխարհի ամենաքարձ լիճն է: Սա ճիշտ չէ, բայց ճշմարտության հատիկ պարունակում է: Ինչպես հասկանալ: Սևանից և մեծ, և քարձ լճեր կան: Օրինակ՝ Տիտիկակա և Պոոպո լճերն Հարավային Ամերիկայում, բայց սրանք աղի են: Իսկ քաղցրահամ լճերից էլ կան Տիբեթի սարահարթում, որոնք ունեն մինչև 6000 մ քարձություն, բայց փոքր են: Ուրեմն, քաղցրահամ մեծ լճերից ամենաքարձը Սևանն է, նրանից մեծ և քարձ քաղցրահամ լիճ չկա:

Սևանը պատմական շրջանում տարբեր անուններ է կրել՝ Գեղարքունի, Գեղաման ծով, Գյոկչա, Դարյա-Ծիրին, Լիկնիտիս և այլն:

Սևանա լիճը գրադացնում էր 1416 քառ. կմ մակերես, տեղադրված էր 1916 մ բարձրության վրա (մինչև մակարդակի արհեստական իջեցումը): Սևանի ավազանը գրադացնում է 4890 քառ. կմ տարածք, ընդ որում, ջրհավաք ավազանը լճի հայելուց մեծ է 3,4 անգամ: Նման լճերը շատ քիչ են, սովորաբար ավազանը լճից մեծ է լինում տասնյակ անգամ և ավելի. դա կարևոր նշանակություն ունի լճի սննման և ջրային հաշվեկշռի ձևավորման համար: Սևանա լճից սկիզբ է առնում մեկ գետ՝ Հրազդանը, իսկ լիճն են թափվում 28 գետ ու գետակներ:

Սևանի գոգավորությունը տեկտոնական ծագում ունի, շրջապատված է հյուսիս-արևելքում Արեգունի, Սևանի և Արևելյան Սևանի լեռներով, որոնք ծալքաբեկորավոր կառուցվածք ունեն, գագաթները հասնում են մինչև 3000 մ բարձրության: Լանջերը քրքրված են էրոզիոն ձորերով: Ավազանի արևմտաքում և հարավում բարձրանում են՝ Գեղամա և Վարդենիսի հրաբխային լեռները մինչև 3500 մ գագաթներով: Լճափին կան ոչ մեծ հարթություններ՝ Մասրիկի դաշտը, Արգիծի հովիտը և այլն:

Սևանա լիճը ձգված է հյուսիս-արևմտաքից դեպի հարավ-արևելք 75 կմ երկարությամբ, կազմված է երկու ավազաններից՝ Մեծ Սևան և Փոքր Սևան: Մրանց միջև գոյություն ունի ստորջրյա Շորժայի բումբը. լճի երկու կողմերից Արտանիշի և Նորատուսի հրվանդանները անջատում են ավազանները միմյանցից: Մեծ Սևանը ծագումով ավելի հին է, ծածկված է մինչև 1000 մ հզորության ծովային և լճային նատվածքներով, ափերը մշակված են և ծանծաղ, միջին խորությունը 38 մ է, առավելագույնը՝ 58 մ:

Փոքր Սևանը երիտասարդ է, լճային նատվածքները սակավազոր են, փաստորեն ներկայացնում է խորը գրաբեն (տեկտոնական իջվածք): Առավելացույն խորությունն այստեղ հասնում է 99 մ-ի (մինչև մակարդակի իջեցումը): Լիճը փաստորեն առաջացել է Փոքր Սևանի արևմտյան մասում վերին շորտորդական լավաների արտավիժումից: Մինչև արտավիժումը Հրազդան գետը Մեծ Սևանի հարք հատակին գալարներ առաջացնելով, մտնում էր Շորժայի բմբի մեջ ստեղծված հովիտը, դուրս գալիս Փոքր Սևանի գոգավորություն և այնտեղից հոսում հարավ: Սակայն լավային արտավիժումների հետևանքով գետի հունը Լճաշն գյուղից արևմտյա փակվել է, և սկսվել է Սևանի լճացումը, սկզբում Փոքր Սևանում, ապա՝ Մեծ Սևանում: Լճի ծավալը մինչև մակարդակի իջեցումը 58 միլիարդ խորանարդ մետր էր: Սակայն պետք է ասել, որ մեր քվարկությունից շատ առաջ, սկսած III հազարամյակից մինչև մ. թ. 6-րդ դարը լճի մակարդակը եղել է 1930-ական թվականների մակարդակից ավելի քան 15 մ ցածր:

Երբ մակարդակը 1930-ական թվականներից արհեստական կերպով ի-

ջավ, Լճաշենի մոտ բացվեցին դամբարաններ, որոնց պեղումները տվեցին շատ արժեքավոր հնագիտական նյութեր: Մեր թվարկությունից առաջ գոյություն ուներ Սևանա թերակղզին, իսկ մ. թ. 5-րդ դարում արդեն նշվում է Սևանա կղզու մասին. որպեսզի այն կողի դառնար անհրաժեշտ էր, որ մակարդակը բարձրանա առնվազն 12-14 մ: Նշանակում է՝ դամբարանների ստեղծումից հետո լճի մակարդակը բարձրացել է, և դրանք մնացել են ջրի տակ ավելի քան 2500 տարի՝ մինչև 1950-ական թվականները:

Սևանա լճի գոգավորությունը բնության հրաշալիքներից մեկն է նաև իր մաքուր օղով, վճիռ ջրով, գովությամբ, պատմական ու բնական հազվագյուտ հուշարձաններով, հանքային ջրերով: Ունկունացիոն ռեսուրսներով լճի ավագանը աշխարհի լավագույն անկյուններից մեկն է:

Կլիման բարեխառն է՝ զով ամառներով ու չափավոր ցուրտ ձմեռներով: Արևափայլի տևողությունը մինչև 2700-2800 ժամ/տարի, հուլիսյան միջին ջերմաստիճանը 16-19<sup>o</sup>, առավելագույնը 35<sup>o</sup>, լճի ջրի ջերմաստիճանը 18-19<sup>o</sup>, առավելագույնը՝ ծանծաղ ծոցերում 22-24<sup>o</sup>: Սևանում կարելի է լողանալ 4 ամիս, իսկ որոշ տարիներ՝ 5 ամիս: Հունվարյան միջին ջերմաստիճանը -7-8<sup>o</sup>, նվազագույնը՝ -32<sup>o</sup>: Զնոպնը ջուր է գալիս ու կուտակվում: Մինչև մակարդակի իջեցումը լիճը հազվադեպ էր ձմեռը սաղցակալում. ամռանը կուտակվում էր ջերմություն, որն աստիճանաբար ծախսվում էր ձմռանը: Մակարդակի իջեցումից հետո ջերմային պաշարները արագ սպառվում են, և այժմ գրեթե ամեն տարի Սևանը սաղցակալում է: Այս հանգամանքը բացասար է անդրադարձ լիճը գազային ռեժիմի վրա, որն իր հերթին ազդում է օրգանական աշխարհի վրա: Բանն այն է, որ թթվածինը ջրում լավ է լուծվում ցածր ջերմաստիճանների տակ և Սևանում այն անցնում էր խորը շերտերին: Այժմ, երբ ձմռանը լիճը ծածկված է սաղոցի շերտով, գազափոխանակում կատարվել չի կարող, և լճի խորը շերտերում թթվածնի սով է. թթվածնի սովը ուժեղանում է նաև այն պատճառով, որ լճում սկսել են բուռն կերպով զարգանալ կապտականաց ջրիմուտներ, որոնք մեռնելուց հետո նատում են հատակին և սրանց քայլայման վրա ծախսվում է թթվածին:

Սևանի ջրային հաշվեկշիռը հետևյալ պատկերն ունի: Մինչև 1930-ականները լիճն ապրում էր բնական վիճակում՝ մրնողրտային տեղումներով, գետերի ու ստորերկրյա ջրերի միջոցով տարեկան ստանում էր 1320 մլն մ<sup>3</sup>, և յուրաքանչյուր 13 լիտր ջրից գոյորշացման վրա ծախսում էր 12 լիտր: Դա նշանակում է՝ լիճը մարդուն ջուր տալ չէր կարող: Տարեկան ընդամենը 50 մլն մ<sup>3</sup> (վայրկյանում 1,5 մ<sup>3</sup>) դուրս էր գալիս Հրազդանով: 1930-ական թվականներից սկսեցին Սևանի դարավոր պաշարները օգտագործել, որովհետև Հանրապետությունը չուներ վառելիքային ռեսուրսներ, արդյունաբերության և ամբողջ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ էր էլեկտրական է-

ներգիա, իսկ Արարատյան դաշտի ոռոգման համար՝ ջուր, և միակ հովոյը Սևանն էր: Որոշվեց օգտագործել Սևանի ջուրը: Կառուցվեց Սևան-Հրազդան էլեկտրակայանների կասկաղը 6 աստիճանով, որովհետ ջրանցքների համակարգ, որի շնորհիվ Արարատյան դաշտում ոռոգվեց մոտ 100 հազ. հեկտար: Այս միջոցառումների պատճառով Սևանի մակարդակը իջավ 19 մետրով:

Ով այցելում էր Սևան, սրտի կավիճով էր դիտում ջրից ազատված մասերի կրածածկ ափը: Պետք էր ելք գտնել, հայ ժողովուրդը չէր ցանկանում զրկվել Մեծ Սևանից: Ելքը գտնվեց՝ որոշվեց Արփա գետի հոսքի մի մասը տեղափոխել Սևան: 16 տարվա լարված ջանքերի շնորհիվ ստեղծվեց Արփա-Սևան 49 կմ երկարությամբ ստորերկրյա ջրատարը, որով Արփայից դեպի Սևան ամեն տարի տեղափոխվում է 200-250 մլն մ<sup>3</sup> քաղցրահամ ջուր: Այժմ կառուցվում է նաև Որոտան-Սևան ջրատարը, որը Որոտանից դեպի լիճ կիասցնի տարեկան 160-200 մլն մ<sup>3</sup>. դրանով Սևանի ջրային հաշվեկշիռը կդառնա դրական:

Հարդ է նշել, որ լճի մակարդակի իջեցումը բերեց բազմաթիվ բացասական երևոյթներ. Մեծ Սևանում սկսեցին աճել ջրիմուռներ, Սևանն ամեն տարի սառցակալում է, իշխան ձկնատեսակի վերաբտադրության պայմանները խփառ վատացան, և այժմ այդ արժեքավոր ծովկը կանգնած է ոչնչացման եզրին: Մակարդակի իջեցման պատճառով գետերի ստորին հոսանքներում խորքային երողիքան ուժեղացավ, գրեթե բոլոր կամուրջները քանդվեցին և այլն: Այժմ անհրաժեշտ է լճի մակարդակը բարձրացնել, որպեսզի բնական հավասարակշռությունը մասամբ վերականգնվի: Առաջմ մակարդակը բարձրացվելու է 6 մ: Ցանկալի է ավելի բարձրացնել:

Սևանը հոսուն լիճ է, ուստի այնպես աղի չէ, ինչպես Վանա կամ Կապուտան (Ուրմիա) լճերը: Աղիությունը 726 մգ/լ է (0,7 գրամ մեկ լիտրում): Զուրը կարելի է օգտագործել ոռոգման համար (խառնելով ավելի քաղցրահամ ջրի հետ): Արփա և Որոտան գետերից դեպի Սևան անցնող քաղցրահամ ջրերը կնպաստեն լճի ջրի աղիության պակասեցմանը, և շուտով երևի հնարավոր կլինի Սևանի ջրերը օգտագործել ջրամատակարարման նպատակով:

Սևանի ավագանի բնությունը շատ նպաստավոր պայմաններ ունի հանգստի ու տուրիզմի զարգացման համար: Ավամերձ մասերը ծածկված են սևահողային տափաստաններով, որտեղ մշակում են հացահատիկ, կարտոֆիլ, ցանովի խոտեր: Վերջերս զբաղվում են նաև այգեգործությամբ ու ծխախոտի մշակմամբ:

Սկսած 2400 մետրից՝ լեռնալանջերը ծածկված են մերձալպյան, ապա ավելի բարձր՝ ալպյան մարգագետիններով, որոնք ամռանը վերածվում են արոտավայրերի ու խոտհարքների: Սևանի ափերին լճից ազատված մասերում ամենուրեք անտառատնկման աշխատանքներ են կատարված 15 հազ.

հեկտարի վրա, և այժմ այդ անտառները մեծ հմայք են տալիս լճին: Լճափին կառուցված են տուրիստական հանգրվաններ, հանգստյան տներ, ճամբարներ:

Սևանա լճում ապրում է էնդեմիկ իշխան ձուկը իր չորս տեսակներով՝ գեղարքունի, ամառային բախտակ, ձմեռային բախտակ և բոջակ: Դեռևս շատ հին ժամանակներից այս ձուկը հոչչակված էր իր լավորակ հատկանիշներով: Լճի մակարդակի իջեցումից ձկան վերարտադրության պայմանները խիստ վատացել են. այն այժմ կանգնել է ոչնչացման եզրին և գրանցվել է Կարմիր գրքում: 1920-ական թվականներին Լաղովա և Չուղ լճերից Սևան թերվեց սիգը: Վերջինս այստեղ գտավ շատ նպաստավոր պայմաններ ու արագ բազմացավ և այժմ ունի արդյունագործական նշանակություն:

Սևանի բնությունը կարիք ունի պաշտպանության: Այդ նպատակով Հայատանի կառավարության որոշմամբ ստեղծվել է «Սևան» ազգային պարկը:

Սևանի ավագանում առկա են հանքային հարստություններ՝ շինանյութեր, ոսկի, հանքային ջրեր, քրոմիտներ, սմղիկ: Վերջին ժամանակներու լճի արևելյան ափերով Սևան քաղաքից մինչև Սորք (նախկինում՝ Չող) կառուցվել է երկարությի: Շուտով այդ գիծը կօղակի ամբողջ Սևանը: Սևանի ջրերի անադարտությունը պահպանելու նպատակով առաջարկ կա կառուցել լիճը շրջապատող կողեկտոր, որը բոլոր կեղտաջրերը Սևանի ավագանից դուրս է բերելու դեպի Քաղսի մաքրող կայանը. ջուրը այնտեղ մաքրելուց հետո բաց է բողնվելու Հրազդան գետի մեջ: Կամ էլ պետք է կառուցվեն կեղտաջրերի մաքրման տեղական կայաններ:

Սևանա լիճը ունի ռեկրեացիոն ռեսուրսներ, ափերին կան բացառիկ պատմական հուշարձաններ, ավագանում կան հետաքրքիր հրաբխային կառույցներ, Աժդահակի և Արմաղանի խառնարաններում՝ խառնարանային լճեր, որպիսիք մեծ ճանաչում ունեն: Սևանը կարող է դառնալ միջազգային նշանակության տուրիստական օբյեկտ, մանավանդ եթե դեպի Աժդահակ կառուցվի ճոպանությի: Նման ճոպանությունը կառուցվում ներկայումս շատ մեծ պրոբլեմ չէ: Հուսանք, որ 21-րդ դարում այդ ունիկալ լեռնազագարը մատչելի կդառնա տուրիստներին:

**Վանա լիճ:** Հնում կոչվել է Տոսպ, Ոշտունյաց ծով, Աղի լիճ, Վասպուրականի ծով, Տառեխի լիճ, Բզնունյաց ծով, Աղբամար, Նախի երկրի ծով: Մակերեսը 3760 քառ. կմ է, սննման ավագանը՝ մոտ 17,8 հազ. քառ. կմ: Լճի սննման ավագանը հայելուց մեծ է 4,8 անգամ: Լիճը տծև ափազիծ ունի, մանավանդ հարավային ափում շատ են հրվանդաններն ու խորշերը: Երկարությունը 125 կմ է, առավել լայնությունը՝ 51 կմ: Վերջին տվյալներով լիճ առավելագույն խորությունը 451 մ է: Լիճը գտնվում է ծովի մակարդակից 1720 մ-ի վրա: Ամենախոշոր ծոցը Արծեշին է:



Նկ. 46. Վանա լիճը, Աղբամար կղզին, Սուրբ Խաչ եկեղեցին, հեռվում՝ Արտոսը

Հարավային ափերը զարդարած են, չմշակված, ժայռերը ուղղակի մխրճվում են լճի մեջ, արևելյան և հյուսիսային ափերին կարելի է գտնել մերձափնյա հարթություններ: Լճում կան կղզիներ՝ Լիմ, Առտեր, Կոտոց, Աղբամար: Հրվանդակներից են՝ Դևերոյնի, Ծղուկ, Արտամետ:

Գոգավորությունը նկարագրելիս ասվեց նրա տեկտոնական ծագման մասին, քայլ լճացումը տեղի է ունեցել լավային արգելափակման միջոցով: Կ. Ն. Պաֆենիոնցը (1950) շատ մեծ նմանություն է գտնում Վանի և Սևանի լճացման հարցում: Նեմրութի լավաները իջել են հարավ և արևմուտք, փակել են ջրի ելքը, և այն աստիճանաբար լճացել է: Ըստ Հ. Լինչի՝ պատվարը լճից բարձր է 80 մ: Պ. Ռոբրախը (1902), ուսումնասիրելով այս տեղանքը, լին հարավային ափին Բաղեշի (Բիթլիսի) լեռնաշղթայի ջրբաժանում հայտնաբերեց մի լեռնանցք, որը լճից բարձր է ընդամենը 15-20 մ, և այստեղից սկսվում է Տիգրիսի վտակներից մեկը, որի ակունքը լճից հեռու է ընդամենը 1-1,5 կմ, իսկ Ս. Ն. Մատվեևը (1946) գրում է, որ այժմ Գանդիկոս վտակի ակունքը 0,5 կմ-ի վրա է: Ենթադրվում է, որ այս լեռնանցքը լին հարավ և արևմուտք նահանջում է դեպի լիճը, պետք է սպասել, որ որոշ ժամանակ անց այդ գետակի ակունքը կհասնի լճին, և տեղի կունենա լճավազանի խլման պրոցես:

Հայտնի է, որ մի շարք հետազոտողներ, սկսած Լինչից, լճավազանի տարբեր մասերում հայտնաբերել են լճափի հետքերը տարբեր բարձրությունների վրա՝ լճային դարավանդներ մինչև 45 մ լճից բարձր: Հարց է ծագում՝ ինչպես կարող էին նման դարավանդներ առաջանալ, եթե հարավի ջրբաժանում լճից 15-20 մ բարձր լեռնանցք կա, որով ջրերը կիշտնեին Տիգրիս: Մնում է մի հետևություն՝ դարավանդների առաջացումից հետո սրանք տեկտոնական բարձրացում են ունեցել, կամ էլ Հայկական Տավրոսի լեռնահա-  
206

մակարդում որոշ հատվածներ իջել են, որոնց թվում նաև հիշյալ լեռնանցքը:

Լճի մակարդակի տատանումների վերաբերյալ բավական շատ տվյալներ կան: Նոյնիսկ պատճական շրջանում այն բարձրացել է: Օրինակ՝ Արծեղի մոտ հնագույն բերդի մնացորդները այժմ կիսով չափ ջրի տակ են, նոյնիսկ ուրարտական արձանագրության մի մասը ջրով ծածկված է (ինչպես Սևանի ափին Ծովինար գյուղի մոտի արձանագրությունը՝ մինչև լճի մակարդակի արհեստական իջեցումը):

Ավանդություններ կան այն մասին, որ լճի արևմտյան ծանծաղ մասում մի ժամանակ ցամաքը է եղել, գոյություն են ունեցել բնակավայրեր, մարդիկ զբաղվել են այգեգործությամբ. հետագայում ջրերը բարձրացել են ու ծածկել լիաննը: Նոյնը նկատում ենք Սևանի ափին՝ Լաշենի շրջանում: 1841 թ. Վանա լճի ջրի մակարդակը բարձրացել է ու ողողել Արծեղի բերդը: 1887 թվականին Վանա լճի մակարդակը նորից բարձրացել է, և ափի ուռենիները մնացել են ջրի մեջ:

Ինչպես ցույց է տալիս Լինչը, 16-րդ (ԺԶ) դարում Վանա լճի ափին գոյություն են ունեցել բերդաբաղաքներ՝ Դատվան, Ոստան, Վան, Բերկրի, Արծեղ, Խլաք: Վանա լիճը խառը սննան լիճ է, զիսավորապես՝ ծնա-անձրևային է: Այստեղ գետերը հորդանում են գարնանը, և լճի մակարդակը այդ սեզոնում բարձրանում է: Սննան մյուս բաղադրիչը՝ ստորերկրյա ջրերն են, սակայն սրանք առատ են միայն հյուսիսային մասում, որտեղ հրաբխային ծածկություններն են: Հարավային և հարավ-արևելյան ավազանը ծալքաբեկորավոր է, աղբյուրները համեմատաբար քիչ են:

Վանա լիճը անհու է, նրա ջրի ծախսը կատարվում է հիմնականում գոլորշացման միջոցով. հնարավոր է նաև ծծանցում, սակայն Նենրութի շուրջը գոյություն ունեցող աղբյուրներից ոչ մեկի ջուրը աղի է (հակառակ որ՝ լճի ջուրը աղի է), հետևաբար ծծանցումը շնչին պետք է լինի:

Լճի մեջ արևելքից ու հյուսիս-արևելքից բափկում են գետեր՝ Բերկրի (Բանդիմահի), Արծեղ, Մարմետ, Խորզոն (Խոշար) և այլն: Հյուսիսում հրաբխային ծածկույթներում մակերևությային հոսքը քոյլ է, միայն մասը առվակներ կան: Հարավից էլ գետեր գորեք չկան, քանի որ լեռնաշղթայի ջրբաժանը շատ մոտ է լինի: Լճի սնումը հիմնականում արևելքից է:

Վանա լճի ջրային հաշվեկշիռը մոտավոր հաշվումներով այսպիսին է. տեղումներ լճի վրա՝ մոտ 1,5 մլրդ մ<sup>3</sup>, մոտք գետերի միջոցով՝ 2,8 մլրդ մ<sup>3</sup>, ստորերկրյա ջրերի միջոցով՝ 0,1-0,2 մլրդ մ<sup>3</sup>: Գումարային մոտքը դեպի լիճ 4,5-5 մլրդ մ<sup>3</sup> է, որը գրեթե ամբողջությամբ գոլորշանում է (տարեկան 1200-1300 մմ):

Անհոր լինելու պատճառով լճի ջուրը աղի է՝ 19-22 %, մեկ լիտր ջրում լուծված է 19-22 գ աղ: Հիմնական բաղադրամասերն են՝ կերակրի աղ ( $\text{NaCl}$ ) 9,38 գ, բորակը (սոդան  $\text{Na}_2\text{CO}_3$ ) 8,61 գ, գլաուբերյան աղը ( $\text{Na}_2\text{SO}_4 \cdot 10\text{H}_2\text{O}$ ) 3,3 գ/լ:

Բորակի գոյությունը լճում բնակիչներին հայտնի էր շատ վաղուց, որի

շնորհիվ կարելի է լվացը անել առանց օճառի, և տեղի բնակիչները լայնորեն օգտվել են բնության այդ պարզեցից: Դեռևս մեր թվարկության առաջին դարում այդ մասին գրել է Ստրաբոն:

Ափամերձ գյուղերի բնակիչները լճից առուներ էին հանում, ջուրը կուտակում էին ոչ մեծ ավազաններում, որտեղ այն գոլորշանում էր, իսկ աղը մնում էր որպես խճրանիստ աղ:

Լճում օրգանական աշխարհի համար նպաստավոր պայմաններ չկան, ուստի այստեղ ապրում է միայն տառելքը, այն էլ գետերի գետաբերանների մոտ: Այս ձուկը տեղացիները ապխտում են և օգտագործում նաև ձմռանը: Վանա լճի ավազանում շատ են հնագոյն տաճարների, կամուրջների, վիշշապների և այլ պատմական հուշարձանների մնացորդներ, սեպագիր արձանագրություններ, որոնք գալիս են ուրարտական շրջանից: Վանի բերդում բազմաթիվ արձանագրություններ ուսումնասիրվեցին Ն. Մարի և Հ. Օրբելու կողմից Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Լճափնյա դաշտերը ծածկված են շագանակագոյն հողերով, ոռոգվող տարածությունները արևելքում են: Խորգումից (Խոշարից) դեպի Վան 56 կմ երկարությամբ ջրանցք է կառուցվել մ. թ. 9-րդ դ. Տեղուայի կողմից, սակայն ժողովուրդը այն վերագրում է Շամիրամին: Վանա լճի ավազանում կարելի է ոռոգել 140 հազ. հեկտար:

Վանա լճում դեռ հնուց գյուղերուն ունի նավարկություն: Այժմ արևմտյան ափից դեպի արևելյան ափը գործում է երկարուղային լաստանավ: Հարավային ափից 3 կմ-ի վրա է Աղքամար կղզին, որտեղ ինչպես նշվել է, 10-րդ դարում կառուցվել է ճարտարապետական հայտնի կորող Սուրբ Խաչ եկեղեցին:

**Կապուտան (Ուրմիա) լիճ:** Հունական աղբյուրներում հիշատակված է Սամբիա, Սեղի, Սպավտա կամ Սպասուտա անունները նույնպես նշանակում են կապույտ: Մակերեսնա է 5,8 հազ. քառ. կմ, երկարությունը՝ 140 կմ, լայնությունը՝ 65 կմ, խորությունը՝ 15 մ, ավազանի մեծությունը՝ մոտ 50 հազ. քառ. կմ, որից Հայկական լեռնաշխարհում է ոչ ավելի քան 40 հազ. քառ. կմ: Լճի բարձրությունը ծովի մակարդակից 1275 մ է:

Ուրմիան անհոսք է, մակարդակի տատանումները տարվա ընթացքում մեծ են, և քանի որ լիճը շատ ծանծաղ է, ուստի ափագիծը շատ է ետ ու առաջ շարժվում. դրանից մակերեսը անընդհատ փոխվում է: Գարնանը լիճը ծածկում է մոտակա ճահիճներն ու աղուտները, ամռան վերջին սրանք նորից բացվում են՝ բողնելով աղի շերտ:

Լիճն ուսումնասիրել են՝ Վ. Վ. Բոգաչևը, Գ. Ռիբենը, Կ. Ն. Պաֆենիլցը և ուրիշներ: Նրանք բոլորը գտնում են, որ գոգավորությունը տեկտոնական ծագում ունի: Ենթադրություն կա, որ լիճն առաջներում հոսուն է եղել դեպի Կասպից ծով՝ Ամարդոս (Սեֆիտուդ, Կազլուկեն) գետի միջոցով: Սոհունիդի



1.Արարատ լեռը Երևանից




2.Արագած լեռը

3.Արագածի լեռնալանջը՝ հուշարձամային համալիրով  
Դեռվում Արարատը






4. Արարատ լեռը  
հարավից




5. Արագած լեռը  
հյուսիսից




6.Վանա լիճը

7.Սևանա լիճը






8. Աղային անապատ -  
Ուրմիայի ավագանում




9. Սաղամոն լիճը,  
Զավախսք



10. Սարսանզի ջրամբարը, Արցախ




11. Շաքիի ջրվեժը



12. Ջերմուկի ջրվեժը


13. Եփրատի  
հովիտը  
Վերին հոսանքում




14. Թարթառ գետը Տանաշեն գյուղի մոտ, Արցախ




15. ճորոխի հովիտը







16. Հողային բուրգ Գորիսում



17. Տեսարան Զանգեզուրից




18. Խուստովկի լեռը



19. Ողջիի կիրճը




20. Մռավի լեռները



21. Դիլիջանի ոլորանները



22. Կանաչ լիճը  
(Աստու Ըստծու ծով)  
Մոռավի լեռների  
հյուսիսային  
ստորոտին




23. Մարալ լիճը  
Գանձակի շրջանում  
Ղեղվում Ալիարակ լեռը




24. Խառնարանային լիճ Նեմրութի գագաթին


25. Վայոցսար (Դալիկ) հրաբխային կոնը Արփայի ավազանում




26. Տեսարան  
գեղամա  
սարահարթից




27. Տեսարան  
Ազատի  
խնձօհովտից




28 Տեսարան  
Քաշարաղից,  
Ծիծեռնավաճք



29. Քասաղի  
Խնձահովիտը



30. Տեսարան Տարոնից




31. Զերանոսական հնավայր  
Երզնկայի շրջանում



32. Կոռիկոս բերդը, Ծովային Կիլիկիա

33. Ջայկական դղյակ (XII դ.)  
Պիրամոս գետի ափին,  
Դաշտային Կիլիկիա



34. Տեսարան  
Լեռնային  
Կիլիկիայից



արտավիճմամբ կապը կտրվել է: Կարծիք կա, որ Կապուտանը (Ուրմիան) խոյի դաշտով կապ է ունեցել Արաքսի հետ: Լճափից դեպի Խոյ քաղաքը զնացող խճուղին անցնում է Կարարավիա լեռնանցքով, որը լճից բարձր է 270 մ և որտեղ կան դարավանդների հետքեր: Սա հիմք է տալիս կարծելու, որ լճից գետ է դրու եկել և այդ լեռնանցքով անցել ու թափվել է Արաքսի մեջ: Հետագայում լճի զոգավորությունն իջել է, կապը կտրվել: Մեկ այլ փաստ էլ Թավրիզի մոտ Կարմիրջուր (Աչի) գետի վրա կան բարձր դարավանդներ, որոնք դեպի լիճը աստիճանաբար ցածրանում են, մտնում լճագետային նստվածքների տակ այնպես, ինչպես այդ տեղի է ունենում Արարատյան կամ Նախիջևանի դաշտերում, որտեղ նոյնապես շրջապատի լեռները բարձրանում են, իսկ գոգավորության հատակն իջնում է. ուրեմն, տեկտոնական շարժումների դերը շատ մեծ է:

Ուրմիան սննդում է անմիջապես լճի մակերևոյթին բավկող տեղումներով, գետերի միջոցով և մասամբ ստորերկրյա ջրերով: Ջրային հաշվեկշիռը ամենամոտավոր հաշվումներով հետևյալ պատկերն ունի՝ մթնոլորտային տեղումներ լճի վրա՝ 1,3 մլրդ մ<sup>3</sup>, հոսք գետերի միջոցով՝ 5-6 մլրդ մ<sup>3</sup>, ստորերկրյա ջրեր՝ 0,2 մլրդ մ<sup>3</sup>: Այսպիսով գումարային մուտքը դեպի լիճ կազմում է 7-8 մլրդ մ<sup>3</sup>, որն աճբողջովին գոլորշանում է՝ տարեկան 1400-1500 մմ:

Լճի ջուրը խիստ աղի է. գարնանը՝ 150 %, ամռան վերջին՝ 250 % (այսինքն՝ 250 գ/լ): Հիմնականում քրորիդներ են, որ ափամերձ մասերում ամռան հանդիպում են ինքնանհատ աղի կամ աղուտների ձևով: Ծանծաղ մասերում աղ նստում է նաև ծմունք, երբ շերմաստիճանն իջնում է և ջրի լուծունակությունը բոլվանում է: Ամռան շերմաստիճանի բարձրացման հետ մեկտեղ աղի մի մասը նորից լուծվում է, և աղիությունը մեծանում է:

Ուրմիա լճում կենդանական աշխարհը գրեթե բացակայում է աղիության պատճառով. կան միայն որոշ ջրիմուներ:

Լողալ չիմացող մարդը այս լճում կարող է լողալ. ուղղահայաց դիրքով մարդը չի սուսպում՝ զլուխը միշտ ջրից դուրս է մնում:

Լիճն այնքան ծանծաղ է, որ գարնանը շատ արագ տաքանում է, և սկսվում է գոլորշացման պրոցեսը: Լճի հարավային ափի մոտ կան բազմաթիվ ժայռոտ կղզիներ. դրանցից խոշորներն են՝ Եշակ, Թելա, Զիերի, Շահի: 1881 թ. լճի մակարդակն այնքան էր իջել, որ Շահի կղզին միացել էր ցամաքին, դարձել թերակղզի:

Լճի մեջ թափվող գետերը առատաջուր չեն, սրանց հոսքի մոդուլը 3-7 լ/վրկ կմ<sup>2</sup> է, շատերը ամռանը մինչև լիճ չեն հասնում: Խոշոր գետերն են՝ Սալմաստի գետը, Կարմիրջուր (Աչի), Զալարու, Կատեր, Մարի (Բարանդրուց), Նազլու և այլն: Համեմատաբար մեծ գետերը լճափին դելտաներ են առաջացնում, որովհետև բավական շատ տիղմ են թերում: Հաստկապես Զագրոջի համակարգից իջնող գետերը, ունենա-

լով մեծ անկում, կատարում են ուժգին էրոզիա և բերում են տիղը: Կապուտան լճի շրջապատում կիման շատ չորային է, և անհրապույք: Քանու դեպքում ողյ հագեցած է աղի փոշով: Լիճը թև տնտեսական նշանակություն ունի, եթե չխաշվենք ափի բուժիչ ցեխը և լճի հատակից բխող անուշահամ ջերմուկները:

Անփոփելով Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերի նկարագիրը՝ նշենք, որ նրանցում տեղի ունեցող երկույթների մեջ որոշակի կապ կա: Երեք լճերի ափերին էլ տարբեր բարձրությունների վրա հայտնաբերվել են դարավանդներ՝ նախկին մակարդակի լուր վկաներ: Անժխտելի փաստերով ապացուցվում է, որ մ. թ. ա. առաջին հազարամյակում լճերի մակարդակը առնվազն 15-20 մ ցածր է եղել և հազարամյակի վերջերից սկսած և մ. թ. սկզբի դարերում մակարդակը բարձրացել է: Այս փաստը Վանում և Սևանում այնքան ակներել է, որ մի շարք պատմական հուշարձաններ մնացել են ջրի տակ թե՛ Սևանում և թե՛ Վանա լճում: Կապուտանի (Ուրմիա) մասին մենք համապատասխան տվյալներ առայժմ չունենք. պետք է ենթադրել, որ այնտեղ էլ է մակարդակի բարձրացում եղել:

Այն հանգամանքը, որ նույն լճի ավազանում նույն հասակի դարավանդը այժմ տարբեր բարձրությունների վրա է, ցույց է տալիս, որ դրանք ենթարկվել են դիմերենցված տեկտոնական բարձրացումների ու իջեցումների:

Երեք լճերում էլ նկատվում են մակարդակի ոչ մեծ տատանումներ՝ կապված կիմայական փոփոխությունների հետ: Բնական է, իրարից ոչ հեռու լճերի ավազաններում կիմայի փոփոխությունները համընթաց պետք է լինեն: Լճերից յուրաքանչյուրն ունեցել է իր ինքնուրույն կյանքը. անհու Վանում և Կապուտանում (Ուրմիա) ջրերն աղիացել են, իսկ Սևանը հոսուն լինելով շատ դանդաղ է աղիացել և նրա ջրերի աղիությունը 5 անգամ է գերազանցում գետերի ջրի աղիությունը: Վանում և մանավանդ Ուրմիայում աղիացումը արագ է ընթացել: Մեզ այժմ հայտնի է, թե գետերը տարեկան որքան աղ են տանում դեպի լճերը, հայտնի է նաև լճերի ջրի աղիությունը, սակայն հայտնի չէ Վանի և Ուրմիայի ջրի ծավալն ու աղերի պաշարը: Եթե ունենայինք ծավալ, հնարավոր կիմներ հաշվել լճերի հասակը:

Այժմ անդրադանաք լեռնաշխարհի մասն լճերին:

Հայկական լեռնաշխարհում մեծ տարածում ունեն լավային արգելափակման լճերը: Ոչ վաղ անցյալում դրանք ավելի շատ են եղել: Արդեն նշել ենք, որ Արարատյան դաշտի տեղում, Շիրակում, Վերին Ալուրյանի, Սիսիանի և այլ գոգավորություններում նախկինում լճեր են եղել: Ներկայումս արգելափակման լճեր կան Հյուսիսային հրաբխային բարձրավանդակում Զավախքում (Ախալքալաքում). դրանցից են՝ Ծովակ Հյուսիսոն (Չլլըր), Արփին, Նովյե-Տրոհցելյեն (Մաղարափա), Խողապինը, Խանչալին, Թենը (Սաղամո), Փարվանան (Թափիարավան), Տարածուրիխն:

Սրանցից ամենամեծը և ամենախորը Ծովակ Հյուսիսոն (Չլլըր) է՝ 85 քառ. կմ,

ծովի մակարդակից 1959 մ-ի վրա, 42 մ խորությամբ: Այն տեկտոնական գոգավորության մեջ է և նախկինում խորը հովիտ է եղել, փակվել է լավային պատվարով: Զուրը քաղցրահամ է, լճից դուրս է զայխ Չըռք (անվանում են նաև Մեծաջոր) գետը. ձմռանը սառցակալում է: Լճում և գետում ապրում է կարմրախայտը:

**Արփին** փոքրիկ լճակ էր 4,5 քառ. կմ մակերեսով, 2-2,5 մ խորությամբ, նախկին մեծ լճի մնացորդը: Նրանից դուրս է զայխ Աշուրյան գետը: Պաղպակն զյուղի մոտ կառուցեցին համանուն ամբարտակը, և լիճը վերածվեց ջրամբարի, որի մակերեսը զարնանը բնականից մեծ է 5 անգամ: Ջրամբարը կուտակում է շրջապատի լեռներից իջնող հալոցքային ջրերը և բաց է բողնում ամռանը՝ Շիրակի դաշտը ոռոգելու համար:

Հրաբխային արգելափակման լճերից է **Գայլատու** (Բալլկ) լիճը Արարատ զագարից արևմուտք, 2240 մ բարձրության վրա: Նույն ծագումն ունեն Մեծ և **Փոքր Ալ** լճեր՝ Վարդենիսի լեռնաշղթայի արևլյան ծայրին, **Նազիկը** և **Խաչը**: Սիփան լեռան արևմտյան լանջին: Նշված բոլոր արգելափակման լճերը քաղցրահամ են, և նրանցում ապրում է կարմրախայտը:

Հայկական լեռնաշխարհում կան խառնարանային լճեր, որոնք վերևից դիտելիս՝ մեծ հմայք են տալիս հրաբխային զագարներին: Դրանցից ամենամեծը **Նեմրութի լիճն** է համանուն լեռնազագարի վրա՝ նրա ընդարձակ խառնարանում: Լճի մակերեսը 9 քառ. կմ է: Մյուս խառնարանային լճերից են **Աժրահակը** (մկ. 20), **Արմաղանը**՝ չորրորդական հրաբուխների կատարին (մկ. 47):



Մկ. 47. Խառնարանային լիճ Արմաղան հրաբխային լեռան կատարին

Հայկական լեռնաշխարհի ծալքաբեկորավոր լեռներում լճերը մեծ մասմբ ունեն փլվածքային ծագում: Փոքր Կովկասում հայտնի են **Պարզ** լիճը, **Կապոյս** լիճը (Կանաչ, Աղիարակը): Վերջինը Գ-անձակագետի (Ըերերի) վերին հոսանքներում է և առաջացել է Աղիարակ (Քյափազ) լեռան փլուզումից, երբ փիրխարի զանգվածները փակել են գետի ճանապարհը: **Կապոյս** լիճը 1576 մ-ի վրա է, շրջապատված անտառներով, խորությունը 100 մ է, մակերեսը՝ 0,8 քառ. կմ, 30 մ-ից խորը՝ վարակված է ծծմբաջրածնով: Զրի միներալացումը 150 մգ/լ է, լճում ապրում է կարմրախայտը:

Փլուզման հետևանքով առաջացած լճերից է **Ծովը** (Խարբերդի ծով) լիճը՝ Արևոտյան Տիգրիսի ակունքներում, Խարբերդ քաղաքից հարավ-արևելք, 1223 մ բարձրության վրա: Լիճը ձկնառատ և քաղցրահամ է: Ա. Աղջանը գրում է, որ լճից արևմուտք դդյակ էր կառուցած, և «... այս դդյակում նըստին Գրիգոր Պահլաւունի Կարողիկոս և եղանակ նորա Ս. Ներսէ Շնորհալի»: Լիճն ուներ կղզի, որի վրա բնակվել են:

Կանա լճի ավագանում է գտնվում **Արճակ** կամ **Արծիշակ** լիճը, որը սնվում է համանուն գետակով: Չորրորդ քաղցրահամ է, օգտագործում են ոռոգման նպատակներով:

Հայկական Պարի հարավային լանջին՝ Սինակ լեռան մոտ, գոգավորության մեջ գտնվում է **Գայլատու** լիճը: Այն սնվում է Արարատի հարավային լանջին գտնվող գոգավորությունից եկող քաղցրահամ ջրերով. գոգավորությունը ճահճացած է: Գոգավորության արևմտյան մասից՝ Գայլատու լճից դուրս է հոսում համանուն գետը դեպի արևելք ապա կոչվում Առուն (Սարիսու), որը Մակու գետի վտակն է: Լճի բարձրությունը 2200 մ է:

Ծփով ամենից շատը սաղցադաշտային ծագման լճերն են, որոնք տեղադրված են նախկին սաղցադաշտային կրկեսներում և փոքր մակերես ունեն: Կան նաև մորենային բնիքերի արանքներում տեղավորված մանր լճակներ, որոնց մեծ մասը ամռան երկրորդ կեսին չորանում է: Սաղցադաշտային ծագման լճերից են **Քարի** լիճը՝ Արագածի վրա, **Ակնա** լիճը՝ Գեղամա լեռներում, **Սև** լիճը՝ Էջմանասարի վրա, **Գագամա** լիճը՝ Կապուտջուղի վրա, բազմաթիվ մանր լճակներ Բյուրակնի սարավանդում: Մի քանի այդպիսի լճակներ կան Կորդվաց բարձր լեռների նախկին սաղցադաշտային կրկեսներում: Նույնըն է նաև **Պոնտական** լեռնաշղթայի բարձր լեռների գոտում:

Բացի վերը նշված տիպերից կան նաև ողողատային լճեր՝ գոգավորությունների հատակին: Մրանք գետի գալարների մնացորդներ են: Այդպիսի մանր լճեր կան Արաքսի, Արածանիի, Եփրատի ափերին, օրինակ՝ Արաքսի աջ ափին՝ **Աղ** լիճը: Ցածրադիր լճերից է նաև **Մեծամորը** (Այդ լիճ), սակայն բոլորվին այլ ծագումի՝ Ախուրյանի հնահունի ելքն է, որի մասին արդեն ասվել է:

Հայկական լեռնաշխարհի գետերը ունեն անհավասարաչափ վարք (ուժիմ), ջրառատ են գարնանը, երբ ոռոգման կարիք չկա, բայց ամռան երկրորդ կեսին, երբ ջրի կարիքը մեծ է, սակավաջուր են: Զրային ռեսուրսները ռացիոնալ օգտագործելու համար անհրաժեշտ է կարգավորել գետերի հոսքը՝ հալոցքային ջրերը պահել վերին հոսանքներում՝ ամռանը օգտագործելու համար: Հայ շինականը այս ուղղությամբ մտածել է դեռևս հազարավոր տարիներ առաջ և որոշ միջոցառումներ ձեռնարկել է: Օրինակ, Արագածի 3200 մ բարձրության վրա Քարի լճի ելքի մոտ հայտնաբերվել է կիկլոպյան շարվածի ամբարտակի մի հատվածը: Նույնը՝ նաև Գեղամա լեռներում Ակնա լճի մոտ: Լեռնաշխարհի տարրեր մասերում հայտնաբերվել են հնագույն ամբարտակների մնացորդներ: Օրինակ, Թայինից հյուսիս, խճուղուց դեպի արևմուտք գոյություն ունի կրե շաղախով ամբարտակի մնացորդ, իսկ ամբարտակից վերև՝ կավի շերտեր, որ ջրամբարի տղմակալման արգասիք են:

Խոշոր ջրամբարների շինարարությունը ծավալվեց 20-րդ դարում, այն էլ ԽՍՀՄ-ի տարածքում: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում կառուցվել են՝ Արփի լճի, Մանթաշի, Կառնուտի, Ջողազի, Հախումի, Ապարանի, Ազատի,



Նկ. 48. Մանթաշի ջրամբարը

Կեշուտի, Սպանդարյանի, Չամբի, Տոլորսի և այլ մաճը 80 ջրամբարներ: Այսուրյան գետի վրա Թուրքիայի հետ համատեղ կառուցվեց 525 մետր՝ ծավալով ջրամբարը, որի ջրերը օգտագործվում են համատեղ: Փոքր Կովկասի համակարգում՝ Վրաստանի սահմանում կառուցվեց Ծալկայի ջրամբարը, Արցախում՝ Սարսանցի ջրամբարը, Արարսի վրա՝ Արարսի հիդրոհանգույցը՝ 1,35 մլրդ մ<sup>3</sup> ծավալով, Էլեկտրակայամ՝ Երկու ազրեգատով՝ յուրաքանչյուրը 22000 կՎտ:

Մեղրու կիրճում Արարսի ունի ջրահերձետիկ ռեսուրսներ, և մինչև այժմ դրանք չեն օգտագործվել: Ծրագրում է կառուցել Էլեկտրակայամ և ոռոգչ համակարգ:

Հայաստանի Հանրապետությունը ջրասակավ երկիր է, և եղած ջրերը պետք է օգտագործվեն խիստ խնայողաբար ու նպատակային: Գարնանային հալոցքային ջրերը պետք է պահել գետերի վերին ու միջին հոսանքներում՝ ամռանն օգտագործելու համար: Այդ նպատակով նախատեսվում է կառուցել բազմաթիվ մաճ ջրամբարներ:

Թուրքիայի տարածքում վերջերս են սկսել ջրամբարներ կառուցել: Ամենամեծ ջրամբարը Կապանի (Քերանի) ջրամբարն է Եփրատի վրա՝ 675 քառ. կմ մակերեսով, 12,5 խոր. կմ ծավալով: Կառուցվել է նաև Էլեկտրակայամ մոտ 1 մետր՝ կառողությամբ, որը տարեկան արտադրում է 5,5 մլրդ կՎտ. Ժեներացիա և Թուրքիայում ամենախոշորն է: Ծրագրում է Եփրատի վրա կառուցել ևս երեք ջրամբար և հիդրոկայամ: Ջրամբարների գումարային ծավալը կլինի 50 մլրդ մ<sup>3</sup>, Էլեկտրակայամների տարեկան արտադրանքը՝ 17 մլրդ կՎտ ժ: Ծրագրում է ընդարձակել ոռոգվող հողատարածությունները:

## 7. ԶՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Արևադարձային ու մերձարևադարձային լայնություններում ջուրը կյանքի կարևոր աղբյուրն է, նրանով է պայմանավորված բնակավայրերի գոյությունը: Կյանք կա այնտեղ, որտեղ ջուր կա: Հին աշխարհում բնակավայրերը հիմնվում էին գետերի ափին, խոշոր աղբյուրների մոտ: Հազարավոր տարիներ առաջ մարդիկ հնարքներ են գտել ջուրը տեղափոխելու, և այդ արվեստը մեծ կատարելության է հասել: Չատ պատմաբաններ և հնագետներ գտնում են, որ քյահրիզների ստեղծման գյուտը հայերին է պատկանում, որտեղից անցել է Իրան և հասել մեծ կատարելության (Վ. Ազիտ և Բիսվաս, 1975):

Ոռոգման ջուրը առուներով տեղափոխելով իր թերությունն է ունեցել. ջրի մեծ մասը ծախսվել է գոլորշացման վրա կամ ներծծվել, և հեռու տեղափոխվող ջրի չնշին մասն է տեղ հասել: Ան ենթելով սրանից՝ մարդիկ մտածել են ջուրը տեղափոխել ստորգետնյա քունելների, ջրուղիներ-քյահրիզների միջոցով: Փորձառու վարպետները զարմանալի կերպով կարողացել են կոահել, թե

որտեղ է գետնաջուրը մոտ երկրի մակերևոյթին և ջրհորներ փորելով հասել են ջրի հորիզոնին ու այստեղից քյահրիզ (ստորգետնյա ջրուղի) փորել անհրաժեշտ ուղղությամբ: Նման քյահրիզներ կան Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում. ցածրադիր գոգավորությունների հատակին՝ Արարատյան դաշտում, Տարոնում, Խարբերդի ու Մալաթիայի դաշտերում, Կապուտան (Ուրմիա) լճի գոգավորությունում և այլն: Մինչև դեռևս 20-րդ դարի սկիզբը Գյումրի (Կումայրի, Ալեքսանդրապոլ) քաղաքում գոյություն ուներ արհեստավորների՝ լաղումչիների համբարություն, և փորձառու վարպետները գետնի տակով ջուր էին տանում անհրաժեշտ ուղղությամբ:

Հավաստի աղբյուրներից ինձնում ենք, որ Սարգսն 2-րդը (721-705 թթ. մ.թ.ա.) Ուրարտուում՝ Ուլխու քերդաբաղարը գրավելուց հետո ոչնչացրել է գոյություն ունեցող ստորգետնյա ջրաբաշխական համակարգը, որ կառուցվել էր ավելի վաղ ժամանակներում: Ֆրանսիացի հայտնի երկրաբան Ֆյուրնը, ուսումնասիրելով Թուրքիայի ստորերկրյա ջրերը, այցելում է Կեսարիա: Այստեղ նրան ցույց են տալիս մի կիսավեր քյահրիզ, որը ժամանակին՝ 10-րդ դարում եղել է հոչակված ջրատեխնիկական կառույց և ջուր է մատակարարել քաղաքին: Նա այդ կառույցի և քյահրիզների անցկացումը վերագրում է թուրքերին՝ առանց խորամուխ լինելու պատմության մեջ: Նա չի իմացել, որ բուրքսելուկները մեկ դար ուշ են ասպատակել Հայաստանը, եթք այդ կառույցն արդեն գործում էր: Նշված քյահրիզը հայերի ձեռքի գործն էր:

Ոռոգման արվեստը հայերին հայտնի է եղել շատ հազարամյակներ առաջ: Ապացուցված է, որ Հրազդան գետի ափին մ.թ.ա. վեցերորդ հազարամյակում գոյություն են ունեցել բնակավայրեր, որոնց բնակիչները զբաղվել են հողագործությամբ: Այստեղ առանց ոռոգման բերք ու քարի ստանալ հնարավոր չեր: Ոռոգումը, անշուշտ, խիստ պարզունակ բնույթ է ունեցել, գետից առող են փորել դեպի ցանքահաշտը և այն ոռոգել: Աստիճանաբար ոռոգման արվեստը զարգացել է, առուները ավելի կատարյալ են դարձել ու նույնիսկ դուրս են քերվել ջրբաժանային դաշտեր:

Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում պահպանվել են հնագույն ջրանցքների հետքեր, տղմակալված ջրամբարներ: Արագածի ջրանցքների ցանցի ուսումնասիրությունը Մ. Մ. Խաչատրյանին քերեց այն համոզման, որ Արարատյան դաշտի նախալեռներում ոռոգում է կատարվել ջրանցքների մի զարգացած ցանցի միջոցով:

Լեռնաշխարհի տարբեր մասերում պահպանված վիշապները՝ ջրի պաշտամունքի վկաները, ապացուցում են, որ լեռներից ջուրը առուների միջոցով հասել է ցածրադիր դաշտեր և ոռոգել ցանքատարածությունները: Վիշապաքարերը դրվել են ջրանցքների ակունքներում կամ ջրանցքի ափերին, որպեսզի հեռու մնան չար աշքերից:

Հայաստան աշխարհի ոռոգման պատմությունը Գ. Շիրմազանը (1962) սկսում է Արարատյան-Ուրարտական շրջանից: Պարզվում է, որ Վանի քաղաքորության շրջանում ոռոգման արվեստը մեծ կատարելության է հասել: Մենուայի օրոք (810-781 թթ.) կառուցվել են բազմաթիվ ջրանցքներ, և ավելի քան 100 սեպագիր արձանագրություն է կազմվել դրանց վերաբերյալ այդ քաղաքորության տարիներին: Մենուան է կառուցել Խոչար (Խորգով) գետից դեպի Վան գնացող ջրանցքը, որը Մովսես Խորենացին վերագրում է ատորական Շամիրամ-Շամուրամատ (812-803 թթ. մ. թ. ա.) բագուհու ժամանակաշրջանին: Այստեղից էլ ջրանցքը կոչվել է Շամիրամի ջրանցք: Եթե բագուհին արևելյան կողմից մոտեցել է այդ լճին (Վանա լիճ) և ցանկություն է հայտնել ոռոգել այդ տարածությունները:

Մենուայի կողմից կառուցված ջրանցքի ափերին ժայռերի վրա եղել են 14 սեպագիր արձանագրություններ, որոնցով Մենուան սպառնում էր ջրանցքը ավերելու փորձ կատարողներին: Ներկայում այդ արձանագրությունների մի մասը անհետացել է եվրոպացի բախտախմնիքի «Ճանապարհորդների» միջոցով, և այդ արձանագրությունները այժմ գաղղարում են եվրոպական բանգարանները:

Մենուայի որդին՝ Արգիշտին (781-760 թթ. մ. թ. ա.) Վանի Խորխորյան արձանագրություններից մեկում գրում է, որ Ազա երկրում (Արարատյան դաշտ) ինքը ջրանցք է կառուցել: Այն սկսվում է Վիտուրյանի և Արաքսի միախառնումն վայրից և հասել է մինչև Արգիշտիխմնիլի (հետագայում այդ ջրանցքը վերակառուցվեց՝ որպես Հոկտեմբերյանի ջրանցք): Արգիշտին ոռոգել է նաև Երերունիի շրջակայքը. այստեղ հայտնաբերվել են տուֆից պատրաստած ջրմտիկ խողովակներ:

Ուրարտական շրջանին են վերաբերում ջրանցքները՝ այժմյան Երևանի տարածքում: Արգիշտիի հաջորդները շարունակել են ջրանցքների շինարարությունը: 1900 թ. Խաչիկ վարդապետ Դարյանը Զվարթնոցի շրջանում սկզբուեց պեղումներ կատարել և հայտնաբերեց Ռուսա Բ-ի 47 տողանոց արձանագրությունը: Նրա օրոք կառուցվել է Էջմիածնի ջրանցքը, որն անցնում է Հրազդանից, նախ՝ բունելով, ապա Կարմիր Բլուրի մոտ բունելլ վերջանում է, և ջրանցքը գնում է մինչև Զվարթնոց ու Էջմիածնի: Ջրանցքներ կառուցվել են նաև Քասաղ գետից, Հրազդանից: Ջրանցքներով չեն բավարարվել, միաժամանակ կառուցվել են նաև բյահրիզներ:

Ինչպես նշում է Գ. Վ. Շիրմազանը, Ուրարտական շրջանից հետո մինչև մ. թ. ա. 6-7-րդ դարերը ջրանցքների շինարարության մասին ոչ մի արձանագրություն չկա: Սակայն կան ջրանցքների հետքեր և գործող ջրանցքներ Բասենում, Շիրակում, Տարոնում, Ալաշկերտում, Խարբերդում, Մալարիայում:

Պետք է ասել, որ ջրանցքների կառուցման հարցերով հատկապես գրադարձել են Հայոց կարողիկոսները: Վանքապատկան հողերի ոռոգումը ստիպել է

նրանց ընդհուպ գրադվել այդ պրոբլեմով: Զրանցքների և քյահրիզների կառուցմը դեպի Էջմիածնի միշտ եղել է օրակարգի հարց:

1655-1680 թթ. Սովեյման շահի ժամանակ Երևանի խան է նշանակվում Սեֆի խանը, որը Մեծամորի՝ Սև ջրի ստորին հոսանքից մի առու է հանում և հիմնում Սեֆիապատ գյուղը: Նրա Խարուն անունով կինը, նախանձելով առուսնուն, առու է հանում ու հիմնում է Վերին և Ներքին Խարունարիս գյուղերը:

Էջմիածնի շուրջը բարեկարգման աշխատանքներ են կատարվում, անց են կացվում ջրանցքներ, տնկվում է անտառ (որը ոչնչացավ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին վառելանյութի պակասի պատճառով), Կարողիկոս Ներսես Աշտարակեցին կառուցում է Էջմիածնի ջրամբար-լիճը՝ 80 հազ. խոր. մ ծավալով:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Արարատյան դաշտում ոռոգվող տարածությունները կազմեցին մոտ 100 հազ. հեկտար: Պատերազմի տարիներին ջրանցքների մի մասը խափանվեց, և ոռոգվող տարածությունները կրճատվեցին մինչև 60 հազ. հեկտար: Անցած 70 տարիներին ջրանցքների ցանցը ընդարձակվեց, և ոռոգվող հողատարածությունները Արարատյան դաշտում ու նախալեռներում հասան 150 հազ. հեկտարի. ընդ որում կառուցվեցին բարդ ջրատեխնիկական համակարգեր:


Հանրապետությունում կառուցվեցին բոլորովին նոր ջրանցքներ՝ Շիրակում, Լոռիում, Կիսիանի շրջանում և այլն: Ներկայում Հայաստանի Հանրապետությունում ոռոգվում է 300 հազար հեկտար, հետագայում կոռոզվի մինչև 475 հազ. հեկտար հողատարածություն: Ներկայում խոչըն ջրանցքներից են՝ Արմավիրի (Հոկտեմբերյանի), Արգմի-Չամիրամի, Արտաշատի, Թալինի, Լռովա, Շիրակի, Որոտանի և այլն: Կառուցվել են խոչըն ջրամբարներ, որոնց մասին արդեն հիշատակվել է:

Ոռոգման աշխատանքներ կատարվում են նաև Հայկական լեռնաշխարհի այլ հատվածներում: Արցախում կառուցվել է Սարսանի ջրամբարը, որտեղից ջրանցքները ոռոգում են շրջապատի հողերը: Վրացական Հանրապետությունում օգտագործվում են Խրամի և Դերենի ջրերը, կառուցվել է Ծավկայի ջրամբարը:

Թուրքիայի և Իրանի տարածքներում ջրերի օգտագործումը դեռևս սահմանափակ է: Մալաքիայի դաշտում ծրագրվում է ոռոգել 68 հազար հեկտար: Ոռոգման խոչըն համակարգեր դեռևս չեն կառուցվում: Իրանի տարածքում օգտագործում են Կարմիրջոր (Աջի) գետի ջրերը, մասնավորապես Թավիդի շրջանում, ապա Զագրուշից իջնող ոչ մեծ գետերի ջրերը՝ մինչև Ուրմիա լիճ հասնելը՝ բավական սահմանափակ արեալներով: Արաքսի ու նրա վտակների ջրերը օգտագործվում են Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում ու Իրանում: Գրանք են՝ ծախ կողմից՝ Արփամ՝ ստորին հոսանքում, Նախիջևանը, Երնջակը, Գլլանը, աջ կողմից՝ Կոտուրը, Դեղին գետը, Սև

ջուրը (Կարասուն): Իրանի տարածքում խոշոր ջրահանգույցներ չկան, եղածները փոքր են, տեղական նշանակության: Համեմատաբար խոշոր ջրատնտեսական օբյեկտներ կան Նախիջևանի ԻՀ-ում:

Թուրքիայի տարածքում ոռոգման համակարգերը շատ բույլ են եղել՝ Մալաթիայի, Խարբերդի, Բալուի, Տարոնի, Մանազկերտի, Ալաշկերտի, Բասենի, Երզնկայի, Վաճի և այլ դաշտերում գոյություն ունեն ոռոգելի հողատարածություններ, սակայն ջրանցքների համակարգը դեռևս բույլ է: Թուրքիայում ոռոգման գործը բավական լավ հիմքերի վրա դրվեց վերջին տասնամյակներում: Օրինակ, 1963 թվականին ամբողջ Թուրքիայում ոռոգվող տարածությունները կազ-



Նկ. 49. Ջրաբաշխ համակարգ Հրազդանի կիրճում (Երևան)

մել են ընդամենը 283 հազ. հա, 1970 թվականին՝ արդեն 1,78 մլն հեկտար: 1960 թվականին ստեղծվել է Հողերի ոռոգման և պահպանության հասուն գլխավոր վարչություն, որը մեծ աշխատանք է կատարում այդ ուղղությամբ: Եփրատի ավազանում ծրագրվում է ապագայում ոռոգել 635 հազ. հա:

Հետաքրքիր է նշել, որ Տավուսի հարավային ստորոտին (Հայոց (Վերին) Միջագետք) ամռանը հողը չեն մշակում, որովհետև սարսափելի չոր է, ջուր չկա և վարուցանքը կատարվում է ձմռանը, իսկ գարնանը ավարտում են թերթահավաքի աշխատանքները: Մինչև աշուն և ձմեռ հողը մնում է խոպան և արևի կիզիչ ճառագայթների տակ ճաքճքվում է:

## ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԸԸ

Յուրաքանչյուր երկրի բնության բաղադրիչների մեջ մարդու համար շատ կարևոր ու կենսական է հողային ծածկույթը: Հողն է գրեթե բոլոր բարիքների աղբյուրը: Պատահական չէ, որ այն անվանում են մայր հող, նրանից են ծընվում թե՝ սնունդը, թե՝ հագուստը և թե՝ տնային գործածության իրերը:

Հայկական լեռնաշխարհի հողային ծածկույթը ստեղծվել է հազարամյակների ընթացքում մայրական ապարների հողմահարման, բուսական ու կենդանական օրգանիզմների, մանրօրգանիզմների, կյմայի, ջրերի, ուելիքի ներգործության միջոցով, որտեղ էներգետիկ աղբյուրը Արեգակն է: Քիչ չէ նաև մարդու ակտիվ ներգործությունը հողի վրա:

Ուրեմն, հողն ստեղծվում է գործոնների մեկ ամբողջ համալիրի ազդեցությամբ, նշանակում է՝ բնական միջավայրի ծնունդ և և այն հասուկ է այդ միջավայրին. այսինքն՝ հողը բնության հայելին է: Եվ իսկապես, տվեր հողագետին մի բույ հող, և նա ձեզ կներկայացնի տվյալ վայրի բնության ամբողջ համալիրի պատկերը:

Հողը բնապատմական մարմին է, և նրա ամենակարևոր հատկանիշը պտղաբերությունն է՝ բերք ու բարիք ծնելու ունակությունը: Ասում ենք՝ բնապատմական մարմին, որովհետև արիեստականորեն դեռևս չի հաջողվել հող ստեղծել, որքան էլ այդ ուղղությամբ գիտափորձերը շարունակվում են: Մարդը կարող է արագացնել հողագոյացման ալրոցեսը, մեծ ջանքերի գնով կարող է բարեկավել նրա պտղաբերությունը, բայց մայր ապարից լաբորատոր միջոցներով հող ստեղծել չի կարող, որովհետև ժամանակի գործոնը շատ կարևոր է, ժամանակ է պետք, որ մանրօրգանիզմները ներգործեն բուսական մնացորդների վրա, դրանք քայլայեն, վերածեն հումուսի: Հողը միայն բնական ճանապարհով է ստեղծվում, ուստի նրա պահպանությունը մարդու համար կենսական է:

Հայկական լեռնաշխարհում հողը մշակում են արդեն 8-10 հազար տարի, և բյուրավոր սերունդներ կերակրվել են այդ հողի բարիքներով:

Լեռնաշխարհի հողային ծածկույթի բնորոշ առանձնահատկություններից մեկը և շատ կարևոր նրա բազմազանությունն է: Այն կապված է ուելիքի, բարձրադիր-վերընթաց գոտիականության առկայության հետ: Նույն աշխարհագրական լայնությունների տակ հարկան Կուր-Արաքսյան դաշտավայրում կամ Սիցին Ասիայի ու Կենտրոնական Ասիայի ցածրադիր դաշտավայրերում տարածվում են անապատներ ու կիսաանապատներ՝ իրենց հատուկ անապատային գորշ հողերով, մոխրահողերով, աղուտներով և սրանց մոտ հողերով,

մինչեն Հայկական լեռնաշխարհում կարելի է հանդիպել սկսած կարմրահողերից ու դեղնահողերից մինչև ալպյան մարգագետնային ու մերձձնային, դեռևս չկազմավորված հողերի, անցումային բոլոր տարատեսակներով: Հողային տարատեսակների սպեկտրն այստեղ զարմանալի հարուստ է:

Հողագիտուրյան կարկառուն ներկայացուցիչ, զոնայականության տեսության հիմնաղիք Վ. Վ. Դոկուչաևը, այցելելով Հայկական լեռնաշխարհ ու Կովկաս և դիտելով հողերն ըստ բարձրադիր գոտիների, հանգեց լեռնային երկրների բարձրադիր-վերընթաց գոտիականության գաղափարին: Նա տեսավ, որ Հայկական լեռնաշխարհը հողերի կատարյալ թանգարան է: Այստեղ նա եկավ այն համոզման, որ լեռնային երկրներում հողերի բախտը որոշում է ուղիելքը:

Կապված հողերի ռացիոնալ օգտագործման և արդյունավետության բարձրացման խնդիրների հետ, սկսած անցյալ դարի վերջերից Հայկական լեռնաշխարհի հողերը գիտական ուսումնասիրման են ենթարկվում: Այդ գործը ավելի հաջող ՀՀ դարում ընթացավ Անդրկովկասյան երեք հանրապետություններում, որտեղ հիմնադրվեցին հողագիտական ինստիտուտներ և սիստեմատիկ կերպով հետազոտվում ու քարտեզագրվում են հողերը: Թուրքիայի տարածքում հողերի ուսումնասիրման ուղղությամբ աշխատանքներ կատարեցին միայն վերջերս՝ Ոռոգման և հողերի պաշտպանության գլխավոր վարչության, Գյուղատնտեսության նախարարության, Անկարայի ու Ստամբուլի համալսարանների մասնագետները, իրանական տարածքում՝ Գյուղատնտեսության նախարարության և Թերապանի համալսարանի հողագետները:

Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի հողերի ուսումնասիրման ասպարեզում մեծ ներդրում ունեն Վ. Վ. Դոկուչաևը, Ս. Ա. Զախարովը, Բ. Բ. Պոլիսովը, Բ. Ա. Կլոպոտկին, Խ. Պ. Միրֆամանյանը, Ա. Մ. Նալբանդյանը, Մ. Ն. Սարաշվիլին, Ռ. Ա. Եղիսանը և շատ այլ հողագետներ:

Բ. Բ. Պոլիսովը և Ն. Ն. Ռոզովը (1944), ուսումնասիրելով Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի հողագոյացման պրոցեսները, գտան, որ այստեղ գոյություն ունեն հողմահարման նյութերի չորս տարատեսակներ, որոնց վրա ձևավորվում են հողերը. դրանք են՝ ֆերիտ-սիալիտային, սիալիտային, կարբոնատային և ցլորիդ-սոլվֆատային: Համառոտակի տանք գիտական այս տերմինների բացատրությունը: Ֆերիտ-սիալիտայինը մի այնպիսի հողմահարման կեղև է, որտեղ երկարի, սիլիցիումի ու ալյումինիտումի միացություններն են գերակշռողը: Սիալիտային հողմահարման կեղևը, որ Հայկական լեռնաշխարհում շատ ընդարձակ տարածում ունի, հիմնականում կազմված է սիլիցիումի և այլումինիտի միացություններից, բոլոր տեսակի կավերում սրանք են տիրապետողը: Կարբոնատային հողմահարման կեղևը ստեղծվում է չոր կլիմայական պայմաններում և ցածրադիր լեռնազանգվածներում ու գո-

գավորություններում՝ հիմնականում կալցիումի կարքոնատի (կրի) կուտակման միջոցով: Վերջապես, քլորիդա-սուլֆատային կեղևը գոյություն ունի միայն ցածրադիր գոգավորություններում, որտեղ կուտակվում են լեռներից լվացված քլորի, ծծմբի միացությունները:

Ծատ կարևոր դեր ունի մայրական ապարների կամ նրանցից անշատված բեկորային նյութերի քիմիական կազմը: Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեն՝ նստվածքային, հրաբխածին և փոխսկերպված մայրական ապարներ: Ելնելով սրանց քիմիական և միներալոգիական կազմից՝ բնական է, հողերը նույն հատկանիշները ունենալ չեն կարող: Հարուստ քիմիական կազմ ունեցող հրաբխային ապարների վրա ձևավորվող հողերը ավելի հարուստ կլինեն բույսերին անհրաժեշտ միներալային սննդով, քան զուտ կրաքարային, դոլոմիտային, միներալային կամ նման ապարների վրա ձևավորվող հողերը:

Սակայն այսինքն բնությունն իր հրաշագործ ազդեցությունն ունի և կարողանում է ինչ-որ ձևով համահարթել տարրերությունները: Այսպես օրինակ, հայտնի է, որ մաքուր կրաքարերը, դոլոմիտները կալիում կամ ֆոսֆոր չեն պարունակում, բայց երբ անալիզի ենք ենթարկում նրանց վրա ձևավորված հողերը, ապա հայտնաբերվում են և՝ կալիում, և՝ ֆոսֆոր, և՝ շատ այլ մասնաւորեր, որոնք մայր ապարում բացակայում են: Որտեղից են դրանք. պարզվում է, որ դրանք եկել են օդային ճանապարհով՝ փոշու կամ մթնոլորտային տեղումների միջոցով: Այս ձևով բնությունը կարողանում է մասամբ հողի մեջ կանոնավորել պակասորդային քիմիական տարրերը, բայց, անշուշտ, ոչ կատարյալ ձևով:

Հողառաջացման պայմանները լեռնաշխարհի տարրեր մասերում տարբեր են: Սև ծովի ափերին հողառաջացումը ընթանում է բուռն թափով, մանր-օրգանիզմները (միկրոօրգանիզմներ) ինտենսիվ գործում են շուրջ տարի և արտաքրության թափությունը առաջնային է ապարների վրա: Վերջիններս արագ ենթարկվում են կենսաքիմիական հողմահարման, իսկ դյուրալույծ քիմիական տարրերը ջրի մեջ լուծվելով հեռանում են: Տեղում մնում են դժվարալույծ տարրերը՝ ալյումինիումի, երկարի, մանգանի օքսիդները, ուստի հողի գույնը կարմիր կամ դեղնավուն է:

Պատկերն այլ է Միջնաշխարհում: Նախ՝ այսինքն ձմեռային ամիսներին գետնի մակերևույթը սառչում է, մանրօրգանիզմների կենսագործունեությունը գրեթե դադարում է: Տարվա տար ժամանակ ջուրն այնքան առատ չէ, որ մանրօրգանիզմները առատորեն բազմանան և արտաքրության թագավարը ապարները: Խոնավության ոչ բավարար լինելու պատճառով էլ բռնական ծածկույթը հարուստ ու հոծ չէ, որ նրա բայց այսպիսից առատ հումուս գոյանա: Դա հատկապես ցածրադիր մասերում է: Միջին բարձրության լեռնե-

րում ու ավելի բարձր մակարդակներում հումուսի կուտակման պայմանները նպաստավոր են: Հարուստ խոտային ծածկը մաճրօրգանիզմներին անսպառ նյութ է տալիս, նրանք ել քայրայում են բուսական մնացորդները: Բայց խոնավության պակասորդի ու ամառվա համեմատաբար կարճատևության պատճառով մաճրօրգանիզմները հնարավորություն չունեն բուսական բուլոր մնացորդները լիովին քայրայել, ուստի հումուսը կուտակվում է: Սև ծովի ափերին նույնպես կա փարբամ բուսականություն, սակայն այստեղ հումուսն այնքան առատ չէ, որքան Միջնաշխարհի միջին բարձրության լեռներում այն պատճառով, որ մաճրօրգանիզմները չուրջ տարի բուսական մնացորդները քայրայում են վերջնականապես և հումուսը կուտակվելու հնարավորություն չունի: Կարմրահողերի վրա հումուսի մի շատ բարակ շերտ կա և ոչ ավելին:

Բարձր լեռներում, որտեղ ձմեռը երկարատև է, և մաճրօրգանիզմների կենսագործունեությունը սահմանափակ է, բուսական մնացորդների մեծ կուտակում է նկատվում: Կան տեղեր, որտեղ հումուսի և բուսական մնացորդների բաժինը հողի մեջ հասնում է 30-40% և ավելի, նույնիսկ տորֆ է առաջանում:

Հայկական Տավրոսի հարավային ստորոտներում ձմեռը կարճատև է, և միջին ջերմաստիճանները դրական են, սակայն այստեղ կարմրահողեր չեն կարող առաջանալ այն պատճառով, որ ամռանը տեղումները քիչ են և մաճրօրգանիզմների կենսագործունեությունն ու քիմիական տարրերի ջրային միզրացիան բույը է. այդ պայմաններում կարող են ձևավորվել կիսաանապատային գորշահողեր կամ շագանակագույն և դարչնագույն հողեր:

Հայկական լեռնաշխարհի եզրային-արտաքին լանջերին տարածվում են անտառներ, որոնց տակ հողառաջացման ուրույն պայմաններ են ստեղծվել. սիալիտային հողմնահարման կեղևի վրա առաջանում են դարչնագույն ու գորշ անտառային հողեր: Լեռնաշխարհի ցածրադիր կիսաանապատային-ու անապատային գոտու չոր պայմաններում էլ առաջանում են աղուտներ, ալկալի և նման հողեր, որոնց մասին կիսումի ստորև:

Հայկական լեռնաշխարհում հողերն ունեն տարբեր հասակ: Այսպես՝ Սև ծովի ափին ձևավորված կարմրահողերն ու դեղնահողերն ամենից հինգ են, ապա զալիս են Պոնտոսի, Փոքր Կովկասի և Տավրոսի անտառային դարչնագույն և գորշ հողերը, հետո՝ Միջնաշխարհի ծալքարեկորավոր համակարգերի հողերը, և ամենաերիտասարդը հրաբխային ծածկոցների ու գետահովիտների հողերն են:

Հայտնի է, որ սառցապատճան փուլում լեռներում տեղի է ունեցել ձյան գծի իջեցում: Դրան համընթաց ցած են իջել նաև բուլոր բարձրադիր գոտիները: Սառցապատճերի նահանջից հետո բոլոր գոտիները նորից բարձրացել են: Օրինակ, Միջնաշխարհում մեծ տարածություն ընդգրկող տափաստանների հողերն են:

բում մի ժամանակ եղել են մերձալպյան և ալպյան մարգագետինների հողեր, որոնք հետագայում վերածվել են սևահողերի, իսկ չոր տափաստանների ու կիսաանապատների գոտում էլ մի ժամանակ եղել են սևահողեր, որոնք աստիճանաբար դեգրադացվել են և այլն: Հողերը շատ զգայուն են կլիմայական փոփոխությունների նկատմամբ:

Լեռնաշխարհի անտառային շրջաններին հարող շատ հատվածներ ժամանակին ծածկված են եղել անտառներով և ունեցել են դարչնագոյն կամ գորշ անտառային հողեր, սակայն մարդու գործունեությամբ անտառները ոչնչացել են: Տեղում մնացած համապատասխան հողերի տվյալ տեսակը պահպանվում է մինչև այժմ, կամ սրանք փոխվել են ոչ լիովին:

Ամենաերիտասարդ հողերը, ինչպես նշում է Ռ. Էդիլյանը (1971), գետափերին երիտասարդ գետաբերուկների վրա ձևավորված հողերն են: Դրանք տարածվում են խոշոր գետերի՝ Արաքսի, Արածանիի, Եփրատի ու Արանց խոշոր վտակների ողողատներում:

Հայկական լեռնաշխարհում կան նաև բաղված, քողարկված հողեր: Սրանք գոյրեցուն են ունեցել նախքան հրաբխային արտավիժումները. հրաբխային լավանները ծածկել են նման հողերը, բարձր ջերմաստիճանի տակ օրգանական մասն այրվել է: Գետերի խնձահովվածներում գոյզ լավային շերտերի արանքում, հաճախ մենք նկատում ենք այրված հողեր, որոնց անվանում են լիքոմարգի:

Այնտեղ, որտեղ հրաբխային նյութերը ցածր ջերմաստիճան են ունեցել, ինչպես, օրինակ, Ծիրակի տիպի տուֆերը, դրանց տակ հողերը պահպանել են իրենց սկզբնական տեսքը: Այդ հողերի ուսումնասիրությունը կատարել է Խ. Պ. Միրիմանյանը:

Լեռնային երկրներում հողերն առաջանում են կամ մնացորդային և կամ կուտակումային հիդմահարման կեղևի վրա: Ուկիեֆի բոլոր դրական ձևերում բլուր կամ սար ներկայացնող ձևերում, մքննողրտային ջրերը լվանում տանում են մանրահողը և լուծված քիմիական տարրերը: Ուրեմն, հողերը զարգանում են մնացորդային կեղևի վրա. սրանք սակավագոր են, լվացված, հաճախ՝ կմախքային:

Ուկիեֆի բացասական ձևերում, այսինքն՝ գոգավորություններում, կուտակվում են լանջերից իջած հողմահարման նյութերը՝ առաջացնելով կուտակումային հիդմահարման կեղև, որի վրա ձևավորված հողերը հարուստ են մանրահողով և կավային բորանասնիկներով (ֆրակցին կավ), որտեղ առատ են շարժում միացությունները՝ բույսերին անհրաժեշտ միներալային տարրերը:

Բարձր լեռնային գանգվածներում տիբապետում են տեղատարման պրոցեսները, հողային լուծույթների ռեակցիան քրու է, որի հետևանքով կալցիոնը, ծծումբը և այլ շարժում տարրեր լվացվում-իջնում են ուկիեֆի բացասա-

կան ձևերի մեջ ու այնտեղ կուտակվում: Բացասական ձևերում առաջանում են կարբոնատային, սոլֆատային, քլորիդային կուտակումներ: Լեռնաշխարհում շատ մեծ տարածում ունի կարբոնատային կուտակումը կալցիումի կարբոնատի ձևով, և նախալեռնային ու ոչ բարձր լեռնային մասերը՝ հատկապես հրաբխային շրջաններում, ծածկված են կարբոնատային հողմահարման կեղևով, որի մասին արդեն ասվել է: Ցածրադիր գոգավորություններում տեղի է ունենում նաև սոլֆատների (գիպս), քլորիդների (կերակրի աղ), նատրիումի կարբոնատի (սողա) կուտակում:

Հայաստանի Հանրապետության տարածքում հողերի դասակարգման հարցերով շատերն են գրադիւկել: Վերջին դասակարգումը կատարվել է Հողագիտության և ազրոքիմիայի ինստիտուտում Ռ. Եղիշյանի ղեկավարությամբ: Առանձնացվել են 15 ծագումնաբանական տիպեր, 41 ենթատիպեր, 125 սեներ: 15 տիպերից առանձնացվել են հողային 8 գրտիներ: Նշենք, որ վերջերս Հողագիտության և ազրոքիմիայի ինստիտուտում կազմվել է Հայաստանի Հանրապետության տարածքի 1:200000 մասշտարի հողային քարտեզ, կազմվել է նաև հողային ատլաս: Լուրջ աշխատանքներ են կատարվում հողերի մելիորացիայի գծով:

Վերը նշված 8 գրտիները տարածվում են նաև ամբողջ լեռնաշխարհում, որոնց պետք է գումարել նաև մերձարևադարձների կարմրահողերի ու դեղնահողերի գրտին, որպիսին ՀՀ-ում բացակայում է: Սրանով գրտիական սպեկտրը կամրողանա: Հայկական լեռնաշխարհի թուրքապատկան հատվածի հողերի դասակարգումը կատարել են Բ. Բ. Պողինովը և Ն. Ն. Ռոզովը: Նրանց դասակարգումը գրեթե համընկնում է Ռ. Էղիշյանի դասակարգմանը:

Խոճակ մերձարևադարձային հողերն ունեն սահմանափակ տարածում Սև ծովի ափերին մինչև 500-700 մ բարձրությունների վրա: Թրու ռեակցիայի պայմաններում որոշ հատվածներում ձևավորվել են ենթամոխրացած (պորզոլացված) կարմրահողեր: Ընդհանրապես կարմրահողերը մեծ հզրություն ունեն: Մ. Ն. Սաբաշվիլին (1948) նշում է, որ ալիս-ֆերիտային հողմահարման կեղևի հաստությունը հասնում է 10 մ-ի:

Այս գոտում սառնամանիքները թիջ են լինում, կլիման խոնավ է, և մանրօրգանիզմները անարգել զարգանում են. օրգանական թքուների ներգործությամբ՝ մայր ապարներն արագությամբ. կենսաքիմիական հողմահարման են ենթարկվում: Օրինակ, գրանիտների արտաքին տեսքը գրեթե չի փոխվում, սակայն տրոքելիս այն կավի է վերածվում:

Կարմրահողերում կալցիումը, մագնետիումը, կալիումը և այլ հեշտ լուծվող տարրերը ջրի միջոցով հեռացել են, մասսամբ նաև՝ սիլիցիումը: Ավելացել է այլումինիումի ու երկարի պարունակությունը. մեկուկես օրսիդները՝  $R_2O_3$ -ը, հասնում են 45-60 %-ի:

Կարմրահողերում բույսերին անհրաժեշտ միներալային նյութերի մեծ պակաս կա. հողերը հումուսից աղբատ են, և ոչ բոլոր բույսերն են, որ այս հողերում կարող են բերք տալ. հողի ռեակցիան թու է՝ pH-ը 5-6 է: Կարմրահողերն ու դեղնահողերը պարարտացման խիստ կարիք ունեն, հացահատիկներ աճել չեն կարող, բայց թեյի բուփը եղրիզենին (տունգը), ծխախոտը հարմարվել են կիմմայական ու հողային պայմաններին:

Բացի Սևծովյան շրջանից այլևս ոչ մի տեղ կարմրահող ու դեղնահողեր չեն հանդիպում: Հայկական լեռնաշխարհում, ցածրադիր մասերից դեպի լեռները գնալիս, հանդիպում են կիսաանապատային գորշահողեր, աղուտներ, ալկալի հողեր, չոր տափաստանների շագանակագույն հողեր, ապա սևահողեր, անտառային հողեր, մերձալպյան ու ալպյան մարգագետինների հողեր: Ըստ հերթականուրյան ներկայացնենք դրանք:

Կիսաանապատային գորշահողերը ձևավորվել են Հայկական լեռնաշխարհի ամենաշորային շրջաններում, որտեղ տեղումների քանակը 250-300 մմ է, հողագոյացման համար կիմմայական պայմանները նպաստավոր չեն: Դրանք են՝ Տավուսի հարավային ստորոտների ողոյ հատվածները, Արարատյան, Նախիջևանի գոգավորությունների եզրային-նախալեռնային մասերը, Մեղրու կիրճի ցածրադիր մասերը, Մալաթիայի դաշտի որոշ հատվածներ, Կապուտան (Ուրմիա) լճի գոգավորության եզրային մասերը մինչև 1800 մ բարձրությունների վրա: Հողի գույնը գորշ է, հումուսի պարունակությունը՝ 1-2-3 %, հաճախ հողը փոշիացած է, տեղ-տեղ էլ հրաբխային բարձրավանդակների վրա քարքարոտ-կմախրային է, օրինակ՝ Կարմրաշենի, Շամիրամի սարավանդներում: Եվ սրանք մեծ ջանք են պահանջում վերին շերտը քարերից ազատելու համար:

Կիսաանապատային խոպան հողերը տեղ-տեղ մակերևույթից խիստ ամրացած-խտացած են և ստեղծել են հողակեղև (պոչվենհայ կօրկա), որը բետոնի նման ամուր է, և մակերևութային ջրերը դժվարությամբ են քափանցում խորը: Ուստի, անձրևից անմիջապես հետո ջուրը հոսք է ստանում, և էրոզիոն օջախներում փոշիացած հողն անմիջապես տեղատարվում է:

Կիսաանապատային գորշահողերի տարածման շրջաններում գետնաջրերը խորն են, և մազական բարձրացումը քացառված է, այլապես նրանք կվերածվեն պահուածների: Գորշահողերը ոռոգման և պարարտացման դեպքում դառնում են կուլտուր-ոռոգելի բնրքատու հողեր: Կարելի է մշակել բամբակ, խաղող, այլ մերձարևադարձային կուլտուրաներ, քանջարեղեն:

Կիսաանապատային գորշ հողերի տարածքում առանձնացնում ենք կուլտուր-ոռոգելի հողերը: Սրանք զբաղեցնում են Սիջին-Արարայան գոգավորության ցածրադիր մասերը՝ Արարատյան և Նախիջևանի դաշտերը: Ու. Էղիլյանը այդ հողերն անվանում է ոռոգելի մարգագետնային կիսաանապատա-

յին հողեր: Սրանք այն առաջացումներն են, որոնք ժամանակ առ ժամանակ ունեն գրունտային սննդցում, գետնաջրերը գտնվում են 1-3 մ խորության տակ: Հողերը ձևավորվել են Արար գետի ու նրա վտակների բերուկների վրա, մարդու դարավոր ակտիվ ներգործության պայմաններում: Ուղղական և գետնաջրերի ազդեցության տակ հողերն աստիճանաբար կուտուրական տեսք են ստացել, ունեն ստրոկտուրա, ծակոտկեն են, հարստացել են միներալային սննդանութերով: Բավական հզոր են (40-80 սմ) և ամբողջ շերտում միանման հումուսայնությամբ (1-1,5%), հարուստ են կալցիումի կարբոնատով, հողային լուծույթների ունակցիան թույլ հիմնային է:

Դարեր շարունակ կուտուր-ոռոգելի հողերն օգտագործվում են և ունեն քարձը արդյունավետություն: Այս հողերի վրա աճեցնում են խաղող, դեղձ, ծիրան, պտուղներ և բանջարեղեն: Հողերը կարիք ունեն պարարտացման, հատկապես՝ ազդուային:

**Աղուտ-ալկալի հողերը** տարածված են գոգավորությունների հատակին: Զարգանում են քլորիդային, սուլֆատային կամ կարբոնատային կեղևների վրա: Առաջացման մեխանիզմն այսպիսին է. գոգավորությունների հատակին գետնի մակերևույթին մոտ, գետնաջրերը հավաքվում են և մազական քարձացման հետևանքով հայտնվում են հողի մակերևույթին. Չուրը գոլորշանում է, իսկ նրա մեջ լուծված աղերը մնում են գետնին ու առաջացնում աղի շերտ: Անձրևի ժամանակ դրանք կարող են լուծվել, նորից իջնել որոշ խորության, բայց երբ հողը չորանում է, նորից քարձանում և նատում են մակերևույթին: Աղուտները դիտելիս այն տպավորությունն է ստացվում, թե դաշտում ծյուն է եկել: Հիմնականն այստեղ կերակրի աղն է, որին խառնված են գլուխերյան աղ, սոդա:

Աղուտները գյուղատնտեսության համար պիտանի հողեր չեն: Վերջին ժամանակներս Հայաստանի Հանրապետության Հողագիտության և ազգութիմիայի ինստիտուտում աղուտների լվացման ու աղազերծման որոշակի աշխատանքներ են կատարվում: Ծծմբական թթվի օգնությամբ հողերը լվացվում են, աղերը հեռացվում են, սակայն նման մերողի կիրառումը միայն ժամանակավորապես է հողը աղազլվում. գետնաջրերը ժամանակի ընթացքում նորից աղ են բերում: Աղուտները վերջնականացվեն կարելի է աղազերծել միայն գետնաջրերը իջեցնելու միջոցով, այսինքն՝ կտրել հողի մակերևույթի և գետնաջրերի մակերևույթի միջև մազական կապը: Այս խնդիրը շատ բարդ է և մեծ միջոցներ է պահանջում:

Ավելի բարդ է ալկալի հողերի յուրացումը: Ալկալի հողերում գետնի մակերևույթին մեծ մասամբ աղի կուտակում չի նկատվում: Այն որոշ խորության տակ առաջացնում է քարացած զանգված, որտեղ տիրապետում է հիմնականում նատրիումի կարբոնատը՝ սողան, որը բույսերի համար խիստ աննպաստ է: Հողն այնքան ամուր է, որ ժայռային գետնահողի տպավորություն ունի,

բոլոր նրա մեջ արմատակալել չի կարող: Նման հողերը նույնպես կարելի է լվանալ ծծմբական թթվի օգնությամբ, նատրիումը դուրս մնել և ջրի միջոցով հեռացնել: Այս ուղղությամբ ևս հետազոտությունները շարունակվում են:

Աղուտների ամենաընդարձակ տարածությունը Կապուտան (Ուրմիա) լճի ափերին է, գետնաջրերը խիստ աղի են, մազական բարձրացման միջոցով հասնում են երկրի մազերևույթ ու գորշչանում: Լճի ափերին ամռան երկրորդ կեսին 5 կմ լայնության գտնում կուտակվում է նաև լճի ջրից անջատված աղը, հաճախ չոր աղը քամիների միջոցով տարածվում է և նստում ավելի բարձր բարձրաշափական հիշերի վրա, անձրևների միջոցով լվացվում է, նորից իջնում դեպի լիճը, և այսպես աղի շրջանառություն է կատարվում: Աղուտներ, ոչ այդքան ընդարձակ արեալներով, տարածված են Արարատյան, Նախիջևանի դաշտերում:

Աղուտներն ունեն տարատեսակներ՝ փոլիսր (պոչլու) և թաց. առաջնում աղը ձյունանման է, խտացված չէ, իսկ երկրորդը՝ խոնավություն ունի, տեղ-տեղ թաց է: Աղուտներում քիմիական ռեակցիան հիմնային է՝ pH=8-9:

**Չազանակագոյն հողերն անցումային են՝ գորշահողերից դեպի սևահողերը և տարածվում են չոր տափաստաններում՝ գորշահողերից ավելի բարձր: Արարատյան ու Նախիջևանի գոգավորություններում գրադեցնում են 1200-1500 մ գոտին, իսկ Կապուտանի (Ուրմիայի) ավազանում մինչև 1800 մ: Տավրոսի հարավային ստորոտներում մինչև 800-1000 մ: Տարածված են նաև Ուզուն-յայլայի, Մալաթիայի, Խարբերդի, Բալահովստի, Տարոնի, Երզնկայի, Հարքի, Մանազկերտի, Շիրակի դաշտերում, Վանա լճի արևելյան ափին, ինչպես նաև Փոքր Կովկասի՝ դեպի Կոր-Արարսյան դաշտավայրը իջնող լանջերին: Մինչև 600-700 մ բարձրությունների վրա: Ինչպես նկատում է ընթերցողը, լեռնաշխարհի տարբեր մասերին շագանակագոյն հողերի վերին սահմանը վիճակ 1000 մ տարբերություն է տալիս, որը բխում է կլիմայական պայմանների բազմազանությունից, հատկապես չորությունից: Ընդհանրապես, հյուսիսից դեպի հարավ լանջաֆտային գոտիների սահմանները բարձրանում են. այդ մասին կիսովի համապատասխան բաժնում: Չազանակագոյն հողերի գոտին ամենից ընդարձակն է և անհիշելի ժամանակներից օգտագործվում է որպես հացահատիկի ու պտուղ-բանջարեղենի մշակման ցանքատարածք: Այս հողերը ծևավորվում են 400-500-600 մմ տարեկան տեղումների պայմաններում: Անոն չորությունը փարբամ բուսականության ստեղծման հնարավորություն չի տալիս, ուստի հումուս շատ չի կարող կուտակվել: Այն տատանվում է 2-4 %-ի սահմաններում: Նշենք, որ շագանակագոյն հողերն ունեն տարբեր ենթատեսակներ՝ սկսած գորշ-շագանակագոյն մինչև մուգ շագանակագոյնը, որն անցում է կատարում և ահողին:**

Չազանակագոյն հողերում, մանավանդ հրաբխային սարավանդներում

ամենուր ընթանում է կարբոնատացման պրոցես: Չոր վայրերում հողերը զարգանում են տառացիորեն կարբոնատային հողմահարման կեղևի վրա: Տեղ-տեղ կուտակվում է նաև գիպս:

Հրաբխային լեռնալանջերին հողերը քարքարոտ են, կարիք ունեն քարագերծման, որը Հայաստանի Հանրապետությունում արդեն մեծ կիրառություն ունի: Ծագանակագոյն, ինչպես նաև գորշ հողերում ու նրանց տարատեսակներում հողային լուծույթների ռեակցիան թույլ հիմնային է, մեծ մասամբ ունեն թերև կավային կազմ: Ծագանակագոյն հողերը շատ պիտանի են հացահատիկային կոլտուրաների, ծխախոտի, պտուղ-բանջարեղենի մշակման համար: Այս հողերում թերությունը խոնավության պակասն է: Երաշխավորված թերքի համար արհեստական ոռոգումն անհրաժեշտ է: Դարձեր շարունակ հայ շինականը ջանքեր է գործադրել հողից առավելագույն թերք քամելու համար, սակայն հենցարից ստացել է 8-10, լավագույն տարիներին 12-15 ցենտներ հացահատիկ: Հաճախ է պատահել, որ ցանած սերմացուն նույնիսկ չի ստացվել: Արհեստական ոռոգման ու խելացի պարարտացման դեպքում կարելի է ստանալ 50-60 ցենտներ և նույնիսկ ավելի:

Ծագանակագոյն հողերը ենքակա են երողիայի և այս հողերը հակաբողինն պաշտպանության կարիք ունեն: XX դարում հողերի ավելի ինտենսիվ օգտագործման հետևանքով տեղատարումն ուժեղացել է, որից մեծացել է գետերի պղտորությունը:

**Լեռնային սևահողերը** ընդարձակ տարածություն են զբաղեցնում՝ 1600-1800 մ-ից բարձր սարավանդներում մինչև 2200-2400 մ բարձրությունները՝ Զավախքը, Լոռվա դաշտը, Աշոցքի, Կարսի, Արդահանի, Բասենի, Էրզրումի, Աշկալեի, Ուզուն-յալյայի, Խնուսի, Ալաշկերտի, Վանա լճի, Արագածի, Սևանա լճի, Սյունիքի, Կարմիրքը հովիտների ու սարավանդների համապատասխան բարձրություններում: Կվիմայական պայմանները համեմատարար խիստ են, ծմբանը կայուն ծնածածկույթ է առաջանում, հողը մակերևույթից սառչում է մինչև 20-40 սմ: Տեղումների քանակը 500-600-700 մմ է, սակայն ամռան երկրորդ կեսին հաճախ չորային է, լացուցիչ խոնավության կարիք ունի:

**Սևահողերը** ծևափորվում են հոն խոտածածկի տակ և շատ հարուստ են հումուսով՝ սկսած 4-6-ից մինչև 12-13%: Այս հողերն ունեն բարձր կենսակատիվություն: Ամառվա չորությունը հնարավորություն չի տալիս մանրօրգանիզմներին ակտիվորեն քայլայելու բուսական մնացորդները, հումուսը կուտակվում է: Մրանք թերքի հողեր են հացահատիկների, շարարի ճակնդելի, եղիպտացորենի, որոշ պտուղների (տաճա, խնձոր, սալոր, հատապտուղներ), բանջարեղենի մշակման համար: Եթե ոռոգում կիրառվի, թերքը երաշխավորված կլինի:

Հողերն ունեն կնճիկային կառուցվածք (ստրոկտուրա)՝ մեծ ծակոտկենու-

թյուն, հողի ռեակցիան թույլ թքու է, կարբոնատներով հարուստ հողերում՝ թույլ հիմնային: Մնացորդային հողմահարման կեղևի վրա ձևավորված սևահողերը լվացված են, և կալցիոնայի կոտակում տեղի չի ունենում: Կոտակումային հողմահարման կեղևի տարածման շրջաններում հողերը հարուստ են կարբոնատներով, հատկապես կալցիոնի կարբոնատով, որը կոտակվում է հողի ստորին հորիզոնում: Կարբոնատային սևահողերը մեծ մասամբ լավային ծածկողների վրա են:

**Բարձրադիր-վերընթաց գոտիականության մեջ՝ տափաստաններից՝ սևահողերից բարձր, տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետնային հողերը:** Սևահողերն աստիճանաբար անցում են կատարում մարգագետնային սևահողերին, ապա տիպիկ մարգագետնային հողերին, որոնք տարածվում են լեռնաշխարհի հյուսիսային մասերում 2100 մ-ից բարձր, իսկ հարավային մասերում՝ 2400-ից վեր:

Հողագոյացման նպաստավոր պայմաններ այստեղ չկան, ամառ կարճ է, մենոր երկարատև ու ճնածածկ: Հողագործների ուժեղ խոնավացումը նպաստավոր է ճիմ առաջացնող հացազգա-տարախոտային և ընդապոր բույսերի զարգացմանը, որոնց տակ ձևավորվում են հողերը: Հողային լուծույթների ռեակցիան թույլ թթվային է, որի հետևանքով կալցիոնը, ծծումբը և այլ շարժուն տարրեր ջրի միջոցով հեռանում են: Մանրօրգանիզմների գործունեությունը սահմանափակ է, ուստի բուսական մնացորդների բայրայումը թույլ է, հումուսի կոտակում է նկատվում մինչև 10-15 %: Հողերն ունեն դարչնագույն կամ շագանակագույն երանգ, սակավազոր են, ունեն կմախքի մեծ պարունակություն, թերև մեխանիկական կազմ: Հողերի տրամատը (պրոֆիլ) ցայտուն զատորոշված չէ, հողերը բավական հարուստ են ընդհանուր ազտով, փոսֆորով, շարժուն երկարով, բայց աղքատ են մատչելի փոսֆորից և ազդություն, թերթատվության բարձրացման համար արեհատական պարարտանյութերի կարիք ունեն, իսկ տեղ-տեղ էլ անհրաժեշտ է կրայնացում:

**Անտառային հողեր:** Հայկական լեռնաշխարհը անտառներով հարուստ չէ, և սրանք հիմնականում եղանական լեռներում են, որոնց տակ ձևավորվում են դարչնագույն, գորշ անտառային, ոչ մեծ զանգվածներով նաև պողողային ենթամոլխարային հողեր:

Դարչնագույն հողերը զբաղեցնում են անտառային գոտու ցածրադիր մասերը: Սև ծովի ափազանում Պոմտոսի լեռների լանջերին սրանք մեծ զարգացում չունեն, որպիսի տեղուների քանակը շատ է, խոնավության ավելցուկ կա: Այստեղ հիմնականում տարածվում են գորշ անտառային հողերը, իսկ 1000 մ-ից բարձր՝ փշատերև անտառների գոտում գորշ-պողողային հողերը: Հողի երկրորդ հորիզոնում նկատվում է պողողացման՝ ենթամոլխարացման թույլ պրոցես, և հողը բաց գույնի երանգ ունի: Նկատվում է, որ օրգանական թքուների ազդեցությամբ հումուսը բայրայվել և լվացվել է դեպի գլեյան հորիզոնը:

Իսկական դարչնագույն հողերը տարածվում են Փոքր Կովկասի անտառածածկ մասերում, Տավրոսի հարավային լանջերին՝ անտառային գոտու ստորին Ենթագոտում: Հողերի ձևավորումը տեղի է ունենում շվացող ջրային ռեժիմի, ամռան երկրորդ կեսին խոնավության պակասի պայմաններում:

Դարչնագույն հողերը բնութագրվում են հզոր պրոֆիլով, երբ ձևավորվում են փուլս ապարների, կուտակումային հողմահարման կեղևի վրա: Հողի գենետիկական հորիզոնները բույլ են արտահայտված: հարուստ է կավային բորաքաղցրությունը (ֆրակցիաներով), վերին հորիզոննում հումուսի քանակը հասնում է 5-8 %-ի, հողային լուծույթների ռեակցիան չեզոք է կամ բույլ-հիմնային: Ցածրադիր մասերում հաճախ Ենթահողում կուտակվում է կալցիումի կարունատ կամ զիաս:

Դարչնագույն հողերի ընդարձակ տարածություններ կան այնտեղ, որտեղ անտառները ոչնչացված են և հողերը մշակվում են: Սրանք մոտավորապես ունեն այն հատկանիշները, ինչ՝ մուգ շագանակագույն հողերը և պիտանի են թե՛ հացահատիկների և թե՛ շարահերկ կուլտուրաների, պտուղ-քանչարեղների մշակման համար:

Անտառային գորշ հողերը գոտու վերին մասն են զբաղեցնում, ձևավորվում են ավելի խիստ կլիմայական պայմաններում, տարածվում են մինչև մերձալպյան գոտին՝ սկսած 1000-1300 մ-ից մինչև 2100-2400 մ (հարավային մասերում): Սրանք ձևավորվում են բնիսու, հաճարենու անտառների տակ: Այս հողերը պարզորոշ արտահայտված գենետիկական հորիզոնները չունեն, վերին մասում նկատվում է հումուսային կուտակում, նրանից ներքև հողի գույնը բաց դարչնագույն է, երբեմն՝ դեղնավուն երանգով: Հումուսի քանակը 3-8% է, դեպի ներքև այն արագ նվազում է, հողերի լուծույթներն ունեն թրու ռեակցիա:

Այնտեղ, որտեղ մայր ապարները ներկայացված են կրաքարերով կամ դոլոմիտներով, զարգանում են հումուսակարքոնատային հողեր: Կալցիումի առատության շնորհիվ լուծույթների բրվայնությունը չեզոքանում է: Սրանք աչքի են ընկնում գենետիկական հորիզոնների պարզորոշ զատմամբ: Վերին հորիզոնը մուգ մոխրագույն է կամ սև, դեպի ցած՝ գույնն արագությամբ բացվում է: Հումուսի քանակը վերին հորիզոննում հասնում է 5-11%-ի: Վերին հորիզոննում ռեակցիան չեզոք է, իսկ ցածում՝ հիմնային:

**Գետահովտային հողեր:** Հայկական լեռնաշխարհի գետերի հովիտներում կան քավական հզոր գետաբերուկներ կամ գետաձային հստվածքներ, որոնց վրա զարգանում են տարբեր հատկանիշներ ունեցող հողեր, որոնք ընդհանուր տերմինով կոչվում են գետահովտային-դարավանդային հողեր (Ո. Եղիլյան, 1971): Սրանք տարբեր մեխանիկական կազմի են: տարբեր կլիմայական պայմանների և բուսական տարբեր ծածկի առկայությամբ ունեն

շեզոր կամ բույլ հիմնային ռեակցիա: Ելնելով գոտիական հատկանիշներից՝ ձևավորվում են տվյալ գոտուն մոտ հողեր: Սրանց մեջ Ո. Էդիլյանն առանձնացնում է ճահճային և նարգագետնային տիպերը:

Հայկական լեռնաշխարհը երկրագնդի հնագույն հողամշակման տարածքներից մեկն է: Հազարամյակներ շարունակ ամեն տարի թերքի հետ միասին հեռանում են բույսերին անհրաժեշտ քիմիական տարրեր: Այս եղանակով հողն աղքատանում է միներալային սննդից: Նրա արդյունավետությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է պակասորդային քիմիական տարրերը լրացնել արհեստականորեն՝ պարարտացման միջոցով: Քիմիական պարարտանյութերի օգտագործումը XX դարի երեսույթ է և թերքատվության բարձրացման հզոր աղդակ:

Քանի որ խոսվեց քիմիական պարարտանյութերի մասին, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ժողովրդի մեջ տարածված այն մտքին, թե պարարտանյութերով աճեցրած բույսերն անորակ ու վտանգավոր են: Այս միտքն ամբողջությամբ վերցրած ճիշտ չէ, բայց պարունակում է ճշնարտության հատիկ: Բացատրենք դա:

Բույսին անհրաժեշտ քիմիական տարրերը հողի մեջ կարող են լինել օպտիմալ քանակից շատ կամ քիչ: Երկուսն էլ բույսի համար նպաստավոր չեն: Որևէ քիմիական տարրի մեծ պարունակության դեպքում բույսը տառապում է, տվյալ քիմիական տարրը ջրի միջոցով մտնում է բույսի մեջ և կուտակվում այնտեղ: Շատ է պատահում, որ ավելորդ քանակը դառնում է բունավոր:

Պակասորդային քիմիական տարրերը կաշկանդում են բույսի զարգացումը, այն ընկճված է լինում, նոյնիսկ կարող է չափողակալել: Այս դեպքում պակասորդային քիմիական տարրերը մարդիկ արհեստականորեն ավելացնում են և հասցնում օպտիմումի: Բույսն աճում է նորմալ պայմաններում և տախի է լավագույն արդյունքը: Ուրեմն՝ նորմալ պարարտացման դեպքում ստեղծվում են միանգամայն նորմալ-օպտիմալ պայմաններ: Մինչդեռ ավելորդ քանակի պարարտացման միջոցով քիմիական տարրերի ավելցուկ է ստեղծվում, և ընկնում է թերքի որակը, նոյնիսկ կարող է բունավորում տեղի ունենալ: Նկատվել են դեպքեր, երբ Երևանում ձմերուկից մարդիկ բունավորվել են՝ նրա մեջ ավելորդ քանակի պարարտանյութի պատճառով: Հաճախ է պատահում, որ գյուղացին շիմանալով, թե իր հողը ինչ պարարտանյութի կարիք ունի, կամ ունի՞ արդյոք, հողին պատահական պարարտանյութի ավելորդ քանակ է տախիս. բույսն այլասերվում է, երբեմն նոյնիսկ գերած է տախիս, բայց որակը սարսափելի ընկնում է՝ հասնելով բունավորման աստիճանի: Այստեղից եղրակացություն՝ պարարտացումն անհրաժեշտ է պակասորդային տարրերը օպտիմումի հասցնելու համար միայն: Ավելորդ պարարտացումը վճառակար է: Այսպես պետք է հասկանալ երևույթի եռույթունը: Ուրեմն, յուրաքան-

Հյուր հողատեր կամ տնտեսության դեկավար պետք է ունենա իր հողի քիմիական անալիզը, իմանա՞ ինչի կարիք ունի հողը և ինչ շափով: Միշտ պետք է հիշել, որ ավելորդ պարարտանյութը վնասակար է:

## ԳԼՈՒԽ 10

# ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆԴԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

## I. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հողային ծածկույթը, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի բուսական աշխարհը բազմազան է ու հարուստ: Ըստ Ն. Ի. Վավիլովի՝ Ասիան բուսական տեսակների աղբյուրն է, որոց տեսակների հայրենիքն էլ Հայկական լեռնաշխարհն է: Տեսակների քանակն այստեղ հասնում է մոտ 4000-ի, և դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախևառաջ՝ աշխարհագրական դիրքով: Հյուսիսից բաֆանցում են Եվրոպայի բարեխառն գոտու բուսատեսակները, հարավից՝ իրանական, արևմուտքից՝ միջերկրածովային: Ուրեմն, Հայկական լեռնաշխարհը բուսական աշխարհի կիզակետ է դառնում, որտեղ միմյանց մեջ են միարժվում տարբեր աշխարհների բուսատեսակները: Մյուս հանգամանքը բարձրադիր-վերներաց գոտիականությունն է: Երրորդ հանգամանքը մարդու գործունեությունն է՝ մարդածին-անթրոպոգեն ազդակը, որն անցած 7-8 հազար տարիների ընթացքում, և մասնավորապես վերջին դարերում, մեծ փոփոխություններ է մտցրել բուսական ծածկույթի մեջ: Մշակովի հողատարածություններում բնական բուսատեսակները վերացել են, նրանց տեղը կուլտուրական բույսեր են աճում:

Ներկայում Հայկական լեռնաշխարհի ֆլորան ընդգրկում է ստորակարգ սպորավոր տեսակներ՝ ջրիմուներ, սնկեր, բարաքոսներ, ինչպես նաև բարձրակարգ անորթավոր բույսեր: Նշենք, որ առաջիններն ավելի քույլ են ուսումնասիրված, քան երկրորդները: Ստորև մենք քննարկելու ենք իմբնականում երկրորդները:

Հայկական լեռնաշխարհի բուսականությունը երկրաբանական պատմության ընթացքում անընդհատ զարգացում-էվոլուցիա է ապրել, առաջացել են տվյալ բնակլիմայական պայմաններին հարմարված տեսակներ, միևնույն ժամանակ պահպանվել են տասնյակ միջնամակարդ տարիների ճանապարհ անցած տեսակներ (նոյնիսկ կավճի ժամանակաշրջանից՝ Էվկալիպտը, սերպոյան, լաստենին, ծիրենին, մագնոլիան, տոսախը և այլն):

Վաղ անցյալում, ասենք՝ պակագենում, 30-50 միլիոն տարի առաջ Հայկական լեռնաշխարհի տեղում գոյություն ունեցող ցամաքներ-կղզիներում աճում էր արևադարձային ու մերձարևադարձային մշտադարձ բուսականություն: Նստվածքային ապարաշերտերում պահպանվել են այդ բույսերի բաժն մնացորդներն ու հետքերը: Կիմայական պայմանների փոփոխության հետևանքով մշտադարձների համար միջավայրը դառնում է ոչ նպաստավոր, հյուսիսից արշավող ցրտախմացկուն ու տերևաթափ տեսակները դրւուն մղում ջերմասերներին: Վերջիններս երես կարողանում են հաղթահարել ձմեռային ցրտերը, ապա գոյատևում են, իսկ երես չեն դիմանում, ապա իսպառ վերանում են: Եվ այսպես, հատկապես միոցենում, սրանից 10-15 միլիոն տարի առաջ, ինչպես արդեն նշվել է, Հայկական լեռնաշխարհի այսպես կոչված պոլտավյան մշտադարձ ֆլորան անցում է կատարում տուրքայան տերևաթափ ֆլորայի: Այս ժամանակ են հաստատվում հաճարենին, բոյսին, թևկիները, կաղնու տեսակները, խնձորենին, լորենին, կեռասենին, դժնիկը, թեղին, հացենին և այլն:

Միանգամայն այլ բնույթ ունեին հարավից քափանցող չորասեր տեսակները՝ կիսաանապատային և ֆրիգանորի բուսականությամբ, ինչպես նաև տրագանտային տափաստանային համակեցությունները: Բուսականությունն ընդհանրապես ենթարկվում է քսերոփիլացման:

Բայց սրանով չի սահմանափակվում բուսական աշխարհի փոփոխությունը: Չորրորդական ժամանակաշրջանում կիմայական ցրտեցում-սառցապատումները նույնպես որոշակի ազդեցություն են բռնել: Բարձրադիր գոտիականության մեջ գրտիների տեղաշարժ է կատարվել. յուրաքանչյուր գոտի մի քանի հարյուր մետրով իջել է լեռներն ի վար, սառցադաշտի նահանջից հետո՝ նորից բարձրացել: Վերջին տեղաշարժ-բարձրացումը տեղի է ունեցել նույիրում՝ շորոշ 8-10 հազար տարի առաջ:

Փոշեհատիկային անալիզը ցույց է տալիս, որ չորրորդական ժամանակաշրջանում ֆլորայի մի քանի հերթափոխում է կատարվել, ջերմասերներին փոխարինել են ցրտադիմացկունները և հակառակը: Այս բոլոր փաստերն ասում են այն մասին, որ ժամանակակից բուսական ծածկույթը տվյալ գոտում համեմատաբար նոր է և ավելի ցածրադիր գոտուց է բարձրացել:

Վերևում օգտագործեցինք «ֆլորա» բառը. այն լատինական ծագում ունի և նշանակում է ծաղիկ: Հին Հռոմի դիցարանության մեջ ֆլորան հասկերի, ծաղիկների, այգիների ծաղկման, պատանեկության և գարնանային զարդության հաստատությին է: Ի պատիվ այդ աստվածության՝ ապրիլի 28-ից մինչև մայիսի 3-ը կատարվել են ֆլորալիաներ՝ տոներ:

Ներկայումս ֆլորա ասենք հասկանում ենք պատմականորեն ձևակորպված բուսատեսակների համակեցություն, որը հատուկ է տվյալ տարածքին,

Կամ երկրի պատմական զարգացման որոշակի հատվածին: Ֆլորան և բուսականությունը նոյն հանկացությունները չեն: Առաջին դեպքում հաստափում է բուսատեսակների կազմը, իսկ երկրորդ դեպքում՝ բույսերի բնական համակեցությունը (անտառ, տափատան, սավաննա և այլն):

Պետք է ասել, որ բազմաստվածության շրջանում բուսական ծածկույթը և առանձին բույսեր պաշտամունքի առարկա են եղել: Օրինակ՝ Հայոց աշխարհում պաշտամունքի առարկա են եղել՝ արծաթափայլ բարդին, արևելյան սուխն, կաղճին, ընկուղենին, չինարը և անտառն ընդհանրապես: Արարատյան դաշտում Արմավիրի մոտ արհեստական աճտառ է տնկվել, սուսու տերևների սոսափյունից քրմերը գուշակություններ են կատարել: Ըստ Մ. Խորենացու մեջերած ավանդության՝ Արա Գեղեցիկի որդին՝ Անուշավանը, նվիրված էր Արմավիրի սրբազն սոսիներին, որի պատճառով նա կոչվում էր «Սոսանվեր»:

Քիխտոնեության ընդունումից հետո էլ ծառերի պաշտամունքը պահպանվում էր հայերի մեջ: Ներսես Շնորհալու «Թուղը ընդհանրական»-ում ասված է, որ արևորդիները (հեթանոս հայերը) Սամոսատում երկրապատմ էին ոչ միայն արև, այլև բարդի ծառերը: Կաղճին երկարակեցության, ուժի ու հզորության խորհրդանիշ էր:

Վերադարձանով բուսական ծածկույթի ձևավորման խնդրին՝ կարող ենք հաստատել, որ Հայկական լեռնաշխարհում իրար մեջ են բափանցել կովկասյան մեզոֆիլ և արմենաիրանական բանոֆիլ, արևմուտքից էլ՝ Միջերկրականի ավազանի բուսատեսակները: Նշանակում է՝ Հայկական լեռնաշխարհը բուսատեսակների մի կատարյալ բանզարան է:

Հայկական լեռնաշխարհի բուսական ծածկույթը հետաքրքրության օբյեկտ է եղել սկսած միջին դարերից: Եվրոպական բազմաթիվ բուսաբաններ այցելել են Հայկական լեռնաշխարհ և հավաքել բուսանուշներ: Հայտնի բուսաբաններից Պ. Տուրնեֆորը 18-րդ դարում բարձրացավ Արարատ և առաջին անգամ նա նկատեց բուսական ծածկույթի բարձրադիր գոտիականությունը: Հետագայում լեռնաշխարհ այցելեցին կամ բուսականությունը գիտականորեն մեկնաբանեցին՝ Կարլ Կոխը, Տրաուվետտերը, Վ. Սապոննիկովը, Ն. Կուզնեցովը, Յ. Սենգեղենը, Ա. Գրոսգեյմը, Ա. Թախտաջյանը, Գ. Սոսնովսկին, Գ. Յուրշենկոն, Լ. Սախատաձեն, Յ. Մովքիջյանը, Լ. Հարությունյանը, Կ. Խուրշույանը և ուրիշներ: Ներկայուն Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասի վերաբերյալ ունենք մանրակրկիտ ուսումնասիրություններ: Նոյնը չի կարելի ասել լեռնաշխարհի արևմտյան հարավյային հատվածների մասին:

Հայկական լեռնաշխարհի բուսածածկույթի առանձնահատկություններից մեկը է նումիզմն է: Էնդեմիկ են կոչվում այն օրգանիզմները (թե՛ բուսական, թե՛ կենդանական), որոնք ապրում են որոշակի տարածքում (արեալում)

և որիշ տեղերում այլևս չեն հանդիպում: Զարգացած էնդեմիզմի պատճառներից հիմնականը տարածքի գգալի շափով մեկուսացած լինելու հանգամանքն է՝ որքան կատարյալ է մեկուսացած, այնքան էնդեմիկները շատ կինեն: Կան երկրներ, որտեղ տեսակների կեսից ավելին էնդեմիկներ են (օրինակ, Նոր-Ջելանդիան, որտեղ բույսերի 72%-ը այլևս ոչ մի տեղ չի հանդիպում, կամ Սուրբ Հեղինեի կղզին՝ 85%-ը): Հայկական լեռնաշխարհի լեռնային բնույթը նույնպես դեր է խաղացել տեղական էնդեմիկների զարգացման գործում, և այստեղ ավելի քան 200 բուսատեսակներ էնդեմիկ են: Միայն Հայաստանի Հանրապետությունում էնդեմիկ բույսերի թիվը անցնում է 180-ից, որից 56-ը ծառարժային տեսակներն են (Հարուրյունյան Լ. Վ. և Ա. Լ., 1985, հ. 1): Հայտնի բուսաբաններ Դեկանդովը, Վավիլովը, Շուկովսկին գտնում են, որ Հայաստանը համարվում է խնձորենու, տանձենու, ցորենի և մի շարք այլ բույսերի տեսակնարյացման համաշխարհային խոշոր կենտրոն: Օրինակ, աշխարհում տարածված տանձենու 60 տեսակներից 15-ը էնդեմիկ են և ծընված են Հայկական լեռնաշխարհում:

Հայկական լեռնաշխարհի ֆլորայի առանձնահատկություններից մեկն էլ ոելիկտային (մասունքային) տեսակների առկայությունն է: Ոելիկտային են համարվում նրանք, որոնք պահպանվել են շատ հին ժամանակներից՝ հարմարվելով կյամայական փոփոխություններին: Կոլյսիդայում, Թալիշում, կամ լեռնային խոր կիրճեր-քարտոցներում որոշ տեսակներ պահպանվել և հասել են մեզ: Տորոսի, Դերենի, Աղստևի հովիտներում, Վանա լճի ափերին ոելիկտայիններից հայտնի են՝ սերվոյան, էվկալիպտը, տարսողիումը, պոնտական մրտավարող, մկնափուշը, բուժիչ դափնեկեռասը, վրացական սրվարդը, բարձր պարիակը, արջատիվենին, ձեղկվան, արևելյան սոսին, եղիպտական ուտենին, անտառային խաղողը, նոնենին, ծիրենին և այլն (Լ. Վ. և Ա. Լ. Հարուրյունյաններ, 1985): Նույն հեղինակները գրում են, որ 400 տեսակի բույսեր կան, որոնք տեղ են գտել «Կարմիր գրքում», իսկ 86 տեսակներ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անհետացման եզրին են գտնվում:

Այժմ համառոտակի նշենք Հայկական լեռնաշխարհի ֆլորայի կարևոր տիպերը՝ ըստ Լ. Ա. Թախտաջանի (1946):

**Անապատային** բուսատեսակները սահմանափակ տարածում ունեն՝ Նախիջևանի, Արարատյան դաշտերում, Կապուտան (Ուրմիա) լճի ավազանի ցածրավիր մասերում: Այս բուսականության առանձնահատկությունը խիստ բարոքիտությունն է՝ բույլ, ոչ հոծ ծածկը: Բույսերի մեծ մասն ունի խոր արմատային ցանց:

Հողի նկատմամբ ունեցած պահանջկուտության տեսակետից բուսականությունը կարելի է բաժանել երեք խմբի՝ աղասեր (հալոֆիլ), գիպսասեր (գիպսոֆիլ) և ավազասեր (պսամոֆիլ):

Աղասեր բույսերը տարածված են աղուտների վրա, հատկապես՝ Կապուտան (Ուրմիա) լճի ափերին: Աղասեր բույսերից են՝ օշանների մի քանի տեսակները, որոնք թփանման են՝ սվեդան, գեղյլիցան (աղապատուկ), սարսազմը, աղահասկիկը, Լեսինզի քաֆուրախոտը, կարմրանի տեսակները: Կան անհետացող տեսակներ, որոնք գրանցված են «Կարմիր գրքում»:

Գիպսասերները մեծ տարածում չունեն, հանդիպում են Արարատյան դաշտի արևելյան մասում կարմիր գիպսատար կավերի վրա: Կարևոր ներկայացուցիչներից են աղածաղիկը, տարբեր է ֆեմերներ (կարճակյացներ), գուգատերև թալլ, օշաններ, ժախտաջանի կարնուկը, հայկական ողնաքրովեր կամ փշաբարձերը:

Ավագասերները (պսամոֆիտ) մասն կղզյակներ են կազմում այնտեղ, որտեղ երկրի մակերևույթին մերկանում են գետաբերուկային (այլուվիալ) ավազներ: Սրանցից են՝ հազարատերևուկը, գեղյլիցան, գեղածնկիկը, Շովիցի գազերը, եղնապտուղը, ճայկտուցը և այլն: Հետաքրքիր է, որ հազարատերևուկի շորջը մրջնանոցներ են առաջանում: Աշնանը նշված բույսերի մեծ մասը կարմիր երանց է ընդունում:

**Կիսաանապատային** բուսականությունը տարածվում է նախալոնային շոր շրջաններում մինչև 1400, երեմն էլ մինչև 1500 մ բարձրությունների վրա՝ Մալաթիայի, Խարբերդի դաշտերում, Հայկական Տավրոսի ստորոտներում, Ուրմիո լճի ավագանում, Արարատյան և Նախիջևանի դաշտերում: Լեռնաշխարհի հյուսիսում բուսականության այս տիպը բացակայում է:

Կիսաանապատային բուսականությունը տարածված է ծագումնաբանական տեսակետից երեք տարբեր գետնահողերի (գրունտների) վրա՝ լճագետաբերուկային, ծալքաբեկորավոր լեռների և հրաբխային գոյացությունների վրա: Լեռնալանջերի մեծ մասը ծածկված է լանջային (դելյուվիալ) սփայտակավային, վիալիտա-կարբոնատային հողմահարման կեղևով, սակայն կան նաև մերկ լեռնալանջեր, որտեղ գետնի մակերևույթ են դուրս գալիս մայրական ապարները կամ նրանց բնկորատված զանգվածները՝ քարային քափվածքների ձևով: Կիսաանապատային բուսականության տակ ձևավորվել են հիմնականում գորշահողեր:

Ի տարբերություն անապատների՝ կիսաանապատներում բուսական ծածկույթի հիմնական ֆոնը ստեղծում են կարճակյացները (էֆեմերները, էֆեմերուիդները): Սրանք արագ զարգանում են զարնանը, երբ բավականաշափ խոնավություն կա. ամռանը դադարեցնում են բուսաճեցողությունը, աշնանը՝ խոնավության առկայության պայմաններում էֆեմերուիդները շարունակում են կենսագործունեությունը և սերմ են տալիս: Կան էֆեմերներ, որոնք 4-5 շաբաթում, մինչև ամառային շոգերի վրա հասնելը, ավարտում են կենսական ցիկլը և սերմակալում են:

Կիսաանապատում ամենից տարածված բուսատեսակը օշինդրն է՝ իր մի քանի տարատեսակներով։ Նույնիսկ ամռան շողին օշինդրային կիսաանապատը կանաչ մարգագետնի տպավորություն է բողնում։ Այլ բուսատեսակներից են՝ կապար, կոփսիա, նոնեա, լերդախտ, բորբոսատեսուկ, դաշտավլուկ, ճռոռուկ, եղջրազլիխիկ, կակաչ, սագատխուկ և այլն։

Եթե սարավանդի կամ լեռնալանջի վրա աճում է օշինդրային համակեցուրյուն, ապա դա նշան է այն քանի, որ գետնաջրերը խորն են, մազական քարձրացում չկա, և աղակալում լինել չի կարող։ Օշինդրային կիսաանապատը յուրացման տեսակետից ամենից նպաստավորն է, ոռոգման դեպքում այն դառնում է կուլտուրական լանջաֆու։

Կիսաանապատների վերին՝ ավելի բարձրադիր մասերում (1200-1500 մ) տարածված են նաև ծիմագոյացնող հացազգիներ՝ վետրախոտ և այլ տեսակներ. այստեղ անցում է կատարվում դեպի չոր տափաստաններ, և հաճախ դժվար է նրանց մեջ կտրուկ սահման դնել։

Ֆրիզանիդք բուսականուրյուն, այլ կերայ՝ լեռնա-չորային։ Տարածված է այն նույն շրջաններում, որտեղ կիսաանապատներն են՝ հարավահայաց լանջերում։ Այստեղ բեկորային հողմահարման կեղևն է տիրապետողը։ Ֆրիզանային բուսականուրյունը Ա. Թախտաջանը բաժանում է երեք խմբի՝ բուն ֆրիզանա, տրագանաններ և տումիլյարներ։

Ֆրիզանան արտահայտված է չորասեր փշոտ թփուտներով, առանձնապես բնորոշ են մանրատերները և բարձանման բույսերը՝ զազը (աստրագալները), ոզնարփերը, նշենին, վայրի տանձենին (թախտաջանի, Սոսնովկու, ուտատերն), արաքսյան բալենին, պալասյան դժնիկը կամ հրեշտակախոտը, խնկենին, ունարը, ցարին, եղեսպալը, արեղախոտը։ Մրանք մեծ մասամբ բզուկ են, գետնատարած։ Գարնանը աճում են սոխարմատ միամյա բույսեր։

Ֆրիզանան երեք համատարած համակցված ծածկույթ չի առաջացնում, հեռվից դիտելիս մերկացած ժայռերի տպավորություն է բողնում, զացվում է բնուրյան վայրի շունչը։ Գարնանը ծաղկում են սոխարմատները՝ միամյա կարճակյացները (էֆեմերները)՝ նշենիները, արաքսյան բալենին։ Անոնց կարճակյացները չորանում են, իսկ բազմամյա թփերը շարունակում են աճը և պտղակալում։

Ֆրիզանիդք բուսականուրյունն ունի տեսակներ, որոնք շատ վաղուց մարդիկ օգտագործել են որպես համեմունք (ուրց, եղեսպակ), դեղատու (ողջնիկ, արևոսկի), թելատու, եթերայուղատու, վիտամիններով հարուստ (մասրենի) բուսատեսակներ։

Ֆրիզանային բուսականուրյան մի առանձնահատուկ տիպ են տրագանտաթփերը՝ զազի մացառուտները, որոնք տարածված են խիստ քարքարոտ լանջերին։

Տոմիլյարները տարածված են կավճա-խճային հարթված և կոկված նախալոնային բլուրների վրա, լեռների հարավահայաց լանջերին: Ներկայացված են շրբնածաղկավոր բույսերի մացարուտներով: Ամենատարածվածը աբեղախտն է: Ցողունը ծածկված է սպիտակ խավով, իսկ տերևները մակերեսից սպիտակամոխրագույն մազմզովներ են: Այլ բույսերից են՝ ուրցը, եղեսպակը, օշինդրը և այլն:

Ֆրիգանակերպ համակեցությունների ֆլորան մեծ զարգացում ունի Կապուտան (Ուրմիա) լճի, Արարսի միջին և ստորին հոսանքների ավազանում և շատ մեծ հետաքրքրություն է ներկայացնում տեսակների հարաստությամբ, երերայուղատուներով, դեղատու և այլ տեսակներով: Երբ դիտում ենք լեռնալանջը, ապա այն հարուստ բուսական ծածկույթ չունի, եղածը հոծ չէ, նույնիկ կարելի է ասել բուսականությամբ աղքատ է, բայց զարմանայի կերպով տեսակները շատ են:

**Տափաստաններ:** Տափաստանային բուսականություն ասելով հասկանում ենք խոտածածկ տարածք, որտեղ բույսերի վերգետնյա մասը միամյա է, աշնանը խոտածածկն ամբողջովին չորանում է: Հայկական լեռնաշխարհի տարածքի մոտ 40%-ը ծածկված է տափաստաններով, որոնք ըստ Հայկական Սովետական Հանրագիտարանի՝ ունեն մինչև 20 ենթատիպեր: Սրանցից առավել բնորոշներն են՝ կծնախոնային, շյուղախոտային, փետրախոտային, սեպային, բոշխային, օշինդրային, տարախոտային, հացազգա-տարախոտային, կելերային, տրագականտային տափաստանները: Ամենատարածվածը մարգագետնատափաստաններն են, բավական ընդարձակ տարածություն են զբաղեցնում նաև տրագականքային տափաստանները:

Տափաստաններն ընդգրկում են միջին բարձրության լեռների գոտին՝ 1300-1500 մետրից 2200-2400 մ, բայց որոշ շրջաններում դրանք իջնում են մինչև 500 մ, այլ տեղերում բարձրանում մինչև 2500 մ: Օրինակ՝ Սավալանի, Սոհունի (Սեխենդի) լանջերին, Վանա լճի ավազանում, Զանգեզուրում: Հյուսիսից հարավ տափաստանների վերին սահմանը բարձրանում է, և սա վերաբերում է բոլոր բարձրադիր գոտիներին:

Ոչ մի բուսական տիպ այնքան չի կրել մարդու ազդեցությունը, որքան տափաստանը: 8-9 հազար տարի է, ինչ մարդը տափաստանը վարում է և այնտեղից քամում է բերք ու բարիք: Հազարամյակների ընթացքում տափաստանների բնական տարածքները սեղմվեցին և այժմ պահպանվել են միայն լեռնալանջերի մեծ թերությունների վրա կամ այնտեղ, որտեղ գործանի խոփը չի կարող վարել: Տափաստանային բուսականության տարածքներ են համարվում Զավախսը, Արդահանի, Կարսի, Շիրակի, Լոռվա, Բասենի, Կարինի, Ալաշկերտի, Երզնկայի, Աշկալեի, Մանազկերտի, Հարքի, Տարոնի, Խնուրի, Վանա, Սևանա, Ուրմիո լճերի միջին բարձրության գոգավորությունների սարահարթերի ու հովիտների գոտին:

Տափաստանները հիմնականում կարելի է բաժանել երկու հարկի՝ ստորին և վերին: Ստորինը հարում է կիսաանապատներին և կոչվում է չոր տափաստան. դեռ զգացվում է կիսաանապատի շունչը: Խոնավորյամբ առատ տարիներին բուսականությունն առատ է, չորային տարիներին՝ խիստ ընկճած: Առանց արիեստական ոռոգման հաճախ բերքը չորանում է, ցանած սերմացուն անգամ չի ստացվում: Միայն առատ անձրևների դեպքում կարող է բերք ստացվել: Հիմնական բուսատեսակներն են՝ փետրախոտը, շյուղախոտը, բարակուտնիկը (կելերիան), սեզը, կենդանածին դաշտավլուկը, այլ երկշարիլավորներ:

Տափաստանների վերին ենթագոտին բավարար խոնավորյուն ունի, և տափաստանը հացազգա-տարախոտայինն է, քսերոֆիլ տեսակները համեմատաբար քիչ են: Շատ են երիցուկները, խոշորածաղիկ բրվիճը, կծմախոտը, չոր լանջերիկ տարածվում են տրագականքային տափաստանները: Վ. Սապոնիկովը Ալաշկերտից հարավ՝ դաշտում, գտել է Arum Oriental բույսը: Նա գրում է, որ ցողունը այնքան տաք է, որ ձեռքն այրում է, տերևները պաղ են:

**Ըսերոֆիլ (չորատեր) նոսրանտառներ:** Տափաստանից կամ կիսաանապատից անցումը դեպի անտառների անցողիկ տիպի միջոցով: Սրանք ոչ բարձրահասակ ծառների ու թփերի նոսր լուսավոր տնկարկներ են: Տարածված են Փոքր Կովկասի արտաքին լանջերի ցածրադիր մասերում, Զանգեզորում, Տավրոսի համակարգի հարավային՝ մինչև 800-1000 մ բարձրություններում: Տարածված բուսատեսակներից են՝ փոշնի, պիստակնի, ցարի, քենի, նոնենի, հոնի, հասմիկ, ղժնիկ, ցախկեռաս, ապիրակ: Լեռնաշխարհի հարավային չորային մասերում, օրինակ՝ Մելրու կիրճում այս տեսակները կարող են հասնել մինչև 2000 մ բարձրության: Լեռնաշխարհի հարավում, հարավ-արևելքում մեծ տարածում ունի նաև զիկին: Երկրի հարավային մասերում տարածված է արևելյան զիկին կամ արշան, հյուսիսային մասերում՝ գարշահոտ զիկին: Սևանի ավազանում զիկին բարձրանում է մինչև մերձալպյան գոտի:

Ըսերոֆիլ նոսրանտառների համակեցություններից է շիրլակը, որ առաջացնում է անանցանելի մացառուտներ: Գերիշխում է ցաքին, խոտային բույսերից՝ կծմախոտը: Քանի իշնում ենք դեպի հարավ, շիրլակն այնքան չորասեր է դառնում:

**Անտառներ:** Կարծիք կա, որ Հայաստանը մի ժամանակ անտառածածկ է եղել: Այս միտքը, ամբողջովին վերցրած, ճիշտ չէ, բայց պարունակում է ճշգնարտության հատիկ, որը հետևյալն է. անտառածածկությունն ավելի մեծ է եղել, քան այժմ է, և անտառների արեալները կրճատվել են մարդու անմիջական ազդեցությամբ: Մենք ունենք բազմաթիվ փաստեր, որոնք անժխտելիութեն ցույց են տալիս, որ անտառային բուսականությունն աստիճանաբար սեղմվել է: Այսպես, օրինակ, Գեղամա լեռների ժայռապատկերներում կան

Եղջերուների և այլ անտառային կենդանիների պատկերներ: Ենելիքի «նկարիչները» չեն կարող իրենցից հճարել Եղջերվի պատկերները, նշանակում է՝ Գեղանա լնոներում նրանք տեսել են այդ կենդանիներին կամ որսացել են: Եղջեր են դեպքեր, երբ Սևանի ձկնորսները արևելյան ափին ձկնորսական ցանցի մեջ հայտնաբերել են Եղջերվի եղջյուրներ, որպիսիք անվնաս պահպանվել են ջրի տակ: Դեռևս անցյալ դարի կեսերին, ըստ գրավոր հիշատակությունների, Նոր-Բայազետի (այժմ՝ Գավառ) հիմնարկներն ու դպրոցները ձմռանը ջեռուցելու նպատակով վառելափայտը թերել են Արեգունիի ափի անտառներից, որտեղ այժմ գեր մի ծառ չի պահպանվել: Մատենագիրները հիշատակում են Դերսիմի, Մնձորի, Տավրոսի հյուսիսային լանջերի անտառների մասին, որտեղ այժմ դրանք կամ նվազել են, կամ որոշ տեղերում խապա վերացել: Հայկական լեռնաշխարհում հոչակված էր Սարիղամիշի սոճու անտառը (35 հազ. դեսյատին), որը շինափայտ էր մատակարարում քազմաքիվ շրջանների: Ըստ Վերջին տեղեկությունների՝ այդ անտառն այնքան է կրծատվել, որ իսպառ վերացման վտանգի տակ է:

Անտառների կրծատման պատճառները երկուսն են՝ վարելահող ստեղծելու համար մասսայական հատումները և անտառազուրկ շրջաններին շինանյութ ու վառելափայտ հայրայթելը: Պետք է նշել, որ անցյալ հազարամյակ-



Նկ. 50. Փշտերև անտառ Կորի հովտում (Բակուրիանի)

Ներում շինափայտի պրոբլեմը բնակիչների համար միշտ էլ եղել է ամենասուր պրոբլեմներից մեկը: Միշտ էլ կաղնու, ընկույզնու, սոճու փայտը շատ բարձր է գնահատվել:

Ներկայում Հայկական լեռնաշխարհը համարվում է անտառից աղքատ երկիր. նրա ողջ տարածքի միայն շուրջ 10%-ն է անտառապատ, իսկ Միջնաշխարհը ընդհանրապես անտառազորկ է: Անտառները տարածվում են եղբային լեռնաշղթաների արտաքին լանջերին, որտեղ խոնավությունը առատ է: Խնչպես նշում են Լ. Վ. և Ս. Լ. Հարությունյանները (1985), ԽՍՀՄ-ում անտառածկությունը կազմում էր 34%, Ֆրանսիայում՝ 19, Հյուսիսային և Կենտրոնական Ամերիկայում՝ 33, Հարավային Ամերիկայում՝ 50,9, Աֆրիկայում՝ 25, Վրացական ԽՍՀ-ում՝ 37%, Հայկական ԽՍՀ-ում՝ 10%: Եթե ԽՍՀՄ-ում մեկ շնչին բաժին էր հասնում 3,9 հեկտար անտառ, ապա Հայկական ԽՍՀ-ում՝ 0,12 հեկտար: Մոտավորապես նոյն պատճերն է նաև ամբողջ Հայկական լեռնաշխարհում:

Հայաստանի Հանրապետության դենդրաֆլորայով (ծառարփային ֆլորա) զբաղվել են շատերը: Լ. Վ. և Ս. Լ. Հարությունյանների երկիրատոր մենագրությունում (1985) մանրակրկիտ կերպով ներկայացված են հանրապետության անտառների բուսական ծածկույթի կազմը և անտառների տարածման օրինաչափությունները:

Անտառային յուրահատուկ ծածկույթ ունի Պոնտական շրջանը, որ տարածվում է Պոնտական և Մուրիկյան լեռնաշղթաների հյուսիսային լանջերին: Այստեղ անտառն սկսվում է ծովափից ու բարձրանում է մինչև 2100-2200 մ բարձրությունները, ընդ որում, շատ լավ արտահայտված է վերընթաց գոտիականությունը: Մինչև 1000 մ տարածվում են լայնատերև ավորները, որանից բարձր՝ խառը և ապա՝ փշատերև ավորները, այնտեղից վեր՝ մերձալայան և ապյան մարգագետինները:

Մինչև 500 մ բարձրությունների վրա վայրի (բնական) բուսականությունը քիչ է պահպանվել կամ ուղղակի ոչնչացել է մարդու ներգործությամբ: Խիտ բնակչության առկայության պայմաններում գոտին լրիվ կամ գրեթե լրիվ կուլտուրականացված է: Աճեցնում են մերձարև աղարձային կուլտուրաներ՝ թթյի քուփ, ծխախոտ, ցիտրոսներ, ազնիվ դափնի, դեկորատիվ ծառեր, պտղատու այլ բույսեր, դեկորատիվ արմավենի, մագնոլիա, էվկալիպտ: Զերմուրյան և խոնավության պայմաններում բուսականությունը փթթում է, հաճախ անտառն անանցանելի է. լիաններն այնպես են խճճում անտառը, որ հնարավոր չէ բափանցել նրա մեջ: Մինչև 1000 մ՝ ծառատեսակներից աճում են՝ կաղնի, շագանակնենի, լաստենի, հաճարենի, բոխի, լիաններ, կոլխիդյան փշարմավ (սղոցի), կոլխիդյան բաղեղ, պոնտական մրտավարդ, դափնեկեռաս և այլն:

Սկսած 1000 մ-ից՝ լայնատերև ավորներին խառնվում են եղևնի, եղևենի,

սոճի, և քանի բարձրանում ենք վեր, այնքան նրանք դառնում են տիբրապետող: Կան նաև լայնատերև ավորներ, որ հասնում են անտարի վերին սահմանին, ինչպես օրինակ՝ կեշին: Անտարի վերին մասերում ծառատեսակները դառնում են զածած ու ծուռտիկ:

Փոքր Կովկասի անտառները տարածվում են սկսած 500 մ-ից (հյուսիսում), սակայն մասսայաբար՝ 1000 մ-ից և հասնում են 2200-2500 մ-ի: Լ. Վ. Հարությունյանն անտառը բաժանում է երեք հարկի: Ներքին անտառային ենթագոտին 550-1000 մ վրա է: Ցածրուտ մացառային տնկարկներ են՝ դաժիկաղնային ֆորմացիաներ (արևելյան բոխի կամ դաժի), վրացական կաղնի, հացենի, կովկասյան բոխի, վրացական ու դաշտային թխկի, իլենի, սզնի: Կան թփատեսակներ՝ հոնին, ճապկին, մասրենին, հասմիկը, տփենին և այլն:

Միջին անտառային գոտին 900-1800 մ-ի վրա է: Սա ամենաբարձր արդյունավետությունն ունի, սաղարթախիտ է և լավ պահպանված է հատկապես հյուսիսահայաց լանջերին: Ամենից տարածվածը արևելյան հաճարենին է: Գոտում անտառը հաջողությամբ վերականգնվում է: Հաճարենու անտառը մի քանի տիպերով է ներկայացված: Հարավահայաց լանջերին մեծ մասամբ տարածված են կաղնու անտառներ: Սրանք երկու հիմնական տեսակ ունեն՝ վրացական կաղնի (ստորին ենթագոտում) և արևելյան կաղնի (ավելի բարձրադիր ենթագոտում): Միջին անտառային ենթագոտում շատ են նաև կովկասյան բոխին, թխկին, լորենին, կաղամախին, կեռասենին, ընկուզենին, ենթանտառում՝ ցախկեռաս, իլենի, մոշ, մոռ: Անտառում շատ են պըտղատուները՝ տանձենին, խնձորենին և այլն: Հարկ է այստեղ նշել, որ հյուսիսից հարավ հաճարենին աստիճանաբար պակասում և Զանգեզորում իսպառ վերանում է:

Փոքր Կովկասում, հատկապես հյուսիսային մասերում հանդիպում են փշատերևավորներ՝ կովկասյան սոճի՝ թորժումի շրջանում, Աջարա գետի հովտում, Լոռիում, Շորիուի վերին հոսանքների ավազանում, իսկ ավելի հարավ՝ Սարիդամիջի շրջանում:

Վերին անտառային գոտում ձմեռը երկարատև է, աճում են ավելի ցրտադիմացկուն տեսակներ, անտառն՝ ընկճված է: Հարավահայաց լանջերին աճում են՝ կաղնի, բոխի, թխկի, կեշի, արռսենի և այլն:

Ինչպես Թախտաջանն է գրում, անտառային գոտին Փոքր Կովկասի հարավում ու Զանգեզորում ներկայացված է որպես վրկանյան անտառների ածանցուկ: Այստեղ ունիկտային ծառատեսակներ կան, ինչպես օրինակ՝ ծելկվան: Անտառները չորտրյան կնիք են կրում, լավ զարգացած է ենթանտառը: Մեղրու կիրճում տարածված է արաքյան կաղնին, որը հաճախ թփուտային ձևով է արտահայտված:

Անտառածածկությամբ աշքի է ընկնում Տավրոսի համակարգը, մասնա-

վրապես նրա արևելյան հատվածը՝ Մեծ Զաքի ավագանը: Հարավային լանջերին մինչև 800 մ-ի վրա շիբյակ է ու ֆրիզան: 1000 մ-ից վեր՝ բարձր արդյունավետության անտառներ են, որտեղ խառնված են նաև միջերկրականի տիպի տեսակներ: Մեծ տարածում ունեն՝ կաղճին, շագանակենին, ընկուզենին, բրենին, բզենին, տաճճենին, խնձորենին, լորենին, բարդին և այլն: Հայ պատմիչները մեծ գովեստով են խոսում Տարոնի, Սասունի, Աղճահի անտառների մասին: Մատվելը գրում է, որ Տավրոսի անտառները շատ նման են Հարավային Ալպերի անտառներին:

Հարկ է այստեղ հիշատակել մի զարմանահրաշ երևոյթի մասին: Դա գագագեն է: Անտառում օդից սաղարի վրա իջնում է մեղրանման քաղցր հյութ: Տարոնի և Սասունի բնակիցները այդ հյութը հավաքում են և օգտագործում որպես քաղցր սնունդ: Երանից պատրաստում են օշարակ, օգտագործում խմորենին մեջ և այլն: Ի՞նչ բան է այդ: Բույսերի ծաղկափոշին ու նեկտարը միախառնված առաջացնում են մածուցիկ զանգված: Գրում են, որ Վերջին ժամանակներս զազան խիստ պակասել է:

Տավրոսի անտառների ամուր բնափայտը բարձր է գնահատվել, և հայերը Եփրատի ու Տիգրիսի միջոցով փայտանյութը տեղափոխել են Բարելոն ու արաբական երկրներ: Որոշ պատմաբաններ, օրինակ, S. Գամկրելիձեն և Վ. Խվանովը գտնում են, որ երկանիվ մարտակառքերը մ. թ. ա. III հազարամյակում առաջին անգամ բրոնզե գործիքներով այստեղ են պատրաստվել՝ տեղական ամուր փայտից: Հին դարերում այդ մարտակառքերը ունեցել են «ատոմային ռումբի» նշանակություն:

Տավրոսի անտառներում մեծ տոկոս են կազմել պտղատուները՝ տանձենին, խնձորենին, ընկուզենին, մանրակաղնի բիուտները, բրենին, նոնենին, բզենին, սալորենին, խեժատու տեսակները: Բնակիչները լայնորեն օգտվել են անտառների բարիքներից:

Միջնաշխարհում անտառները շատ հազվադեպ են հանդիպում: Մի ժամանակ հոչակված էր Սարիղամիշի սոճու անտառը, սակայն վերջերս այն քավական նոսրացել ու կրծատվել է: Ներսիմում, Մնձուրի լեռներում պահպանվել են լայնատերև անտառներ: Սրանք բարձր արդյունավետություն չունեն, իմնական տեսակը կաղճին է:

Անհրաժեշտ է շեշտել, որ անտառահատումը շատ մեծ վնաս է բերում հողային ծածկոցին. ինտենսիվացնում է էրոզիան: Վերջինս այժմ ինտենսիվ է արտահայտված այն շրջաններում, որոնք մի ժամանակ անտառածածկ են եղել, ինչպես օրինակ՝ Սևանի արևելյան ափի լեռնալանջերին: Այստեղ անտառահատումից հետո ուժեղացել է նաև սելավային գործունեությունը:

**Մերձալայան մարգագետիններ:** Անտառից բարձր տարածվում են մարգագետիններ, որոնք բաժանվում են երկու տիպի՝ մերձալայան և ալպյան:

Մերձալպյան մարգագետինները բարձրանում են մինչև 2800-3000 մ և մի փոքր ավելի՝ հատկապես լեռնաշխարհի հարավային մասերում: Սրանք դասկան զարգացում ունեն հատկապես լեռնաշխարհի հյուսիսային մասերում՝ հրաբխային ծածկոցների վրա, որտեղ բավական ընդարձակ տարածություններ են զբաղեցնում մերձկատարային սարավանդները: Հարք կամ փոքրաբեր լանջերում էրողիոն այրոցեսմերը բույլ են արտահայտված, մարգագետինները զարգանալու մեծ հնարավորություն ունեն: Ախալքալարի, Արդահանի, Կարսի, Աշոցքի, Քյուրակնի, Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի բարձրավանդակներում մերձալպյան մարգագետիններն աշքի են ընկնում փարթամուրյանք, հարուստ ֆլորիստիկական կազմով՝ մոտ 200 տեսակներով: Շիմ առաջացնող բույսերն են՝ հացազգինները, բոշխները, լոբազգինները: Շատ են տարախոտերը, սրանք ամառային ամիսներին տարրեր երանգ են տալիս մարգագետնին: Գարնանը ծաղկում են կոճղեզային բույսերը՝ ձնադիլկները, սազասիտուկը, մկնասիխը, աստղաշուշանը, ապա՝ հրանունկները, նրանից հետո անոռոտուկը, վարդակակաչը, երեքնուկները, կակաչները, ավելի ուշ՝ վարդակարմռավուն թթվիճը, կղմուխը, վուշը, բոսրուկը, զանգակածաղիկները, լվածաղիկները, երիցուկները. սրանց հետ միասին՝ հացազգիններ, ցործուկը, գարին, դաշտավլուկը՝ շյուղախոտը, բոշխազգինները: Ամռան տարբեր ամիսներին մարգագետինը տարրեր երանգ ունի՝ կախված այն բանից, թե որ տեսակներն են ծաղկել:

Մերձալպյան մարգագետինները բարձրախուտ են և շատ հատվածներում խոտհարքներ են ներկայացնում: Պետք է ասել, որ արածեցման հետևանքով տեսակային կազմը լուրջ փոփոխության է ենթարկվում: Արժեքավոր տեսակները ուտփում են անասունների կողմից, սերմ չեն տալիս, իսկ այն տեսակները, որ չեն ուտփում (պասկուալ բույսեր) ազատ կերպով աճում, սերմ են տալիս և բազմանում: Ա. Թախտաջանը ենթալպյան մարգագետինների գոտում առանձնացնում է նորանոտառուտների և կրիոֆիլ-ցրտադիմացկուն նորանոտառի գոտին՝ անտառի անցողիկ ֆորմացիան՝ դեպի ստորին ալպիական բուսականությունը:

**Ալպյան մարգագետիններ:** Սրանք տարածված են բարձր լեռնային զանգվածների վրա՝ սկսած 2800-3000 մետրից մինչև հավերժական ձյան կամ մերձձնային գոտին: Այս մարգագետիններում ամառը կարճատև է, և բուսաճեղողության ժամանակամիջոցը՝ շատ կարճ: Բացի այդ շերմաստիճանային տատանումները մեծ են, ուստի բույսերը հարմարված են նման պայմաններին՝ ցրտադիմացկուն են: Կան նույնիսկ բույսեր, որոնց ծաղկաթերթիկները գիշերը սառչում են, արևը ծագելուց հետո՝ հալվում, սակայն բույսերը շարունակում են կենսական այրոցեսմերը:

Ալպյան մարգագետինների առանձնահատկություններից մեկն էլ գետ-

նատարած լինելն է՝ ի տարբերություն նախորդ գոտու բույսերի: Այս գոտու բույսերը մոտ են մնում գետնին՝ տաքություն ստանալու համար: Բուսական համակեցությունները կազմված են հացազիներից, բոշխերից ու տարախուտերից: Աճում են՝ փայլապեսնի, շյուղախոտ, գնարբուկ, տատասկ, զանգակածաղիկ, անմոռուկ, հրանուկ, բերենիկն, ճոճոռուկ, երեքնուկ, խմբախոտ, դաշտավլուկ, գայլարար և այլն:

Հարք և խոնավ հատվածներում հանդիպում են տարախոտային ալպյան գորգեր, որտեղ բոլոր բույսերը տառացիորեն գետնին փռված են և գորգի տպավորություն են բողնում:

Հայկական լեռնաշխարհի հարավային լեռնային զանգվածներում ալպյան ու մերձալպյան բուսականությունը աչքի է ընկնում տեսակների առատությամբ, սակայն խոնավության համեմատաբար պակասության պատճառով արյունավետությունն այնքան մեծ չէ, որքան հյուսիսային մասերում:

Ալպյան մարգագետինների բարձրադիր-մերձնային մասերում ժայռերի ու քարացրունների ճեղքերում աճում է ժայռոֆիլ (ժայռասեր) բուսականություն: Սրանք բարձիկանան խոտաբույսեր են՝ սողացողներ, քարկոտրուկներ, սխարմատներ և երկշաքիլավորներ:

**Ճահճային բուսականություն:** Հայկական լեռնաշխարհին ճահճային բուսականությունը հասուն չէ, սակայն ունիեթի գոգավոր մասերում տեղ-տեղ հանդիպում են ճահճայներ: Ճահճային ոչ մեծ արեալներ կան Սև ծովի ափին, Կողմիսի (Կողմիսայի) դաշտավայրում, Վերին Կուրի գոգավորությունում, Վերին-Ախուրյանի գոգավորությունում, Կարինի դաշտում (Շամք Կարնո), Լոռվա դաշտում, Գայլատու լճի ավազանում (Արարատից հյուսիսարևմտուք) և այլն: Տարբեր բարձրադիր գոտիններում ճահճային բուսականությունը տարբեր տեսակային կազմ ունի: Արարատյան և Նախիջևանի դաշտերում, Կապուտան (Ուրմիա) լճի ափամերձ ճահճայներում աճում է եղեգն, ջրոսպ, բյուրատերևուկ, ջրկոտեն և այլն: Բարձրադիր ճահճայներում եղեգնը անհետանում է, շատ են մասունները, բոշխերը, ճահճախոտը:

Հայկական լեռնաշխարհի ջրային ավազաններից՝ լճերն ունեն ջրային բուսականություն. սրանց ներկայացուցիչներն են շերեփուկախոտը, ջրոսպը, բյուրատերևուկը, եղջերատերև ջրատճին, կապուտականաչ ջրիմուները, դիատոմային, գորշ ջրիմունները և այլն: Սրանք մեծ զարգացում ունեն ցածրադիր լճերում Մեծամորում, Պարզում, Ծովքում և այլն: Ավելի բարձրադիր օլիգոտրոֆ լճերում ջրային բույսերը արագ չեն զարգանում: Սևանի մակարդակի իջևնան հետևանքով մեծ աշխուժացում է նկատվում կապուտականաչ ջրիմունների աճի մեջ:

Հայկական լեռնաշխարհում բուսական ծածկույթը պարզորշ արտահայտված գոտիականություն ունի, կան նաև ինտրազոնալ երևույթներ, այ-

սինքը՝ տվյալ գոտու սահմաններում կարող են աճել այնպիսի բույսեր, որոնք այդ գոտուն բնորոշ չեն (այսպես օրինակ՝ մարգագետնային համակեցությունը անտառային գոտում կամ հակառակը, կամ ասենք՝ ծակիճը կիսաանապատում և այլն):

**Կուլտուրական բուսականություն:** Մարդն իր հազարամյա գործունեության ընթացքում զգալի փոփոխություններ է կատարել բուսական ծածկույթի մեջ և մշակել է այն բույսերը, որոնք իրեն պետք են: Անիշշելի ժամանակներից տափաստանում մշակվում են հացահատիկ, ցորեն, զարի, տարեկան, կորեկ, յուղատու կտավատ, բանջարա-բռստանային կուլտուրաներ՝ կարտոֆիլ, կաղամբ, զազար, վարունգ, լոբի, ոսպ, ճակնդեղ, կանաչների տեսակներ: Վերջին ժամանակներս մուտք է գործել եգիպտացորենը, շաքարի ճակղնդեղ, ծխախոտ: Տափաստանային գոտու պտղատուններ են տանձենին, խնձորենին, սալորենին, բալենին, որոց հատապտուղներ:

Հայոց աշխարհը պանրի, մածնի, բրու կարնամքերի, գինու և հացարդիւման հնագույն հանրահայտ շրջան է եղել: Մարդիկ գաղափար չեն ունեցել մանրէների մասին, սակայն վիրձի հիման վրա կատարել են մանրէների բնական, նպատակապաց սելեկցիա: Օրինակ, մեզ մոտ մերել են մածունի տեսակներ, որոնք այլ երկրներում չկան: Մատենադարանում կան ծեռագրեր ու հիշատակություններ միջավայրը քայլայող սնկերի, որու դեմ պայքարի միջոցների մասին:

Լեռնաշխարհի կիսանապատային ու չոր տափաստանային գոտին միշտ հայտնի է եղել բարեբեր հովհաններով՝ Մալարիայի, Խարբերդի, Բալահովտի, Տարոնի, Արարատյան, Նախշինանի, Կարմիրջրի (Աջի) գետի հովհաններում մշակել են բամբակ, բրինձ, խաղող, դեղձ, ծիրան, սերկևիլ, տանձ, խնձոր, քթենի, բռստանա-բանջարանցային կուլտուրաներ:

Վերջին ժամանակներս ՀՀ տարածքում նոր կուլտուրաներ են ծխախոտը, խորիննին. ընդ որում, ծխախոտը բարձրացել է մինչև 2200 մ (Սևանի ավազան) և իր որակով չի զիջում մերձսև ծովյան շրջանի ծխախոտին:

Հայկական լեռնաշխարհի բուսական ծածկույթում հատուկ տեղ են գտնել դեղաբույսերը (սզմի, դժմիկ, գիհի, ծորենի, մասրենի և այլն): Դրանց ուսումնասիրությունը կատարվել է դեռևս նեղիքում: Նեղաբույսերի կիրառման վերաբերյալ դեռևս 6 հազար տարի առաջ գրավոր հիշատակություններ կան շումերների մոտ: Ֆիտոբերապիան Հայաստան աշխարհում ծաղկում է ապրել միջնադարում: Նշանավոր ներկայացուցիչներն են՝ Գրիգոր Մագիստրոսը, Մխիթար Հերացին, Ամիրդովլար Ամասիացին, Գրիգորիսը, Ստեփան Շահրիմանյանը: Դեղաբույսերի վերաբերյալ այժմ էլ կան բազմաթիվ հրատարակություններ:

Հայկական լեռնաշխարհում կան երերատու բուսատեսակներ՝ ավելի 246

քան 130 տեսակ (ուրց, անթառամ, օշինդր և այլն), ներկատու բույսեր՝ շուրջ 120 տեսակ (իշակարնուկ, դժնիկ, տորոն և այլն): Չատ են վիտամինատու տեսակները՝ շուրջ 140, խեժատուները և այլն:

Հատուկ պետք է նշել խոնավ մերձարևադարձային գոտում մշակվող կուլտուրաների մասին: Բնակլիմայական պայմանները բույլ են տալիս այստեղ շուրջ տարի զբաղվել հողագործությամբ՝ բուսամշակությամբ: Հայտնի են՝ թեյի բուփը, ցիտրուսները, ազնիկ դափնին, արմավը, խորման, հատապը-տուբները:

Տափրոսի հարավային ստորոտներում կլիմայական պայմանները նպաստավոր են միջերկրականի բուսատեսակների մշակման համար: Զարգացել է ձիթենիների մշակությունը: Ձիթենին հասել է մինչև Վանա լճի ավագանը, բայց զանգվածային տարածում չունի, միայն ավելի տաք հատվածներում են մշակում:

Բուսամշակության, հատկապես մոնոկուլտուրաների մշակման հետևանքով բնական կենսաբազմազանությունը խախտվում է: Քանի գնում ցանքատարածություններն ու տնկարկները ընդարձակվում են: Կենսաբազմազանության պահպանության նպատակով շատ կարևոր միջոցառում պետք է կիրառել ստեղծել լանդշաֆտային արգելանոցներ՝ աճեցնելու անհետացող և էներգիկ տեսակներ՝ այս ձևով պահպանելով կենսաբազմազանությունը:

## 2. ԿԵՆԴԱՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հայկական լեռնաշխարհի ֆաունան նույնպես հարուստ է տեսակներով: Այստեղ այնքան տեսակներ կան, որքան տարածքով 30 անգամ մեծ Եվրոպայում, ինչը պայմանավորված է նույն այն հանգամանքներով, որ քերված էին Հայկական լեռնաշխարհի ֆլորան ներկայացնելիս: Այստեղ միմյանց են խաչվում երեք կենդանաշխարհագրական օկրուգներ՝ հյուսիսից՝ Կովկասյան, հարավ-արևելքից՝ Իրանա-Հայկական, արևմուտքից՝ Փոքրասիական: Այս երեք օկրուգները մտնում են Հոլարկտիկական կենդանաբանական մարզի մեջ:

Հայոց աշխարհի կենդանական աշխարհով հետաքրքրվել են շատ վաղուցվանից: Գեռևս 4-րդ դարում Բարսեղ Կեսարացին լուրջ կերպով կենդանիների ցուցակներ էր կազմում: Կենդանաբանական առաջին հայերեն աշխատությունը կազմել է Աբրահամ Կոստանդինապոլսեցին 17-րդ դարի սկզբին:

Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհի գիտական ուսումնա-

սիրությունները ծավալվեցին սկսած 19-րդ դարից: 1841 թ. ակադ. Եջիվալյու հրատարակեց «Կասպ-Կովկասյան ֆառնան» աշխատությունը (ոռուերեն), որտեղ ներկայացվում էր նաև Հայկական լեռնաշխարհի ֆառնան: Ֆառնայի ուսումնասիրման խոչոր ներկայացուցիչներ են Կ. Ա. Սատունինը, Կ. Կեսալերը, Լալայանցը, Ա. Բ. Շեկովյանիկովը, Ս. Կ. Դալը, Ս. Կ. Չերնովը, Ա. Լյայստերը, Վ. Անանյանը և որիշներ: Ներկայումս ուսումնասիրություններ կատարվում են ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում: Գոյություն ունի Բնության պետական թանգարան:

Հայկական լեռնաշխարհի ֆառնայի տեսակների թիվը ամենում է 17 հազարից: Միայն ողնաշարավորները՝ մոտ 500, որոնցից կարճասուններ՝ մոտ 90, քչուններ՝ 360, անողնաշարներ՝ 1000, սողուններ՝ 40: Ամենից շատը միջատներն են՝ ավելի քան 10 հազար:

Ժամանակակից կենդանական աշխարհը ձևափորվել է տասնյակ միլիոնափոր տարիների էվոլյուցիոն զարգացման ընթացքում և այսօրվա տեսքը ստացել չորրորդականի վերջում հողոցնում:

Հարկ է նշել, որ ոչ վար անցյալում նեղիքում կենդանական աշխարհը շատ ավելի հարուստ է եղել, քան այժմ է: Մարդու ներգործությամբ ֆառնան զգալիորեն աղքատացել է:

Գյումրիի մասի կոմիտենատի կառուցման ընթացքում 1930-ական թվականներին հողային աշխատանքներ կատարելիս՝ հայտնաբերվեց չորրորդական ժամանակաշրջանի բրածո կենդանիների գերեզմանոց, որտեղ միմյանց կողք-կողքի հանդիպում էին անհետացած շատ կենդանիների ուկորներ՝ տրոգոնտերի փոյի, ոնզեղջորդի, Ստենոնի ծիու, ուղտի, ցուլի, եղջերվի և այլն: Մենք ենթադրում ենք, որ միանգամից այդքան շատ կենդանիների ոչընչացման պատճառը հրաբխային արտավիժումներն են եղել: Ըստ երևոյթին հրաբխային գազերը խեղդել են կենդանիներին, և վտանգի պահին սրանք բնազդաբար խմբվել են ու այդպես ոչնչացել: Լ. Ա. Ավագյանը (1959), մանրամասն ուսումնասիրեց այդ գերեզմանոցի բրածո մնացորդները և հանգեց եզրակացության, որ այն ունի մինդել, մինդել-ռիսյան հասակ, այսինքն՝ պատկանում է ստորին չորրորդական ժամանակաշրջանին: Այդ ժամանակ Շիրակի լիճն արդեն չորացել էր, շրջապատում ամենուր հյութալի մարգագետիններ էին աճում, կային անտառային զանգվածներ, և այս միջավայրում անարգել բազմանում էին խոտակերներ: Հայկական լեռնաշխարհի շատ այլ հատվածներում ևս հայտնաբերվել են չորրորդականի ֆառնայի բրածո մնացորդներ: Մենք արդեն մեկ անգամ նշել ենք Սևանի հատակից՝ ձկնորսների «որսած» եղջյունների (եղջերվի) մասին: Եղջերուներն ապրել են լճի արևելյան ափի անտառներում և այլն:

Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի և այլ հրաբխային թարձրա-

վանդակներում, ալպյան գոտում, ինչպես նշվել է, կան հազարավոր ժայռապատկերներ, որտեղ հանդիպում են՝ ձիու, ցոլի, անտիլոպի, քարայծի, այծքաղի, ոչխարի, եղջերվի, վագրայուծի, առյուծի և այլ կենդանիների պատկերներ: Նեղլիքի «Ակարիչները» չեն կարող հնարել այդ կենդանիների նկարները, որոնման դրանք գոյություն են ունեցել, բայց այժմ չկան: Օրինակ՝ ժայռապատկերներից մեկում, ինչպես նշվել է, պատկերված է սայլ, որին լծված են այծքաղներ (տուրեր). Նշանակում է նեղլիքում մարդու արդեն ընտելացրած է եղիլ այծքաղներին: Ինչո՞ւ են նրանք հետագայում անհետացել, մնում է անհայտ: Հատկապես ոչնչացել են խոշոր կենդանիները. դա մարդու ձեռքի գործն է:

Կենդանական աշխարհի տարածման առանձնահատկություններից մեկը նրա շարժունակությունն է, որ չի կարելի ասել բուսականության վերաբերյալ: Կան շատ կենդանիներ, որոնք ամառային ամիսներին բարձրանում են մինչև ալպյան ու մերձալպյան գոտին, իսկ ձմեռը իջնում են ցած՝ հասնում կիսանապատային գոտի: Շատ է պատահում, օրինակ, զայլերը ձմռանը հարձակվում են ցածրադիր գոտիների անասունների ու մարդկանց վրա: Կամ չփող թռչունները Եգիպտոսից ու Սիցագետքից կամ հյուսիսային երկրներից գալիս հասնում են Հայկական լեռնաշխարհ, այստեղ բույն դնում, սերունդ տալիս:

Կան շատ կենդանիներ, որ դժվար է ասել, թե բարձրադիր որ լանջաֆտային գոտուն են պատկանում: Միայն անտառային կենդանիներն են, որ թիզ թե շատ կապված են անտառի հետ և այնտեղից դուրս ապրել չեն կարող: Սրանք էլ գոտու սահմաններում ուղղաձիգ կերպով կարող են տեղաշարժել անել: Կան շատ կրծողներ ու թռչուններ, որոնք ամենուր են տարածված:

Խոչոր կենդանարան Ս. Կ. Դալը (1954) Հայաստանի Հանրապետության տարածքում ֆաունան՝ գլխավորապես ողնաշարավորները քննարկում է ըստ կենդանա-աշխարհագրական օկրուգների: Հետևելով նրան՝ մենք ստորև նկարագրում ենք Հայկական լեռնաշխարհն ամբողջությամբ, որ նույնպես իր մեջ է ընդգրկում երեք օկրուգներ:


1. **Էրանա-Հայկական օկրուգ:** Այս օկրուգն իր մեջ ներառում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան մասը՝ Ուրմիո լճի ավազանը, Արաքսի ստորին հոսանքի ավազանը, հասնում է մինչև Արարատյան գոգավորություն: Բուսականությունը քննարկելիս տեսանք, որ այստեղ չորային-արիդ պայմաններում ամռան ամիսներին ջրի խփած պակաս է զգացվում, բույսերը խաճճվում են, համայնապատկերը գորշ-դեղնավուն է, անհրապույր: Թվում է, թե բնուրյունն անկենդան է, բայց իրականում պատկերը հակառակն է. կենդանական աշխարհում անհատները շատ չեն, բայց տեսակները շատ բազմազան են: Ցերեկային ժամերին, երբ արևը վերևից այրում է և գետնի մա-

Կերևոյթը տաքանում է  $70\text{--}75^{\circ}$ , կենդանիները բաքնվում են ստվերոտ տեղերում ժայռերի ճեղքերում, քարերի տակ: Արևի մայր մտնելուց հետո, եր անտանելի շոգը մեղմանում է, կենդանիները աշխուժանում են, սկսվում է նրանց ակտիվ կենսագործունեությունը:

Բոլոր կենդանիները հարմարված են շոգին ու չորությանը. կան շատերը, մասնավորապես սողունները, որոնք ջուր չեն խնում և բավարարվում են որսած կենդանու կամ միջատի մարմնում եղած խոնավությամբ:

Այս օկրուգի կարնասուններից հայտնի են խոզուկը (ՃՐԿՈԲՐԱՅ), որը տարածված է Կարմիրջուր (Աջի) գետի ավազանի ֆրիզանուիլներում կամ գետափերի շամբուտներում, Մեղրու կիրճում, հասնում է Կապան, Գորիս, Նախիջևան: Խոզուկը բնակվում է քարանձավներում, ժայռերի ճեղքերում: Սնվում է վայրի պտուղներով, սղսարմատներով: Խրանում խոզուկը չեն որսում, ուստի այնտեղ ավելի լավ է պահպանվել, մինչդեռ Հայաստանի Հանրապետության տարածքում հազվադեպ է հանդիպում: Նշված օկրուգի գետափերին շամբուտներում հանդիպում է վարազ, այն պատահում է նաև ֆրիզանուիլներում: Շատ են մանր կրծողները՝ պակամկներ, ճագարամկներ, նապաստակ, պարսկական ավազանուկ, սրանց հետևում են աղվեսները: Օկրուգի լեռնային բարձր և անմատչելի մասերում պահպանվել են որոշ քանակի բեզոարյան այծեր, վայրի ոչխարներ (մոլֆրոններ), որոնք ոչնչացման վտանգի տակ են: Գիշատիչներից շատ սակավ հանդիպում են՝ մանուկ, բրոնի, ընձառյուծ, շնագայլ, գորշ արջ, սիրիական արջ, գայլ: Պետք է նշել, որ խոչը կենդանիները աստիճանաբար պակասում են, ոչնչացման վտանգի տակ են և պաշտպանության կարիք ունեն:

Օկրուգին շատ բնորոշ են սողունները. կան մողեսների բազմազան տեսակներ՝ կովկասյան ագամա, շատ են օձերը՝ վիշապօձը, մողեսակերպ օձը, տափաստանային իժը: Վերջինս կենդանածին է և ծնում է մինչև 8 ձագ, որոնցից յուրաքանչյուրի երկարությունը մինչև 160 մմ է, դուրս է գալիս որսի միայն գիշերային ժամերին, բունավոր է: Թունավոր են եղջերավոր իժը, գյուրզան: Վերջինս ամենաքունավորն է, ապրում է մինչև 1500-1700 մ բարձրությունների գոտում, ժայռոտ, քարքարոտ տեղանքում, ձմռանը քուն է մըս-



Նկ. 51. Քարայծ

նույն ժայռերի ճեղքերում ու քարերի տակ, երկարությունը՝ մինչև 150-175 սմ: Մընջաղը ընկնելուն պես նա աշխուժանում է, դուրս է զայխ որսի, սննդում է մանր կրծողներով, մողեսներով, բոչուններով: Անոան երկրորդ կեսին նրա թույնը շատ ուժեղ է և արագորեն մահ է պատճառում խոշոր կենդանիներին ու մարդկանց: Թույնը օգտագործվում է քշկական նպատակներով: Այլ սույններից են կրիաները, որ հանդիպում են գետափերին: Այս օկրուգի թունավոր կենդանիներից են կարիճներն ու մորմերը, որոնք նոյնապես ցերեկային ժամերին քարենվում են:

Թոշունները տեսակներով շատ են ու բազմազան. ճնճղուկներ, շիկահավ, սիտիլ, այգիներում՝ փայտփոր, բվեճ, սերինոս, աղավնի, մոխրագոյն կռունկ, ագրավ, ճայ, պիրոյ, կաշաղակ, կարավ, հայկական ու կասպիական լուար, արոս, արծիվ, օձակեր, անգոյ և այլն: Սրանց մեծ մասը չփող է, լեռնաշխարհ են զայխ անոանը՝ սերունդ տապու:

Լեռնաշխարհի բնակիչները մեծ ակնածանքով են խնամում արագիններին, որոնք ամառն անց են կացնում այստեղ: Սրանք բույնը շինում են բարձր ծառերի, սյուների, ծխնելույզների վրա, սերունդ տալուց հետո չփում են հարավ: Ըստ ավանդության՝ եթե արագիլը բույն է դնում որևէ մեկի տան կտուրին կամ այգում, ապա դա հաջորդություն կրերի տանտիրոջը:

Զափազանց հարուստ է օկրուգի միջատների աշխարհը: Հաճախ է պատահում, որ Իրանից բափանցում է մորեխը, եղել են մորեխի ուժեղ բռնկումներ, որ արձանագրված են միջնադարյան մատյաններում: Ցանքերը ամբողջովին ոչնչացել են, ասկայն բնությունը կարողացել է հաղթահարել նման բռնկումները և կարգավորել դրանց աճը:

Միջատների մասին խոսելու անպայման պետք է նշել որդան կարմիրի (կոշենիկ կամ կարմրորդ) մասին: Սա փոքրիկ միջատ է կարմիր գույնի, որից միջին դարերում կարմիր ներկ են ստուցել: Այս ներկը եղել է հայերի մենաշրնորիք և շատ բարձր է գնահատվել Եվրոպայում: Այդ ներկով ներկել են գորգի թելերը, իսկ դրանցով կատարված մանրանկարները մինչև օրս չեն կորցրել իրենց բարմությունը:

**2. Փոքրասիական օկրուգ:** Ամենից ընդարձակն է Հայկական լեռնաշխարհում: Ընդգրկում է Եփրատի, Վանա լիճ ավազանները, Արաքսի վերնագավառը, Շիրակի, Կարսի, Զավախիքի սարահարքերը, Գայլգետի, Ծորոխի վերին հոսանքների ավազանները: Արաքատյան և Նախիջևանի գոգավորությունները Փոքրասիական և Իրանա-Հայկական օկրուգների ամենասերտ շփման մարգերն են, և դժվար է ասել, թե նշված գոգավորությունները որ օկրուգին են ավելի շատ հարում:

Փոքրասիական օկրուգի ֆաունայի ամենաբնորոշ կենդանիները կրծողներն են՝ ավազամկներ, դաշտամկներ, ճագարամկներ, առնետներ, համստեր, նապատակ: Սրանց հետևում են աղվեսները, որոնք մեծ տարածում ունեն,

ապա՝ գորշուկը, որը ձմռանը քուն է մտնում: Մանր կրծողների զարգացման բռնկումներ են լինում, որի պատճառը մինչև հիմա պարզաբանված չէ. սակայն բնուրյունը երևոյթների կարգավիրման մի զարմանայի մեխանիզմ ունի՝ պրոցեսի բուն զարգացումը իր մեջ ունի այդ պրոցեսի արգելակման հզոր մեխանիզմ, կարծ ժամանակամիջոցում այն կարգավորվում է: Եղել է տարի, երբ ամեն քայլափոխում կրծողների բներ են՝ դաշտը ծածկված է բներով, կարծես դրանցից այլևս փրկուրյուն չկա: Հաջորդ տարին՝ դրանք անհետացել են, ամեն ինչ նորմալ ընթացք է ստացել: Մանր կրծողները մեծ վնաս են տալիս ցանքատարածություններին: Պատահել է՝ դաշտամկների բներից յուրաքանչյուրում հայտնաբերվել է մի քանի կիլոգրամ հացահատիկ: Այստեղից պարզ է դառնում, թե կրծողների դեմ պայքարը որքան կարևոր է:

Փօքրասիական օկրուզի գիշատիչներից են գայլը, շերտավոր բորենին, աղվեսը: Գայլերի դեմ ինտենսիվ պայքար է տարվում, որովհետև սրանք մեծ վնաս են պատճառում մանր եղջերավոր անասուններին:

Գետափերի սրահային անտառներում խոչոր կենդանիներից դեռևս պահպանվել են վայրի խոզը, եղեգնակատուն, ջրասամույրը, ջրային սրբնակը, ջրառնետը: Մեծամոր լճում ու համանուն գետում կլիմայավարժեցվում է ճահճակուղը (նուտրիա):

Հարուստ է սողունների աշխարհը: Սողունները մեծ տարածում ունեն հատկապես լեռնաշխարհի հարավային մասերում, որտեղ համեմատարար չորային է՝ գյուրզան, եղջերավոր իժը, սահնօձը, վիշապօձը, լրտուն, փոքր վիշապօձը, իժերի տեսակներ, որոնց մի մասը բունավոր է: Շատ են մողեսները՝ կլորագույն մողեսը, կովկասյան ազաման, փօքրասիական մողեսը:

Թոշնաշխարհը հարուստ է: Կան կեռնեխներ, եղեգնահավ, արար (անտառակարավ), երաշտահավ, ճոճահավ, որը հյուսում է կախված բներ՝ թշնամիներից պաշտպանվելու համար: Տարածված են՝ ալկին, եղեգնային մկնաբազե, ջրարծիկ, լոր, մոխրագոյն կաքավ, քարակաքավ, ուլար (լեռնային հրնեկահավ), կուոնկ: Վերջինս փետրվարի 24-ից մինչև ապրիլ 6-ը լեռնաշխարհով բռչում է դեպի հյուսիս, սակայն որոշ անհատներ մարգագետիններում ու ճահճուտներում բույն են դնում, սերունդ տալիս: Շատ են տարածված արոսները, կտցարները, կարապները, սագերը, քաղերը, ձկնկուները, ճայերը: Մրանք լճերի ու ճահճների շրջաններում են:



Մինչև Սևանի մակարդակի իջեցումը, նրա հարավ-արևելյան ափին մոտ գտնվում էր Գիլ-

Նկ. 52. Կեռնեխ (խայտարդիտ քարակեռնեխ)

լի լիճը՝ շրջապատված ճահիճներով: Ամռանն այստեղ մեծ աշխուժություն էր՝ բազմաթիվ տեսակի ջրային բոչուններ հանգրվանում էին և սերունդ տալիս: Լճի չորացումից հետո այդ բոչուններն այլևս Գիլլի շրջանը չեն գալիս, միայն Սևանի մեջ թափվող որոշ գետերի գետաբերանային ոչ մեծ ճահիճներում են հանդիպում, այն էլ ոչ մեծ քանակով: Ջրային բոչուններ ամռանը հավաքվում են Վանա, Ծովակ Հյուսիս (Չլլըր), Լռովա, Զավախսի, Վերին Կուրի գոգավորությունների մասն լճերի մոտ ու ճահճուտներում: Այժմ աշխատանք է տարվում Գիլլին վերականգնելու:

Օկրուգի սահմաններում ապրում են անգղ, արծիվ, օձակեր, բու, կկու (որ ուրիշի բներում է ձու դնում), հոպով, ագռավ, ճնճողկ, սարյակ, ծիծեռնակ, կաշաղակ, դրախտապան, դաշտային ծիուկ, ստխակ և այլն:

Օկրուգի գետերում ու լճերում բազմաթիվ տեսակի ձկներ կան: Ամենից տարածվածը գետային կարմրախայտն է, սա հանդիպում է ամենուր՝ Եփրատի, Արածանիի, սրանց վտակների, Արաքսի ջրերում: Կա նաև ծածան, իշխան, կարմրակն (մանրածածան կամ կարմրածածան), բեղլու (Մեծամորում): Սևանա լճում իշխանի տեսակները չորսն են՝ գեղարքունի, ամռային բախտակ, ձմեռային բախտակ, բոջակ: Սակայն լճի մակարդակի արհեստական իշեցման հետևանքով կենսաբանական պայմանները խիստ վատացել են, և իշխանը հայտնվել է կործանման եզրին: 1924 թվականից Սևան է բերվել սիզը, որն այստեղ բարենպաստ պայմաններ գտավ և այժմ ունի արդյունագործական նշանակություն: Սևանում է ապրում նաև կողակը: Վանա լճում ապրում է տառեխը, որը գետերի գետաբերանային մասերում է: Լճի ջրի աղիության պատճառով այստեղ այլ տեսակներ չկան: Կապուտանում (Ուրմիա) նույնակա աղիության պատճառով ձկներ ու այլ կենդանիներ չկան, բացի որոշ բակտերիաներից: Լեռնաշխարհի հյուսիսային մասի հրաբխային բարձրավանդակում տարածված լճերում բազմանում է ծածանը:

Օկրուգը հարուստ է միջատներով՝ զանազան բգեցներ, ճանճեր, ճպուներ, վայրի մեղուներ և այլն: Մարդը կարողացել է մեղուներին «ընտելացնել»: Այստեղ բազմանում է կովկասյան տիպի մեղուն: Այն շատ արդյունավետ է լեռնաշխարհի հյուսիսային, հյուսիս-արևելյան անտառային շրջաններում ու Տավրոսի համակարգի հովիտներում: Հոչակված է ճորոխի ավազանի, Տարոնի, Վայրի ու այլ շրջանների մեղորը:



Նկ. 53. Իշխան ձուկ

**3. Կովկասյան օկրուզը:** Զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևելյան, հիմնականում՝ անտառային շրջանները: Կլիման համեմատարար մեղմ է, խոնավացման գործակիցը 0,5-ից բարձր է, շատ հատվածներում 1,0-ից բարձր:

Կարճատևներից բնորոշ են զույգասմբակավորները կամ կճղակավորները՝ եղջերուն, այժյամը, քարայծը, պահպանվել են գորշ արջը, վարազը, անտառային կատուն, լուսանը, գայլը, աղվեսը: Չատ են մանր կրծողները՝ անտառային մուկը, առնետները, նապաստակը, խլորդը, պարսկական սլյուտը: Պետք է ասել, որ մարդու գործունեության հետևանքով խոշոր կենդանիները հասել են ոչնչացման եզրին և պաշտպանության կարիք ունեն:

Անտառներում սողունները շատ չեն, նույնիսկ կարելի է ասել՝ քիչ են՝ խոնավության առատության պատճառով: Հանդիպում են մողես, լորտու, կրիա:

Մեծ բազմազանություն են ներկայացնում թռչունները՝ շիկահավ, երզող թռչուններ, արոս, դեղնածղրիկներ, փայտփորիկ, երաշտահավ, անտառային սիտեղ, ծվծվան, արտույտ, սերինոս, բու, բվեճ, բագե, անտառակտցար, անտառաղավնի, կովկասյան մայրահավ, մոխրագույն կաքավ, ագռավ, սարյակ, խածկտիկ, ճանճապան, սոխակ և այլն: Անտառը շատ է հարուստ միջատներով՝ ճպուններ, բգեզներ, ճանճեր, սրանք սնունդ են թռչուններին:

Այսուել նշենք, որ Հայկական լեռնաշխարհի թռչունների կեսից ավելին չվող է, տեղական թռչունները կեսից պակաս են, և սրանց մեծ մասը միջատակեր է: Թվաքանակով համեմատարար քիչ են գիշատիչները:

Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը անհիշելի ժամանակներից որսի տարածք է եղել: Որսի կենդանիներ են համարվել՝ եղջերուն, այծյամը, քարայծը, վայրի ոչխարը, վարազը, նապաստակը: Աղվամազավոր կենդանիներին (աղվես, գայլ, սանույր, կուլը, սլյու) որսացել են մորքու համար: Որսի օբյեկտներ են եղել նաև թռչունները: Ներկայումս Անդրկովկասի հանրապետություններում որսորդության նկատմամբ որոշակի հսկողություն կա, արգելված է շատ կենդանիների որսը՝ ընդհանրապես, մի շարք կենդանիների որսը սահմանափակված է:

Նշեցինք, որ կենդանական աշխարհն աղքատացել է մարդու ներգործությամբ: Ոչնչացման եզրին հասած կենդանիների թիվը մոտ 300 է: Անոնաշարներից 48 ներկայացուցիչներ գրանցված էին ԽՍՀՄ-ի տարածքի «Կարմիր գրքում», իսկ ողնաշարաբնորներից 99-ը՝ ՀՀ «Կարմիր գրքում»: Այսօր այդ թիվը կարող է կրկնապատկվել:

## ԼԱՆԴԱՖՏԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ

Լեռնային երկրներում հորիզոնական (լայնական) գոնայականության ֆոնի վրա ձևավորվում են վերընթաց-բարձրադիր լանդշաֆտային գոտիները՝ ցածից դեպի վեր այնպէս, ինչպէս գոնաները՝ հասարակածից մինչև քեւո, գրեթե նույն հերթականությամբ, մասն բացառություններով։ Ինչպէս արդեն նշվել է, այդ գոնաները լեռներում կոչվում են գոտիներ (չնայած ոմանք դրանք դեռևս գոնաներ են անվանում):

Լանդշաֆտի հասկացությունը ամենից շատ շրջանառության մեջ էր ԽՍՀՄ-ում, որ նշանակում էր բնական տարածքային համալիր, և սոցիալիստական երկրներում։ Վերջին ժամանակներս այն արդեն միջազգային ճանաչում է ստացել և Միավորված Ազգերի Կազմակերպություններում հոլովում է լանդշաֆտի գաղափարը։ համոզվել են, որ կենսարազմազանությունը դիտել միայն բուսական ու կենդանական աշխարհների շրջանակներում թերի կլինի։ Անհրաժեշտ է լանդշաֆտի բոլոր բաղադրիչների համալիրը պահպանել, քանի որ բուսական ու կենդանական աշխարհները առանց մյուս բաղադրիչների գոյություն ունենալ չեն կարող։ Վերջին տարիներս մի շարք պետությունների բնապահպանական կոնվենցիաներում առաջ է քաշվում ամբողջական լանդշաֆտի գաղափարը, որի պահպանությունը պահանջում է համալիր մոտենում։

Լանդշաֆտը աշխարհագրական բաղանքի մի հատվածն է, որտեղ երկրաբանական հիմքը, ռելիեֆը, կլիման, ջրերը, հողը, բուսականությունը, կենդանական աշխարհը և մարդու գործունեությունը միահյուսված համալիր են ներկայացնում։ տարբերվելով հարևան լանդշաֆտներից։

Լանդշաֆտները թե՛ հարբավայրային երկրներում, թե՛ լեռներում խմբավորվում են առանձին տիպերի մեջ, գոնաներ ու գոտիներ են ներկայացնում։ Օրինակ՝ տունդրայի լանդշաֆտ, տայգայի լանդշաֆտ, անապատային լանդշաֆտ և այլն։ Ստորև քննարկենք այդ տիպարանական միավորները՝ Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները։

Լեռնային երկրներում լանդշաֆտային գոտիների ձևավորման մեջ հիմնական գործուներ են՝ դասնում տեղի բարձրությունն ու լանջերի կողմնադրությունը, որոնցով պայմանավորվում է կլիման։ Ըստ բարձրության՝ կլիման փոխվում է, որից էլ փոխվում են ջրերը, հողերը, բուսական ու կենդանական աշխարհը։

Դեռևս 5-րդ դարում պատմահայր Մովսես Խորենացին նկատել է, որ ըստ

բարձրության կլիման փոխվում է: 18-րդ դարում ֆրանսիացի բնախույզ Պ. Տուրնեֆորը բարձրացավ Արարատ, նկատեց բուսական ծածկույթի գոտիական փոփոխությունը: 19-րդ դարի վերջին Վ. Վ. Դոկուչաևը մշակեց վերընթաց-բարձրադիր գոտիականության տեսությունը՝ Կովկաս և Հայկական լեռնաշխարհ կատարած այցելության շնորհիվ:

Պետք է նշել, որ 20-րդ դարում լանդշաֆտագիտությունը բուռն կերպով զարգացավ հատկապես ԽՍՀՄ-ում: Անդրկովկասի երեք հանրապետություններում ծավալվեցին լանդշաֆտագիտական հետազոտություններ (Ա. Բ. Բաղրամյան, Գ. Բ. Գրիգորյան, Գ. Ա. Պողոսյան, Վ. Յ. Խալարով, Գ. Բ. Ուկիերա, Վ. Զ. Գուլիսաշվիլի, Խ. Գ. Զակելի, Ն. Լ. Բերուչաշվիլի, Մ. Ա. Մուսեիբրով և ուրիշներ):

Հայկական լեռնաշխարհի, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության, լանդշաֆտների հետազոտման ընթացքում ցայտուն կերպով երևան եկավ վերընթաց գոտիականության երկու տիպ՝ լեռների արտաքին-հողմահայաց լանջերի տիպ և փակ գոգավորությունների, այսինքն՝ Միջնաշխարհի լանդշաֆտների տիպ: Մրանք իրարից տարբերվում են երկու ինքնուրույն լանդշաֆտային շարքերի գոյությամբ (Բաղրամյան, Ազախանյանց, Բերուչաշվիլի, Խալարով և ուրիշներ):

Հետևելով այս ուղղությանը՝ լանդշաֆտային առումով մենք Հայկական լեռնաշխարհը բաժանում ենք երկու տիպերի՝ արտաքին լանջերի տիպ և Միջնաշխարհի տիպ: Մրանք էլ իրենց հերթին կարող են բաժանվել ավելի փոքր մասերի՝ տեղանքների, բնատեղամասերի և շատ ավելի փոքր՝ ֆացիաների:

## 1. ԱՐՏԱՔԻՆ ԼԵՌՆԱԼԱՆԶԵՐԻ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐ


Այս տիպում առանձնացնում ենք երեք շրջաններ՝ Պոնտա-Սոսրիկյան (Սևսիսերի)-Սերծունովյան, Փոքր Կովկասյան և Տավրոսյան:

Կլիման քննարկելիս մենք տեսանք, որ նշված լեռնային համակարգերում կլիմայական պայմաններն աչքի են ընկնում մեղմությամբ և տեղումների համեմատական առատությամբ, որի շնորհիվ անտառային ծածկույթն այստեղ ընդարձակ տարածք է զբաղեցնում: Սակայն այդ տիպի լանդշաֆտների մեջ հյուսիս-արևելյան և հարավի միջև զգալի տարբերություններ կան, ուստի սրանք նկարագրենք առանձին-առանձին:

**Հայկական լեռնաշխարհի լամզաֆոտային տրամատները՝ ըստ շրջանների**

Լամզաֆոտային գոտիներ	Պոնտա-Մոսքիկան շրջան				Փոքր Կովկասի շրջան				Հայկական Տավուսի շրջան				Միջնաշխարհի շրջան			
	բարձր. մ	X մմ	Z մմ	K= $\frac{x}{z}$	բարձր. մ	X մմ	Z մմ	K= $\frac{x}{z}$	բարձր. մ	X մմ	Z մմ	K= $\frac{x}{z}$	բարձր. մ	X մմ	Z մմ	K= $\frac{x}{z}$
Խորնավ մերձարևադարձա- յին	0-800	1000- 2500	700- 900	1.3-3.0	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կիսանապատա- յին	-	-	-	-	0-100	<250	1200	0.25	-	-	-	-	400- 1400	200- 300	1400- 1200	0.14- 0.25
Չոր տափաստանային	-	-	-	-	400- 900	300- 500	1000- 800	0.3-0.6	500- 800	400- 600	1400- 1200	0.3-0.5	1200- 1800	300- 500	1200- 800	0.25- 0.6
Տափաստանային	-	-	-	-	1000- 2600	500- 700	800- 600	0.6-1.1	800- 2500	800- 1200	1200- 700	0.7-1.2	1500- 2500	500- 700	1000- 600	0.5-1.1
Անտառային	800- 2000	2000- 3000	800- 600	2.5-5.0	800- 2600	500- 800	800- 600	1.0-1.3	800- 2500	800- 2000	1200- 700	0.7-3.0	1500- 2500	500- 700	600- 1000	0.8-1.1
Միջադաշտական մարզականութեր	2000- 2500	2000- 3000	600- 500	4.0-6.0	2000- 2700	600- 900	600- 500	1.0-1.5	2500- 3400	1500- 2000	700- 500	2.0-3.0	2200- 3200	800- 1000	700- 500	1.1-2.0
Ակայս մարզականութեր	2500- 3200	2000- 3000	600- 400	5.0-7.0	2700- 3600	800- 1000	500- 400	1.6-2.5-	3400- 3800	1500- 2000	500- 400	3.0-5.0	3200- 3800	800- 1000	500- 400	1.6-2.5
Մորձնային	>3200	3000	<400	>7.0	>3600	900- 1100	<400	2.2-3.0	>3800	2000	<400	>5.0	3800	900- 1100	<400	>2.5

k - խոնավացման գործակից, x - տեղումներ, z - գոլորշունակություն



Նկ. 54. Հայկական լեռնաշխարհի վերընթաց լամոշաֆտային գոտիների քարտեզ.


1. Խոնակ մերժարև ադրբայշին գտուի, 2. կիսանապատճենի գոտի, 3. շրջ-տափաստանային գոտի, 4. լոռնա-տափաստանային գոտի, 5. անտառային գոտի, 6. մերձալպյան և ալպյան գոտիներ, 7. աղուտներ, 8. ծանիհներ

Լանջաֆտների այս սպիտակը ընդգրկում է Պոնտական լեռնահամակարգը, Սոսքիլյան (Մեսխեթի) լեռնաշղթան և նրանց հյուսիսահայաց լանջերը, Մերձ-Սև ծովալյան դաշտավայրի ու Կոլփիդայի դաշտավայրի նեղ-հարավային հատվածը:

Լանջաֆտների նշված շարքը ընդգրկում է հետևյալ բարձրադիր գոտիները. խոնավ մերձարևադարձային, մերձարևադարձային և բարեխառն անտառների, մերձալայան, ալպյան մարգագետինների և մերձձնային գոտիները:

Խոնավ մերձարևադարձային լանջաֆտները ուրույն տեղ են գրավում և Հայկական լեռնաշխարհում այլևս ոչ մի տեղ չեն հանդիպում: Դա մասնավորապես վերաբերում է ամենացածր, խոնավ մերձարևադարձային գոտուն:

Խոնավ մերձարևադարձային գոտին գրադարանում է Պոնտական լեռնահամակարգի և Սոսքիլյան (Մեսխեթի) լեռնաշղթայի նախալեռնային, մինչև 500-800 մ բարձրության բլուրները, ծովագեղի դաշտավայրը: Ուկինքն արտահայտված է մեղմ ձևերով, բլուրների ջրաժանային հատվածները կորացված են, գետահովվածների ստորին մասերը լայնացած են, մերկայացնում են արտաքերման կոներ, ծածկված են գետաբերուկներով ու ափաքերման նասվածքներով: Այս գոտին ներառում է նաև Սև ծովի առափնյա դարա-



Նկ. 55. Հայկական լեռնաշխարհի լանջաֆտային շրջանների վերընքաց տրամադրությունները.

1. մերձարևադարձային պամտառներ, 2. կիսաանապատներ, 3. շրջ տափաստաններ, 4. տափաստան, 5. ամտառներ, 6. մերձալայան մարգագետիններ, 7. ալպյան մարգագետիններ, 8. մերձձնային գոտի, 9. ճնածածկ գոտի (կլիմայական ծյան գծից վեր)

վանդները: Միայն տեղ-տեղ Պոնտական լեռնահամակարգից իշնող լեռնա-ճյուղերը միշրճվում են ծովի մեջ՝ առաջացնելով հրվանդաններ: Տեղատար-ման երևոյթները ինտենսիվ չեն արտահայտված՝ բուսածածկույթի ու ոչ մեծ թերությունների պատճառով: Փոքրաբեր լեռնալանջերն ու դաշտավայրը մշակվում են կուլտուրական բույսերի տակ:

Կիլման տիպիկ մերձարևադարձային է, ըստ որում՝ գոտու կենտրոնա-կան մասում (Բարումի շրջան) ամենից խոնավն է, դեպի արևելք և արևմուտք տեղումների քանակը կրկնակի ու եռակի չափով պակասում է: Շառագայթային հաշվեկշիռը կազմում է շուրջ  $50\text{-}55$  կկալ/սմ<sup>2</sup> տարի, հովի-սան միջին ջերմաստիճանը  $22\text{-}23^{\circ}$ , հոնվարյանը՝  $+4\text{-}6^{\circ}$ , խոնավացման գործակիցը ամենուր 1,0-ից քարձը է, որի շնորհիվ անտառային բուսակա-նությունը փարքամորեն է աճում, տեղումների քանակը արևելքում և արևմուտքում 1000-1500 մմ է, Բարումի մոտ՝ 2500 մմ, միջին քարձության լեռներում՝ 3500-4000 մմ, 10<sup>0</sup>-ից քարձը միջին օրական ջերմաստիճան ունե-ցող օրերի ջերմաստիճանների գումարը՝ կազմում է  $5000^{\circ}$ : Գոտին ջրով ու խոնավությամբ տարին բոլոր ապահովված է, նույնիսկ ավելցուկ կա, որից տեղ-տեղ ճահճացում է առաջանում:

Հողերը լեռնալանջերում կարմրահողեր ու դեղնահողեր են, դաշտավայ-րում ենթամիտրացած (պողողացված) ու ճահճային: Աչքի են ընկնում հու-մուսի քիչ պարունակությամբ, որովհետև շուրջ տարի մանրօրգանիզմների ներգործությամբ տեղի է ունենում քայլայնան պրոցես:

Բուսական ծածկոցը շատ հարուստ է, ամենից հարուստը՝ ամբողջ լեռ-նաշխարհում, շատ են մշտադաշտական լայնական կազմով, թե՛ տեսակային կազմով, թե՛ զանգվածով և թե՛ կենսազանգվածի զարգացման արագությամբ: Բույսե-րից շատերը աճը շարունակում են նաև ձմեռային ամիսներին, ծաղկում են տարեկան երկու կամ երեք անգամ: Այսող ամենից շատ են պահպանվել ռե-լիկտային տեսակներ՝ ձեղկվա, շագանակենի, արևելյան հաճարենի, Գարդ-վիսի կաղնի, քղենի, իլենի, պոնտական ռողորդենդրոն, դափնինեկոսա, պոն-տական ազիլիա, պնդուկենի, կովկասյան հապալասենի, կոլխիդյան թափշե-նի, մկնափուշ և այլն: Շատ են փարարվող լիանները, որոնք ծաղից ծառ են անցնում և անտառը դարձնում են անանցանենի, իսկ Կոլխիդյայի դաշտա-վայրում տիրապետող ծառատեսակը լաստենին է: Անտառներում ամենուր հանդիպում են էպիֆիտներ (մակարույսեր), որոնք վարագույրների նման կախված են ծառերից և խոնավությունը վերցնում են օդից:

Անտառներում ամենուր հարկայնությունն արտահայտված է՝ գոյություն ունի երեք հարկ: Ստորին հարկն ամենից խիստ է, աճում են քիուտներ և,

<sup>1</sup> Այսուհետև  $10^0$ -ից քարձը միջին օրական ջերմաստիճան ունեցող օրերի ջերմաստիճանների գումարը կարծ կորով  $10^0$ -ից քարձը ջերմաստիճանների գումար:

խառնված լիաններին, փակում են անտառի մուտքը մարդկանց ու կենդանիների առջև։ Ստորին հարկում աճում են այնպիսի բույսեր, որոնք լուսի նկատմամբ պահանջկուտ չեն, շատ տեղերում անտառն ուղղակի մուր է։

Գոտու անտառներում խոտային ծածկը թույլ է զարգացած լուսի պակասության պատճառով։ հանդիպում են ձարխոտ (պտերներ), իծամորի (վայրի եղանակ), բոշխ։

Թվում է, թե խոնավ մերձարևադարձային կոլյսիդյան տիպի անտառներում հողի մակերևույթը պետք է ծածկված լինի անտառային թափվածքով ու քաղիքով։ Բայց քափված տերևները շատ արագությամբ քայլայվում են, և հողը պարզապես մերկանում է։

Անտառում կան շատ վնասատու բույսեր ու միջատներ, որոնք մեծ վնաս են պատճառում ծառերին, խժում սաղարթը, առաջացնում զանազան հիվանդություններ։ Ինչպես նշում են Գուլիսաշվիլին, Մախսատաձեն և Պրիլիափոն (1975), շագանակենին վտանգի տակ է. ինչ-որ տեսակի սնկեր կան, որոնք աճում են ծառի թնի վրա, և ծառը կարծ ժամանակում չորանում է։

Այս գոտում ժամանակակից կենդանական աշխարհը հարուստ չէ, բայց ներկրում հարուստ է եղել։ Խիտ բնակեցված մերձափնյա մասերում կենդանական աշխարհը կամ ոչնչացել է մարդու կողմից, կամ կենդանիները խուսափում են այնտեղ գնալուց։ Այնուամենայնիվ, ամենից շատ հանդիպողներն են՝ մանր կրծողները, խլորդները, անտառային մկները, առնետները, սողոններից՝ կրիաները, լրտունները։

Խոնավ մերձարևադարձային գոտին հարուստ է ոեկրեացիոն (վերըստեղծման) ռեսուլտաներով. ամառը երկարատև է, ունի հարմարավետ կլիմա, սկած ապրիլ-մայիս ամիսներից՝ մարդիկ ժամանում են Սև ծովի ափ՝ հանգրստանալու համար։ Ծովի ջրի ջերմաստիճանը ամռան ամիսների ընթացքում  $22^{\circ}$ -ից բարձր է և լոգանքի համար՝ նպաստավոր։

Մերձափնյա և նախալեռնային գոտին մինչև 500-800 մ բարձրությունների վրա բարենպաստ պայմաններ ունի մի շարք մերձարևադարձային կուտուրաների մշակման համար. դրանցից են՝ ցիտրուսային կուտուրաները, պյուղները, թեյի բույսը, ծխախոտը, ազնիվ դափնին, խորման, եգիպտացորենը, եթերայուղատու բույսերը և այլն։

Մերձարևադարձային հարուստ ֆլորան ներկայացված է Բարումի բուսաբանական այգում, որը գտնվում է Բարումից 9 կմ հեռավորության վրա՝ Զելյոնի Սլառում։ Այն հիմնադրվել է 1912 թվականին Ա. Ն. Կրասնովի կողմից։ Անցած տասնամյակներում բուսաբանական այգին ընդարձակվել և հարըստացել է բոլոր աշխարհամասերին բնորոշ բուսատեսակներով։ Ցուրաքանչյուր աշխարհամաս առանձին բաժին է զբաղեցնում։ Բուսաբանական այգին խոշոր գիտահետազոտական հաստատություն է, որտեղ մեծ աշխատանք-

Են են տարվում սելեկցիայի ու նոր տեսակների ստեղծման ուղղությամբ:

**Լայնատերև անտառների գոտին** զբաղեցնում է նախալեռների 500-700 մ-ից մինչև 1000-1200 մ բարձրությունները: Ո-ելեփո մասնատված է խոր ու լայն գետահովիտներով, լանջերի թեքությունները շատ մեծ չեն, անտառածածկության շնորհիվ տեղատարնան պրոցեսները շատ ուժգին չեն, բայց պիտի նշել, որ խոտածածկի բացակայությունը մասսամբ նպաստում է հողի տեղատարմանը: Լվացման պրոցեսը շատ ավելի քույլ կլիներ, եթե խոտածածկ լիներ:

Կլիման մեղմ է, ջերմաստիճանային օրական ու տարեկան տատանումները մեծ չեն, ճառագայթային հաշվեկշիռը՝ շուրջ 50 կկալ/սմ<sup>2</sup> տարի, հովհանուան միջին ջերմաստիճանը 18-20° է, հունվարյան միջինը՝ + 0-3°, խոնավացման գործակիցը՝ շուրջ 2-3, տեղումների բանակը՝ 1500-3000 մմ, 10°-ից բարձր ջերմաստիճանների գումարը՝ 4000-4500°:

Գոտին ջրով լրիվ ապահովված է, ունի ավելցուկ, շնորհիվ մեծ թեքությունների ճահճացում չկա, ջրատվությունը մեծ է՝ հոսքի մոդուլը 25-50 լ/վրկ կմ<sup>2</sup>: Հողերն անտառային գործահողեր են, հողառաջացման պրոցեսները ինտենսիվ են արտահայտված:

Գոտին ամբողջապես ծածկված է բարձր արդյունավետության լայնատերև անտառներով, որտեղ տիրապետող ծառատեսակներն են՝ շազանակենին, հաճարենին, կաղնին, հացենին, բոխին, կենին (կարմրածառը), խնձորենին, տանձենին, ձելկվան, բազմաթիվ մշտադալարներ-թփութեր՝ պոտական ռողողենդրոնը, դափնեկեռոսը և այլն: Այս գոտում ևս լիանները և էպիֆիդները (մակաբրուսեր) տարածված են, և անտառը երեք հարկ ունի: Մշտադալարների որոշ տեսակներ բարձրանում են մինչև 700-800 մ, լայնատերև ափորների գոտու վերին մասերում մշտադալարները չեն աճում ջերմության պակասության պատճառով: Այստեղ ձմռանը կայուն ձնածածկույթ է առաջանում: Լայնատերև անտառների գոտում ևս անտառային բաղիքն ու բափածքն արագ կերպով քայլայփում են և չեն կուտակվում, ուստի մերկ հողի դեպքում տեղատարումն ինտենսիվ է կատարվում:

Լայնատերև անտառների գոտում քոյլ թեքության լանջերը մշակվում են շարահերկ կուլտուրաների և պտղատունների տակ:

**Խառը և փշատերև անտառների գոտին:** Պոտական ու Մուրիկյան (Մեսխերի) լեռնաշղթաների լանջերին գոտին բարձրանում է մինչև 1900-2000 մ: Այս գոտում է նկատվում երողին ամենախոր մասնատվածությունը, թեքությունները մեծանում են, լանջերն ամբողջապես անտառածածկ են: Տեղատարումն ուժգին է այնտեղ, որտեղ խոտածածկը բացակայում է, իսկ խոտածածկի գոյությունը պայմանավորված է սաղարթի բնույթով, լուսավոր անտառներում խոտածածկը փարթամորեն աճում է, բայց շատ հատվածներում

Էլ խպատ բացակայում է: Խոտածածկի բացակայության դեպքում տեղատարման հետևանքը կազմում է 50-60 սմ-ից և արժանական բացակայության դեպքում տեղատարման բացակայության գումարը կազմում է 5-6 սմ:

Հողերը գորշ-անտառային են, վերին մասերում՝ պողովային: Կլիման բարեխառն է, ճառագայթման հաշվեկշիռը՝ 45-50 կվալ/սմ<sup>2</sup> տարի, հովհայան միջին ջերմաստիճանը՝ 12-18°, հունվարյանը՝ -1 - -2°-ից մինչև -5 - -6°, գյությունը ունի խոնավության ավելցուկ: Խոնավացման գործակիցը կենտրոնական մասերում հասնում է 5-6, իսկ գոտու եզրերում՝ 2-3, այսինքն՝ կենտրոնական մասում, Բարումից վերև տեղումները 5-6 անգամ գերազանցում են ջրի ազատ մակերևույթից տարվա ընթացքում կատարվող գոլորշացումը: Կլիման նկարագրելիս նշեցինք, որ այստեղ տեղումների քանակը հասնում է 4000 մմ-ի, 10°-ից բարձր ջերմաստիճանների գումարը հասնում է 2000-3000-ի:

Բուսական աշխարհը փարթամ անտառային է, ցածում տիրապետում են լայնատերև ավորները: Քանի բարձրանում ենք վեր, փշատերև ավորները շատանում են և դառնում տիրապետող, սակայն կան մի քանի լայնատերև ավորներ, որ հասնում են մերձալպյան գոտի (Վեչին, հաճարենին, կաղնու որոշ տեսակներ): Փշատերև ավորներից տարածված են՝ եղևնի, եղինի, տեղ-տեղ էլ՝ տոճի:

Մի շարք հեղինակներ անտառի վերին մասում առանձնացնում են անտառի մերձալպյան տիպը: Սա զբաղեցնում է ուղղաձիգ ուղղությամբ մինչև 200-400 մ լայնությամբ մի գոտի, որտեղ անտառը նույն է, լուսավոր, ծառերը ծուռտիկ ու զածած են, շատ են թփուտները և մացառուտները, փոփակները (ստլանիկ): Այս գոտում լավ զարգացած է խոտային ծածկը: Չատ թփուտներ զարգանում ու բազմանում են վեգետատիվ ճանապարհով՝ ողղողենդրոն, հապալաս, արտօսի: Սրանք դուրս են մոդում խոտային բուսականությունը:

Անտառի վերին սահմանի վերաբերյալ կարծիքները տարբեր են: Ոմանք (Ն. Ա. և Ե. Ա. Բուշ) գտնում են, որ այդ սահմանն իջնում է, իսկ Ի. Պ. Գերասիմովն ու Կ. Կ. Մարկովը (1941) գտնում են, որ վերջին 250-300 տարում տարացում է նկատվում և որ վերջին 2000 տարվա ընթացքում տարացումներն ու ցրտեցումները հաջորդում են միմյանց: Պետք է նշել, որ անտառի վերին սահմանը շատ զայտն է կլիմայի տատանումների նկատմամբ:

Ամբողջ անտառային գոտում՝ սկսած 800-1000 մ-ից մինչև մերձալպյան գոտին, կենդանական աշխարհն առաջ ու հարուստ է՝ եղջերուներ, այծյամներ, գորշ արջ, լուսան, անտառային կատու, նամույր, սկյուռ, անտառային մկներ, առնետներ: Խոշոր կենդանիները մարդու մերգործությամբ զգալիորեն պակասել են: Չատ են թշունները՝ մայրահավ, փայտփորիկ, անգո, արծիվ, բու, աղավնի, ազոավ, կկու, ցին:

Անտառային գոտում խոնավորյան առատության պատճառով շատ սակավ են սղունները. հանդիպում է լորտու, կրիա և այլն:

**Մերձալպյան և ալպյան մարգագետիններ:** Անտարից վեր 300-400 մ բարձրության շերտում տարածված են մերձալպյան մարգագետինները, իսկ նրանցից էլ 400-500 մ բարձր՝ ալպյան մարգագետինները: Երկու գոտին էլ լեռնային ռելիեֆ ունեն, մասնաւոված են, թերությունները մեծ են, շատ հատվածներում ժայռերը մերկացած են, կամ լանջերը ծածկված են քարային քափվածքներով: Հողերը մարգագետնային կամ ճճա-մարգագետնային, սակավազոր, հաճախ խիստ կմախրային են:

Կիման ցուրտ է, օրական ջերմաստիճանային տատանումները մեծ են կարող են հասնել մինչև  $20^{\circ}$ -ի և ավելի: Շառագայթային հաշվեկշիռը մերձալպյան գոտում  $40-45$  կկալ/սմ<sup>2</sup> տարի է, ալպյան գոտում ավելի պակաս: Մերձալպյան գոտում հովիսին մինչև  $6-12^{\circ}$  է, հունվարին՝  $-8 - -10^{\circ}$ , ալպյան գոտում՝ համապատասխանարար  $2-6^{\circ}$  և  $-10 - -12^{\circ}$ , խոնավացման գործակիցը երկու գոտում էլ 3-ից բարձր է,  $10^{\circ}$  ջերմաստիճանների գումարը՝  $500-1000^{\circ}$ :

**Մերձալպյան գոտում խոտային ծածկը բարձրախոտ է՝ մինչև  $60-70$  սմ բարձրությամբ.** տարածված են տարախոտեր, որպիսիք լեռնաշխարհի մերձալպյան գոտում ամենուր են, միայն այստեղ կան որոշ պոնտական տեսակներ՝ ոռղողենդրոն, հապալաս, տեղ-տեղ՝ գետնին փոփոխված թփեր (ստլանիկ):

**Ալպյան գոտին** յուրահատուկ է նրանով, որ այստեղ բույսերը ցածրահասակ են, ինչպես նշվել է, գետնից շատ տաքություն ստանալու համար, տեղտեղ հարթ կամ գողավոր մասերում կան գորգեր: Ալպյան և մերձալպյան գոտինները ձմռանը 8-9 ամիս ծածկված են ձնածածկությունով, կենդանական աշխարհը ամռանը ներքին գոտիններից է բարձրանում, շատ են երգող բռչուններ՝ արտույտները, լեռնային ծիուկը, լորերը:

**Մերձճնային գոտին** գրաղեցնում է  $2800-3000$  մ-ից ավելի բարձր լեռնագանգածները (Քաջքարի զանգված): Այս գոտում գետինը ձնածածկություն ազատ է ընդամենը 2 ամիս, կամ շատ հատվածներում ձնարծերը պահպանվում են շորջ տարի: Նույնիկ ամռանը զիշերային ժամերին ջերմաստիճանը իջնում է  $0^{\circ}$ -ից: Շառագայթման լարվածությունը մեծ է՝  $1,6$  կկալ/սմ<sup>2</sup> րոպե, սակայն մեծ է նաև ճառագայթարձակումը, ուստի ճառագայթման հաշվեկշիռը ամենից փոքրն է: Հովիսին միջին ջերմաստիճանը  $0^{\circ}$  է, հունվարին՝  $-10 - -12^{\circ}$ , տեղումների քանակը՝  $1500-2000$  մմ: Այս գոտում մշտաբնակ կենդանիներ չկան, ամառային ամիսներին այստեղ են գալիս մանր կրծողներ ու թըռչուններ, հանդիպում են գայլեր ու աղվեսներ:

Գոտիների վերընքաց դասավորության տեսակետից բավական մոտ է մերձական լանջաֆտային շարքին՝ այն տարբերությամբ, որ այստեղ մինչև անտառային գոտուն հասնելը գոյություն ունի չոր տափաստանների գոտի, իսկ անտառային գոտու ստորին մասերում շորային պայմաններում առում են նորանոտաներ:

Փոքր Կովկասի լանջաֆտային շարքի տիպը տարածվում է ամբողջ Փոքր Կովկասի և Մերձ-Արաքսյան Փոքր Կովկասի (Զանգեզուրի շրբայի) արևելահայաց, համեմատարար խոճավ, մասնավորապես հյուսիսային կողմնադրության լանջերին: Շարքն արտահայտված է հետևյալ հիմնական գոտիներով՝ չոր տափաստանային, նորանոտառային, անտառային (հիմնականում՝ լայնատերև), շատ հատվածներում (մասնավորապես՝ հարավահայաց լանջերում) կան տափաստաններ, ապա՝ պեղի բարձր՝ մերձալպյան, ալպյան մարգագետիններ և մերձնային լանջաֆտ:

Այս շարքում ուշագրավ է այն, որ անտառային և տափաստանային գոտիները նույն բարձրությունների վրա են, միայն տարբեր կողմնադրություններում:

Դրա տիպիկ օրինակը Մարմարիկի (Հրազդանի աջակողմյան վտակ) հովտն է: Այստեղ Ծաղկունյաց լեռների հյուսիսային կողմնադրության լանջերը, որ գետի աջակողմյան ավազանում են, ամբողջապես ծածկված են անտառներով մինչև գետի ողողատը, մինչդեռ Փամբակի լեռների հարավային լանջերը, որ կազմում են գետի ձախափնյա ավազանը, տափաստան են ներկայացնում, և այս լեռների համակարգում բոլոր բլուրներն ու լեռները հյուսիսահայաց լանջերում անտառածածկ են: Նույն պատկերը տեսնում ենք բազմաթիվ այլ տեղամասերում: Շատ հատվածներում էլ անտառային պուրակներն ու բացատերը հերթափոխվում են՝ առաջացնելով անտառատափաստան:

**Չոր տափաստանը** տարածվում է Փոքր Կովկասի համակարգի լեռների փեշերին՝ մինչև 500-900 մ բարձրությունների վրա՝ կախված դիրքադրությունից ու չորությունից. ընդ որում՝ դելի հարավ չոր տափաստանը ավելի բարձր դիրք ունի:

Ո-ելիեֆը մեղմ է, գրաղեցնում է նախալեռնային հարբություններն ու բլուրները, գետահովտներն այստեղ բացվում են, առաջացնում արտաքրման կոներ: Ո-ելիեֆի ուժեղ հակադրություններ չկան:

Կլիման շորային է (սեմիարիդ), համեմատարար մեղմ ձմեռներով, տաք ամառով: Շառագայթային հաշվեկշիռ՝ մինչև 50-55 կկալ/սմ<sup>2</sup> տարի, հույսի միջին ջերմաստիճանը՝ 22-24°, հունվարյանը՝ 0 - -2° առավելագույնը՝ +39°, նվազագույնը՝ - 28°: Այս գոտում ջերմաստիճանային թե՛ օրական և թե՛ տա-

թեկան ամպլիտուդները, համեմատած Պոնտական-Մոսքիլյան (Մեխերի) նույն բարձրությունների խոնավ-մերձարևաղարձային գոտու հետ, զգալի են և բացառված չեն ոչ զարնանային ու վաղ աշնանային ցրտահարությունները, ուստի մի շարք մերձարևաղարձային կոլտուրաներ, ինչպես օրինակ՝ ձիթենին, տուժում են: Անսառնամանիք ժամանակաշրջանը երկար է՝ 240-260 օր,  $10^{\circ}$ -ից բարձր ջերմաստիճանների գրամարը  $2800-3000-3500^{\circ}$ , որտեղ հնարավոր է աճեցնել մերձարևաղարձային պտուղներ: Մընողրտային տեղումների քանակը հյուսիսում մինչև 600 մմ է, հարավում՝ 300 մմ, Մեղրու կիրճում իշնում է մինչև 250 մմ, մինչեւ նոյն բարձրության վրա հյուսիսային մասում՝ Դերեխի հովտում՝ 450-500 մմ: Գոտում կայուն ձնածածկույթը բացակայում է, ձյունը կարող է նատել մի քանի շաբաթ միայն: Խոնավացման գործակիցը շուրջ  $0,5$  է, դեպի հարավ նվազում է մինչև  $0,25$ : Չոր տափաստանը խոնավության պակասորդ ունի, և այսուղի հողագործությամբ կարելի է գրաղվել արիեստական ոռոգման հիման վրա:

Եկած տեղումները հիմնականում գործանում են, գետերի հոսքի մոդուլը 2-4 լ/վրկ կմ<sup>2</sup> է, և բոլոր գետերը տարանցիկ են:

Հողային ծածկը ներկայացված է դարչնագույն և գորշ տարատեսակներով, բույլ թերություններում էրոզիան ուժգին չի արտահայտված, հողը նշակվում է խաղողի, դեղձի, ծիրանի, տանձի, խնձորի, քթենու, նոսու և այլ կուտուրանների տակ, մշակում են նաև շարահերկ կոլտուրաններ, ծխախոտ:

Գոտու բուսականությունը բնական վիճակում գրեթե չի պահպանվել. դրանք չոր տափաստանին հասուկ բույսեր են՝ փետրախոտ, կծմախոտ, օշինդր: Կենդանական աշխարհն արտահայտված է հիմնականում մաճը կրծողներով, սողուններով, տափաստանին ու կիսաանապատին բնորոշ թրչուններով:

Նոսրանտառների ենթագոտին ըստ բարձրության ունի շուրջ  $200-300$  մ լայնություն և տարածվում է չոր տափաստանից վեր: Հունվարյան միջին ջերմաստիճանը  $-2^{\circ}\text{hg} -3^{\circ}$  է, հուլիսյանը՝  $20-21^{\circ}$ , տեղումների քանակը հյուսիսից հարավ՝  $550-350$  մմ: Հողերը դարչնագույն կամ գորշ են. բուսածածկոցը կենսազանգվածով հարուստ չէ, բայց հարուստ է տեսակային կազմով: Այստեղ հաստարուն ծառեր չկան, տարածվում է ֆրիգանան կամ տեղ-տեղ՝ շիրվակը, անտառը լուսավոր է ու նոսր: Ծառատեսակներից են՝ դաժի, կաղճի, վրացական թիւկի, իլենի, ալնի, հոնի, ճապկի, մասրենի, տիվենի, դեպի հարավ ավելի չորասերներ. են հանդիպում՝ խնկենի, փոշնի, ցաքի, մացառուններ:

Նոսրանտառների գոտում հողերը մշակվում են արիեստական ոռոգման հիման վրա. հատկապես մշակում են խաղող, դեղձ, ծիրան, ծխախոտ, շարահերկ կոլտուրաններ: Կենդանական աշխարհը նոյն է, ինչ նախորդ գոտում:

**Անտառային գոտին** հյուսիսային լեռներում տարածվում է  $800-1000$  մ-ից

մինչև 2100 մ, իսկ հարավում՝ 1100 մ-ից մինչև 2400-2600 մ: Նման տարբերությունները պայմանավորված են ջրա-ջերմային ռեժիմի տարբերությամբ: Լ. Վ. Հարուբյումյանը անտառները բաժանում է երեք ենթագոտու՝ ստորին, միջին, վերին: Գոտու ռելիեֆը մասնաւությամբ է, թերությունները մեծ են, գետահովաներն ամենից խորն են, տիրապետում է էրոզիոն-տեղատարումային ռելիեֆը, անտառածածկության շնորհիվ զգային էրոզիան ավելի ուժգին է, քան մակերևության տեղատարումը, որի պատճառով շատ հատվածներում լեռնալանջերի տրամատը (պրոֆիլը) ուռուցիկ է:

Կիմայական պայմանները բարեխառն են՝ մեղմ ձմեռներով ու զով ամառով: Շառագայթային հաշվեկշիռը միջին հաշվով՝ 40-50 կլպ/սմ<sup>2</sup> տարի, հունվարյան միջին ջերմաստիճանը գոտու վերին մասում՝ 10-12°, ցածրում՝ 18-20°, հունվարյանը համապատասխանարար՝ -5-ից -8° և -2-ից -3°, անսառնամանիք ժամանակաշրջանը՝ ցածրում 200 օր, վերևում՝ 120 օր. տեղումների քանակը՝ 600-800 մմ, 10°-ից բարձր ջերմաստիճանների գումարը ներքևում 3000-3500° է, բարձրում՝ շուրջ 1500°:

Գոտին ծածկված է անտառային գորշ հողերով, որոշ հատվածներում դարչնագույն հողերով: Անտառային ծածկը համատարած չէ, կապված է դիրքադրությունների հետ, պայմանավորված է ջրա-ջերմային ռեժիմով: Ծատ հատվածներում, մասնավորապես՝ հարավահայաց լանջերում, անտառի փոխարեն տափաստան է աճում: Այստեղ անտառային գորշահողերն են, որ ժառանգություն են մնացել և ցույց են տալիս, որ մի ժամանակ տարածքը անտառածածկ է եղել:

Սկսած Մոսքիլյան (Մեսիների) ու Թուերի (Թրիալերի) լեռնաշրջաններից մինչև Մեղրու կիրճը ձգվող անտառներում ընդհանուր անտառային ծածկի ֆոնի վրա նկատվում են զգայի տարբերություններ՝ կախված տարածքի արիւացման հետ:

Ամենից մեծ կենսագույնված ունի անտառի միջին գոտին. այստեղ ծառերը հաստարուն են, բարձրահասակ, գոյուրյուն ունի հարկայնություն: Ամենատարածված տեսակներն են՝ հաճարենի, կաղնի, բոխի, հացենի, բխկի, ընկուզենի, թեղի, լորենի, ցախկեռաս, խնձորենի, տանձենի: Ենթանտառն ունի շատ բիուտային տեսակներ՝ իլենի, հոնի, տիլենի, մոշ, մորի, զիիի, մասրենի և այլն: Անտառային գոտու վերին սահմանում հանդիպում են կեչին, բոխին, թխկին, արոտենին (ծոյի խնձոր): Իր ծուռտիկ ու զածած տարբերակներով:

Ինչպես նկատում է ընթերցողը, Փոքր Կովկասի անտառներում տիրապետող են լայնատերև ավորները. փշատերև ավոր տեսակները առանձին ոչ մեծ արեալներ են զբաղեցնում: Դրանցից ամենախոշորը Մոսքիլյան (Մեսիների) լեռնաշրջայի հարավային մասում է Բորժոմի առողջարանի, Արասրումանի շրջանում: Սոճին այստեղ տիրապետող է, և խեժի ու ֆիտոնցիդների բուրմուն-

քը տարածվում է Բորժոմի ամբողջ կիրճում: Այստեղ է տեղադրված կուրորտների Բորժոմյան խումբը (Յագվեր, Լիբան, Բակուրիխան, Ցիլիխս-Զվար, Արասթուման): Հանքային ջրերի բազմաթիվ ելքերը և սոճուտները այս շրջանը դարձնում են կարևոր առողջապահութեան կենտրոն:

Փշատերև անտառների պուրակներ կան Ազարա գետի ավազանում, Լոռիում (Գյուլագարակի մոտ), Մոռավ կամ Մովսասր լեռան հյուսիսային լանջերին՝ Կապույտ (Կանաչ) լճի մոտ և այլն:

Անտառային գոտու կենդանական աշխարհը մի ժամանակ շատ հարուստ է եղել և ներկայացված է հիմնականում աղվամազավորներով (այն նույն կազմով, ինչ՝ Պոնտական լեռնահամակարգում)՝ գորշ արջ, գայլ, աղվես, կզարխս, եղջերու, այծյամ, սկյուռ, սամույր, մանր կրծողներ: Շատ են թղթչունները՝ մայրահավ, կաքավ, հայկական և կասպիական ուլար (լեռնային հնդկահավ), աղավնի, սարյակ, ճնճղով, ագռավ, անգոր, արծիվ, փայտփորիկ, գիշանգոր, մկնաբազե, աքար (անտառակարավ), բու, կաշաղակ, խածկըտիկ (եզնակահավ), դրախտապան, ճանճորս, սոխակ, շիկահավ, կեռնեխս, ծիծեռնակ և այլն: Քիչ են սողունները. քարքարոտ վայրերում՝ մոռխաններ, լորտուններ, կրիաններ:

Փոքր Կովկասի անտառային գոտին աստիճանաբար սեղմվել է, կարիք ունի պաշտպանության. թե՛ բուսական և թե՛ կենդանական աշխարհը կարիք ունի մարդու օգնության: Անտառահատումը մեծապես նպղում է Էրողին պրոցեսների զարգացմանը: Օրինակ, Սևանի և Արեգունի լեռնաշղթանների արևմտյան ու հարավային դիրքադրության լանջերում անտառահատումից հետո էրողին ու սելավային պրոցեսները շատ են աշխուժացել: Նույնը նկատվում է Աղնաս, Ողջի և այլ գետերի ավազաններում:

Բնության անաղարտության պահպանման նպատակով ստեղծվում են պետական արգելոցներ և արգելավայրեր (զականներ): Փոքր Կովկասի համակարգում ստեղծվել են Բորժոմի, Դիլիջանի, Կապույտ լճի (Ըստծու ծով, Գյող-գյոլ), Գառնիի (Խոսրովի անտառ), Շիկահողի արգելոցները և բազմաթիվ արգելավայրեր, որտեղ բույսերի ու կենդանիների նկատմամբ հասուկ խնամք ու հոգատարություն է ցուցաբերվում, կլիմայավարժեցվում են այլ վայրերից բերված կենդանիներ (օրինակ՝ ուստուական բծավոր եղջերուն):

**Սերծալայան գոտին:** Փոքր Կովկասի հյուսիսային լեռնաշղթաններում զբաղեցնում է 1900-2100 մ-ից բարձր մինչև 2500-2700 մ բարձրության գոտին: Հարավային լեռնաշղթաններում շուրջ 300-400 մ-ով ավելի բարձր է, և նրա վերին սահմանը հասնում է 3000-3200 մ-ի: Գոտին ունի մասնատված ոելիք և մեծ թեքություններ, որի պատճառով կան հողաբուսական ծածկից զորկ քարքարոտ ու ժայռոտ հատվածներ, հատկապես՝ հարավային ծալքաբեկորավոր լեռներում, որտեղ կլիմայական պայմաններն ավելի արիդ են:

Պետք է ասել, որ մերձալպյան մարգագետինները ամռանը ունեն շատ հաճախ կլիմա: Ցերեկային ժամերին զով է, նույնիսկ երբեմն՝ տաք, գիշերը ջերմաստիճանը կարող է մոտենալ  $0^{\circ}$ -ին, սովորաբար՝  $4-6^{\circ}$ : Զմռանը ցույտ է, շորջ յոր ամիս ծնածածկ է. ճառագայթային հաշվեկշիռը  $40-45$  կվալ/սմ<sup>2</sup> տարի է, հուլիսյան միջին ջերմաստիճանը՝  $6-10^{\circ}$ , հունվարյան միջինը՝  $-8-10^{\circ}$ , անսառնամանիք ժամանակաշրջանը հազիվ  $80-100$  օր է,  $10^{\circ}$ -ից բարձր ջերմաստիճանների գումարը՝  $500-1000^{\circ}$ , տեղումների տարեկան քանակը՝  $800-1000$  մմ, հարավում մի փոքր պակաս: Խոնավացման գործակիցը 1-ից մեծ է, սակայն մերձալպյան մարգագետիններում հաճախ ամռանը երկար ժամանակ տեղումներ չեն գալիս, և բուսականությունը տուժում է խոնավության պակասից:

Հոսքի գործակիցը մեծ է  $0,5-0,7$ , տեղումների մեծ մասը հոսք է ստանում, հոսքի մոդուլը հյուսիսային լեռնաշղթաններում մինչև  $15-20$  լ/վրկ կմ<sup>2</sup> է, հարավային լեռնաշղթաններում՝  $8-12$  լ/վրկ կմ<sup>2</sup>:

Հողերը ճնա-մարգագետնային, սակավազոր, տեղ-տեղ կմախքային են, հողի ռեակցիան բույլ թթվային է, և կացիումը լուծվելով հեռանում է:

Բուսական ծածկույթը բարձրախոտ է՝  $40-60$  սմ, աճում են հացազգիներ, տարախոտեր, անասունների համար կերախոտերի շատ տարատեսակներ՝ ցորնուկ, չյուղախոտ, կելերիա, վիրախոտ, կորնքան (իշառվույտ), առվույտ, աղվեսագի, զանգակածաղիկ, ողլախոտ, Սոսնովսկու մակարդախոտը, վայրի դաղձ, թթվախոտ, մրտավարդ, հայկական շուշան, վարդակակաչ, զայլաքար, սալիշտակածաղիկ, հողմածաղիկ, սագավարդախոտ, լվածաղիկ, երիցուկ, զանգան բռչխեր և այլն: Ամռանը գոտու տարբեր մասերում գոյւյների տարրեր երանգներ են՝ կախված նրանից, թե որ բույսերն են ծաղկում: Երբեմն, օրինակ, երիցուկներն այնպես են ծածկում դաշտը, որ կարծես ձյունով է պատած, կամ զանգակածաղիկները, հրանունկները, անթառամները դաշտը ներկում են հազար գոյւններով:

Մերձալպյան մարգագետիններն ամռանը շատ են աշխուժանում, և այս-տեղ կյանքը հորորում է: Կենդանական աշխարիի ներկայացուցիչներն են՝ զայլ, աղվես, նապաստակ: Քիչ քանակով դեռևս հանդիպում են բեզոարյան այծը, վայրի ոչխարը, այծյամը: Շատ են կրծողները՝ դաշտամկներ, ճագարամուկ, համստեր (գերմանամուկ), շատ են երգող թռչունները՝ արտույտ, լեռնային ձիուկ, լոր, սոխակ, աղավնի, կվու, ճահճային մասերում՝ ճայ, չվող թռչունները: Շատ են նաև գիշատիչ թռչունները՝ արծիվ, անգո, ցին և այլն:

Մերձալպյան մարգագետինների խոտային ծածկը ամռան առաջին կեսին շատ հյուրալի է և ուստի է խոշոր ու մասն եղջերավոր անատունների կողմից: Ծաղկելուց հետո խոտերը մի փոքր կոշտանում են: Խոտհարքներում խոտը հնձում են որպես ձմեռային անասնակեր:

**Ալպյան գոտի:** Փոքր Կովկասում միայն առանձին գագաթներ են հասնում ալպյան գոտուն. հյուսիսում այն տարածվում է 2700-3100 մ, հարավում՝ 3000-3600 մ բարձրությունների վրա: Գոտին առանձին կղզյակներով է, ժայռոտ: Թեքությունները մեծ են, հանդիպում են նախկին սառցադաշտային կրրկեսներում: Լրիվ կազմակերպված հողեր քիչ են հանդիպում, դրանք մարգագետնային հողեր են: Հիմնականում՝ քարացոլներ ու ժայռեր են: Թույլ թեքությամբ հատվածները քիչ են. այստեղ ճիմածածկ մարգագետին է:

Շառագայթման լարվածությունը մեծ է՝ մինչև 1,7 կալ/սմ<sup>2</sup> բարե, բայց մեծ է նաև ճառագայթքարձակումը, ուստի կիման ցուրտ է, ճառագայթքային հաշվեկշռը՝ շուրջ 30 կալ/սմ<sup>2</sup> տարի: Հովհայան միջին ջերմաստիճանը ցածում 4-6°, վերևում՝ 0°, հունվարյան միջինը՝ -10 - -12°: Շատ են բքոտ օրերը, տարվա մեծ մասը ճնածածկ է, ամռանը միայն 3-4 ամիս է ձյունից ազատ: Բույսերն այստեղ ցածրիկ են, գետնին փոքված, որտեղ կարող են արածել միայն մանր եղջերավոր անասունները: Տարածված են՝ հացազգիներ, բռչխեր, երկշարիլավորներ, սոխարմատավորներ: Շատ արժեքավոր արտօտային բույսեր են՝ ոչսարի շյուպախոտը, զանգակածարիկը, հազարտերևուկը, դաշտավլուկը, ցործուկը, արծարախոտը կամ զայլաքարը և այլն: Կենդանական աշխարհը տեսակներով հարուստ է՝ քարայծ, վայրի ոչչար, գորշ արջ, գայլ, աղվես, ընձառյուծ, կրծողներ՝ նապաստակ, նաև կրծողներ: Թոշունների աշխարհը նոյնն է, ինչ որ նախորդում էր:

**Զնամենք գոտի:** Փոքր Կովկասում այս գոտին արտահայտված է միայն ամենաբարձր գագաթների վրա (Գոմչասար, Կապուտջողակ), թեքությունները մեծ են, լեռնալանջերը՝ քարքարոտ, հողածածկ փասորը են գոյություն չունի, միայն քարային քափակածներ են: Բնությամբ նման է Սիջնաշխարիի համապատասխան գոտուն, ուստի ավելի հանգամանորեն կիսուններ համապատասխան բաժնում:

### 3. ՏԱՎՐՈՍՅԱՆ ԼԱՆԴԱՖՏԱՅԻՆ ՇԱՐՔ

Տավրոսյան համակարգի լանջաֆտները մեծ հակադրություններ ունեն, քանի որ տարածքային առումով լանջաֆտների անմիջական «շփում» գոյություն ունի անապատի հետ: Սակայն այստեղ կա մի հանգամանք՝ դա Սիջերկրականից եկող օդային զանգվածներն են, որ տախս են առատ տեղումներ և անապատի եզրին փոխում են բնությունը: Թվում է, թե Տավրոսի հարավային լանջերն այնպես չոր պետք է լինեին, ինչպես Սոհունդի կամ Մավալանի հարավային լանջերը: Սակայն իրականում պատկերն այլ է՝ տեղումների բավարար քանակը կամ նույնիսկ ավելցուկը լայնատերև անտառների աճման պայմաններ են ստեղծում: Այս լունային համակարգում ըստ քարձության դասավորված են հետևյալ լանջաֆտային գոտիները՝ չոր տափաս-

տանի, անտառի, մերձալպյան մարգագետինների, ալպյան մարգագետինների և մերձնային (միայն արևելքում):

Չոր տափաստանը տարածվում է Հայոց (Վերին) Միջազգետքում՝ Տավրոսի լեռնային համակարգի հարավային փեշերին մինչև 800-1000 մ բարձրությունների վրա: Ուկինեքը մեղմ է՝ խոշոր հակադրություններ չկան, նախալեռները մեծ թեքություններ չունեն, ուկինեքի բարձր մասերը կլորացված մեղմ ձևեր են ստացել: Լեռներից իջնող գետերն ու գետակները առաջացնում են արտաքերման կոների վեց (չեյք), կամ սելավային նստվածքներ:

Կիման արդի կամ սեմիարդի է, այսինքն՝ չոր կամ կիսաչոր: Ձերմության առատություն է, ճառագայթման հաշվեկշիռը՝ շուրջ 60 կվալ/ս<sup>2</sup>՝ տարի, արևափայլի տևողությունը՝ ավելի քան 2700 ժամ, հուլիսյան միջին ջերմաստիճանը՝ ցածում՝ 26-28°, բարձրություն՝ 23-24°, հունվարյան միջինը՝ 0 - -6°: Զնոպանը կարող է ծյուն գոլ, բայց ցածում այն չի մնում, իսկ գոտու վերին մասում կարող է պահպանվել մի քանի շաբաթ: Անսառնամանիք ժամանակաշրջանը ցածում մոտ 300 օր է, բարձրություն՝ 250-280 օր, մքնորդտային տեղումների քանակը՝ 400-500 մմ-ից մինչև 600-700 մմ, խոնավացման գործակիցը ցածում՝ 0,3, բարձրություն՝ 0,6-0,7:

Ինչպես նկատում է ընթերցողը, Տավրոսի ստորոտին բնությունն այսքան չոր չէ, ինչպես ասենք՝ Կապուտան (Ուրմիա) լճի ավազանում կամ Նախիջևանի գոգավորությունում: Բանն այն է, որ Միջերկրականից եկող օդային զանգվածները, հանդիպելով Կորդվաց, Զագրոսյան բարձրաբերձ լեռներին, խոնավությունը բողոքում են այնտեղ:

Բոլոր գետերը տարանցիկ են և ջրառատ. հոսքի մոդուլը այս գոտում 6-10 լ/վրկ կմ<sup>2</sup> է, սակայն ավելի բարձր գոտիներում այն միանգամից մեծանում է:

Հողը գորշ-շագանակագույն է, հումուսի քանակը հասնում է 3-4 %-ի: Հողերը պիտանի են մշակության համար, և կարելի է տարեկան երկու բերք ստանալ, սակայն անջրդի վայրերում մի եետաքրքիր երևոյթ է նկատվում. բնակիչները ամռանը հողը հանգիստ են բողոքում, մշակում են գարնանը և աշնանը. ամռան շոգերին հողն այնքան է տաքանում, որ բուսական ծածկը խանձվում է, ուստի աշխատում են այն մշակել այն ամխաներին, երբ ջերմությունը տանձի է:

Բնական բուսական ծածկույթը տափաստանային ու չոր տափաստանային է, որոնց խառնված են կիսաանապատային տեսակներ՝ օրինակ, օշինդր: Այստեղ աճեցնում են ցորեն, եղիպտացորեն, կորեկ, վարսակ, բամբակ, քընջութ, ձիթենի, խաղող, ոռնենի, քզենի, քքենի, ընկուզենի, տանձենի, խնձորենի, սալորենի, ցիտրուսներ և այլն:

Կենդանական աշխարհն արտահայտված է հիմնականում կրծողներով: Շատ են նաև սողունները:

Հարուստ է բշխատեսակներով, սրանցից շատերը ամռանը շվում են դեպի հյուսիս և սերունդ տալիս բարեխսառն կլիմայի երկրներում:

**Անտառային գոտին:** Տարածվում է սկսած 1000 մ-ից մինչև 2300-2500 մ (Հերյարի լեռնաշղթայում): Բաժանվում է երեք ենթագոտիների՝ ստորին, միջին և վերին: Ստորին գոտում լոսավոր նորանատա է ու ֆրիզանա, հաստաբուն ծառեր չեն աճում, շատ են թփուտները: Միջին գոտին ամենային հարուստն է: Ուշագրավ է այն, որ այստեղ շատ են պտղատուները՝ թթենի, ընկույզենի, տանձենի, խնձորենի, թթենի, նոնենի և այլն: Գոտում բնորոշ ծառատեսակները են՝ շագանակենի, կաղնի, ընկույզենի, այլ պտղատուները:

Բարձր գոտում անտառը նորից նորանում է, և տիրապետում են ծուռտիկ կամ զաճած տեսակները:

Մխալ կլինի կարծել, թե Տավրոսի լանջերն ամենուրեք անտառածածկ են: Հարավահայաց չոր լանջերում անտառի փոխարեն տափաստանային լանդշաֆտն է՝ դարչնագույն հողերի վրա, որոնք փոքր թեքության մասերում նշակվում են հացահատիկների տակ կամ բանջարանցներ են: Շատ հատվածներում էլ չեն մշակվում՝ արտավայրեր են:

Ուշագրավ է մեկ հանգամանք ևս: Տավրոսի համակարգի հյուսիսային լանջերում դեպի Վանա լճի գոգավորություն և Արածանիի հովիտ ուղղված մասերում, անտառներ գրեթե չկան: Իսկ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասերում հակառակն է՝ հյուսիսահայաց լանջերն են անտառապատ: Այստեղ առաջնային է դառնում խոնավության ռեժիմը: Միջերկրականից եկող խոնավությունը գրեթե ամբողջովին մնում է հարավային լանջերին: Աղթամար կղզուց դիտելիս՝ Արտոսի լանջերն ամենուրեք տափաստանային են, անտառ բոլորովին չկա:

**Մերձալպյան գոտին:** Տավրոսի արևմտյան հատվածը մինչև Բաղեշ (Բիրլիս) միջին բարձրության լեռներ են, շատ հատվածներում անտառն ընդգրկում է մինչև լեռների ջրբաժանը: Արևելյան մասում, մասնավորապես՝ Կորդվաց լեռներում, մերձալպյան մարգագետինների գոտին գրադեցնում է 2300-2500 մ-ից մինչև 3000-3200 մ բարձրությունները: Ուղիենքը մասնատված է, թեքությունները մեծ են, տեղատարումն ինտենսիվ է: Կլիման ամռանը զով է, ձմռանը՝ ցուրտ: Հովիսի միջին ջերմաստիճանը  $6-10^{\circ}$  է, հունվարյանը  $-6-8^{\circ}$ , տեղումների քանակը հարավային լանջերին 1000-1500 մմ, տեղ-տեղ՝ ավելին: Անսառնամանիք ժամանակաշրջանը ավելի քան 100-120 օր է: Զմռանը ձյունն առատ է, լինում են ուժգին թթեր:

Հողերը մարգագետնային են, բուսական ծածկույթը բարձրախոտ է՝ 30-50 սմ, և հնածում են որպես անասնակեր: Տեսակների կազմով նույնն է, ինչ որ Ներքնաշխարհի մարգագետիններում, կենդանական աշխարհը՝ նույնպես:

**Ալպյան գոտին:** Ջրաղեցնում է 3000-3200 մ-ից բարձր մինչև 3500-3600 մ բարձրությունները Կորդվաց, Զագրոսյան լեռնաշղթաներում: Քիչ զագարներ

են, որ այդ գոտում են, ուստի գոտին անընդմեջ չէ: Ուկիեֆը խիստ մասնատված է, տեղի է ունենում մեխանիկական հողմահարում: Բուսական ծածկը գետնամերձ է, նոյն բույսերն ու կենդանիներն են, ինչ որ Ներքնաշխարհի համապատասխան գոտում (տե՛ս ստորև):

**Մերձձնային գոտին:** Տարածվում է 3500-3600 մ-ից բարձր մի քանի զագաբներում, մասնավորապես՝ Ջիլյի վրա: Ամրողովին ժայռաբեկորներ ու քարաժայուեր են, շատ հատվածներ ծածկված են ձյունով. նոյն պատկերն է, ինչ որ Սիջնաշխարհում (տե՛ս ստորև):

#### 4. ՄԻՋՆԱՇԽԱՐՀԻ ԼԱՆԳԵՎԱՖՏԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՇԱՐՔ

Հանդիպում է Հայկական լեռնաշխարհի ողջ Սիջնաշխարհում ու հարավարքելիքի լեռներում՝ Եփրատի ու Արածանիի ավազաններում, Գայլգետի ու Ծորոխի վերնազավառներում, Արաքսի ավազանում, Վանա, Սևանա, Կապուտանի (Ուրմիա) լճերի գոգավորություններում: Ո՞րն է այս սպեկտրը՝ անապատ-կիսաանապատ, չոր տափաստան, տափաստան (տեղ-տեղ՝ անտառային պատառիկներով), մերձալպյան, ալպյան մարգագետիններ և մերձձնային գոտի: Դրա տիպիկ տրամադր (արոֆիլը) կարելի է գտնել Արարատյան գոգավորության մեջ նրա հատակից՝ Արարատյան դաշտից, մինչև Արագածի գագարը անցնող գծի երկարությամբ:

Ինչպես նկատում է ընթերցողը, Սիջնաշխարհի լանդշաֆտային տրամատում անտառային գոտին բացակայում է, կամ եթե հանդիպում է, ապա տափաստանին ընորոշ բարձրությունների գոտում: Այսինքն հակառակ է ՓոքրԿովկասյան տիպի սպեկտրին. այնտեղ էլ տափաստանն էր բացակայում և համդիպում էր անտառային գոտու մեջ, որպես ներդիր՝ առանց ինքնուրույն գոտի ստեղծելու:

Սիջնաշխարհի բոլոր լանդշաֆտային գոտիները կրում են չորության կնիքը, այսինքն՝ ենթարկվում են հորիզոնական զննայական հատկանիշներին: Եթե չկմներ լեռնային ռելիեֆը, ապա Սիջնաշխարհը կունենար կիսաանապատային լանդշաֆտներ: Ահա այս չորությունն է պատճառը, որ անտառները բացակայում են: Հենց որ որևէ հատվածում բարենք-պաստ պայմաններ են ստեղծվում, տափաստանի տեղում անտառներ են առում: Այդպիսի հատվածներ են՝ Դերսիմը, Մեծուրի լեռնաշղթայի արևմտյան լանջերը, Գայլգետի ու Ծորոխի վերին հոսանքների ավազանի հատվածները, Սարիղամիշի շրջանը, Արագածի հարավային լանջի մի փոքր հատվածը, Խոսրովի անտառը և այլն: Անտառային լանդշաֆտ գոյություն ունի նաև խոշոր գետերի ափերին՝ սրահային անտառների ձևով, անկախ վայրի բարձրու-

բյունից՝ սկսած ամենացածր նիշերից մինչև մերձալպյան գոտի: Քննենք այդ լանջաֆտները ներքեւից վերև:

Կիսաանապատային գոտին տարածվում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան մասում, ընդգրկում է Արարատյան, Նախիջևանի, Կապուտանի (Ուրմիայի) գոգավորությունների ցածրադիր մասերը: Ամենացածր նիշերը Արաքսի հովտում են՝ այնտեղ, որտեղ Սևջուր (Կարասու) գետը թափվում է Արաքսի մեջ՝ 120-150 մ: Գոտու վերին սահմանը Արարատյան գոգավորությունում՝ 1200-1300 մետրի վրա է, Նախիջևանի դաշտում մի փոքր ավելի բարձր՝ 1300-1400 մ, իսկ Կապուտանի (Ուրմիայի) գոգավորության մեջ գոտին սկսվում է լճափից (1300 մ) և բարձրանում է մինչև 1400-1500 մ: Այստեղ նշենք, որ լեռնաշխարհի հարավ-արևմուտքում Մալաթիայի ու Խարբերդի դաշտերը, ունենալով ցածր դիրք, հարում են կիսաանապատներին, քայլ սրանք տիպիկ կիսաանապատներ չեն:

Տիպիկ կիսաանապատները երեք նշված գոգավորություններում են՝ որոշ անապատային էլեմենտներով: Ընդհանուր հիմնականում հարթ է, լճային և գետաքերուկային կուտակումներ են՝ նախկին լճային հարքություններ՝ շրջապատի նախալեռների որոշ հատվածների հետ միասին: Արաքսի և Ազգի գետի մեջ թափվող վտակները այս գոտում առաջացնում են արտաքերման կոներ: Սելավային (պրոյուվիալ) նատվածքները գետերի գետաքերանային կամ արտաքերման հատվածներում մեծ զարգացում ունեն:

Կլիման լեռնաշխարհում ամենից չորայինն է (արիդ) և աչքի է ընկնում արևափայլիք մեծ տևողությամբ՝ տարեկան 2700-2800 ժամ, ճառագայթային հաշվեկշիռը 55-65 կվալ/առ<sup>2</sup> տարի է, հուլիսյան միջին ջերմաստիճանը՝ 25-27°, առավելագույնը՝ 43°, հունվարյանը՝ - 4 - -6°: Առանձին օրերին սառնամանիքները կարող են հասնել - 25 - -30°: Գոգավորություններին հատուկ են ջերմաստիճանային ինչպես օրական, այնպես էլ տարեկան մեծ տատանումներ, որոնք ցույց են տալիս կլիմայի ցամաքայնությունը: Գոգավորություններում ձմռանը հաճախակի հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն:

Անսառնամանիք ժամանակահատվածը 240-260 օր է. սա միջինն է, սակայն գոյություն ունի շատ անբարենապատ մի երեսոյք: Դա ուշ զարնանային և վաղ աշնանային ցրտահարություններն են, որոնք նույնպես ցամաքայնության արգասիք են: Գրեթե ամեն տարի ապրիլի մեջ մի աղետ է լինում. ծառերը ծաղկել են, հանկարծ գիշերը կամ լուսադեմին ջերմաստիճանն իջնում է 0°-ից, և այդ նուրբ ծաղկեները ոչնչանում են:

Գոտում ամենուր խոնավության պակասորդ կա. խոնավացման գործակիցը 0,2-0,3 է, և առանց արիեանտական ոռոգման բերք ակնկալել հնարավոր չել: Մինողորտային տեղումների տարեկան քանակը 200-250-300 մմ է, հիմնա-

կանում գարնանը: Հաճախ է պատահում, որ ամռանը ամիսներով ոչ մի կարիք անձրև չի գալիս, իսկ եթե գալիս է, ապա կարծատև ու տեղատարափ, որը սելավների պատճառ է դառնում: Զմռանը ծյուն գալիս է, ասկայն կայուն ծածկույթ չի առաջացնում: Արարատյան դաշտում երբեմն ծյան շերտը հասնում է 30-40 սմ-ի և նստում է մի քանի շաբաթ, սակայն ոչ ամեն տարի է այդպիսի: Նախիջևանի և Կապուտանի (Ուրմիայի) գոգավորություններում ձնաշերտն ավելի անկայուն է ու շատ բարակ:

10<sup>0</sup>-ից բարձր ջերմաստիճանների գումարը 3500-4500<sup>0</sup> է, որը հնարավորություն է տալիս մշակել ջերմասեր կուլտուրաներ: Հողերը խիստ բազմազան են՝ կիսաանապատային գորշ, աղուտներ, ալկայի հողեր և մարգագետնային (գետափերում):

Ինչպես Ա. Լ. Թախտաջյանն է նշում, Հայկական լեռնաշխարհում կան անապատային բուսականության կղզիներ: Երեք գոգավորությունների հատակին շատ տարածված են հալոֆիլ (աղասեր) բույսեր, սակայն ամենից շատ՝ Ուրմիա լճի շորջը: Սրանք հարուստ են բլրի և ծծմբաքրվի աղերով, բույսերը հաճախ մասի են, շատ են տարածված օշանները (շորան), հիմնականում՝ հավամրգանման օշանը և ծառանման օշանը, իսկ սոտային աղուտներում՝ եղունդավոր բալին: Ավազային անապատներում ևս կան շատ տեսակներ, որոնցից հատկապես հիշատակելի է հազարատերևուկը, գիպսային անապատում՝ աղածաղկը:

Կիսաանապատում ֆոն ստեղծող բույսը օշինդրն է՝ իր մի քանի տարատեսակներով: Բնորոշ են էֆեմերներն ու էֆեմերոփինները: Առաջինները գարնան ափարտում են կենսական ցիկլը և չորանում: Երկրորդները ամռանը դադարեցնում են աճը, սպատում են աշճան խոնավությանը և աշխուժանում կան շարունակում են աճը հաջորդ տարի: Կիսաանապատին բնորոշ են նըրբագեղ հիրիկը, կապարը, գեղյիցան, ուղտափուշը, բալախը, աղապատուկը, որդնախոտը, աղահասկիկը: Գոտու վերին մասերում, եթե անցում է կատարվում դեպի չոր տափաստանը, օշինդրին խառնվում է նաև փետրախոտը:

Կիսաանապատներում հաճախ հանդիպում է ֆրիզանիդ բուսականություն, որտեղ տիրապետող են աստրագալները (գազ), նշենին, ողնարփերը, Արաքսի բալենին և այլն: Կիսաանապատներն ունեն երերայուղի և դեղատու բույսերի տեսակներ՝ տատրակ, մամիխ, կատվախտու, խնկածաղիկ, ուրց, հազարատերևուկ: Երերայուղատուների ծաղկման շրջանում շրջապատը լրցվում է հաճելի բուրմունքով: Դա ֆիտոնցիդներից է, որ արձակում են բույսերը:

Գոտին ունի հարուստ կենդանական աշխարհ: ամենից մեծ տարածում ունեն մաճը կրծողները՝ երկարապոշ ճերմակատամք, փոքր պայտաքիքը, համատերը (գերմանամուկը), փոքրասիական ավազամուկը, Վինոգրադովի ավազամուկը, պարսկական ավազամուկը, ճագարամուկը և վերջիններին

այլ տեսակներ, որոնց հետևում են աղվեսները, և աղվեսների աճը մեծապես կախված է մանր կրծողների քանակից: Բնությունը կարողանում է զարմանալի կայուն հավասարակշռություն ստեղծել:

Բավական շատ են չղջիկները, որոնք ձմռանը չլում են հարավ: Այլ կարճա-սուններից՝ ականջավոր ողնի, կատվազգիներից՝ մանուկ, բրիենի, ընձառյուծ: Շատ են ստորևները՝ զիսավորապես մողեսների շատ տեսակներ՝ կովկասյան ազգանա, հունական կրիա, կույր օձ, եղջերավոր իժ, գյուրզա, ականջավոր օձ, երկարոտն, վիշապօձ, կարիճ, փաղանգ (դաշտասարդ), մորմ և այլն:

Շատ են նաև բջունների տեսակները՝ ովար (լեռնային հնդկահավ), լոր, կաքավի տեսակներ, օձակեր, իրանական շիկահավ, ժայռային սիստեղ, այգիներում փայտփոր, բվեճ, երաշտահավ, սերինոս, ագռավ, կաշաղակ, աքար (անտառակարավ), արոս, մկնարազե, եղեգնուտներում՝ եղեգնահավ: Բավական տարածված են չվոր բջունները, որոնք աճառն այստեղ են անց կացնում, ձմռանը չփում են հարավ: Շատ են միջատները, որոնցով սնվում են մողեսները:

Կիսամապատների գոտին զգալի շափով յուրացված է արհեստական ոռոգման շնորհիվ, որտեղ մշակվում են չոր մերձարևադարձային կուլտուրաներ, խաղող, դեղձ, ծիրան, տանձ, խնձոր, նուռ, բուզ, բութ, ընկույզ և այլ պտուղներ, եթերա-յուղատու բույսեր, բանջարեղեն:

Մենք ակնարկեցինք այն մասին, որ Մալարիայի և Խարբերդի դաշտերը իրենց կլիմայական պայմաններով մոտ են կիսամապատներին: Սրանք տիպիկ կիսամապատներ չեն այն պատճառով, որ տեղումների քանակը 400-500 մմ է, որն արդեն չոր տափաստանին է հասուկ: Նշված դաշտերում հովիսի միջին ջերմաստիճանը  $24\text{--}25^{\circ}$  է,  $10^{\circ}$ -ից բարձր ջերմաստիճանների գումարը՝  $3500\text{--}4000^{\circ}$  է, ինչը հնարավորություն է տալիս մշակել բամբակ, խաղող, դեղձեղին, ծիրանեղին, բրենի, ձիթեղի: Զմեռը համեմատարար տար է, հունվարյան միջինը -2 - -3-ից չի իջնում:

Չոր տափաստանների գոտին անցումային է՝ կիսամապատից դեպի տափաստան, ուստի կրում է այս երկու գոտիների ազդեցությունը: Տեղադրված է կիսամապատից վեր 200-300, նույնիսկ 400 մ լայնության շերտ-գոտիով: Ընդգրկում է Արարատյան, Նախիջևանի, Ուրմիայի, Մալարիայի, Խարբերդի, Քալահովտի, մասամբ Տարոնի գոգավորությունների համապատասխան գոտին: Վաճա լճի ափին ևս մի նեղ հատված չոր տափաստան է ներկայացնում: Հյուսիսից հարավ գոտու վերին սահմանը բարձրանում է: Օքինակ, Շիրակում ու Կարսի սարավանդում՝ 1500-1600 մ-ի, Տարոնի դաշտում, Վաճա գոգավորությունում՝ 1600-1750 մ-ի, Նախիջևանի ու Ուրմիայի գոգավորություններում՝ մինչև 1800 մ-ի: Գոտու սահմանը ոչ միայն հյուսիսից հարավ է բարձրանում, այլև արևմուտքից-արևելք: Այսպես, Մալարիայի ու Ուգուն-յայլայի բարձրավանդակում 1650 մ-ի վրա է, Վաճա լճի ափերին՝

1750-1800 մ, իսկ Ուրմիայի ափին՝ 1800 մ և Առյոնիսկ ավելի: Այս երևույթը կապվում է, ինչպես նշվել է, ցամաքայնության մեջածան հետ:

Չոր տափաստանի գոտին ամենուր ընդգրկում է ցածր լեռների հարկը, մասնաւուած է գետերի հովիտներով, խոչը գետերը առաջացրել են խոր հովիտներ: Գոտու արևելյան հատվածներում մեծ զարգացում ունի բեղլենի տիպի ռելիեֆը. տեղատարումն ամենուր ինտենսիվ է, մեխանիկական հողմահարումը՝ ուժգին:

Կլիման չորային է. թե՛ օրական և թե՛ տարեկան ջերմաստիճանային տատանումները մեծ են, հովիտի միջին ջերմաստիճանը՝  $22-24^{\circ}$ , հունվարյան միջինը՝  $-5 - -6^{\circ}$ , անսառնամանիք ժամանակամիջոցը՝  $200-220$  օր, տեղումների տարեկան քանակը՝  $300-450$  մմ,  $10^{\circ}$ -ից քարձր ջերմաստիճանների գումարը՝ մոտ  $3000^{\circ}$ : Արևմտյան մասում մինչև Վանա լճի գոգավորությունը ձմեռն ավելի մեղմ է, ինչը հնարավորություն է տալիս աճեցնելու ձիթենի:

Հողերն ամենուրեք գորշ-շագանակագույն են, բաց շագանակագույն: Բուսական ծածկը տեսակներով հարուստ է, վերգետնյա մասը միամյա է, ամենուր տարածված բույսերն են՝ փետրախոտ, սեզ, կելերիա, ցորնուկ, ազդրխոտուկ, աղվեսազի, կծմախոտ, շյուղախոտ (տարրեր տեսակներ), դաշտավլուկ, տարեկան (աշորա), անատոլիական կորնգան, երեբուկ, բռչխեր, թերենիկն և այլն: Գարնանը արագ քազմանում են էֆեմերները, ամռանը բուսական ծածկը խանձվում է:

Կենդանական աշխարհը հիմնականում մանր կրծողներ են՝ դաշտամկների քազմազան տեսակներ, որոնք հատուկ էին կիսաանապատներին, շատ են սողունները և բոշունները (տե՛ս հաջորդ գոտին):

Չոր տափաստանը գրեթե ամենուրեք մշակվում է հացահատիկների տակ, գոտու ցածրադիր մասերում մշակում են խաղող, դեղձ, ծիրան, տանձ, խնձոր և այլ մրգեր՝ արենատական ոռոգման հիման վրա: Որտեղ չի ոռոգվում, թերքը երաշխավորված չէ, և հնարավոր է՝ ցանած սերմացուն էլ չստացվի:

**Տափաստանների գոտի:** Միջնաշխարհում ամենից ընդարձակ տարածություն զբաղեցնողն է՝ սկսած  $1500-1600$  մ-ից մինչև  $2200$  մ (հյուսիսում) և  $1700-1800$  մ-ից մինչև  $2400-2500$  մ (հարավում):

Հյուսիսային մասերում, որտեղ հրաբխային սարավանդներն են, ռելիեֆի թերությունները մեծ չեն, և երկիրը խիստ մասնաւուած չէ: Միայն խոշոր գետերն են ստեղծել խոր կանիոններ: Ուրեմն, տափաստանները զբաղեցնում են միջգետային թույլ թերությամբ սարավանդները: Այդպիսիք են՝ Ուգուն-յայլայի, Քյուրակին, Կարսի, Արդահանի, Զավախսի, Աշոցքի, Լոռվա, Ծիրակի, Ապարանի, Սիսիանի բարձրավանդակ-սարահարթերը և բարձրավանդակների միջև գետային կամ լճային գոգավորությունների միջին բարձրությունների գոտում ձգվող համապատասխան գոտին՝ Կարինի (Էրզրումի), Աշկալեի, Երզնկայի, Բասենի, Արագածոտնի, Ալաշկերտի, Մանազ-

կերտի, Հարբի և Վանա, Սևանա, Կապուտան (Ուրմիա) լճերի գոգավորությունների համապատասխան գոտին:

Ինչ վերաբերում է ծալքաբեկորավոր ծագման լեռներին, ապա այստեղ տափաստանների գոտին բավական թեր լեռնալանջերի վրա է տարածվում: Այդպիսիք են Մալաքիայի գոգավորության, Խարբերդի, Դերսիմի, Տավրոսի հյուսիսային լանջերի, Վանա լճի գոգավորության արևելյան մասի, Նախիջևանի, Ուրմիայի գոգավորության եզրային մասերի տափաստանները: Տափաստանների գոտին հյուսիս-արևելյան դեպի հարավ-արևելք չորային է դառնում. կրում է իրանական անապատների ազդեցությունը:

Հյուսիսային հրաբխային սարավանդներում ունիեքը հակադրություններ քիչ ունի. թերությունները մեծ չեն: Այլ է պատկերը ծալքաբեկորավոր լեռներում, որտեղ լեռնալանջերը ամենուր ակոսված են ձորակներով, և շատ հատվածներում, մասնավորապես Նախիջևանի և Ուրմիայի գոգավորություններում, ունիեքը բեղլենդ տիպի է:

Գոտու կիմնան ցածրադիր մասերում բարեխառն է, տար ամառով և ցուրտ ձմեռով, իսկ բարձրադիր կեսում՝ բարեխառն կարճատև ամառով և ցուրտ ձմեռով: Հովհայան միջին ջերմաստիճանը ցածից վերև՝  $18-10^{\circ}$ , հունվարյան միջինը՝ հյուսիսային մասերում՝  $-8 - -10^{\circ}$ , տեղ-տեղ՝  $-12^{\circ}$  (օրինակ՝ Կարսի և Աշոցքի սարահարթերում), իսկ Նախիջևանի և Ուրմիայի ավազաններում՝  $6 - -8^{\circ}$ , առավելագույնը՝  $38^{\circ}$ , նվազագույնը՝  $-35 - -45^{\circ}$ : Ամպիլիտուդը կազմում է մոտ  $80^{\circ}$ , որը ցամաքայնության տիպիկ արտահայտություն է:

Անսառնամանիք ժամանակաշրջանը  $90-140$  օր է (ըստ բարձրության),  $10^{\circ}$ -ից բարձր ջերմաստիճանների գումարը՝  $1000-2500^{\circ}$ , խոնավացման գործակիցը՝  $0,6-1,0$ , որոշ տեղերում մի փոքր ավելի, տեղումների բանակը՝  $500-700$  մմ, հիմնականում՝ գարնանը:

Հողերն ամենուր մուգ շագանակագույն են կամ սևահող, իսկ բարձրադիր մասերում՝ մարգագետնային սևահողեր:

Բուսական ծածկույթը խոտային է, վերգետնյա մասը՝ միամյա: Տափաստանային գոտու բույսերի գրեթե բոլոր տեսակները կարող են լինել անասնակեր, բացառությամբ մի բանիսի: Խոտերը հասնում են մինչև  $60-80$  սմ բարձրության, օգտագործվում են որպես արոտներ և խոտհարքներ:

Տափաստանները մի շարք տիպեր ունեն՝ նայած ինչ համակեցություն է տիրապետողը՝ փետրախոտային, փետրախոտա-շյուղախոտային, հացագուա-տարախոտային, կծմախոտային, տրագանտային և այլն: Տափաստանային բույսերի մեծ մասը կերային լավագույն հատկանիշներն ունեն հատկապես մինչև ծաղկելը, ծաղկելուց հետո և աշնանը նրանք կոչտանում են: Ա. Կ. Մաղարյանը (1953) բերում է բուսատեսակների մի ընդարձակ ցուցակ, բույսեր, որոնք կերային բազա են ներկայացնում՝ սեղի տեսակներ, սանրանը-

ման սեզ, ազրտիտուկ (մի քանի տեսակ), աղվեսագի, կծմախոտ, ռայգրաս, ցործուկի տեսակներ, ոզնախոտ, դեղձանիկախոտ, շյուղախոտի տեսակներ, մանուշակագոյմ գարի, կելերիա, ֆեռն (Տիմոֆեևկա), դաշտախոտ, աճատոլիական տարեկան (աշորա), փետրախոտի տեսակներ, առվույտ, իշառվույտ, կորնգան, երեբնուկ, բոշխ, թիմոն և այլն:

Այստեղ մենք նշեցինք տափաստանային գոտու բույսերի մասին: Նոյն գոտու սահմաններում բավարար խոնավուրյան պայմաններում աճում են նաև նորանտառներ, իսկական աճտառներ, ֆրիզան, շիրյակ (օրինակ՝ Մնձորի, Դերսիմի լեռների արևմտահայաց խոնավ լանջերին, Գայլգետի և Ծորոխի ավագաններում, Սարիդամիջի ջրանում, Արագածի հարավային լանջի մի փոքր հատվածում, Խոսրովի աճտառում, խոշոր գետերի ափերին՝ սրահային աճտառների ձևով): Նշված բոլոր աճտառները լայնատերն են, բացի Սարիդամիջի աճտառներից, որտեղ տիրապետող տոճին է: Լայնատերն աճտառներում այն բոլոր տեսակներն են, որ բվարկել ենք Փոքր Կովկասի աճտառները նկարագրելիս: Ինչ վերաբերում է սրահային աճտառներին, ապա այստեղ տիրապետող են ուռենին, բարոյին՝ խամնված թփուտների հետ: Նշենք, որ Միջնաշխարհում քարդին լանջախտի աճրաժան մասն է, համարվել է պաշտամունքի առարկա: Սրահային աճտառներում որոշ տեղեր հանդիպում են նաև եղեգնուտներ:

Տափաստանների գոտու կենանական աշխարհում տիրապետող փոքրախական կրծողներն են՝ դաշտամկների ամենաքաղաքան տեսակներ, առնետներ, գետերի ափերին՝ ջրառնետներ: Լայնորեն տարածված են ճագարամկներ, տնային մկներ, համստեր (գերմանանուկ), կզաքիս, աղվես, գայլ, աճտառային կղզյակներում և ֆրիզանայում՝ աճտառային կատու, լուսան, իսկ Արաքսի ու Կարմիրջուր (Աջի) գետերի ավագաններում՝ նաև ընձառյուծ:

Հարուստ է բոչունների աշխարհը՝ մայրահավ, կաքավ, ուլար (լեռնային հնդկահավ), աղավնի, կոռունկ, ազրավ, ծիծեռնակ, ճնճղուկ, սարյակ, անգոյ, ջրային բոչուններ՝ ճահճուտներում, լճերի ու գետերի ափերին:

Կան սողուններ՝ մողեսներ, օձեր, կրիաներ, սակայն ըստ բարձրուրյան սրանք անհետանում են, գոտու վերին մասերում մնում են լորտունները: Գետերը հարուստ են ձկներով: Նախորդ գլխում մենք առիջ ունեցանք նշելու, որ տափաստանային գոտին ամենից յուրացվածն է, որտեղ մշակվում են հացահատիկներ, կարտոֆիլ, ծխախոտ, բանջարեղեն, որոշ պտուղներ, նաև՝ ցանովի խոտեր:

**Մերձալյան գոտի:** Հայկական լեռնաշխարհում տափաստանից կամ աճտառից բարձր տարածվում է մերձալյան մարգագետինների գոտին: Ինչպես մյուս գոտիները, սա ևս հյուսիսից հարավ ավելի բարձր դիրք է գրավում: Եթե Պոնտական լեռներում այն տարածվում էր 1900-2100 մ-ից մինչև 2400-2500 մ, ապա Զագրոսյան լեռներում, Սոհունդ (Սեխսենդ), Սավալան զանցվածների վրա՝ 2500-3000 մ. դրա պատճառը չորորյունն է, որի մասին արդեն ասվել է:

Ի տարբերություն ավելի ցածրադիր գոտիների՝ թե՝ մերձալպյան և թե՝ ավելի բարձրադիր ալպյան ու մերձանային գոտիները Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում իրարից շատ չեն զանազանվում և ունեն ընդհանուր շատ գծեր, ուստի Միջնաշխարհի այս գոտու նկարագրությունը կվերաբերի նաև լանդշաֆտային գոտիների այլ շարքեր ունեցող շրջաններին: Խճչակ Ս. Կ. Դալն (1954) է գրում, Հայկական լեռնաշխարհի այս գոտու, Տիբերի ու Մոնղոլիայի միջև շատ ընդհանուր գծեր կան. կենդանական աշխարհի 30%-ը տիբերական է, 15%-ը՝ մոնղոլական:

Մերձալպյան մարգագետինների գոտին հրաբխային սարահարթերում գրադացնում է մերձկատարային սարավանդները և ընդարձակ տարածություններ, որոնք հարթ են կամ փոքրաթեք: Այսինքն՝ լանդշաֆտը կատարյալ ծևավորման հնարավորություններ է ունեցել, ծածկված է հյութալի մարգագետիններով: Ծալքաբեկորավոր լեռներում նման փոքրաթեք սարավանդներ գրեթե չկան, և գոտու լանդշաֆտները ծևավորվել են համեմատաբար մեծ թեքությունների վրա: Ուկիենքը մասնատված է, տեղի են ունենում ինտենսիվ հողմահարման ու տեղատարման այրոցեսներ:

Տիբապետում են ցուրտ կլիմայական պայմաններ, տարվա մեծ մասը ձևածածկ է, ամառը կարճատև է, բայց զով ու ցերեկային ժամերին՝ հաճելի: Ծառագայթային հաշվեկշիռը 2500-3000 մ բարձրությունների գոտում կազմում է շուրջ 35 կկալ/սմ<sup>2</sup> տարի: Միջնաշխարհի մերձալպյան գոտում հովանի միջին ջերմաստիճանը 6-10° է, հունվարյան միջինը՝ -8 - -10°, 10°-ից բարձր ջերմաստիճանների գումարը՝ 500-1000°, որտեղ բացառվում է կուլուրական բույսերի մշակումը: Գիշերային ժամերին ուժին ճառագայթարձակման պատճառով գետնի ջերմաստիճանը արագորեն ընկնում է, հաճախ կարող է ցրտահարություն լինել: Օրում եղած խոնավությունը արագորեն խտանում է և նստում բույսերին ցողի ձևով: Վաղ առավոտյան մարգագետնով անցնելիս մարդու ուղերջ թրջվում են:

Հողերն ամենուր մարգագետնային, ճմամարգագետնային են, բուսական ծածկույթը հարուստ է ու բազմազան: Տարախուերը տարբեր ամիսների են ծաղկում և դաշտին տալիս են տարբեր երանցներ, բնությունը վերածվում է մի վիրխարի մերկապնակի: Հացազգիներից տարածված են՝ սեզի տեսակներ, ազդիստուկ, աղվեսազի, հոտավետ հասկիկ, ռայգրաս, ցորնուկի տեսակներ, եղեգնասեզ, ողնախոտ, դեղձանիկախոտ, շյուղախոտի տեսակներ, տիվարսակ, գարի, կելերիա, դաշտավլուկ, տարեկան (անատոլիական), փետրախոտ և այլն: Լորազգիներից՝ վիրախոտ, եղջերավոլույտ, առվույտ, իշառվույտ, կորնգան, երեքնուկ, վիկ և այլն: Շատ են բոշխերը, ծիլերի տեսակները, բազմախոտերը՝ զանգակածաղիկներ, քիմոն, տերեփուկ, թելուկ, մեխակ, մակարդախոտ, եզան լեզու, խատուտիկ, ուրց, սինձ, եղինջ, թերենիկե և այլն:

Մերձալպյան մարգագետիններում նորմալ խոնավության պայմաննե-

լում խոտարույսերն ունեն 40-60 սմ բարձրություն և արտօտավայրեր ու խոտհարքեր են ներկայացնում: Հայտնի են Ուզուն-յայլայի, Բյուրակնի, Արդահանի սարահարթի, Աշոցքի, Լոռվա, Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Արցախի սարահարքերի, Սիփանի, Սավալանի խոտհարքերը:

Կենդանական աշխարհը հարուստ է: Ամենից բնորոշները խոտակեր-ներն են, որպիսիք անցյալում շատ են եղել՝ բեզուարյան այժ, այծյամ, վայրի ոչխար (մոլֆլոն): Սրանք գերադասում են ժայռոտ վայրեր, որտեղ թշնամիներից պաշտպանվելու հնավորությունները մեծ են: Գոտուն հատուկ են՝ գայլ, աղվես, կզաքիս, ընձառյուծ, արիս, նապաստակ, գետնասկյուն, համստեր (գերմանամուկ), ճագարամուկ, առաջավոր-ասիական համստեր, պարսկական ավագամուկ, դաշտամուկ և այլն: .

Հարուստ է բոշունների աշխարհը. սրանց մեծ մասը եկվորներ են: Ամառը գոտին շատ հարմար է բոշուններին, մերձալայյան մարգագետինն լցվում է ըլուց լունների ծովողյունով, և այս փարքամ ծաղկանցները դասում են աշխույժ ու գրավիչ: Թշուններից հիշտակենք՝ մայրահավ, լոր, կաքավի տեսակներ, ուլար (լեռային հնդկահավ), աղավնի, արար (անտառակաքավ), արռս, կոցար, ուրուր, անգող, արծիկ, օձակեր, հոպոս, սերմնաքաղ, ճնճղուկ, երաշտահավ, ծիծեռնակ, մկնաքազե, գիշանգող, արցնագուավ, սերինոս, կեռնեխս և այլն: Սերձալայյան մարգագետիններում շատ քիչ են սողունները. հանդիպում են լորտուններ, մողեսներ: Շահճային հատվածներում շատ են երկկենցաղները:

Զնեռային ամիսներին մերձալայյան գոտին դառնում է անկենդան: Որոշ կենդանիներ քուն են մտնում, մյուսները իշնում են ցած կամ չվում են: Գոտում մշտական բնակչություն գրեթե չկա. սակավ բնակավայրեր են, որ մոտ են գոտու ստորին սահմանին: Գարունը բացվելուն պես գոտին աշխուժանում է. ոչխարի հոտերն ու կովերի նախիրները բարձրանում են հյուրավի մարգագետիններ և այստեղ անցկացնում ամառը: Մաքոր օդը, հաճելի եղանակը բարձր լեռներում գգում է բնության սիրահարներին:

Ալյաճան մարգագետինների գոտին տարածվում է հյուսիսում 2500-2800-3000 մ, իսկ հարավում 3000-3500-3700 մ: Գոտին փաստորեն գրանիցնում է լեռների կատարային մասերը: Հարավային լեռներում գոտին ընդարձակ տարածություններ չի գրավում, համեմատաբար ընդարձակ են հրաբխային լեռների մարգագետինները՝ Արովի և Սամսարի լեռնազանգվածներում, Զավախսի, Արսիանի, Կարմիր Փորակի, Բյուրակնի, Սիփանի, Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Սյոմիքի բարձրավանդակներում: Աելինքը մասնատված է, մասնավանդ ծալքարեկորավոր լեռներում (Զանգեզուրի, Զագրոսյան, Կորդվաց լեռներում):

Կյիման խիստ է, ձմեռը՝ երկարատև, ձմածածկը մնում է 8-9 ամիս, ամառը շատ կարծատև է, և միայն ցերեկային ժամերին է օդի ջերմաստիճանը՝ 0-ից բարձր. արևը խիստ այրում է՝ ճառագայթման լարվածությունը հասնում է

մինչև 1,8 կալ/սմ<sup>2</sup> բույսե: Մեծ է նաև ճառագայթարձակումը, ուստի գիշերը ջուրը սառչում է: ճառագայթման հաշվեկշիռը մինչև 30 կալ/սմ<sup>2</sup> տարի է, 10°-ից բարձր ջերմաստիճանների գումարը՝ 500°, վերին մասերում նույնիսկ 100-200°, հովանի միջին ջերմաստիճանը՝ 2-4-5° է, հովանվարինը՝ -10 - -12° և պակաս: Տեղումների քանակը՝ 800-1000 մմ, սակայն հյուսիսից հարավ պակասում է:

Հողերը մարգագետնային են, շատ հատվածներում խիստ կմաքսային ու քարքարոտ: Հարք ու փոքրաթեք հատվածներում մարգագետնային ոչ մեծ կղզյակներ են հանդիպում, որտեղ բուսական ծածկը գետնատարած է, ուղղակի փոփած: Բուսատեսակները ավելի ցրտադիմացկուն են, քան մերձալայան գոտում և տեսակներով ավելի սահմանափակ: Առում են՝ ոչխարի շյուղախոտ, ցործուկ, սեզ, կելերիա, աշորա, առվույտ, երեբնուկ, բոշխեր, արծաթախոտ կամ գայլաթաթ, զանգալածաղիկ և այլն: Ալպյան գոտու ծաղիկները ունեն շատ նուրբ պսակաթերեր, դիմանում են սառնամանիքին:

Կենդանական աշխարհը գրեթե նույնն է, ինչ որ՝ մերձալայան գոտում: Գոտու ամբողջ լայնությամբ կենդանիները կարող են մեկ օրում տեղաշարժեր կատարել, մանավանդ բռչունները: Այստեղ կերային քազան բույ է, ուստի կենդանիները գերադասում են ամռանն ավելի շատ լինել մերձալայան գոտում:

Գոտին պիտանի է մանր եղերավոր անասունների համար որպես արոտավայր: Ալպյան արոտներով ավելի հանրաճանաչ են Բյուրակնի, Արագածի, Սիփանի, Թոննդրակի արոտատեղիները:

**Մերձնային գոտին** գրաղեցնում է .3500-3700 մ-ից բարձր գագաթները, որտեղ ամեն քայլափոխում գոգավորությունների մեջ ձյուն է հանդիպում: Այդ գագաթներից են՝ Քաջքարը, Արուլը, Արագածը, Սիփանը, Ջիլոն, Կապուտջուղը, Գոմչասարը, Արարատը, Սոհունը, Սավալանը: Ցայտուն նկատելի է, որ լեռնաշխարհի արևմտյան մասում լեռները այս գոտուն չեն հասնում:

Մերձնային գոտին արտահայտված է մեծ թեքությամբ քարքարոտ ժայռերով, լեռնալանջերը ծածկված են քարարավագածքներով, կազմակերպված հողեր չկան, բույսերը հատուկենան են. քարերի արանքներում հանդիպում են քարկոտրուկներ, բոշխեր, շյուղախոտ (ցածրադիր մասում): Քանի քարքարում ենք, այնքան ճնածածկ տարածքն ընդարձակվում է, բույսեր չկան: Կենդանական աշխարհն աղքատ է ամռանը ցածր մասերից գալիս են բռչուններ, մեկ-մեկ հանդիպում են դաշտամկներ:

Այստեղ անսառնամանիք ժամանակամիջոցը քացակայում է, նույնիսկ հովանին գիշերը ջերմաչափը ցույց է տալիս քացասական ջերմաստիճան: Տնտեսական օգտագործման համար գոտին պիտանի չէ:

Մերձնային գոտին անցում է կատարում մշտական ճնածածկ գոտուն՝ կլիմայական ձյան գծից վեր: Մշտական ճնածածկ են Արարատի, Սիփանի և Սավալանի կատարային մասերը: Այստեղ միշտ ցուրտ է, սառնամանիքային,

նոյնիսկ՝ ամռանը: Հազվագյուտ դեպքում են մարդիկ բարձրանում կլիմայական ձյան գծից վեր:

Ավարտելով Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտային գոտիների նկարագրությունը՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ լանդշաֆտների վերականգնման հնարավորություններին: Նշեցինք, որ լանդշաֆտները համալիրներ են, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչը՝ երկրաբանական հիմքը, ուղիղեքը, կլիման, ջրերը, հողը, բուսականությունը, կենդանական աշխարհը փոխկապակցված ամբողջություն է կազմում: Բավական է՝ այդ համալիրի օդակներից մեկը փոխենք, կարող է ամբողջ լանդշաֆտը փոխվել, այսինքն՝ ստեղծել մեկ այլ տվյալ պայմաններում ավելի կայուն համալիր՝ լանդշաֆտ: Օրինակ՝ կիսաանապատում բոլոր բաղադրիչները նոյնը բռնենք, բայց փոխենք ջրային ռեժիմը՝ ռոռոգենը: Այս դեպքում լանդշաֆտն ամբողջովին կփոխվի, կիսաանապատից ոչինչ չի մնա: Կամ հատենք անտառը, այսինքն՝ փոխենք բուսական ծածկույթը. այս դեպքում կուժեղանա հողային էրոզիան, վայրը կդառնա ավելի չոր, կարող է վերածվել բեղլենդի:

Այսպիսով, մարդը ներգործելով բնույթյան վրա, փոխելով լանդշաֆտի բաղադրիչներից մեկը կամ մյուսը, ստեղծում է լանդշաֆտային նոր պայմաններ, և ձևավորվում է տվյալ պայմաններում համեմատարար կայուն մի նոր լանդշաֆտ:

Միշտ չէ, որ մարդածին ներգործությունը լինում է մտածված ու ծրագրված. հաճախ մարդու կամքից անկախ՝ չգիտակցված փոփոխություններ են կատարվում, որ նա չէր նախատեսել: Ահա ենելով սրանից՝ պետք է բնույթյան վրա կատարվող ներգործությունը լինի խորը մտածված ու բոլոր հնարավոր հետևանքները կանխատեսող ծրագրով:

Դարեր շարունակ մարդը ներգործել է Հայկական լեռնաշխարհի բնույթյան վրա, հատկապես փոխել է նրա բուսական ծածկը, հատել է անտառները, որսացել է կենդանիներ. ի վերջո, բնույթյունն աղբատացել է, և այդ պրցեսը շարունակվում է ներկայում:

Բնույթյունն ունի ինքնավերականգնման մի գորեն մեխանիզմ: Անտառում ծառը կտրելուց հետո նրա տեղում նոր ծառ է աճում: Արոտավայրերում աշճանքը կարծես բուսական ծածկը խուզված լինի. ոչինչ, մյուս տարի նորից մարգագետնի բուսական ծածկույթը կվերականգնվի. որսած կենդանու նոր սերունդը կզա նրա տեղը և այլն: Այսինքն՝ բնույթյունը վերականգնվում է: Բայց բնույթյան վերականգնման ունակույթյունը անսահմանափակ չէ, այն կարող է գործել որոշակի պայմաններում: Այստեղ գոյություն ունի հետևյալ օրինաշափությունը. որքան կորցրած էլեմենտը մոտ է տվյալ լանդշաֆտային գոտուն, այնքան վերականգնումը հեշտ կլինի, իսկ որքան կորցրած էլեմենտը այդ տարածքի լանդշաֆտային գոտուց հեռու լինի, այնքան վերականգնումը դժվար կկատարվի: Օրինակով մեկնարանները այդ օրինաշափությունը: Ենթադրենք՝

տայգայում ծառ են հատել. այդ ծառը, որպես տվյալ լանդշաֆտի Էլեմենտ, շատ հեշտությամբ կվերականգնվի: Այժմ ենթադրենք՝ նոյն փշատերև ծառը կամ ծառախումբը (ասենք՝ սոճին) աճում է մերձերևանյան կիսաանապատում (արհեստական անտառ), այստեղ եթե հատենք այդ ծառը կամ պուրակն ամբողջովին, ապա այն երբեք ինքն իրեն չի վերականգնվի: Պատճառն այն է, որ կիսաանապատը շատ հեռու է տայգայի զոնայից, նրանց միջև կա զոնաների մի խումբ և կիսաանապատը խիստ տարբեր է տայգայից, հետև աբար Հայկական լեռնաշխարհում չորային պայմաններում աճող ծառերը չեն վերականգնվի առանց մարդու միջամտության:

Պետք է ասել, որ արիդ-չորային պայմաններում լանդշաֆտների վերականգնման հնարավորությունները Հայկական լեռնաշխարհում խիստ սահմանափակ են, ուստի բնության վրա ներգործելիս պետք է հաշվի առնել այս օրինաչափությունը:

Վերջին երեք տասնամյակներում Միավորված Ազգերի Կազմակերպությունը խոշոր միջոցներ է տրամադրում անապատացման պրոցեսը կանխելու համար: Անապատացման միտում նկատվում է նաև Հայկական լեռնաշխարհում, որը կապվում է մարդու ներգործության և ջերմոցային էֆեկտի հետ: Առկա է հետևյալ օրինաչափությունը՝ ցածրադիր մասերում արիդացման ինտենսիվացում: Տեղումները պակասել են, քայլ դրանց ինտենսիվությունը մնացել է, զայիս են տեղատարափ անձրևների ձևով, ոժեղացել է սեղավների գործունեությունը:

Դրան հակառակ բարձրադիր մասերում նկատվում է տեղումների ավելացում՝ հաճախակի տեղատարափ ձևով, որը էրոզիոն պրոցեսների ինտենսիվացում է բերում: Անհրաժեշտ են միջոցառումներ անապատացման երևույթները թուլացնելու ուղղությամբ:

Ավարտելով լանդշաֆտային վերընթաց գոտիների շարադրանքը՝ անհրաժեշտ ենք համարում նշել 21-րդ դարակզբին առաջացած շատ կարևոր, համամոլորակային բնույթ ստացած հիմնահարցի մասին: Դա անբրոպոգեն ներգործությամբ՝ բնույթան հավասարակշռության խախտման անխուսափելի փաստն է: Հայտնի է, որ բոլոր բնական լանդշաֆտները մինչև 20-րդ դարը ներկայացրել են բնական տարածքային համալիրներ հավասարակշռված բնույթամբ, որը գիտության մեջ հայտնի է Լե Շատեյյեի սկզբունք իմաստով:

Գիտատեխնիկական հեղափոխությունը 20-րդ դարի երկրորդ կեսին այնպիսի առաջիսաղացում է ունեցել, որ արդեն խախտվում է այդ հավասարակշռությունը՝ այն էլ համամոլորակային մասշտաբով: Դա հատկապես ջերմոցային էֆեկտի աստիճանական ինտենսիվացումն է: 20-րդ դարի վերջին աշխարհում այրվող վառելանյութերի քանակն անցավ 15 մլրդ տոննայից, որից դեպի ներքնոլորտ (տրոպոսֆերա) արտանետվող ածխաթթու գազի և այլ

զերմոցային գազերի պարունակությունը տարեցտարի ավելանում է: Օրինակ, եթե 20-րդ դարի սկզբին  $\text{CO}_2$ -ի պարունակությունը մքնողութում կազմում էր 0,029%, ապա այժմ կազմում է 0,034%:

Գյունականների հաշվարկներով զերմոցային էֆեկտի միջոցով մեր մոլորակի մերձգետնյա շերտի միջին զերմաստիճանը բարձրացել է  $1^{\circ}\text{-ով}$ , որը 21-րդ դարի վերջին կաձի մինչև  $2\text{-}3^{\circ}$ : Դրան գուգահեռ՝ չորային (արիդ) երկրներում մքնողութային տեղումների բանակը կպակասի  $10\text{-}15\%$ -ով, խոնավությամբ հարուստ ու բարձր-լեռնային երկրներում այն կավելանա: Նման սցենարը իր ազդեցությունը կրողնի նաև Հայկական լեռնաշխարհի ընտրյան վրա:

Կյիմայի փոփոխությունների վերաբերյալ ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից հրատարակված «Հայաստան Կյիմայի փոփոխությունների հիմնահարցերը» ժողովածուում (1999) բազմաթիվ գյունականներ իրենց հետազոտությունների արդյունքներ են գտնելու: Բոլորը ցույց են տալիս, որ մերձարև աղարձային գոտու չորային սեկտորում, որտեղ Հայկական լեռնաշխարհն է, տեղի է ունենալու անապատացման պրոցեսի ընդարձակում:

Հայկական լեռնաշխարհում այժմ առանձնացվում են անապատացման երեք տիպի տարածքներ՝ արիդ, սուբարիդ և սուբհոմիդ: Վերջին երկու տասնամյակներում կատարած դիտարկումները ցույց են տալիս, որ մեր երկրում տարեկան միջին ջերմաստիճանը բարձրացել է  $1^{\circ}\text{-ով}$  (հատկապես՝ ձմեռային ամիսներին) և տեղումները նվազել են մոտ 10%-ով: Արդեն ակնառու է խոնավացման գործակցի նվազեցումը: Օրինակ, եթե Երևանում առաջներում այն 0,25 էր, մերկայում՝ 0,2, կամ եթե Արարատյան դաշտում Բուղիկոյի չորության ճառագայթային ինդեքսը կազմում էր 3-4,5, ապա այն այժմ անցնում է 5-ից:

Ի՞նչ է լինելու 21-րդ դարի ընթացքում և վերջում:

Զերմոցային էֆեկտի միջոցով ընդարձակվելու են անապատային և կիսանապատային տարածքները: Կիսանապատի վերին սահմանը բարձրանալու է 200 մետրով, Կապուտանի (Ուրմիայի), Նախիջևանի և Արարատյան գոգավորություններում անապատ-կիսանապատի տարածքը կընդարձակվի  $15\text{-}20\%$ -ով, այն կարտահայտվի Սալարիայի, Սերաստիայի դաշտերում: Լանջաֆտային գոտիների՝ դեպի վեր միգրացիայի միջոցով՝ տափաստանային և անտառային գոտիները կծագեն վեր, մերձալպյան և ալպյան մարգագետինների գոտիները կսեղմվեն  $30\text{-}50\%$ -ով:

Զերմոցային էֆեկտի ազդեցությամբ կրծատվելու են անտառների տարածքը և արդյունավետությունը: Սեծանալու է ջրային ռեսուրսների պահանջարկը, լանջաֆտային գոտիների հավասարակշռության խախտումը իշեցնելու է այդ գոտիների արդյունավետությունը:

Մարդը պետք է միջոցներ որոնի անապատացման հիմնահարցը լուծելու ուղղությամբ, դիմակայի սպասելիք անցանկալի երևույթներին:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀ

Նախորդ զլուխներում Հայկական լեռնաշխարհը Աներկայացվեց որպես կոմպակտ ֆիզիկա-աշխարհագրական մարզ: Սակայն, ինչպես նշել ենք առաջին գլխում, գոյություն ունի նաև «Հայաստան աշխարհ» հասկացությունը, որն ավելի ընդարձակ է, քան Հայկական լեռնաշխարհը, որտեղ ապրել են հայեր և ձևավորվել է հայ եթոսը: Այդ ամբողջ տարածքը Հայկական լեռնաշխարհի հետ միասին կրում է Պատմական Հայաստան անվանումը:

Պատմական Հայաստան անվանումը ավելի ուշ ժամանակների արգասիք է, և այն միավորում է այն բոլոր տարածքները, որոնք ինչ-որ ժամանակ մտել են հայոց քաջավորության մեջ:

Պատմական Հայաստանի վերաբերյալ կա հարուստ գրականություն: Հատկապես 19 և 20-րդ դարերում հրատարակված աշխատություններում որոշակի տեղ է տրված նաև բնուրյանը: Այդ առումով արժեքավոր են՝ Ղ. Խնձիճյանի, Ղ. Ալիշանի, Ս. Ազնոնի, Լեոյի, Հ. Մանանյանի, Ս. Երեմյանի, Թ. Հակոբյանի, Բ. Հարությունյանի, «Հայկական Սովետական Հանրագիտարան», «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» և այլ աշխատություններ:

Հիմք ընդունելով ՀՍ Հանրագիտարանի 7-րդ հատորի 321, 435 էջերին կից բարտեզները և համապատասխան տեքստերը, որ կազմել է Ս. Երեմյանը, Հայոց աշխարհի բաղադրամասեր ենք համարում Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Մարաց Անոնք աշխարհը, Հայոց (Վերին) Սիղագետքը և Ասրութնաց



Նկ. 56. Մեծ Հայքը՝ ըստ վաղ-միջնադարյան «Աշխարհագույց»-ի

զավառը: Սրանց գումարվում է նաև Կիլիկիան, որը, բնական է, չէր կարող լինել «Աշխարհացոյց» աշխատության մեջ, քանի որ Կիլիկիայի Հայկական թագավորությունը գոյություն է ունեցել 11-14 -րդ դարերում:

Մինչև բաղադրամասերին անցնելը նշենք, որ Պատմական Հայաստանի տեղանունները ժամանակի ընթացքում փոփոխվել են: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» կողեկտիվ աշխատության մեջ նշված են տեղանուններ, որոնք ունեն մի բանի տասնյակի հասնող համապատասխանություն: Դրանք բոլորը բերել չենք կարող, նշվում են ամենազբուծականները:

I. **Մեծ Հայքը** Հայոց աշխարհի ամենահիմնական տարածքն է. այն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի մեծ մասը՝ դրան գումարած Կոր-Արաքսյան դաշտավայրը մինչև Կասպից ծով:

Մեծ Հայքը բարտեզում պատկերում է Արտաշեսյան և Արշակունյաց թագավորությունների գրադարանը տարածքը՝ մասնակի շեղումներով (սկսած մ.թ. ա. 2-րդ դարից մինչև մ.թ. թ. 5-րդ դարը):

Մեծ Հայքի թագավորության ստատուր միջազգային ճանաչում է ստացել մ.թ. ա. 66-ին՝ Հայոց արքայից-արքա Տիգրան Բ Մեծի և հոռոմեական զորավար Պոմպեոսի միջև Արտաշատում կնքված պայմանագրով, ըստ որի՝ Մեծ Հայքի տարածքը գրադարանում էր 316 հազ. քառ. կմ:

4-րդ դարի վերջին՝ 387 թ., Մեծ Հայքը բաժանվեց ազդեցության երկու ոլորտների: Տարածքի 4/5-ը անցավ Սասանյան Պարսկաստանին, 1/5-ը՝ Հռոմին: Երկրորդ բաժանումը տեղի ունեցավ 591 թ.: Պարսկաստանը պարտվեց, ստիպված էր Մեծ Հայքի տարածքի գգալի մասը զիջել Բյուզանդիային, որը Փոքր Ասիայում Հռոմի ժառանգորդն էր:

7-րդ դարում արաբական վաշկատուն ցեղերը համախմբվեցին և ստեղծեցին հզոր խալիֆայություն, խորտակեցին թե Բյուզանդիայի, թե Պարսկաստանի ու զմանական մերենան և տիրեցին Մեծ Հայքին: Արաբական ապատակությունները շատ թանկ նատեցին հայ ժողովորի վրա:

9-րդ դարում արաբական խալիֆայության թուլացումը նպաստավոր պայմաններ ստեղծեց Հայաստանի անկախ պետականության վերականգնընման համար: Բագրատունյաց, Սյունյաց և Արծրունյաց նախարարական տները բուն զարգացում ունեցան, բորբակեցին արաբական լուծը: Զարգացավ տնտեսությունը, մշակույթը, մեծ վերելք ապրեց ճարտարապետությունը, շինարարական արվեստը, դպրությունը:

11-րդ դարում հայերի գլխին մի նոր աղետ կախվեց: Միջին Ասիայից սելջուկ-բուրքերը ասպատակեցին Հայոց աշխարհը, իրի ու սրի մատնեցին բնակավայրերն ու բնակիչներին: Սարսափեկի կոտորածներ տեղի ունեցան, կատարվեցին զանգվածային տեղահանություններ՝ զարդ դեպի Գամբր (Կապաղովկիա), Կիլիկիա, Փոքր Հայք:

12-15-րդ դարերում թուրքմենների, թուրքերի, թաքար-մոնղոլների, կարակո-յունու, ակկոյունու, Լենկեմուրի և այլ վայրագ ցեղերի արշավաճրները քանդեցին ու կործաննան եզրին հասցրին ծաղկուն երկիրը:

16-րդ դարում Արևմտյան Հայաստանում տիրող դարձան օսմանյան թուրքերը: Ծավալվեց մի թիրոտ ու դաժան քաղաքականություն՝ հային դուրս մղել իր երկրից: Հայր գրկվեց քաղաքացիական տարրական իրավունքներից: Հայր կարող էր ընդունել ծնողների ժառանգությունը, եթե ընդուներ մահմեղականություն:

19-րդ դարի վերջին՝ սուլթան Համիդի օրոք, կոստրովեցին 300-500 հազար հայեր: 19-րդ դարի սկզբից Անդրկովկասը նվաճվեց ռուսների կողմից. դա հայի համար, անշուշտ, հուսաղորդ երևույթ էր: «Պարսկա-Հայաստանի» (Արևելյան Հայաստանի) և Թուրքա-Հայաստանի (Արևմտյան Հայաստանի) մի մասում ռուսական իշխանություն հաստատվեց, որն ազգային զարքոնքի նոր հնարավորություններ էր ստեղծում:

Օգտագործելով Առաջին համաշխարհային պատերազմի առիթը՝ թուրքական կառավագրությունը իրագործեց դարերով փայլիքայած իղձը՝ ոչնչացնել բոլոր հայերին: 1915-22 թվականներին 1,5 միլիոն հայ զոհ գնաց թուրքական յարագանին: Սա 20-րդ դարում աշխարհում առաջին զանգվածային ցեղասպանությունն էր, և Թուրքիան առ այսօր դրա համար պատասխան չի տվել:

Ա դ յ ո ւ ս ա կ 10

**Մեծ Հայրի նահանգները ըստ «Աշխարհացոյց»-ի (Ս. Երևան, Հայաստան ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963)**

Աշխարհը (նահանգը)	Գ-ավաների թիվը	Տարածքը՝ քառ կմ
1. Բարձր Հայր	9	23800
2. Ծոփք, Ծոփաց կողմն (Չորրորդ Հայր)	8	18890
3. Աղճնիք	11	17500
4. Տուրութերան	16	25008
5. Մոլք	8	2962
6. Կորճայք	11	14707
7. Պարսկահայք	9	11010
8. Վասպուրական	35	40970
9. Սյունիք	12	15237
10. Արցախ	12	11528
11. Փայտակարան	10	21000
12. Ուտիք	8	11415
13. Գուգարք	9	16765
14. Տայք	8	101179
15. Այրարատ	22	40105
Ընդամենը	187	մոտ 281 հազ. քառ կմ

Ստորև Մեծ Հայքի աշխարհների (նահանգների) մասին համառոտ տեղեկություններ կտրվեն՝ ըստ աղյուսակի հերթականության:

1. **Քարձը Հայք:** Քաղեցնում է Հայկական լեռնաշխարհի ծայր հյուսիսարևմտյան քարձրադիր մասը: Արևմուտքում Փոքր Հայքն է, հյուսիսում՝ Պոնտոսը, հարավում՝ Ծոփքը (Կողման Ծոփաց՝ Չորրորդ Հայքը), արևելքում՝ Տայքը, Այրարատը և Տուրուբերանը: Քարձը Հայք է կոչվում այն պատճառով, որ այս աշխարհը Հայկական լեռնաշխարհի ամենաքարձրադիր՝ ջրբաժան մասն է: Ընդգրկում է Նորդիսի և Արևմտյան Եփրատի վերին հոսանքների ավազանները: Անդնախոր կիրճների ու երկնաքեր լեռների մի հանգույց է: Առաջնաերում կոչվել է Կարճն աշխարհ:

Մ. թ. ա. Երկրորդ հազարամյակում Քարձը Հայքի արևմտյան շրջանները մտել են Խեթական պետության կազմի մեջ, և խեթական արձանագրություններում այն կոչվում է Քարձը Երկիր: Այնուհետև՝ մտել է Հայաստ հայկական պետության մեջ: Մ. թ. ա. 189-ից՝ Հայոց Արտաշեսյան Թագավորության կազմում է եղել:

Հայոց պատմության մեջ մեծ դեր է կատարել, հատկապես հեթանոսության շրջանում: Այդտեղ էին գտնվում զլիասպոր մեհյանները՝ Անահիտի, Արտամիսի, Նանեի, Դիոսի, Արենասի, Հեփեսսոսի և այլոց մեհյանները: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Դարանասի գավառի Անի (Կամախ) բերդում էին թաղվում Հայոց Արշակունի թագավորները:

387 թվականին Քարձը Հայքն անցել է Բյուզանդիայի տիրապետության տակ, կոչվել է Ներքին Հայքի կամ Մեծ Հայքի կոմսություն: Այս տարածքում բազմից տեղի են ունեցել ավերիչ պատերազմներ, և միշտ տուժել է հայ ժողովուրդը: 7-րդ դարում տիրել են արաբները, 11-րդ դարում՝ սելջուկ քուրքերը, այնուհետև՝ մոնղոլական հորդաները, Լենկրեմուրի, կարակոյունլու, ակկոյունլու և այլ հրոսակախմբերը: 16-րդ դարից Թուրքիայի տիրապետության տակ է:

Քարձը Հայքը ունեցել է 9 գավառ: Ամենաարևելյանը Կարինի (Էրզրումի) գավառն էր: 5-րդ դարում նահանգի մայրաքաղաք Կարինը վերանորոգեց բյուզանդական Թեոդոս կայսրը և անվանեց Թեոդոսուպոլիս: Հայերը միշտ անվանել են Կարին: Այն եղել է ճանապարհների խաչաձևման կենտրոնում, որտեղ զարգացել են արհեստներն ու առևտուրը:

Նշենք, որ Քրիստոնեության տարածումը Հայաստան աշխարհում սկսվել է Քարձը Հայքից: Գրիգոր Լուսավորիչը այստեղից սկսեց քարոզչությունը:

2. **Կողմն Ծոփաց (Ծոփք, Չորրորդ Հայք):** տեղադրված է Արածանի գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսում Քարձը Հայքն է, արևելքում՝ Տուրուբերանը, հարավում՝ Աղձնիքը, արևմուտքում՝ Կապաղովլիան: Հյուսիսում և հարավում լեռներ են, կենտրոնական մասը ամենացածրադիրն է, այստեղ են արգավանդ դաշտեր՝ Շապաղջրի, Բալոի, Խարբերդի: Ամենաընդարձակը վերջինն է: Սրանք համարվել են կարևոր դաշտավարական շրջաններ:

Նահանգն ունեցել է ուր զավառ, դրանք մեծ մասամբ լեռնային են և դրժվարամատչելի: Պատմական անցյալում Ծոփքը անկախ թագավորություն է համարվել, բազմից ձեռքից ձեռք է անցել Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Տիգրան Բ Մեծի օրոք Ծոփքը Մեծ Հայքին միացվեց, այնուհետև նորից ձեռքից ձեռք է անցել: 536 թվականին Հուստինիանու կայսրը Բյուզանդիայի նոր վարչական բաժանում կատարեց և Ծոփք աշխարհն անվանեց Չորրորդ Հայք: Նրանից հետո էլ Մավրիկիոս կայսրն է նոր բաժանումներ կատարել<sup>1</sup>:

7-րդ դարում Ծոփքը գրավվեց արաբների կողմից, երկիրն ավերվեց: Դրանից հետո էլ բազմարիվ ասպատակուրյուններ են եղել և 16-17-րդ դարերում այն անցավ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Վերջինիս հայաշինջ քաղաքականության հետևանքով Ծոփքը լրիվ հայարափեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ավերվեցին բազմարիվ վաճքեր ու եկեղեցիներ:

Եփրատ գետի վրա Քեպան (նախկինում Կապան, այժմ՝ Քերանմաղեն) գյուղի մոտ կառուցվեց համանուն ջրամբարը, որի ջրերը Արածանիով բարձրանում են շուրջ 100 կմ: Կառուցվել է նաև հզոր եկեղեցակայան:

3. **Աղձնիքը Մեծ Հայքի հարավ-արևմտյան ծայրանահանգն է, ուներ 11 զավառ:** Հյուսիսում սահմանակից է Կողմն Ծոփաց և Տուրուբերան, արևելքում՝ Սոկը, Կորճայք աշխարհներին, հարավում՝ Տիգրիս գետով բաժանվում է Պարսկաստանից: Այստեղ է Հայկական Միջագետքը, որը տարբեր ժամանակներում պատկանել է Մեծ Հայքին, Ասորեստանին, Պարսկաստանին, Հռոմեան և այլ հզոր պետությունների: Աղձնիքը օտար մատենագրություններում կոչվել է Արգամնեն: Բնական պայմաններով բաժանվում է երկու մասի՝ դաշտային, որը Հայոց կամ Վերին Միջագետքի շարունակությունն է Տիգրիսի ձախ ափին, և լեռնային, որն ընդգրկում է Տավրոսի արևմտյան հատվածը:

Աղձնիքը հարուստ է հանքային հարստություններով: Ունի գունավոր մետաղներ՝ ոսկու և արծարի խառնուրդով, երկաք, բրոմիտ և այլն: Այստեղ էր հաստատված Հայաստանի սահմանները պահպանող բդեշխություններից մեկը: Նվիրերս զավառում էր գտնվում Տիգրան Մեծի կողմից մ. թ. ա. 70-ական թվականներին կառուցած Տիգրանակերտ մայրաքաղաքը: Քաղաքով էր անցնում Արքայական ճանապարհը և Արքունի պղղոտան: Կարճ ժամանակամիջոցում Տիգրանակերտը դարձավ Արևելքի հելլենիստական տիայի հոչակավոր քաղաքներից մեկը, որն ուներ հզոր քերո, միջնարերդ: Քաղաքի դուրս Տիգրան Մեծը կառուցել է նաև շքեղ պալատ: Քաղաքը եղել է արիստոգրծական և առևտրական խոշոր կենտրոն, մեծ թափով զարգացել է մշակույթը, ունեցել է

<sup>1</sup> Վերջերս Բյերութի հրատարակած երկու աշխատություններում (1997) Բարկեն Հարությունյանը բննարկում է Ծոփք աշխարհի և չորս Հայքերի խնդիրները, ցոյց է տալիս դրանց տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ:

քատրոն: 69 թվականին հռոմեական զորավար Լուկուլլոսի արշավաճրով քաղաքի մի զգայի մասը ավերվեց, պակասը լրացրեցին պարսիկները: Հետագայում քաղաքն իր նշանակությունը կորցրեց, և ներկայումս նրա տեղում մի անշուր գյուղ է՝ ֆարլիկն անվամբ:

Աղձնիքի գավառներից է Սասունը: Այն Տավրոսի և նրա լեռնաճյուղերի վրա է՝ Սիմ համակարգում. խիստ մասնատված է Տիգրիսի վտակների խորը հովիտներով: Կան անառիկ լեռնագագաթներ՝ Սիմսար, Անդրկասար, Ծովասար, Մարութասար (Մարաթուկ): Սասունը հարուստ է պատմական հուչարձաններով, անառիկ բերդերով: Այստեղ է Պետրոս Առաքյալի վանքը՝ Մարաթուկի լանջին, Ս. Աստվածածինը՝ լեռան գագաթին: Սասունը հայտնի է որպես հայ ազատագրական պայյարի կենտրոններից մեկը: Արար զավթիչների դեմ պայյարի հիման վրա այստեղ ձևավորվեց «Սասունցի Դավիթ» էպոսը: 19-րդ դարում Սասունում մի շարք ապատամբություններ տեղի ունեցան ընդդեմ Օսմանյան կառավարության անտանելի ուժիմի: 20-րդ դարի սկզբում շարունակվում էր սասունցիների դիմադրությունը: 1915 թ. Սասունը դատարկվեց հայերից, ցեղասպանությունից քշեր փրկվեցին:

**4. Տուրութեան (Տարոն):** Նահանգը գտնվում է Արածանիի միջին հոսանքների ավագանում, մի փոքր հատված է լընդգրկում է Արաքսի ակունքները: Ուներ 16 գավառ, սահմանակից է Բարձր Հայք, Այրարատ, Վասպուրական, Աղձնիք, Կողման Ծոփաց նահանգներին: Հարավում Տավրոսի լեռնային համակարգն է և Վանա լիճը, հյուսիսում՝ Բյուրակն-Մնձուրյան համակարգը, որից դեպի հարավ ձգվում են Սերովի և Բագրևանդի (Շարիանի) լեռները:

Տարածքի կենց ավելին ծածկված է հրաբխային ծածկույթներով, կան երկնաքեր լեռնագագաթներ՝ Սիփանը, Ծաղկեռ և այլն: Կենտրոնական մասով հոսում է Արածանին (Մուրատ), որի ավագանում են՝ Դուրադի, Մանազկերտի, Հարքի, Տարոնի, Խոնուի արգավանդ դաշտերը, իսկ շրջապատի լեռները ծածկված են հյուրալի մարգագետներով: Ունի երկարի, աղի, ուկու պաշարներ:

Բզնունիք գավառի հարավային մասում խոր ձորի մեջ տեղադրված է Բաղեց (Բիրլիս) քաղաքը. ըստ որոշ աղբյուրների՝ Բաղեցը Աղձնիք նահանգում է (Սալնոնձոր): Համանուն գետի ափով ձգվում է մի շատ կարևոր ճանապարհ, որը Հայոց Միջազգետը կապում է Տարոնի հետ: Գետի ակունքում է Զորապահակ լեռնանցքը՝ անառիկ մի բերդ, որը շատ կարևոր դեր է խաղացել պաշտպանողական և ազատագրական շարժումներում: Բզնունիք գավառում Վանա լճի ափի կարևոր բերդաբաններ են եղել Դատվանը, Խլաքը: Բիրլիսում են ծնվել Վիլյամ Սարոյանի ծնողները:

Տուրութեանի կարևոր գավառներից է Տարոնը, որն իր բնությամբ, կրոնական ու քաղաքական դիրքով հոչակված է: Տարոնում է Մշո դաշտը՝ Մելքանցի ափերին, 1200-1500 մ բարձրություններում: Այն ունի համեմատա-

բար մեղմ կլիմա՝ հունվարյան միջինը՝ 0 - -4<sup>o</sup>, հուլիսին՝ 24-26<sup>o</sup>, տեղումները՝ 400-600 մ: Դաշտն անցնում է նաև Արածանիի աջ ափը:

Մշո դաշտը հնագոյն երկրագործական շրջաններից մեկն է. շրջակա լեռներում, մասնավորապես Տավրոսի հյուսիսային լանջերին աճում են անտառներ (կաղամախի, հացենի, ընկուզենի, տանձենի, խնձորենի, սալորենի): Այստեղ անտառներում սաղարթի վրա նստում է գազպեն, որի մասին արդէն մենք ակնարկել ենք:

Մ. թ. ա. 9-6-րդ դարերում Տուրուբերանը եղել է Ուրարտուի կարևոր զավառներից մեկը, որտեղ գտնվել է Աշտիշատը՝ կրոնական կարևոր կենտրոնը: Քրիստոնեության հայրանակից հետո բռնոր մեհյանները ոչնչացվեցին, նրանց տեղում հիմնվեցին Եկեղեցիներ ու վաճքեր: Նշանավոր վանքերից են՝ Մշո Սուրբ Կարապետ (Գլակա, Իննակնյան) վանքը Աշտիշատ ավանի մոտ՝ Քարքե լեռան հարավային լանջին: Վանքը շատ է տուժել երկրաշրթերից և բազմից վերանորոգվել է: Այն եղել է հայ գրչության կենտրոններից մեկը: Վանքն այժմ ավերված է: Քերդերի մեջ հոչակված էր Ողականը (Արածանի գետի աջ ափին): Ունի բազմաթիվ այլ բերդեր ու ավաններ: Տարոնի Հացեկաց գյուղում է ծնվել Սեսրով Մաշտոցը, իսկ Խորնի գյուղում՝ Մովսես Խորենացին: Տարոնցիներ են՝ Դավիթ Անհաղթը, Մամիկոնյանները, Արմենակ Շահ-Մուրադյանը, գիտության և մշակույթի շատ այլ կարևոր դեմքեր:

5. **Սոկը:** Մեծ Հայրի ամենափոքր նահանգն է, որ տեղադրված էր Վանա լճից հարավ՝ Տավրոսի համակարգում (Սոկաց լեռներում), Ջերմ (Բոհտան, Արևելյան Տիգրիս) և Սոկսի գետերի հովտներում: Ուներ 8 գավառ՝ ընդամենը 3000 քառ կմ-ի վրա: Երկիրը լեռնու է, խիստ անմատչելի:

6. **Կորճայք (Կորճեր):** Մեծ Հայրի հարավային նահանգն է: Հյուսիսում Աղձնիքն է, Սոկը, Վասպուրականը, արևելքում՝ Պարսկահայքը, հարավում՝ Սասանյան պետությունը և Մարաց Ամուր աշխարհը, որը մինչև 363 թվականը Մեծ Հայրի տարածքում էր: Ուներ 11 գավառ: Խիստ լեռնու է. Կորդվաց լեռներն են՝ մասնավորապես Մեծ Զար (Մեծ Զավ), Խազիլ, Խարուր, Ջերմ (Բոհտան) գետերի ու նրանց վտակների ավազաններում: Գագաթները հասնում են 4 հազար մետրի (Ջիլո): Գավառներից յուրաքանչյուրը բնական ամրոց է ներկայացնում՝ հարաբերական բարձրությունները մեծ են, լեռները խիստ դժվարամատչելի են: Բացի այն, որ տեղանքն անառիկ է, այստեղ հայրը կառուցել են բազմաթիվ բերդեր: Մեծ Զարի վրա է Զովամերկ քաղաքը:

7. **Պարսկահայք:** Նահանգը տեղադրված է Զագրոսի լեռնաշղթայի արևելյան լանջերին՝ մինչև Ուրմիա (Գարիթեան, Կապուտան) լիճը: Նահանգը ծգվում է միջօրեականի ուղղությամբ, ունի 9 գավառ, սահմանակից է Վասպուրական, Կորճայք, Ատրպատական նահանգներին: Արևմուտքում խիստ լեղնային է, մասնատված է գետահովտներով: Արևելքում Ուրմիա լճի

հարթությունն է՝ անապատային-կիսաանապատային լանդշաֆտով: Զագրոս-սյան լեռնաշղթայից սկիզբ են առնում Կոտոր (Արաքսի վտակ), Տարոն կամ Սամաստի գետը, Մարի և այլ գետեր, որոնք ուրմիայի ավազանին են պատկանում: Գավառներն ընդգրկում են գետավազանները:

Արշակունյաների քագավորության ժամանակ կազմվել է Նոր Շիրականի բդեշխությունը, որն ընդգրկել է Պարսկահայքը և հարավից մի քանի զավառ: Բդեշխությունը ապահովելու էր Մեծ Հայքի հարավային սահմանների պաշտպանությունը:

**8. Վասպորական:** Նահանգը ձգվում է Վանա լճից արևելք և հասնում է Արաքսի հովտի այն մասը, որտեղ Սևջոր (Կարասու) գետը թափվում է Արաքսի մեջ: Սա ամենից ընդարձակ նահանգն է՝ մոտ 41 հազ. քառ կմ տարածքով և ունեցել է 35 զավառ՝ ըստ «Աշխարհացոյց»-ի, բայց նշում է դրանցից միայն 32-ը: Ինչպես գրում է Լեռն, Վասպորական անոնք հայ գրականության մեջ երևան է զայխ 5-րդ դարից միայն (Վասպոր նշանակում է իշխան, ազնվական): Այն կոչվում էր նաև երկիր Արծրունյաց: Գլխավոր նախարարական տոհմը Արծրունյաներն էին:

Վասպորական նահանգը սահմանակից է Տուրուբերանին, Այրարատին, Սյունիքին, Մոկքին, Կորճայքին, Պարսկահայքին, Փայտակարանին, Արցախին և Ատրպատականին:

Նահանգի բնությունը խիստ քազմազան է: Արևմտությոց դեպի արևելք այն դառնում է ավելի ու ավելի չորային-անապատային, զգալի տարածք են զբաղեցնում կիսաանապատները: Վասպորականում առավել կարևոր դեր է խաղացել Վանա լճի ավազանը, որի արևելյան մասում Վասպորականի (Կոտորի) և Զագրոջան լեռնաշղթաներն են: Վասպորականը հարուստ է արծիին, պղնձի, ոսկու, աղի հանքավայրերով: Անտառներ քիչ ունի, դրանք միայն հարավ-արևմտյան մասում են՝ Արևելյան Տիգրիսի ավազանում: Գավառները քավական խիստ են: Վանա լճի ավազանում կարևոր զավառ է Ըշտունիքը (Ըստան, Գավաշ). այդպես է կոչվում նախարարական տոհմի անոնով, զբաղեցնում է Հայկական Տավրոսի լճահայաց լանջերը: Այստեղ է Ընձաքիսար (Ընձաքյարս, Կապուտկող) լեռը, որը հարուստ է կապարի և երկարի հանքերով: Նշանավոր պատմական բերդաքաղաք է Ոստանը: Այս զավառում է Աղթամար կղզին՝ հոչշակավոր Սուրբ Խաչ հրաշակերտ եկեղեցիով, որը կառուցվել է Գագիկ Արծրունու միջօցներով և որի ճարտարապետը Մանվելն է:

Ըշտունիքում էր գտնվում Նարեկա վանքը, որը մշակութային կարևոր կենտրոն էր:

Վան քաղաքից մի փոքր հարավ-արևմուտք գտնվում է Արտամետ քնակավայրը՝ Արտաշեայան փոքրիկ զավառում: 10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունին գրում է, որ Հայոց արքա Արտաշեսը սիրում էր Վանա լճի գեղա-

տեսիլ ափը և այսուեղ շինեց Արտամետ ոչ մեծ քաղաքը, որտեղ և՝ աշնանային մի պալատ՝ հատկապես Սարենիկի բնակության համար՝ զարդարելով պալատը ծաղկանոցներով ու ճենմիջներով և այլ գեղեցիկ հարմարություններով: Սարենիկը Ալանաց (այժմյան՝ օսերի) քաղաքորի դրաստին էր, որի հետ Արտաշեսը ամուսնացել էր՝ նրան փախցնելով:

Տոսպ (Վան) զավառը Վանի թագավորության (Արարատյան՝ Ուրարտու երկրի) կենտրոնն էր: Հիմնադրվել է Ուրարտուի թագավոր Սարդուր Ա-ի (մ.թ.ա. 835-825 թթ.) կողմից, անվանվել է Տուշպա և դարձել պետության մայրաքաղաք: Մենուայի գահակալության տարիներին (մ.թ.ա. 810-786) կառուցվել է Մենուայի ջրանցքը՝ Տուշպա մայրաքաղաքին ջուր մատակարարելու համար: Տուշպայում կառուցվել է ամրակուտ բերդ: Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների թագավորության շրջաններում եղել է արքունի քաղաք: Քաղաքը քաղմից է ենթարկվել ասպատակությունների: 10-11-րդ դարերում դարձել է Վասպուրականի թագավորության մայրաքաղաքը: Գագիկ Արծրունու օրոր (908-943 թթ.), մեծ մասշտարի շինարարական աշխատանքներ են կատարվել: Հետագայում քաղմից ենթարկվել է ասպատակությունների: 16-րդ դարում այն տիրել են օսմանյան բոլոր դարձնելով Վանի եղանակի կենտրոնը:

Վանի բնակիչները հիմնականում հայերն են եղել, զբաղվել են այգեգործությամբ, արիեստներով, առևտորով: Մեծ զարգացման է հասել ոսկերչությունը, արծարագործությունը, գորգագործությունը, կտավագրությունը, մետարագործությունը: Եղել է մշակութային և ազատագրական պայքարի կարևոր կենտրոն: Հայտնի է Վանի պաշտպանությունը 1915 թվականին: Այստեղ 1918 թվականին ստեղծվեց հայկական կառավարություն, որը գոյություն ունեցավ մի քանի ամիս: Վանում կան քաղմարիկ սեպագիր արձանագրություններ, որոնք 1915 թվականին ուսումնասիրվեցին Ն. Մատի և Հ. Օրբելու կողմից:

Վասպուրականում կարևոր մշակութային զավաներ են համարվել Նախաճաշկան և Գողբն զավաները իրենց կենտրոններով: Գողբնը հայտնի էր նկարչությամբ, ճարտարապետությամբ, երաժշտությամբ: Վանքերում որմնանկարների դասական նմուշներ կան, գործել են Հովհաննեսյան ընտանիքի նկարչիները: Գողբն զավաոի ծնունդ են՝ Կոմիտասի, Արամ Խաչատրյանի ծնողները, Գարեգին Նժդեհը, Օրբելի եղբայրները, Հասմիկը, Դավիթ Մալյանը: Գողբնը եղել է նաև քատերական կենտրոն: 1917 թ. ներկայացվել է «Անուշ» օպերան:

Նախիջևանի զավառը 1921 թ. փաստորեն բռնի կերպով մտցվեց Ալբեղանայի կազմի մեջ որպես ինքնավար հանրապետություն: Անցած տասնամյակներում հայերի նկատմամբ եղել է խտրական քաղաքականություն, որտեղից արդեն 1988 թ. վերջին բոլոր հայերը բռնագաղթել են:

9. **Սյունիք (Միասկան)**: Նախաճան ընդգրկում է Սևանա լճի ավազանը, Վայքը, Զանգեզուրը, Սյունիքի բարձրավանդակը: Ուներ 12 զավառ, սահմա-

նակից է Այրարատին, Արցախին, Վասպուրականին: Սյունիքում տիրող նախարարական տոհմը կոչվում էր Սիսական: 10-րդ դարում Սևանի ավագանն անցնում է Բագրատունիներին:

12-րդ դարում սելջուկներն ամբողջապես գրավեցին Սյունիքը և ավերեցին եղած ճարտարապետական ու մշակութային հուշարձանները: Միայն Քաղաքերում այդեցին 10 հազար ձեռագիր՝ մեկ ամբողջ մատենադարան:

13-14-րդ դարերում համենատարար խաղաղ պայմաններում մեծ զարգացում ապրեց դպրույթունը: Այս շրջանում են գործել Գլածորի և Տաթևի համալսարանները, կառուցվել են վանքեր:

Սյունիքը լեռնային երկիր է, հարուստ է գունավոր մետաղներով ու ոսկով:

10. **Արցախ:** Նահանգն ընդգրկում էր 12 գավառ, ավելի քան 11 հազար քառ կմ տարածքում: Երկիրը խիստ լեռնային է՝ Գուգարաց-Արցախյան լեռնային համակարգում, կտրատված է խոր գետահովիտներով: Արցախում են Գոմշասար (Գյամիշ, 3732 մ), Մոռավ (3343 մ) գագարները: Գորեքն միջօրեականի ուղղությամբ ծգվում է Արցախի (Ղարաբաղի) լեռնաշղթան՝ Բաղրամ (2832 մ), Մեծ Քիլս (2724 մ) գագարներով:

Արցախը հարուստ է գունավոր մետաղներով, սպիտակ կրաքարերով (շինարար), հանքային ջրերով: Հայտնաբերվել է նաև նավք:

Կլիման մեղմ է. հունվարյան միջին ջերմաստիճանը  $2 - -2^{\circ}$ , հուլիսին՝  $24 - 26^{\circ}$ , լեռներում համապատասխանարար՝  $-3 - -10^{\circ}$  և  $10 - 18^{\circ}$ : Տեղումները ցածրում՝ 300 մմ, լեռներում՝ 800-1000 մմ: Կայուն ճնածածկ առաջանում է 1500 մ-ից բարձր լեռներում: Գետերից հայտնի են՝ Թարթառ, Խաչեն, Կարկառ և այլն: Մրանց հոսքը անհավասարաշափ է, հորդանում են գարնանը: Թարթառի վրա կառուցվել է Սարսանի ջրամբարը:

Երկրի ցածրադիր մասերում լանջաշխտները չոր տափաստանային են, լեռներում՝ անտառներ ու նարզագետիններ: Այստեղ աճում են՝ հացահատիկ, խաղող, այլ մրգեր, բուր և բանջարեղեն: Աճեցնում են թթենիներ նաև շերամապահության համար: Արցախում դարերի ընթացքում հայ վարպետների ծերորդ կառուցվել են բազմաթիվ վանքեր, բերդեր, կամուրջներ: Հայտնի են՝ Գանձասարի, Ամարասի, Ղազանչեցվոց Ամենափրկիչ և այլ վանքեր ու ճարտարապետական կորողներ: 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Արցախ-Ղարաբաղը մտավ Ռուսաստանի կազմի մեջ (Ելիզավետպոլի՝ Գանձակի նահանգում):

Մինչև 1920 թվականը Արցախում լուրջ տեղաշարժեր կատարվեցին: Հատկապես Ծուշիում մշակույթը բուռն զարգացում ապրեց: Այստեղ հրատարակվում էին պարբերականներ, գրքեր, գործում էին ուսումնական հաստատություններ: Ծուշին իրավամբ տրվել էր «Կովկասի Փարիզ» անունը: Սակայն 1920 թ. քաղաքի հայկական հատվածն աղբեջանցիների կողմից ավերվեց, 35 հազար հայեր կոտորվեցին:

Խորհրդային կարգեր հաստատվելու հետո, առանց հայի կարծիքը հաշվի առնելու, 1923 թվականին բոլշևիկների կովկասյան բյուրոն Ղարաբաղը հանձնեց Աղրբեջանին, ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Խնճավար Մարզը: ԽՍՀՄ-ի բոլոր ազգային միավորումները կոչվում էին տվյալ ազգի անունով: Այստեղ հայի անունը չկար, մարզը միտումնավոր ձևով Լեռնային Ղարաբաղ բուրժատիկ անունն էր կրում: Սահմանները այնպես էին գծված, որ դաշտավայրերը ու հեշտ մշակվող տարածքները չինեն, միայն՝ լեռները: Մարզն այնպես էր անջատված Հայաստանի Հանրապետությունից, որ հաղորդակցությունը շատ դժվար լինի: Միայն վերջերս համայն հայության ջամփերով ու միջոցներով կառուցվեց Գորիս - Բերձոր (Լաշին) - Ստեփանակերտ խճուղին:

Արցախը սահմանադրական ուղիներով, ընդհուպ՝ հանրաքվեի միջոցով, նաև ազգային-ազատագրական պայքարով դուրս է եկել Աղրբեջանի կազմից, հոչակել անկախություն և այժմ կոչվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Արցախը հիմնականում զյուղատնտեսական երկիր է: Զբաղվում են դաշտավարությամբ ու անասնապահությամբ: Արտադրում են՝ գինի, կոնյակ, մետաքսարել, գորգեր, կահույք, կոչկեղեն և այլն: Ստեփանակերտում գործում է Արցախի պետական համալսարանը: Արցախի տնտեսությունը վերելք է ապրում:

Արցախը Հայրենական մեծ պատերազմում տվեց բազմաթիվ գորավարներ և մարտիկներ: Նրանցից 20-ը արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ Ն. Ստեփանյանը՝ ԽՍՀՄ կրկնակի հերոսի: Ղարաբաղի գեներալներից են՝ Ս. Բարսեղովը, Վ. Խորայելյանը, Ս. Աղաջանովը, Ս. Սարգսյանը, Ա. Ղազարյանը, ավիացիայի մարշալ Ս. Խուոյակովը և ուրիշներ: Մարշալներ Հ. Բաղրամյանը, Հ. Բաբաջանյանը՝ հարկան Գարդմանքի Զարդարի գյուղից են:

**11. Փայտակարան:** Մեծ Հայքի ծայրագույն արևելյան նահանգն էր: Ունեցել է 12 գավառ, սակայն, ինչպես Լեռն է գրում, գավառների տեղերը հըստակ հայտնի չեն, կենտրոնները՝ նույնպես: Նույնիսկ ՀՍՀ Հանրագիտարանում տարբեր հատորներում և տարբեր քարտեզներում մի դեպքում Փայտակարան կենտրոնը՝ Փայտակարան քաղաքը տեղադրված է Արաքսից հյուսիս, նրա ձախ կողմում, մեկ այլ դեպքում՝ Արաքսի գետաբերանում:

Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ նահանգի հյուսիսային սահմանը Կուր գետն է, արևմտյանը՝ Ոտիք, Արցախ և Վասպորական նահանգները, հարավում՝ Ատրպատականը, արևելյում՝ Կասպից ծովը: Երկիրը արևելյում հարուստ է նավթով և ջաղով:

Երկիրը տիպիկ հարթավայրային է, միայն հարավում թալիշի լեռների մի

հատվածն է: **Փայտակարանի** ամբողջ տարածքը Կուր-Արաքսյան դաշտավայրն է, որն այժմ տեկտոնական իշեցում է ապրում. մոտ կեսը ծովի մակարդակից ցածր է, ամբողջապես ծածկված է Կուր և Արաքս գետերի բերվածքներով: Այն առաջներում բնակեցված է եղել հայերով:

Դաշտավայրն ունի չոր անապատային կյիմա, լանջաֆտները անապատային-կիսաանապատային են, արիեստական ոռոգման հիման վրա բնակչները ճշակում են բամբակ, մրգեր, բոստանա-բանջարանոցային կուլտուրաներ, քրենի:

**12. Ուտիք:** Նահանգը տեղադրված է Կուր գետի աջ ափին: Ծագումնաբանորեն Փայտակարանի տարածքի շարունակությունն է կազմել: Ունեցել է ուր գավառ: Նշենք, որ տարբեր աղբյուրներում, նույնիսկ ՀՍ Հանրագիտարանի տարբեր հոդվածներում նրա սահմանները տարբեր են: Այսպես՝ 12-րդ հատորում Բ. Հարությունյանի «Ուտիք» հոդվածում և քարտեզում նահանգը շատ ավելի ընդարձակ է, քան «Սովետական Հայաստան» լրացուցիչ հատորում գետեղված «Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի ներդիր քարտեզում: Բացի այդ՝ գավառների տեղադրությունը էլ ենթադրական է:

Ըստ Բ. Հարությունյանի՝ Ուտիքը տարածվել է Կուր գետի աջափնյա տափարակում և Փոքր Կովկասի կենտրոնական հատվածում զբաղեցնելով Աղստև գետից մինչև Կուրի և Արաքսի ջրկիցն ընկած եռանկյունին: Հյուսիսում և արևելքում Կուր գետով սահմանակից է Աղվանքին, արևմուտքում Գուգարքին, Այրարատին և Սյունիքին, հարավում՝ Արցախին և հարավարևելքում՝ Փայտակարանին: Այն մասը, որ հարում է Փոքր Կովկասին (Գուգարաց-Արցախյան համակարգ), լեռնոտ է, մասնաւում է Աղստև, Հախում, Տավուշ, Զենքամ, Շամիսոր, Գանձակ, Թարթառ գետերով:

Ուտիքը հին ժամանակներից հայտնի է եղել երկարի, պղնձի, կապարի, ոսկու, արծարի հանքերով, ունի հանքային ջրերի ելքեր: Լեռնային շրջաններում տարածվում են սաղարքավոր անտառներ և մարգագետիններ: Կուրի աջափնյա դաշտավայրը ծածկված է շագանակագույն հողերով, չոր տափաստաններ են, իսկ դեպի արևելք՝ գորշահողեր ու կիսաանապատային լանջաֆտներ են: Դեռ հին ժամանակներից երկրագործական տարածք է եղել, որտեղ մշակել են բամբակ, խաղող և այլն: Առանց արիեստական ոռոգման բերք ակնկալել հնարավոր չել:

Ուտիքը Երվանդունների թագավորության շրջանում՝ մ. թ. ա. 3-2-րդ դարերում, արքայական ձմեռոց էր: Մ. թ. ա. 1-ին դարում Տիգրան Մեծն այստեղ կառուցեց Տիգրանակերտ քաղաքը, որը հետագայում ավերվել է: Բերդի ավերակ հիմքի վրա վերջերս նոր բերդ-տուրիստական օբյեկտ են կառուցել: Այն այժմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում է:

387 թվականին Մեծ Հայքի բաժանումից հետո՝ Ուտիքը միացվեց

Աղվանիք մարզպետությանը: Հետագայում նա ընդմիշտ մնաց Հայոց Աղվանիք կազմում: Բազմից եղել է պատերազմական գործողությունների բատերաբնմ: 461 թվականին կառուցվել է Պարտավ քաղաքը, որը դարձել է Աղվանիք մարզպանության կենտրոնը, եղել է մեկ՝ պարսիկների, վեհ՝ բյուզանդացիների, մեկ էլ՝ արաբների իշխանության տակ: 840 թվականին հիմնադրվել է Գանձակ քաղաքը: 9-րդ դարի վերջին Ուտիքի հյուսիսային մասը մտել է Բագրատունիների թագավորության մեջ: Այնուհետև Ուտիքն ընկել է սեղուկների տիրապետության տակ: 12-րդ դարում Զաքարյաններն ազատագրել են այն:

Ուտիքի արևմտյան մասը բազմաթիվ վաճեր ու դպրության կենտրոններ է ունեցել. սրանք ավերվել են 13-րդ դարում մոնղոլների կողմից, իսկ դրանից հետո Լենկրեմուրն է ավերածություններ կատարել: 19-րդ դարում միավորվել է Ռուսաստանի հետ:

**13. Գուգարք:** Մեծ Հայքի ամենահյուսիսային նահանգն է, սահմանակից է Վիրքին (Վրաստան), Ուտիքին, Արցախին, Այրարատին, արևմուտքում՝ Տայքին: Ունեցել է 9 գավառ: Տարածքի մեծ մասը հրաբխային լավաներով է ծածկված, արևելքում ծալքաբեկորային է: Ամենից ընդարձակը Զավախիք սարահարբն է, առանձնացվում են Վերին Զավախիք և Ներին Զավախիք շրջանները: Հայերով բնակեցված է եղել հնագոյն ժամանակներից: Հարուստ է պղնձի, երկարի հանքավայրերով, հրաբխային ծագման շինանյութերով:

Գուգարքը մտել է ուրարտական, ապա՝ Երվանդունիների թագավորության մեջ: Արտաշեայան և Արշակունիների թագավորությունների շրջանում համարվել է բրեշխություն, որը հաստատվել էր Տիգրան Մեծի կողմից և պաշտպանելու էր թագավորությունը հյուսիսից:

387 թվականին Գուգարքը, բացառությամբ նրա Տաշիր գավառի, միացվեց Վիրքին և պարսկական տիրապետության տակ էր, իսկ 591 թվականին անցավ Բյուզանդիային: 652 թ. հայ-արաբական պայմանագրով նորից միավորվեց Հայաստանին: 9-րդ դարից արևելյան գավառները անցան Բագրատունիների իշխանության տակ և բարգավաճեցին: 10-րդ դարում Գուգարքի արևելյան շրջաններում ստեղծվում է Գուգարքի ֆեոդալական թագավորություն՝ Շամշուլդե կենտրոնով, 11-րդ դարից մայրաքաղաք դարձավ Լոռի բերդարադարը (Լոռվա թագավորություն):

12-13-րդ դարերում Կյուրիկյանների և Զաքարյանների օրոք Գուգարքը հայ մշակույթի ու գիտության կենտրոն դարձավ: Աշխույժ գործունեություն ծավաեցին Սանահին, Հաղպատ, Հաղարծին, Նոր Գետիկ, Մակարավանք, Քորայր, Օծուն վանքերն ու եկեղեցիները: Սրանք կարևոր կրթական կենտրոններ էին:

Գուգարքը 16-17-րդ դարերում գտնվում էր մեկ քուրքական, մեկ՝ իրանական լծի տակ: 1801 թվականին մտավ Ռուսաստանի կազմի մեջ:

Զավախը Ռուսաստանի կազմում ընդգրկվեց 1829 թ. Արդիանուարուի հաշտության պայմանագրով և Կարինի (Երզրումի) շրջանից հայ գաղքականների մի մեծ խումբ տեղափոխվեց Ախալքալաք՝ նոր կյանք հաղորդելով հայ նոսրաբնակ տարածքներին: Զարգացան արիեստները, կառուցվեցին նոր վաճքեր ու եկեղեցներ: Զավախը ծնունդ են՝ Զիվանին, Դ. Դեմիրճյանը, Վ. Տերյանը և մշակույրի այլ գործիչներ:

Ախալցխայի գոգավորությունը նույնպես հայարնակ է: Գոգավորության կենտրոնով անցնում է Կուր գետը՝ Փողխով (Փոխտով) վտակով: Լանջաֆոր տափաստանային է, լեռնալանջերին կան անտառներ: Ախալցխան ևս եղել է մշակութային կենտրոն: Այստեղի ծնունդ են՝ Հ. Մանանդյանը, Հ. Կոջոյանը, Վ. Սուրենյանցը, Ս. Էփրիկյանը, Վ. Գայթեմյանը, Ա. Ղանալանյանը, Հ. Նավակատիկյանը, Լուսինն Զարարյանը և շատ ուրիշներ:

Ներկայում ինչպես Զավախը, այնպես էլ Ախալցխայի շրջանը Վրաստանի կազմում են:

14. **Տայը:** Նահանգը գրադեցնում է Շորոխի ստորին հոսանքի և նրա աջակողմյան Օլիի վտակի ավազանները, մի փոքր հատված էլ՝ Կուրի ակունքներից: Ունի ուր գավառ, սահմանակից է Եգերը և Խաղութիք երկրներին, Գուգարքին, Այրարատին, Բարձր Հայքին: Շրջապատված է բարձրաբերձ լեռներով՝ Խաղույաց, Չորմայրի, Կապոյտ, Ծիրանյաց, Մեծրաց և Կարմիր Փորակ լեռնաշղթաներով: Լեռնային գետերով խիստ մասնատված տեղանք է ներկայացնում և մեծ նասանք ծածկված է անտառներով: Կիմնան մեղմ է, այստեղ աճում են՝ ծիրան, դեղձ, բալ, սալոր, տանձ, խնձոր սերկնի, խաղող, բուր, նուռ, ընկույզ և այլն:

Տայը 9-րդ դարում (մ. թ. ա.) մտել է Ուրարտուի կազմի մեջ: Հոյս պատմիչ Քսեննֆոնը (մ. թ. ա. 5-րդ դար) տայեցիներին համարում է խիզախ ու ուազմասեր մարտիկներ: 5-6-րդ դարերում եղել է Սասանյան Պարսկաստանի կազմում (եղել են քազմաքիվ ապստամբուրյուններ տիրող կարգերի դեմ), եղել է Սամիկոնյանների նախարարության կալվածքը: 591 թ. անցել է Բյուզանդիայի տիրապետության տակ: 7-րդ դարում Սամիկոնյանների գլխավորությամբ դարձել է հակասարարական շարժումների ու ապստամբուրյունների կենտրոն: 8-րդ դարի վերջից Տայըն անցավ Բագրատունիներին, որոնց օրոք Տայըը ծաղկում ապրեց մինչև 1001 թ., որից հետո անցավ բյուզանդական գերիշխանությանը: 11-րդ դարում մեծ ավերածություններ կատարեցին սեղուկ քուրքերը: 12-13-րդ դարերում միացյալ հայ-վրացական ուժերը Բագրատունիների գլխավորությամբ ազատագրեցին Տայըը: 1590 թ. անցել է օսմանյան քուրքերի տիրապետությանը, որտեղ ճնշումն ու կեղերումը, դավանափոխու-

բյունը մեծ չափեր են ընդունել՝ վերածվելով սպանի: 1877-78 թթ. Տայքի մի մասը Օլիք գավառով անցավ Ռուսաստանին: Տայքի բոլոր եկեղեցները կամ ավերվել են, կամ վերածվել մզկիթների: 1921 թ. Կարսի մարզի հետ Մեծ Հայքի Տայք աշխարհի տարածքը տրվեց Թուրքիային:

15. **Այրարատ:** Մեծ Հայքի կենտրոնական նահանգն է, կոչվել է նաև Սից նախարի, Գլուխ Երկրին Հայոց: Ընդգրկում է Արաքս գետի միջին ու վերին և Արածանիի ամենավերին հոսանքների ավազանները: Ծրջապատված է Բարձր Հայք, Տայք, Գուգարք, Ուտիք (որոշ առյուրներով նաև՝ Արցախ), Այունիք, Վասպուրական, Տուրուբերան նահանգներով: Իր մեծությամբ Վասպուրականից հետո Երկրորդն է՝ 40 հազ. քառ կմ տարածքով, ունեցել է 22 գավառ:

Այրարատը բարձրաբերձ լեռների, ընդարձակ հովիտների, նեղ կիրճերի ու խնձահովիտների, հրաբխային բարձրավանդակների երկիր է: Նրա հյուսիսային և արևմտյան մասերը հրաբխային են, ծայր հարավում՝ Հայկական Պարն է իր Արարատներով. արևելքում՝ Ուրծի լեռները, ապա՝ Ծաղկունյաց ծալքաբեկորավոր լեռները, որոնք խիստ մասնաւում են: Այստեղ են նաև Արագածն ու Արայի լեռը: Այրարատում մի քանի կարևոր դաշտեր կան՝ Բասենի, Շիրակի, Ալաշկերտի (Քազբեանի), Արարատյան, Կոգովիտի և այլն, որոնք իրեն ժամանակներից կարևոր Երկրագործական կենտրոններ են համարվել: Բնությունն Այրարատում բազմազան է, վերընթաց գոտիականությունը ցայտուն է արտահայտված:

Այրարատն ունի խիստ ցամաքային կիմա: Ցածրադիր դաշտերում առանց արհեստական ոռոգման բերք ակնկալել հնարավոր չէ: Մեծ մասամբ ծածկված է տափաստաններով, Արարատյան դաշտում՝ կիսաանապատներ են, լեռնային բարձր մասերը մարգագետններով են պատված: Անտառագործի է, միայն Սարիդամիշի մոտ կան փշատերև անտառներ, որոնց արեալները խիստ փելման են նարդածին ներգործությամբ:

Այրարատ նահանգում հանքային հարստություններից են՝ պղինձ, երկար, ոսկի, աղ, հրաբխային ծագման շինանյութեր: Հայտնի են Արզմիի հանքային ջրերը և դեռևս հնուց մեծ հոչակ վայելած Վարչակի ջերմուկները:

Այրարատը հայ ժողովրդի քաղաքական միավորման, տնտեսության, մշակույթի ամենակարևոր կենտրոնն է համարվել: Պատմական Հայաստանի մայրաքաղաքները, բացի Երկուսից, այստեղ են հիմնադրվել:

Այրարատը քաղաքակրթության իին օրբաններից է: Այստեղ է Մեծամորը, Կարմիր Բլուրը, Վաղարշապատը, որը դարերի ընթացքում եղել է կրոնական կենտրոն, կարողիկոսանիստ. Մայք Արռոն այժմ էլ էջմիածնում է: Այստեղ են՝ Երերունին, Արգիշտիխինիլին, Արմավիրը, Խոր Վիրապը և Վերջապես Երևանը:

Հայաստանի առաջին բաժանման ժամանակ՝ 387 թ., Այրարատն անցավ

Պարսկաստանին: Երկրորդ բաժանման ժամանակ՝ 591 թ., մեծ մասն անցավ Բյուզանդիային, իսկ արևելյան՝ փոքր մասը մնաց Պարսկաստանի տիրապետության տակ: 7-րդ դարի վերջին գրավվեց արաբների կողմից, 9-րդ դարում մտավ Բագրատունների տիրապետության մեջ: 11-16-րդ դարերում Այրարատը բազմից ասպատակությունների է ենթակվել, քարուքանդ եղել: 1639 թվականին արևմտյան մասը անցավ Մուրթիայի տիրապետության տակ, արևելյան՝ Պարսկաստանի՝ կազմելով Երևանի խանություն: 19-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստան անցավ Ռուսաստանին, իսկ դարի վերջում Մուրթա-Հայաստանի միայն մի փոքր մասը վերամիավորվեց Հայաստանի հետ՝ Ռուսաստանի տիրապետության տակ:

9-11-րդ դարերում ժամանակավոր անկախության պայմաններում Բագրատունների բազավորությունը մեծ հաջողություններ արձանագրեց: Բուռն կերպով զարգացավ տնտեսությունը, մշակույթը, ճարտարապետությունը, արվեստը: Թագավորության մայրաքաղաքը Անին դարձավ Առաջավոր Ասիայի խոչոր քաղաքներից մեջը՝ 100 հազար բնակչությամբ: Անին առևտրական կապեր ուներ Չինաստանի, Հնդկաստանի և այլ երկների հետ: Արտահանում էր՝ պղնձյա իրեր, ամանեղեն, ոսկյա և արծարյա զարդեր, գործվածքներ, գորգեր, գենգի տեսակներ:

Նարտարապետությունը Անիում հասավ կատարելության: Անին հայտնի էր որպես պաշտամունքային կառույցների նշանավոր կենտրոն: Իզուր չէ, որ այն անվանել են հազար ու մի եկեղեցիների քաղաքը:

Անին նաև գիտության ու կրթության կենտրոն էր՝ ուներ համալսարան: Կարկառում դեմքերից են՝ Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Խնաստաները և որիշներ:

11-րդ դարում Անին ընկավ Բյուզանդիայի իշխանության տակ, ապա գրավվեց սելջուկների կողմից, այն մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել: Հայ-վրացական զորքերը գրավեցին Անին, այն անցավ Զաքարյաններին, քաղաքն աշխուժացավ, կառուցապատվեց: 1236-ին քաղաքին տիրացան մննդուները: Վերջնական ամայացումն սկսվեց 1319 թ. երկրաշարժից: 1360-ական թվականներին այն ալրեն ամայի էր:

20-րդ դարի սկզբին Անիի պեղումները կատարվեցին Ն. Մարի և Հ. Օրբելու կողմից՝ ճարտարապետ Թ. Թորամանյանի մասնակցությամբ: Անիի ճարտարապետական կորողներն առ այսօր, անգամ կիսավեր վիճակում, հիացմունք են պատճառում այցելուներին:

Անիի ճարտարապետության ընդհանուր արժեքն ի հայտ թերելու գործում բացառիկ դեր կատարեց Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Յոզեֆ Ստրիգովսկին: Հենվելով Թ. Թորամանյանի ուսումնասիրությունների վրա՝ նա ցույց տվեց, որ Արևմտյան Եվրոպայի ուսմանական և գորական ոճերի ձևավորումը կապվում է հայ ճարտարապետության հետ:

Այրարատի 22 գավառներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունը: Մենք խնդիր չենք դրել նկարագրել բոլոր գավառները, իշխատակենք միայն ամենախոշորները:

Այրարատ նահանգի ամենագլխավոր տարածաշրջանը Արարատյան գոգավորությունն է, որտեղ տեղադրված են եղել՝ Արագածոտն, Սասյացոտն, Կոտայք, Օստան Հայոց, Ուրծածոր, Ծակատը գավառները: Այստեղ Արարատյան դաշտում և նախալեռնային հատվածներում հնագույն ժամանակներից զարգացել է երկրագործությունը՝ արիստական ոռոգման հիմնան վրա: Մշակել են բամբակ, խաղող, այլ մրգեր, բռտանա-բանջարանոցային կուլտուրաները: Բարձր մասերում զբաղվել են անասնապահությամբ: Ուրարտական շրջանում հիմնվել են Արգիշտիխինիլի, Թեյշերափնի, Էրեբունի բնակավայր-ամրոցները: Արարատյան դաշտը և նախալեռները համարվել են Հայոց աշխարհի սիրտը: Եվ ահա, տարրեր ժամանակներում կառուցվել են մայրաբաղաբներ հենց այստեղ՝ Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Արշակավան, Դվին, Բագրամ, Երազգավորս, Կարս, Անի, Երևան: Արարատյան դաշտում հիմնադրվել է գտնավոր մետաղաձոլության կենտրոն՝ Մեծամորը, որը հայտնաբերվեց միայն վերջերս: Այս տարածքում են կառուցվել բազմաթիվ բերդեր, պաշտամունքային կառույցներ: Այստեղ է հիմնադրվել Վեհարանը՝ կարողիկոսարանը, բազմաթիվ կրթական օջախներ: Այժմ էլ Արարատյան դաշտում ու նախալեռներում է ապրում՝ գործում հանրապետության բնակչության մեծ մասը:

Այրարատի ընդարձակ գավառներից է Շիրակի գավառը՝ Ախուրյան գետի երկու ափերին: Այն հայտնի երկրագործական շրջան է եղել, համարվել է հացի շտեմարան: Այստեղ կառուցվել են Հայաստանի Անի և Երազգավորս մայրաքաղաքները, բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, որոնցից հռչակավոր են Մարմաշնի, Հառիճի, Հռոռմոսի, Բագնայրի, Երերույրի, Արգինայի, Խնձկոնի, Թալինի, Մրենի, Տեկորի և այլ եկեղեցիներ, կրթական օջախներ:

Այրարատի խոչը գավառներից է Բագրևանդը՝ Ալաշկերտի դաշտում ու շրջապատի լեռներում: Ալաշկերտի դաշտը հայտնի է եղել ընտիր ցորենով: Դաշտի արևելյան շարտնակությունը Զիրավի դաշտն է՝ Արածանիի Վերին հոսանքներում՝ Շառիան (Բագրևանդ) գտնակի ավազանում: Այստեղ են Վարշակի ջերմուկները: Բագրևանդը կարևոր մշակութային կենտրոն է եղել: Այստեղ՝ Նապատ լեռան ստորոտում էր հեթանոսական սրբավայր Բագավանը, որտեղ նշվում էր Նավասարդի տոնը: 301 թվականին Արածանիի ծախ ափին Գրիգոր Լուսավորիչը մկրտեց Հայոց Տրդատ Գ թագավորին, Աշխեն թագուհուն, նախարարներին ու զորին, և քրիստոնությունը Հայաստանում հռչակեց որպես պետական կրոն: Այստեղ կառուցվեց Սուրբ Հովհաննես վանքը:

Ընդարձակ գավառներից է Վանանդը, որտեղ Կարսի սարահարքն է: Զմեռը խստաշունչ է, աճառը՝ զով: Սևահողային տափաստան է, մշակում են հացահատիկ, լեռներում գրաղվում անասնապահությամբ:

Մ. թ. ա. 9-րդ դարում Վանանդն արդեն մտնում էր Ուրարտուի կազմի մեջ, հետագայում եղել է Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակոնիների քաջավորությունների կազմում: Հայաստանի առաջին քաֆանման ժամանակ անցել է Պարսկաստանին, երկրորդի ժամանակ՝ Բյուզանդիային: 9-րդ դարից դարձել է Բագրատունիների ժառանգական տիրույթը: 961-1065 թթ. եղել է Կարսի քաջավորության կենտրոնական գավառը: 1639-ին անցել է Թուրքիային: 1876-ին Կարսի մարզը մտել է Օսմանաստանի կազմի մեջ: 1921 թ. Օսմանաստանը Կարսի մարզը զիջեց Թուրքիային, իսկ տեղի հայերը գաղթեցին Արևելյան Հայաստան:

Ինչպես նշել ենք, Պատմական Հայաստանի կազմում են Մարաց Ամուր աշխարհը և Ատրպատանց գավառը:

**Մարաց Ամուր աշխարհ:** Տեղադրված է Կորդվաց լեռներում, խիստ կտրտված տեղանքում: Ժամանակին կազմել է Մեծ Հայքի մի հատվածը, որը լինելով սահմանային, համարվել է բդեշխություն: Այդ աշխարհի հիմնական ֆունկցիան է եղել՝ Մեծ Հայքը պաշտպանել հարավի հարձակումներից: Չնայած նրան, որ ռելիեֆի խիստ կտրտվածության հետև անընդունելի է եղել, այնուամենայնիվ կառուցվել են ամուր բերդեր: Բնակչությունը գրաղվել է հիմնականում անասնաբուժությամբ, ձիաբուժությամբ, բանակին մատակարարել է արագավազ ծիեր: Հովհանների փոքր հատվածներում գրաղվել են հողագործությամբ: Լինելով անառիկ՝ այնուամենայնիվ, այս աշխարհը հաճախ է ենթարկվել ասպատակությունների:

**Ատրպատանց Երկիր կամ Հայոց Ատրպատական գավառ:** Տեղադրված է Առյունական Մեծ Հայքի հարավային մասում, եղել է բդեշխություն՝ հարավային Երևանից Երկիրը պաշտպանելու համար: Երկիրը լեռնային է, կտրտված ջագրոշից իջնող գետերի կիրճերով: Դժվարամատչելի է եղել. այստեղ ևս կառուցել են բերդեր՝ դիմագրավելու թշնամուն: Ընդգրկել է Ուրմիա լճից արևելք ընկած տարածքը և Սոհունդ հրաբուխի արևմտյան լանջերը: Բնակչությունը գրաղվել են անասնապահությամբ և մասամբ՝ Երկրագործությամբ: Գավառի ֆունկցիան ամբողջապես պաշտպանական է եղել:

**Հայոց (Վերին) Միջագետք (Միջագետք Հայոց):** Հայկական Տավրոսի համակարգին հարավից հարում է մի ընդարձակ գոզավորություն, որը Հայոց Միջագետք են անվանում: Այս տարածքը Հայկական լեռնաշխարհի մեջ չի մըտնում այն պատճառով, որ Արաբա-Սիրիական պլատֆորմի շարունակությունն է ներկայացնում և պոկվելով Գոնդվանա ցամաքից՝ շարժվել է հյուսիս ու ճրգմել Հայկական լեռնաշխարհի տեղում եղած գեոսինկինալը: Հավանական է՝

այդ պլատֆորմը մտնում է Հայկական Տավրոսի տակ և սուզվում է միջնապատյանի մեջ: Խորը ֆոկուսային երկրաշարժերը ասում են այն մասին, որ պլատֆորմի հատվածը հնագոյն ծագումի է, ասքենոսֆերայի (բույլորոտի) խոր մասերում ջարդուվում է՝ տալով երկրաշարժային ալիքներ:

Հայոց կամ Հայկական Միջագետքը հնագոյն ժամանակներից Հայոց աշխարհի բաղադրամասն է եղել, այսուեւ ապրել են հայեր:

Հայկական Միջագետքն ընդգրկում է Արևմտյան Տիգրիս գետի վերին հոսանքների ավագանը, իսկ արևմուտքում մի փոքր հատված էլ՝ Եփրատի ավագանից:

Գոգավորությունը հյուսիսից եզերվում է Հայկական Տավրոսի լեռնաշղայով, արևելից Կորդվաց լեռներով, հարավում՝ Մասիուսի ցածր լեռներն են, արևմուտքում՝ Կարաջա միջին բարձրության լեռները՝ համանուն գագարով (1919 մ) և Եփրատ գետը:

Տեկտոնական կառուցվածքով միջլեռնային գոգավորություն է, որը ջարդուված է՝ տեկտոնական խզվածքներով: Խոչոր խզվածքներից մեկով ժամանակին որոր են հորդել բազալտային լավաներ և առաջացրել Դիարբերի ի հրաբխային ծածկույթը:

Գոգավորության հատակային մասը հարթ է, ընդարձակ, որը ծածկված է Տիգրիսի ու Վտակների գետաքերուկներով և սելավային՝ պրոյյսվիալ նստվածքներով: Եզրային-նախալեռնային բարձրությունները ուղիենքի մեջմ ձևեր ունեն:

Հայոց Միջագետքի կենտրոնական մասով հոսում է Տիգրիսն իր Ամբար, Քաղիր (Բարձման), Արգան (Հարզան), Ջերմ (Բոհոտան), Սավոր Վտակներով, որոնք հորդանում են գարնանը՝ ձնիալիք սեղմում: Ամռանը գետերը սակավաջոր են, մանավանդ՝ հարավից Եկողները: Շատ են սելավային հոսքերը, Մասիուսի լեռների արևելյան հատվածում շատ են ժամանակավոր հոսք ունեցող հեղեղատները:

Կիման ցամաքային է՝ տար և շոգ անառով, մեջմ ձմեռով: Հուլիսի միջին ջերմաստիճանը  $28\text{--}29^{\circ}$  է, երեսման միջնականը՝  $46^{\circ}$ , հունվարյան միջինը՝  $+5\text{--}6^{\circ}$ : Ձմեռն անձյուն է, սառնամանիքները հազվադեպ են. կարող է ձյուն տեղալ, սակայն արագորեն հալվում է: Տեղումների տարեկան քանակը 500-600 մմ է, հիմնականում՝ ձմռանը: Ամռանը տեղումները քիչ են, կամ չկան:

Լանջափտները չոր տափաստանային են, կամ կիսաանապատային: Առաջներում շրջապատի լեռնազանգվածներում եղել են անտառային զանգվածներ, սակայն մարդու ձեռքով դրանք գրեթե ոչնչացել են:

Հայոց Միջագետքը կարևոր գյուղատնտեսական շրջան էր: Արեւատական ոռոգման միջոցով մշակվում էին հացահատիկ, բամբակ, բանջարեղեն, խաղող, ձիթենի, մրգեր: Բնակչությունը զբաղվում էին նաև ոչխարարուծությամբ և ձիաբուծությամբ:

Մինչև 1-ին դարը Հայոց Միջագետքն ունեցել է միատարր հայկական

բնակչություն: Այն դարերի ընթացքում կովախնձոր է եղել արևելքի և արևմտութիւնը երկրների միջև, և միշտ հայն է տուժել: Հայկական Սիհագետքը մ.թ. թ. 37 թվից անջատվել է Մեծ Հայքից: 1915 թվականին ամբողջ հայ բնակչությունը ոչնչացվեց թուրքերի կողմից:

**Փոքր Հայք (Արման, Արևմենիա, Գավառ Հայկական):** Պատմական Հայաստանի ամենաարևմտյան հատվածն է, հայի բնօրրաններից մեկը: Այստեղ հին և միջին դարերում ձևավորվել են Հայկական թագավորություններ, և Փոքր Հայք է կոչվել՝ ի տարրերություն Մեծ Հայքի:

Այս երկրամասը միայն արևելյան մասով է մտնում Հայկական լեռնաշխարհի մեջ: Արևմտյան մասը նրանից դուրս է և տեղադրված է Անատոլիական կամ Փոքրասիհական սարահարքի սահմաններում և ֆիզիկա-աշխարհագրական առումով, մասնավորապես՝ բարձրաշափությամբ ու կլիմայով, զգալիորեն տարբերվում է Հայկական լեռնաշխարհից:

Մ.թ. թ. 2-րդ հազարամյակի կեսերին Փոքր Հայքի արևմտյան մասը մըտնում էր Խերական պետության կազմի մեջ, իսկ արևելյում՝ Հայասա-Ազգին էր: Մ.թ. թ. 9-6-րդ դարերում եղել է Ուրարտուի տիրապետության տակ, ապա մտել է Երվանդունիների թագավորության մեջ: 6-րդ դարի վերջին Արեմենյան Պարսկաստանը գրավում է Եփրատի ողջ ավազանը և Փոքր Հայքի ամբողջ տարածքը: Արեմենյան տիրապետության վերջին շրջանում՝ 4-րդ դարում, Երվանդունիների թագավորությունը բաժանվում է երկու մասի: Եփրատից արևմուտք ձևավորվում է Փոքր Հայքի թագավորությունը:

Մ.թ. թ. 3-րդ դարում Պոնտական թագավորությունն ուժեղանալով գրավում է Սև ծովի առափնյա մասերը՝ մինչև Պոնտական լեռների ջրբաժանը: Այդ նույն դարում Սելևկյանները գրավում են Փոքր Հայքը, ստեղծում սասրապություն և սատրապ են նշանակում ծագումով կիսահայ Միհրդատին:

Մ.թ. թ. 190 թ. հռոմեական և սելևկյան զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտից հետո Փոքր Հայքն անկախացել է, ապա ենթարկվել Պոնտոսի թագավորությանը: 1-ին դարում Տիգրան Բ Մեծի օրոք Փոքր Հայքի հարավային մասերը մտնում էին Հայաստանի կազմի մեջ: Սակայն հռոմեական զորավար Լուկովլոսի կողմից թե՛ Փոքր Հայքը և թե՛ Պոնտոսը գրավվեցին, մեծ ավերածություններ ու կողոպուտ տեղի ունեցան, բայց հռոմեական տիրապետությունը երկար չտևեց: Ծուտով հայ-պոնտական միացյալ ուժերը պարտության մատնեցին հռոմեացիներին: Սա էլ երկար չտևեց՝ հռոմեական զորավար Պոմպեոսը հետ գրավեց այդ ամբողջ տարածքը և միացրեց Հռոմին:

Մ.թ. 1-ին դարում Փոքր Հայքը փոխանիվոխ անցել է Հայաստանին ու Հռոմին, ընդ որում, Հռոմը հայկական հողերի տնօրինությունը բռնում էր հայ իշխանական տոհմի՝ Արշակունիների ներկայացուցիչներին: 37 թ. արդեն երկ-

բորբ անգամ վերամիավորվել են Հայաստանի երկու մասերը՝ Մեծ ու Փոքր Հայքերը:

387 թվականին Հայաստանի առաջին բաժանման ժամանակ Փոքր Հայքն անցավ Հռոմին և մնաց նրա տիրապետության տակ մինչև 7-րդ դարը: Այդ դարում Փոքր Հայքը գրավվեց արաբների կողմից, ավերվեցին շեն քաղաքները, բնակչության մի մասը գերեվարվեց:

10-11-րդ դարերում Բագրատունիների թագավորությունից, Վասպուրականից մեծ թվով հայեր տեղափոխվեցին դեպի Փոքր Հայք: 1021-ին Սեբատիայի շրջանում ստեղծվում է Արծրունիների իշխանությունը: Արծրունիներն այս տարածքը ստացան Վասպուրականի ավելի ընդարձակ տարածքները Բյուզանդիային գիշերու պայմանով: Ստեղծվում են այլ մաճր իշխանություններ ևս, որոնք նույնպես տարածքների փոխանակման արդյունք էին:

Մեծ գաղը տեղի ունեցավ դեպի Փոքր Հայք 11-12-րդ դարերում՝ սեղուկքուրերի ասպատակությունների ժամանակ: Հայերը երկու չափբներից փոքրագույնն էին ընտրում՝ բյուզանդական տիրապետությունը: Մինչև 15-րդ դարը այլ վաշկատուն ցեղեր էլ են ասպատակել Փոքր Հայքը, իսկ 16-րդ դարում այն ընկավ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Հայաշինջ քաղաքականության հետև անընդունակ այժմ այլևս հայ չկա:

Փոքր Հայքը ամենից ընդարձակ տարածք գրանցերել է 6-րդ դարում բյուզանդական Հռոմեանու կայսեր օրոք: Ասպա՝ Սավրիկիոսի գահակալման տարիներին ստեղծվեցին՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք, որոնց մասին արդեն ակնարկել ենք: Առաջին երեքը Եփրատից արևմուտք էին և ընդարձակ տարածություն էին գրավում՝ ընդգրկելով Սև ծովի ափերը մինչև Ծորոխի գետաբերանը, Փոքրասիական սարահարքի գգալի մասը:

Հետագայում, մասնավորապես՝ Ս. Երեմյանի կողմից կազմած «Աշխարհացոյց» քարտեզում, Փոքր Հայքը ամփոփված է շատ սահմանափակ տարածքում. ընդգրկում է Գայլգետի վերին հոսանքների ավազանը և Եփրատի աջակողմյան Տերիկ վտակի ավազանն ամբողջությամբ, որտեղ նշվում են հինգ գավառներ՝ Օրբալիսնե, Հայրուլանե, Հայրետիկե, Օրսենե, Օրբիսնե:

Փոքր Հայքի այն հատվածը, որ Հայկական լեռնաշխարհից արևմուտք է տեղադրված (ըստ Հռոմեանոսի կողմից ձևավորված տարածքի), ավելի չորային է, քան Հայկական լեռնաշխարհը: Ի տարբերություն արևելյան հատվածի, որ նկարագրել ենք Հայկական լեռնաշխարհի սահմաններում, արևմտյան ավելի ցածրադիր է: Գագաթները շեն հասնում 2000 մ-ի: Պոնտական լեռնաշղթայի շարունակությունը դեպի արևմուտք կազմված է պալեոզոյի և մեզոզոյի կրաքարերից, ավազաքարերից: Ունի ներժայթուկներ, մասնատված է դեպի Սև ծով և Գայլգետը իջնող գետերի հովիտներով, որոնց

միջոցով առաջացել են փետրածն դասավորության լեռնաբազուկներ: Լեռնահովիտների մեծ մասը ծածկված է անտառներով:

Գայլգետից հարավ՝ զուգահեռակամի ուղղությամբ, ձգվում է Իրիս (Եշիլ-Իրմակ) կոչող միջին բարձրության լեռնաշղթան, որը նոյնագետ մասնատված է երողին հովիտներով: Նրանից հարավ Ալիս (Հալիսի, Կազլ-Իրմակ) գետի վերին հոսանքների ավազանն է, որ ներկայացնում է Սերաստիայի (Սվագի) լենդարձակ գոգավորությունը: Վերջինս ծածկված է միոցենի ծովային, ապա՝ լճագետային նստվածքներով: Գոգավորության արևմտյան կողմում Սալիտակ (Աղդաղ) լեռնաշղթան է, իսկ արևելյան՝ Թեներինը: Վերջինս փաստորեն Անտիտավրոսի լեռնաշղթայի շարունակությունն է, որտեղ լեռնագագաթները հասնում են 2700-2800 մ բարձրության, մինչեւ արևմուտքում նման բարձր գագաթներ չկան:

Փոքր Հայրեն ունի չոր ցամաքային կլիմա՝ բացի Սևծովյան հատվածից: Ամառը շոգ է ու չոր. հովվայան միջին ջերմաստիճանը 25-26<sup>o</sup> է, հոնվարյանը -5 - -8<sup>o</sup>: Տեղումների քանակը հովիտներում 400 մմ է, լեռներում՝ 600-700 մմ: Սև ծովի ափին արևելյից արևմուտքը տեղումները պակասում են՝ իշնելով մինչև 800 մմ: Լանջաֆտները ծովափնյա հատվածներում մերձարև աղարձային անտառներով են արտահայտված, ներքին շրջաններում տիրապետող տափաստանն է, բարձր մասերում՝ մերձալպյան մարգագետինները:

**Հայկական Կիլիկիա (Հայոց Կիլիկիա, Հայոց աշխարհ, Հայաստան Փոքր, Սիստիան):** Պատմական Հայաստանի մասին խոսելիս մեր դեմ է հանում Սիցնադարյան Հայաստանի Հայոց բազավորություններից մեկը՝ Կիլիկյան Հայաստանն իր երեքդարյա համառ պայքարով՝ հանուն անկախության և ազատության:

Հետամուտ լինելով պատմական անցքերին՝ ակամա գալիս ենք այն եղբակացության, որ զորեղ պետությունը, ուժեղ տիրակալը չի կարող խաղաղ վայելել իր փառքը: Նրա մեջ եռում է նորանոր տարածքներ գրավելու մոլուցը, նա անպայման պետք է արշավի նվազ զորությամբ հարևանի վրա, ավերի ու քանդի մարդկային տիտանական ջանքերով ստեղծած արժեքները:

Կիլիկիայի բազավորությունը բազմից է դարձել ասպատակությունների բատերաբեմ Բյուզանդիայի, արաբների, եգիպտական սուլթանների, սելջուկ բուրքերի, մոնղոլների, խաչակիրների, օսմանյան բուրքերի և այլոց բանակների կողմից: Բակուրանը 1896 թ. իր «Կիլիկիա» գրքում գրում էր. «Կիլիկիա երկրագնդի այն գծերն է և թերևս ըստ ինքյան միակ գիծը, որու վրա դարեր իրարու հետքերը ջնջելու համար ամենեն հետաքրքրական երևոյթներ առաջ բերած են» (էջ 4): Եվ իսկապես, եղե՞լ է արյոց անգամ քառորդ դար, որ Կիլիկիայի տարածքում բռնություն ու բալան, ավար ու գերեվարություն չլինի, անմեղ մարդկանց արյուն չհոսի:

Հայր տոկացել է, ոչ միայն դիմագրավել բռնությանը, այլև կառուցել քաղաքներ, բերդեր, նավահանգիստներ, դպրոցներ, զարգացրել մշակույթը:

Մեր խնդիրը չե հանգանանորեն քննարկել Կիլիկիայի Հայկական Թագավորության 11-14-րդ դարերի պատմությունը: Այս պատմությունը բազմարիվ գիտական աշխատությունների նյութ է եղել: 1952 թ. լուս ընծայվեց Գ. Գ. Սիրայելյանի «Կիլիկյան հայոց պետության պատմությունը» (“История Киликийского армянского государства”) ծավալուն ոռուերեն մենագրությունը, որտեղ ամփոփված են մինչ այդ եղած նյութերը, և ընթերցողը կգտնի իրեն հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները:

Կիլիկիային Վերաբերող բազմաթիվ աշխատությունների շարքում մենք առանձնացնում ենք Աւոնդ Ալիշանի «Սիսուան» ծավալուն մենագրությունը՝ որը լույս է տեսել 1885 թ. Վենետիկում (Սուրբ Ղազար, Միհրարյան Միարանություն): Այստեղ խորությամբ մեկնարանված են նաև բնության հարցերը, և հետագա հետազոտողները հաճախակի ուղղակի հիշատակում ու կրկնում են այն: Առանց հիացմունքի չի կարելի բերքել նրա էջերը: Դա մի անզուգական գրական և գիտական առեղծագրություն է:

Կիլիկիան շուրջ 40 հազար քառ. կմ տարածքով երկիր է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան անկյունում: Այն բնակեցված է եղել քարի դարից: Առաջին գրավոր հիշատակությունները վերաբերում են մ. թ. 2-րդ հազարամյակին՝ խեթական արձանագրություններում կավե տախտակների վրա: Այստեղ ապրել են՝ խեթերը, լուվիացիները, հույները, պարսիկները, հայերը, ասորիները, հրեաները և այլք: Մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները (4-րդ դ. թ. ա.) եղել է պարսկական տիրապետության տակ: Մ. թ. 4-րդ դ. Վերջին քառորդում Դաշտային Կիլիկիան գրավվում է Մակեդոնացու կողմից: Հունական տիրապետությունը մեծ դեր խաղաց Առաջավոր Ասիայում հելլենիզմի տարածման գրիծում:

Մ. թ. ա. 2-րդ դարում Կիլիկիան աշխարհին հայտնի էր որպես ծովահենների երկիր: Ծովահենները ահ ու սարսափ էին տարածել Միջերկրականի ավազանում: Վերջապես հոռմեական գորավար Պոլմակոսին հաջողվեց գրավել Կիլիկիան և Վերջ դեմել ծովահենների որջին: Մ. թ. ա. 83 թ. Հայոց Տիգրան Բ Մեծ թագավորը գրավել է Դաշտային Կիլիկիան, իսկ Լեռնայինը՝ Միհրդատ 6-րդ Պոնտացին: Մ. թ. ա. 66 թ. Կիլիկիան դարձավ հոռմեական պրովինցիա, իսկ 5-րդ դարից մտավ Բյուզանդական կայսրության մեջ:

Մինչև 7-րդ դարը Կիլիկիան հայերի համար ավելի ապահով ու անվլտանգ երկիր է համարվել: Սակայն 7-րդ դարի 2-րդ կեսերին Դաշտային Կիլիկիան գրավեցին արաբները, և այն փոխմիտոյննաց մեկ նրանց և մեկ էլ բյուզանդացիների ծերքին: Այստեղ Մեծ Հայքից զանգվածաբար հայերի գաղը է կատարվել, և բյուզանդական արքունիքը նպաստում էր այդ գործին,

Երկիրը շենացնելու նպատակով՝ ավելի շատ արհեստավորներ ու առևտրականներ թերում Կիլիկիա: Զանգվածային տեղահանությունը շատ ավելի մեծ մասշտաբներ ընդունեց 11-րդ դարում սելջուկ թուրքերի ասպատակությունների ժամանակ:

11-րդ դարում Կիլիկիայի հիմնական բնակչությունը հայերն էին: Դարի 80-ական թվականներին վերջնականապես ձևավորվում է Ռուբինյան Հայկական Թագավորությունը և համընդհանուր ճանաչում գտնում: Խոշոր ճանապարհորդ Մարկո Պոլոն գրում էր, որ գոյություն ունի երկու Հայաստան՝ Մեծ և Փոքր, վերջինս Կիլիկիան է:

Կիլիկիայի հայ թագավորները ճկուն դիվանագիտությամբ կարողացել են շահել արևմտյան պետությունների համակրանքն ու հովանագորությունը՝ առևտրական կապեր հաստատել Վենետիկի, Շենովայի, ուրիշների հետ: Կիլիկիայից արտահանել են՝ ոսկյա և արծաթյա իրեր ու զարդեր, երկար, պղինձ, արծիճ, գորգեր, բամբակ, գործվածքներ, շինափայտ, ձիթապոուղ, յուղ, մեղր, գինի: Արևմուտքից ներմուծել են շաքար, գործարանային արտադրանք, նավեր, գենր, մետաքս, խունկ, օճառ և այլն:

Ռուբինյանների հմուտ դիվանագիտության մասին Վ. Քյուրքճյանը գրում է, որ հաջող կապեր են հաստատել Անգլիայի հետ և այնքան բարեկամացել, որ երբ Ռիշարդ Առյուծափրտը ամուսնացավ, հարասնիքի կնքահայրը Լևոն թագավորն էր: Քյուրքճյանը նաև նշում է, որ Կիլիկիայի ազդեցությունն այնքան մեծ էր, որ Երուսաղեմի լատին թագավորության թագուհիները գրեթե առանց բացառության հայուի էին:

Կիլիկիայի Հայկական թագավորության կազմավորումից հետո որոշ ժամանակ նրան էր Ենթարկվում նաև Կիպրոսը: Կարծ ժամանակամիջոցում ծաղկում ապրեցին մի շարք նավահանգիստներ՝ Այասը, Բայասը, Սելիկիան, Կոռիկոսը, Մերսինը, Անամուռը, Տարսոնը: Այսան իր բեռնաշրջանառությամբ մրցում էր Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստի հետ, և դեպի Ասիա առաքումները հիմնականում Այսաի միջոցով էին կատարվում, որը զայրացնում էր Եգիպտական սուլթաններին: Այսաի մասին մեծ հիացմունքը է գրում Մարկո Պոլոն 1271 թ:

Աննախընթաց վերելք ապրեց դպրությունը՝ հիմնվեցին դպրոցներ, կառուցվեցին թատրոններ, ձևափորվեց մանրանկարչության մի յուրատիպ դրայնգ, զարգացան կերպարվեստը, ճարտարապետությունը, մշակույթը: Կառուցվեցին մայրաքաղաք Սիսը, Աղանան, Սսիսը, Անարզարան, Կարսը, Տարսոնը, Մարաշը, Պապոնը, Լամբրոնը, Հաճնը, Այնթապը: Տարսոնը համարվում էր Հայկական Արենք:

Բուն Կիլիկիայից բացի Հայոց թագավորության մեջ էին մտնում Պամֆիլիան, Խսավրիան, Լիկաոնիան և Գերմանիկեն: Սակայն 14-րդ դարի

Վերջին եզրակացիների մշտական հարձակումները արնարամ էին անոն Կիլիկիան, երկիրը բալանվում էր: 1375-ին եզրակացն մամլուրները գրավեցին Կիլիկիան: 15-րդ դարի վերջերին Կիլիկիան գրավեց օսմանյան թուրքերի կողմից: Ծավալվեց հայացինց բաղարականություն, մեծացավ հայերի արտագաղթը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անտանտի պետությունները՝ Ֆրանսիան և Անգլիան հայերին մղում էին թուրքերի դեմ: Անգլիայում ֆրանսիական դեսպանի ջանքերով գտան Պողոս Նուպար փաշային և հորդորեցին կազմել կամավորական խմբեր՝ բազում խոստումներ տալով: Պողոս Նուպար փաշան և նրա որդին մեծ ջանք թափեցին: Ստեղծվեց հայերից կազմված Արևելյան լեգիոն, որի գինվորների թիվը հասավ մոտ վեց հազարի: 1918 թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ Արարայի ճակատամարտը, որտեղ հայերը թուրքերի դեմ հաղթանակ տարան, այնուհետև գրավեցին Բեյրութը, Ալեքսանդրետը, Աղանան: Ֆրանսիացիները խոստանում էին Կիլիկիայում ստեղծել հայկական պետություն՝ Ֆրանսիայի հովանավորության տակ:

Սակայն, երբ պատերազմը ավարտին էր մոտենում, Ֆրանսիան, ի հակալիքով Անգլիայի և Ռուսաստանի, քեմալական Թուրքիայի հետ բանակցությունների մեջ մտավ և կարևոր զիջումներ կատարեց՝ իր ազդեցությունը Թուրքիայում իրը ուժեղացնելու ակնկալուրյամբ (Ո. Սահակյան, 1970): Ահա այդ զիջումներից մեկը Կիլիկիան էր. Ֆրանսիան այն ամբողջությամբ զիջում էր Թուրքիային: Ֆրանսիան և Անգլիան բոլորովին մոռացան իրենց խոստումները. կոհիվը վերջանում էր, հայերը նրանց արդեն նույնիսկ խանճարում էին:

Ահա թե ինչ է գրում Մ. Ս. Դավիթ Բեկը Ա. Աթանայինի կողմից Փարիզում լույս տեսած «Կիլիկիոն մոտավոր անցյալեն» գրքի առաջարանում. «Ամեն հայ կարդալու է այս գրքույկը: Կարդալու են մանավանդ անոնք, որ աշքերնին հառած էին քրիստոնյա մարդասեր և իր թէ Ազատության, Արդարության իրավունքի և հաղատակ ազգերու փրկության համար պատերազմ հոչակող պետություններու վրա: Կարդալու են մանավանդ անոնք, որ տակավին կը հավատան Դիվանագիտություն կոչված լրբության, և ի հեճուկս անոր անսահման անբարոյականության, տակավին անոր վրա հույս դնելու միամտությամբ կապրին» (Փարիզ, 1936):

Երբ ֆրանսիացիները իրենց զորքերը դուրս հանեցին Կիլիկիայից, հայը մնաց անպաշտպան, և թուրքերը հաշվեհարդար տեսան ֆրանսիացիների կողմում կովոր հայերի հետ: Անգլիան ու Ֆրանսիան միայն հայեցողի դիրքը ընդունեցին, իսկ Կիլիկիայում թուրքերը կոտորեցին ավելի քան 33000 հայերի:

**Կիլիկիայի բնությունը:** Կիլիկիայի տարածքը Փոքր Ասիայի հարավում է Տավրոսի համակարգում: Այստեղ Տավրոսը խոշոր ծովածք-ծունկ է առաջացնում Կիլիկիայի դաշտավայրի շուրջը: Ծագումնաբանական տեսակետից եր-

Կիրը բաժանվում է երկու մասի՝ Լեռնային (Ապառաժային կամ Քարային) Կիլիկիա և Դաշտային Կիլիկիա: Վերջինիս հիմքում գոյություն ունի մի ամրակուր զանգված, որը ծալքավորությունների ժամանակ անդրդվելի է մնացել և Տավրոսին ստիպել է խոշոր ծունկ առաջացնել՝ ճկվել:

Կիլիկիայի սահման մենք համարում ենք Կիլիկիայի բոլոր գետերի գումարային ջրածանը հարևան երկրների նկատմամբ: Նշված պարագայում տարածքում իշխում է Սիցերկրականի ավագանի կլիման, որը տարբերվում է հարևան շրջանների ավելի չորային ցամաքային կլիմայից:

Արևմուտքում Կիլիկիայի սահմանը անց ենք կացնում Աղալիա ծոցից Եփրիմեղոն և Մանավդատ գետերի ջրածանով, ապա՝ Սիցերկրական ծովի՝ մի կողմից և Բեյշեհիր, Սուլլա ու Բատակիիկ լճերի միջև՝ մյուս կողմից, ջրածանով՝ մինչև Լամա գետի ակունքները: Այստեղից Գահ Կիլիկիա (Տորոսի Պար) կամ Բուլղար լեռների ջրածանով՝ Մյուտեսահիզ, ապա ծովելով արևմուտք՝ ընդգրկում է Սարոսի (Սեյհանի) վտակների ավագանները, հասնում մինչև Արգեոս (Էրջիաս) հրաբխային զանգվածին: Այստեղից սահմանը ձգվում է հյուսիս և բոլորում է Սարոսի (Սեյհանի) ու Զահանի (Պիուամոսի) վերնագավառները, հասնում Նուլրական կամ Նուրիհակ լեռնաշղային: Շրջանցելով Զահանի (Պիուամոսի) և Ծիրիտի, այժմ՝ Ակսուի ավագանները՝ ջրածանը Այնրապի սարահարթի կենտրոնական մասով՝ Եփրատի և Զահանի ջրածանով հասնում է Ամանոսի լեռնաշղային ու նրանով իջնում Սիցերկրական ծով:


Կիլիկիայի հարավում Սիցերկրական ծովն է. այստեղ երեք խոշոր ծոցեր կան՝ Աղալիայի, Տարսոնի և Խսկեններունի: Վերջինս հնում կոչվում էր Հայոց (Ալեքսանդրետի ծոց):

Տավրոսի և Ամանոսի լեռնաբազուկները, միրճվելով Սիցերկրական ծովի մեջ, առաջացնում են հրվանդաններ՝ Անամուղի, Սարպեղոն, Մնգարսոս, Հոռսիկյան հրվանդանը և այլն: Հրվանդաններ են առաջացել նաև գետաբերաններում՝ ցամաքալեզվակներով՝ օրինակ, Խնջեկումը (Կալիկադնոսի գետաբերանում): Կղզիներից են՝ Արարոս (Հայոց ծոցում), Կոռիկոս (Տարսոնի գոգի արևմուտքում), որի վրա էլ ամուր բերդ են կառուցել՝ Կավալերիե:

Լեռնագրական տեսակետից՝ Դ. Ալիշանը Կիլիկիան բաժանում է երեք մասի՝ Դաշտային, Քարային և Լեռնային:

**Դաշտային (Ծովային)** Կիլիկիան Հոմերոսի Իլիականում երգված Ալեյան դաշտն է (այժմյան Աղանայի դաշտը): Ընդգրկում է Սելևկիա Կայիկադնոս (Գյուկու), Տարսոն, Սարոս (Սեյհան), Զահան գետերի ստորին հոսանքների ավագանները և ունի մինչև 200-300 մ բարձրություն: Հիմքում ամուր զանգված է, ծածկված է գետաբերուկների հզոր ծածկույթով:

Կիլիկիայի դաշտավայրը շատ հարք է, կան ճահճային հատվածներ, կան




Նկ. 57. Կիլիկիայի լեռնազրական սխեման

և մանր աղի լճեր: Դաշտավայրի եզրային մասերը քույլ բլրապատ են: Հյուսիսային եղրին կառուցված են Սիս մայրաքաղաքը և բերդը (այժմ՝ Կողաց):

Դաշտավայրում կլիման չորային է, ճահճային հատվածներում՝ վատառողջ: Դաշտավայրը հնուց հայտնի է արգավանդորյանք ու բարիքներով: Այստեղի բամբակը մրցում է եղիպտականի հետ: Մշակում են մերձարևադարձային բույր կուտուրաներ՝ շիտրուսներ, շաքարենքներ, ձիթենի, խաղող, բուլգ, այլ մրգեր ու բանջարեղեն: Աղանայի մոտ Սարոսի վրա կառուցված է ջրամբար, որի ջրերը ոռոգում են դաշտավայրի արևմտյան մասը:

**Քարային-Քարուտ Կիլիկիան** արևմտյան մասն է, սրբա անվանում են նաև Տրաքյան Կիլիկիա: Տեղադրված է Միջերկրական ծովի և Կալիկադնու (Գյուլսու) գետի միջև ընկած տարածքում: Արևմտարում Ակդադ լեռներն են համանուն զագարով (2647 մ), որոնք կազմված են կրաքարերից, մարմարից, ավազաքարերից և մասնաւուած են դեպի ծով իջնող մանր գետերի կիրճերով: Դեպի հյուսիս թեքությունները համեմատաքար փոքր են, մասնաւումը այնքան ուժեղ չէ: Քարային Կիլիկիայի արևելյան մասը տարածվում է Կիլիկյան թերակղզու վրա և ներկայացնում է Տաշելի սարահարքը՝ Կարմիր (Կըլլ- 2257 մ) զագարով: Սարահարքը հորտ է ներկայացնում, կազմված է

պալեոզոյան ավարմերից, տեկտոնական բարձրացում է ապրում: Մասնաւիկը է էրոզիոն հովհաններով, կան գեղատեսիկ կիրճեր՝ ծածկված անտառներով: Կալիկադնոսի (Գյուղուի) հովհանը 2-8 կմ լայնություն ունի, մշակված է, ծածկված այգիներով:



Նկ. 58. Կիլիկիայի բլոկ-դիագրամը

**Լեռնային Կիլիկիան (Գահ Կիլիկիո)** հյուսիսից եզերող լեռնային համակարգն է, որը կազմված է մի շարք լեռնաշղթաներից ու լեռնազանգվածներից: Ամենից բարձրը հյուսիս-արևմտյան հատվածն է, որ շատ աղբյուրներում կոչվում է Տորոսի Պար (Բուլղար լեռներ): Առաջներում անվանել են Գահ Կիլիկիո: Զգվում է Կալիկադնոսի հովհանը մինչև Սարոսի Սեյհանի վտակ Քիրքիծի գետը՝ Գուգակի կամ Դրուճը Կիլիկիո լեռնանցքը: Լեռնային այս համակարգի երկարությունը 140 կմ է, կազմված է մի քանի զուգահեռ լեռնաշղթաներից: Համակարգի հարավային լանջերը մեծ թեքություն ունեն, և գետերը խրվել են լեռների կուրծքը: Դ. Ալիշանը գրում է, որ համակ քարակառ, միատարր պարապածե, ամենին անբույս, անարոտ, ահեղ կերպարանքով բարձր գագարմերը ծածկված են ձյունով: Ամենաբարձրը Սյունիքաստիզն է (3665 մ), կատարային գոտում կան սաղցապատման հետքեր՝ կըրկեսներ, ֆիոնային դաշտեր:

